ԳԱՆԳ





ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԲԱՖՖԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

տասներկու հատորով

Խմբագրական կազմ

Թոփչյան Ստ. Է., Խանզադյան Ս. Ն., Հակոբյան Պ. Հ.,
Պետրոսյան Վ. Հ., Ջրբաշյան Էդ. Մ., Սամվելյան Խ. Ե.,
Սարինյան Ս. Ն., Ֆելեքյան Հ. Հ.

ԵՐԵՎԱՆ 1991

ДУБЛЕТ

ՐԱՖՖԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

հատոր տասնմեկերորդ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ
ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ա 82117



«ՆԱԻՐԻ»

ԳՄԴ 84Հ1-4
Ր-539

Հատորը կազմեցին
բնագիրը պատրաստեցին և ծանոթագրեցին՝
Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ և Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Երկերի ժողովածուն լույս է տեսնում 1983 թվականից

Րաֆֆի

Ր-539 *Երկերի ժողովածու 12 հատորով / [խմբ. կոլեգիա՝ Բուիշյան Ստ. Է. և ուրիշ.
Հ. 11. Հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ / [կազմ., բնագիրը պատրաստեցին և ծանոթագրեցին Լ. Մուրադյանը և Ա. Մանուկյանը, խմբ.՝ Սարինյան Ս. Ն.]. Եր., «Նաիրի», 1990. 512 էջ։
Հատորն ընդգրկում է 1878—1883 թթ. Րաֆֆու գրած հոդվածները։*

Ր 4702080101 (108) / 705 (01) 90 .13.88

ԳՄԴ 84Հ1-4

ISBN 5-550-00013-X (Հ. XI)

© *«Նաիրի», կազմելու, ծանոթագրելու, խմբագրելու և ձևավորման համար. 1990*

ՀՐԱՊԱՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ,
ԵՒ ԳԻՐՔԻՆ-
ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ,
ՀԱՅՈՑ ՅՆԴԻՄ

1878

ԴԱՐՏԱԿ ՀՈՒՅՍԵՐՈՎ ԵՆՔ ԽԱԲՎՈՒՄ

Մինչև երեխան լաց չի լինում,
Մայրը ծիծ չի տալիս:
ԱՌԱՍ

Զարմանալի բան է հույսը:

Նա մարդերի մեջ հայտնվում է երկու կերպարանքով. մեկ, որ մարդը գործում է, աշխատում է և ամենևին չէ թուլացնում իր եռանդը և հույս ունի, որ կհասնի իր նպատակին: Մյուս, որ մարդը ոչինչ չէ շինում, ծույլ է, հանգիստ իր տեղը նստած է և հույս ունի, թե մի օր կստանա այն, ինչ որ ցանկանում է:

Մեր խոսքը վերջին տեսակի վրա է:

Կան աղքատներ, որ միշտ երևակայում են, թե մի օր գանձ կգըտնեն և կհարստանան: Դուք քննեցե՛ք մի սարուկ և ծույլ ժողովրդի առակները, առածները, լեգենդաները ու հնքիաթները և կտեսնեք, որ նրանց մեծ մասը թափուցած գանձերի վրա է: Աղքատի երևակայությունը մի ուրիշ բան չէ կարող ստեղծել: Այնպես էլ քաղցած հավը երազումը կուտ է տեսնում և սկսում է իր ոտները կոցահարել...

Այս տեսակ հույսերը խանգարված երևակայության և ուղեղի հիվանդության ցնորքներ են: Այս տեսակ հույսերը գժերի երազներ են:

Այս տեսակ հույսերով ապրում են ոչ միայն մասնավոր անհատներ, այլ ամբողջ ժողովուրդներ և ամբողջ ազգեր: Մինչև այսօր հրեից ազգը սպասում է, թե կհայտնվի մի մարդ, որ կնորոգե սուրբ տաճարը, որ կրարձրացնե Երուսաղեմը իր ավերակների փոշիներից և կվերադարձնե Իսրայելի կորած փառքը: Այն ժամանակ աշխարհի հզոր թագավորները, մի հասարակ հրեայի փեշից բռնած, ողորմություն կխնդրեն:

Երուսաղեմը ընկավ, Իսրայելը փոշու նման ցրվեցավ բոլոր աշ-

խարհի վերա, բայց Աբրահամի որդիքը ամենավին այդ հույսով են ապրում։

Հույսը այնքան սաստիկ ներգործություն ունի մարդկային երևակայության վրա, որ բոլոր ազգերի կրոնքները նրան իրանց գլխավոր հիմունքներից մեկն են դրած։ Նա է ոգևորում նահատակներին համբերությամբ տանել բռնակալ ձեռքից սարսափելի տանջանքները։ Նա է հանգստացնում վշտակիր ֆամիլի անտանելի ճգնություններըւ Նա է թեթևացրում մարդուն զոհել իրական կյանքը, տանել աշխարհը և վայելչություններըւ մի գերբնական կյանքի բարեբյուններին սպասել տալով։ Կրոնը, որպես վերացական սահմանադրություն, և վերացական հիմքի վրա է դրված, դա է հույսը։

Հույսը մի անդունդ է, որի անհունական դատարկության մեջ մարդը մխիթարվում է այն բաներով, որ իսկապես չունի։

Դատարկ հույսը ծուլացնում է մարդուն, խլում է նրանից իր ինքնագործունեությունը և զրկում է տոկուն աշխատասիրությունից։ Դատարկ հույսը մարդուն ամեն բան դրսից է սպասել տալիս. նա չէ հաղնում, որ մարդ կանգնի իր սեփական ոտների վրա։ Նա միշտ նեցուկ է որոնում։ Եվ այս պատճառով մարդկային առաջադիմության մեջ չկա մի ավելի վնասակար բան, քան թե ցնորամիտ հույսը... Նրա խաբեական երազների մեջ մարդ գրկվում է իր բոլոր ցանկությունների ստվերների հետ։

*Ինչ որ գործում է դատարկ հույսը մի անհատի կյանքի մեջ, նույնը գործում է նա մի ազգի պատմության մեջ։ Քննենք մի ազգի պատմություն, և այդ թո՛ղ լինի մեր ազգի պատմությունը, և կտեսնենք, թե ո՛րքան մեծամեծ վնասներ է կրել նա, ո՛րքան կորցրել է դատարկ հույսերից հրապուրված և տակավին չէ խրատվել իր սխալներով**։

Ահա 850 տարի է, որ Հայաստանը մոնղոլական ցեղերի լծի տակ հևծում է. քաղաք չմնաց, որ մի քանի անգամ նրանցից կործանված չինի. մեր աշխարհում մի քիչ տեղ չմնաց, որ նրանք արյունով չողողեին, տաճար չմնաց, որ նրանք չպղծեին, կամ իրանց կիսալուսինը նրա կաթողիկեի վրա չտնկեին։ Շատ անգամ ամբողջ գավառներ ամայի անապատ դարձան այս բարբարոսների արշավանքներից. շատ անգամ

---

* *Մենք արդեն պատրաստ ունենք մի շարք հոդվածներով համառոտ պատմական տեսություն, Տրդատից սկսած մինչև Ռուբինյանց թագավորության վերջը, որի մեջ ցույց է տրված, թե ի՛նչ վնասներ կրեցին հայերը, իրանց հույսը երբեմն այս և երբեմն այն պետության վրա դնելով։ Այս աշխատությունը կտպվի «Մշակի» համարներում։*

բյուրավոր ընտանիքներ ոչնչացան գերության և հալածանքի մեջ։ Սուլթանները հազարավոր լեզուներ կտրել տվին հայերեն խոսալու համար։ Անդրայի, Տիգրանակերտի, Խարբերդի և Փոքր Ասիայի շատ կողմերում մայրենի լեզուն կորավ հայի բերանից։ Եվ մոնղոլական այլանդակ կերպարանքը գեղեցկացավ, կանոնավոր ձև ստացավ հայոց գեղեցկուհիները բռնության դեմ հարիմ քաշ տալով։ Կրկնում ենք, 850 տարի է, որ Թուրքերը կատաղի գազանի նման ուտում, մաշում և սպառում են հայոց ազգի մարմինը, և նա համբերում է...

Ասում են, պատմական հալածանքները բողնում են պատմական ախտակալություն։ Մի ազգ չէ մոռանում մի ուրիշ ազգի բարբարոսությունները, որ գործել է իր նախնիքների դեմ։ Հույնը, պարսիկը ատում են հայերին, որովհետև հայերը ունեցել են նրանց պապերի հետ փոքրիկ հաշիվներ։ Բայց հայը ոչ ոքին չէ ատում, չնայելով, որ նա բոլոր իր շրջապատող ազգերից հալածանքներ է կրել, հարվածներ է ստացել։ Եվ հայի այս ներողամտությունը առաջ է գալիս ոչ թե նրա քրիստոնեական եղբայրասիրությունից, այլ նրա հոգեկան անզգայությունից...

Դիահները ատելություն չունեն. դիահները լուռ համբերություն ունեն...

Այո՛, 850 տարի է, որ հայը մոնղոլական կրակի մեջ այրվում է և մի ձայն, և մի բողոք չէ բարձրացնում։ Դա հայի մեռելության նշանն է, որ նա պատվի, ինքնասիրության և ազատության զգացում չունի։ Ասում ենք մեռելության, և ոչ սարկության, որովհետև դրանով չափազանց պատված կլիներնք նրան, որովհետև սարուկը գոնյա իր սրտում թաքցրած ունի մի խուլ ատելություն դեպի իր բռնակալը, և հարմար միջոցում դուրս է ժայթքում։ Բայց հայը այդ էլ չունի։

Հայը ունի այն երազական ցնորքը, որ մենք հույս կոչեցինք, որով ապրում են, որով մխիթարվում են ծույլ և դանդաղկոտ ժողովուրդները, թե մի օր դերբնական կերպով ազատված կլիներն...

* * *

Ահա՛ զարկից ժամը, և Տաճկաստանի հարստահարված քրիստոնյաների վիճակը պիտի որոշվի[1]։ Քաղաքագետները դրան կոչում են արեվելյան հարցի լուծում։ Այս բազմադարյան խճճված հանգույցը պետք է լուծվի սրով։ Հարստահարված ազգերը սուր բարձրացրին, և մի հզոր պետություն նրանց պաշտպան հանդիսացավ, կռտորածը սկսվեցավ և տակավին շարունակվում է...

Բայց ի՞նչ արավ հայը։

Ոչինչ։ Նա իր տեղում հանգիստ նստից և խոսի նման կովողների ոտքի տակ արոտվեցավ և նրանց պատերազմական փոշու մեջ խեղդվեցավ։ Հայի գլխին կատարվեցավ այն առածը, թե՝ «ձին ու ջորին կռվեցան, էշը մեջտեղում սատկեցավ»։

— Ի՞նչ կարող էր անել հայը,— հարցրեց բարեկամներից մեկը, որ մի օր այս առարկայի վրա խոսում էինք։

— Կարող էր ինքն էլ զենք բարձրացնել,— պատասխանեցի ես։

— Նա այդ բանի մեջ շնորհք չունի։

— Ուրեմն ոչինչ պահանջելու իրավունք էլ չունի։

— Ինչո՞ւ։

— Որովհետև ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրանց ազատությունը սրով պաշտպանել գիտեն։ Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց ղոհերի՝ փրկություն։

— Բայց դուք մոռանում եք ընդհանուր մարդասիրությունը,— ասաց բարեկամս։

— Դա մի ուռկան է, որով որսում են մեզ նման հիմարներին՝ կըռկին սարկացնելու համար։

— Բայց դուք մոռանում եք, որ մեր օգուտը մեր լուսյան և մեր հանգստության մեջն է։

— Այդ ես հասկանում եմ, հայը միշտ սովոր է այսպես մտածել. «Թո՛ղ ուրիշները փրթեն, ես կխփշտեմ»։ Այժմս էլ ևրևակայում է նա օգուտ քաղել ուրիշի թափած արյունից։

— Բայց ես հույս ունեմ, հաստատ հույս ունեմ,— կրկնեց բարեկամս,— որ այս պատերազմով արևելյան հարցը կլուծվի, և հայն էլ կստանա իր մասն ու բաժինը։

— Դարձյա՛լ հույս... Ռամկորեն ասում են. «Հույսը յանեցին, ու տեղումը ոչինչ բուսավ»։

Մեզանից շատերը այդ հույսը ունեին։ Բայց թե ի՞նչ հիմքի վրա է կայացած նա, հայտնի չէ։ Միայն մենք ուրախանում ենք, երբ եվրոպական որևիցե լրագիր հայերի մասին ծուռ ու սխալ կերպով մի բան է հայտնել։ Մխիթարվում ենք, որ եվրոպացին արժան է համարել արհամարհված հայի մասին խոսել։ Մենք մխիթարվում ենք, երբ եվրոպայի որևիցե քաղաքում, մի ժողովի մեջ հայկական հարց է բարձրացել։ Տեսեք, ասում են, մեզ վրա ուշադրություն են դարձնում, մեր բանը պրծած է... Թուրքիայի հայը այսուհետև ազատ է... Մենք ուրախանում ենք, որ սուլթանը հայոց պատրիարքի հետ ողորմածությամբ է խոսա-

ցել, նրան բարձր պատվանշանի է արժանացրել[2]. այդ բարձրագույն դուքը ազգին է վերաբերում, ասում ենք և մխիթարվում: Մենք ուրախանում ենք, մտածելով, որ ռուսը պատերազմը քրիստոնյաների իրավունքի և ազատության համար է հրատարակել. ուրեմն հայն էլ օգուտ կքաղի ռուս զինվորի թափած արյունից:

Եվ ուրիշ շատ բաներ մտածում ենք մենք:

* * *

Շա՜տ լավ: Եվրոպացին խոսում է իր լրագրի մեջ, խոսում է իր ժողովների մեջ, ռուսն էլ արյուն է թափում, բայց ի՞նչ է անում ինքը հայը:

Նա իր տեղում անհոգ նստած է, նա լուռ է:

Մի լրագիր, մի ազգային թերթ միայն իր բողոքը պատռում է[3], Բայց նրա ձայնը կարո՞ղ է հասնել Եվրոպայի ականջներին, քանի որ նույն իսկ հայոց լսելիքը խլացած են նրա համար: Այս լրագիրը առաջարկեց մի խումբ երիտասարդներ ուղարկել Եվրոպայի զլխավոր քաղաքներում մեր ցավերը հրատարակելու համար: Կատարվե՞ց: Այս լրագիրը առաջարկեց կազմել մի դիտնական ընկերություն և հայերի բոլոր հարստահարությունները առանձին դրքույկներով և զանազան լեզուներով հրատարակել ու ամեն տեղ տարածել: Կատարվե՞ց: Այս լրագիրը հայտնեց, թե հասել է այն ժամանակը, երբ մեր եղբարց փրկության համար հարուստը չպետք է խնայե իր արծաթը, գիտնականը չպետք է խնայե իր հանճարը, եկեղեցականը չպետք է խնայե իր ազդեցությունը ու ջանքը, իսկ աշխարհականը, ամիկը չպետք է խնայե իր արյունը: Այս լրագիրը շատ բաներ առաջարկեց, շատ բաներ խոսեց, բայց ի՞նչ արեցին կարդացողները: Ո՛չինչ:

Ուրեմն ի՞նչ կարող ենք հուսալ, քանի որ այսպիսի անդամներից է բաղկացած մեր ազգությունը: Հարուստը իր փողն է պաշտում: Գիտնականը հեռանդ և անձնազոհություն չունի: Եկեղեցականը անտարբեր է մնում: Աշխարհականը, ամիկը սիրտ չունի, սիրտը մեռած է...

«Մեր լռության մեջն են մեր շահերը»,— ասում են հիմար-իմաստունները:

Բայց գիտե՞ք հայի առածը՝ «մինչև երեխան լաց չէ լինում, մայրը ծիծ չէ տալիս»: Եթե այրական քաջություն չունենք, գոնյա երեխայի արտունչ ունենանք. եթե ոչ, Եվրոպան մեր լռությունը բոլորովին

ուրիշ կերպ կբացատրեն. Նա կմտածեն, թե Տաճկաստանի հայը գոհ է իր վիճակից, և իրավունք էլ ունի այսպես մտածելու։

Ո՞ւր մնացին Կ. Պոլսի այն տաք գլուխները, որոնց բերանում անդադար հնչվում էր «ռևոլյուսիոն մը ընելու է» խոսքը։ Ո՞ր ծակը մտան այն ցնորամիտ երիտասարդները, որոնք իրանց տաղերի մեջ Հայաստանի անկախությունն էին երազում։ Եվ ո՞ր օրվա համար էին այն ֆրանսիացած և անգլիացած պարոննների գրիչները, որոնք շատ անգամ մտածում էին այդ լեզուներով լրագիրներ հրատարակել հայոց ցավերը Եվրոպային հայտնելու համար։

Բոլորը լռվեցան, երբ տեսան բաշիբոզուկների սվիններից։ Բավական չէ, որ օտարը հայի մասին խոսում է. պետք է նա ևս, եթե չբարձրացրեց իր սուրը, գոնյա բարձրացներ իր ձայնը։ Բայց այս բանի մեջ ևս նա շնորհք չունեցավ։ Մինչև այսօր մի պաշտոնական ձև ունեցող բողոք չհայտնվեցավ հայերի կողմից։ Մինչև այսօր մի ազգային պատգամավորություն չդիմեցավ ուր որ հարկն էր։ Ժողովուրդը ոչինչ չարեց, ոչինչ չգործեցին և ժողովրդի ներկայացուցիչները։

Կ. Պոլսի հայոց պատրիարքը շողոքորթում է, կեղծավորվում է և հայ ևկեղեցականի հատուկ սովորությամբ՝ ազգի շահերը իր փառքին է զոհում։ «Պատրիարքը ստիպված է այսպես վարվել»,— մտածում են կարճատեսները։ Դիցուք թե, նա այնքան անձնազոհություն չունի, որ իր ժողովրդի իրավունքները պաշտպանելու համար հունաց Դրիդորի նման իր պատրիարքարանի դռանը կախաղան հանվի, դիցուք թե, նրա լեզուն Կ. Պոլսում կապված է, բայց ո՞վ էր արգելում նրան թողնել Թուրքիայի մայրաքաղաքը, ընտրել մի եվրոպական քաղաք, թող այդ լիներ Լոնդոն, և այնտեղից իր ժողովրդի բողոքներին թարգման լիներ, ուր որ հարկն էր։ Թող պատրիարքարանը նրա ծախսերի համար իր երեք հազար լիրա պարտքի վրա ավելացներ հազար լիրա ևս. պոլսեցիք սովորել են վճարել իրանց պատրիարքարանի պարտքերը։

Բայց ո՛չ, սուլթանի մի ժպիտը պատրիարքին մոռանալ տվեց հայ ժողովրդի արտասուքը և արյունը։

Ինչո՞ւ ենք մեղադրում պատրիարքին, երբ ընդհանուր հայոց կաթողիկոսը, ազգի հոգևոր ներկայացուցիչը, նույնպես լռություն է պահպանում։ Մի խնդիր, որ գուցե դարերով այլևս չպետք է կրկնվի, մի խնդիր, որով պետք է վճռվի Տաճկաստանի հայոց ապագան,— ընդհանուր հայոց հայրապետը իրան անտարբեր է պահում դեպի այն, նա, որին միայն է պատկանում ազգի իրավունքների պաշտպանության ձայնը։

Հայոց կաթողիկոսի հայրապետական աթոռը մի ապահով երկրում է դրած, Թուրքը նրան երկյուղ չէ կարող ազատնալ, բայց ինչո՞ւ է լուռ։

* * *

Այսպես չէ, որ մենք ենք մտածում։ Մեզանում կան մի տեսակ կարճամիտներ, դժբախտաբար նրանց թիվը փոքր չէ, որոնք երևակայում են, թե հայի ապագան Տաճկաստանումն է, թե հայի գոյությունը կապված է Թուրքայ կառավարության գոյության հետ։ Նրանք մտածում են, թե այժմյան բարբարոսությունները, հարստահարությունները մի օր կվերջանան, երբ Թուրքը կքաղաքակրթվի, այն ժամանակ, ասում են, հայը քաղաքացու հավասար իրավունք և ազատ կյանք կվայելե։

Այդ ցնորք է։

Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա։ Նա այսօր բռնությամբ հայի տղան, աղջիկը և կինը հափշտակում է և մահմեդական շինում, բայց էգուց այնպիսի հրապուրիչ ձևեր կմտցնի, որ հայերը իրանց կամքով կդիմեն դեպի մահմեդականի մզկիթը։ Նա այսօր ավազակի պես է կողոպտում, բայց էգուց այնպիսի օրենքներ կդնե, որ հայը ամենևին չի էլ զգա, որ իր աշխատության վաստակը մեծ մասամբ մտնում է արքունի դանձարանը։

Եվ ուրիշ կերպ լինել կարելի չէ, քանի որ տիրող ազգը աշխատելու շնորհք չունի և միայն զենքով իշխելու քաջություն ունի։ Այսպիսի ազգը պահպանում է իր գորությունը հպատակ ազգերի ձեռքի աշխատանքով։ Թուրքը մի զինվորական ազգ է։ Երկրի վաճառականությունը, երկրագործությունը, արհեստը, մշակությունը, բոլորը հպատակ և ոչ-մահմեդական ազգերի ձեռքումն է. հայտնի բան է, որ դրանք պետք է աշխատեն Թուրքի համար։ Թե միշտ այսպես է եղել զինվորական ուժերի վրա հիմնված ազգերի և պետությունների հարաբերությունը իրանց աշխատասեր, բայց անզեն հպատակների հետ, դա պատմության մեջ մի ապացուցված բան է։

Զինվորական ուժերի վրա հիմնված պետությունը, այլ խոսքով, մի ազգ, որ ամբողջապես բաղկացած է զինվորականներից, մի վիթխարի վիշապ է, որ կլանում է, ուտում է, ոչնչացնում է, ինչ որ արդյունաբերում է ողորմելի հպատակի աշխատասեր ձեռքը։ Այս վիշապը կուլ է տալիս ամբողջ ազգեր ու ժողովուրդներ՝ իր մարմինը պարարտացնելու համար։

Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ Թուրքը։ Նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված։ Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կընքում իր դատապարտության դատավճիռը։

Մի՞թե երեկվա գաղանը կարող է այսօր հրեշտակ դառնալ։ Մինչև նրա հրեշտակ դառնալը, Թուրքիայում հայի անունը միայն մնացած կլինի։

* * *

Ժամանակը մոտեցավ, պատերազմը վերջանալու վրա է, բայց հայը տակավին մի նշանավոր տնօրինություն չէ արած իր համար։ Մինչև այսօր փորը ի շատն աչքի ընկնող բան, որ երևեցավ, դա էր Սեծ Արդարի տետրակը[1]։ Բայց ի՞նչ մեծ նշանակություն կարող է ունենալ մի փորրիկ տետրակ այնքան դարերի և մանավանդ այժմյան ցավերը արտահայտելու համար, որոնց ամբողջ հատորներով գրքեր չեն բավական։

Մյուս, ինչ որ լավել է մինչև այսօր, ճանճի բզզոցներ կարելի է համարել, որոնք կարող են միայն ծիծաղ շարժել և ոչ ցավակցություն։ Եվ ի՞նչ նշանակություն կարող են ունենալ մեր բղղոցները եվրոպական ընդհանուր մարդասիրությունից դուրկ, եսական քաղաքականության առջև, քանի որ սլավոնական ցեղերի բնդանոթների որոտմունքը և նրանց թափած արյան մրմունջը աղդեցություն չեն գործում։

Իսկ այդ պետք չէ, որ հուսահատեցնե մեզ։ Եվ եթե Թուրքիայի հայի դաժանական գրությունը չբարվոքվի ևս, գոնյա պատմության դատապարտութենից ազատվելու համար, գոնյա ապագա սերունդի մոտ սևերես չմնալու համար մենք պետք է թափենք մեր բոլոր ճիգը՝ ներկա հանգամանքներից օգուտ քաղելու, և եթե չհաջողվի ևս, մեր որդիքը կասեն, թե մեր հայրերը աշխատեցին...

ԻՆՔՆԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

Ումի՛ր զրնգ

Ինքնախաբեությո՞ւն... դա մի շատ հասարակ բառ է, բայց նրա մեջ թաքնված են մարդու բոլոր թշվառությունները։ Տեսնում ես մեկը հիմար է, բայց կարծում է, թե խելք ունի։ Մյուսը երկչոտ է, կարծում է, թե առյուծի սիրտ ունի։ Սրրորդը ոչինչ չէ սովորել, բայց իրան հան-

ճար է նրևակայում։ Ջորրորդը չարագործ մեկն է, բայց իրան առաքինության տիպար է համարում։ Այս բոլորը առաջ է գալիս ինքնախաբեությունից։

Ինքնախաբեությունը մի աչք միայն ունի, և նա ամեն բան լավ կողմից է տեսնում։ Նրա մյուս աչքը կույր է ագեղություններ, այլանդակություններ և մոլություններ տեսնելու համար։ Եվ այս պատճառով այն թշվառականը, որ մի այդպիսի ողորմելի դրության մեջ է գտնվում, միշտ գոհ է իր վիճակից, որովհետև իր մեջ թերություններ չէ տեսնում։ Եվ դրա համար նա միշտ անշարժ է մնում. ոչ մի ձգտում դեպի առաջադիմություն և ոչ մի պահանջ կյանքից չունի. իրան ամեն բանով լիացած է համարում։

Ինքնախաբեությունը բարոյական ինքնասպանություն է. մի մեռելություն է, որի մեջ մարդկային բոլոր կրքերը հանգիստ են...

* * *

Ինքնախաբեության հակառակն է իմիննաճանաչությունը, նրա հայրը նախանձն է, իսկ մայրը՝ դժգոհությունը։ Նա ոչինչ բանով բավական չէ։ Նա շատ բան ունի, բայց միշտ մտածում է, թե սակավ ունի։ Նա միշտ դեպի վեր է նայում, աշխատում է բարձրանալ։ Նա ըմբռնել է ընդհանուր մարդկային կատարելությունները. նա ծանոթ է բարձր և վսեմ գաղափարների հետ, և, իրան համեմատելով կատարելագործված ընդհանրության հետ, գտնում է շատ փոքր և փոքր։ Դրա համար միշտ դժգոհ է։ Նա կրկնում է Սոկրատեսի հետ. «Ես միայն մի բան գիտեմ, այն է, որ ոչինչ չգիտեմ»[1]։ Այդ խոսքի մեջն է ինքնաճանաչության բոլոր վսեմությունը։

Երանելի է այն մարդը, որ այսպես է զգում։ Այստեղից է առաջ գալիս տակուն աշխատությունը, դա է ոգևորում մարդուն դեպի անդադար առաջադիմություն. դա է ծնում հանճարները, արհեստը, գիտությունը և աշխարհի բարօրությունը։

Դժգոհությունը իր վիճակից մի ազնիվ զգիտ է, որ տանում է դեպի նրա բարվոքումը։

* * *

Որպիսի բնավորություններ հայտնվում են անհատների մեջ, նույնպիսիք և հայտնվում են ամբողջ ժողովուրդների և ազգերի մեջ։ Որովհետև բոլորը կազմված է մասնիկից, ինչ որ մասնիկն են, այն և բոլորն էլ։

Կան ազգեր, որ շատ գոհ են իրանց վիճակից, կարծում են, թե ամեն բան ունեն և իրանց ինքնությունները չեն տեսնում։ Կան նաև ազգեր, որքան առաջ են գնում, որքան արդյունաբերում են, որքան կատարելագործվում են, այնքան դժգոհ են։

Խոսենք մեզ վրա։

Մենք գտնվում ենք կատարյալ իմիտացիոն վիճակի մեջ։

Ընտանիքը, ազգության հիմքը, սկսել է մեզանում փտել, այլասերվել, մի կողմից շռայլությունը, մյուս կողմից անբարոյականությունը օրըստօրե աչնչացնում են նրա մեջ ինչ որ բարի է, ինչ որ ազնիվ է։ Նա կորցրել է իր նահապետական պարզությունը, և նոր, այսպես կոչված եվրոպական կրթությունից սնփափանել է միայն վատ կողմերը։ Ո՛չ, ասում են, այդպես չէ, մի բան, որով կարող է պարծենալ հայը, դա է նրա ընտանեկան սրբությունը, որի մեջ տիրում է խնայողություն, անդամների առաքինական ներդաշնակություն և այլն։

Մեր լեզուն, ասում ենք, սկսել է կորչել ազգի բերանից. Տաճկաստանի հայը տաճկերեն է խոսում, Ռուսաստանի հայը ռուսերեն է խոսում, Պարսկաստանի հայը՝ պարսկերեն, Հնդկաստանի հայը՝ անգլերեն. և ամենավտանգավորն այն է, որ այդ ախտը սկսում է ընտանիքից։ Ո՛չ, պատասխանում են, այդպես չէ, մեր լեզվով Ադամն ու Նոյն էին խոսում, ինչ հայ կա, որ իր լեզուն չգիտենա։

Մեր գրականությունը աղքատ է, ասում ենք, ժողովուրդը զուրկ է մնում մտավոր սնունդից. պահանջում ենք մեր հասարակությունից ընթերցանություն, բայց նրան գիրք չենք տալիս։ Իսկույն ցույց են տալիս Սղիշեն և Խորենացին։ Էլ ի՞նչ։ Մի քանի էլ կրոնական գրքեր։

Մեր դպրոցները, ասում ենք, ամենաթշվառ դրության մեջ են, նոր իմաստակների ձեռքում խաղալիք են դարձել։ Նրանք կորցրել են հին ձևը, որը թեև փտած էր, բայց ինքնուրույն էր և դարևոր փորձերի վրա էր հիմնված։ Ո՛չ, այդպես չէ, պատասխանում են, և իսկույն ցույց են տալիս քեզ եվրոպական մանկավարժությունը։ Թեև այդ եվրոպական մանկավարժություն ասած բանը այնքան են հասկանում մեր վարժա-

պետները, որքան հասկանում են մեր աղջիկները եվրոպական մոդայով ձևած մի հագուստ, որ պատրաստ գնել էին Ֆրանսուհի դերձակից։

Մեր եկեղեցին այլանդակվել է, ասում ենք, փոխել է իր նախնական պարզ կերպարանքը, դարձել է ծիսապաշտության, շնորհավաճառության և անհավատության մի գործարան։ Դու անկրոն ես, անհավատ ես, պատասխանում են, եկեղեցու սրբության դեմ չէ կարելի խոսել, մեր եկեղեցու նման ազատ եկեղեցի չկա։

Մեր եկեղեցական կառավարությունը, ասում ենք, դարձել է բաշիբոզուկների վարչություն. կամայականությունը տիրում է կարգի և կանոնների վրա. անարժաններն առաջ են գնում, արժանավորները ճնշվում են։ Իսկույն ստանում ես միևնույն հիմար պատասխանը, թե դու կրոնի դեմ ես խոսում, և հետն էլ ավելացնում մի քանի հայհոյանքներ։

Մեր եկեղեցականները, ասում ենք, դարձել են անպիտան մշակներ. նրանց գիտությունը, նրանց վարքը չէ համապատասխանում իրանց հանձն առած պաշտոնին։ Նրանք ավելի գայթակղեցնում են մեր ժողովուրդը, քան թե նրան մի բարոյական և հոգևոր ուղղություն են տալիս։ Իսկույն քեզ ցույց կտան Ներսես Մեծին, Սահակ Պարթևին և Մեսրոպին։ Իսկ այժմյանն՞րը։ Այժմյանները քավում են իրանց մեղքերը հների աշխատությամբ...

Մեր լրագրությունը, ամսագրերը և նամայա հանդեսները, ասում ենք, փոխանակ արթնացնելու ժողովուրդը իր նախապաշարմունքներից, փոխանակ նոր և թարմ մտածություններով ծանոթացնելու, փոխանակ նրան դեպի ուղիղ ճանապարհը առաջնորդելու, ավելի մոլորեցնում են, ավելի թմրեցնում են նրան իր անշարժության մեջ։ Այսպես պետք է կրթել ժողովուրդը, պատասխանում են քեզ։

Վերջապես ամեն բան մեղանում լավ է գնում... Խոսում ես տընտեսական անկարգության վրա, վաճառականության անկանոնության վրա, երկրագործության հետամնացության վրա, արհեստի նահապետական դրության վրա, դյուղացու՝ մշակ դասի, ողորմելի վիճակի վրա, մի խոսքով, ամեն բանի վրա, ինչ որ պետք է մարդուն, միևնույն պատասխանն ես ստանում, ամեն ինչ լավ է մեզանում։

Այս բոլորը առաջ է գալիս ինքնահաբեությունից. այս բոլորը առաջ է գալիս այն միակողմանի հայացքից, որ մենք ամեն բան լավ կողմից ենք տեսնում։

Ա 82/117

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԱՏՆԵՐԻ ԳՐԱՆԴԱՐԱՆ

* * *

Ինքնախաբեությունը մեղանում ծնել մի տեսակ «ազգասերներ», որոնց վրա մինչև այսօր ո՛չ մեր վիպասաններըը, ո՛չ մեր թատրոնական բեմը և ո՛չ էլ մեր լրագրությունը ուշադրություն չեն դարձրել։ Դրանց նշանաբանը բովանդակվում է այս սկզբունքի մեջ. «Ինչ որ հայկական է, այն լավ է»։

Այս տեսակ «ազգասերները» մի կատարելագործված տիպ են ներկայացնում մեր հասարակության մեջ, որոնք, կարծես, պատկանում են մի առանձին շերտայի, որի հիմնադիրը հայտնի չէ։

Դրանք, արդարև, սիրում են ազգը, որպես մի երիտասարդ սիրահարված է լինում մի օրիորդի վրա, որն նրան ամենևին չէ ճանաչում, որը նրա բերանից մի խոսք անգամ չէ լսել, որը նրա կողմից ոչ մի շնորհ չէ տեսել։ Բայց նա սիրում է։ Օրիորդի հիմարություններն անգամ սիրելի են նրան։

Նրանք սիրում են... վրդովվում են... ոգևորվում են... և ամեն կիրք իրանց սրտի մեջն է մնում։ Նրանք ազգը դանում են իրանց սենյակի չորս պատերի մեջ. դրսում նրա հետ հարաբերություն չունեն։ Որպես մեր երևակայական սիրահարը իր սիրուհին իր գլխի մեջն ունի։

Այս տեսակ «ազգասերներին» ծանոթ չէ «գործը»։ Բայց նրանք մեծ բարիք գործած են համարում ազգին, երբ խոսում են նրա վրա և խոսում են միշտ իրանց նմաններին հետ. նրանց ձայնը օտարը չէ լսում։ Նրանք չունեն մինչև անգամ այն բանը, որ կոչվում է ցանկություն. որովհետև մի բան ցանկանալու համար պետք է մի բան պահանջել. բայց նրանք պահանջմունք էլ չունեն։ Նրանք բավական են այն բոլորով, ինչ որ կա արդեն, ինչ որ թողել են մեր պապերը։ Իսկ մի նոր բան անելու համար դեռ ապասում են...

Նրանց խոսքը զովասանություններ է։ Գովել, ոգևորվել, ուրախանալ ազգի չունեցած կատարելություններով, այդ է նրանց սիրո երևակայական առարկան։ Եվ միշտ վրդովվում են, դավաճան, ուրացող են համարում այն մարդուն, որ համարձակվում է ազգի այս և այն թերությունները նկատել, կամ նրա նախապաշարմունքի դեմ խոսել։ «Դու մեր ունեցածը քանդում ես»,— ասում են։

Այս տեսակ «ազգասերներ» կան, գոյություն ունեն, բայց ոչքի չեն երևում։ Նրանք քսո մեծի մասին առանձնական կյանք են վարում։ Նրանք քուրմերի բնավորություն ունեն, սիրում են վարագույրի հետևում թաքնված մնալ և երբեմն պատգամներ խոսել։ Նրանց խոսքերի մեջ

իմաստ չկա, բայց միևնույն ժամանակ բազմիմաստ են, որպես մարգարեի խոսք, որ միշտ մեկնության կարոտ է։

Նրանք չեն սիրում ազգային գործերի մեջ մտնել. որովհետև միշտ երևակայում են, որ իրանք մի «մեծ» բան պիտի անեն, որի ժամանակը չէ հասել... և միշտ իրանց աչքի առջև արգելքներ են տեսնում։ Այլև արհամարհում են այժմյան գործիչների գործը, համարելով երեխայական խաղ։ Լուռ ժպիտը նրանց երեսից պակաս չէ, երբ լսում են որևիցե դատողություն մի ճոռելուկից, և նայում են նրա վրա, որպես մի զարգացած մարդ նայում է փոքրիկ մանուկի ծուռ ու սխալ թոթովանքին։ Իրանք միշտ լուռ են, շատ բան գիտեն, բայց չեն խոսում։

Նրանք միշտ ողևորվում են անցյալով. Վարդանը, Ավարայրի դաշտը, Անին նրանց խոսակցության նյութն է։ Թուրքիայում և Կ. Պոլսի ազգային սահմանադրության մեջ տեսնում են մեծ ապագա և հայոց փրկության գռնում են հայոց եկեղեցու մեջ։

Այս «ազգասերները» իրանց տեսակի կատարելագործված տիպն են, որոնք ճանճաբեներ են համարվում։ Նրանք բարի մարդիկ են, բայց վտանգավոր են։ Կույր սերը միշտ վնասակար է լինում. որովհետև միշտ լավն է տեսնում, վատը չէ նկատում։

Բայց կա և երկրորդական տեսակը, որն առաջինի կեղծ պատճենն է։ Դրանք խարդախ մարդիկ են, որ ազգասիրական դիմակի ներքո թաքցընում են շահեկան նպատակներ։ Այսպիսիները խառնվում են գործի մեջ։ Նրանք լինում են դպրոցների հոգաբարձուներ, եկեղեցիների գանձապետներ, հարուստ որբերի խնամակալներ, բարեգործական նպատակով նվիրված գումարների կատակատարներ, առաջնորդ-սրբազանների խնկարկուներ, աղքատ դերասանների պաշտպաններ, միևնույն դպրոցի մեջ մշտական և ժառանգական վարժապետներ, և երբեմն լրագիրների և ամսագիրների խմբագիրներ։ Այս տեսակ ազգասերների թվում են և այն բարեբարեները, որոնք միշտ կողոպտել են, հափշտակել են և հարստահարել պարզամիտ կերպ ավազակությամբ հարստություն են դիզել. և վերջ ի վերջո ցանկանում են լավ մարդ ձևանալ և իրանց կեղտոտ անցյալը ծածկել ազգասիրական քողով։

Այս տեսակ «ազգասերը» սիրում է ազգը նրան կողոպտելու համար, որպես վամպիրը թմրեցնելով է ծծում իր զոհի արյունը։ Նա կխոսի քեզ հետ միշտ հայերեն լեզվով, կաշխատի հետու մնալ օտարազգի բառերից. և միշտ (բայց խոսքերով միայն) բարի ցանկություններ կհայտնի իր «սիրելի» և «պատվական» ազգի մասին։ Ա՛խ ու ո՛հ նրա բերանից պակաս չեն, երբ լսում է ազգի թշվառությունը, և շատ

անգամ արտասուք է երևում նրա աչքերում, երբ կարդում է «Վերք Հայաստանին»։ Նրա բարկությանը չափ չկա, երբ ազգի մասին թշնամանք և հայհոյանք է լսում, և առում է այն բոլորին, որոնք հայ չեն։ Այս բոլորը անում է նա, բայց երի պիտենա, թե Հայկի ոսկորներին մի քանի կոպեկ փող կտան, իսկույն գերեզմանից կհանեն ու կծախեն։

* * *

Ընթերցող, դու բավական ծանոթացար մեր նկարած երկու տիպերի հետ՝ փտած և կեղծ ազգասերների հետ, կամենո՞ւմ ես այժմ քեզ անձնապես ծանոթացնեմ նրանց մեկի հետ, և դու քեզ բոլորին ճանաչած համարիր, որովհետև ամենքը շատ թե քիչ տարբերությամբ միմյանց նման են։

Դա վերջին տեսակիցն է։

Ահա՛ մտնում ենք նրա մենարանը, այստեղ է գործում ազգի երևելի մտածողը։ Մեծ գրասեղանի հանդեպ, նույնպես մեծ բազկաթոռի վրա նստած է նա։ Նա մի հաստլիկ մարդ է, խոսում է նույնպես հաստլիկ ձայնով, թշերը նույնպես հաստլիկ են և թունդ կարմիր գույն ունեն։ Երևում է, ազգասերի փորը միշտ կուշտ է եղել. նա շատ առողջ է, թեև գլխի մազերը սպիտակել են։

Գրասեղանի դեմ ու դեմ (ազգասերի աչքի առջև) սև շրջանակի մեջ կախված է մի խորհրդավոր պատկեր, որ ներկայացնում է մի հերթաձակ կույս, որ նստած է փլատակների վրա։ Նրա շուրջը թափված են խորտակված գավազաններ, փշրնթաղ թագեր, փշրված զրահներ և զանազան զենքեր։ Իսկ ինքը կույսը, ձեռքը ծնոտին նեցուկ տված, գլուխը մի կողմ թեքած, տխուր կերպով նայում է Հայաստանի ավերակներին... Այս պատկերից փոքր-ինչ հեռու, ազգասերի աջ ու ձախ կողմերում, պատից քաշ են ընկած երկու ուրիշ պատկերներ ոսկեզօծ շրջանակներով։ Դրանցից մեկը Հայկն է, իսկ մյուսը՝ Վարդան Մամիկոնյանը։ Հայկի պատկերի ներքև պատի վրա մեխած է հին Հայաստանի քարտեզը։

Գրասեղանի վրա ածած են շատ թղթեր, որոնց վրա, թամին չցրվելու համար, դրած է մի ազգուսանման բան. դա մոզայիկներով զարդարած մի կրային բազադրություն է, որ բերած է Անիի ավերակներից։

Մի անկյունում մեծ պահարանի մեջ շարած են զրքեր վեհաստիկի ոսկեզօծ կազմերով. կարծես, շնորհքի համար դարսված լինեն։ Սենյակի

յակը զարդարած է արևելյան ճաշակով. փռած են գորգեր, դրած է թախտ, և երևում են մուշտաքաներ։

Ազգասերը լուռ է. նրա բազմահոգ դեմքը ցույց է տալիս, որ զբաղված է։

Ահա՛ ներս վազեցին սենյակի մեջ երկու հրեշտակի նման փոքրիկ երեխաներ։ «Պապաշա, պապաշա» կոչելով, նրանցից մեկը թռավ հոր ծնկների վրա և փաթաթվեցավ նրա վզովը։ Իսկ մյուս մանուկը փորձ փորձեց հետևել եղբորը, բայց գլորվեցավ հատակի վրա։ Հայրը բարձրացրեց նրան և համբուրեց։

Երեխաներից մեկի անունը Լևոն է, մյուսինը՝ Ռուբեն։ Հայրը մեծ ծառայություն է արել ազգին, որ կենդանացրել է այդ պատմական անուններըը։

— Ինչո՞ւ հայերեն չեն խոսում,— հարցնում ես ազգասերից։

— Մայրերի ու աղախինների հետ այսպես են սորված... ես էլ ժամանակ չունեմ դրանցով զբաղվելու,— պատասխանում է նա։

Երեխաները խլում են դրասեղանի վրայից «Մեղուի» վերջին համարը, որ տանեն իրանց համար «փռռան» շինեն։ Հայրը կոչում է որ ետ բերեն, բայց չարաճճիները անհայտանում են։

* * *

Ընթերցող, այս բոլորը քեզ վրա կարծեմ լավ տպավորություն գործեց. արտաքին ցույցերը բավական դրավիչ տեսար. այժմ մտնենք ազգասերի ներսը, սրտի մեջ։

Ես կսկսեմ խոսակցությունը, դու միայն լսիր։

— Դուք, երևի, «Մշակ» չի՞ք ստանում,— հարցնում եմ ես։

— Մի՞թե արժե փող կորցնել...— պատասխանում է նա արհամարհական ձայնով։— Այս լրագրի վրա թքել միայն կարելի է և ոչ կարդալ։

— Երևի, դուք կարդո՞ւմ եք,— խնդույն հարցնում է նա։

— Այո՛, և շատ սիրով։

— Այդ ձեզանից չէի՛ սպասում...

— Ինչո՞ւ։

— Եղբա՛յր պատվական, էլ ի՞նչ մնաց, որ չհայտառակեց նա. ընտանիք, կրոն, եկեղեցի։ Նա ուրացավ մեր ազգի բոլոր ազնիվ կողմերը. էլ մուր չմնաց, որ չքսեց նրա վրա։ Նա մեզ խայտառակեց, իսպառ խայտառակեց։

— Ինչո՞ւ չհայտառակել, երբ խայտառակելու բաներ կան։

— Մի՞թե կարելի է այդ։ Ասենք թե լինեին մեր մեջ թերություններ, մի՞թե կարելի է ամեն ինչ հրապարակ հանել։

— Այսպես վարվում են միայն այն հիմար հիվանդները, որ թաքցընելով իրանց ցավերը, աշխատում են առողջ ձևանալ։ Մեր թերությունները ծածկելով ի՞նչ շինեցինք մինչև այսօր։

— Դոնյա մեր պատիվը պահեցինք։ Օտարներն մեր պակասությունները չհամակացան։

— Օտարները մեզ նման կույր չեն...

Նա սկսեց թղթերի մեջ մի բան որոնել։

— Ահա՛ ձեզ ցույց կտամ Ս. Պետերբուրգից ստացած ալ. Կովյանի նամակը... ի՜նչ պատվական դատողություններ, ի՜նչ պատվական խորհրդածություն... Որտե՞ղ կորավ... Սաշա,— կոչեց նա ծառային։

— Նեղություն մի կրեք. Ս. Պետերբուրգի «պատվական խորհրդածություններըն» ինձ պետք չեն. առանց ձեր կարդալու, ես կարող եմ ասել, թե ինչ գրված կլինի այն նամակի մեջ։

Նա դառնում է դեպի ինձ։

— Ուրեմն՝ ասացեք, խնդրեմ, պետք չէ՞ թքել մի այսպիսի լրագրի վրա, որ բացատում է մեր լավ կողմերը, հերքում է և ամեն ինչ քանդում է, տակնուվրա է անում։ Այդ ո՞ւմ դուր է գալիս, ո՞վ չէ բարկանում։

— Դա շատ բնական է. փորձեցեք երկու աչքերով կույր մեկին ասել՝ դուք կույր եք. նա իսկույն կբարկանա, թեև հայտնեցիք մի անհերքելի ճշմարտություն։

Նա տաքացավ։

— Դա զզվելի՜ է... միշտ գովել պետք է, խրախուսել պետք է, քաջալերել պետք է. դուք միայն հուսահատեցնում եք... դուք ամեն բան սև գույնով եք տեսնում... կյանք, ուժ ուրանում եք ազգի մեջ։

— Կրթության այդ հին և փտած եղանակը արդեն ցույց տվեց իր արդյունքը։ Կ. Պոլսի հոսհոսանների լրագրությունը մինչև այսօր այդ ձևին էր հետևում, նա միշտ գովում էր, նա միշտ ոգևորվում էր, ցույց տալով, թե ամեն բան ունեն, ամեն բան պատրաստ է։ Բայց հանգամանքները ցույց տվեցին, թե նրանք ինչ տեսակ ժողովուրդ պատրաստեցին։ Տաճկահայոց ոչնչությունը հայտնվեցավ։

Աղգասերի նեռը, կարծես, քարին դիպավ. նա կանգ առավ և սկսեց մտածել։

Ես շարունակեցի.

— Նույնը անում էին մեզանում և մինչև այսօր. «Ինչ որ հայկական է, այն լավ է», այս էր մեր ազգ-սիրողների սկզբունքը։ Հայ վաճառականը խաբեբայությամբ է վարում իր առևտուրը։— Պետք է գովել նրան, այդ գողություն չէ, որովհետև գործողը հայ է։ Հայ ընտանիքը օրըստօրե քայքայվում է բարոյական փտության մեջ։— Վնաս չունի, որովհետև մեր ազգի ընտանիքն է, նրան վատ ասել չի լինի։ Հայ եկեղեցականները դարձել են ավազակներ։— Պետք է գովել նրանց, որովհետև մեր հոգևոր հայրերն են, մեր կրոնի ավանդապահներն են... Ինչ խոսքս երկարացնեմ, դուք ամեն ազգ, ամեն կեղտ, ամեն ապականություն գովում էիք և գովում եք, որովհետև հայի ազգ է...

— Ինչ վնաս տվեցինք մեր գովություններով։

Այն վնասը, որ դուք խաբեցիք ազգը և գովաբանելով նրա հիմարությունները, նրա անպիտանությունները, առիթ տվեցիք անպիտանությանը մնալ միշտ անպիտանություն։ Դուք ազգի աչքերը փակեցիք՝ իր այլանդակությունը չտեսնելու համար։

— Իսկ դուք, որ պախարակում եք, բանդում եք, ոչնչացնում եք, նրա տեղը ի՞նչ եք դնում։

— Մենք այգեպանի պաշտոն ենք կատարում։ Այգեպանը, երբ անխնա կտրում է ծառի չորացած, փտած և ավելորդ ճղները, չէ մտածում նրանց տեղը մի նոր ճյուղ կպցնել, որովհետև գիտե, որ նորը ինքըն իրան կբուսանի, եթե ծառի մեջ կյանք կա, ուժ կա և հողի մեջ արմատ ունի։

Խոսակցությունը ընդհատվում է։ Դատարանի ծառան ներս է բերում մի հրավիրաթուղթ և ստորագրել է տալիս։

— Ինչ գործի համար եք կանչված։

— Դարձյալ այն անիծված կտակի համար է...

Ազգասերը մոռացավ սերն էլ, ազգն է, վարդանն էլ, Հայկն էլ։ Նա կանգնեց այս խոսքերով.

— Ներողություն, ես փաստաբանիս մոտ պետք է գնամ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ

Վերջին տասը տարվա ընթացքում դպրոցները մեզանում զարմանալի արագությամբ աճել սկսան. նորերը ավելցան, իսկ հները աշխատեցին փորր ի շատե կանոնավոր կերպարանք ստանալ։ Եվ մինչև անգամ աղքատ գյուղացին իր որդիքը տիրացուների և տերտերների

անկից հետացրեց և մտածեց իր եկեղեցուն կից փոքրիկ վարժարան ունենալ*։

Դա գեղեցիկ երևույթ էր. դա ժողովրդի մտավոր շարժողության նշան էր, որ աշխատում էր ժամանակի պահանջների համեմատ վարվելու։

Բայց մյուս կողմից, աչքի է զարկում մի շատ տխուր երևույթ։

Երբ որ քննում ենք «Մշակի» և «Մեղուի» մեջ վերջին տարիներում տպված բազմաթիվ բղավակությունները դպրոցների մասին, տեսնում ենք, որ ամեն տեղ, ամեն դպրոցներում միևնույն անախորժ և վնասակար երևույթները կրկնվում են անդադար։ Ո՞նչ։ Անհամաձայնություն դպրոցների հոգաբարձության և տեղային հոգևոր իշխանության ներկայացուցչի մեջ. անհամաձայնություն տեսչի և հոգաբարձության մեջ. անհամաձայնություն վարժապետների և տեսչի մեջ. անհամաձայնության հոգաբարձուների և վարժապետների մեջ. մի խոսքով, դպրոցների չորս գործիչները, այսինքն՝ հոգևոր իշխանության ներկայացուցիչը, ժողովրդի կողմից ընտրված հոգաբարձությունը, տեսուչը և վարժապետները անդադար կռվում են միմյանց հետ և տրիբ են տալիս անվերջ խռովությունների, որոնք դպրոցի գավթից անցնում են ժողովրդի մեջ և հարուցանում են կուսակցությունների միմյանց դեմ հուզմունքը...

Դրանք շատ ցավալի երևույթներ են, որոնց մասին մեր լրագրությունը ավելի պարապվել է անցքերի նկարագրություններով, քան թե նրանց արատավոր պատճառների քննություններով։

Եվ հիշյալ խռովությունների ու անհամաձայնությունների մեջ պետք է որոնել մեր դպրոցների հետամնացությունը, որ նրանք ամենևին չեն հասնում նպատակի և չեն կարողանում տալ ժողովրդին այն, ինչ որ նրան պետք է. և ժողովուրդը տխրված է դարձյալ իր որդիների մտավոր անունը որոնել ուրիշ աղբյուրներում։

Հայտնի բան է, դպրոցների կյանքում մի այնպիսի նշանավոր փոփոխություն, որ եղավ վերջին տարիների ընթացքում, չէր կարող անցնել առանց ներքին կռիվների և առանց աղմուկի։ Բայց ցավալին այն է, որ կռիվը, աղմուկը ավելի կրքերի և դրա ու նրա շահերին են ծա-

---

* Իսկ այն դպրոցները, որոնք պահպանվում էին վանքերի հաշվով վանքերի մեջ, կամ նրանց մերձակա գյուղերում, փակվեցան ճեմարանի երևալուց հետո։ Պատճառը այսպես են մեկնում, թե վանքերի արդյունքը ս. էջմիածինը սկսեց տանել ճեմարանի համար, և դպրոցները զրկվեցան իրանց գոյությունը պահպանելու միջոցներից։ Մի ձրագ վառելին և շատերը հանգցրին... Թևև այն փոքրիկ տարրական դպրոցները ավելի մեծ նշանակություն ունեին աղքատ գյուղացիների համար, քան թե ճեմարանը։

ասել, քան թե որևիցե դաղափարի, որ վերաբերում էր բուն հիմնարկության բարեկարգությանը։

Այս գործին ավելի ձեռնհաս եղող անձինքների վրա, որպիսիք են մեր պ.պ. բնական տեսուչները, պարտավորություն դնելով պարզել վերոհիշյալ սխալ երևույթների պատճառները, մենք կվեր առնենք մի ճյուղը միայն, այսինքն՝ վարժապետներին, և կխոսանք նրանց մասին։

* * *

Մեր խոսքը դավառական վարժապետների մասին է։

Դավառական վարժապետները ըստ մեծի մասին կանչվում են Թիֆլիսից՝ դպրոցների հոգաբարձության հրավերքով։ Հոգաբարձունները վաճառական մարդիկ լինելով, վարժապետների ընտրության մեջ վարվում են ճիշտ այն կերպով, ինչ կերպով որ վարվում են իրանց առևտուրի մեջ։ Օրինակ, նրանց մեկին պետք է շաբար. գրում է իր Թիֆլիսի գործակատարին, թե 100 պուդ շաքար ա՛ռ և ուղարկիր։ Գործակատարը գնում է այնքան արկղներ, որոնք պարունակում են իրանց մեջ շաքարի պահանջված քանակությունը, և ուղարկում է, առանց յուրաքանչյուր արկղը առանձին-առանձին նայելու, որովհետև վստահություն ունի ծախողի հավատարմության վրա։

Հոգաբարձուն գրում է իր գործակատարին կամ ծանոթ մեկ վաճառականին, թե մի վարժապետ ուղարկիր (կարծես, դա էլ բազարում ծախվող մթերք է)։ Ի՞նչ անեն խեղճ վաճառականը. իրա խելքի բանը չէ. իրան անծանոթ մի ապրանք է վարժապետը, այստեղ չ հարցնում, այնտեղ է հարցնում, և շատ-շատ մի հայտարարության է տալիս տալիս «Մեղուի» կամ «Մշակի» մեջ։

Քարվանսարաների պուճախները պարելով, հայտնվում է վաճառականի մոտ մի անծանոթ պարոն։ «Ես վարժապետ եմ»,— լինում է նրա առաջին խոսքը։ «Հա՛, ինձ էլ մի վարժապետ է պետք»,— ասում է վաճառականը և խնդրում է նստել։ Վաճառականը հայտնում է, թե ինչ առարկայի համար է պահանջվում վարժապետը։ Իսկ պարոն ցանկացողը ցույց է տալիս, թե ինքը ոչ միայն պահանջված առարկան, այլ «ամեն բան» կարող է դաս տալ և ավելացնում է մի քանի հրաշալիք իր անցյալ գործունեությունից։ Պայմանների մեջ հաշտվում են, և պարոն վարժապետը կանխիկ ստանում է մի գումար, իր պատատ.ած կոշիկները և մաշված հագուստը փոխում է և ճանապարհ է ընկնում։

Նա հասնում է նշանակված տեղը։ Հոգաբարձությունը մի քանի

ամսից հետո կամ տարվա կեսին հասկանում է պարոնի անընդունակությունը։ Բայց ի՞նչ կարող է անել. պ. խաբեբան մի կամ երկու տարով հաստատ պայման է կապել. տուգանք է նշանակել, կանխիկ փող է ստացել. ի՞նչպես արտաքսել նրան. և կամ ո՞ւմ դնել նրա տեղ... Դպրոցը ստիպված է քարշ գալ մի անպիտանի հետ, մինչև ժամանակի լրանալը...

Վարժապետների մեծ մասը այսպես են ընտրվում։

* * *

Իսկ այն դպրոցներում, որ ունեն տեսուչներ, վարժապետներ հրավիրում են ավելի տեսչի ընտրությամբ։ Չխոսելով տեսուչների ի՛նչ տեսակ մարդիկ լինելու վրա, այսքանը միայն կասենք, որ այս պարոնները իրանց հանձնված դպրոցների վրա կատարելապես սիրելու համար աշխատում են շրջապատվել իրանց սրտին մոտ եղող մարդիկներով՝ կույր-հնազանդներով։ Այնքան վնաս չունեն, եթե ընտրեին իրանց գաղափարակիցները, այսպիսով գոնյա դպրոցը կպահպաներ իր ուղղությունը և միակերպությունը։ Բայց այստեղ ուսումնական նպատակը կուլ է գնում վարչականի մեջ, տեսուչը վարվում է դպրոցի հետ այնպես, որպես մի պաշտոնական անձն, որ աշխատում է իր ստորադրյալները իր շահերին համապատասխանող մարդիկ լիննեն։ Եվ նա շուտով հավաքում է իր թևի տակ հին ծանոթներին, բարեկամներին, և դպրոցը դառնում է զանազան շահախնդիրների համար հայի գործարան։

Իհարկե, այդ նպատակների մեջ չէ կարող օրինավոր ընտրություն լինել, քանի որ ցանկացող վարժապետների մեջ ազատ մրցություն չէ լինում. և տեսչի ընտրած վարժապետը նույնը կլինի, ինչ որ էր պարոն հոգաբարձուի գործակատարի ուղարկածը և գուցե ավելի վատ և ավելի խարդախ մեկը։

Եվ վնասակարն այն է, որ տեսուչները շատ անգամ իրանց այսինչ բարեկամին, որպես հարմար գործիք, ձեռքի տակ ունենալու մտքով և կամ նրա համար ապրուստի մի աղբյուր բաց անելու համար, մտցնում են դպրոցի մեջ նոր-նոր առարկաներ, որ ավելորդ են, և այսպիսով դպրոցի պրոգրաման հարմարեցնում են ոչ թե դպրոցի պահանջներին, այլ իրանց ցանկացած մարդիկների ընդունակություններ։ Եվ այսպես էլ է պատահում, որ տեսուչը մի նոր վարժապետի համար տեղ բաց անելու մտքով շատ անգամ ստիպված է հեռացնել մի հին վարժապետ, որ գուցե ավելի ընդունակ էր իր գործին։ Նա մի կերպ հաջողեցնում է։

Բայց նոր մտնողը չգիտե այն առարկան, ինչ որ հինն էր դաս տալիս, փույթ չէ, նա կարող է պարապել այն առարկայով, ինչ որ ինքը գիտե, և հին առարկան դուրս է ընկնում դպրոցի պրոգրամայից։

Եվ այսպիսով, տեսչի իր պաշտոնի մեջ մտած օրից, նրա և հին վարժապետների մեջ սկսվում է մի ներքին կռիվ, որ պատճառ է տալիս անվերջ խռովությունների, որովհետև հներն էլ ունեն իրանց հին կապերը՝ կամ մի քանի ձայն ունեցող հոգաբարձուների հետ, կամ սըրբազանի հետ և կամ ժողովրդի մեջ նշանավոր, ու միևնույն ժամանակ դպրոցի վրա ազդեցություն ունեցող անձինքների հետ։ Այս տեսակ վարժապետները հին ծառեր են, թեև ծերացած, բայց հողի մեջ խորին արմատ ունեն ձգած, նրանց տեղից շարժելը հեշտ բան չէ։

Բայց որովհետև մեր տեսուչների կյանքը շատ կարճ է լինում, նրանց հեռանալուց հետո հեռացվում է և նրանց կուսակիցների ամբողջ խումբը։ Դպրոցը ենթարկվում է նոր փոփոխություններին...

* * *

Շատ անգամ հոգաբարձուները, կամ նրանց մի մասը, նույնն են անում, ինչ որ անում է տեսուչը, այսինքն՝ մտցնում են դպրոցի մեջ մի մարդ, որ իրանց ավելի մոտ էր, որ կարողացել էր կողմնակի միջոցներով նրանց համբույնը գրավել։ Այստեղից առաջ է գալիս նույնպես անհաշտություն, կամ հոգաբարձուների միմյանց դեմ և կամ նրանց ու տեսչի մեջ, մի վերջինս առաջիններին հետ համաձայն չէր։

Շատ անգամ տեղային հոգևոր իշխանության ներկայացուցիչն է անում միևնույն բանը, աշխատելով մտցնել դպրոցի մեջ մի մարդ, որ նրանց ամենայն չհրմհռանդությամբ խնկարկում է և այս ու այն լրագրում, կեղծ անուններով, գովասանական նամակներ է հրատարակում սրբազանի, կամ գերապատիվ հայր-սուրբի չգործած աղքօգուտ գործերի մասին։ Դարձյալ խռովություններ են ծագում։

Շատ անգամ նույնը անում է մի «աղա», որն ամենևին դպրոցի վարչության հետ կապ չունի, բայց ժողովրդի մեջ մեծ համարում և ազդեցություն ունի։ Նա իր աղքատ բարեկամի համար հայ գտնելու մըտքով իսկույն խրում է նրան դպրոցի մեջ։ Եվ կամ յուծ շողոքորթի մեկը կարողանում է «աղայի» փառասիրությունը հրապուրել և նրա մեջ պաշտպանություն գտնել։ «Աղան» ամեն ինչ կքանդե, դպրոցը տակնուվրա կանե, մի իր յուրց տված մարդուն չընդունին իբրև վարժապետ։ Թող նա լիներ հիմար և անընդունակ մեկը, բայց ո՞վ կարող է

ընդդիմանալ, երբ որ «աղան» հրամայում էր Դարձյալ խռովություններ... Որովհետև «աղաները» միշտ ունենում են ուրիշ «աղաներ» որպես հակառակորդներ։

Հիշյալ կրքերից ազատ չեն մնում և լրագիրների* ու ամսագիրների խմբագիրները և դասագրքերի հեղինակները։ Շատ անգամ գավառներից դրանց են դիմում վարժապետների համար. և այդ պարոնները գավառներում գործակալներ և թղթակիցներ ունենալու համար իսկույն խրում են պահանջված տեղում իրանց ցանկացած մարդը։

* * *

Վարժապետների վերաբերությամբ դպրոցների գործերը ոչ սակավ խառնում են և քահանաները, որոնք իրանց բազմամյա խորդախություններով մի տեսակ համարում են սատկել ժողովրդի մեջ։ Դրանք միշտ ունենում են իրանց ձևերի տակ մի գործ կատակություն։ Սահին տեղ դրանք նման են միմյանց և ծառայում են որպես հարմար գործիք «աղաների» և հոգևոր իշխանության ներկայացուցչի ձեռքում։ Վերջինը կարոտություն ունի նրանց մեջ, որովհետև հմուտ ուսուցիներ են, իսկ առաջիններդ կարոտություն ունեն, որովհետև լավ լրտեսներ են... Որպես ժողովրդին մոտ մարդիկ, որպես ամեն ծակ մտնողներ, այս քահանաները կարողանում են ամեն տեղից խաբարներ բերել և մեծ ինտրիգաններ սարքել։ Իսկ շատ տեղերում նրանք այն աստիճան բռնանում են և ապրելության տեր են դառնում, մինչև նույնիսկ առաջնորդը կամ փոխ-առաջնորդը մի տեսակ կախումն են սատանում նրանցից, և ստիպված են նրանց կամքով վարվել, հակառակ դեպքում տեր-հայրը պատրաստ է ժողովրդի մեջ մի մեծ փոթորիկ հարուցանել և հետո առաջնորդին էջմիածնի ճանապարհը ցույց տալ...

* * *

Ես նպատակ չունեմ մատնանիշ լինել որևէ անձի վրա, փառք աստուծո, այսպիսի քահանաների թիվը այնքան շատ է մեզանում, որ փառաների կարոտություն չկա։ Բայց այսքանը կասեմ, որ ոչ ոք այն-

---

* «Մշակը» որովհետև սկսյալ իր հրատարակման օրից միշտ հետու է պահել իրան սոխպանոր սարածվելու միջոցներից, այս պատճառով և միշտ ազատ է մնացել հիշյալ սխալից։

քան վտանգավոր չէ ժողովրդի համար, որպես խորամանկ և խոովարար քահանան։ Եթե այս հատկությունները լինեին մի «աղայի» մեջ, ժողովուրդը կարող էր իր հարաբերությունները կարել նրա հետ, բայց ի՞նչ անեն նա քահանայի հետ, քանի որ կապված է նրա հետ կրոնական կապերով և միշտ նրա մեջ կարոտություն ունի։ Եվ շատ անգամ անկարելի է լինում հեռացնել այսպիսիներին, որովհետև նրանք, որպես ասացինք, ունեն իրանց ձեռքի տակ մի զորեղ կուսակցություն, և բացի սրանից, ունեն ծածուկ կապեր էջմիածնի այս և այն սրբազանի հետ... Նրանց կապերի մասին չէ մեր խոսքը, մենք պետք է խոսենք, թե որպես խառնում են դպրոցների գործերը։

Այս տարի, իմ Թիֆլիսում եղած ժամանակ, դավառական ուսուցիչների մեծ մասը հավաքվել էին այնտեղ, որովհետև արձակուրդի ժամանակ էր։ Մենք շատ անգամ հանդիպում էինք «Եվրոպա» հյուրանոցում կամ Շենինդի մոտ։ Համարյա ամենի բերանից միևնույն գանգատներն էին լսվում. ամեն տեղ բռնացել է մի չարագործ քահանա և դպրոցի վերաբերությամբ ինչ անկարգություններ ասես, անում է։ Նա վարժապետներ է դնում, վարժապետներ է փոխում, չնայելով, որ ինքը դպրոցի կառավարության մեջ գործ չունեցող մի մարդ է։ Եթե ուրիշ կերպով նրան չհաջողվի, այն ժամանակ նա ունի իր ձեռքում մի հեշտ միջոց հեռացնելու իր ուզած վարժապետին, բավական է, որ տարածի ժողովրդի մեջ, թե այս մարդը անկրոն է, խաչին կամ պատին չէ համբուրում... պրծա՛վ գնաց...

Մի քանիսի համար պատմում էին, թե սովորություն ունեն վարժապետի ոռճիկից ծածուկ «տասանորդ» վեր առնել, եթե վերջինս չհոժարվի վճարել, պետք է թողնե դպրոցը։ Հակառակ դեպքում, տեր-հայրը կարող է նրան հազար ու մեկ կերպով վնասել։ Մեկի համար ասում էին, թե մինչև անգամ իր ձեռքի տակ ունի արիկաներ, որոնք պատրաստ են տեր-Հոր ամեն տեսակ հրամանները կատարելու, որքան և ավազակային կամ եղեռնական լինեին։

Մենք լսել էինք, թե քահանաները մոցիոլություն են անում, և թե՛ աղջկա, թե՛ տղայի կողմից առատ «աջահամբույր» են ստանում. մենք լսել էինք, որ քահանաները մինչև անգամ կավատություն են անում, բայց չէինք լսել, որ քահանան մի վարժապետի պաշտոն գտնելու համար աչք դներ նրա ողորմելի ոռճիկին։

Մենք մեր ընթերցողին ցույց տվեցինք, թե որպես են վարվում վարժապետների ընտրության մեջ դպրոցների կառավարության հինգ գլխավոր գործիչներն, այսինքն՝ հոգաբարձությունը, տեսուչը, հոգևոր

իշխանության ներկայացուցիչը, «աղաները» և խոովարար քահանաները։ Այժմ խոսենք այն բանի վրա, թե ի՞նչ հետևանք են ունենում այս տեսակ ընտրություննները։

Շա՛տ հասկանալի է, թե ի՛նչ. նախ, դպրոցը չէ ծառայում իր բուն նշանակությանը, իր իսկական նպատակին, այլ նա դառնում է զանազան կրքերի խաղալիք։ Նա դառնում է մի հիմնարկություն, որի միջից կռիվը, խռովությունը անպակաս են լինում։ Երկրորդ, տարակույս չկա, որ շահեկան նպատակներով ընտրված վարժապետներ չեն կարող իրանց պաշտոնին ընդունակ մարդիկ լինել. բայց այս վարժապետները առաջ են բերում ուրիշ շատ անկարգություններ ևս։ Ի՞նչ։

Ինձ պատահել է քննել մի քանի դպրոցների ծրագիրները. ի՞նչ էլ կարծում, այդ ողորմելի ծրագիրները յուրաքանչյուր տարվա ընթացքում, և երբեմն միևնույն տարվա մեջ երկու անգամ փոխվել են։ Ծրագիրները անդադար փոխվել են, որքան անգամ փոխվել են վերոհիշյալ հանգամանքներով վարժապետները։ Նոր մտած վարժապետները, իրանց նախորդների անընդունակությունը ցույց տալու համար, սկսել են իրանց խելքին զոռ տալ մի նոր ձև և մի նոր պրոգրամա մտցնել։ Եվ այսպես, հին վարժապետների հիմնածը միշտ նորերն քանդելով՝ առիթ են տվել անվերջ փոփոխությունների։ Վարժապետները չեն ենթարկվել դպրոցի մեջ ընդունված մի որոշ պրոգրամայի կանոններին, այլ միշտ պրոգրաման է ենթարկվել վարժապետների կամայականությանը։ Այսպիսի դեպքերում, հայտնի բան է, դպրոցը կկորցնի իր նշանակությունը և մի որոշ նպատակի ծառայել կարող չէ։

Այս գրության մեջ շատ հասկանալի է և աշակերտների վիճակը, նրանք անդադար պետք է փոխեն իրանց ուսանելի առարկաները, մեկը պետք է կիսատ թողնեն և մյուսը սկսեն, և շատ անգամ ատիպված պետի լինին միևնույն առարկան զանազան վարժապետից զանազան կերպով սովորել։ Նոր վարժապետը, ասելով, թե իր նախորդը չէ հասկացել, վատ է դաս տվել, միշտ սկսում է գլխից և սկսում է բոլորովին ուրիշ եղանակով։ Որքան դժվար է աշակերտին մոռանալ տալ մի առարկա, որի վրա տարիներով տանջվել է, և նույնը նորից սկսել նոր ձևով։

Նոր վարժապետը չէ շարունակում հնի սկսածը, այլ միշտ վերադառնում է սկզբին։ Այդ առաջանում է վարժապետների տարբեր կրքոտիճնից, որոնք չեն ենթարկվում մի որոշ մանկավարժական եղանակի, այլ ամեն մեկը ուսուցանում է որպես ինքն է սովորել։ Եվ չէր կարող լինել նրանց գաստաուվության եղանակների մեջ միակերպություն, որովհետև չեն պատկանում մի որոշ շկոլայի։

Վարժապետների այս տեսակ վարմունքը առաջանում է շատ անգամ նրանից, որ երբեմն ինքը վարժապետը չգիտե իր առարկան և կամենում է շալակաոանությամբ անցկացնել. նրան հնշտ է մի առարկա պլխից սկսել, քան թե շարունակել, որովհետև, երբ գլխից է սկսում, ինքըն փոքր առ փոքր սովորելով, կարողանում է դաս տալ։ Այս տեսակ վարժապետները, որպես ամենքն ասում են, իրանց «դալլաքոթյունը» ողորմելի դպրոցի գլխի վրա են սկսում սովորել. և կաշրողանում են շարունակել, որովհետև նրանց վրա կոնտրոլ չկա. նրանք դպրոցի վարչության մեջ պաշտպաններ ունեն, և իրանց «խաթրի» համար են պաշտոն ավել...

Եվ այսպես, նոր վարժապետը միշտ հնի աշխատությունը մերժում է և ուսման ընթացքը խանգարում է։ Աշակերտի հավատարմությունը և սիրը դեպի իր ուսանելի առարկան կորչում է, որովհետև նրան անդադար ասում են, թե քեզ ծուռն են սովորացրել, պետք է նորից սովորես։ Եվ չուրաքանչյուր վարժապետ, մի կամ երկու տարի մի դպրոցում մնալով, ամեն ինչ քանդում է, տակնուվրա է անում, և վերջը զզվեցնելով, թողնում և հեռանում է։ Եվ եթե նրանից հետո եկողը մի խղճմտանքով մարդ է լինում, նա հազիվ թե կարողանում է իր նախորդի քանդածները շինել...

* * *

Վերոհիշյալ հանդամանքների մեջ, իհարկե, դպրոցներում ոչ միայն ուսանելի առարկաների հաջակարգություն և միևը մյուսին համապատասխան ներպաշնակություն չէ կարող լինել, այլև դպրոցները մինչև անգամ չեն կարող տալ ժողովրդին և այն բանը, որ կոչվում է հասարակ դպրություն կամ գրագիտություն (грамотность)։ Այսպիսի դպրոցները միշտ դուրկ կմնան որոշ ուղղությունից, և ուսանելի առարկաների մեջ ներքին կապ չէ կարող լինել, այլ նրանք այնպես խառնիխուռն կերպով ածված կլինեն ողորմելի աշակերտների գլխում, որպես անկապ մթերք։ Այլևս չեմ խոսում վարժապետների մանկավարժական եղանակների վրա, որոց ամեն մինը իր էշը իր եղանակովն է քշում...

Մեղանում մի առած կա, թե «գագավն ուղից կաքավի երեխուն (ընթացքով) գնալ, իր երիշն էլ կորցրեց»։ Միշտ այդպես է լինում, երբ մարդ իր սովորականը թողնում է, և նախքան սովորելու օտարի վարմունքի ձևերը, սկսում է ինքն էլ նույն ձևերով ընթանալ։ Նա ծիծաղ է շարժում և ավելի ոչինչ։

Նոր, եվրոպական կոչված մանկավարժական արհեստի մեջ մեր վարժապետները միևնույնն են անում. իրանք դեռ սովորելու կարոտ՝ ուսուցչի պաշտոն են հանձն առնում։ Եվ արտաքին ցույցերով միայն կամենում են նմանվել, թե հմուտ մանկավարժներ են. իսկ նմանվելը ցած կապիկություն է, որ միայն կարող է ծիծաղ շարժել։

Խոսելով առհասարակ մեր վարժապետների վրա, չէ կարելի չնկատել մի խոշոր երևույթ, որը խիստ անմխիթար տպավորություն է գործում։ Մեր մեջ մինչև այսօր հայտնված և իրանց գործին փոքր ի շատե հմուտ ու խղճմտանքով վարժապետների թիվը այնքան փոքր է, որ կարելի է մատներով համբարել. Բեգնազարյանց, Աղայան, Ղուկասյանց, Տեր-Ղևոնդյանց, Պռոշյանց, Պալասանյանց, Բարխուդարյանց, Շահվերդյանց, Զիգիանյանց, Մ. Սիմոնյանց և մի քանի ուրիշներ։ Այդ պարոնները, բացի երկուսից, ո՛չ մասնագետներ են և ո՛չ բարձր ուսում ստացած համալսարանականներ. դրանք ավելի ժողովրդական թերուսներ են։ Եվ զարմանալին այն է, որ գրականության մեջ դարձյալ միևնույն անձինքն են հայտնվում. ունեն ինքնուրույն և թարգմանական աշխատություններ, գրում են լրագիրների և ամսագիրների մեջ, և իրանք ոչ այս և ոչ այն մանկավարժ-արհեստագետի աշակերտ լինելով, տվեցին մեր դպրոցներին մի քանի դասագրքեր։ Որո հակառակ, բարձր ուսում ստացած մանկավարժ-մասնագետներից մինչև այսօր ոչ մեկը չհայտնվեցավ ոչ վարժապետական ասպարեզում և ոչ գրականության մեջ։ Այստեղ ճշմարտվում է «Մշակի» այն կարծիքը, որ ժողովրդական թերուսների մեջ գտնվում է ուժ, եռանդ և ապագա...։ Ցույց տալու համար, թե այդ այդպես է, մենք հարկավոր ենք համարում փոքր-ինչ պարզել, թե ի՞նչ է մասնագետը և ի՞նչ է թերուսը։

* * *

Մասնագետը, փոխաբերական ձևով խոսելով, մի շտեմարան է, որի մեջ ամբարված են իր արհեստի վերաբերյալ զանազան մթերք, որոնք օտարի արդյունաբերության գործ են։ Նրա գլուխը մի պարկ է, որ լցրած է նույն մթերքով։ Եթե թափ ավեցիր պարկը, դատարկ կմնա։ Նա խոսում է, դատում է, վճռում է միշտ օտարի խելքով, ինքը սեփական դատողություն չունի։ Նա միշտ գրքերի հեղինակների անուններ է հիշում, նա միշտ վկայություններ է բերում, իսկ իր կարծիքը չէ հայտնում։ Նա պատերազմում է արհեստական զենքով. ա՛ռ նրա ձեռքից զենքը, նա կդառնա մի թույլ արարած...

Մասնագետը զգույշ է և երկչոտ. նա իր սեփական ուժերի վրա ինքնավստահություն չունի։ Երբ պետք է նրան մի բան գրել, իսկույն սկսում է գրքերը փորփրել, որ նրանց միջից մտքեր դուրս բերե. և այս պատճառով նրա գրվածքը լինում է կցկտուր և շատ անգամ մթին ու անկապ։ Նա կարող է լավ թարգմանել և օտարի աշխատություններից ծաղկաքաղ անել, բայց ոչ ստեղծել։ Նրա մեջ իմքնուրույնություն չկա։ Եվ այս է պատճառը, երբ մասնագետը անգործությունից մոռանում է իր սովորածը, նա շատ չէ զանազանվում հասարակ և տգետ մարդիկներից։

(Մեր խոսքերը այն անձանց ավելի հասկանալի կլինին, որոնք մտածել են մեր այժմյան բարձր ուսում ստացած երիտասարդներից ստեղծել մի տիպ և ներկայացնել կամ բեմի վրա և կամ վեպի մեջ։ Ամենևին չէ աջողվում մի այսպիսի աշխատություն, որովհետև նրանք կատարելագործված տիպեր չեն, նրանք կեղծ բաներ են։ Նրանք որոշ գույն չունեն, միայն խայտաճամուկ երևույթներ ունեն, որոնք աչք են շլացնում... և այդ խայտաճամուկ գույները, կարծես, զարդարանքի համար են, և ժամանակը շուտով հնացնում է նրանց...)։

Բոլորովին սխալ և միակողմանի կլիներ մեր դատողությունը, եթե այսքանը միայն լիներ մեր կարծիքը մասնագետների մասին։ Լինում են բացառություններ, ուր բարձր ուսում ստացած մասնագետը սեփականում է իրան գիտությունը, լավ մարսում է նրան և, անցնելով հեղինակությունների վարդապետական սահմանից, իր համար կազմում է մի ինքնուրույն և որոշ ուսություն։ Այնուհետև նա իր սեփական հայացքն ունի իրերի վրա և գատում է իր խելքով։ Եվ դրանց միջից ծնում են հանճարները։ Բայց զարմանալին այն է, որ եթե բաժանելու լինենք այսպիսիների թիվը, գարձյալ մեծամասնությունը կմնա ժողովրդական և ժողովրդի սատր դասից բարձրացած մարդիկների կողմը։ Այդ այն պատճառով է, որ ժողովրդական մարդը, եթե կարելի է այսպես ասել, ներգաշած է մտնում գիտության մեջ. և գիտությունը միայն կատարելագործում է ծնունդը։ Ժողովրդական մարդը, նախքան ոտք դնելը դպրոցի շենքի վրա, ունի իր աշխարհատեսությունը և գիտակցություններ հարուստ մթերք, որոնք թեև անմշակ են լինում, թեև իրանց սաղմնական վիճակի մեջ են գտնվում, բայց գիտության լույսի տակ բուսնում, աճում և հասունանում են։ Այս է պատճառը, որ ժողովրդի միջից դուրս եկած և բարձր ուսում ստացած մարդիկ լինում են ընդարձակ հայացքի տեր և ունենում են բազմակողմանի հմտություններ։

* * *

Այժմ խոսենք, թե ինչ է թեորեմը:

Թեորեմը շատ նման է բարձր ուսում ստացած ժողովրդական մարդուն, այն պանապանությամբ միայն, որ դրա մեջ գիտությունը, ժողովրդական հմտություններին հետ համեմատելով, շատ փոքր մաս է կազմում: Այլ կերպ խոսելով, թեորեմը մի տեսակ բաղադրություն է, որի մեջ տեսական խելքը միացել է գիտություններից ստացած հշմարտությունների հետ, թեև վերջինները առաջինի փոքր մասն են կազմում:

Բայց բնության օրենք է, երբ մարդու որևէ անդամը, կամ զգայարանքը խանդարված ու թույլ է լինում, մնացածները ավելի զարգանում են և փոխարինում են նրան: Կույր մարդիկը կարողանում են ճանաչել մեկին ոտքերի ձայնից և ճանաչել կնոջ դրամը մատների շոշափելով: Խուլ ու մունջերի տեսաննելիքը այնքան զարգանում է, որ նրանք դառնում են մի տեսակ ֆիզիոգնոմներ, և նայելով մարդու երեսին, հասկանում են նրա միտքը: Ձեռք չունեցող մարդկանց ոտների մատները այնքան զարգանում են, որ կարողանում են նրանցով գրել ու նկարել: Ինչ որ լինում է մարմնական կազմվածքի մեջ, նույնը և լինում է մարդու մտավոր կարողություններին մեջ: Անգրագետները զարմանալի հիշողություն ունեն. մի անգրագետ վաճառական կարողանում է իր բոլոր հաշիվները մտքում պահել: Ռամիկ երկրագործները ավելի լավ են գուշակում եղանակների փոփոխությունը, քան թե մի հմուտ օդերևութաբան (մետեորոլոգ):

Այսպես է զարգանում և թեորեմը:

Նա պատրաստի գիտությունից այնքան չէ ստանում, որ իրան բավականություն տա, և այս պատճառով նրա խելքը, զգայողությունները և բոլոր մտավոր զորությունները ավելի ինքնուրույն կերպով զարգանում են:

Եմորի մի փոքրիկ մասը թվվեցնում է ամբողջ զանգվածը: Գիտությունը, թեև փոքր չափով ստացած, նույն ներգործությունն է անում թեորեմի մեջ: Բավական է, որ նա ըմբռնում է մի փոքրիկ նշույլ գիտության լույսից, այդ նշույլը նրա մեջ լայնանում է և ընդարձակվելով, դնդի ամեն կողմ շառավիղներ է ձգում:

Թեորեմը պատրաստի հող ունի, և այդ հողը ժողովրդական կյանքից ստացած ունակություններն է, որի մեջ ընկած ամեն սերմ անպտուղ չէ մնում:

Թեորեմը մի պատվաստված ծառ է, որ իր վայրենի դրության մեջ

ուժեղ և առողջ էր, խորին արմատներ ուներ արձակած մայր հողի մեջ։ Նա քաղցր պտուղներ է տալիս, և նրա պտուղները ախորժելի են ավելի այն պատճառով, որ իրանց բնական և ինքնուրույն գույն, համ և հոտ ունեն։

Թերուսը, ավելի կատարելագործվելով, դառնում է մի տեսակ իմաստուն փիլիսոփա, որը ընդհանուր մարդկային ճշմարտությունները դուրս է բերում իր սեփական աշխատանքով, իր մտածություններով ու փորձերով։ Շատ անգամ նա սխալներ է գործում և խոշոր սխալներ, բայց որպես նրա ճիշտ դաղափարները իր առողջ դատողության արդյունքն են, այնպես էլ գործած սխալները իր սխալներն են, օտարի խելքը չէ սխալեցնում նրան։ Նա շատ անգամ սայթաքում է, ընկնում է, որովհետև իր սեփական ոտների վրա է քայլում, վարձկան ձի չէ նստած։ Նա մարդկային հեղինակությունների հետ գործ չունի և գուցե չի էլ ճանաչում նրանց։ Նա հետևում է մեկ հեղինակության միայն, դա է բնության համաշխարհական գիրքը։ Այս հսկայական գրքից քաղում է նա ինչ որ իրան պետք է։

Նա հետազոտում է, ճանաչում է մարդկությունը, մարդկության սրտի և կյանքի մեջ ուսումնասիրելով նրա պետքերը։ Նրա արտահայտած մտքերը մարդկության մտածությունների եղրակացություններն են, նրա ձայնը ժողովրդի սրտից է բխում։ Ինքը ժողովրդին է պատկանում և իր մեջ բովանդակում է ամբողջ ժողովուրդը։ Նա դառնում է մարգարե, պատգամախոս և արտահայտում է ժողովրդի պահանջները։

Բայց մենք այսպիսի իմաստուններ չունենք և չենք էլ ունեցել, դրանք այն մարդիկն են, որ կոչվում են ազգանվեր, ժողովրդական բանաստեղծներ և փիլիսոփաներ։

Մենք ունենք անհատական թերուսներ միայն, որոնք մի խառնուրդ են գիտության և ժողովրդական մարդիկների, իրանց անզարգացած դրության մեջ։ Այդ մարդիկը օգտավետ են լինում նրանով, որ զուրկ չեն առողջ և ինքնուրույն մտածողությունից, և զորեղ ընդունակություն ունենալով, շուտով ըմբռնում են ամեն մի լուսավոր դաղափար։ Եվ այդ է պատճառը, որ նրանք մի զարգացած մարդու ազդեցության տակ, կամ մի զարգացած շրջանի մեջ՝ այնքան զարգանում են, որ երևելի մարդիկ են դառնում։ Մեզանում այս տեսակ շրջաններից առաջին օրինակը ծնվեց «Մշակի» խմբագրատունը, նա պատրաստեց և պատրաստում է մարդիկ, որոնք ապագա են խոստանում։

Ոչ ոք այնքան ճարպկությամբ չէ սեփականում և չէ յուրացնում ուրիշի մտածության ծնունդը, որպես թերուսը։ Եվ եթե քննելու լիներ

մեր թերուների գրավոր աշխատությունները, կանանչիք, որ նրանք հետաքրքրություններ են, միայն վարպետ կերպով ձեակերպված։ Թերուսը և սահմանափակ մասնագետը նրանով են միայն զանազանվում, որ առաջինը բանեցնում է իր խելքը, իսկ երկրորդը՝ օտարի խելքը։

Թերուսը սուր աստամներ և լավ ախորժակ ունի. նա ամեն բան մարսում է։ Դուք ավելցնեք նրան մաքեր միայն, նա իսկույն մի բան կշաբարձրե։ Եվ այս է պատճառը, որ նրանց գրվածքները լինում են բազմակողմանի. նրանք ամեն բանի վրա դատում են, ամեն բանի վրա գրում են և ամեն բանի մեջ խրվում են։

Եվ շատ զարմանք չէ, երբ տեսնում եք, որ մեր թե՛ գրական և թե՛ ուսումնարանական ասպարեզներում ավելի թերուներ են դեր խաղում։ Դրանք կարող են օգտավետ լինել, որովհետև իրանք ճանաչել են ժողովրդին, և ժողովուրդն էլ հասկանում է նրանց լեզուն։— Միայն թե շաղատաններ չլինեն...

* * *

Խոսելով մեր ժողովրդական վարժապետների և ժողովրդական դպրոցների դրության վրա, մենք, սիրելի ընթերցող, բայց արինք մի ցավալի վեր միայն... ափսո՜ս, որ չպիտի կարողանանք ցույց տալ նրա դարմանները։ «Դավազանի երկու ծայրն էլ ապականված է, ո՛ր կողմից և բռնելու լինինք, պետք է մեր ձեռքը մուրտառեմ...»։ Ուրեմն ժողովրդին ենք թողնում մտածել իր անելիքը։

ԴԵՌԵՎՍ ՈՒԾ ՉԷ

Այժմ ինչ որ խոսենք, ինչ որ գրենք, այդ կպատնա որպես եվրոպացին ասում է՝ «ընթրիքից հետո մանանեխ» և կամ որպես մենք՝ ասիացիքս ասում ենք՝ «հարսանիքից հետո զուռնա»։ Մեր խոսքը տարաժամ կլինի։

Ներկա պատերազմիս սկզբից՝ մեղանից շատերը հույս ունեին, թե տաճկական Հայաստանը զուրկ չի մնա այն արտոնություններից և այն իրավունքներից մեկից, որոնց համար պատերազմը հրատարակվեցավ, և որոնք պետք է տրվեին Թուրքիայի լծի տակ ճնշված քրիստոնյաներին։ Իսկ այժմ դործից երևում է, թե հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելու. շատ-շատ Տաճկական Հայաստանի ռուսաց զորքերով

դրավված մասը կմիանա Կովկասի հետ², բայց մնացած մեծ մասը դարձյալ կմնա Թուրքերի ձեռքում, դուցե մի քանի խոստումներով, որպես միշտ եղել են մինչև այսօր և միշտ մնացել են որպես մեռյալ տառ...

Ինչո՞ւ հայերի վրա ուշադրություն չդարձրին, մի՞թե նրանց դարերով թափած արյունը, արտասուքը և մահմեդականներից կրած բարբարոսությունները իրավունք չէին տալիս, որ նրանք ևս արժանանային Եվրոպայի գթությանը, թե նրանք էլ դժբախտ են և գտնվում են ավելի ւ:տրատիելի դրության մեջ, քան թե սլավոնական ցեղերը Բալկանի թերակղզում: Ահա՛ մի հարց, որ պարզել պետք է:

Ընդհանուր մարդասիրական կետից նայելով և քրիստոնեական եղբայրասիրության զգացմամբ, պետք է, որ հայերի վրա ևս ուշադրություն դարձնեին: Իսկ քաղաքականության կետից նայելով, ոչ ոք պարտական չէր հայերի համար մտածել, քանի որ իրանք հայերը անշարժ մնացին և իրանց համար չմտածեցին:

Գերեզմանների վրա ոչ ոք ուշադրություն չէ դարձնում, որովհետև նրանք լուռ են, գոհ են իրանց վիճակից: Այնպես էլ մեկը պարտական չէ ուրիշի փորի համար հոգալ, քանի որ նա չէ հայտնում, թե ինքը քաղցած է...

Այսուամենայնիվ հայերի վրա ուշադրություն դարձրին, հայերի վրա խոսեցին, և մինչև անգամ հայերին դրդեցին, որ իրանք էլ խոսեն, իրանք էլ բողոք բարձրացնեն, բայց հայերը միշտ լուռ մնացին...

* * *

Մեր անցյալ հոդվածում* մասամբ բացատրեցինք հայերի լռության պատճառը, բայց կա դեռևս շատ բան բացատրելու: Հայերի լռությունը երկու բանով կարելի է մեկնել, կամ նրանք գոհ են իրանց վիճակից, և կամ չեն հասկանում իրանց դրությունը, իրանց ինչ վիճակի մեջ լինելը:

Չէ կարելի մտածել, թե հայերը գոհ լինեին իրանց վիճակից, որովհետև անկարելի է գոհ լինել մի այնպիսի վիճակից, ուր կյանքի, կայքի և ընտանիքի ապահովություն չկա, ուր մարդու աշխատության արդյունքը հափշտակվում է բռնի ձեռքով, ուր նրա պատիվը շների հետ է հավասարված, ուր ամեն ինչ, որ նրա համար սուրբ է և նվիրական, հա-

---

* Տե՛ս «Դարձյալ հայերով ենք խարխափում» հոդվածը: Սահոր. հեղ.:

լածվում է, պղծվում է և կույր մոլեռանդության զոհ է դառնում։ Անկարելի է զոհ լինել մի այսպիսի վիճակից։ Պետք է բոլորովին զուրկ լինի մարդ զգացողությունից, որ չհասկանա մի այսպիսի զրության սարսափելի դառնությունը. բայց մենք Թուրքիայի հայերին այս աստիճան մեռելության մեջ չենք դնում։

Մեր երկրորդ կարծիքը, թե նրանք չեն հասկանում իրանց զրությունը, ինքնըստինքյան լուծվում է առաջինի մեջ, այսինքն՝ թե զոհ չեն, ուրեմն հասկանում են իրանց վիճակը, եթե չհասկանային, կատարյալ դիակներ կլինեին, որոնց այրում են, մոխիր են դարձնում, բայց նրանք ոչինչ չեն զգում...

Այժմ ծագում է մի նոր հարց. ինչո՞ւ բողոք չբարձրացրին, եթե զոհ չէին իրանց վիճակից։

Բողոքը կարող էր հայտնվել երկու կերպով. կամ իրանք էլ սլավոնական ցեղերի նման զինք վեր առնեին, և փոխանակ իրանց տան ծածկի տակ քրդերի սրից կոտորվելու, պատերազմի դաշտում մեռնեին, և կամ գրավոր կերպով իրանց բողոքը հայտնեին ուր որ հարկն էր։ Առաջին գործողության մեջ նրանք անընդունակ էին, իսկ երկրորդը ոչ ոք չէր արգելում։

Բայց ո՞վ պետք է տար դրավոր բողոքներ։

Հայտնի բան է, Աղբակա հայերը, որոնց 24 գյուղերը մոխիր դարձան, քահանաները՝ ձողերի վրա բարձրացան, կոտորվեցան, ջարդվեցան, և կանայք ու աղջիկները Ջելալեդդինի ու շեյխ Իբադուլլայի զորքերի ձեռքով գերի գնացին,— Աղբակա ողորմելի հայերը, որ այժմ Պարսկաստանում մուրացկանությամբ են ապրում, ընդունակ չէին բողոք բարձրացնելու։ Նույնը չէին կարող անել և Վանա հայերը, որոնց հերոսական քաղաքի ծուխը դեռևս բարձրանում է բազմաթիվ անբախտացած ընտանիքների սրտերից։ Նույնը չէին կարող անել և Բայազետի ու Ալաշկերտի հայերը, որոնց վիճակը ամենից հայտնի է։ Այլևս չեմ խոսում Մուշի, Բաշեղի, Տիգրանակերտի և Տաճկական Հայաստանի ուրիշ շատ հայերի մասին, որոնց ոչ մեկը ազատ չմնաց մահմեդականների բարբարոսություններից։

* * *

Ուրեմն ո՞վ պիտի խոսեր, ո՞վ պիտի բողոք բարձրացներ։

Այդ լինում է երկու կերպով։ Երբ մի ժողովուրդ այնքան զարգացած է, որ հասկանում է իր իրավունքները և հասկանում է, որ ինքն բըռ-

նաբարվում է, և միևնույն ժամանակ այնքան պատրաստված է, որ կարող է ընդդիմադրել բռնակալի կամայականությանը, ժողովուրդը ինքն է բողոք բարձրացնում, թե՛ զենքով և թե՛ խոսքով։ Այդ լինում է հեղափոխական ցույցերով, և դրան ասում ենք, թե ազատության զգացմունքը արմատից է ծագում, ամբոխի սրտից է բխում, ցածից դեպի վեր է բարձրանում։

Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ և գտնվում է մի այնպիսի հիվանդոտ դրության մեջ, որ միայն զգում է իր ցավերը, բայց զարման առանելու շնորհ չունի, այն ժամանակ նրան իր թշվառ վիճակից ազատելու հոգսը վերևից դեպի ցած է իջնում։ Դա հայտնվում է բարձր կենտրոններում, մայրաքաղաքներում, ուր գտնվում են ժողովրդի ավելի զարգացած և գործունյա դասերը։ Ամբոխը ենթարկվում է այդ դասերին և կրավորական դեր է խաղում։

Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը՝ ներգործական։

Թուրքիայի հայերի վերաբերությամբ գլխավոր կենտրոնը, որտեղից պետք է հայտնվեր բողոքը, Կ. Պոլիսն է։ Այնտեղ է դրած հայոց պատրիարքի աթոռը, այնտեղ է գտնվում Ազգային ժողովը, և այնտեղ են լինում մտածող ու բանիմաց գլուխները։

Բայց ի՞նչ էր պատճառը, որ Կ. Պոլսից ևս ոչինչ բողոք չհայտնվեցավ։

Այս հարցը պարզելու համար մենք ստիպված ենք փոքր-ինչ խոսել այն բանի վրա, թե որպիսի անձնավորություններից են բաղկացած Կ. Պոլսում այն մարդիկը, որ կոչվում են գործիչներ, առաջադեմ մարդիկ և ազգի սանձը կառավարող մարդիկ։

* * *

Ի բաց առյալ ամբոխը, որ բաղկացած է վաճառականներից, արհեստավորներից և գաղթական մշակներից, Կ. Պոլսում գլխավորապես երկու գործող կուսակցություններ կան, մեկը՝ հին ամիրայական կուսակցությունը, մյուսը՝ նոր սերունդը։ Դորանք մի ժամանակ, այսինքն՝ ազդ. սահմանադրության հիմնվելու սկզբներում, խավարյալների և լուսավորյալների անուն էին կրում։

Քննենք յուրաքանչյուր կուսակցությունը առանձին։

Նախ և առաջ պետք է հասկանալ, թե ո՞րտեղից առաջ եկան ամիրաները, և ի՞նչ էին նրանք։

Դեռ մեղանից կես դար առաջ Թուրքիայի պետությունը գավառների (վիլայեթների կամ սանջակների) կառավարության մեջ այս ձևն էր բռնած, որ յուրաքանչյուր գավառի արքունի տուրքը տալիս էր կապալով մի փաշայի։ Եվ որովհետև կառավարությունը վստահություն չուներ, թե փաշան իր ժամանակին կհասցնե դանձարանին հարկերի նշանակյալ քանակությունը, այս պատճառով փաշան ստիպված էր իր կողմից ներկայացնել Դռանը մի երաշխավոր։ Այս երաշխավորությունը հանձն էին առնում հայ սարաֆները (սեղանավորները)։ Դրանք մի տեսակ բնակիններ էին կապալառու փաշայի հետ, որը միևնույն ժամանակ իր գավառի թե՛ գատավորը և թե՛ վարձակալն էր։

Փաշան վարվում էր իրան հանձնված գավառի ժողովրդի հետ որպես ամեն մի կապալառու, կողոպտում էր, հափշտակում էր և ամեն տեսակ հարստահարություններով մաշում էր նրանց։ Նա իր կողոպուտը, որ մեծ մասամբ հափշտակված էր լինում ողորմելի հայերից, ուղարկում էր իր երաշխավորին՝ հայ սեղանավորին, իսկ վերջինս պետք է ներկայացներ Բ. Դռանը։

Բայց հայ սեղանավորը ուներ իր առանձին հաշիվները Դռան հետ, սկսյալ սուլթանի հարեմի ծախսերից, մինչև զորքերի և կառավարության այլևայլ պետքերի ծախսերը, նրանց ձևերումն էին։ Եվ այս պատճառով երաշխավոր սեղանավորը՝ իր երաշխավորության վրա առած փաշայի պարտքերի փոխարեն շատ անգամ ղուտ փող չէր ներկայացնում դանձարանին, այլ տալիս էր միայն առարկաններ իր հին պահանջների մասին, որ ուներ Դռնից։

Դրամական այս տեսակ շրջանառությունները, թե՛ Դռան և թե՛ կառավարության նշանավոր գործավարների հետ, տալիս էր հայ սեղանավորին մեծամեծ շահեր, և այս շահերը այնքան ավելի առատ էին լինում, որքան բերում էին անմաքուր և պղտոր աղբյուրներից*։

Անդադար Դռան հետ հաշիվներ ու հարաբերություններ ունենալով, ահա այդ կապալառու սարաֆներն, այդ հայի անվանը նախատինք բերող վաշխառու հրեաներն էին, որ արժանացան ամիրայության պատվանունի։

---

* Հայոց դրամատերերը, իրանց գումարները մի այսպիսի կէղտոտ շրջանառության մեջ դնելով, հետու մնացին ազատ վաճառականությունից, և այս ասպարեզը մնաց հույների ձեռքում։ Որովհետև հույները Դռան վստահությունը դրաված չլինելով, չկարողացան նրա հետ դրամական հաշիվների մեջ մտնել կամ հայերի հետ մրցություն անել, որոնք իրանց անաղնվությամբ կարողացել էին հրապուրել թուրքերին։

Որպես Դռան մեծամեծներ, ամիրաները մեծ ազդեցություն ունեին ազգային գործերի մեջ. Համարյա ամեն գործ կախումն ուներ նրանց կամայականությունից։ Ամիրայի մի լոկ խոսքը օրենք էր, նրա հրամաններըը կատարվում էին ժողովրդի կողմից ամենայն հնազանդությամբ։ Ամիրաները իրավունքներ էին բաներցնում ոչ միայն Կ. Պոլսում, այլև գավառներում։ Արդեն ընթերցողը տեսավ, թե ինչ կապեր ունեին նրանք գավառները կառավարող փաշաների հետ, որոնց ձեռքով և աչքն բանի մեջ խառնվում էին։

Հայտնի բան է, իրավունքները, որ նրանք բաներցնում էին, պաշտոնապես չէր տրված իրանց, այլ գործում որպես մարդիկ, որ օգուտ քաղել գիտեն ժամանակի հանգամանքներից, այսպիսով, կառավարության ընդհանուր անկարգության մեջ հանդիսանում էին որպէս մի-մի բռնակալներ, թեև իրանց բռնակալությունը կարող էին գործ դնել դեպի իրանց ողորմելի ազգայիններըը միայն, իսկ դեպի օտարազգիք նուիրքան ցած էին և գետնաքարշ։

Եղել են բացառություններ, որ ամիրաների մեջ գտնվել են լարի և ազգասեր մարդիկ, բայց նրա խիստ քննելու լինես, հազիվ թե այդ լավ համարվածներն ևս ազատ կմնան արատներից։

Կ. Պոլսի պատրիարքը, որպես ժողովրդի գլուխ և ներկայացուցիչ, միշտ կախումն է ունեցել ամիրաներից և սերտ կերպով կապված է եղել նրանց հետ։ Նրանք վարվել են որպես սանիկ և սանահայր, որովհետև երկուսի շահերն էլ համաձայն լծորդության էին պահանջում։ Պատրիարքը կարողություն ուներ ամիրաների մեջ, որովհետև իր հարաբերությունները Դռան հետ նրանց ձեռքով պետք է պահպաներ։ Եվ այս պատճառով ամիրաները պատրիարքարանի մեջ միշտ բարձր ձայներ էին վայելում։ Եվ պատրիարքը իր գիրքը պահպանել չէր կարող, եթե ամիրաների հետ համակից չլիներ։

Փոխվելով Թուրքիայի վարչության ձևերը, սարաֆները կորցրին իրանց նշանակությունը, բայց ամիրայությունը մնաց, թեև ուրիշ կերպարանքով։ Ամիրաները, որոնց ավելացան և էֆենդիները, իրանց հին հարաբերությանց առիթով ծանոթացած լինելով Դռան բուլուքյունների հետ, կարողացան զանազան պաշտոններ հանձն առնել և ամեն գործի մեջ ցույց տալ մեծ առաջադիմություն։ Այս պաշտոնակալները, ըստ մեծի մասի հին սարաֆների և կապալառուների որդիք լինելով, ահագին հարստության հետ ժառանգել էին իրանց նախահարց բնավորությունը, թե ինչո՞վ կարելի է հաճոյանալ կառավարությանը և նրա գործերի մեջ մտնել։ Դուրս անազնիվ գործիքներ էր որոնում, և նրա նպա-

տակներին կատարելապես համապատասխանում էին հայ ծառայողները...

Հույները հայերի հետ և տերության պաշտոնների վերաբերությամբ մրցություն անել չկարողացան, որովհետև նրանք հայերի նման անազնիվ չէին և չէին կարող կեղտոտ գործիք դառնալ։ Բայց շատերը ուրիշ կերպով են մեկնում, թե հույները չէին վայելում կառավարության վստահությունը, իսկ հայերը իրանց հավատարմությամբ արժանացած էին Դուռն առանձին համակրությանը։ Այդ իրավ է, միայն պետք էր հասկանալ, թե ի՛նչ է նշանակում հավատարմությունը պաշտոնի մեջ դեպի մի անկարգ կառավարություն, որ արտաքին խարուսիկ ձևերի տակ միշտ իր հպատակների արյունն է ծծում։ Մի այսպիսի հավատարմություն նույն նշանակությունն ունի, որպես մի խումբ ավազակների հավատարմությունը դեպի իրանց պետը կամ պլխավորը։

Այժմ կարծեմ ընթերցողին հասկանալի եղավ, թե ինչ տեսակ անձինքներից է բաղկացած Կ. Պոլսում այն կուսակցությունը, որ մենք իր հին անունով կոչեցինք ամիրաների կուսակցություն, մի տեսակ մարդիկներ, որ անունով միայն հայ են, իսկ սրտով Թուրքից ավելի Թուրք, և իրանց անձնական շահերը պահպանելու համար, հայանի բան է, նրանք կցանկանային միշտ կանգուն տեսնել Թուրքիան իր կառավարության անկարգ այլանդակության մեջ։ Եվ այս տեսակ մարդիկներից, հասկանալի է, որ չէր կարելի սպասել, որ նրանք բողոք բարձրացնեին և հայ ժողովրդի հառաչանքներին բարգման լինեին։

Դառնանք դեպի մյուս կուսակցությունները։

Կ. Պոլսում կա և մի ռուսական կուսակցություն, որը մեր նկարագրած կուսակցության հակակշիռն է կազմում։ Այս կուսակցությունը ավելի զորություն ստացավ Բղնաւրեի դեսպանության օրերում։ Նրանք մտածում են, եթե հայերը կարող են ազատվել Թուրքիայի հարստահարություններից, դա կարող է լինել միայն ռուսների պաշտպանությամբ, և իրանց փրկությունը որոնում են միայն ռուսաց դրոշի տակ, ցանկանալով կամ Տաճկական Հայաստանը Կովկասի հետ միացած տեսնել և կամ, Թուրքիայի հպատակ մնալով, Ռուսաստանի հովանավորությունը վայելել։

Թե մինչև ո՛ր աստիճան ճիշտ են այս կուսակցության ակնկալությունները, մենք ավելորդ ենք համարում քննել, միայն կասենք, որ նա ունի իր ընդդիմակայ մի ուրիշ կուսակցություն, որը հակակիր է դեպի Ռուսաստանը։ Այս հակակրությունը առաջ եկավ Ալի և Ֆուադ փաշաների ազդեցությունից հայերի վրա և մասամբ Նապոլեոնի քաղաքականության-

նիյ Թուրքիայում, որի հետևանքն եղավ անջատել Տաճկաստանի հայերին Ռուսաստանի հայերից և նրանց ներքին կապը խզել։ Որովհետև նրանք սկսեցին համարել Ռուսաստանի հայերին կորած. և ամեն վրաստահություն կորցնելով դեպի իրանց ազգայինները, մտածեցին աշխատել, որ վիճակակից չլինեն նրանց դրությանը*։ Եվ այս տեսակ կարծիքից Ռուսաստանի հայերի վերաբերությամբ առաջ եկավ այն, որ նրանք սկսեցին ավելի սերտ կերպով կապվել Թուրքիայի հետ և իրանց բարօրությունը նրանից սպասել։

Այս վերջին կուսակցությունը նրանով է միայն զանազանվում բուն բուրֆասներից (աներության հայ պաշտոնակալներից), որ դրանք սրտով ատում են Թուրքերին, դժգոհ են դեպի նրա բարբարոսությունները, միայն մտածում են, թե բոլոր անկարգությունները ժամանակավոր են, թե հայոց ազգը համերաշխելով՝ կարող է հասնել մի բախտավոր ապագայի, երբ Թուրքերը կքաղաքակրթվին, և Տաճկաստանի ընդհանուր հպատակների վրա կտիրե ազատ իրավունքը ու արդարությունը։

* * *

Մեր նկարագրած երկք կուսակցություններից երևաց, որ առաջինը, այսինքն՝ Թուրքաց պաշտոնների մեջ ծառայողները, հիշատ կատարում են այն առածի իմաստը, թե՝ «ում հացը որ ուտում են, նրա շահերի համար էլ հաշում են»։ Այսպիսի մարդիկ անձնական շահեր միայն ունեն, ընդհանուր, ազգային շահը անհասկանալի է նրանց։ Երկրորդ կուսակցությունը ամեն ինչ ռուսներից է սպասում։ Իսկ երրորդը ոչ միայն ռուսներից ակնկալություն չունի, այլ մտածելով, թե ամեն մի քրիստոնյա պետություն իր «հոր հոգու համար» դեպի հայերը օգնության ձեռք չի մեկնի, այս կուսակցությունը ավելի սերտ կերպով կապած է Թուրքիային, հայ ժողովրդի ապագա բախտավորությունը Թուրքերի քաղաքականության մեջ որոնելով։

Բայց կա մի ուրիշ կուսակցությունը ևս՝ նոր սերունդը, որ մի ժամանակ լուսավորյալների անուն էր կրում։ Այս կուսակցությունը կ. Պոլսի մտածող դասի բարձ ուժն է կազմում։ Բայց որպես առհասարակ լինում է, երբ տակավին հների ազդեցությունը առաջնակարգ դեր է

---

* Կ. Պոլսում դեռ պատերազմից առաջ հրատարակված «Շահենն ի Սիրիր» կոչված գիրքը[3] կատարյալ արտահայտությունն է հիշյալ կուսակցության։ Մենք ուրիշ ժամանակ ուրիք կունենանք խոսել այդ գրքի մասին։

խաղում, այնպես էլ նոր սերունդը դեռևս իր տեղը և անորոշ դրության մեջն է, դեռևս մի կազմակերպված ձև չէ ստացել, այս պատճառով սխալ կլիներ ասել, թե նրանք կուսակցություն են կազմում։ Նրանց չէ աջողվել մինչև այսօր բարձր դիրքերի վրա կանգնել, թե ազգային և թե պետության մեծ գործերի մեջ մտնել, որպեսզի սրտի և մտածության հետ միաժամանակ նրանց մեջ և իշխանություն, որով կարողանային ավելի ազդու կերպով ներգործել։

Դրանք առհասարակ նյութական կողմից ազքատ, իսկ բարոյապես և մտավորական կողմից հարուստ մարդիկ են։ Դրանք դեռևս դեղերում են այս շրջանների շուրջը, որպես է՝ թատրոնը, համբագրատուները, դրպրոցները, և քչերին աջողվել է անդամ լինել ազգային ժողովի մեջ։ Ֆրանսիական թևեր կրնությունը ավել է նրանց բնավորության թևեր լինել, աշխույժ ունենալ, եռանդուտ լինել, բայց ոչ տոկուն, խորամիտ ու հեռատես լինել։ Այս մարդիկը շուտ հափշտակվող, շուտ ոգևորվող և շուտ տաքացող մարդիկ են, բայց միևնույն ժամանակ շուտ սառչող են։ Այս տեսակ հատկություններդ, իրավ է, պատրաստում են հեղափոխականներ, բայց չեն պատրաստում ասպարեզ դուրս եկող հերոսներ։

Այս մարդիկը աղնիվ են և բարեմիտ. ցանկանում են, որ հայն էլ թոթափե Թուրքիայի լուծը, ազատ դրություն ունենա և իր ազատության մեջ զարգանալ ու առաջադիմել սկսե։ Իսկ այդ վիճակին հասնելու եղանակների մեջ ոչ միայն անփորձ են, այլ անընդունակ են։ Ներկա հանգամանքները բոլորովին երևան հանելին նրանց անընդունակությունը, որ իրանց ձեռքում ունենալով թատրոնական բեմը, լրագրությունը և դպրոցները, դարձյալ չկարողացան մի հատատուն հող պատրաստել, որի վրա ոտը դնելով, վեր բարձրանար Թուրքիայի հայը իր ընկած դրությունից։

Բայց կա Կ. Պոլսում և մի ժողովրդական տարր, որ ներկայացնում է մշակ դասը։ Դրանք ըստ մեծի մասին Հայաստանից եկած գաղթականներն են, որ մայրաքաղաքում կատարում են համալի, բուլումբաջիի, չափջիի, ջրկիրի, դայըկջու և ուրիշ շատ ստոր ծառայություններ։ Հայրենիքից հետացած այդ պանդուխտ հերոսներն են, որ ամեն անգամ մի ազգային ծանր հարց բարձրանալիս, շրջապատում են պատրիարքարանի չորս կողմը, դռներ և պատուհաններ են փշրում, աղմուկ բարձրացնում և արդարություն են խնդրում։ Այս թշվառ մշակները հայրենիքից դառն ազքատության հետ բերել են իրանց սրտի մեջ խորին վերքեր, որ գործել է մահմեդականի բռնակալ ձեռքը, և այս պատճառով

Նրանց ավելի զգալի է Թուրքերի անտանելի լուծը։ Եվ ամեն բան կորցրած լինելով, տուն, տեղ, հայրենիք, նրանք այլևս ոչինչ կորցնելու չունեն և առանց երկյուղի բողոք են բարձրացնում ու իրանց ընտանիքների համար ազատություն են խնդրում, պատրիարքի օձիքից բռնելով։

* * *

«Մշակի» վերջին համարներից երևաց, որ Կ. Պոլսի պատրիարքը, հուշն անգլիական դեսպանի դրդելուց ընկալված, ներկայացրել Ազգային ժողովին մի ծրագիր, որով առաջարկում էր և հայերի համար խնդրել այն արտոնություններից մեկը, որ պիտի վայելեն սլավոնական ցեղերը Բալկանի թերակղզու վրա։ Ազգային ժողովը մերժեց պատրիարքի առաջարկությունը, հայտնի չէ ինչ հիմնավոր փաստերով։

Որքան մեզ հայտնի է, Ազգային ժողովը ի նկատի է ունեցել այն, թե արևմտյան եվրոպական պետությունների յուրաքանչյուրը առնելյան հարց պատրվակով միայն իրանց սեփական շահերն են որոնում, և որովհետև Հայաստանի ազատությունը որևիցե կերպով նրանց շահերը չէ շոշափում, ուրեմն հայերի առաջարկությունը կմնար առանց հետևանքի կազմվելիք կոնֆերենցիայի մեջ։

Մենք չենք խոսում, թե որքան սխալ է այդ դատողությունը, միայն կասենք, թե Անգլիան կցանկանար Հայաստանը ազատ տեսնել, քան թե նրան մի ուրիշ պետության հետ խառնված տեսնել, մենք հարկավոր չենք համարում նաև բացատրել, թե ինչ շահ ունի Անգլիան, բայց գիտուք թե ուղիղ է Ազգային ժողովի դատողությունը, որով նա մերժում է պատրիարքի ծրագիրը, միայն մի հարց առաջարկենք՝ ի՞նչ կկորցներ Ազգային ժողովը, եթե կազմվելիք կոնֆերենցիային մի հայկական խնդիր առաջարկեր։

Մեզ կպատասխանեն, թե Ազգային ժողովի ձայնը իր նպատակին չէր հասնի, և այնուհետև հայերը կկորցնեին իրանց հավատարիմ նպատակության համարումը և կասկածելի կդառնային Թուրքերի աչքում։ Մեզ կպատասխանեն գուցե մի ավելի ծայրահեղ բան, թե Թուրքերը հայերին ապստամբ համարելով, կսկսեին նրանց կոտորել Կ. Պոլսի մեջ։

Հավատարիմ հպատակությունը մի այնպիսի պետության վերաբերությամբ, որպես Թուրքիան է, նշանակում է կույր ենթազանություն,

այսինքն՝ անտրտունջ տանել բռնակալի բոլոր բարբարոսությունները։ Եվ հայերը մինչև այսօր իրանց հավատարիմ հպատակությամբ ոչինչ չշահեցին, միայն ծանրացրին իրանց սարկության շղթաները։ Որովհետև բռնակալ պետությունները ավելի ակնածություն ունեն դեպի այն ազգերը, որոնք անհավատարիմ կամ կասկածավոր են, և այսպիսիների ձայնը կարելու համար միշտ աշխատում են դրավել՝ նրանց այս և այն պահանջները կատարելով։ Իսկ հավատարիմների վրա նայում են որպես մորթված զոհերի վրա... Այս խոսքերը ապացուցանելու համար բավական է օրինակ վեր առնել Թուրքիայի հույներին, որոնք միշտ կասկածելի են եղել կառավարության աչքում և միշտ ավելի պատվավոր են եղել, քան թե հայերը, և միշտ առաջադեմ։

Իսկ ինչ վերաբերում է մյուս հարցին, թե գուցե թուրքերը զայրանալով կկոտորեին հայերին, նախ, այսպիսի բան պատահել չէր կարող, քանի որ Անգլիայի նավատորմը կանգնած է Կ. Պոլսի պարիսպների տակ քրիստոնյաներին մահմեդականների բարբարոսությունից վերծ պահելու անունով։ Բայց եթե պատահեր էս մի այդպիսի անգթ, որ հայերին կոտորեին, նույնիսկ կոտորածի միջից կբարձրանար նրանց ազատությունը, որովհետև առանց արյունի, առանց զոհերի փրկություն չէ լինում...

Ուրեմն ժամանակ է, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը իր պատրիարքի հետ գործի մի վճռական քայլ, տարատամ երկմտությունը այսպիսի հանգամանքներում ոչինչ օգուտ չէ կարող բերել։ Կոնֆերենցիան այսօր թե վաղը կկազմվի, եթե այս անգամ էլ հաջողվեցավ բարձրացնել մի հայկական հարց, այնուհետև Տաճկաստանի հայերի ապագան պետք է կորած համարել։

Դեռևս ուշ չէ։ Բայց երկար հապաղումը կկատարե հայերի գլխին ամենաարհավիրական այն աղետը, թե «փեհան կգա, պատրաստները կմտնեն նրա հետ հարսանիքը, դոլները կփակվեն, հետո կգան ինքնաբերաբար կույսերը, գուռը կբախեն ու կասեն. «Բա՛ց մեզ, տեր», իսկ նրանց կպատասխանեն. «Ձեզ ճանաչում ձեզ»...[4]

Վերջացնելով մեր հոդվածը, այդ հարցն ենք դնում. մի՞թե ընդհանուր հայոց վեհ. կաթողիկոսը պետք է անտարբեր մնա։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վ. Ագուլիս, 11 հունիսի

Ես ստացա պանպատն քաղաքներից մի քանի նամակներ շատ ստորագրություններով, որոնց մեջ համակրություն էին հայտնում «Ջալալեդդին» վեպի վերաբերությամբ։ Հայ հեղինակի համար դա էլ մեծ մխիթարություն է, որ իր աշխատությունը գնահատվում է, եթե ոչ նյութապես, գոնե բարոյապես։ Ես ուրախ եմ տեսնելով, որ ստորագրությունների մեծ մասը պատկանում է նոր սերնդին, ռեալական գիմնազիոնի ուսանողներին։ Երբ հեղինակի խոսքը արձագանք է գտնում մանուկ սրտերի մեջ, նա երջանիկ է... Սերմը բարեբեր հողի վրա է ընկնում։

Սեղմում եմ ձեր ձեռքը, ո՛վ ապագայի թարմ հույսեր, դուք ողջ լինե՛ք։

Ի՞ՆՉ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ ԵՆ ՏԱՃԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Եթե ներկան անցյալի շարունակությունն է, եթե ներկան ուղղելու համար պետք է օգուտ քաղել անցյալից, այդ կետից նայելով, մենք չենք սխալվի, եթե ասենք՝ Կ. Պոլսի պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրքը[1]», որ պարունակում է իր մեջ Տաճկական Հայաստանի ամբողջ քառորդ դարի գործերի արձանագրությունները, բավական է առաջնորդ լինելու համար, թե ո՛րպիսի վերանորոգություններ պետք է պահանջե Կ. Պոլսի հայոց պատրիարքը, որպեսզի այսուհետև հայերի վիճակն ապահով լինի, և նրանք ազատվեն մինչև այսօր գործված անիրավություններից։*

Քննելով պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրքը», մենք գտնում ենք, որ նա բովանդակում է իր մեջ գլխավորապես հետևյալ չորս կետերը. ա) անապահովություն ապրուստի և սեփականության, բ) անապահովություն կյանքի, գ) անարդարություն դատաստանի մեջ

---

* *Տես տեղեկագիրք գավառական հարստահարությանց» հոդվածը (ծան. հեղ.)։ Բաֆֆի, եժ, հ. 10։*

և իրավունքի պաշտպանության, *դ)* անպաշտպանություն ազգային առանձնահատկություններին: *Ուրիմն Տաճկաստանի հայերի վիճակը բարվոքելու համար գործ դրվելիք վերանորոգություններն այն ժամանակ միայն կարող են նպատակահարմար լինել, երբ լիակատար բավականություն կտան վերոհիշյալ չորս կետերի բարվոքմանը:*

Խոսենք յուրաքանչյուրի վրա առանձին:

Ա. Մենք ապրուստի և անվտանգության ապահովություն *չենք համարում այն դեպքերը, որ հային հարստահարում են, նրա աշխատության արդյունքը նրա ձեռքից խլում են, և նա մշտապես ենթարկված է զանազան բռնաբարություններին և ավազակություններին, ոչ, Տաճկաստանում անվտանգության ապահովությունը և հետևապես ապրուստի ըղձ-վարությունը կայանում է զլխավորապես այն բանի մեջ, որ հայը հող չունի, այս պատճառով նա կյանքի հաստատուն հիմք չունի: Հողի վերաբերությամբ մահմեդականի օրինքը բավանդակվում է այս վարդապետության մեջ. «Ամբողջ տիեզերքն Աստծուն է պատկանում, սուլթանը Աստծու խալիֆան կամ ներկայացուցիչն է երկրի վրա, իսկ հողը նրա սեփականությունն է»: Այստեղից առաջ է՝ գալիս այն ծիծաղելի անհավասարությունը, իբր թե մի երկիր, որի վրա ոտք է կոխում խալիֆի թագավորը, պետք է նրան պատկանի:*

Հողի վերաբերությամբ բոլոր կալվածական օրենքները բխում են վերոհիշյալ վարդապետությունից. սուլթանը հողի տերն է, իսկ երկրագործը, մշակ դասը՝ նրա վարձկանը կամ կապալառուն: Հայը հող ունենալու համար պետք է վարձն կառավարությունից, կամ տաճկական տացյալածքով խոսելով, պետք է բախու անել. և այն օրից դադարում է նրա իրավունքը վարձած հողի վրա, երբ օրենքի պահանջած ժամանակներում չէ նորոգում իր կալվածագիրը, կամ չէ կատարում այս և այն պարտավորությունները, իսկ մի այսպիսի կալվածագիր պայմանագրի զորություն ունի, ավելի ոչինչ:

Այսպիսով, ոչինչ չէ կապում երկրագործ դասին երկրի հետ և հետևապես մշակության կամ աշխատության հետ: Նվ ի նկատի ունենալով այն անհաղթելի պայմանները, որով ծանրաբեռնվում է մշակը մի կտոր հող վարելու համար, շատ հասկանալի է լինում, թե ինչու նա թողնում է հայրենի երկիրը և հազարներով գաղթում է օտարության մեջ ապրուստ որոնելու: Ուրիմն՝ հային իր հայրենի երկրի հետ կապելու համար, գաղթականությունը դադարեցնելու համար՝ միակ և ամենահարևոր միջոցն է նրան իրավունք տալ ազատ կալվածատեր լինելու, որ նա որպես սեփականություն իր հողն ունենա և նրանից ամեն կեր-

պով օգտվելու իրավունք ունենա։ Դրանով կարելի է միայն հեռու տալ գյուղացուն իր աշխատությամբ իր ապրուստը հայթայթելուց։ Նա չպիտի լինի վարձակալ, այլ հողը պիտի լինի նրա համար մի հատատուն ժառանգություն, որ անցնում է սերունդից սերունդ, որը նա կարող լիներ դնել, վաճառել, գրավ դնել, մի խոսքով, վարվել նրա հետ որպես իրան պատկանող սեփականության հետ։ Այդ պետք է լինի հայոց պատրիարքի պահանջելի գլխավոր վերանորոգություններից մեկը. եթե նա ցանկանում է, որ հայը արմատ ձգի Հայաստանի հողի վրա, պետք է նրա տերը լինի, պետք է նրանից ծծի իր անունը, որպես մանուկը մոր ստինքներից։ Իսկ ինչ վերաբերում է մուլթեզիմների (կապալառուների) հարբսատհարությունների, հարկերի ծանրության, որոնցով կողոպտվում է մշակ դասը, ինչ որ վերաբերում է զանազան բռնակալների և տերեբեկների կեղեքումներին, մենք համարում ենք այդ բոլորը ժամանակավոր անկարգություններ, որոնցից ազատ չեն մնում նույնիսկ մահմեդականները, և որոնք Թուրքիայի ընդհանուր բարենորոգումների ժամանակ միայն կարող են կարգի և օրինավորության մեջ դրվել։

Բ. Հայերի կյանքի անապահովությունը. քրդերից, չերքեզներից և զանազան վայրենի ցեղերից անպատճառ կեղեքվելը, որպես Սան-Ստեֆանոյի դաշնագրության 16-րդ հոդվածը, նույնպես և Բեռլինի ավազակոդովի վճռի 61-րդ հոդվածի գլխավոր հիմունքն է կազմում։ Բայց որքան էլ աշխատի Թուրքիայի կառավարությունը՝ պահպանել անդին հայերին պինդ մահմեդականների բարբարոսություններից, անկարելի է, որովհետև իր բոլոր զինվորական ուժը, որով պետք է զսպել նրանց, նունիսկ բարբարոսներից է կազմված։ Ուրեմն հայերին պետք է թույլ տված, որ իրանք իրանց պաշտպանեն, և այդ այլ կերպ լինել կարող չէ, բայց միայն իրավունք տալ, որ հայերը զենք կրեն որպես իրանց դրացի աղդերը, և բացի դրանից, Թուրքիայի զինվորության մեջ իրանք էլ մասնակցեն։ Պետք է հայը ինքը հնար ունենա իր անձը պահպանելու, երբ կառավարությունը անկարող է։ Ով որ ծանոթ է Թուրքիայի կազմակերպությանը, մեզ հետ կհամաձայնվի, որ այդ երկրում անկարելի է ապրել և իր գույությունը պահպանել առանց զենքի։ Թուրքիան բնակեցած է այնպիսի ցեղերով, որոնք իրանց մեջ մշտապես կռվում են, որոնք միմյանց հետ մրցում են սրով միայն։ Ինչով կարող է ընդդիմադրել նրանց անդին հայը։

Գալով Թուրքիայի զինվորության մեջ մասնակցելուն, դա պետք է հայերի գլխավոր պարտավորություններից մեկը լինի ոչ միայն որպես Թուրքիայի հպատակ և քաղաքացի, այլ մի այդպիսի ծառայությունը

կազատեր նրանց պատերազմի ժամանակ արտաքին, իսկ խաղաղության ժամանակ ներքին թշնամիներից։ Հայերը առանց դրան էլ զինվորական տուրք են վճարում Թուրքիայի կառավարությանը և նույն տուրքով կարող են պահպանել մի ազգային միլիցիա։ Ինչո՞ւ անպատճառ միլիցիա, ինչո՞ւ հայերը չպիտի մասնակցեն Թուրքիայի ընդհանուր զինվորագրության մեջ— կհարցնեն մեզանից։

Որքան մեզ հայտնի է, Թուրքիայի մասնավոր ազգերից և ոչ մեկը, որպես են՝ քրդերը, չերքեզները, արաբները և այլն, չեն մասնակցում Թուրքիայի զինվորագրությանը և չեն մտնում նրա կանոնավոր զորքերի թվում, այլ կազմում են առանձին միլիցիաներ, որոնք պատերազմից հետո դադարում են իրանց գոյությունից։ Ավելի ևս հայերին անկարելի է որպես զինվոր մտնել Թուրքերի կանոնավոր զորքերի մեջ, որովհետև զանազան կրոնական խորհուրդներ թույլ չեն տալիս այդ երկու ազգերին միմյանց հետ խառնվել, միմյանց հետ սերտ հարաբերություն ունենալ. և մինչև անգամ Թուրք զինվորը չի ցանկանա իր մեջ ընդունել ոչ-մահմեդականին։

*Եթե հայերից պահանջվեն կանոնավոր զինվորներ և ոչ միլիցիա, այն ժամանակ ևս հայոց զինվորները պետք է առանձին դունդեր կազմեն Թուրքաց բանակի մեջ իրանց հայ զորապետներով և զորավարներով։ Այսպես է եղել միշտ Արշակունյաց պետությունը վերջանալուց հետո, Հայաստանի ամբողջ մարզպանության դարերում, պարսիկների, այլև արաբացոց և թաթարների տիրապետության ժամանակներում, և մինչև անգամ հույների ժամանակ, միշտ հայոց զինվորները օտարազգիների բանակի մեջ առանձին դունդեր էին կազմում իրանց զորապետներով**, *Նրանք իրանց հետ ման էին ածում մինչև անգամ քահանաներ և եկեղեցական խորան։*

Հայերին զանազան վայրենի ցեղերից պաշտպանելու համար կառավարության կողմից գործ դրված ամեն հսկողություն անօգուտ է, պետք է նրան հնար տալ, որ ինքն իր գլուխը պահպանե, և դա կլինի այն ժամանակ, երբ նա զենք կրելու իրավունք կունենա։ Այդ այլ բան կլիներ, երբ կառավարությունը իր բոլոր հպատակներին զինաթափ կաներ և ամեն անհատ նրա հովանավորության ներքո պաշտպանություն և կյանքի ապահովություն կգտներ։ Բայց Թուրքիայի կառավարությունը

---

* *Նորին մեծության պարոից Շահի ժամանակ, երբ հայերից զինվորներ առնվեցան, դարձյալ առանձին դունդեր կազմվեցան հայ զորապետների զորավարության ներքո։ Նույնիսկ պարսիկները թույլ չավեցին, որ քրիստոնյա հայը խառնվեր իրանց հետ։*

ոչ կարող է և ոչ կցանկանա այդպես անել։ Երբ սրանից մի քանի տարի առաջ խոսք եղավ քրդերին ինքնաթափ անել, այն ժամանակվա Թուրքիայի երեսելի պետական մարդիկներից մեկը՝ Ալի փաշան ասաց. «Պետք չէ, քրդերը միշտ պատրաստի զորք են մեզ համար»։ Այո՛, պատրաստի զորք են, որ անգլն հպատակների հաշվով են ապրում. կառավարությունը պետք է օգուտ քաղե նրանցից, որպես և վերջին պատերազմի ժամանակ երևաց։

Մեր կողմից ավելորդ կլիներ խորհուրդ տալը, քանի որ գիտենք, Կ. Պոլսի պատրիարքարանը լավ հասկացել է հայկական միլիցիայի կարևորությունը երկիրը ներքին թշնամիներից պահպանելու համար, և Բեռլինի ավազաժողովին մատուցած ծրագրի մեջ այդ հարցը անցուցած էր նրա խնդիրների կարգում։ Միայն պետք է այժմ դարձյալ նույնը պահանջել, որ հայերը փոխանակ զինվորական հարկ վճարելու, նույն տուրքով պահեին իրանց երկրում միլիցիաներ, որոնք խաղաղության ժամանակ պահպանեին երկիրը ներքին հարձակումներից, իսկ պատերազմի ժամանակ օգնեին պետությանը։ Այլ կերպ ապահովություն քրդերի, չերքեզների և ուրիշ վայրենի ցեղերի բարբարոսություններից մենք չենք ճանաչում։

Գ. Թուրքիայի մեջ ոչ-մահմեդականների վերաբերությամբ իրավունքի պաշտպանության և դատաստանի մեջ անարդարություն կատրե միշտ, քանի որ դատավարության մեջ տիրում է շարիաթի օրենքը։ Եթե մատածենք, թե ոչ մի օրենք չէ կարող մշտական լինել, այլ նա պետք է հետզհետե փոփոխվի և կատարելագործվի, որքան նորանոր ձևեր են առանում նրա պետքերն ու պահանջները, կարող ենք համարձակ ասել, որ շարիաթի այսքան դարերի ընթացքում հնացած և մաշված օրենքներն անբավարար և անհամապատասխան են ոչ միայն ոչ-մահմեդականների համար, այլ նույնիսկ մահմեդականների վերաբերությամբ, որոնց կյանքի նահապետական պարզ ձևերը շատ և շատ փոխվել են սկսյալ այն օրից, երբ այդ օրենքները հրատարակվեցան իսլամի մարգարեի բերանով և ամփոփվեցան ղուրանի մեջ։ Անփոփոխ և մշտական օրենքները, որ տրվում են ատավածապետական ժողովուրդներին, ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ մի ծանր կապանք, որ կաշկանդում է, քարացնում է ազգերը հավիտենական անշարժության մեջ։

Դժվար է պահանջել Թուրքիայից, որ նա փոխեր շարիաթը, որովհետև նա սերտ կապ ունի մահմեդական կրոնի հետ, բայց կարելի է պահանջել, որ հայերի և առհասարակ ոչ-մահմեդականների վերաբերությամբ նա մնար անգործադրելի։ Ուրիշ կերպ անկարելի է, քանի որ

այդ օրենքն իր մեջ ունի շատ սկզբունքներ, որ հակառակ են հավատարմության գաղափարին, որ խորհուրդ են դնում այն բոլոր ազգերի վերաբերմունքի համար, որոնք չեն պատկանում իսլամին։ Եթե մինչև այսօր սուլթաններին հրատարակած բոլոր իրադրիները և ֆերմաններ մնացել են անգործադրելի, պատճառը շարիաթի զորեղ ընդդիմադրությունն է և ոչ այլ ինչ։

Արևմն ի՞նչ միջոց կա շարիաթից ազատվելու։

Ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ Թուրքիայի կառավարությունը դեռ շատ առաջ մտածել է, որքան կարելի է, ազատ կացուցանել ոչ-մահմեդականների և առավելապես հայերին շարիաթի կապանքներից։ Այդ նրանում է այն արտոնությունից, որ Թուրքիան շնորհեց հայերին սահմանադրական վարչություն, բայց դրանից, զավառներում կազմվեցան խառն մահմեդականներից և ոչ-մահմեդականներից առանձին մեջլիսներ (ժողովներ) նրանց գործերը քննելու համար, որ այլևս ոչ-մահմեդականները դործ չունենան ուլեմների և զադիների հետ։ Այսուամենայնիվ, թե սահմանադրությունը և թե զավառական մեջլիսները չկարողացան բավականություն տալ հայերին։ Ինչու։ Որովհետև հայոց ազգային սահմանադրությունը ուներ ավելի կրոնական բնավորություն, նա չէր անցնում բուն ազգային գործերի սահմանից, որպիսին են դպրոց, եկեղեցի և այլն։ Իսկ զավառական մեջլիսները իրանց անկարգ կազմակերպությամբ ոչինչ օգուտ չէին բերում։

Մեր կարծիքով հայերին Թուրքերի կառավարության զառաջանական անիրավությունից ազատելու համար նոր բան պահանջել զբաղվարություններ կհարուցաներ, դուցե չէին տա նաև։ Հարկավոր է պահանջել, որ լրացնեն, կատարելագործեն այն արտոնությունները, ինչ որ մի անգամ շնորհված էր հայերին, թեև անկատար կերպով։ Մենք դարձյալ ի նկատի ունենք ազգային սահմանադրությունը և զավառական մեջլիսները։

Եթե հայոց ազգային սահմանադրությունը ընդլայնե իր նեղ շրջանը նոր իրավունքներով, եթե տրվին նրան և քաղաքական իրավունքներ, եթե նա կ. Պոլսի պարիսպներից դուրս գալով՝ տարածվի բոլոր հայարնակ գավառներում, այնուհետև մի այսպիսի վարչություն կարող էր հայերի թե եկեղեցական, թե քաղաքական և թե բրեական բոլոր գործերին բավականություն տալ, և հայերը, ավելի պատրաստված լինելով մի այսպիսի վարչության համար, իրանց գործերը իրանց մեջ իրանց ձեռքով կվճռեին։ Բայց այս այսպես լինելուց հետո ծագում է

մի հարց. ի՞նչպես և ո՞րտեղ պիտի վճռվեն այն գործերը, որ հայը ունի մահմեդականի հետ։

— Գավառական մեջլիսներում։

Գավառական մեջլիսների նպատակը, որպես վերևում հայտնեցինք, եղել է՝ վճռել զանազան ազգությունների գործերը, և այս մտքով հիշյալ դատարանների անդամներն ընտրվում էին խառն մահմեդականներից և ոչ-մահմեդականներից։ Բայց եթե մինչև այսօր նրանք իրանց նպատակին չծառայեցին, պատճառն այն էր, որ մեջլիսները զուրկ էին որևիցե որոշ օրենսդրությունից, գրավոր ոչինչ չկար, գործերի քննությունը լինում էր բերանացի կերպով, և վճիռները կայանում էին միայն ձայների վրա, ոչ թե նրանց բազմությանը նայելով, այլ թե ձայնավորը որպիսի դիրք էր բռնած ժողովի մեջ։ Այսպիսի հանգամանքներում, հայտնի բան է, կամայականությունը մեծ դեր պիտի խաղար, և գործերը պիտի վճռվեին այն անձանց օգտին, որոնք ժողովի մեջ զորեղ պաշտպաններ ունեին. իսկ զորեղ պաշտպաններ կարող էին լինել մահմեդականները, որովհետև ոչ-մահմեդականները միայն ձևի համար այնտեղ նստած էին լինում։

Այստեղից երևում է, որ Թուրքիայի կառավարությունը սկիզբը դրած է այն հիմնարկությունների, որ պետք է բարվոքեին ոչ-մահմեդականների վիճակը, բայց անկարգ և անկանոն կերպով։ Նա շնորհել է հայերին ազգային սահմանադրություն, բայց անկատար. նա հիմնել է զանազան ազգություններից խառն մեջլիսներ, բայց առանց օրենքի։

Այսպիսի խառն մահմեդականներից և ոչ-մահմեդականներից կազմված մեջլիսներն այն ժամանակ միայն կարող են նպատակահարմար լինել, երբ կհիմնվեն եվրոպական օրենսդրության սկզբունքների վրա և բոլորովին նոր կազմակերպություն կստանան։ Այսպիսի մի դատարանի պահանջ կար հայոց պատգամավորների Բեռլինի ավագաժողովին ներկայացրած ծրագրի մեջ, բայց նա բուն հայկական էր։ Մեր կարծիքով, պետք չէ վախեցնել Թուրքիային, իբր թե նրանից նոր բան է պահանջվում, հարկավոր է միայն արդեն եղածների և մի անգամ շնորհվածների ձևը փոխել, այս քաղաքականությանը պետք է հետևի Կ. Պոլսի պատրիարքարանն իր պահանջելի վերանորոգությունների մեջ։ Ընդարձակվելով հայոց ազգային սահմանադրության սահմանափակ շրջանը նոր իրավունքներով և տարածվելով բոլոր հայաբնակ գավառները, այդ բավական կլիներ հայերին հնար տալ իրանց գործերը իրանց ձեռքով վճռելու, իսկ վերանորոգելով գավառական մեջլիսները, կդյու-

բացնեին նրան դատաստանական հարաբերություններն օտարազգինների հետ։

Դ. Անապահովություն ազգային առանձնություններին։ Խոսելով ազգային առանձնությունների վրա, Թուրքիայի հայի վիճակը մեր աչքե խիստ տխուր գույներով է նկարվում։ Մինչև այսօր մենք սխալ կարծիքի մեջ էինք, մենք այսպես էինք մտածում. «Հայոց ազգը մի կրոնական ազգ է, նրա հիմքը դրած է իր եկեղեցու վրա, իսկ մեր եկեղեցին կարող է ավելի հաստատուն մնալ Թուրքիայում, ուրեմն այսոհետ կարող է պահպանվել և մեր ազգությունը։ «Եթե մեր ազգը այսօր գոյություն ունի, դրանով մենք պարտական ենք մահմեդականությանը»,— ասում էր մեր երևելի մտածողներից մեկը։

Մենք բողոքում ենք վիճել այս կարծիքի դեմ, թեև հայը ամենևին կրոնական ազգ չէ, և բողոքում ենք հերքել մի այսպիսի նրբիտյական դատողություն, թեև լոկ կրոնքով մի ազգ մշտապես պահպանվել չէ կարող, և թե եկեղեցին խիստ խափուտ հիմք է ազգության գոյությունը պահպանելու, և ընդունում ենք, որ հայը իր կրոնով և եկեղեցով կարող է միշտ հայ մնալ։ Բայց ո՞րտեղ հայոց կրոնը և եկեղեցին այնքան վտանգի ենթակա են, որքան Թուրքիայում։

Թե ի՛նչպես է կլանում մահմեդականությունը քրիստոնյա ժողովուրդներին, բավական է աչքի առաջ ունենալ այն բազմաթիվ մահմեդականացած հայոց գյուղորայքը, որ այժմ կարելի է տեսնել Փոքր Ասիայի ամեն կողմերում։ Բայց Թուրքիայում կա մի ավելի սաստիկ վտանգ հայոց եկեղեցուն քրիստոնյա միսիոնարներից, որոնք ավելի ճարպիկ են, քան մահմեդականները, որոնք քարոզներով են կրոնափոխ անում, իսկ Թուրքը՝ բռնությամբ։ Ոչ մի երկրում կաթոլիկությունը և բողոքականությունն այնքան տարածված չէ հայերի մեջ, որքան Տաճկաստանում. համարյա ամեն տեղ մտել են նրանց քարոզիչները։ Էլ ի՞նչ խնդրով ենք մտածում, թե մեր եկեղեցին Թուրքիայում ապահով դրության մեջ է։ Կրոնափոխությունն այսուհետև ավելի կատաղկանա, երբ անգլիացիները, Փոքր Ասիան իրանց հովանավորության տակ առնելով, կմտցնեն հայերի մեջ իրանց միսիոնարներին*։ Մինչև այսօր հայտնված քարոզիչներն ամերիկացիք էին, այսուհետև կավելանան և

---

* Դեռ դուս-Թուրքական պատերազմից առաջ ինձ պատահեց Թավրիզում խոսել մի անգլիացի քահանայի հետ, որ վերադառնում էր Տաճկական Հայաստանից. նա հայտնեց, թե Լոնդոնում նպատակ կա քարոզիչների մի առաքելություն ուղարկել Հայաստան։ Այդ մարդը ուղարկվել էր հետազոտել հողը...

անգլիականները, իսկ այդ վերջիններն ավելի հեշտ կերպով որսալ կարող են, քանի որ գիտենք, որ կրոնափոխ եղող հայերը ավելի եվրոպացիներից մահմեդականների հալածանքների դեմ պաշտպանություն գտնելու համար են հետամուտ մայրենի եկեղեցուց, և պաշտպանել անգլիացիները միշտ կարող են իրանց նոր հավատակիցներին։

Թուրքիայի խորամանկ քաղաքականությունը կարծես լավ էր ըմբռնել, թե ի՛նչ նշանակություն ունի կրոնափոխությունը հպատակ քրիստոնյա ազգությունների մեջ։ Նա տեսնելով, օրինակ, հայերին մի կրոնական ժողովուրդ, որ ուրիշ հիմք չէ ճանաչում իր ազգության՝ բացի եկեղեցին, միշտ աշխատել է զրաղեցնել նրանց կրոնական երկպառակություններով, միշտ աշխատել է քակտել նրանց միությունը, թույլ տալով տարածվել հայերի մեջ կաթոլիկության և բողոքականության։ Հին սուլթաններն ազգայնության ավելի հիմնական արմատին էին զարկում՝ լեզվին, և որի պատճառով հայտնվեցան այնքան բազմաթիվ տաճկախոս և քրդախոս հայեր, որ մինչև այսօր էլ կան, թեև հայոց եկեղեցուն են պատկանում։ Իսկ վերջին սուլթանների ժամանակ սկսեցին քրիստոնյա ժողովուրդների ուժերը թուլացնել և նրանց ազգային միությունը բաժանել կրոնական հերձվածներով։

Թուրքիայի քաղաքականությունը չէր բավականանում, որ հայերից նոր եկեղեցիներ էին բաժանվում, այլ աշխատում էր այդ վերջիններ մեջ ևս հերձվածներ տարածել, որպես եղավ հայ-բողոքականների և հայ-կաթոլիկների մեջ։ Այդ մասին բավական է հիշել հասունյանների և հակահասունյանների կռիվը քանի տարիներ տևեց, և եթե կառավարությունը օգնեց հակահասունյաններին, ոչ նրանց ավելի ազատամիտ ձգտումների համար էր, այլ որ նրանք մի նոր հերձված էին կազմում հայ-կաթոլիկների մեջ, մի չափով տկարացնում էին նրանց ուժերը։ Այժմ լսում ենք՝ կրկին ներս թողեցին Հասունին Կ. Պոլիս, երևի հին երկպառակությունները նորոգելու համար։

Առհասարակ Թուրքիայի քաղաքագիտությունը մենք շատ միամիտ ենք համարում, քան թե է, չնայելով, որ նա իր մոնգոլական խաբեության վրա պատվաստել է բյուզանդական խորամանկությունը։ Նա գիտե իր հպատակ ժողովուրդների մեջ միշտ խռովություններ սերմանել, նրանց միության կապերը խզել։ Ով որ ուսումնասիրել է Կ. Պոլսի հայոց լրագրությունը, կհիշե, որ երուսաղեմի ս. Հակոբա վանքը մի երկպառակության[1] թնճուղ է Կ. Պոլսի հայոց և հունաց պատրիարքարանների մեջ[2]. ամեն տարի սուրբ Հարության առնին ի՛նչ անկարգություններ են պատահում հայ և հույն աբեղաների մեջ, շատ անգամ կռիվ-

ներն արյունհեղության են հասնում, բայց այսքան տարիների ընթացքում կառավարությունը վերջ չդրեց նրանց վհճերին, թևև չնչին բաներ են։

Այժմ, կարծեմ, ընթերցողը մեզ հետ կհամաձայնի, թե ինչ վտանգ է սպառնում հայոց եկեղեցուն Թուրքիայում, և եթե դա պետք է լինի ազգի գոյությունը պահպանող հիմունքը, նրա կյանքը խիստ երկբայական է... Բևռլինի դաշնագրի համեմատ Թուրքիայի խոստացած «կրոնի ազատությունը» մի նոր ասպարեզ պիտի բայց անե եվրոպացի քարոզիչների առջև, և հայերը, Փոքր Ասիային հովանավորող անգլիացիներից պաշտպանություն գտնելու հույսով, պիտի զոհեն իրանց կրոնը. ո՞վ կարող է մրցություն անել նրանց հետ, մեր անհոգ հոգևորականությո՞ւնը, թե մեր թեթևսոլիկ ուսումնականները... Ո՛չ ոք, մեր կարծիքով։ Այժմ կմնա Թուրքիայի հային բողնել եկեղեցին, բողնել կրոնն անհատների խղճի վրա և ձեռք մեկնել հայ-կաթոլիկին, հայ-բողոքականին և հայ-մահմեդականին, ասել նրանց. «Մենք եղբայրներ ենք, մենք միասին պետք է բաժանենք մեր ներկան և ապագան, թող եկեղեցին բաժանե մեզ, միացնենք մեր ուժերը և միասին գործենք»։

Վերջացնելով մեր հոդվածը, կհամաձայնենք մեր կարծիքն այս խոսքերով. այժմ, որ Կ. Պոլսի պատրիարքը զբաղված է Թուրքիայի հայերին արվելիք վերանորոգություններով, նախ և առաջ պետք է միանա հայ-կաթոլիկների և հայ-բողոքականների ներկայացուցիչների հետ, և որպես ընդհանուր ազգային գործ, գլխավորապես պետք է ի նկատի ունենան հետևյալ պահանջները. Ա. Երկրագործը, գյուղացին սեփական հող ունենա, և նրան ապահովություն տրվի ազատ մնալ հին բռնավորների, հարստահարիչների ավազակություններից։ Բ. Հայերը իրավունք ունենան զենք կրելու, որպես իրանց դրացի ազգերը, և փոխանակ զինվորական տուրք վճարելու, նույն վճարով կազմեն ազգային միլիցիա զանազան վայրենի ցեղերից՝ քրդերից, չերքեզներից իրանց կյանքը և կայքը պահպանելու համար։ Գ. Հայոց ազգային սահմանադրությունը, նոր իրավունքներով և արտոնություններով կատարելագործվելով, տարածվի բոլոր հայաբնակ գավառներում։ Դ. Ազգը և ազգային առանձնությունները պահպանելու համար այնպիսի կարգադրություններ լինեն, որ սահման դրվի մահմեդականների մոլեռանդությանը և բռնի հավատափոխություններին, առևանգություններին վերջ դրվի։ Այլև վանքերի և ազգային դպրոցների առաջադիմությունը սահմանափակող Թուրքիայի գործ դրած խորամանկ միջոցները հեռացվին, որ ուսումը և կրթությունը անարգել ընթացք ստանա։

Ժամանակ է թոթափել հին նախապաշարմունքների փոշին, ժամանակ է ձևոք առնել դպրոցը, որպես մի նոր կապ մեր և մեղանից օտարացած ազգայինների մեջ, որպես մի նոր ավազան, ուր հայ-կաթոլիկը, հայ-մահմեդականը և հայ-բողոքականը կմկրտվեն նոր հոգով և նոր կյանքով և կդրոշմվեն ազգայնության անունով. դրանով միայն կարող ենք միացնել մեզ հետ մեր եղբայրներին, որ բաժանից ենթենցաւ ավազանը...

ՄԱՐԴԸ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՈՒՎԻ ՄԵՋ*

«Գոյության կռիվը նայտնվում է աճրեալշաբար և այն ատելեան սաստկությամբ, որ ան ձգտում են անել բոլոր օրգանիզմները»:

ԴԱՐՎԻՆ

«Կյանքը, որ մի անգամ գոյություն ստացավ, պետք է լինի պահպանված»:

ԼԱՆԴ

Ա

Գոյության կռվի ընդհանուր սկզբունքները: Ազդյուրները և հետևանքները այս կռվի: Մի քանի մասնավոր օրինակներ:

Բոլոր օրգանական (գործարանավոր) էակների մեջ՝ բույսերի, թռչունների, անասունների և մարդու մեջ, կա մի տևական բնազդում իմքնապահպանության: Պահպանել կյանքը, ընդդիմադրելով և պատերազմելով բազմատեսակ արտաքին ոչնչացնող ազդեցությունների դեմ, որպիսիք են՝ ցուրտը, տոթը, ջուրը և այլն, և մրցել իր նմանների հետ սնունդի, տեղի և այլ կենսական պետքերի համար՝ բոլոր այս բազադրյալ գործողությունները կոչվում են ընդհանուր տերմինով «գոյության կռիվ»:

---

* *Այս հոդվածը մենք կազմեցինք, օգտ քաղելով պ. Իլ. Մեչնիկովի աշխատությունից՝* «Борьба за существование», *որ տպվեցավ ռուսաց ամսագրի* «Вестник Европы» *1878 թ. հուլիսի համարում, եր. 9 և օգոստոսի համարում, եր. 438։ Ձանազան գիտնականներից առնված առանձին ցիտատների տեղը ընդհանկնցինք, անհարմար համարելով մի լրագրական հոդվածի համար։*

Գոյության կռվի մեջ ամեն մի օրգանական էակ աշխատում է պահպանել ոչ իր անհատական անձնավորությունը միայն, այլև իր սերը կամ իր տեսակը: Մենք տեսնում ենք, թե որպես բույսերը, մի կողմից իրանք ապրելով, մյուս կողմից, իր ժամանակին սերմ են ձգում, որ պահպանվի ապագա սերունդը: Մենք տեսնում ենք, թե որպես թռչունները և անասունները, մի կողմից իրանց գոյությունը պահպանելով, մյուս կողմից, հոգս են տանում ձագերի վրա, որ չսպառվի իրանց սերը: Մարդը բնության այս կարգադրություններից մեջ բացառություն չէ կազմում, նա նույնպես ենթարկվում է տիեզերքի համաշխարհական օրենքներին:

Դրանից առաջ է գալիս բոլոր օրգանական մարմինների մեջ երկու տեսակ ձգողություն. մեկը, որպես ասացինք, է բնական պետք իմքնապահպանության, իսկ մյուսը՝ ձգումն բազմանալու:

Առհասարակ, ամեն մի ձգողություն, ինչ տեսակ և լիներ նա, բնականաբար հարուցանում է մրցություն, օրգանական մարմինների մեջ իմքնապահպանության և բազմանալու ձգումներն նույնպես առաջացնում են մրցություն: Այդ մրցությունը կոչվում է գոյության կռիվ: Ուրեմն գոյության կռիվը է բնական ձգումն օրգանիզմների մեջ պահպանելու համար իրանց կյանքը մի կողմից և իրանց սերը մյուս կողմից:

Գոյության կռիվը լինում է գլխավորապես ամեն մի օրգանական մարմինների իրանց տեսակի մեջ, և մինը մյուսին ոչնչացնում է, երբ ընդդիմադիր ուժերը հավասար չեն: Մենք տեսնում ենք, թե որպես բույսերը խեղդում են, ոչնչացնում են իրանց սեռակից բուսականներին և իրանք բռնում են նրանց տեղը: Կամ ո՞վ չէ տեսել՝ անտառների մեջ ընդարձակ լեռներ պատած են միևնույն տեսակ ծառերով: Ո՞վ անկեց այդ միատեսակ ծառերը, որոնք բոլորը միևնույն տոհմին են պատկանում: Նրանք գոյության կռիվի մեջ արտաքսեցին մյուս տեսակներին և իրանք աճելով բռնեցին նրանց տեղը:

Հյուսիսային Ամերիկայում սեզերի տեսակից մի քանի խոտերի տարածվելը, որ տարվեցան այնտեղ եվրոպացոց ձեռքով, առիթ տվեցին մի գիտնականի բավական գեղեցիկ համեմատություն անելու: «Ամերիկայում բերված այդ եվրոպական բույսերը,— ասում է Ագասսին,— տարածվում են և տիրում են հողին, որ առաջ բռնված էր տեղային բույսերով: Վերջինները այժմ անհայտանալու վրա են ճիշտ այնպես, որպես ինդիական ցեղը տեղի է տալիս սպիտակ մարդուն և կորչում է քա-

զաքակրքիության առջև, որ հաստատվում է կարմրահաշիների (ինդիա-յինների) երկրի վրա»։

Մկնների ցեղից մոխրագույն խլուրդը, որ անցյալ դարու մեջ հայտնըվեցավ Եվրոպայում և Ամերիկայում, արտաքսեց խլուրդների մի քանի տեսակներ, որ նրանցից առաջ բնակվում էին այն երկրներում։ Եվ ապա նա հայտնվելով Չինաստանում, նույնը գործեց և այնտեղ։

Այն անասունների մեջ, որոնք ավելի ընկերական կյանքով են ապրում, օրինակ, մրջիմների մեջ, կա մի առանձին դաս, որոնք կոչվում են «պինվորներ», դրանք հատկապես ծառայում են կռվելու համար, բայց կռվում են ուրիշ մրջնանոցի հասարակության հետ։ Մնղուները նույնպես ապահում են այն մեղուին, որ ուրիշ ընկերության է պատկանում և պատահարար ընկել էր իրանց հասարակության մեջ, և կամ խեղդում են իրանց միջից վատ ու անգործունյա անդամին։

Առհասարակ խոսելով, բնության մեջ հայտնվում են ավելի շատ պահանջներ, քան թե միջոցներ նրանց բավականության տալու համար։ Բոլոր օրգանական մարմինները գործում են այդ միջոցներին հասնելու նպատակով։ Այստեղից առաջ է գալիս կռիվը, կամ ընդհանուր տերմինով ասելով, մրցություն։ Մրցության առարկան սահանում է մրցող կողմերից, իհարկե, մեկը։ Այսպես հայտնվում են հաղթողներ և հաղթվածներ։

Գոյության կռիվի մեջ որոշել, թե որոնց կողմը կմնա առհասարակ հաղթությունը, դժվար է. միայն այսքանը նույնպես հայտնի է, որ հաղթող լինում են այն օրգանիզմները, որոնք ավելի ընդունակություններ ունեն, որոնք ավելի զարգացած և կատարելագործված են և որոնք ավելի բարհաջող պայմանների մեջ են դրված։ Զարգացման ներգործությունը, որպես գոյության կռիվի մեջ, նույնպես և ինքնապաշտպանության վերաբերությամբ, երևում է մինչև անգամ բույսերի և անասունների մեջ։ Վայրենի անասունները և վայրենի բույսերը համեմատաբար ավելի միատեսակ են և համեմատաբար սակավ են աճում, քան նույն տեսակներին համապատասխանող ընտանիները, որոնք քաղաքակրթված վիճակի մեջ են ապրում։ Թեև այս վերջինների վրա հովանավորում է մարդու պահպանող ձեռքը, այսուամենայնիվ, կուլտուրան մեծ զգայություն է անում նրանց թե աճելության և թե տեսակների բազմանալու վրա։ Ո՞վ չգիտե, որ ընտանի ոչխարները, ձիերը և բույսերը ավելի բազմաթիվ և բազմատեսակ են, քան թե նրանց տեռակիցները՝ վայրենի դրության մեջ։

Այս հոդվածի նպատակից դուրս է ցույց տալ, թե գոյության կռիվի

մեջ գլխավորապես կայանում է նաև օրգանական մարմինների կերպարանափոխությունը, այսինքն՝ ավելի ստոր, անընդունակ և անբազդրյալ օրգանիզմները, կլանվելով կամ տեղի տալով իրանցից ավելի զորեղ գործարանավորներին, նպաստում են նրանց կատարելագործությանը։ Դրա մեջն է գլխավորապես Դարվինի տեսությունը օրգանական էակների զոյափոխության մասին։

Բ.

Գոյության կռիվի ընդհանուր սկզբունքները մարդկային աշխարհում։ Ուսումն բնական անհավասարության մասին։ Նկարագիր հարևանցի պատմություններ մարդու բնության բնթացքի մասին մարդկանց գոյության կռիվի մեջ։

Խոսելով գոյության կռիվի մասին մարդկային հասարակության մեջ, Դարվինը գտնում է դարձյալ նույն էական պատճառները, ինչ որ տիրում է ամբողջ օրգանական մարմինների մեջ, այսինքն և այստեղ հաստատում է նա կռիվի ամենագլխավոր աղբյուր մարդկային սեռի չափազանց աճելությունը։ Ի նկատի ունենալով, որ քառասնհինգ տարվա շրջանում բնակիչների թիվը կրկնապատկվում է, կարելի է երևակայել, որ երկրագնդի այժմյան բնակիչները 463 տարուց հետո այն աստիճան կբազմանային, որ մարդիկ ստիպված կլինեին խլտա նեղ կերպով կանգնել մինը մյուսի մոտ և չէին կարողանալու ոչ նստել և ոչ շարժվել իրանց տեղից։ Այստեղից հետևում է, որ բնակիչների անարգել աճելությունը պետք է փորր ժամանակվա մեջ ստիպ տար մարդիկներին տեղափոխության կամ գաղթականության, յուրացնելով նրանց մեջ գոյության տասնիկ կռիվ։

Դրզոզ պատճառները, որոնք առաջ են բերում գոյության կռիվը, խիստ բազմերեսակ են ամբողջ օրգանական աշխարհում, բայց ոչ մի տեղ նրանք չեն հասնում այն աստիճան առավելության և բարձրության, որպես մարդկային սեռի մեջ։ Մարդկային բոլոր ձրգտումները առաջնորդում են նրան դեպի կռիվ և դեպի մրցություն նույն ձգտումներին բավականության տալու համար։ Եվ արդեն այն, թե մի մարդ, որ ղրկված է այսպիսի ձգտումներից, համարվում է առհասարակ ցածացած մինչև անասունների աստիճանը, ցույց է տալիս, թե որքան հատուկ են մրցության այդ շարժառիթները իսկ՝ մարդկային կենցաղավարության։ Ձգտումն դեպի պճնասիրություն, շռայլություն և պերճության է մինը ամենահին և շատ անգամ տարածված մարդկային ձգտումներից և ծառայում է որպես մշտական աղբյուր մրցության բազ-

մասնակ երևույթների, և մինչև անգամ ծանոթ է նախնական ազգերին։

Պարզ է, որ մրցության զանազան երևույթները բացատրելու համար ամենևին հարկավոր չէ ընդունել որպես պատճառ միայն բնակիչների աճող խտությունը և դրանից առաջ եկած տեղի և սնունդի պակասությունը։ Մարդը հասարակական, ընկերական էակ է, այդ իսկ պայմանը ինքնըստինքյան արդեն չափազանց բարդում է և բաղադրյալ է անում որպես նրա կյանքը, նույնպես և նրա կենսական պետքերը, որպես այդ վերևում մասնավորապես ցույց տվեցինք այն մրցությունների օրինակներով, որ կատարվում է մրջիմների և մեղրաճանճերի հասարակության մեջ։

Մարդկության մեջ մենք տեսնում ենք ընդհանրապես երկու տեսակ մրցություն, մինը՝ հասարակությունների մեջ, մյուսը՝ առանձին անձինքների մեջ։

Առաջին մասին վերաբերում է պատերազմը, որպես արատահայտություն ֆիզիկական կոպիտ ուժի, այլև ժողովուրդների մրցությունը համաշխարհական հրապարակի վրա, որտեղ նրանք հանդես են դուրս գալիս իրանց արհեստով, արդյունաբերություններով, վաճառականությամբ. դա մի մրցություն է, ըստ երևույթին, ավելի խաղաղասեր բնավորությամբ։ Հասարակությունների մրցության մեջ հայտնվում է նաև հիշյալ ֆիզիոլոգիական (մարմնակազմական) կողմը ազգային և ցեղական կյանքի, այսինքն՝ զանազան մարդկային հասարակությունների ընդունակությունը՝ դիմանալու հայտնի հիվանդություններին ու բռնություններին և նրանց տոկունությունը՝ հարմարվելու զանազան կլիմայական պայմանների և ուրիշ տարերքի փոփոխություններին։ Հասարակական մրցությունը ունի ասպիճանների և բաժանումների մի երկար շարք։ Նա բռնվանդակում է մրցությունը զանազան ցեղերի մեջ, ժողովուրդների մեջ, քաղաքական կուսակցությունների մեջ և առհասարակ ամեն տեսակ խումբերի մեջ, որ միացած են մի որևիցե ընդհանուր գաղափարով։

Միևնույն երևույթները կրկնվում են նաև անհատական կռիվի մեջ, այսինքն՝ մրցություններ, որ կատարվում են առանձին անձնավորությունների մեջ։ Այստեղ նույնպես հանդիպում ենք կոպիտ ուժին, ուր ավելի գործ են տեսնում ղորեղ մկնակները, հետո հայտնվում են մրցություններ խիստ բազմատեսակ ձևերով, որոնց մեջ գործում է խելքը, և վերջապես մարդու մարմնական հատկությունների (соматический) առանձնությունները կյանքի կռիվի մեջ։ Մրցությունը բարձրա-

նում է ավելի միատեսակ կամ միևնույն ասպարեզի մեջ գործող անձինքների մեջ, և դա, իհարկե, ավելի ազդում է նրա վախճանի վրա։

Ուժերը, որ գործ են դրվում մրցության մեջ, եթե ոչ միշտ, բայց քսո մեծի մասին լինում են անհավասար, և այս պատճառով առաջ են բերում ոչ թե հավասարակշռություն, այլ հակակշռություն, այսինքն, մի կողմի մյուսի վրա գերազանցությունը։ Այդ պայմանը, որ հատուկ է առհասարակ ամբողջ օրգանական աշխարհին, ավելի մեծ չափով վերաբերվում է նաև մարդկությանը։ Առհասարակ, որքան բազադրյալ և որքան կատարելագործված է մի օրգանիզմ, այնքան ավելի նա ներկայացնում է անհատական առանձնություններ։ Այդ եզրակացությունը արդեն բավական է ցույց տալու համար, թե որպես տարբերությունները մարդիկների մեջ պետք է լինեն ավելի նշանավոր և ավելի բազմատեսակ, քան թե մյուս կենդանիների մեջ։ Բազմաթիվ քննություններ՝ զանազան ցեղերին պատկանող մարդիկների վերաբերությամբ, ցույց տվին, թե անհատական գերազանցությունը առհասարակ ավելի զորավոր է բարձր ցեղերի մոտ, քան թե ստոր ցեղերի, տղամարդկի մոտ ավելի զորավոր է, քան թե կիների, չափահասների մոտ ավելի զորավոր է, քան թե մանուկների։ Անհատական թերությունները երևում են ոչ միայն մարդու արտաքին կերպարանքի նշանների մեջ, այլև նրա ներքին գործարանների մեջ։ Ուղեղի կազմվածքը և նրա զարգացման աստիճանը, զանազան ցեղերի մոտ գիտության մեջ ապացուցված բան է։ Նշանները, որ ավելի թաքնված են մարդու կազմվածքի խորության մեջ, ենթադրում են ավելի ևս հավանականություն մարդկանց՝ միմյանց վրա ունեցած անհատական առավելությունների կամ նրանց գերազանցության մասին։ Այստեղից առաջ են գալիս մարդկի բնական տարբերությունները, որ մեծ ազդեցություն են անում մրցության գործի մեջ։

Տարբերությունները մարդկային մեծ խումբերի մեջ, այսինքն՝ ժողովուրդների և ցեղերի մեջ, այնքան խոշոր և ակներև են, որ մենք մինչև անգամ ավելորդ ենք համարում այստեղ երկար խոսել այդ մասին։ Իսկ կրթության ազդեցությունը մարդու անհատական առանձնությունները զորացնելու և նրա ընդունակությունները կատարելագործելու մեջ նույնպես աներկբայական է, որպես ընտանի անասունների մեջ։ Այդ ազդեցությունը առաջացնում է նույն իսկ երևույթները, որ մեր առաջին գլխում ցույց ավելցինք վայրենի անասունների համեմատական միակերպության մասին նույն ցեղին համապատասխանող ընտանի անասունների հետ։ Կուլտուրան միևնույն ներգործությունն ունի

որպես ընտանի անասունների և բույսերի վերաբերությամբ, նույնպես և մարդու վերաբերությամբ. զանազանությունը միայն դրանց ընդունակության չափի մեջն է, թե որքան կարող է շահվել նրանից։ Համեմատենք ընտանի ձիերի և ոչխարների տեսակները նույն ցեղերին պատկանող վայրենիների հետ, և դուք կտեսնեք, որ վերջինները մնացել են բոլորովին միակերպության մեջ։ Համեմատենք ընտանի բույսերի և տունկերի տեսակները իրանց ցեղերին համապատասխանող վայրենիների հետ, զարձյալ նույն երևույթը կտեսնեք։ Կրթությունը միևնույն ազդեցությունն է անում և մարդու վրա։ Մարդը իր նախնական վիճակի մեջ, վայրենի դրության մեջ պահպանում է անփոփոխ միակերպություն, իսկ կրթությունը մարդիկների մեջ առաջացնում է բազմաթիվ անհատական տարբերություններ, այսինքն՝ զանազանություններ, որպես անձերի մտավոր կարողության մեջ, նույնպես և նրանց կենսական պահանջների մեջ։ Եվ այս պահանջների համեմատ երևան են գալիս մրցության երևույթները թե՛ անհատների և թե՛ ժողովուրդների մեջ, նույն չափով, ինչ չափով անհրաժեշտ են պահանջները։

Վերոհիշյալ նկատողությունները կարող են մեզ ծառայել պարզելու համար մի շատ նշանավոր հարց «բնական անհավասարության» մասին, որ մեծ դեր է խաղում տնտեսական կյանքի մեջ։ Վաղուց դիտնականների մեջ վիճաբանության առարկա է դարձել մարդու անհատական անհավասարությունը։ Ոմանք դրա պատճառները դնում են միմիայն բնության մեջ, պնդելով, թե բնությունն է անում բոլոր էակներին անհավասար։ Իսկ ոմանք վերաբերում են այդ միայն արտաքին ազդեցություններին, որոնց մեջ մեծ դեր է խաղում կրթությունը։ Թե առաջին և թե վերջին կարծիքը ունեն իրանց նշանակությունը ոչ միայն մարդու վերաբերությամբ, այլ բոլոր օրգանական էակների մասին։ Այնպես որ, բնական անհավասարությունը առանձին անձնավորությունների մեջ կամ տոհմերի ու ցեղերի մեջ է ընդհանուր գաղափար, որ տարածվում է ամբողջ կազմակերպյալ մարդկության վրա։ Այդ անհավասարությունը կարող է, իհարկե, ենթարկվել զանազան ազդեցությունների, և այդ պատճառով տատանվել կամ այս և կամ այն կողմը։ Մենք արդեն տեսանք, թե որպես կրթությունը կարող է զորացնել մարդու բնական հատկությունները և առհասարակ առաջ բերել մեծ տարբերություն միևնույն ժողովրդի անդամների մեջ, բայց զարձյալ նրանց հիմքի մեջ դրած կլինի սկզբնական՝ բնական՝ անհավասարությունը։

Անհավասարության այդ զանազան ուժերը (նախ, սկզբնական-բնա-

կան անհավասարությունը, երկրորդ, կրթության ազդեցությունից առաջ եկած անհավասարությունը) շատ անգամ մրցող կողմերի մեջ խիստ հաղիվ միանում են, և դրա համար պատճառում են համաձայնության անկարելիություն։ Այդ հարցին դիպանք մենք այն նպատակով, որ ցույց տանք, թե բնական անհավասարությունը անհատների և նրանց խումբերի մեջ, այսինքն՝ ցեղերի, ազգերի և ժողովուրդների մեջ, առհասարակ հատուկ է մարդկային սեռին, իսկ կրթության անհավասարությունը հետևանք է զարգացման ուսման միջոցով։ Ուրեմն թե՛ առանձին անհատների, թե՛ ցեղերի և թե՛ ազգերի մեջ, տիրող անհավասարության պատճառով, մրցությունը չէր կարող հավասարակշռության մեջ պահպանվել, անպատճառ կողմերից մեկը պետք է ընկնի, և ընդհակառակ օրենքի համեմատ առաջ կգան հաղթողներ և հաղթվածներ։

Այժմ ինքնըստինքյան բարձրանում է մի հարց. չէ՞ կարելի արդյոք գտնել որևիցե ընդհանուր նշաններ, որոնցով կարելի լիներ որոշել հաղթողներին հաղթվածներից, և այդ հիման վրա առաջուց նախագուշակել մրցության վախճանը։ Բնագետները, որ նայում են այդ հարցի վրա իդեալական կետից, պնդում են, թե հաղթողներ կարող են լինել առավել նրանք, որ ունեն ավելի բարոյական գերազանցություններ, և որոնց գործունեությունը արդարության և ճշմարտի վրա է հիմնված և այլն։ Իսկ վատերը, անբարոյականները պետք է ընկնեն, պետք է հաղթվեն։ «Ավելի բարոյական ժողովուրդները,— ասում է մի դիտնական,— են միևնույն ժամանակ ավելի ղորավորները»։

Հեշտ է հասկանալ, թե որպես հարևանցի մտածության ճանապարհով կարելի է հասնել այսպիսի եզրակացությունների, բայց առարկայի հետ լավ ծանոթանալու համար անհրաժեշտ է և քննական ստուգությունը։ «Շատ գրողներ,— ասաց Մակկիավելլին,— նկարագրեցին պետություններ, հասարակություններ այնպիսի կերպարանքով, որը նրանք երբեք չկարողացան տեսնել իրականության մեջ։ Ի՞նչ բանի ծառայեցին այսպիսի նկարագրությունները։ Թե որպես ապրում են մարդիկ, կամ որպես պետք է ապրին՝ այդ երկու մտքերի մեջ մեծապես հեռավորություն կա»։ Ուրեմն բարոյականության սկզբունքը, թեև շատ ցանկալի, բայց մի սակար գինք է գոյության կռիվի մեջ։ Փորձենք դատել դեպի այն հետևանքները, որ առաջ է բերում կենդանի բնությունը իրական աշխարհի մեջ, և այնտեղից հավաքենք տեղեկություններ, որպեսզի կարողանանք գոնե մոտավորապես վճռել մրցության վերաբերյալ հարցերը մարդիկների գոյության կռիվի մեջ։

Գ.

Մրցության հիմնական սկզբունքները մարդկության մեջ: Բարոյական զորության տակար դերը մրցության գործի մեջ: Դրա պարզաբանությունը տնտեսագետների նայացմով:

Մրցությունը կյանքի մեջ է՝ անխուսափելի հետևանք մարդկային պահանջների, որ առաջ է գալիս կենսական պետքերին բավականություն տալու համար գործ դրված միջոցներից: Եվ որքան բազմատեսակ են պահանջները և որքան մեծ թիվ մարդերի զգում են այդ պահանջները, այնքան մրցությունը պետք է լինի զորավոր և սաստիկ: Կրթությունը, թեև իր զարմանալի դյուտերի օգնությամբ մատակարարում է միշտ նորանոր հնարներ մարդկային պետքերին բավականություն տալու համար, բայց միևնույն ժամանակ, նշանավոր կերպով բարձրացնելով զարգացման աստիճանը, նա ավելի մեծ չափով բազմացնում է նույն իսկ պետքերի թիվը և նրանց սաստիկ պահանջը: Այստեղից առաջ է գալիս շահերի հակառակությունը և նրանց ուժգին ընդհարումը միմյանց հետ, այստեղից առաջ է գալիս կատաղի մրցությունը անհամեմատ ավելի պահանջող դոյության համար: Այս տեսակետից նայելով, հեշտ կլինի հասկանալ, թե մի ընդարձակ և կրթյալ ժողովրդի անդամների մեջ ընդհանուր մրցության երևույթը է՝ մի փաստ, վերին աստիճանի խոշոր և իրական և որոշյալ չափով կապված բնական անհրաժեշտ պահանջների հետ: Խիստ անհաստատ պետք է համարել այն կարծիքը, իբր թե մրցությունը այնքան խորին կերպով չէ զետեղված մարդկության մեջ, այլ ներկայացնում է մի բան, որ կարելի էր հեշտությամբ հեռացնել: Այդ կարելի է տեսնել հետևյալ վկայությունից. «Աշխարհային տնտեսության կատարյալ կազմակերպված սիստեմայի մեջ,— ասում է Էմմինգհաուսը,— մրցության զորությունը պետք է լիներ անհրաժեշտ և մշտական, իսկ նրա ներգործությունները կարող էին լինել ճիշտ սահմանված, որպես բնության օրենքի ներգործություններ»: Որքան սաստիկ արմատացած է մրցության պրինցիպը մարդկության մեջ, այդ կարելի է տեսնել մասամբ վերհիշյալ նկատողություններից և մասամբ հետևյալ բացատրություններից:

Մրցությունը մարդկային հասարակության մեջ, որպես և ամեն մի ուրիշ ընկերական կենդանիների աշխարհում, է մի երևույթ, որքան անհրաժեշտ, այնքան և չափազանց բազադրյալ: Ամեն մի հասարակություն կազմվում է զանազան տեսակ տարերքից, որոնք միմյանց հետ անդադար հակառակության մեջ են լինում. բայց, բացի դրանից, մենք

տեսնում ենք միևնույն հակառակությունը յուրաքանչյուր խումբի միատեսակ անդամների մեջ։ Առևտրական ասպարեզում, օրինակ, կատարվում է, նախ, գնողների մրցությունը ծախողների հետ. մեկը աշխատում է ձեռք բերել պահանջածը որքան կարելի է սուր գնով, իսկ մյուսը ձգտում է ստանալ որքան կարելի է մեծ գին։ Բացի դրանից, գնողները մրցում են գնողների հետ և, վերջապես, վաճառողները վաճառողների հետ։ Բոլոր այս մրցությունների մեջ հաջողությունը վատտակում է դրամավոր կողմը։ Եվ այսպես մրցության բոլոր տեսակներից ամենանշանավորը, որպես միշտ, է՛ հակառակությունը ավելի միատեսակ և համարվեստ անդամների մեջ։ Այդ իսկ երևույթը մենք դլխավորապես պետք է ի նկատի ունենանք։

Մրցությունը ստիպում է լարել բոլոր ուժերը և այս պատճառով նպաստում է մեծ չափով մարդկային գործունեության աճմանը։ Այդ ենթադրությունը պետք է ընդունել որպես մի ակնհայտ ճշմարտություն, որ հաստատվում է մեր ամենօրյա նկատողություններով։ Որի ընդհակառակն, մրցության տկարանալը բերում է իր հետ և հետևդի տկարանալը՝ անշարժություն։ «Բայց,— որպես նկատում է Ռոշերը,— ազատ մրցությունը ասպարեզ է բացում մարդու բոլոր ուժերի առջև, որպես չարերի, նույնպես և բարիների»։ Եվ այս պատճառով նա նպաստում է ոչ միայն դիտության աճմանը, արհեստի կատարելագործությանը և ոչ միայն մարդերի մեջ առաջացնում է ինքնագործունեություն, անձնավստահություն, աշխատասիրություն, հարակցություն և այլն, այլ միևնույն ժամանակ վարժեցնում է մարդուն խորամանկության, խաբեբայության մեջ և զարգացնում է մարդու մտավոր գոյության այն կողմերը, որ ընդունված են առհասարակ անբարոյական։ Եվ ինչպես մարմնամարզական մրցությունը նպաստում է ֆիզիկական ուժերի աճմանը, որպես են մկնականների ամրությունը, անդամների դյուրաթեքությունը և ճարպկությունը շարժումների մեջ, այնպես էլ բանականության մրցությունը նպաստում է գլխավորապես մարդու մտավոր գործունեության բոլոր կողմերի զարգանալուն։

Մրցության կրկնատեսակ ազդեցությունը (դեպի չարը և դեպի բարին) իսկապես նկատվում է այժմյան եվրոպական աշխարհում, որի մեջ, վերոհիշյալ պատճառների առիթով, չափազանց սաստիկ է գոյության կռիվը։ Մի կողմից երևում է ուսման, գիտության, արհեստի և աշխատասիրության մեծ չափով բարձրանալը, մյուս կողմից՝ արհամարհանք դեպի բարոյական պայմանները։ Իրանք՝ մրցության կատար-

յալ ազատությունը պաշտպանողները, խոստովանվում են, որ «ընդարձակ խղճմտանքը (պետք է հասկանալ անգիտությունը) օգնում է վաստակելու հաղթությունը մրցության մեջ, իսկ չափազանց խղճահարությունը հայտնվում է վնասակար առևտրական գործերում» (էմմինգհաուս)։ Հերբերտ Սպենսերը իր բավական մեծ հոդվածում, «Վաճառականական բարոյականություն» վերնագրով, բերում է մի երկար շարք ապացույցներ, որ քննե առևտրական մրցության ազդեցությունը բարոյականության վրա։ Այդ հոդվածում հետաքրքրական է այն, որ հեղինակը ցույց է տալիս, թե որպես մարդիկ, որոնք ինքնըստինքյան զուրկ չեն բարոյական զգացմունքներից, դրվում են այնպիսի անհրաժեշտությունների մեջ, որ ստիպված են լինում հանցանքներ գործել, և անօրինական հանցանքներ, որոնք համարվում են անպայման անբարոյական։ Հերբերտ Սպենսերը հաղորդում է խորամանկությունների մի ամբողջ շարք, որ գործ են դնում վաճառականները իրանց նպատակին հասնելու համար՝ խորամանկություններ, վերին աստիճան նրբության հասցրած, որ խայտառ նսեմացնում են բարեխղճությունը և ազնվությունը։ «Մի ավելի ևս նրբացրած խաբեություն բացատրեց մեզ — գրում է Սպենսերը — մի մարդ, որ այն աստիճան ճարպիկ էր դարձել խորամանկության մեջ, որ նրան երբեմն վաճառականները կանչում էին իրանց օգնելու, երբ գնողները այլևս չէին հավատում նրանց, չնայելով գործակատարների բոլոր աշխատասիրությանը։ Այդ մարդու խաբեությունը կայանում էր նրանում, որ նա ձևացնում էր իրան վերին աստիճանի պարզ և ազնիվ։ Առաջին գնելու ժամանակ նա ցույց էր տալիս իր արդարությունը, դարձնելով գնողի ուշադրությունը իր ծախելու ապրանքի պակասությունների վրա, իսկ նրանից հետո, գրավելով գնողի համարումը, տալիս էր նրան վատ ապրանքը բարձր արժեքով»։ Զանազան տեսակ խաբեություններ, ավելի և ավելի խորամանկ կերպով գործ դրված, այն աստիճան տարածվեցան առևտրական աշխարհում, որ նրանց ակամա պետք է խոնարհվին մարդիկ, երբ մոտենում են վաճառականության գործին։ «Որքան մեծ թվով մարդիկ անձնատուր են լինում մոլորության,— շարունակում է Սպենսերը,— որքան ընդարձակ տարածվում է խաբեությունը, այնքան գժվար կլինի դիմանալ մնացածներին։ Մրցության ճնշումը կլինի ավելի զգալի և զգալի։ Եվ բարեխիղճ մարդիկ ստիպված կլինեն վարել պատերազմ անհավասար զենքերով. նրանք կզրկվեն վաստակի մեծ մասից, որ կմնա իրանց հակառակորդների ձեռքում, և ակամա կստիպվեն հետևել մյուսների խաբեությանը»։ Բավական հետաքրքիր է այս կտորը միևնույն հոդվածից. «Մեզ հայտնի է

պատմություն. մի մահուդ ծախողի, որ կամեցավ, որպես և լինի, տալ իր խղճմտանքին ձայնի իրավունք և իր խանութի մեջ հրաժարվեցավ բոլոր խաբեբայություններից, որ ընդունված էին նրա գործի մեջ... Ի՞նչ եղավ հետևանքը։ Այն, որ նրա հետ մրցողները կարողացան վաճառել ատության շնորհիվ, մնաց նրա մոտ անվաճառ, և գործը վերջացավ այնքան անշահավետ կերպով, որ նա երկու անգամ սնանկացավ։ Այն մարդը, որ հաղորդեց մեզ այդ գործի մանրամասնությունները, հավատացնում էր, թե այդ վաճառականը իր սնանկությամբ ավելի վնաս տվեց իր մերձավորներին, քան թե կարող էր տալ վաճառականի սովորական խաբեություններով։ Ահա մինչև որ աստիճան բարդվում է հարցը, և որպես դժվար է բացատրել վաճառականի հանցանքը այսպիսի հանգամանքներում։ Նա համարյա միշտ ստիպված կլինի կռվել երկու ծայրահեղությունների հետ։ Եթե նա վարում է իր գործը խիստ արդարությամբ, վաճառում է միայն իստակ ապրանք, տալիս է միայն կատարյալ չափով, այն ժամանակ նրա հետ մրցողները, խաբելով հասարակությունը, կարող կլինեն վաճառել ավելի էժան դներով, քան թե նա, այն ժամանակ նրա խանութը կդատարկվի, և նրա հաշվեհամարները շուտով ցույց կտան, որ նա այլևս կարող չէ վճարել իր պարտքերը և պահել իր ընտանիքը։ Ի՞նչ անել նա... Արդյոք պետք է հետևի՞ իր հետ մրցողներին և գործ դնել խաբեություններ... որը երևում է ավելի գործնական ոչ միայն նրան, այլև ուրիշ մարդերի։ Ինչո՞ւ նա պետք է ազքատացնե և՛ իրան, և՛ իր ընտանիքը, աշխատելով վարել գործը ուրիշ կերպով, քան թե վարում են իր ընկերները։ Եվ նա վճռում է անել այնպես, որպես անում են ուրիշները»... Ավելորդ է խոսել, որ այժմյան սովորություններին հետևող շինլայի անտեսագետները կատարելապես բաժանում են հիշյալ հայացքները և մինչև անգամ ներում են զանազան անխուսափելի հանգամանքների մրցության բարոյականության վրա ունեցած վատ ազդեցությունը։ «Ազատ մրցության մեջ,— ասում է մեկը երևելի ներկայացուցիչներից այդ շինլայի՝ Ադոլֆ Վագների,— հաղթում են ոչ թե ավելի ընդունակները, բայց շատ անգամ և ավելի անխիղճ տարերքը, որոնք անսահման կերպով հարստահարում են իրանց համար շահավոր եղող տնտեսական պայմանները»։ «Բայց և լավ տարերքն շատ անգամ մոլորվում են մյուսների հաջողություններից և շատ անգամ անմիջապես ստիպվում են վարվել մրցության մեջ նույնքան անխիղճ կերպով։ Այսպիսով, համարյա անխուսափելի կերպով վատանում է ընդհանուր չափը արհեստագործության և առևտրական բարոյականության»։

Ավելի կարևոր են մեզ համար հետևյալ նկատողությունները Սպենսերի. «Մարդիկ բոլորովին այլևայլ պարապմունքներով և դրությամբ, մարդիկ բնավորության կողմից չափազանց բարեխիղճ, մարդիկ, որ զզվում են ցածուբյունից, որին նրանք ստիպված են ենթարկվել, բոլորը միաձայն հայտնեցին մեզ իրանց ցավալի համոզմունքը, թե արհեստագործության ասպարեզում անկարելի է պահպանել խիստ արդարություն։ Ընդհանուր կարծիքը բոլորի և նրանցից ամեն մեկի այդ էր, թե շատ արդար մարդը պետք է այստեղ ոչնչանա»։ Ուրիշ խոսքեր, որ ասվել են ավելի քան երեք հարյուր տարի առաջ, հայտնապես համապատասխանում են և մեր ժամանակին։ «Մարդը,— ասում է Մակկիավելլին,— որ կամենում է մեր օրերում լինել բոլոր հարաբերությունների մեջ մաքուր և ազնիվ, պետք է կորչի ահագին անազնիվ մեծամասնության մեջ։ Դրանից հետևում է. ամեն մարդ, որ ցանկանում է պահպանվել, կարող է և չլինել բարի, բայց անպատճառ պետք է սովորի ձևանալ այնպես, նայելով հանգամանքներին»։

Ինչո՞ւ այսպես հաճախ և երբեմն բոլորովին անխուսափելի կերպով մարդիկ իրանց նմանների հետ մրցելու ժամանակ դիմում են այնպիսի կեղտոտ միջոցների, որ հենց իրանք համարում են ոչ բոլորովին բարոյական։ Հերբերտ Սպենսերի հոդվածի մեջ գտնում ենք մի այսպիսի դատողություն. «Դիտակցությունը,— ասում է նա,— որ բավական զորավոր է կանխապես արգելք դնելու հանցանքներին, որ անմիջապես և ուղղակի կերպով վնաս են բերում մի հայտնի անձի, կարող է լինել անզոր, որ արգելի այն հանցանքները, որ բերում են հեռավոր կամ անուղղակի վնաս մի անհայտ մարդու»։ Այդ փոքր-ինչ մութ ասացվածը կարելի է պարզել այսպես. թե մարդիկ շատ փոքր են մտածում, կամ բոլորովին չեն մտածում այն վնասների վրա, որ իրանց գործերի պատճառով կողմնակի կերպով հասնում էր ուրիշներին։ Ինքը՝ Սպենսերը, ասում է, թե «Բարոյական սահմանները փոփոխվում են համաձայն հասկացողության, թե որպես մարդը ըմբռնում է մի հայտնի չարության հետևանքները։ Մի մարդ, որ ամենևին չէր համաձայնվի դողանալ որևիցե բան ուրիշի դրպանից, առանց խղճահարվելու խարդախում է զանազան կեղծ ապրանքներ. մի մարդ, որին երազում անգամ չէր պատահել բանացնել կեղծ դրամներ, համարձակ սկսում է մասնակցել ակցիոներական բանկերի խարդախությունների մեջ»։

Որքան բարդված է լինում մի հասարակություն, որքան ավելի շփոթված են լինում մարդկային հարաբերությունները, այնքան և հետևանքները զանազան հանցանքների կզատևան անորոշ և կկորցնեն

իրանց հետքերը մասնավորների շահերի մեջ։ Բայց մարդկային մեծ խումբերի մեջ դարձյալ նույնն է լինում։ Շատ անգամ մի ազգի ընդհանրումը կատարվում է բոլոր մարդկության օգտի անունով, և ընդհակառակն, շատ անգամ էս մարդկության շահերը զոհվում են ավելի մանր մարդկային խումբերի շահերին։ Այստեղից առաջ է գալիս, մի կողմից, բոլոր հանցանքների հետևանքների մթությունը, մյուս կողմից, բացվում է խարդախության մի ընդարձակ ասպարեզ՝ խաղալ խղճի հետ, որպես ցանկանում է մարդ, և արդարացնել իր վարքը։ «Չկա մի ավելի հասարակ բան,— ասում է Լևկիին,— քան թե այն, որ մարդիկ, որ ներկայացնում են ազնվության տիպը իրանց մասնավոր կյանքում, ներում են կամ մինչև անգամ արդարացնում են խոտոր վրդովիչ երևույթները քաղաքական անազնվության և բռնության»։

Տեսնելով ազատ մրցության օգտավետ, բայց միևնույն ժամանակ վնասակար հետևանքները գոյության կռիվի մեջ, և թե վերջինը չէ գերակշռում առաջինին, շատ դիտնականներ, ընդհանուր անտեսական կետից նայելով, զանազան միմյանց հակառակ կարծիքների հասան։ Ազատ մրցությունը դառնում էր մի ղենք՝ բավականություն տալու ավելի անբարեխիղճ նպատակներին՝ դրամատերը հարստահարում էր ազքատին, խելացին՝ անխելքին, զորավորը՝ տկարին, և նա ավելի նպաստում էր արտոնատերներին, կալվածատերներին և վերջապես դառնում էր զանազան հարստահարիչների ձեռքում մի կեղտոտ գործիք։ Ահա այստեղից ծագեցան կարծիքների հակառակությունները՝ նրան մի որոշ սահման դնելու համար։ Ոմանք վնասակար համարեցին մրցությունը, ոմանք կամեցան հիմնել նրան ավելի բարոյական սկզբունքների վրա, իսկ ոմանք մտածեցին փոխել բոլոր հասարակական կեղծ ու սխալ կազմակերպությունը, որ նպաստում է մրցության դեպի չարը գործադրվելուն, և հավասարեցնելով հասարակական շինվածքի մակերևույթը, ապա թույլ տալ ազատ մրցությունը, որպեսզի ամեն մի անհատ հավասար ղենքով պատերազմի գոյության կռիվի մեջ։

Չնայելով դիտնականների կարծիքների հակառակությանը, բայց, թեև զանազան հայացքով, համարյա մեծ մասը համաձայնվում են երկու կետերի մեջ. այսինքն, ազատ մրցության մեջ պետք է բավականության առանձին ընդհանուր մարդկային շահերը առանձնապես և մասնավոր անհատական շահերը, առանձնապես, առանց միմյանց արգելելու կամ վնասելու։

Բայց որպե՞ս համաձայնացնել այդ։

Ընդհանուր մարդկային շահերը կամ, այլ խոսքով, «ընդհանուր մարդկային բարիքն» դեռ մի հարց է, ինքնըստինքյան խիստ անորոշ և մթին, որն իր վերին աստիճան բաղադրյալ լինելու պատճառով և բազմատեսակ վիճաբանությունների ենթակա է։ Որքան դժվար է (եթե չասենք անկարելի է) կազմել փոքրիշատե պարզ հասկացողություն մի ամբողջ ժողովրդի կամ մի ընդարձակ բազմացեղ պետության մասին, այնքան ավելի ևս չափազանց դժվարին է որոշել ամբողջ մարդկության ընդհանուր բարին և այդ հիման վրա կարգի դնել մարդկային վարմունքները։ Իսկ ընդհակառակն, անհամեմատ դյուրին է կանոնավորել շահերը մարդկային փոքրիկ խումբերի, որպիսիք են ազգերը, ցեղերը, ընտանիքը և վերջապես առանձին անհատները։

Առաջվա շկոլայի անտեսագետները ունեին ի նկատի մրցության պայմանների այդ անհաշտությունը ընտանիքի բարօրության և ընդարձակ մարդկային խումբերի բարօրության հետ։ Այստեղից բխում նրանց հիմնական տեսությունը անձնական շահի մասին, որի հետ կապված են և ընտանիքի շահերը։ Ահա, օրինակ, որպես է արտահայտում այդ միտքը Մալտուսը. «Մեր այժմյան դրությունը պահանջում է, որ յուրաքանչյուրը ունենա ի նկատի գլխավորապես իր անձնական պահանջները»։ Բայց հարաբերությունները դեպի զավակները չեն փոխում մի անհատի ձգտումները դեպի իր անձնական շահերը, որովհետև որդիքը ունեն անհերքելի իրավունք ծնողների հոգատարության վրա։ Եվ հայտնի բան է, այն կապը, որ դրդում է ծնողներին կատարելու իրանց սուրբ պարտականությունը դեպի որդիքը, համարյա համահավասար է նրանց սերին դեպի իրանց անձը։ Այստեղից պարզ է, որ անհատական շահերի հետ կից են և ընտանիքի շահերը, որն է գլխավոր մեքենան տնտեսական գործունեության։ Եվ այս պատճառով ընտանիքի շահերը պետք է լինեն անբռնաբարելի։ «Բոլոր ժամանակներում,— ասում է Հոլցենդորֆը,— օրենքի բռնաբար ներս խուժելը ընտանեկան կյանքում՝ ներկայացել է որպես մեկը ամենադժվար խնդիրներից»։

Մյուս ներկայացուցիչները այս շկոլայի, որ իրանց կոչում է մանչեստերյան, հետևում են միևնույն պրինցիպին։ «Առհասարակ ժողովրդի տնտեսական բարօրությունը դյուրացնելու համար,— ասում է Պրինս Սմիթը,— տեսնում ենք միայն մի կարելի ճանապարհ, այն է՝ ազատություն տալ յուրաքանչյուր առանձին անհատին՝ իր կարողության չափով նպաստել իր բարօրությանը։ Յուրաքանչյուրը հասկանում է իր բարօրությունը դյուրացնելը ավելի լավ, քան թե բոլոր ուրիշները»։

Հենց դրանումն է բովանդակվում հին շկոլայի սկզբունքը։ Նա հիմ-

նրվում է այն դրության վրա, թե «ընդհանուր բարին» ինքնըստինքյան մի շատ մթին բան է և դեռ ոչ բոլորովին բացատրված, մինչդեռ «մասնավոր բարին», ընդհակառակն, հասկանալի է և պարզ։

Տնտեսագիտների նոր գերմանական շկոլան, որ կոչում է իրան «բարոյագիտական» (этический), սկսեց հակառակել վերոհիշյալ վարդապետության դեմ, պնդելով, թե «տնտեսական գործունեությունը պետք է ենթարկվի բարոյականին»։ Դրանք գտնում են, թե թույլ տալով յուրաքանչյուր անհատին իր անձնական շահերի համար գոյության կռիվի մեջ ազատ մրցել, այսպիսով կբացվեր մի լայն ասպարեզ, որի մեջ յուրաքանչյուր անհատ իր շահերը պաշտպանելու համար ստիպված կլիներ ըստ մեծի մասին դիմել անբարոյական միջոցների։ Եվ այս պատճառով բարոյագիտական շկոլայի հիմնական կանոններից մեկն կայանում է նրանում, որ սահմանափակ ազատ մրցությունը։ Բայց որպեսզի կարելի լիներ կռվել հավասար զենքով և հերքել հին շկոլայի սկզբունքները, նոր շկոլային պետք էր լավ միջամուխ լինել որպես տնտեսական, նույնպես և գործնական բարոյագիտության (этика) ուղիղ և մանրամասն ուսումնասիրության մեջ և ստեղծել որևիցե ընդհանուր առաջնորդ պրինցիպ, որը նրանց մոտ պակաս է։ Ինքը՝ Լանգեն, որին կարելի է համարել տնտեսագետների բարոյագիտական շկոլայի կապապետներից մեկը, կարծես, օրորվում է իր համոզմունքի մեջ, հայտնելով հետևյալ կասկածները. «Որովհետև մենք արդեն բավական հասկացել ենք եսականության ներգործությունները, բայց բարոյականության հետևանքները, ընդհակառակն, չգիտենք, ուրեմն մենք չենք ստանա բարվոքված ժողովրդական տնտեսություն, քանի որ չունենք բարոյականության տեսության գիտական սկզբունքները, բայց և այդ սկզբունքները մենք ունենալ չենք կարող, առանց մեծ զարգացման տնտեսական գիտության մեջ»։

Բայց ի՞նչ է, որ թողնում է բարոյագետներին տատանման մեջ, թույլ չտալով նրանց ստեղծել մի որոշ գաղափար իրանց վարդապետության մասին։ Հասարակական մակերևույթի անհավասարությունը, որը հարթելու համար նրանք խիստ երկյուղով են դիպչում։

Բարոյագիտականների գլխավոր ներկայացուցիչներից մեկը՝ Շմոլլերը, բացարձակ խոստովանվում է մրցության օգտավետ ներգործությունը, գոնե մի քանի դեպքերում և, միևնույն ժամանակ, հայտնի սահմանների մեջ։ Նա չէ մերժում այն մրցողների հաջողությունը, որոնք հաղթող են հանդիսանում իրանց կրթության և զարգացման շնորհիվ, բայց մերժում է դրամատերների հարստահարությունը և անհատների

առողնական կամ ժառանգական *գերազանցությունները, որոնցով նրանք* ճնշում են այս աստցական առանձնաշնորհություններից զուրկ եղողներին։ «Ես միշտ պատրաստ եմ պաշտպանել կրթության նախապատվությունը,— ասում է նա,— բայց ոչ խակի և ծնունդի արտոնությունները»։

Մի հայացք, որ մասամբ համաձայն է Շմոլլերի հետ, դեռ նրանից առաջ հայտնել էր երևելի հասարակական գործիչ Բյուխները, միայն ավելի որոշ կերպով։ Նա համարում է աներևակայելի՝ ոչնչացնել մըրցությունը գոյության կռիվի մեջ և այս պատճառով հարց է բաց թողնում միջոցների հավասարության մասին, այսինքն՝ որ մրցողները ունենային համեմատ զենքեր կռվելու համար։ «Բոզ գոնեն մի ֆորմուլա (մակացություն),— ասում է նա,— որը ոչնչացներ կամ գոնե մի հայտնի աստիճան փոքրացներ ընկերական մրցության անհավասարությունը գոյության կռիվի մեջ. այն ժամանակ թե՛ հասարակական և թե՛ մշակների հարցերը կլինեին նեթե ոչ կատարելապես, գոնե մասնավորապես վճռված»։ «Այսպիսի մի (ֆորմուլա) գոնված է,— շարունակում է նա,— մենք պատճառ չունենք նրան թաքցնելու, որովհետև նա բովանդակում էր իր մեջ հարմարավոր միջոց, որը չի խանգարում ոչ որի անձնական շահերը և ուղղակի չէ հակառակում այժմյան եղած պայմաններին, ի վերա այսր ամենայնի, մի միջոց, որ իր հետևհետև զորանալովն կլինի միշտ ավելի էական, որը բավական թեթևացնում է չքավորներին, ուղղակի չվնասելով ունևորներին, և այս պատճառով այն միջոցը, որը կարևի եղածին չափ հարթեցնում է հասարակական անհավասարությունները, և ոչ թե բթացնում է, այլ, ընդհակառակն, զորացնում է և գրգիռ է տալիս դեպի մրցություն և որ տանում է դեպի այն ամենը, որ բարձր է։ Այդ միջոցը կայանում է մի ռեֆորմի մեջ, կամ ավելի ևս ավելի, բայց հետզհետե անող վերաձևոզության մեջ ժառանգական իրավունքի՝ ճօգուտ ընդհանուրի»։ Այդ դատողության իմաստը բավական պարզ է. Բյուխները մերժում է մրցության մեջ արտոնյալ անհավասարությունը։ Այսուամենայնիվ, մարդկությունը դրանով չէր կարող հավասարվել, որպես պետք էր հաշտեցնել բնական կատարելությունները, որ անհատների մեջ տարբեր են, և վերջապես, այն անհավասարությունները, որ առաջ է բերում կրթությունը, զարգացումը։

Այսպես է նայում այդ հարցի վրա Ադոլֆ Վագները. «Ճշմարիտ է,— ասում է նա,— որ մարդիկ բնությունից անհավասար են, և թե անձնական կամ անհատական անհավասարությունը որպես միևնույն տոհմի կամ տեսակի ներկայացուցիչների մեջ, այնպես էլ մարդու մեջ է

բնության օրենք։ Այստեղից պետք չէ դուրս բերել մարդու վերաբերությամբ մի անհրաժեշտություն, ցանկանալով հաղթություն այն անհատներին միայն, որոնք ավելի ձիրք ունեն բնությունից։ Եվ այդ պնդում եմ այն հիման վրա, որ մարդերի մեջ գոնե մասամբ կարելի է հավասարել այդ բնական անհավասարությունը ուսման և կրթության միջոցով, և այն պահպանության միջոցով, որը հասարակությունը կարող է և պետք է որ ցույց տա իր ակար անդամներին։ Անհատների բնական անհավասարությունը ներկայացնում է և այն պահանջմունքը, որ հասարակության բոլոր տարերքը անխախտ կերպով չենթարկվեին մրցության, և որ տկարները զոհ չդառնային նրան»։

Բոլորովին ուրիշ կերպ մտածում է Մաուրուսը. «Հակառակ սոցիալական կարծիքների, որ ձգտում են ոչնչացնել ամեն տեսակ մրցություն և առհասարակ մերժել զրամատներների գործողությունները,— ասում է նա,— մենք բուրժուական անտեսության հետ համարում ենք մրցությունը մի անտեսական անհրաժեշտություն և մտածում ենք, թե սխալ կլիներ զրկել հասարակությունը այդ տնտեսական զորության օգուտներից և փոխել նրան անտեսական գործողության մի ուրիշ կազմակերպությամբ, որովհետև մրցությունը ուղղակի արդյունք է աշխատանքի և մարդկային ինքնասիրության»։ Մրցության պայմանների անհավասարությունը Մաուրուսը դնում է, ուրիշ շատ անտեսագետների նման, բնական անհավասարության մեջ, և որի պատճառով ոչնչացնել նյութական անհավասարությունը մարդկային հասարակության մեջ անհնար էր համարում։ «Մարդկանց մեջ նյութական հավասարություն հաստատելու ձգտումը,— ասում է նա,— միշտ կմնա իղուր, որովհետև նա կխորտակվի մարդկային բնության անհատական տարբերությունների պատճառով։ Այդ ժայռի վրա խորտակվեցան և խորտակվում են բոլոր աշխատությունները, մինչև անգամ խիստ տաղանդավոր սիստեմների, որոնք հիմնված էին նյութական հավասարության վրա և սնիկանության ընդհանուր (հասարակաց) լինելու վրա»։

Վերոհիշյալ դատողությունները կարելի է երեք մասի բաժանել։ Առաջին մասին վերաբերում են այն գիտնականների կարծիքները, որոնք ընդունում են, թե դույության կռիվը մի երևույթ է, որ չափազանց խորին կերպով դրված է մարդու բնության մեջ, և այս պատճառով անհնար է հեռացնել նրան։ Եվ ի նկատի ունենալով այդ, նրանք ձգտում են հարթել բոլոր խոչընդոտները և հարկադրել, որ մրցությունը մտնի իր բնական ընթացքի մեջ։ Հայեցողական այդ կետից նրանք պահա-

րակում են այն մրցութիւնը, որի մէջ հաղթութեան հաջողութիւնը կախ-ված է լինում որևիցէ արտոնական կամ ժառանգական առանձնաշնոր-հութիւնից և կամ դրամատերերի հարստահարութիւնից. օրինակ, մի հարուստ, բնև հիմար, հաղթում է մի աղքատին, որ նրանից հաղարա-պատիկ ավելի խելօք և ձիրքով էր. և կամ մի տաղանդավոր մշակ ստիպ-ված է լինում օրական հացի համար աշխատել մի կալվածատիրոջ հո-ղերի վրա և իր վիճակը բոլորովին դնել նրա կամայականութեան ներքո: Դրանք համարում են մրցութիւնը իրավացի այն մարդկերի մէջ, որոնք հավասար են իրանց հասարակական դրութեամբ և իրանց նիւթական կարողութեամբ, թեև նրանք տարբեր կլինեին իրանց բնական ընդունա-կութիւնների աստիճանով:

Հիշեալ դատողութեան հետ համաձայնվում են մանչեստերյան շկո-լայի մի քանի ներկայացուցիչները, որոնք ընդունում են միայն բնա-կան անհավասարութիւնը և ցանկանում են նրան համարձակ ըն-թացք: Մինը նրա ջերմ պաշտպաններից և միևնույն ժամանակ սաստիկ հակառակ բարոյագիտական (этический) շկոլային, որին նա նախա-դուշակում է մոտավոր կործանում՝ Դամիդը, հայտնում է, «որ հասա-րակական անտեսութեան օրենքները չեն արդարացնում մի ուրիշ ան-հավասարութիւն», իսկ այն անհավասարութիւնները, որ առաջ են գա-լիս մարդու ընդունակութիւններից, նա համարում է բնական: «Կասե՞ք դուք արդյոք,— հարցնում է նա,— թե կա հավասանք Ռաֆայելի և մի հասարակ պատկերահանի մէջ, որովհետև առաջինը ստեղծում է մեծ գործեր, իսկ երկրորդը՝ միայն միջակ պատկերներ, և որովհետև գրող-ները գերազանցում են առաջինը երկրորդից: Եթե կամենում եք, այդ գործյալ հավասանք պետք է համարել, մրցութիւնը արդյունաբերութեան մէջ, ուրիմն և մրցութիւնը հմուտ և անհմուտ արհեստավորի մէջ»:

Երկրորդ բաժանմանը վերաբերվում են այն դիտնականների կար-ծիքները, որոնք ազատ մրցութեան այժմյան ձևը վնասակար են համա-րում: Որովհետև նրա մէջ շարժառիթները դեպի մրցութիւնը ավելի և ավելի զորանալով, մեծ չափով ազատութիւն են գտնում և զարգաց-նում են մարդու անձնական բոլոր ուժերը, որպես «բարիները», նույն-պես և «չարերը»: Հասկանալի է, որ դրանք ընդդեմ են բնական անհա-վասարութեանը, որը առհասարակ ստացվում է, երբ անարգել կերպով ընթացք են ստանում կենդանի բնութեան կենդանի ուժերը: Եվ որով-հետև ազատ մրցութեան մէջ (որ ընթանում է իր բնական կարգով) հաղ-թողները լինում են այն անձինքը, որոնք ավելի ընդունակ են կռվի մէջ, իսկ նրանց ախոյանները, որ զուրկ են այդ ընդունակութիւններից,

հաղթվում են։ Հայտնի բան է, որ այդպիսի մրցության հետևանքն այն կլինի, որ նրա մեջ մասնակցող մարդկային բոլոր զորությունները պետք է աստիճանաբար միշտ ավելի և ավելի զարգանան, նրանց մեջ և չա-
րերը։

Այդ առիթ տվեց բարոյագետներին հիմնել իրանց վարդապետու-
թյունը, որոնց մենք մեր երրորդ բաժանմանն ենք վերաբերում։ Դրանք
թեև խոստովանում են, թե մրցությունը գոյության կռիվի մեջ անհրաժեշտ
է, բայց չեն ընդունում ազատ մրցություն մարդերի մեջ, որոնք տար-
բեր ձիրքերով պարգևված են բնությունից։ Դրանք հակառակ են բնա-
կան անհավասարությանը և պաշտպանում են կրթությունը որպես մի-
ջոց բնական տարբերությունները հարթելու համար։ Դրանք պահան-
ջում են, որ կրթությունը հնար տար բնությունից տկարին՝ մրցելու իր
ավելի զորեղ ախոյանի հետ և այս պատճառով առաջարկում են զար-
գացնել բարոյականությունը, որպես մարդկային զգացմունքները ազ-
նվացնող միջոց, և զարգացնել խելքը ուսման միջոցով։ Բացի դրանից,
առաջարկում են ընդարձակել տկարներին պահպանելու նպատակով
կազմված բարեգործական հիմնարկությունները։

Թե որքան աննշան գեր է կատարում բարոյականությունը գոյու-
թյան կռիվի մեջ, այդ մենք տեսանք Սպենսերի նկատողություններից
վաճառականների բարոյականության վերաբերությամբ։ Բայց որպեսզի
բարեգործությունը լիներ մեր առաքինության մեծ և անընդհատ շարժա-
ռիթը, և որպեսզի այդ գաղափարը լիներ մեր վարքի անփոփոխ հիմքը,
հարկավոր էր, որ մենք կատարելապես ծանոթ լիներինք նրա պատճառ-
ների և նրանից առաջ եկած հետևանքների հետ։ Բարեգործությունը
այն ժամանակ միայն կարող է նպատակահարմար լինել, երբ մարդ
նույն բարեգործության մեջ գտնում է և իր անձնական բարիքն ևս օգ-
նելով իմ դրացուն. օգնում եմ և ինձ, որովհետև նրա չքավորությունից ես
կարող եմ վնասվել։ Այդ դրությունը արդարանում է բազմաթիվ օրի-
նակներով, որ շատ գործեր, որոնց հիմքի մեջ դրած էր բարության խիստ
ջերմ ցանկություն, վնասակար հետևանքների են հասնում, երբ շարժա-
ռիթը լինում է լոկ բարիք գործելու։ Հայտնի է, թե որպես շատ անգամ
բարեգործություններ, միտումնակի թեթևացնելու մարդկային տանջանքները,
տանում է դեպի մոլության և դեպի չարության արմատանալը։ Այդ կի-
սից, շատ հասկանալի է, թե որքան խախուտ հիմքերի վրա է կայանում
բարոյագետների (этик) վարդապետությունը։ Այդ հանգամանքը ի նկա-
տի ունենալով, Բոքլը հասավ, ըստ երևույթին, մի այնպիսի տարա-
պայման եզրակացության, թե «տկարացնելով առաքինությունը, դուք

կարգելնք չարությունը» և հորինից իր երևելի վարդապետությունը բարոյականության նշանակություն չունենալու մասին պատմական զարգացման գործի մեջ։ Իսկ ինչ որ վերաբերում է բարեգործական հիմնարկություններին ակարների խնամատարության մասին, մենք կբերենք մի երևելի մարդու կարծիքը։

«Վայրենիների մեջ,— ասում է Դարվին,— մարմնով և հոգով ակարներին ոչնչացնում են, և կենդանի մնացածները լինում են առհասարակ պարգևած ամուր առողջությամբ։ Մենք, քաղաքակրթված ազգերս, գործ ենք դնում մեր բոլոր կարողությունը, որ արգելենք ոչնչացնելու այդ գործողությունը։ Մենք հիմնում ենք օթևաններ ակարախելքների, հաշմանդամների և հիվանդների համար. մենք հրատարակում ենք օրենքներ՝ հօգուտ աղքատների, և մեր բժիշկները գործ են դնում իրանց բոլոր հմտությունը, որ երկարացնեն յուրաքանչյուրի կյանքը մինչև վերջին կարելությունը։ Անհիմն չէ այդ կարծիքը, որ ծաղկի պատվաստումը պահպանից հազարավոր մարդիկ, որոնք, իրանց ակար կազմվածքի պատճառով, առաջուց պիտի մեռնեին ծաղկից։ Այսպիսով և քաղաքակրթված ժողովրդի ակար անդամները տարածում են իրանց սևը։ Ոչ մի մարդ, որ ծանոթ է ընտանի անասուններ բազմացնելու օրենքներին, չէ կարող ունենալ ամենափոքր տարակուսանք այն բանի մեջ, որ այդ հանգամանքը չափազանց վնասակար է մարդկային ցեղին։ Մեզ զարմացնում է, թե վատ հոգատարությունը կամ անկանոն պահպանությունը մինչև որ աստիճան սաստիկ կերպով պատճառում է ընտանի անասունների սեռակի դեպի վատը փոխվելը։ Եվ բացի այն դեպքից, որ վերաբերում է մարդուն միայն, հազիվ թե գոնվեր մի այնքան սխալմամբ անասնասեր, որ թույլ տար վատ անասունների բազմանալուն»։ «Հետևելով առողջ մտածության ձայնին,— ավելացնում է նա,— մենք չէինք կարող թաքցնել մեր համակրությունը, առանց ոչընչացնելու մեր բնավորության ամենաազնիվ հատկությունները... և մենք պետք է անտրտունջ համբերենք ակարների աճելու և բազմանալու անկասկած... վնասակար հետևանքներին»։

Բոլորը, ինչ որ խոսվեցավ մինչև հիմա, ծառայում է որպես ապացույց երևան հանելու այն անհամաձայնությունը, որ տիրում է գոյության կռիվի մեջ, անհամաձայնություն, հաղթություն վաստակելու փափագելու մեջ՝ մեկ կողմից, և բարոյական ձգտումներին ընդարձակ բավականություն տալու մեջ՝ մյուս կողմից։ Առանձին անհատի և նրա հետ սերտ կերպով կապված մի փոքրիկ խումբի, այսինքն՝ մի ազգի շահերի շոշափումը և ջոկությունը առաջացնում են գլխավոր պատճառ-

նները այն անհամաձայնության, որ գործնական կյանքի մեջ այդ շահերը հեռացնում են բոլոր ուրիշներից, այսինքն՝ մեծ խումբերի կամ ընդհանուր մարդկության շահերը։ Եվ այս պատճառով, ընդհանուր մարդկային բարին (այսինքն՝ բարձր բարոյական ձգտումների նպատակը) հանդիսանում է որպես մի խնդիր, չափազանց բաղադրյալ և անիրագործելի։ Ահա ինչու ամեն մի թեորիա, որ հիմնված է լինում մի անձի, ընտանիքի և մի ազգի նեղ շահերի վրա, ունի ավելի շատ հավանականություն հաջողության գտնելու գործնական կյանքում, քան թե մի թեորիա, որ ստեղծված է բարոյագիտական սկզբունքների վրա և ծառայում է ընդհանուր մարդկային համաշխարհական շահերին։

Վ.

Մրցության բազմատեսակությունը գոյության կռիվի մեջ մարդկային առանձին խումբերում։ Մարմնակազմական (соматический) պատճառների ազդեցությունը։ Մտավոր և բարոյական զարության դերը։ Դժվարությունը վճռելու մի հանի խոշոր նարցեր հասարակական բարոյականության։

Մարդերի մեջ, որպես ուրիշ ընկերական անասունների մեջ, հասարակական կյանքը առաջ է բերում նշանավոր ազդեցություն գոյության կռիվի հայտնվելու և նրա գործողությունների վրա։ Հասարակական կյանքի մի քանի պայմաններում մրցությունը առանձին անհատների մեջ կարող է բավական թուլանալ, կամ բոլորովին դադարել, բայց մարդկային հասարակության առանձին խումբերի մեջ՝ ազգերի և ցեղերի մեջ, մինը մյուսին նախանձելով, մրցությունը միշտ և միշտ սաստկանում է։ Այն փաստը, թե մարդը է իր հարաբերությունների մեջ հասարակական էակ, որ նա, ինչ և լիներ, պետք է որ միանա մեծ կամ փոքր հասարակությունների հետ, մշակեց նրա մեջ մի տեսակ զիջողություն, մի տեսակ ընդունակություն, մի հայտնի չափով զոհել իր անձնական շահերը հօգուտ ընդհանրության այն շրջանի, որի մեջ ինքը ապրում է։ Դրա մեջ չկա ոչինչ, որ բացառապես միայն մարդուն հատուկ լիներ, որպես մատծում է Շևֆֆլեն։ Շատ անասունների մեջ հասարակականությունը զարգացած է անհամեմատ մեծ չափով։ Զխոսելով միջատների մասին, որոնց մոտ կազմվել են առանձին գործառաններ հասարակական նպատակների համար, և որոնց մեջ անհատները շատ անգամ զոհվում են հասարակությանը, կան շատ ստոր անասուններ, որոնց մեջ անհատը ամբողջապես կլանվում է ընդհանրությունից և իջնում է մինչև հասարակ գործարանի ատիճան։ Իսկ մեր այ-

Ժըմյան ժամանակի մարդկության մեջ և իրանց պաղափարների համեմատ ապագայի վերաբերությամբ, անձերը միշտ պահպանում են իրանց անհատականությունը, և միայն մի հայտնի ասոյձան ենթարկվում են հասարակությանը։ Մի ամբողջ շարք բարոյական սրինգիպներ հիմնվում են իսկապես այդ հայեցողական կետի վրա։ Բայց այն ժամանակ, երբ բոլոր անասունների մեջ «հասարակական բնազդումները երբեք չեն տարածվում միևնույն տեսակի բոլոր անդամների մեջ» (Դարվին), ընդհակառակն, մարդերի մեջ գոնե կա ձգտումն միացնել ամբողջ մարդկությունը և կազմել մի մեծ ժողովուրդ։ Թե որպիսի ուղղություն կըստանար գոյության կռիվը այդ նպատակին հասնելու ժամանակ, մենք տակավին չգիտենք։ Մեր կարծիքով, այժմ պետք է թողնել այդ հարցը, որովհետև մեր պլխավոր նպատակն է այն, որ որքան կարելի է, ուսումնասիրենք մի քանի ընդհանուր կողմերը այժմ կատարվող մրցությունների հասարակական զանազան խումբերի մեջ։

Թե այս մրցությունը է մի երևույթ, չափազանց ամուր կերպով կապված մարդկության կարիքների հետ, ինքնըստինքյան հայտնի է։ Արդյունաբերող հասարակությունների վերաբերությամբ դա արտահայտվում է Մաուրուսի հետևյալ խոսքերով. «Եթե արդյունաբերող դասի զանազան բաժինների մեջ աշխատանքը, հասսալի առաջարկության համեմատ, ընկերաբար (ассоциационно) կազմակերպվեր որոշյալ շրջանների մեջ, այն ժամանակ առանձին ֆաբրիկանների մրցության տեղ կհայտնվեին առանձին ընկերությունների մրցությունները։ Մի՞թե չէր կարող պատահել, որ որևիցե ընկերություն, իր լավ հատկությունների պատճառով կամ մշակող ուժերի լավ կազմակերպության պատճառով և կամ ուրիշ բարեհաջող հանգամանքների պատճառով կարդյունաբերեր իր մաքերը ավելի էժան, քան թե մի ուրիշ ընկերություն, ուրեմն՝ նա կարող կլիներ դնել վաճառանոցի վրա իր արհեստագործության արդյունքը ավելի ցած գներով։ Եվ մի՞թե այն ընկերությունը, որ վարում էր իր գործունեությունը ավելի անբարեհաջող պայմանների մեջ, չէր կարող այսպիսի դեպքում վնասվել և մինչև անգամ ոչնչանալ, թողնելով իր անդամներին կատարյալ անանկության մեջ»։

Մարդկային հասարակությունների մեջ գոյության կռիվը ուսումնասիրելու համար մեզ հարկավոր է բնականաբար մեր ուշադրությունը կենտրոնացնել առանձին խումբերի ցեղական հատկություններվ վրա, որոնց մասին գիտությունը ունի բավական փաստեր։ Այսպիսով մենք կմոտենանք այն հարցին, թե որպես ժողովուրդները մրցում են

մինը մյուսի հետ և որպես արտաքսում է մինը մյուսին իր տեղից, կամ բոլորովին ոչնչացնում է։

Իր ճառի մեջ՝ գոյության կռիվի մասին մարդկային սեռի մեջ, Էկկերը ընդարձակում է իր դատողությունները և առանձին ժողովուրդների մեջ կատարվող մրցության մասին. «Որքան մեծ լիներ մեր տվակցությունը (տակր ցեղերի վերաբերությամբ),— ասում է նա,— մենք պետք է այսուամենայնիվ հաշվենք բնության օրենքների հետ, որք կից են ճակատագրական անհրաժեշտության հետ, այն օրենքների, որոնց համեմատ մի ցեղ, որը բարձր է իր հոգևկան և մտավորական հատկություններով, գոյության կռիվի մեջ հաղթում է և արտաքսում է ստոր ցեղին»։ Ավելի որոշ կերպով նա արտահայտում է իր միտքը իր ճառի վերջաբանության մեջ. «Վերջին (ֆրանս-պրուսական) պատերազմը ցույց է տալիս մեզ, թե ժողովուրդների պատմությունը նույնպես հիմնվում է բնական օրենքների վրա և բաղկանում է մի շարք անպատման անհրաժեշտություններից, որոնց մեջ բարոյական և մտավոր զարգացումը միշտ գերակշռում է»։ Միևնույնը բովանդակվում է Շեֆֆլերի հետևյալ խոսքերում. «Զարգացնող քաղաքակրթությունը,— ասում է նա,— տալիս է ամենաբարձր աստիճան զորություն, որպես ինքնապահպանության համար, նույնպես և հաղթության համար, թե կռիվի մեջ բնության պայմանների հետ և թշնամիների հետ նույն իսկ մարդկային սեռից»։

Դարվինը, որ ավելի մանրամասնաբար պարապել է ցեղերի և ազգերի հարցով, գոյության կռիվի մեջ հասնում է այն եզրակացության, թե «քաղաքակրթության աստիճանը է, հատկապես, չափազանց նշանավոր տարր մրցող ժողովուրդների հաջողության գործերի մեջ»։ Եվ այդ իսկ տարրի բովանդակության մասին նա հայտնում է հետևյալը. «Որքան և մութ է քաղաքակրթական զարգացման խնդիրը, այնքան ավելի մենք կարող ենք նկատել, թե մի ազգ, որ երկար ժամանակի ընթացքում առաջ է բերել միշտ ավելի մեծ թվով բարձր մտավոր զարգացում ունեցող, հանդուրժող, քաջ, ազգասեր և առաքինի մարդիկ, այն ազգը առհասարակ կատարյալ սակավ ձիրք ունեցող ազգերի վրա»։ Եվ ավելի ամբողջությամբ ձևակերպում է նա այդ միտքը հետևյալ կերպով. «Լավ ձիրք ունեցող (տաղանդավոր) մարդերի թվի բազմանալը և զարգացումը բարոյականության կատարյալ չափով կատն, անկասկած, անսահման դերազանցություն մի ցեղի մյուս ցեղի վրա»։ Այս տեղից հետևում է, թե «որովհետև ամեն ժամանակներում և բոլոր երկրի վրա զանազան ցեղեր արտաքսում էին ուրիշ ցեղերին, և որովհետև

հաջողության գործի մեջ բարոյականությունը խաղում էր իսկական դերը, ուրեմն բարոյականության չափը ամեն տեղ ունի ձգտումն դեպի բարձրը, և այս պատճառով լավ ձիրք ունեցող մարդերի թիվը պետք է որ բազմանա»։

Ազգերի վիճակի փոխման մեջ, այսպիսի հոգեբանական սկզբնապատճառների հետ, Դարվինը խոստովանում է և մարմնամարզական ուժերի սաստիկ աղդեցությունը գոյության կռիվի մեջ։ Դրանով բացատրում է նա շատ նախնական ազգերի ոչնչանալը, ցույց տալով, թե աճելության նվազելը և երեխաների հիվանդության զորանալը, այլև շրջապատող կենսական պայմանների փոփոխություններին չհարմարվելը, այդ բոլորը միշտ ունեցել են մահացուցիչ ազդեցություն ազգերի վրա։

Կարելի է դրական կերպով հաստատել, որ եվրոպացիների զանազան նախնական ժողովուրդների վրա ունեցած հաղթության մեջ խիստ մեծ դեր խաղացել են և խաղում են մարմնամարզական երևույթները։ Շատ տեղերում նկատված է, որ եվրոպացիք խիստ հեշտ կերպով վարակում են վայրենիներին տարափոխիկ հիվանդություններով, և մինչև անգամ այն դեպքերում, երբ իրանք չեն հիվանդանում։ Այստեղ, իհարկե, եվրոպացիք հայտնվում են որպես հիվանդության ակամա փոխադրողներ ճիշտ այնպես, որպես այդ նկատվում է բժիշկների վերաբերությամբ։ Զանազան տեղերում արդեն կազմվել է հաստատ կարծիք, թե օտարերկրյա նավերի այցելությունները ծառայում են որպես աղբյուր հիվանդություններ տարածելու։ Տարափոխիկ հիվանդությունների մեջ առանձին մեծ դեր խաղում է ծաղկի հիվանդությունը, որը խլում է շատ անկիրթ ժողովուրդներից մարդիկների ահագին բազմություն։ Ամերիկայում նրանից մեռան տեղային բնիկների համարյա կեսը։ Ծաղկի հիվանդության հայտնվելը միշտ սարսափ է ձգում անկիրթ ժողովուրդների մեջ, որոնք սկսում են փախչել, թողնելով իրանց հիվանդներին անխնամ և միայն դնելով նրանց մոտ ջուր և կերակուր։ Բայց, չնայելով դրան, հիվանդությունը հետևում է փախչողների հետից։ Օվկիանոսների շատ կղզիներում այդ հիվանդությունը ոչնչացուց ամբողջ ցեղեր, ուր տարվել էր նա եվրոպացիներից։

Կեցության ձևերը փոխելու ժամանակ նախնական ազգերը չափից դուրս ենթարկվում են խուլերի կամ պալարային հիվանդության։ Դրանից կանխապես մեռնում են մարդերի մեծ մասը, որոնք դուրս գալով իրանց կյանքի սկզբնական ձևերից, ընդունում են եվրոպական սովորություններ, օրինակ, կալմիկի ուսանող իշխանները և այլն։ Կալմիկ-

ների մեջ ծաղկի հիվանդությունն նույն ներգործությունն է անում, որպես ուրիշ նախնական ազգերի մեջ ռուսաց ազդեցության ներքո։ «Вестник Европы» հոդվածի հեղինակը՝ Իլ. Մեչնիկովը, որպես ականատես, ինքը վկայում է, օրինակ բերելով մի կալմիկի դյուղ, ուր 1874 թ. հիսուն ընտանիքից կենդանի մնաց միայն մեկը, և միևնույն տարվա մեջ նույն հիվանդությունով մեռան երրորդ մասը բոլոր կալմիկ բնակիչների։ «Այդ թվանշանը,— ասում է նույն հեղինակը,— պետք է համարել չափազանց կալմիկների անապատի ամբողջ բնակիչների վերաբերությամբ, բայց նա կարող է լինել ճշմարիտ այն սահմանների վերաբերությամբ, ուր հիվանդությունը, ռուսների հետ դրացության պատճառով, կատաղաբար ներգործում է առհասարակ ավելի մեծ չափով, քան անապատի խորքերում», որոնք հեռու են ռուսներից։

Հիշյալ պայմաններում մահացությունը այնքան մեծ է լինում, որ 164 ավատրալիացի աշակերտներից, որ գտնվում էին Տրելկելտի դպրոցում, չորս տարուց հետո միայն կենդանի մնացին հինգ հոգի։ Նեգրները, որ հայտնի են իրանց զարմանալի տոկունությամբ ջերմախտական հիվանդությունների վերաբերությամբ, խիստ շուտով հիվանդանում են բարակացավով։ Նեգրների 1800 հոգուց բաղկացած մի գունդ, որ բերված էր Ջիբրալտարում Անտիլյան կղզիներից, համարյա բոլորն ոչնչացան հիշյալ ցավից տասնհինգ ամսվա մեջ։

Կրթյալ ազգերի հպավորությունը նախնական մարդիկների հետ, բացի առաջացնելը վերջիններիս մեջ զանազան տեսակ վարակիչ հիվանդություններ, մեծ ներգործություն է անում և նրանց աճելության վրա։ Մի քանի հեղինակներ առնդվիշների, մաորիների, ինդիացիների և ուրիշ շատ վայրենիների ուշնշանակը վերաբերում են նրանց կանանց անպատվաբերությանը, որ իբր թե առաջ եկավ եվրոպացիների՝ նրանց կողմերում հայտնվելուց հետո։ Գրացիոլեն արավ մի համեմատություն նախնական կանանց անպատվաբերության և շատ անասունների անծնըդաբերության մեջ, որ պահվում են անազատության մեջ փակված։ Նա բացատրում է այդ հետևյալ կերպով. «վայրենին, որի երկիրը բռնված է եվրոպացիներով, այլևս չէ զգում իրան իր տան մեջ և թեև նա մնում է իր հայրենի հողի վրա, բայց նա զգում է տխրություն հայրենիքի մասին։ Նա աշխատում է դինիի մեջ խեղդել իր սրտի ցավը, բայց սթափվելուց հետո կրկին ընկնում է նոր ցավի մեջ. նա տխուր է լինում և աշխույժը՝ միառժ, և տանջվում է, որպես արգելքի մեջ պահված անասուն։ Անազատության տխրությունը բավական է նրա համար, որ պատ-

ճառ է անպտղաբերության, որպես անասունների մեծ մասի մեջ։ Շունը, որ միշտ պահվում է վանդակի մեջ, կորցնում է ամեն սեռական հոժարություն։ Այսպիսի մի պատճառ հեշտ կարող է բացատրել Պոլինեզիայի և Ավստրալիայի վայրենիների անպտղաբերությունը։ Նոր ժամանակներում դրա նման մի միտք սկսեց արծարծել Դարվինը, որը, որպես մենք տեսանք վերևում, անպտղաբերությունը համարում է մինը ամենագլխավոր պատճառներից նախնական ժողովուրդների սպառվելու։ Նա, ճշմարիտ է, չէ բացատրում այդ միտքը այն հոգեբանական սկզբունքներով, որոնց վրա հիմնվում է Գրացիոլեն, բայց բավականանում է միայն մանրամասն ապացույցներով, համեմատելով եվրոպացոց ձեռքի տակ ճնշված նախնական ժողովուրդների անպտղաբերությունը շատ վայրենի անասունների նույնօրինակ անծննդականության հետ, որոնց աշխատում են դարձնել դեպի ընտանի դրություն*։

Պատճառները, որոնք ազդում են պտղաբերությունը տկարացնելու, թեև բնագիտական օրենքներով ճիշտ բացատրված չեն, այսուամենայնիվ, դա մի երևույթ է, որ հայտնվում է նախնական ազգերի մեջ, երբ նրանց կենցաղավարության սովորական պայմանները փոփոխվում են, և Դարվինը այդ համարում է բավական բացատրելու համար մանուկների մարմնակազմության, որոնք ծնվում են նույն հանգամանքների մեջ, և որից հետևում է նրանց տասական մահացություն։

Մարմնակազմական հատկությունների նշանակությունը գոյության կռիվի մեջ լավ կշռելու համար հարկավոր է դարձնել ընթերցողի ուշադրությունը նույն երևույթների վրա, եվրոպական ազգերի տարածման վերաբերությամբ, որոնք առհասարակ նշանավոր են իրանց առանձին տոկունությամբ, և, բացի դրանից, ունեն ձեռքի տակ կրթության շնորհիվ ընդարձակ միջոցներ իրանց կյանքը պահպանելու համար արտաքին վնասակար պայմաններից։ Օրինակ, Մադագասկարի վրա և Սենեգամբրիայում ոչ մի եվրոպական ժողովուրդ ցույց չտվից ընդունակություն տեղային կլիմային հարմարվելու։ Ջավայի վրա և առհասարակ Մալայան արշիպելագոսի կղզիներում, չնայելով հոլանդացիների բոլոր աշխատությանը, նրանց չհաջողվեցավ հարմարվել տեղային պայմանների հետ։ Մինչև անգամ Ալժիրում, չնայելով նրա բավական նմանությանը Հարավային Եվրոպային, եվրոպացոց մեծ մասը մեռնում է,

* Այդ միտքը պետք չէ շփոթել մեր վերևում հայտնած ընտանի անասունների տեսհամեմատ մեծ չափով աճելության հետ, որովհետև նրանք այդ առտիճանին հասել են դարերի ընթացքում և բազմաթիվ զոհերի գնով։

միայն մի քանիներին, որպես են մալոտայիք և սպանիացիք, հաջողվեցավ սովորել տեղային կլիմային։

Ուրեմն, ժողովուրդների թե իրանց հայրենի երկրից արտաքսվելու, թե նույն երկրի վրա մի ուրիշ ժողովրդից սպառվելու և թե առհասարակ աշխարհի զանազան կողմերում բնակվելու ու հարմարություն ունենալու մեջ հարկավոր է գլխավորապես ի նկատի ունենալ նրանց բնաբանական (физиологический) հատկությունները իրանց բոլոր բազմատեսակ երևույթներով։ Դրանով բացատրվում են, մի կողմից, այսպիսի ժողովուրդների սպառվելու երևույթները, որոնք ուրիշ պայմաններում ցույց էին տալիս բավականին կենդանություն, օրինակ, մաորիսները, որ նշանավոր էին իրանց երևելի ընդունակություններով դեպի կրթություն և իրանց հարմարվելով կյանքի հանգամանքների հետ։ Բայց այդ բոլորը կորցրին նրանք եվրոպացոց հետ զարկվելով։ Մյուս կողմից, միևնույն բնաբանական հատկությունները կարող են մեզ օգնել բացատրելու ժողովուրդների երկարակեցության շատ անգամ արտաքո կարգի երևույթները։

Բեդժոտը ուշադրություն է դարձնում այն բանի վրա, թե հին ժամանակներում վայրենիները չէին սպառվում, չնայելով նրանց անընդհատ հարաբերություններին կլասիկական ազգերի հետ։ Դարվինը տեսնում է դրանում այժմյան քաղաքակրթության սաստիկ ազդեցության ապացույց, որ մահացուցիչ ներգործություն է անում նախնական ժողովուրդների վրա։ Բեպետ Բեդժոտի առաջ բերած փաստը խիստ պարզ կերպով բացատրվում է նրանով, որ այն վայրենիները, որոնց պատահում էր զարկվել հին քաղաքակրթված ազգերի հետ, ըստ մեծի մասին պատկանում էին նրանց հետ միևնույն մարդաբանական (антропологический) հատկություններին, և այս պատճառով փոքր չափով ենթարկվում էին վարակիչ հիվանդություններին։ «Միևնույն պատճառով կարելի է բացատրել (գոնե մասամբ),— ասում է Մեչնիկովը,— և սպառման երևույթի բացակայությունը Կովկասի ժողովուրդների մեջ, չնայելով նրանց կախյալ դրությանը ռուսներից և չնայելով զանազան տեղերում նրանց բավական աղքատությանը և առհասարակ վատ կենսական պայմաններին, որոնց ընդհակառակն, մի քանի ժողովուրդներ թևև մանզոլական արյան մաքուր ծագումից, որպես, օրինակ, կալմիկները, հա-

բարերութիւն ունենալով միևնոյն ռուսների հետ, անհամեմատ մեծ թիվով ոչնչացնում են*։

Այժմ բոլորը հասել են այն համոզմունքի, թե այդպիսի մի խոշոր և բաղադրեալ երևույթ, որպես է ժողովուրդների սպառվելը, առաջ չէ գալիս որևիցե մեկ պատճառից, մինչև անգամ և ոչ պատճառների մի ամբողջ շարքից, այլ շատ, և երբեմն բազմատեսակ հանգամանքների գումարից։ Ուրեմն, մեր նկատած բնաբանական պատճառները պետք է բավական չհամարել։ Դրա համար մի ժողովուրդ, որ չէ գտանվում ուրիշ ոչնչացնող պայմանների ներքո, կարող է մինչև անգամ ուղղվել և վերջումը ամրապնդվել։ Այսպիսով, մի քանի նախնական ազգեր, որպես, օրինակ, աոդանցիք, չեն սպառվում, իսկ ուրիշները թեև շարունակում են ոչնչանալ, բայց ավելի փոքր չափով, քան թե առաջ, որը առիթ տվեց Դերլանդին հայտնել խիստ գեղեցիկ հույսեր պոլինեզիացիների ապագայի մասին։ Եվրոպական ժողովուրդները արագությամբ ուղղվեցան խիստ սաստիկ և բազմաթիվ վարակիչ հիվանդությունների համբերելուց հետո։ Կարելի է, նեգրները և մալայեցիները, որոնք հին ժամանակներից գտնվում են շատ ուրիշ ժողովուրդների հետ հարաբերության մեջ, իրանց այժմյան տոկունությունը վաստակել են ոչ միանգամից, այլ աստիճանաբար և գուցե մեծ զոհերի գնով։

Այսպես, գոյության կռիվի մեջ ժողովուրդների մարմնակազմական հատկությունների հետ կատարվում է և մի ուրիշ մրցություն, որը լինում է ավելի գիտակցական հիման վրա։ Վերջինի մեջ մի ժողովուրդ ձգտում է կամ բոլորովին արտաքսել մի ուրիշին, կամ դնել նրան ավելի կամ պակաս կախված դրության մեջ իրանից։ Որքան ավելի նման են երկու մրցող ժողովուրդները, այնքան հաճախ լինում է առաջինը, որքան պակաս է նրանց մեջ ընդհանուր նմանությունը, այնքան շուտով կարող է կատարվել երկրորդը։ Այստեղից հետևում են իշխողներ և ենթականեր։ Մրցության այդ ձևի մեջ գլխավոր դերը խաղում է քա-

---

*Իր ծանոթության մեջ պ. Մենիկովը ասում է, թե Կովկասի ժողովուրդների մեջ սպառվելու բացակայությունը նրան հայտնի է այն տեղեկություններից, որ նա ստացել է իր անձամբ Կովկասում եղած ժամանակ։ Իսկ տեղեկությունները կալմիկների վերաբերությամբ նա քաղել է ռուսաց «Աշխարհագրական Ընկերության» 1873 թ. հոկտեմբերի լուրերից, որոնցից հայտնվում է, թե մի գյուղում (Улусъ) 1873 թ. պետք եղավ հարկերը ամեն մեկ տաղավարի (салонъ) վրա 7 ռուբլի 58 կոպեկից ավելացնել 8 ռուբլի 80 կ., այն պատճառով, որ տաղավարների ամբողջ թվից պակասել էր 433 ընտանիք, որոնցից ամանք հիվանդ էին, ոմանց մեջ մնացել էին միայն անչափահասները, իսկ 148 ընտանիք բոլորովին ոչնչացել էին նույն գյուղում վարակիչ հիվանդությունից։

ջութիւնը, որ սուրի ուժով ավելի զորավոր մի ժողովուրդ նվաճում է իրանից տկարին։ Գոյութիւյան կռիվի մեջ դա կոչվում է արյունոտ մըրցութիւյուն։ Մարդկային պատմութիւյունը ունի իր մեջ հազարավոր օրինակներ, որ այս պայմաններով վաստակած հաղթութիւյունը երկարատև լինել չէ կարող, երբ հաղթողը զերազանցում է միմիայն իր ֆիզիկական կոշտ-կոպիտ ուժով, երբ նրա հետ կապված չեն նաև քաղաքակրթութիւյան զարգացման առավելութիւյունները։ Մանզուլական ցեղերը, արաբները մի ժամանակ հեղեղի նման անցան երկրագնդի մի բաժնի երեսից, բայց իրանք աշխարհակալութիւյունների մեջ զուտ իրանց ոչնչանալը։

Քաջութիւյունը, որ առաջ է բերում Դարվինը, որպես մինը էական զորութիւյուններից հաղթութիւյան մեջ, նրա նշանակութիւյունը պետք է այնքան չվերագասել, որքան կարծվում է։ Անվիճելի է, որ մի քանի դեպքերում քաջութիւյունը ցույց է տվել ոչ սակավ ծառայութիւյուն, բայց միանգամայն զարդացնել ժողովրդի մեջ պատերազմական ոգին շատ անգամ տանում է նրան դեպի կործանում։ Մրցութիւյան անարյուն և խաղաղ ձևը գոյութիւյան կռիվի մեջ տալիս է առհասարակ անհամեմատ ավելի հաստատուն հետևանքներ, քան թե պատերազմական հաջողութիւյունը։ Քաջութիւյունը, որ սերտ կերպով կապված է լինում անկախութիւյան ոգու հետ, ունի իր արդարացի կողմերը այն դեպքերում, երբ մի ժողովուրդ ձգտում է հիմնել իր գոյութիւյան արմատները հայրենի հողի վրա և աղատ մնալ օտար ճնշումից։ Իսկ քաջութիւյունը, որ կապված է աշխարհակալութիւյան անոտի փառքերի հետ, միշտ վնասակար է դառնում։ Մինչև անգամ այն ժողովուրդները, որոնք հասել էին կրթութիւյան բարձր աստիճանին, որպիսի են հռոմայեցիները և հույները, սաստիկ պատժվեցան իրանց պատերազմասիրութիւյան համար։ Այժմյան եվրոպական ազգերից նույնպես ֆրանսիացիք ցույց են տալիս մի քանի նշաններ մերձավոր անկման, նշաններ, որ, իհարկե, կապված են նրանց անշափ պատերազմասիրութիւյան հետ։

Քաջութիւյունը, պատերազմական ոգին, սուրը գոյութիւյան կռիվի մեջ, այն ժամանակ միայն իրանց իրավացի կողմերը ունեն, երբ մի ժողովուրդ գործ է դնում նրանց ոչ իբրև կյանքի նպատակ, այլ հարկավորած ժամանակ որպես կյանքը պահպանելու միջոցներ։ Անասուններն նույնպես բնական զենքեր ունեն ինքնապաշտպանութիւյան համար, բայց երբ մի անասուն իր զենքերը գործ է դնում մյուսներին գիշատելու համար, նա գազան է, իսկ գազանները մեծ բազմութիւյուն չեն կազմում անասունների հասարակութիւյան մեջ. գայլերի, վագրների և առյուծների

Թիվը շատ փոքր է լինում։ Սուրը և քաջությունը մարդերի մեջ որպես արտահայտության ներգործական (активный) զորության, որքան մաշում են օտարներին, նույնպես և դառնում են իրանց գործածողների դեմ։ Մուրճը, իրավ է, ջարդում է և փշրում, բայց ինքն էլ վերջապես մաշվում, սպառվում է։ Անարյուն մրցությունը, որ կատարվում է քաղաքակրթության և մարդու մտավոր զարգացման հիման վրա, թեև ուշ, բայց վերջապես հաղթող կհանդիսանա ավելի, քան գազանական կոպիտ ուժը։ Բայց մի ժողովուրդ ինքնուրույն և անարգել կերպով զարգանալու համար հարկավոր է, որ նախ և առաջ նա ազատ լինի օտարների ճնշումից և իր ոտքի ներքև ամուր և հաստատ հող ունենա. պետք է, որ նա տան մեջ լինի, և օտարները չխանգարեն նրան։ Դրա համար երբեմն հարկավոր է լինում սուրը։

Դարվինը առաջարկում է և եռանդը, և առատիճությունը, որպես հատկություններ, որոնց ժողովուրդների մեջ զարգանալը պետք է որ օգնեն նրանց գոյության կռիվում։ Ինչ որ վերաբերում է առաջինին, այդ հատկություններից եռանդին, նա ատանում է բարոյական բնավորություն ավելի այն ժամանակ, երբ գործ է դրվում ոչ միայն մի անհատի անձնական բարօրության համար, այլ՝ ընդհանրության։ Ամեն մի հանդամանքում նա հայտնվում է որպես կենդանության և հաղթության նշանավոր տարր։ Իսկ ինչ որ վերաբերում է առաքինության, նրա դերը, որպես հաղթության պայման գոյության կռիվի մեջ, երկրայական էր։ Որպես մենք տեսանք նախընթաց գլխում, ինքը՝ Դարվինը, ցույց է տալիս բարեգործական զգացմունքների վարժելու «անկասկած վնասը» ցեղերի բնական դրության։ Դրա վրա պետք է ավելացնել և այն, որ վարժեցնելով կարեկցությունը, զարգացնելով զգացմունքը, մարդիկ դառնում են ամեն պիտանի գոյության կռիվի համար, որը մինչև անգամ իր բարձր ձևի մեջ կապված է ուրիշներին ցավեր պատճառելու հետ։ Հայտնի է, որ կարեկցությունը առհասարակ ավելի հատուկ է այնպիսի անձերին, որոնք կանգնած են մի կողմում, իրանց հետու են պահում և չեն մասնակցում ժողովուրդների գոյության կռիվի մեջ։ Այս հոգեբանական երևույթի վրա ուշադրություն դարձրեց Հերբերտ Սպենսերը, որ հասնում է հետևյալ եզրակացության. «Մոտ ծանոթությունը աղքատության և անբախտության արտաքին արտահայտությունների հետ,— ասում է նա,— անպատճառ պահպանում է նրան հավասարաչափ սառնասրտություն, և այդ սառնասրտությունը է անբաժան արբանյակ անարյուն մրցության յուրաքանչյուր հասարակության առանձին անդամ-

ների մեջ, և որպես իսկապես է նա անբաժան արբանյակ արյունոտ մրցության զանազան հասարակությունների մեջ»։

Հետևանքը, որ կարող է առաջ գալ մի նախնական և զարգացած ժողովրդի մրցությունից, խիստ հաջող կերպով արտահայտված է Միշլեի շարադրության մեջ. «Քաղաքակրթված կյանքը և վայրենի կյանքը,— ասում է նա,— այնքան հակառակ են մինը մյուսին, որ միևնույն ժամանակ նրանք չեն կարող ապրել մեկ հողի վրա, և նրանց մրցության մեջ հաղթությունը անխուսափելի է նախագուշակել։ Այդ է կոիվը հաստատացած մարդու մի մանուկի հետ»։ Նախնական ժողովուրդների անհետաոտեսությունը և նրանց անգործնականությունը իսկապես կրում են իրանց վրա այսպիսի երեխայական բնավորություն։ Հասկանալի է, որ նրանց մի այսպիսի հատկությունը տվեց հարստահարության խիստ առատ ապրանքներ ավելի ճարպիկ և գործնական ժողովուրդներին։ Թե որպես է գործվում այդ, կարելի է պարզ տեսնել մի չինացի վաճառականի խոսքերի մեջ, որ ասել էր Դյուկ Հանապարհորդին և միսիոնարին։ «Մի՞թե դուք չնկատեցիք, որ բոլոր մանգոլները երեխաներ են։ Երբ նրանց պատահում է լինել բաղաքում, իսկույն նրանց մեջ հայտնվում է ցանկություն ունենալ բոլորը, ինչ որ հայտնվում է նրանց աչքերին։ Բայց առհասարակ նրանց մոտ փող չի լինում, և մենք հատնում ենք նրանց օգնության։ Մենք նրանց տալիս ենք ապրանքներ պարտքով, և դրա համար, ճշմարիտն ասած, տալիս ենք բավական թանկ գնով։ Տալով ապրանքը առանց փողի, չէ կարելի չդնել վրան փոքր-ինչ տոկոս՝ հարյուրին երեսունից մինչև քառասուն։ Չէ՞ որ այդ բոլորովին իրավացի է։ Փոքր առ փոքր տոկոսները հավաքվում են, և այնուհետև գալիս են տոկոսները տոկոսների վրա։ Այդ անում ենք մենք միայն մանգոլների հետ, որովհետև Չինաստանում կայսերական օրենքով արգելված են տոկոսները։ Եվ մենք ստիպված լինելով այսպիսի հավատ ընծայել «անապատների որդուն» (մանգոլին), իհարկե, իրավունք ունենք պահանջել և տոկոսի տոկոսը։ Չէ՞ որ այդ բոլորովին իրավացի է։ Մանգոլական պարտքը երբեք չի վճարվում. նա անցնում է սերունդից սերունդ։ Ամեն տարի մենք գնում ենք տոկոսները առանալու, որը վճարում են ոչխարներով, եզներով, ուղտերով, ձիաներով և այլն։ Դրանք անհամեմատ օգտավետ են, քան թե փողը։ Մանգոլական անասուններն մեզ ավելի էժան են նստում, իսկ հրապարակի վրա մենք նրանց վաճառում ենք շատ թանկ գներով։ Ա՛խ, մանգոլական պարտք, դա շատ լավ բան է։ Դա ճշմարիտ ոսկու մի աղբյուր է»։ Մենք ընտրեցինք այդ դեպքը, որպես մինը այն բազմաթիվ դրա նման հատկանիշ օրինակ-

ներից, որոնք հատուկ են անգործնական և անկիրթ ժողովուրդներին։ «Միևնույն կերպով,— ավելացնում է «Вестник Европы» հոդվածի ալ. հեղինակը,— որպես մանգոլները կողոպտվում են չինացիներից, նույնպես էլ կատարվում է կալմիկների, բաշկիրների և ուրիշ շատ ժողովուրդների հարստահարությունը ռուսներից. իսկ մալոռուսների և լեհացիների հարստահարությունը՝ հրեաներից»։ Մինչև անգամ այնպիսի մի ընդունակ ժողովուրդ, որպես մալոռուսները, առաջին անգամ, երբ հարաբերություն ունեցան անգլիացիների հետ, խաբվեցան, ստորագրելով այնպիսի պայմանագրեր և պարտամուրհակներ, որոնց միտքը ամենևին հասկանալի չէր այդ վայրենիներին։

Այսպիսով, ազիտությունը և անգործնականությունը լինում են տկարության ամենագլխավոր պատճառներից մեկը գոյության կռիվի մեջ։ Եվ ընդհակառակն, առհասարակ կարելի է ասել, որ ժողովրդի մտավոր ընդունակությունները խաղում են այդ գործի մեջ առաջին դերը։ Այն, որ Պոլ Բրոկան հայտնեց (իր նշանավոր հակաճառության ժամանակ փարիզյան անտրոպոլոգիական ընկերության մեջ ցեղերի ոչնչանալու և կատարելագործվելու հարցի առիթով) ավստրալիացիների վերաբերությամբ, կարող է լինել մի քանի բացականչություններով ընդհանուր կանոն։ «Չկա ոչ մի հարաբերություն,— ասում է նա,— բարության, քնքշության, շնորհակալության, սերին դեպի ընտանիքը և ուրիշ բարոյական հատկությունների մեջ մեկ կողմից, և մյուս կողմից, նախատանության, կարգապահության, հնազիտության ոգու, հաստատամտության, շահագիտության, որոնք կախումն ունեն մարդու մտավոր ընդունակություններից իր նեղ մաքով, այսինքն, հատկություններ, որ անում են մի ցեղին ընդունակ քաղաքակրթության, ընդունակ իր շահերը ճանաչելու, ղեկավարելու իր անձնական ազատության մի մասը նրա համար, որ բնակվի մի կանոնավոր կերպով կազմված հասարակության մեջ. միևնույն հատկությունները անում են նրան ընդունակ գործելու՝ իր աշխատության պտուղները քաղելու նպատակով ոչ թե միևնույն ժամում, բայց կես դարուց հետո, և վերջապես, նույն հատկություններից նա սովորում է հնթարկվել օրենքների, նրա համար, որ ինքը օգուտ քաղի նրանց հավանավորությունից։ Ցեղերը, որ հասկանում են այդ հասարակական հիմունքները, կարող են քաղաքակրթվել մեծ կամ փոքր չափով, իսկ ոմանք ուրիշներին հետևելու ճանապարհով համոզմունքի կամ սահմանքի միջոցով, նայելով նրանց խելքի որպիսությանը կամ ստիճանին։ Իսկ այն ցեղերը, որ չեն հասկանում այդ օգուտները, կմնան վայրենի դրության մեջ։ Այդ միևնույն ժամանակ չէ

նշանակում, թե նրանք զրկված են բարոյական հատկություններից, այդ նշանակում է միայն, թե նրանք ամենևին չունեն, կամ պակաս է նրանց մեջ մի քանի մտավոր կամ իմացական (интеллектуальный) ընդունակություններ»։

Թե եվրոպացիների և նախնական ազգերի մեջ կատարված այժմյան անհավասար մրցության գործի մեջ, առաջինների կողմից հայտնվել են ամեն դեպքերում ոչ միայն անբարոյական, այլև շատ անգամ անգութ և ամարդի վարմունքներ. դա այնքան հայտնի է, որ ապացույցի կարոտ չէ, և չարժե երկար խոսել դրա վրա։ Դերլանդը անում է այդ մասին հետևյալ նկատողությունը. «Պարզ չասեն, թե եվրոպացիների ցույց տված ցածությունները առաջ էին գալիս միայն առանձին անձինքներից, և թե այդ մասին նրանք պետք է պատասխանատու լինեն։ Այսպիսի վարմունքներ կատարում էին, մոտավորապես մեկնումն չափով, բոլոր գաղթականները և ամեն դեպքում սահմանում էին նրանցից (իրանց կառավարություններից) չափազանց հավանություն»։ «Այդ դատողություններից առաջ է գալիս,— ասում է հետո նույն հեղինակը,— թե որքան անտանելի և դանդաղ կերպով կատարվում է մարդկության բարոյական կատարելագործությունը և որքան սակավ պայմանավորվում է նա մտավոր զարգացման հետ»։ «Ամեն տեղ, ուր և մտնում է Օրանգ-Պուտանին (այսինքն՝ սպիտակ մարդը կամ քրիստոնյան),— ասում էր մի ջավացի իր խոսակցության ժամանակ մի հոլանդացի օֆիցերի հետ,— հավատարմությունը և ճշմարտությունը կորչում է, իսկ արբեցությունը, լրբությունը, անբարոյականությունը և բռնությունը գնում են նրա հետից, նրան հետևելով, որ հասատանվեն ամեն տեղ, ուր և նա կկանգնի» (Բատեման)։ Որքան և սաստիկ լիներ այդ նկատողությունը, այնուամենայնիվ, բովանդակում է իր մեջ ճշմարտության շատ մասեր։ «Ագնվություն, ճշմարտություն, կանոնավորություն, հյուրասիրություն, մարդկություն, մաքուր կրոնասիրություն, գեղեցիկ բարոյական հատկություններ պատահում են ըստ մեծի մասին ոչ թե եվրոպացիների մոտ (այսինքն՝ եվրոպացի գաղթականների), այլ գտանվում են այնքան անարգված նախնական ժողովուրդների մոտ»,— ասում է Դերլանդը, մինը այժմյան գիտնական էթնոգրաֆներից։

Մինչև անգամ այն դեպքերում, երբ պետությունների մի քանի ընկերություններ գործ էին դնում զանազան միջոցներ, որքան կարելի էր, իրանց ստորադրյալ ժողովուրդների վիճակը բարելավացնելու համար, այդ նրանց ըստ մեծի մասին չէր հաջողվում գաղթականների և ասիճանավորների հակառակ ձգտումների պատճառով, այսինքն՝ այնպիսի

անձերի, որոնք դառնում էին անմիջական հարաբերությունների մեջ «վայրենիների» հետ։ Երկրագնդի զանազան մասներում, օրինակ, արդելված է տանել ոգելից ըմպելիներ, այն տեղերում, որ բնակեցրած են զանազան նախնական ազգերով, որոնք սաստիկ հակումն ունեն դեպի արբեցություն, բայց ոչ մի տեղ այդ կարգադրությանը չեն նայում տեղային եվրոպական վաճառականները։ Տիրելով Նոր Զելանդիային, անգլիական կառավարությունը իր աշխատությունների մեջ պահպանել և զարդացնել տեղային բնակիչներին, դառավ գլխավոր արգելքը «Նորզելանդական ընկերության» կողմից, այսինքն՝ մի ընկերության, որ կազմված էր հարուստ և ազդեցություն ունեցող անգլիացիների ձեռքի տակ, որոնք շատ չափազանց անգութ կերպով հարստահարում էին դեռևս այն ժամանակ բոլորովին անփորձ մարդիկներին։ Կարելի է բերել այդ մասին մեծ քանակություն փաստեր։

Դրանից հետո «Вестник Европы» հոդվածի պ. հեղինակը բոլորովին անկողմնապահ կերպով առաջ է բերում մի փաստ, թե որպես զանազան հարստահարիչ ուսաններ, հակառակ կառավարության բարի նպատակներին, վարվում են կալմիկների հետ։ «Ռուսաց կառավարությունը,— ասում է նա,— կալմիկների ժողովրդի բարօրության նկատմամբ մտածից հնարների մի ամբողջ շարք, այն նպատակով, որ վարժեցնեն նրանց երկրագործության և ավելի կանոնավոր տնտեսության մեջ։ Դրա համար կարգադրվեցավ կարել վոլգայի բոլոր մերձակայքում դտնվող կալմիկական անապատը ընթացիկ ճանապարհներով և հիմնել նրանց մոտ փոքրիկ դյուղեր (կալմիկների համար)։ Ի՞նչ եղավ դրա հետևանքը։ Այն, որ շատ ճանապարհներ չհայտնվեցան, որքան կարծվում էր, և բացի դրանից, բոլոր դաղթաշխանքները ընկան ամբողջապես ուսների ձեռքը, և այսպիսով, երկրի եզերքում (окраина) հայտնվեցավ բավական բազմաթիվ ուսների բնակություն, որոնք իրանց բոլոր հարաբերությունների մեջ թշնամի են կալմիկներին, իսկ դրանք վերջապես կորցրին իրանց լավ հողերի մեծ մասը և առհասարակ մոտեցան կատարյալ աղքատության»։

Քննելով այստեղ հարցի այն կողմը, որ վերաբերում է զորավոր և սակար ժողովուրդների միմյանց հետ ունեցած հարաբերություններին դոյության կռիվի մեջ, չէ կարելի փոքր-ինչ չշեղվել գլխավոր հարցից, թեև դա չունի ուղղակի վերաբերություն մեր այժմ քննած խնդիրների հետ, բայց կարող է պարզել մի քանի մթություններ կարծիքները, պատությունների գործ դնելու միջոցների մասին իրանց հոդաբարձության

ակ գտած նախնական ժողովուրդների վերաբերությամբ կամ առհասարակ փոքր ազգությունների վերաբերությամբ, խիստ տարբեր են։ Նրանց կարելի է բաժանել երեք մասի։ Ոմանք հարկավոր են համարում ոչ միայն պահպանել այդ ժողովուրդները, չնայելով ամեն կերպ ծախսեր, որ դոնե, որքան կարելի է, բարձրանան նրանք և քաղաքակրթվելու ճանապարհին դնեն (этнограф), որոնք ավելի ծանոթ են նախնական ազգերի հետ, բոլորովին պաշտպանում են այդ կարծիքը։ Ահա, օրինակ, որպես է իրաւում այդ մասին Դերլանդը իր շարադրության վերջին տողերում. «Նախնական ժողովուրդների սպառման մասին». «Թող պահպանվի այդ ժողովուրդներից այն, ինչ որ դեռևս կարող է պահպանվել։ Մինչև այժմ եղած մարդկային զարգացումը և դրանց վերաբերությամբ կատարվածս կախումն ունի բնական օրենքներից։ Գոյության կռիվը, որի մեջ զորավորը նա է, որ հաղթում է, երևան է գալիս իր կատարյալ չափով։ Ամրապնդված ցեղերը տարածվում են ուժով և բավականությամբ և առանց որևիցե հարկավորության ոչնչացնում են իրանց հաղթած տակար ցեղերին։ Բայց մարդը ընդունակ է դատելու և սիրելու. այդ իսկ պատճառով պետք է խնայի ցեղի զորավոր անդամը ցույց տա իր ուժը այն բանի մեջ, որ աշխատի սիրով բարձրացնել մինչև ինքը իր հաղթած ցեղի տակար անդամներին։ Այդ դեպքում միայն կտիրեր հոգու և բարոյական ընտրության իշխանությունը, և ամբողջ մարդկությունը կաներ մի մեծ քայլ դեպի առաջ, այն ճանապարհով, որին նա պետք է որ հետևի, այսինքն, հոգու ազատության ճանապարհով՝ արտաքին բռնության կապիտ կապանքներից»։ Դերլանդը և առհասարակ, կարծիքների այն մասը, որոնց նա թարգման է հանդիսանում, հիմնվում են, վերջիվերջո, այն համոզմունքի վրա, թե հարկավոր է խնամք տանել և պահպանել ամբողջ մարդկային սերը իր բազմաթիվ տեսակների մեջ։

Երկրորդ մասի կարծիքները, որոնք առաջինի հետ համեմատելով, բոլորովին հակառակ բնավորության են կրում, նույնպես ի նկատի ունեն մարդկային ընդհանուր բարին։ Բայց նրանց հայացքի կետից նախնական ժողովուրդների պահպանության համար գործ դնել զանազան արհեստական միջոցներ, որոնք արժեն ահագին ծախսերի, այսպիսով նրանց գոյությունը նպաստել, անկարելի են համարում։ Արդյոք կարո՞ղ են այդ ցեղերի ներկայացուցիչները բարձրանալ մինչև այժմյան կրթության մակերևույթը, այդ դեռ ապացուցված չէ, և մի քանի դեպքերում խիստ տարակուսական են համարում։ Բայց դրանից, թողնելով մեծ մասը ամենահարուստ և արդավանդ երկրների նախնական բնիկ-

ների ձևոքում, և արդելելով Եվրոպական գաղթականների նրանց մեջ մտնելը, համարում են մի մեծ վնաս վերջիններին համար, որը մի նշանավոր օգուտ չէր բերում առաջիններին։ Հասարակ հաշիվը ցույց է տալիս, որ այդ երկրները կարող են կերակրել անհամեմատ մեծ թվով կրթված եվրոպացիներ, քան դեռևս երկրագործական աստիճանին չհասած նախնական ժողովուրդներին։ Այստեղից հետևում են, թե նախնական ազգերին արհեստական եղանակով պահպանելը կարող է կատարվել ոչ այլ նպատակով, բայց միայն նրանց երկրներում բնակվող եվրոպացիներին ծառայելու համար, և այդ կլինի փոքրամասնության պահպանությունը մեծամասնության համար։ Եվ այդ պատճառով հարկավոր են համարում թողնել, որ գոյության կռիվը առաջ գնար իր բնական ընթացքով, և արգելք չդնել քաղաքակրթված եվրոպացուն ճնշելու կամ իրանց երկրից արտաքսելու նախնական տեղացիներին։ Այժմյան գիտնական հեղինակներից այսպիսի գաղտնություններ պաշտպանում է, օրինակ, Հելվալդը, որպես այդ երևում է նրա հետևյալ նկատողությունից նեգրների ոչնչանալու մասին Միացյալ Նահանգներում. «Ազատ նեգրների ոչնչանալը ներկայացնում է հիմիկվանից ժամանակի հարց»,— ասում է նա և տալիս է մեկը այն ամենակարևոր վախճաններից, որը խիստ հիմնավոր և չափազանց բարեհաջող է։ Վերջապես, դա մի պայման է, որով մի անգամով և մշտապես ազատված կլինենք «սև եղբայրների» հոգսերից. կրթությունը կտանի իր այդ հաղթությունը, որը միշտ կապված է այլասեռ տարրերի կորչելու հետ»։

Երրորդ մասի կարծիքները նույնպես ընդհանուր մարդաբարական նպատակ ունեն. նրանք մտածում են, թե փոքր ազգությունների կամ ցեղերի գոյությունը մարդկային ընկերության մեջ նշանակություն չունի, թե նրանք պետք է կլանվեն և ձուլվեն ազգային մեծ խումբերի հետ, և մի ամբողջություն կազմեն։ Նրանց անընդունակ են համարում ինքնուրույն կերպով քաղաքակրթվելու կամ երկրագնդի վրա անկախ ու ազատ դիրք բռնելու, և այս պատճառով ավելի լավ են համարում կամ նրանց ոչնչանալը և կամ մի մեծ խումբի հետ խառնվելը, որ մարդկային առաջադիմությանը արգելք չլինեն... Այդ նպատակին ձգտում են (թեև քաղաքակրթության քողի տակ) մարդկային այն մեծ խումբերը, որոնք գոյության կռվի մեջ ֆիզիկական ուժը՝ մեծ թվով պատերազմող ձևոքերը, ամենագլխավոր գործող զորություն համարելով, ցանկանում են կազմել մի քաղաքական մեծ և միանման մարմին, որ ամբողջություն ունենար։

Ահա այդպիսի, գոյության կռիվի մեջ բոլոր գազանի նպատակները, որոնք ծառայում են առանձին հասարակությունների շահերին, միայն կատարվում են քաղաքակրթության և ընդհանուր մարդասիրության անունով։ Որի՞ն պետք է իրավասություն տալ։

Որևիցե որոշ վճիռ մեր հետազոտած հարցի մասին տալ չենք կարող, կիողնենք ընթերցողին իրան մատծել։ Էվնոգրաֆը (ժողովրդագետ), այդ մարդկության բարեկամը, որ ամենից ավելի մոտ կերպով ծանոթ է ցեղերի և նախնական ժողովուրդների բնավորությանը ու սովորություններին, պնդում է նրանց պահպանվելու մասին, և առհասարակ թեքվում է դեպի նրանց օգտի կողմը։ Իսկ տնտեսագետը, որ ավելի հակում ունի դեպի գազրիականների շահերը, որոնք ճնշված են լինում իրանց խիտ բնակեցրած հայրենիքում մրցության ծանր պայմաններից, կսկսի, իհարկե, պաշտպանել վերջիններին, որ ազատություն տրվի նրանց բնակվելու որտեղ որ ցանկանում են և պատերազմել սպառելու, ոչնչացնելու անկիրթ համարված վայրենիներին։ Միսիոնարը կմիանա ավելի շուտով էվնոգրաֆի կարծիքի հետ, իսկ գործնական մարդը կկանգնի տնտեսագետի կողմը։ Իսկ պատմիտը, որ ավելի դարբեն արհեստավորի աչքով է նայում մարդկության վրա, չի ցանկանա փոքր ազգությունների կամ ցեղերի ոչնչանալը, այլ որպես իր արհեստանոցի համար պատրաստի նյութ, կցանկանա նրանց ձուլել և իր կազապարի մեջ մի նոր ձև տալ և մի ամբողջ մարմին կազմել, իհարկե, այն ազգի մարմինը, որին ինքն է պատկանում։ Իսկ բնագետը, մեր կարծիքով, բոլորովին կհետացնի իրան, նա չի ձանձրացնի իրան վճռելու մի դժվարին հարց, նրա նման, որպես պատմաբան-անատոմը կամ ֆիզիոլոգը, ըստ մեծի մասին հրաժարվում են բժշկել հիվանդներին։ Եվ տեսությունների մեջ այս և այն տարիքի, այս և այն կուսակցությունների միմյանց վրա ունեցած փոխհարաբերության կարող է տասերիկ ազդել կառավարությունների ձեռք առած միջոցների վրա, և նայելով հանգամանքներին, գործի իսկությունը կամ կենթարկվի նրանց և կամ խույս կտա... և այն ժամանակ գոյության կռիվը կամ ուղղակի և կամ կողմնակի ճանապարհներով կհասցնի գործը մինչև այն աստիճանը, որ զորավորները կիշխեն տկարների վրա, և այն ժողովուրդները, երբ որ ընդունակ չեն տանել մրցության ճնշմանը, կկորչեն։

Կրկին վերադառնալով այն հարցին, թե որպիսի բազմատեսակ ուժեր դեր են խաղում գոյության կռիվի մեջ, մենք հարկավոր ենք համարում հայտնել ընդհանուր կանոնը կենդանի բնության, որի համեմատ հաղթությունը չափվում է մարդու մրցության պայմաններին ընդունակ

լինելովը։ «Երբ մենք կկարողանանք,— ասաց Մակկիավելին,— փոփոխել մեր գործուեութեան ձեւերը ժամանակի հանգամանքների համեմատ, այլևս բախտը մեզ չի խաբի»։ Այդ փիլիսոփայական կանոնի մեջ առաջին պայմանն է այդ հանգամանքների ճանաչելը և ապա նրանց համապատասխան գործելը։ Այդ կանոնը ճիշտ է որպես երկու առանձին անձերի մրցութեան դեպքերում, նույնպես և ժողովուրդների կամ ազգերի միմյանց հետ ունեցած մրցութեան գործում։ Այս պատճառով կարելի է ենթադրել, որ այն ազգերը, որոնք ավելի վարժված են իրանց ներքին մրցութիւնների մեջ, կհայտնվեն ավելի ևս զորավոր և օտար ազգերի հետ զարկվելու միջոցներում։ Եթե այդ ուղիղ է, ուրեմն և այն ենթադրութիւնները, որ հայտնվեցան նախընթաց պլուխներում անհատական մրցութեան վերաբերութեամբ, պիտք է տարածվին և ժողովուրդների ու ազգերի մեջ եղած մրցութեան երևոյթների վրա։

Այդ մասին բավական է որպես օրինակ վեր առնել մի ազգ միայն՝ անգլիացիները. վաճառական և արհեստագործական մրցութիւնը սաստիկ զարգացած է ամեն մի անգլիացու իրան մեջ և տարածվելով ամբողջ ազգի անդամների վրա, նույնը և ավելի սաստիկ զորութեամբ, նրանք գործ են դնում և օտար ժողովուրդների հետ։ Իսկ վաճառականական բարոյականութեան սև կողմերը հայտնի են մեզ Սպենսերի նկատողութիւններից. նա որպես առանձին անհատների մեջ, նույնպես և վաճառականութեամբ պարապվող մի ամբողջ ազգի մեջ նույնն է լինում։ Ուրեմն պետք չէ զարմանալ, որ անգլիացին ամբողջ երկրագնդի վրա հայտնվում է որպես մի հմուտ խաբեբա։

Մենք հաղորդեցինք գոյութեան կռիվի միայն գլխավոր գծերի հետազոտութիւնը, թե ինչ պաշտոն է կատարում նա մարդկային կյանքի մեջ. եղրակացութիւնը, որին հասնում է այդ հետազոտութիւնը, ըստ երևույթին, ունի բավական նմանութիւն Բոքլի նշանավոր կարծիքի հետ, թե որպես գոյութեան կռիվի մեջ, նույնպես և առհասարակ քաղաքակրթութեան գործում իբրև վճռական և ամենագլխավոր ուժ հայտնվում է միշտ մտավոր զարգացումը, և որի ընդհակառակն, բարոյական զորութեան դերը անհամեմատ ավելի սահմանափակված և ընկըճված է լինում։ Մենք չէինք կարող այդ տխուր ճշմարտութիւնը երևան չհանել, քանի որ մրցութեան մեջ հայտնված փաստերը ուղղակի ցույց են տալիս նրան։ Մենք թեև այն շիտակին չենք պատկանում, որ համաձայնվենք Բոքլի հետ, թե բարոյական սկզբունքները տանում են մարդուն դեպի կատարյալ անշարժութիւն, բայց միևնույն ժամանակ

չենք էլ կարող թաքցնել մեր խորին ցավակցությունը, որ ազգերի գործնական կյանքի մեջ բարոյականությունը չէ պայմանավորվում մարդկային ձգտումների հետ, անբարոյականը, անխիղճը, անգութը, իր շահերի համար ուրիշներին խեղդողը միշտ առաջ է գնում և հաղթող է հանդիսանում, և բարոյականությունը մնում է որպես մի իդեալական նպատակ։

Ուրեմն, կրկին հիշելով Մակիավելլիի խոսքը, կասենք, երբ մի անհատ կամ մի ազգ ցանկանում է չոչնչանալ գոյության կռիվի մեջ, նա պետք է «իր գործունեության ձևերը փոփոխի ժամանակի և հանգամանքների համեմատ», և այդ կատարել չէ կարող նա, քանի որ չէ ճանաչում ժամանակի պահանջները և նրանց հետ հարմարվելու ընդունակ չէ, իսկ պահանջները ճանաչելու և նրանց հարմարվելու համար պետք է ժամանակի քաղաքակրթության համեմատ զարգացած լինել։ Իսկ ով ժամանակի հետ չէ ընթանում, նրան կսիրի անշարժությունը, և այստեղ է հասնում ազգերի մահը։

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ[1]

Հայդուկ բառը չէ նշանակում դող, ավազակ, կամ վտարանդի հեղուզակներ. դա նույն նշանակությունն ունի, ինչ որ էին հունաց կլեֆտները[2] նրանց ապստամբության ժամանակ, կամ...* սուլիոտները[3]։ Հայդուկը բնական արտահայտություն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի։ Հայդուկը սարուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ։ Նա թողնում է ընտանեկան օջախը, որ իր համար պղծված էր, նա թողնում է յուր հասարակությունը, առանձնանում է մթին անտառների խորքում, սարերի անմատչելի փապարներում, և այնտեղ, որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդին սկսում է տիրել ամայության վրա։ Բնությունը միանում է հաջող ձեռքի հետ, և հայդուկը իր որջից մահ և սարսափ է սպառնում իր շրջակայքի վրա։ Իրավ, նա մորթում է, կողոպտում է, այրում է մարդկանց բնակարանները, բայց այդ բոլորը գործում է, որպես նեղված ժողովրդի բարկության ոգին, որ վրեժխնդրության մեջ բավականություն է գտնում։

Հայդուկը հասարակ ավազակից որոշվում է գլխավորապես նրանով, որ նա ոչ թե հափշտակության ագահությունից դրդված, կամ հան-

* Բնագրում պակասում է մի բառ։ Ծանոթ. «Արարատ» ամսագրի խմբ.։

գամանքներից ստիպված է գործադրում իր արյունահեղ արհեստը, այլ նրա սրտի հետ կապված է իսրին ազգային զգացմունք և ազատության բաղձանք։ Հայդուկի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում այս կողմից, որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում հեղյալին և ուխտում է անգթաբար պատժել անիրավությունը։ Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից, ահա դրանք են նրա ցանկությունները. սրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոցներ։

Մեզանում դեռ գրականությունն ուշադրություն չէ դարձրել այս տեսակ երևույթների վրա. հայդուկները, ավազակները մեզ մոտ դեռ չեն մտել վեպերի կամ բեմական գրվածքների մեջ, թեև նրանք խիստ հաճախ հայտնվել են և անհետացել ժամանակի հոսանքի հետ։ Հայդուկը և ավազակը չեն ճանաչվել մեզանում որպես պատմական անձնավորություններ, որպես հանկարծ ցայտող կայծեր ժողովրդի հանգած քաջազնական կյանքից։

Մի գրող միայն, հանգուցյալ Աբովյանը, իր գրքի մեջ դուրս բերեց այդ կենդանի ժողովրդական տարրը, նրա Աղասին իր խմբով ուրիշ ոչինչ չէ, եթե ոչ հայդուկների մի հրոսակ։

Դեռևս մոտ ժամանակներում հայտնվեցան եթե ոչ հայդուկներ, բայց նշանավոր ավազակներ, որպես էին՝ Դարաբաղցի Քեշիշօղլին, երևելի Աղիկյուպել պարակի ընկերը, Եզիկը, Եղնակը, Քոչոն, Ասատրևի ընկերը։ Դրանց գործերի մեջ, որքան լսել եմ, կա շատ ինչ բանահատեղծական և վիպական։ Բայց նրանց մոտ ծանոթները գոնյա չգրեցին նրանց կենսագրությունը։ Հայ ավազակապետները ռուսաց և պարսից պատերազմի ժամանակ, ռուսաց և տաճկաց պատերազմների ժամանակ[4], միշտ մեծ դեր են խաղացել հայ գեներալների ձեռքի տակ, որպես էին Մադաթովը, Բեբութովը, և այս վերջին պատերազմում[5] Լորիս Մելիքովը ու Տեր-Դավթասովը։

Տեսնելով, թե ինչ տպավորություն գործեց իմ «Ջալալեդդին» փոքրիկ վեպիկը ընթերցողների վրա, ես քաջալերվեցա իմ վաղվա գրած մի աշխատությունը լույս ընծայել, որ կրում է անունս «Հայդուկներ»։ Դա, որպես կասկած չկա ընթերցողը, հայդուկների մի խումբի հիշատակարան է, որ գոյություն է ունեցել մոտ 70 տարի առաջ, որի մասին դեռ երևելությունից ես շատ ավանդություններ էի լսել իմ հայրենիքում, և որի մասին տեղական լեգենդական զրույցները դեռ չեն կորել Վասպուրականի հայ ժողովրդի բերանից։

Ես նպատակ չունեի այսպես շուտ հրատարակելու այս աշխատությունը, ի նկատի ունենալով մի քանի թերություններ, որ պետք էր լրացնել, կրկին ճանապարհորդելով Վանի, Մուշի և առհասարակ վասպուրականի կողմերը, ուր հանդիսանում են մեր հայդուկները. ինձ պետք էին մի քանի վիպագրական ճիշտ տեղեկություններ, որոնք բռնել էին իմ հիշողությունից, գեթ 15 տարի առաջ ճանապարհորդած լինելով այն կողմերում։ Իսկ այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե մեզանում պակաս չեն եղել աղամարդիկ, որ ջղային թուրքերի լծի դառնությունը և շահատակին ազատ լինել։

Ես իմ աշխատությանը հիշատակարանի ձև տվի, որովհետև նրանք քաղել եմ մի իննսունամյա ծերունու պատմությունից, որ պահված էր նրա հիշողության մեջ, և որ ինքն իմ նկարագրած խմբի նշանավոր անդամներից մեկն է եղել։

1879

ՀԱՅ ԿԻՆԸ

«Կինը է այն առանցքը, որի շուրջը պտտվում է բաղաքակրթությունը»:

Ինձ շատ անգամ պատահել է կարդալ հատ ու կտոր հոդվածներ հայ կնոջ մասին, շատ անգամ տեսել եմ նրա նկարագիրը փոքրիկ վեպիկների մեջ, բայց այդ բոլորն այն աստիճան անկատար են եղել և այն աստիճան հարևանցիորեն նկարագրել են նրա տիպը, որ հազիվ թե ընթերցողը կարող էր ծանոթանալ ընդհանուր գծերի հետ։ Առհասարակ շատ սխալ կարծիքներ են կազմվել արևելքի կանանց մասին ընդհանրապես, իսկ մեր մեջ հայ կնոջ մասին՝ մասնավորապես։ Մինչև անգամ նշանավոր հեղինակները, կամ պոեզիայով հափշտակված, նրանց պատկերացնում են որպես հարեմի զարդարանք, որպես ընտանեկան սրբարանի կուռք, և կամ բոլորովին արհամարհելով, «սարուկ» բառը տեղի և անտեղի կպցնում են նրանց ճակատին։ Եթե «կինը է մարդկային ընկերության գլխավոր քաղաքակրթիչ տարերքից մեկը», որպես ասում են գիտնականները, ուրեմն պետք է լավ ուսումնասիրել նրան։ Եվ այդ կլինի իմ հետազոտության նպատակը։

Ա.

ԳԵՂԶԿՈՒՀԻՆ

Ես սկսում եմ գյուղացի կնոջից և գլխավորապես ի նկատի ունեմ Կովկասի հայ ազգաբնակությունը։ Բայց խնդիրն ինքնըստինքյան շատ դժվարին է, մանավանդ այն պատճառով, որ Կովկասի հայ ժողովուրդը բաղկանում է զանազան տարերքից, առավել Տաճկաստանի, Պարս-

կատաղի և ուրիշ երկրների գաղթականներից, որոնց մեջ որքան խառնուրդներ կան, այնքան ավելի բազմատեսակություն կա թե՛ բարքերի, թե՛ սովորությունների և թե դեմքերի վերաբերությամբ։

Կյանքը դեռ բոլորովին չէ միակերպվել, և այս պատճառով անհնարին է մի որոշ դասակարգի ներքո զետեղել ամենին։ Բայց բացառությունները միայն ցույց տալով, մենք դարձյալ կատանանք մի ամբողջ նկարագիր, որովհետև ընդհանուր գծերը բոլոր գյուղացի կանանց մոտ իրանց պատմական հատկանիշներով համարյա մնացել են միևնույնը։

Շատ անգամ մարդ զարմանում է, մանելով մի մեծ գյուղական ընտանիք. նա բաղկանում է քսան, երեսուն և երբեմն քառասուն հոգուց. դա մի փոքրիկ պետություն է, որի մեջ տիրում է խորին ներդաշնակություն։ Ամենը պապերը դարեւոր հասակներով, թվով մի քանի եղբայրներ, դեռ կենդանի են, կենդանի են և ծերունի պառավները։ Նրանց շրջապատել են որդիները, թոռները, ծոռները, մի քանի սերունդ իրանց կնիկներով և զավակներով։ Ընտանիքի պետը համարվում է նա, որ հասակով ամենից ավագն է, այսինքն՝ «մեծ պապը». բոլոր անդամները հպատակում են նրա հեղինակությանը։ Նրանից հետո երկրորդ տեղն է բռնում մեծ տատը, որի իշխանությունը տարածվում է ավելի կանանց հասարակության վրա։ Եվ եթե դրանք չկային, «մեծ պապին» հաջորդում է եղբայրներից երեսը, իսկ պառավ տատին՝ մեծ հարսը, այսինքն՝ երեց եղբոր կինը։ Հնազանդությունը մինը մյուսին ընտանիքի փոքրիկից սկսվում է աստիճանաբար դեպի բարձր, մինչև հասնում է այն անձինքներին, որ համարվում են դերդաստանի գլխավորները։ Կանանց սեռը (բացի պառավ տատից) զրկված է ձայնի իրավունքից։ Այդ նախադասությունը պետք է հասկանալ իր բառացի նշանակությամբ. նրանք ոչ միայն չեն կարող խորհրդակցել տան պետքերի մասին, այլ խոսելն անգամ արգելված է նրանց։

Այդ ընդհանուր նկատողությունից հետո ընտանիքի կազմակերպության մասին, ես դառնում եմ դեպի գեղջկուհին, սկսելով նրա ծնունդից։

Գեղջկուհին չէ ծնում դաշտումը, բայց օդի ներքո, խոտի դեղի տակ, թուփերի կամ արտի մեջ, և երկունքից հետո անմիջապես սկսում իր աշխատությունը, որպես այդ լինում է մինչև անդամ բավական քաղաքակիրթ ազգերի գյուղացիների մեջ։ Ծնունդը մոտենալու ժամանակ մոր վրա խնամք են տանում, նրան հեռու են պահում ծանր աշխատություններից, թույլ չեն տալիս, որ շալակ վեր առնի, կամ աղբյուրից ջուր բերի։ Երբ ծնավ, մինչև մանուկի մկրտվելը, որ սովորաբար տեւում է յոթն օր, մայրն անկողնի մեջ պառկած է մնում։ Եթե ծնունդը տղա էր,

նրա անկողինը շրջապատում են մի խումբ պառավներ, որոնք գործ են դնում իրանց ամբողջ կախարդական արհեստը մոր և նորածին մանուկի կյանքն անվնաս պահելու «չարքերից», «ալքերից», «քաջքերից», «դևերից», «մեղնից աղեկներից», «սատանաներից» և այլն։ Մանուկի օրորոցը նույնպես զրահավորում են բժժանքներով, հուռութքներով, մահեկներով և մինչև անգամ տերտերի դրած «բըթիկներով»։ Իսկ աղջիկը զուրկ է մնում այդ նախախնամություններից։ Գյուղացին ծնունդի վրա չէ նայում որպես մի բնական երևույթի վրա, այլ նրա մասին ունի բազմաթիվ նախապաշարմունքներ։ Կնոջ անպտղաբերությունը նախատինք է համարվում, և այս պատճառով ամեն մի ծնունդ, մանավանդ աղայինը, թե աղամարդի և թե բարեկամի կողմից ընդունվում է ուրախությամբ։ Մորը կերակրում են արտաքո կարգի սննդարար կերակուրներով, որոնց մեջ առաջին տեղը բռնում է մեղրով պատրաստած ձվածեղը, որը նա սատանում է հարևաններից։ Իսկ աղջկա ծնունդը հանդիպում է խուլ դժգոհության, բարեկամները չեն գնում շնորհավորելու, կամ որպես ասում են՝ «աչքալուսանք» տալու ծնողներին։ Մեր գեղջկուհիքն ըստ մեծի մասին պտղաբեր են լինում, նրանք ծնում են երբեմն մինչև 40—45 տարեկան հասակը։ Ամուլ կինը պատիվ չունի որպես ընտանիքի, նույնպես և հասարակության մեջ. նրա վրա նայում են որպես չրերք կովի վրա։ Գյուղացին շատ անգամ պարծենում է իր որդիների բազմությունով, որպես իր կապիտալով։ Եվ որքան ավելի աճում է կնոջ զավակների թիվը, այնքան նա կշիռ և իրավասություն է ստանում ընտանիքի մեջ. «Ես տասն աղամարդի մայր եմ»,— լսվում է շատ անգամ նրա բերանից։ Բայց ափսո՜ս, որ երեխաների չափազանց մահացությունը, որ առաջ է գալիս վատ պահպանելուց, չեն թախտավորեցնում ամեն մայրերին։

Մայրն ինքն է ծիծ տալիս զավակին, իսկ եթե նա տկար էր, կամ կաթը պակաս էր, օգնում են հարևան կնիկները։ Ծննդյան հետո մայրը մինչև Բառասուն օր ցերեկով իր օթևանից ոտքը դուրս չէ դնում, «արևի երես չէ տեսնում», այլ «քառասունք» է պահում։ Նա դուրս է գալիս, երբ արեգակը մայր է մտնում, մութը բավական պատում է, այն ժամանակ կտուրի վրա կամ բակում կարող է մեն գալ, բայց հարևանի տունը գնալ չէ կարող։ «Քառասունքն» ունի խորհրդական նշանակություն ծննդաբերության վերաբերությամբ, որը կապված է զանազան անհավատություններ հետ*։ Բայց թեև դա մի կողմից վնասում է կնոջ առողջու-

* «Քառասունքի» սովորությունն այժմ շատ տեղերում անհետանալու վրա է։

Թյանը, մինչև քառասուն օր փակված պահելով տան չորս պատերի մեջ, իսկ մյուս կողմից բավական նպաստում է մորն ամրացնելու իր սպառված ուժերը և հետու մնալով դաշտային ծանր աշխատություններից, որ կարող էին վնասել նրան ծնունդից հետո։

«Աղջկա երևսը պինդ կլինի,— ասում է դյուղացին,— նրան էլի ջրաղացի քարի տակն էլ գցես, էլի ողջ կդուրս գա»։ Այս պատճառով նրան համարյա թե թողնում են բախտի կամքին։ Աղջկա խնամատարությունը սկսյալ ծնունդից այն չէ, ինչ որ տղաներինը։ Նրան շատ անգամ ձգում են տանը բոլորովին մենակ, կապած օրորոցի մեջ, մայրը չէ վեր առնում իր հետ, որ չխանգարեր դաշտային գործերում, ողորմելին ամբողջ օրը ճչում է, աղաղակում է, մինչև ձայնը խռպատ կսըրվում է։ Խիստ սակավ է պատահում, որ հարևանի կինը նրան օգնության հասնի։ Պատահում է ևս, որ փոքրիկ երեխան օրորոց էլ չունի, նրան թողեցին տանը գնած մի շորի կտորի վրա, հանկարծ նա զարթնում է և լաց է լինում. մայրը չկա. նա սկսում է սողալ հատակի վրա, կարծես թե պտրելու մորը, և այսպես հասնում է թոնրի մոտ, մի շարժում բավական է, որ նա ընկնի այդ կրակի խորի մեջ... Ինձ շատ անգամ է պատահել տեսնել դյուղերում կիսով չափ խորովված երեխաներ, կամ չափահասներ, որոնց երեսի և ձեռների վրա դեռ երևում են վերքի նշանները. երբ հարցնում ես պատճառը, պատասխանում են, թե՝ երեխայության ժամանակ ընկել եմ թոնրի մեջ։ Ընկնողները մեծ մասամբ ածուխ են դառնում։ Բայց աղջկա մահը, ինչ կերպով և հասնելու լիներ, պատճառում է ծնողներին նեղքին բավականություն։ Ավելորդ բեռը հեռացվում է ընտանիքից։

Երբ երեխան մեկ տարին լրացնում է, մայրը նրան իր հետ է առնում, երբ պետք էր գնալ դուրսը գործելու։ Այդ նրան շատ դվարճացնում է։ Նստած մի ծառի ներքո, դալար խոտերի վրա, նա հանդարտ և հետաքրքիր աչիկներով նայում է մոր աշխատությանը։ Շատ անգամ այնքրևը և կարկուտը պատահում են նույն դրության մեջ, և փոքրիկ գեղջկուհին երեխայությունից սկսում է սովորել եղանակների խստությունները։ Ամեն անգամ, երբ լաց է լինում նա, մայրը աշխատում է հանգստացնել ապտակներով։ Մի անգամ ևս տրիճ ունեցա հարցնել մորից, որ սաստիկ ծեծում էր երեխային, անդադար կրկնելով՝ «սո՛ւս», սո՛ւս», թե ինչո՞ւ է այնպես վարվում։ Նա բավականին սառնասրտությամբ պատասխանեց- «Ծեծում եմ, որ ձենը կտրի»։ Թեև յավի սաստկությունից նա ավելի լաց էր լինում, ավելի ճիչ էր բարձրացնում, բայց մայրը չէր ուզում հանկանալ, թե ինչն է պատճառը։ Բայց աղջիկը շու-

ում է հաշտվում իր վիճակի հետ. նա մանկությունից հասկանում է. թե ինքն իրավունք չունի պահանջել, որ իր հետ մեղմ լինեին, քաղցրությամբ վարվեին, որովհետև նա աղջիկ է։

Երբ փոքրիկ դեղջուկին սկսում է ոտքի վրա կանգնել, մանգալ, մայրը այլևս չէ նայում նրա վրա։ «Նա իր գլուխը կպահա»,— ասում են և թույլ են տալիս մենակ անից դուրս գալ և դյուղական երեխաների հետ խաղալ փոշիների և ցեխերի մեջ։ Փույթ չէ, եթե ամբողջ օրը նա չէր վերադառնա, նրան մինչև անգամ մոռանում են և ուրախ են, որ տանը մար գործերը չէր խանգարում։ Իսկ 4—5 տարեկան հասակում նրան արդեն տղաների հետ խաղալ։ Դյուղերում շատ անգամ պատահում են բոլորովին մերկ երեխաներ, որ թափառում են փողոցներում արևոտկի այրող ճառագայթների ներքո, կամ թավալվում են ճանհիճների ու մորուտների (лужа) մեջ. բայց նրանց թվում հազիվ թե կարելի է մի աղջիկ տեսնել նույն դրության մեջ։ Սեռական խտրությունները, սկսյալ մանկությունից, սովորեցնում են փոքրիկ աղջիկներին տղաների մոտ արձակ չլինել։ Ո՞վ չէ տեսել Թիֆլիսում, Սաղի վրա, մալականի աղջիկները և կնիկները, տղամարդերի հետ խառն, բազմության աչքի առջև, լողանում են Կուր գետի մեջ։ Բայց մեր գյուղերում անկարելի է տեսնել, որ մինչև անգամ 4—5 տարեկան աղջիկներն իրանց հասակակից տղաների հետ լողանային առվակների մեջ։ Աղջիկները լողանում են իրանց սեռակիցների հետ և ընտրում են առհասարակ ծածուկ տեղեր, կամ երբ մութը բավական պատել էր երկրի վրա։ Տղաները, թեև ավելի սիրվում են ծնողներից, բայց միշտ կտեսնեք նրանց կիսամերկ, կեղտոտ և պատառոտած շորերով։ Բայց աղջիկը, չնայելով իր սուր նշանակությանը, համեմատաբար ավելի մաքուր հագնված է լինում, նրա վրա մերկություն չէ նշմարվում, այս դեպքում ծնողները նրան չեն ղրկում։

Աղջիկն արդեն յոթ-ութ տարեկան է. հասել է ժամանակը, որ պետք է մի բան սովորի։ Դժբախտաբար մեր գյուղերում դեռ չկան աղջկանց դպրոցներ, և եղածներն այնքան փոքրաթիվ են, որ պետք է բացառություն համարել։ Նրանց ուղարկում են շատ գյուղերում մի տեսակ կանանց մոտ, որ կոչվում են «ուստա» (վարպետ), որոնք վարժուհու պաշտոն են կատարում։ Վարժուհու մոտ օրվա մեծ մասը աշակերտուհիները զբաղված են լինում նրա տնային գործերով. դա մի կողմից վարժեցնում է նրանց տնտեսության մեջ։ Երբ գործերը վերջացել էին, վարպետուհին նստեցնում է նրանց իր բոլորտիքը և սովորեցնում է կարել,

հյուսել և ուրիշ ձեռագործություններ։ Կարդալ նրա մոտ չեն սովորում, որովհետև խիստ հազիվ է պատահում, որ այդ տեսակ վարժուհիները դրագետ լինեին։ Վարպետուհին և դաստիարակի պաշտոն է կատարում, ծեծում է և պատժում է իր սանիկներին, երբ նկատում է մի անկարգություն։ Ամեն մի այսպիսի վարժուհու մոտ հավաքված են լինում հնգից մինչև տասն կամ ավելի աշակերտուհիներ, որոնց ծնողներից ստանում է նա իբրև վարձ տուն օրերում զանազան ընծաներ։ Այստեղ աղջիկը պատրաստում է այն բոլոր հագուստները և ուրիշ ձեռագործները, որ պահվելու ժամանակ պետք է օժիտը կազմեին։ Եվ այս պատճառով վարժուհին ստանում է տասնձին պարգև փեսայի կողմից, երբ հարսանիքի ժամանակ նորահարսի ձեռագործները հանդեսի էին տրվում և կնիկներից հավանություն էին գտնում։ Վարժուհիները լինում են ըստ մեծի մասին փորձված և հասակ առած կանայք. նրանք շատ անգամ գործելու միջոցին իրանց սանիկների ուշադրությունը զբաղեցնում են հնքիաթներով, առակներով և առածներով, իսկ երբեմն բացատրում են աշակերտուհիներին զբաղեցնող երևույթները, կամ մեկնում են նրանցից։ Այս շկոլայից նրանց գլուխները լիցվում են անթիվ նախապաշարմունքներով։ Աղջիկները երթևեկում են վարժուհու մոտ մինչև իրանց մարդի գնալը։ Պատահում է, որ աղջիկներին վարժուհու մոտ չեն ուղարկում. նրանք սովորում են տանը կամ մոր և կամ հարևաններից մեկի դաստիարակության ներքո և կամ ոչինչ չեն սովորում։

Չի կարելի մի քանի խոսք չասել գյուղական օրիորդաց դպրոցների մասին. նրանց երկու տեսակի կարելի է բաժանել. մեկը շատ չէ վաղանցուկ մեր վերոհիշյալ վարպետուհու դպրոցից. մի կին, որ հազիվ գիտե գրել-կարդալ, հավաքում է իր մոտ աղջիկներ և սկսում է ուսում տալ. նրանք նստած են լինում հատակի վրա, նույնպես շարված վարժուհու բոլորտիքը, կամ խոսում են, կամ կարդում են։ Մյուսը, որ կոչում ենք կանոնավոր դպրոց, ուր աշակերտուհիները երկար նստարանների վրա են սովորում, կավիճով են գրում, ուր վարժուհին միայն հսկող է, իսկ դաս են տալիս վարժապետները, այսպիսի դպրոցներ մի քանի գյուղերում միայն կարելի է գտնել։ Առհասարակ գյուղացին նայում է դպրոցին որպես մի անբարոյականացնող հիմնարկության վրա։ Այս կարծիքին պատճառ է ունեցել նախ ընտանեական փակ կյանքը, որ չէ նեղում հասակ առած աղջկան հրապարակ հանել, երկրորդ, դպրոցում սովորած աղջկա անմիաբանությունն ընտանիքի նահապետական պայմանների հետ, իսկ երրորդ, դպրոցների վատ կազմակերպությունը և մասամբ՝ վարժապետների դայթակղեցուցիչ վարքը։ Ոչինչ այնպես չէ

կոտրում մի լավ հիմնարկության նշանակությունը ամկի աչքում, որ-պես նրա մեջ գործողների չար օրինակը։ Գյուղացին իր աղջիկը տալիս է դպրոցը շատ փոքր հասակում, այսինքն՝ այն հասակում, որ նրան կարելի է ամեն մարդու մոտ ծողնել։ Բայց հենց որ աղջկա կուրծքը բարձրանում է, նա 12—13 տարեկան է դառնում, իսկույն դուրս է բե-րում, ամենևին չնայելով, թե ոչինչ չէ սովորել։ Նա սովորում է, իրավ, մասնավոր գրել-կարդալ, որը հոր տունը դառնալուց հետո անգործա-ծությունից համարյա մոռանում է։ Լինում սակավ են այն դպրոցները, ուր ուսուցանում են հաշվել, աշխարհագրություն և քրիստոնեական վար-դապետություն։ Մեր գյուղական դպրոցների անբավականացուցիչ վի-ճակը գլխավորապես այն բանի մեջ պետք է որոնել, որ թե աշակերտ-ները և թե աշակերտուհիքը երկար չեն մնում դպրոցում։ Վերջիններին, այսինքն՝ աշակերտուհիներին շուտ դուրս տանելու պատճառը հայրենի է, բայց տղաներինը բոլորովին այլ է, ծնողքը կամենում են օգուտ քա-ղել նրանց աշխատությունից իրանց գյուղատնտեսական գործերում, և այս պատճառով տարվա այն եղանակներում, երբ դաշտումը աշխատու-թյուն կա, մանուկներին չեն ծողնում դպրոցում։ Նա սովորում է գլխավորապես ձմեռը և տարվա մնացած ժամանակում սովորածը մո-ռանում է։

Աղջիկից շատ գործ չէ պահանջում գյուղացին, միայն մտածում է շուտ մարդու տալ։ Եթե դպրոցը նպատակահարմար լիներ, գյուղացին կցանկանար, որ իր զավակն այնտեղ պահվեր մինչև պսակվելը։ Նա կթողներ աղջկան դպրոցում, որպես մինչև մարդու գնալը ծողնում է վերև հիշած վարպետուհու մոտ, և բնավ կասկած չէր ունենա, թե իր զավակը կփչանա այնտեղ։ Բայց ինչ պետք է արած, որ աղջկանց դպրո-ցները նպատակահարմար լիներին։ Իմ կարծիքով կրթության գործի մեջ պետք է ի նկատի ունենալ ժողովրդի սովորությունները, քանի որ ժողովուրդը դեռ անպատրաստ է համարում իր աղջկա վիճակը տղամարդ-վարժապետի ձեռքը հանձնել, քանի որ այս վերջինն այնքան անընդու-նակ է, որ իր պաղվությամբ չէ կարողանում ամկի վստահությունը շա-հել. մնում է մի հնար գյուղացի աղջիկներին դպրոցի հետ կապելու, այն է, որ փոխանակ տղամարդերի, կանայք լինեին նրանց ուսուցիչ-ները։ Ես այդ փորձով գիտեմ, որ կանանց մոտ գյուղացի աղջիկներն ավելի լավ են սովորում և ավելի ազատ են զգում իրանց, մինչդեռ տղա-մարդերի մոտ սեղմված են և անհամարձակ, մանավանդ կոշտ-կոպիտ մեր «խալիֆաներին» մոտ, որ պատժական քանոնը ձեռքից չեն գցում, չնայելով, որ քնքուշ սեռի հետ գործ ունեն։ Ես դեռ մի օրիորդաց դպրոց

եմ ճանաչում, որ նախակրթականի մեջ միայն աղջիկները տղաների հետ խառն են սովորում, բայց բարձր դասարաններում բաժանվում են։ Յանկալի կլիներ, որ բոլոր գյուղական դպրոցներում աղջիկները և տղաները միասին սովորեին. դա երկու օգուտ կունենար, առաջինը, որ ժողովուրդը փոխանակ երկու դպրոցների՝ կպահեր մեկը միայն և աղատ կմնար ավելորդ ծախսերից, իսկ երկրորդը, աղջիկները և տղաները միասին սովորելով կընտելանային միմյանց, այսպիսով կկազմվեր նրանց մեջ բույր-եղբայրությունը, կլիներին մեկ ընտանիքի՝ դպրոցի զավակներ, և դա միայն կարող է փշրել մեր մեջ տիրող հին նախապաշարմունքի կապանքը, որ աղջկանից պատրաստում է կանանոցի ծերի և խլում է նրանց տղամարդի հասարակությունից։ Եվ այս տեսակ խառն երկսեռ դպրոցներն ավելի լավ կլիներ, որ կանանց ձեռքը հանձնվեին։ Մեր գյուղերում բարոյականության դեմ ամենեին վատնդ չէ կարելի սպասել դպրոցների հիշյալ կազմակերպությունից, որովհետև թե՛ աշակերտները և թե՛ աշակերտուհիները շատ փոքրիկներ են լինում, բացի դրանից, գյուղական երեխաներն ավելի անմեղ և համեստ են լինում, քան թե քաղաքացիները։

Խոսենք այն ժամանակի մասին, երբ ծնողքը փոքրիկ աղջկան դուրս են տանում դպրոցից, կամ վերև հիշած վարժապետուհու տնից։ Դա նրա հասակի փոթորկային ժամանակն է։ Աղջիկն այժմ 13—14 տարեկան է։ Այդ տարիներում հասունանում է նա, և մինակ տնից դուրս չեն թողնում։ Նա գնում է այգին, պարտեզը, դաշտը մոր հետ միասին, կամ տան հարսներից մեկի հետ։ Միշտ երկու հսկող աչքեր անպակաս են նրա մոտից։ Նա գնում է աղբյուրից ջուր բերելու հարևանների աղջիկների հետ. մի քանիսը միայն հավաքվում են և խումբ են կազմում, դրա համար որոշված են վաղ առավոտյան և երեկոյան պահերը, երբ փողոցները դատարկ էին մարդիկներից։ Հսկողությունը թեև կատարվում է խստությամբ, բայց աղջիկը չէ նեղանում և ոչ կարող է երևակայել, թե դա անվայելուչ էր։ Նա այնպես համոզված է, թե այլ կերպ լինել անկարելի էր, թե իր հասակում անպատշաճ էր աղջկան մինակ տնից դուրս գալ կամ հետու տեղ գնալ, և անտրտունջ խոնարհվում է սովորության առջև։ Աղջիկը միշտ իրան այն դալար ծառի դրության մեջ է զգում, որ առանց նեցուկի իսկույն ցած կընկնեի։

Բայց կան գյուղեր, ուր համեմատաբար արձակ է կյանքը, այստեղ ամենայնիվ չենք տեսնի հասակ առած աղջկան մինակ դաշտումը, բացառությունները շատ աննշան են։

Իսկ ինչ որ վերաբերում է ընտանեկան կրթությունը, նա միանգամայն պայմանավորվում է աղջկա ապագայի հետ, նրանից նախապատրաստում են մի կրավորական էակ, որպիսին պետք էր մի նահապետական դերդաստանի անդամ լինելու համար։ Հնազանդությունը, լռությունը, ամոթխածությունը և պարկեշտությունը նրա վարքի անպայման օրենքներն են։ Նա տնեցիների հետ շատ սակավ է խոսում, իսկ օտարների հետ ամենևին չէ խոսում։ «Այնքան լավ աղջիկ է, որ միսը կտրես, ձայն չի հանի»,— դա ամենամեծ գովասանքն է նրա բարքի մասին։ Բոլորովին չինական տպավորություն է գործում, երբ հանդիպում ես գյուղացի աղջկան մինակ կամ մոր հետ փողոցում գնալիս, նա աչքերը գցած ունի դեպի գետին, մարդի երեսին ուղիղ չէ նայում, այլ մի կողմ է քաշվում, կանգնում է, խորին կերպով գլուխ է տալիս և սպասում է մինչև տղամարդն անցնի։ Փույթ չէ, եթե նա անծանոթ մարդ լիներ։ Այսպես վարվում են և ամենափոքրիկները, և հասակավոր կնիկները։ Մի գյուղում ինձ պատմեցին, թե աղջիկներն ու կնիկներն առաջ ավելի համեստ էին, երբ փողոցում տղամարդին հանդիպում էին, բացի գլուխ տալը, մոտենում էին և նրա ձեռքը համբուրում էին։ Այդ արդեն չափից դուրս է, որ մեր պարտավորությունը նրանք կատարեին։

Աղջիկից շատ սակավ են պահանջում դրսի գործերը, նա ավելի աշխատում է տնային տնտեսության մեջ, կամ որպես ասում են, պարապվում է «օջախի» չորս կողմը։ Այդ բանի մեջ նա հլու ապաստուհի է. նրան միայն հրամայում են «այս բե՛ր» և «այն տա՛ր». իսկ միջամտություն գործել կերակուրների պատրաստության մեջ, նա չէ կարող, այդ իրավունքը պատկանում է հասակավոր կնիկներին։ Գյուղական խոհանոցի ցուցակը բավական ընդարձակ է, քան թե ահռասարակ լինում է գյուղերում. բոլոր ուտելա կերակուրներն ունեն իրանց համապատասխանող պատվա կերակուրները։ Կանոնավոր տնտեսությունը բավական զարգացած է մեր գյուղերում, և գյուղացին, երբ կարողությունը ներում է, երբեք իր ընտանիքը կամ իր հյուրերին չէ զրկում ճոխ սեղանից, թեև նա միշտ մնում է խնայող։ Տնտեսությունից շատ բան է սովորում աղջիկն ընտանիքի մեջ նկատողական կերպով, և երբեմն նրան թույլ են տալիս պրակտիկաներ անել։ Եթե նա եղել է պարոցում, հոր տունը դառնալուց հետո գրքերը ծալում է և մի կողմ է դնում, բայց կորը, ձևը, հյուսելը նա շարունակում է ավելի եռանդով։

Ես դառնում եմ դեպի բարոյականությունը։ Երբ աղջկա հասակը տասնից անցնում է, նա սկսում է իր վրա մտածել. երբ տնից դուրս է գալիս՝ մազերը սանրված են լինում, աչքերը՝ սուրմայած, նա բավա-

կան մաքուր հագնված և լվացված է լինում։ Բայց անձնատուր լինել կրքերի նա երբեք չէ կարող։ Կյանքը սաստիկ անազատ է։ Աղջիկը կամ միշտ տանն է լինում, կամ եթե թույլ են տալիս դուրս գալ, նա առանց հսկողության չէ։ Այսպիսի պայմաններում, հասկանալի է, որ նա միջոց չի ունենա տղաների հետ արձակ հարաբերություններ ունենալու։ Ուրիշ ազգերի գյուղերում այսպես չէ. օրինակ, ռուսների մեջ հասակ առած աղջիկները կատարում են շատ դաշտային գործեր. նրանք գնում են խոտհունձ, գնում են արտը խուրձեր հավաքելու, անտառում մինակ սունկ են հավաքում, արածացնում են կովեր և հորթեր և արձակ դաշտերի կամ անտառների թաքստյան խուլ տեղերում միշտ հանդիպում են տղաներին։

Մեր գյուղերում այդպես չէ։ Ընտանեկան խիստ պայմաններն աղջկան երկաթի վանդակի մեջ են պահում։ Նա սիրո վրա մտածելու ոչ ժամանակ ունի և ոչ կարող է։ Թեև հասակը և բնազդումը շատ բան ուսուցել են նրան, բայց նա խեղդում է իր կրքերը սրտի մեջ։ Լինում են խիստ հազիվ դեպքեր, որ աղջիկը զոհ է դառնում կրքերի, և եթե նա մայր էր, իր նախատինքը թաքցնում է ինքնասպանությամբ։ Իրան թունավորելը կամ խեղդամահ լինելը հասակ առած աղջիկների մեջ պատահում է երբեմն։

Կյանքի պայմանները չեն մոտեցնում տղաներին և աղջիկներին մեկ-մեկու հետ։ Մեր գյուղերում չէ կարելի տեսնել, որ հասակ առած աղջիկներ խառն տղաների հետ խաղային փողոցներում կամ հրապարակների վրա, և կամ նստած միասին, գյուղական սովորության համեմատ, խոսակցեին տան դռների առջև։ Աղջիկները միշտ խաղում են իրանց սեռակիցների հետ, այն էս ծածուկ տեղերում, հեռու տղամարդի աչքից։ Եկեղեցին, որ պիտի միացներ նրանց, ենթարկվում է ընտանիքի սովորության պայմաններին. տղամարդերի և կանանց տեղերը որոշված են։ Բողյալ այդ, եկեղեցին հաճախում են պատավները միայն, իսկ աղջիկները և մանկահասակ կիները գյուղերում եկեղեցին գնում են տարվա մեջ մի քանի անգամ միայն, այսինքն՝ զատկին, երբ պետք էր հաղորդվելու։ Ուրիշ հասարակական հանդիսաներ չկան։ Երկու դեպքում միայն աղջիկները և տղաները կարող են տեսնել միմյանց, մեկը հարսանիքներում, մյուսը՝ եկեղեցիների տոնախմբության, կամ ուխտատեղացությունների ժամանակ։ Երկուսն էլ շատ նման են միմյանց՝ թե հարսանիքը և թե եկեղեցու տոնախմբությունը։ Ածում են, երգում են, պար են գալիս, կյանքը փոքր-ինչ արձակ շրջանների մեջ է մտնում։ Բայց այդ դեպքերում ևս աղջիկը դարձյալ ազատ չէ, նա կարող է պար

բռնել, երգել միայն իր աղգականների կամ մերձավոր բարեկամների հետ։ Աղջիկն այն ազատությունն է վայելում միայն, որ դեռ կին չդարձած, նրա երեսը չէ ծածկվում քողով, նրա աչքերը բաց են, կարող է նայել մեկի վրա, և կարող են ուրիշները տեսնել նրա դեմքը։ Այդ հնար է տալիս աղային գողանալ նրա դեմքից մի ծածուկ հայացք, մի ժպիտ... և իսկույն կազմվում է լուռ սիրահարությունը, թեև խիստ սակավ է պատահում, որ նրանք այնուհետև բախտ ունենային մյուս անգամ հանդիպել միմյանց, կամ պսակվել։

Վեպերում կարելի է տեսնել մեր գյուղական աղջիկների սիրահարությունները, բայց կյանքի մեջ դա սակավ է պատահում։ Եվ եթե լինում են դեպքեր, գործը վերջանում է առևանգությունով, այսինքն՝ աղայի՝ աղջկան հոր տնից գողանալով և, առանց ծնողների կամքի, պսակվելով։ Այսպիսի հանգամանքներում ժողովրդական բոմանտիզմը խիստ խստությամբ է վերաբերվում դեպի սերը. սիրահարների վարքը կծու պարսավներով երգվում է ժողովրդի բերանում։

Գյուղերում ամուսնությունները կատարվում են հաշիվներով։ Պսակվողների բախտը կարգադրում են ծնողները, որպես ցանկանում են։ Աղջկա և աղայի զգացմունքը տեղիք չունի գործի մեջ։ Պսակները լինում են միշտ հավասարը հավասարի հետ (կարեղության կողմից) և ավելի աղջկա ծնողքը աշխատում են, որ իրանց զավակը մեծ տան հարս լինի։ Այսուամենայնիվ, այդ ցանկությունը մնում է լուռ՝ ամոթ կհամարվեր, եթե աղջկա ընտանիքի կողմից առաջարկություն լիներ։ Բանակցությունն սկսվում է փեսայի հոր կողմից զանազան պատգամավորների միջոցով, և աղջկա հայրը, մինչև համաձայնելը, իրանից բավական խնդրել է տալիս։ Ամուսնությունները կատարվում են առհասարակ մինչև 15 տարեկան հասակը։ Գյուղերում հազիվ կարելի է տեսնել 18—20 տարեկան աղջիկներ, և եթե կային այսպիսիներ, անպատճառ նրանք խուլ ու մունջներ են, կամ խելագարներ։ Առհասարակ գյուղացին աղջկան երկար չէ պահում, աշխատում է շուտ ազատվել նրանից, որ իրան շատ զբաղեցնում է։ «Աղջիկը այն տեսակ պտուղ է, որ հասնելու ժամանակ փշանում է»,— ասում է գյուղական առածը։

Որովհետև ամուսնությունները միշտ հաշիվներով են լինում, այս պատճառով շատ անգամ պատահում են խիստ տարապայման պսակներ։ Օրինակ, աղջկա հայրը մի «լավ» փեսա չկորցնելու համար իր 5—6 տարեկան երեխան տալիս է մի չափահաս մարդու, կամ ընդհակառակն, իր 15 տարեկան աղջիկը ամուսնացնում է մի 4 տարեկան աղայի հետ։ Եվ մեր գյուղական քահանաները միշտ պատրաստ են մի

քանի աբասով այսպիսի պսակներ անել։ Երբեմն նշանում են աղջկան, երբ նա դեռ օրորոցումն էր, դա կոչվում է թուրքերեն բառով «բեշիկ-քասամա»՝ այսինքն՝ օրորոցում կտրած կամ վերջացրած։ Դուք չեք զարմանա, եթե ասեմ, որ երբեմն աղջկան նշանում են, երբ նա մոր արգանդից դեռ լույս աշխարհ չէր մտել։ Փեսայի հայրը ուխտ է դնում աղջկա հոր հետ, ասելով. «եթե քո կինը աղջիկ ծնի, նա պետք է իմ որդու հարսը լինի»։ Շատ անգամ երկու ընտանիքների մեջ հին առհմային թշնամութիւնները վերջանում են միմյանց աղջիկ տալով կամ առնելով*։ Երբ աղջիկն այսպիսի նյութական հաշիվների առարկա է դառնում, շատ հասկանալի է, թե նա որպիսի բախտի կհանդիպի, կամ ինչ կլինի նրա դրությունը ամուսնութիւնից հետո։ Ես ինքս վկա եմ եղել մի եղեռնագործութեան, որ կատարվեցավ մի գյուղում. մի հասակ առած աղջկա տվել էին մի փոքրիկ տղայի, որ մի հարուստ տան միակ ժառանգն էր։ Աղջիկը մի գիշեր անկողնի մեջ խեղդում է նրան։ Բժիշկները, քննելով աղջկան, գտան նրա մեջ խելագարութեան նշաններ, որ առաջ էին եկել սեռական բորբոքումից ուղեղի վրա։

Աղջիկներն առհասարակ վաղ են մարդու գնում, և այդ գլխավորապես պահպանում է նրանց բարքի ապականութիւնից։ Օժիտի սովորութիւնը դեռ մտած չլինելով մեր գյուղերում, բավական հեշտաց-

---

* Մի ծերունի Սյունյաց երկրից պատմում էր, թե ինքը տեսել է, որ Ղարաբաղի գյուղերում աղջիկներին մի ժամանակ պսակում էին գրպակի վրա։ Ինձ ծիծաղելի երևաց այդ խոսքը։ Բայց երբ նա բացատրեց պատճառը, ես համոզվեցա, թե կարող էր այսպես լինել։ Պարսիկների բռնակալութեան ժամանակ, երբ խաներն առևանգում էին հայոց աղջիկներին, որը գեղեցիկ էր, ծնողները շտապում էին նրանց շուտով պսակել տալ մի տղայի հետ, որովհետև ամուսնացած կնոջը չէին հափշտակում, այլ իրանց հարեմի համար ընտրում էին միայն կույս աղջիկներ։ Պատահում էր, այն տղան, որի հետ կամենում էին պսակել աղջկան, գտնվում էր հեռու գյուղում, կամ պանդխտութեան մեջ, և պսակի խորհրդին ներկա լինել չէր կարող։ Այն ժամանակ փեսան իր փոխարեն ուղարկում էր իր գրպակը, որը մի ձողի գլխին ցցելով, հարսի հետ տանում էին եկեղեցին և կատարում էին ամուսնութեան խորհուրդը։ Այդ բանը, առաջ գալով դեպքերի ստիպմունքից, հետզհետե սովորութիւնների կարգն անցավ։ Ոամկի մեջ առհասարակ գրպակը գլխի կամ անձնավորութեան նշանակութիւն ունի. «Գրպակդ քեզ հարամ ըլի», «գրպակդ քաղեմ», «գրպակդ արնով տեսնեմ», այդ անեծքները սովորական են գյուղացիների մեջ։ Ինձ պատահել է տեսնել գյուղական խնջույքներում, երբ կոչականներից մեկը դուրս էր գնում, գրպակը գնում էր իր նստած տեղը, որ մյուսները երևակայեն, թե նա ներկա էր։ Մարդուն ամեն մի պատկանող իրը՝ նրա անձնավորութեան տեղ ընդունելու շատ օրինակներ կան։ Տեսնում ես, մի գյուղացի իր ծառային կամ որդուն ուղարկում է մի ուրիշ գյուղացու մոտ գործով. պատգամավորը հայտնում է նրա կամքը, ավելացնելով. «եթե չես հավատում, տե՛ս հորս մորուքի սանդրը»։ Շատերը սանդրի փոխարեն ուղարկում են մո-

նում է ծնողներին կատարել իրանց ցանկությունը, աղջիկներին շուտով ամուսնացնելու։ Շատ տեղերում դեռ մնացել է այն հին սովորությունը, որ աղջկա հայրը փոխանակ ինքը տալու, ստանում է փեսայի հորից փող կամ ուրիշ մթերք։ Դրա մեջ շատերը տեսնում են մի բարբարոսական առևտուր, իբր թե հայրը վաճառում է իր զավակը։ Բայց այդպես չէ։ Փեսայի հորից ստացածը ծախսում է աղջկա հայրը, գնում է զանազան հագուստներ և կարասիք, որը իր հետն է տանում նորահարսը՝ դարձյալ փեսայի տունը։ Աղջկա հայրը ոչինչ չէ շահում, գուցե մի բան էլ ավելի իր քսակից է դնում։ Առհասարակ ամուսնությունը, որպես մի նշանավոր պայման ընկերական կյանքի, արտահայտվում է մեր ռամկի մեջ այնպիսի ձևերով, որ ցույց են տալիս նրա խորին հասարակական նշանակությունը։ Ժողովուրդը համարում է նրան ընտանուրի գործ, և այդ դեպքում երևան է գալիս մինը մյուսին օգնելու փոխադարձ համերաշխությունը։ Ես կպարզեմ այդ ավելի որոշ կերպով։ Գյուղական հարսանիքները կատարվում են ձմեռը, երբ գինին հասունանում է, երբ գյուղացիք անգործ են և կարող են ազատ կերպով զվարճանալ։ Հարսանիքները հին սովորության համեմատ տևում են յոթն օր-յոթը գիշեր. այժմ թեև թևթևացել են, բայց դարձյալ ծանր են, առավելապես աղքատների համար։ Մի քանի օր գյուղի ամբողջ հասարակությունն ուտում, խմում և քեֆ է անում հարսանիքի տանը։ Հարսանիքի հանդիսակատարությունը կապված է բազմաթիվ ծեսերի և արարողությունների հետ։ Ամոթ է համարվում, եթե մեկը հետ կմնար հասարակաց սովորությունից։ Եվ սովորության հետևելը կարող էր պատճառել կատարյալ չքավորություն, եթե հասարակությունը չօգներ։ Եվ ահա ի՛նչ է լինում. աղջկա հայրը, որպես հիշեցի, այնքան ստանում է փեսայի հորից, որ համարյա ծածկում է իր ծախսերը, իսկ փեսայի հայրը ստանում է նվերներ ըստ մեծի մասին փողով իր զրացիներից, որ ընծայվում են հարսի անունով։ Դրանով նա ազատվում է հարսանիքի ծախսերից և այսպիսով մի զույգ պսակվում են հասարակության փողով, թեև փողը ստացվում է կողմնակի կերպով։

Կին լինելուց հետո աղջիկն իր ազատությունը բոլորովին կորցնում է։ Հոր տանը թեև նույնպես ճնշված էր, բայց դարձյալ ուրախ էր, որովհետև յուրայինների մոտ էր գտնվում։ Այժմ ընկել է նա մի անծանոթ շրջանի մեջ, ուր ամեն ինչ նրան օտար է։ Նույնիսկ փեսային նա նոր է տեսնում և տեսնում է միայն դիշերով։ Հոր տան ճնշումներն այստեղ ավելի բարդվում և բազադրյալ են դառնում։ Այնտեղ նա իրավունք չու-

ներ միայն օտարների հետ խոսելու, իսկ այստեղ չէ կարող ոչ ոքի հետ խոսել։ Իր փեսայի հետ նա խոսում է գաղտնի, երբ մի երրորդ անձն ներկա չէր, իսկ ընտանիքի մյուս անդամների հետ (բացի երեխաներից) խոսում է պոնտոմիմայով[1]։ Հոր տանը նրա երեսը բաց էր, կարող էր ազատ նայել դեպի աստուածո աշխարհը, իսկ այստեղ նրա դեմքը ծածկված է բանձր կարմիր քողով, ոչ ոքի ցույց տալ չէ կարող, մինչև անգամ իր փեսային, եթե նրա մոտ մի օտար մարդ կարւ կնոջ համար ասել՝ «երեսը բացված կին է», դյուղացու լեզվում միևնույն նշանակությունն ունի, որպես ասել՝ լիրբ է, անպատմ է։ Կնոջ այս «չխոսականությունը»*, այդ փորձությունը հին սովորությունների համեմատ շարունակվում էր յորը տարի, երբ այդ շրջանն անցնում էր, հասակավոր կնիկները հավաքվում էին և հանդիսավոր կերպով նրա «քողը փոխում էին», այսինքն՝ կարմիր քողի փոխարեն ձգում էին նրա երեսի վրա սպիտակը, և այն օրից նա արտոնություն էր ստանում երեսը կիսով չափով բաց անել և ընտանիքի մի քանի անդամների հետ խոսել, բայց ոչ սկեսուրի և սկեսրարի հետ։ Այժմ հիշյալ պաշտոնական ձևերը շատ տեղերում չեն կատարվում, այլ երբ կինը մի քանի զավակների մայր է դառնում, երբ նա իր մանկությունը անց է կացնում, այն ժամանակ կարմիր քողի փոխարեն սպիտակն է կրում, բերանը փոքր ատ փոքր բաց է լինում, և կարողանում է իր դեմքը, եթե ոչ օտարներին, գոնյա իր մերձավոր բարեկամներին ցույց տալ։ Կարճ ասած, կինը այն ժամանակ միայն հասարակության անդամ է դառնում (իր նեղ մարով), երբ պառավում է։

Խոսելով հարսանիքի միայն անտեսական կողմերի վրա, ես մոռացա մի բան։ Առհասարակ դյուղական հարսանիքն այնքան հետաքրքրիր խորհուրդներ ունի, որ պետք է նրա մասին մի փոքր մանրամասն խոսել, բայց դա իմ հետազոտության նպատակից դուրս լինելով, ես չեմ կարող լռել այն բանի մասին, որ վերաբերում է կին լինող աղջկա բարոյականությանը։

Ես կրկին վերադառնում եմ այն ժամանակին, երբ աղջիկը կին է դառնում։ Հարսի մորը փոխարինում է սկեսուրը։ Անձինքը փոխվում են, բայց դերերը մնում են միևնույնը։ Սկեսուրը մայր է դառնում, այն դառնալությամբ միայն, որ նրա մեջ մայրական գութը բոլորովին բացակա է դառնում։ Դա ավելի խիստ է, ավելի պահանջող է և ավելի

---

* Հունաստանում կար մի դպրոց, ուր աշակերտները մի որոշյալ ժամանակ պետք է միայն լուռ լսեին, խոսելու իրավունք չունեին։

դիտող է։ Ամբողջ օրը նա մրմնջում է, նրան գոհացնել անփորձ հարսը երբեք չէ կարող։ Պառավները դյուրագրգիռ են լինում, և նա միշտ բարկանում է։ Ոսկրների հետ նրա մեջ քարացել է և սիրտը։ Առավոտից մինչև կես-գիշեր հարսը պատվում է սկեսրոջ շուրջը, նրա պանապան հրամանները կատարելով։ Նա չէ կարող մի նշան անգամ ցույց տալ հոգնելու կամ դժգոհության։ Ամբողջ օրը նա անց է կացնում ոտքի վրա, իսկ գիշերն իր անկողինն է մտնում, երբ ընտանիքի բոլոր անդամները քնած էին. նա պետք է ամենի տեղերը պատրաստե, ամենին հանգստացնե։ Վաղ առավոտյան նա ոտքի վրա է, երբ բոլորը դեռ քնած էին։ Սկեսուրը զարթնելով, անպատշաճ է, որ նրան անկողնի մեջ տեսնե։ Նա այն աստիճան համբերող է լինում, որ շատ անգամ բավական ծանր հիվանդություններ տանում է ոտքի վրա, առանց պառկելու։ Նա ոչ ոքին չէ հայտնում իր տկարության մասին, գուցե դիտե ամուսին այրը, բայց նա նույնպես լռում է։ Հիվանդության պատճառով չդործելը՝ դյուղացի կնոջ մասին համարվում է ծուլության նշան։ Ամուսին այրը չէ կարող պաշտպան հանդիսանալ կնոջ տանջանքները թեթևացնելու համար։ Նվ մի՞թե նա կարող է հասկանալ, թե նրա կրածները տանջանք է. այդ զգացմունքը չէ տված դյուղացի մարդուն. նա վարվում է կնոջ հետ նույն անդթությամբ, որպես իր վարը վարող եղան կամ գոմեշի հետ։

Ամուսնության առաջին տարիներում հարսի գործունեությունն ավելի սահմանափակվում է տնային տնտեսության նեղ շրջանում, նրան խիստ սակավ են դուրս թողնում։ Թե նա այդին, պարտեզը կամ պաշարն է գնում, պառավ սկեսուրը կամ մեծ հարսներից մեկն իր հետ են լինում։ Այսպիսի հանդամանքներում հասկանալի է մանկահասակ հարսի բարոյականությունը։ Այս ասելով ես նպատակ չունեմ պաշտպանել այն միտքը, թե հարեմական դրությունը կարող էր բարոյականությունը պահպանել։ Բայց միևնույն ժամանակ պետք է նկատել, որ սիրահարությունների համար բավական ժամանակ և ազատություն հարկավոր է, որոնցից զուրկ է դյուղացի կինը։ Հոգնած և միշտ աշխատող մարմինը հեշտասիրության չէ զգում*։ Գյուղերում կինն այնքան անշքված է, որ ոչինչ ծածուկ չէ մնում։ Կնոջ մի համարձակ նայվածքը, մի բառ շատ սղամարդի հետ խոսքն բամբասանքի առարկա է դառնում։ Ամուսնական անհավատարմությունը խիստ հազվագյուտ է դյուղերում, և եթե

* Բացի դրանից, ընտանիքն այնպիսի խիստ բարոյական և հասարատան հիմունքների վրա է կազմված, որ կինը չէր կարող ԹԵՐև վարքի տեր լինել։

լինում են օրինակներ, պատժվում են մահով. խանդոտ տղամարդը ծածուկ կամ հայտնի սպանում է նրան, և հասարակաց կարծիքն արդարացնում է այդ եղեռնագործությունը։ Իսկ եթե ամուսինը համբերում է կնոջ անառակությունը, նրա ընտանիքը դուրս է ձգվում գյուղական հասարակությունից։ Դրանք զետեղվում են քաղաքներում։ Պետք է հիշել և այն, որ գյուղացի կինը սիրել չգիտե. նա միշտ երկու ծայրերի վրա է կանդնում, կամ լինում է հասարակաց կին, կամ իր ամուսնի կինը, սիրականներ պահելու նա ոչ շնորհք և ոչ հարմարություն ունի։ Նրա հարաբերություններն իր տղամարդի հետ նույնպես չէ կարելի ասել, թե սիրային բնավորություն ունեն. որպես նրա ձեռքերը կոշտացել են աշխատության մեջ, այնպես էլ սիրտը կորցրել է իր զգայականությունը։ Դուք չեք տեսնի գյուղացի կնկան, որ նա մինչև անգամ իր շատ մերձավոր բարեկամուհիների մոտ խոսեր ամուսնի վրա։ Երբ նրա մասին խոսք է բացվում, կինը համարձակություն չունի նրա անունն անգամ բացարձակ կերպով արտասանելու, այլ միշտ գործ է ածում «նա» դերանունը, կամ այսպիսի խոսք՝ «Ստեփանի հայրը», դրանով հասկանում են, որ իր մարդուն է ակնարկում, որովհետև Ստեփանը նրա որդին է։

Բայց պետք է նկատել և այն, որ բարքերի մաքրությունն առավելապես պահպանվում է այն գյուղերում, որոնք հեռու են քաղաքներից և որոնք մեծ ճանապարհների վրա դրված չեն։ Օտար ազգերը մտցրին մեր գյուղերում և օտար մոլություններ, որոնք առաջ ծանոթ չէին։ Այն օրից, որ գյուղերում հայտնվեցան գինեվաճառի դուքանները, անբարոյականության ժանտախտը տարածվել սկսեց, թեև ոչ ոք չէ տեսել, որ գյուղացի կինը մտներ դուքանը խմելու համար, կամ արբած ընկած լիներ փողոցում։ Բայց դուքանները քաշում են դեպի գյուղերը այնպիսի օտար և խորթ հասարակություն, որոնցից մեր կանայք լավ բան սովորել չէին կարող... Եվ այդ անբարոյականացնող հիմնարկությունները լինում են միայն մեծ ճանապարհների վրա եղած գյուղերում։

Ես եղել եմ Պարսկաստանում և Տաճկաստանում, այնտեղի գյուղացի հայ կանայք համեմատաբար ավելի բարոյական են, քան թե այստեղինները։ Ի՞նչով մեկնել այս երևույթը։ Իմ կարծիքով ուրիշ պատճառ չկա, քան թե այն, որ այնտեղ հայը կարողանում է պահպանել ընտանեկան մաքրությունն իր վաղեմի սրբության մեջ, թեև լինում են մահմեդականների կողմից առևանգություններ, բռնաբարություններ, բայց այդ դեպքերն ավելի առիթ են տալիս պահպանելու կնոջ անմատչելիությունը։ Բռնությունն առաջ է բերում ինքնապահպանություն, իսկ վտան-

գավոր է այն ազատությունը, որ իր հետ բերում է բարքերի ապականություն։ Այստեղ այդ կրիզիսի մեջն է գտնվում հասարակությունը։

Ես այժմ դառնում եմ դեպի կնոջ աշխատությունը, թե ինչով է օգնում նա տղամարդին գյուղատնտեսական գործերում։ Նորահարսի աշխատություններն ավելի թեթև են լինում, համեմատելով հասակ առած կնիկների աշխատության հետ։ Պառավ սկեսուրները նրանց շատ չեն նեղացնում դրսի գործերով և ավելի բանեցնում են տնային տնտեսության մեջ։ Այդ առաջ է գալիս մասամբ այն սովորությունից, որ մանկահասակ հարսին իսկույն դուրս թողնելը կարող էր վնասակար ազդեցություն ունենալ նրա վարքի վրա։ Այսուամենայնիվ, կանանց աշխատություններն ամեն տեղ միևնույնը չեն, նրանք փոխվում են, նայելով տեղային պահանջներին։ Այն գյուղերում, ուր բամբակի մշակություն կա, օրինակ, Երևանի նահանգում, կնիկները բոլորովին խեղդված են աշխատություններով, բամբակի մշակության մեծ մասը նրանց վրա է. «քաղհան» են անում, հավաքում են հասունացած կողակները[2], մաքրում են բամբակը կեղևից և կորիզներից, նրանից թել են մանում և այլն։ Այն գյուղերում, ուր այգեգործությունը զարգացած է, կնիկները գործ շատ գործ ունեն. պտուղներ հավաքելը, չորացնելը, խաղողի քաղելը, բոլորը նրանց գործն է։ Ագարակային բերքերի, պարտեզների, բանջարանոցների մշակությունը նույնպես կնոջ գործ է։ Կինը չէ մասնակցում միայն մանգաղի, բահի և արորի գործածության մեջ։ Տեղերի հարմարության համեմատ կնոջ աշխատությունն ավելի բարդվում է և բազմատեսակ է դառնում։ Մեր գյուղացին ծույլ չէ և ոչ ագետ, նա չէ բավականանում գյուղատնտեսության մի ճյուղովն միայն, երբ հող ունի և տեղային պայմանները ներում են, նա ընդարձակում է իր տնտեսությունը, միևնույն ժամանակ նա երկրագործ է, ցանում է ցորյան, գարի, կտավհատ, բունջութ, կանեփ, գերչակ[3] և այլն, և միևնույն ժամանակ այգեգործ է, գինեգործ է, անասնապահ է, այդ բոլորը ավելացնում են կնոջ աշխատությունը։ Գյուղերում, ուր վարում են կիսախաշնարածական և կիսաերկրագործական կյանք, կնոջ աշխատությունն ավելի բարդվում է. անասունների դարմանելը համարյա նրա վրա է մնում։ Նրանք կթում են կաթը, յուղ և պանիր են պատրաստում. նրանք խուզում են ոչխարները, բուրդից թել մանում, և իրանց ամուսինների համար հագուստ պատրաստում։ Մի քանի տեղերում կինն արհեստագործում է գեղեցիկ գորգեր, կապերտներ և շալեր, որ վաճառականության նյութ է դառնում։ Մեծ տարբերություն կա լեռնային և տափարակային տեղերի մեջ կնոջ թե կյանքի ձևերի և թե պարապմունքի վերաբերու-

Թյամբ։ Լեռնային սարավանդների վրա կյանքը դեռ չէ փոխվել իր նախնական ձևերից. մարդը դեռ ավելի հովիվ է, քան հողագործ։ Իսկ կինն ավելի մոտ է բնությանը։ Այստեղ նա ապրում է կատարյալ նահապետական պարզության մեջ։ Բայց դաշտային տեղերում, տափարակների վրա, կուլտուրայի աղդեցության ներքո, կնոջ աշխատությունը և կենցաղավարության եղանակը փոխվում են և ավելի բազմատեսակ են դառնում։

Առհասարակ խոսելով, գեղջկուհին շատ է զբաղված, բայց նա աշխատում է ոչ իբրև սարկուհի, որին մարակով վարում են դաշտը, այլ որպես ընտանիքի անդամ, որի հոգսերը նա բաժանում է։ Նա գիտակցաբար է գործում, և այդ է, որ չէ հոգնեցնում նրան։ Նա գիտե, որ ապրուստն աշխատություն է պահանջում, և չէ ցանկանում բոլորը ձգել տղամարդի վրա։ Տնտեսության մեջ կնոջ և տղամարդի աշխատություններն այն աստիճան որոշված են, որ ամեն մինը ճանաչում է իր պարտավորությունը, և երբեք միմյանց չեն խանգարում և ոչ հարստահարում։ Կյանքը ընտանեկան խիստ պայմանների մեջ մշակել է որոշ օրենքներ և կանոններ, որ պահպանվում են սրբությամբ։ Ել երեմ մենք ունենք այսօր դյուղացիներ, որ 50 և 100 հազարների տեր են, այդ պետք է որոնել նրանց տոկուն և անընդհատ աշխատության մեջ։ Մեր դյուղային ամբողջ տարին գործում է, մինչև անգամ Տիրոջ հանգըստյան օրերը նա չէ պահում։ Ձմեռը միայն կարողանում է նրան քշել տան ծածկի տակ, բայց այստեղ ևս անգործ չէ մնում։ Այսպիսի շարժուն գործունեությունը նրան նա է պահում շատ մոլություններից, և նա անձնատուր չէ լինում արաղի և արբեցության խնայողությունը, ապագայի հոգսը, որպես ամեն հայ մարդու, նույնպես և դյուղացու անտեսության հատկանիշն է։ Բայց զարմանալի տարբերություն է տեսնվում Վրաստանի հայ դյուղացիների և նրանց մեջ, որ մի ժամանակ պարսից տիրապետության ներքո են եղել. առաջինների մեջ նշմարվում է վրացու ծուլությունը և անհոգությունը, թեև համեմատաբար զարձյալ բարձր են վրացուց։

Ճորտությունը խլում է դյուղացուց աշխատության նռանդը, նրա ինքնագործունեությունը և միևնույն ժամանակ փչացնում ընտանիքի բարոյականությունը։ Ճորտությունը պատրաստում է դյուղացուց անատուն իր կատարյալ նշանակությամբ։ Այդ նշանները դեռ մնում են թե վրացի և թե ռուս դյուղացու վրա։ Բայց հայը ոչ մի տղդի տիրապետության ժամանակ ճորտ չէ եղել, և այդ է պատճառը, որ նա համեմատարար ավելի շատ է զարդացել ինքնագործունեության մեջ։ Մեր դյու-

ղացի կինը դիտեն արհեստագործել մինչև անգամ տնտեսական այն անհրաժեշտ պիտույքները, որ ուրիշ երկրներում ստացվում են գործարաններից, օրինակ, պանիր մակարդել, սապոն պատրաստել, մոմ թափել, միս ապխտել, մեղուներ խնամել և այլն։ Նա ծանոթ է մի քանի ներկերի հետ, որ ստանում է հանքերից, արմատներից և բույսերից։ Նա ծանոթ է մի քանի բժշկական դեղերի և հնարների հետ, և հարկավորված ժամանակ ինքն է հոգ տանում զավակների հիվանդությանը։ Բայց պետք չէ մոռանալ և այն, որ զանազան խուլ տեղերում, այսինքն՝ ճանապարհների հազորդակցությունից դուրս, տակավին հանդիպում են գյուղեր, որոնց մեջ կյանքը դեռ գտնվում է՝ եթե չասենք իր նախնական վիճակի մեջ, բայց կրում է խորին նահապետական կերպարանք։ Մարդիկ բնակվում են Քսենոփոնի նկարագրած գեռնավորների մեջ[4]։ Բայց դրանք այլևս գազաններ չեն. ուտում են հաց և մարմինները ծածկված են ըստ մեծի մասին իրանց ձեռքով արհեստագործած հագուստներով. շատերը նրանցից սեփականության տերեր են։

Այժմ ես դառնում եմ դեպի գեղջկուհու մտավոր զարգացումը։ Ընթերցողը թող հիշի այս հետազոտության սկզբում դրած փոքրիկ նկարագիրը, որ պատկերացնում էր գյուղական ընտանիքի կազմակերպությունը։ Կինը հպատակում է տղամարդին անպայման հնազանդությամբ, իսկ ընտանիքի բոլոր անդամները խոնարհվում են գերդաստանի երեցների առջև։ Կնոջ դերը բոլորովին կրավորական է, իսկ տղամարդինը՝ ներգործական։ Այդ դեպքում, հասկանալի է, որ կինը չէր կարող աղդող լինել և փափկացնել տղամարդի բարքի կոշտությունը։ Տղամարդը միշտ իրան բարձր է դնում կնկանից և միշտ այն համոզմունքն ունի, թե «կնկա ծամը երկայն է, բայց խելքը՝ կարճ»։ Տղամարդը կատարյալ տեր է, իսկ կինը՝ հպատակ։ Այսպեսով, նա չէ ծնծում կնկան. ծնծը և կռիվն առաջ են գալիս ավելի այն ժամանակ, երբ կինը իրան հավասար ատիճանի մեջ է դնում տղամարդի հետ։ Ընտանիքի կազմակերպությունը, որ ներկայում է կնոջն անպայման հնազանդության, որ խլում է նրանից ամեն ազատություն, որ ստիպեցնում է կուրորեն հետևել բոլոր բնդունված ծեսերին և սովորություններին, մի այսպիսի խիստ միապետական կազմակերպությունը անկարելի է որ չհասցներ կնոջը միակողմանիության, անշարժության և վերջապես՝ բթամտության։ Ավելացնենք աշխատությունը, անդադար և միակերպ աշխատությունը, որ շինում է կնկանից մի մեքենա, մի ողորմելի կրավորական էակ, այն ժամանակ կպարզվի նրա մտավոր վիճակը։ Ամեն մի կին իր մոր շարունակությունն է. նա անփոփոխ ավանդում է իր հաջորդին այն, ինչ որ

ստացել էր մորից։ Կնոջ խելքը և միտքը այսպիսի պայմաններում զարգանալ կարող չէր։ Անընդհատ և դժնդակ աշխատությունը, բացի խելքից, չէր կարող չաղդել դյուղացի կնոջ և մարմնական կազմվածքի վրա։ Նա խիստ շուտով է կորցնում իր թարմությունը. դեռ երևան չհասած, նա արդեն պառավել էր։ Եվ ինչն է ստիպում նրան պահպանել իր կանացիությունը. ամուսին այրը գործ է պահանջում և ոչ դեղեցկություն։ Խիստ սակավ կարելի է տեսնել, որ մինչև անգամ բավական կարողություն ունեցող տան կինը լավ հագնված լիներ։ Առհասարակ այն կինը, որ իրան մաքուր է պահում և լվացվում է, համարվում է կասկածավոր։ Մինչև այսօր գյուղերում կոշիկներն ընդունված են որպես զարդ և ոչ ոտնամաններ։ Մոտեցեք դյուղացի կնոջը, իսկույն ձեր բթին կխփի մի վատ հոտ։ Ինչից է այդ։ Ամեն օր թոնիրը վառում են կերակուրի և հաց թխելու համար, ամեն օր ամբողջ տունը լցվում է աֆարի կծու ծխով և մխով։ Խեղճ կինն այդ ծուխի մեջ ապուխտ է դառնում։ Հայ կնոջ աչքերը, որ բնությունից այնքան դեղեցիկ են, բոլորովին փչանում են ծխի և փոշու մեջ, և դուք շատ սակավ կտեսնեք առողջ աչքեր։ Ծանր աշխատության և ընտանիքի ճնշման ներքո կինը բոլորովին կորցնում է իր ուրախությունը. նրա երեսին երբեք ծիծաղ չեք տեսնի. նա միշտ տխուր է։ Նրա մեջ չկա բնավորության և այն զվարթությունը, որ հատուկ է մինչև անգամ վայրենիներին։ Ով գործ է ունեցել դյուղացի կնոջ հետ, գիտե, որ նրա մեջ սիրտը մեռած է...

Քաղաքներին մերձավոր դյուղերը, հարաբերություն ունենալով քաղաքացիների և համեմատաբար ավելի զարդացած հասարակության հետ, դուրս են տալիս մի քանի փոփոխության նշաններ։ Քաղաքի մոլությունները ներս են սողում դյուղական համեստ խրճիթներում նորաձևությունների հետ։ Թեյի գործածության հետ մտնում է և յուրկաների գործածությունը։ Կնիկների երեսները կամաց-կամաց բացվում են, նրանց բնթռանի փականքը բարձվում է։ Հասկանալի է վատնդը, երբ կյանքի այլափոխությունը սկսվում է հագուստից և կերակուրներից։ Այս տեսակ կանայք, որոնց կարելի է կոչել դյուղական մողնի խանումներ, մի ծիծաղելի խառնուրդ են ներկայացնում. նրանք «ոչ հայի խունկ են, ոչ թուրքի ուզարլիկ»*: Խոսացրու նրան, կտեսնես, որ նա ոչնչով չէ տարբերվում մյուս գռեհիկներից, բացի մի քանի լրբություններից, որ չես տեսնի իր նախնական ձևի մեջ մնացած կնոջ մոտ։

* Մի տեսակ բույսի անուն է, որ մահմեդականները ծխում են դեղամանների վրա, որը խիստ անախորժ հոտ ունի։

Այս բոլորից հետո կա մի բան, որ մեծ ապագա է խոստանում։ Գյուղացու ընտանեկան կյանքն իր հաստատուն հիմունքներով և իր բարոյական զորությամբ մի շատ արգավանդ հող է կրթության գործի համար։ Նրա մեջ կան անմշակ, բայց հարուստ ընդունակություններ։ Ես ոչ մի ուրիշ պատճառ չեմ ճանաչում, որ պահպանից Հային իր անհնախանձելի պատմության ներսից, բայց միայն ընտանիքի բարոյական զորությունն իր որոշ առանձնահատկություններով։ Դարերի սարկությունը և ճնշումը չէ բարացրել նրան այն աստիճան, որ անընդունակ լիներ մի նոր փոփոխության. այլ ընդհակառակն, կյանքի կռվի մրցությունը շինել է նրանից բավական գործնական մարդ։ Նա չափազանց էլաստիկային և դյուրաթեք բնավորություն ունի։ Այս պատճառով մենք չենք կարող ասել, թե ունենք գյուղական հասարակություն, այդ բառի ճիշտ նշանակությամբ։ Մեր գյուղացին գիտե հանգամանքներից օգուտ քաղել, նա կյանքի պայմաններին հետ այնպես շուտ հաշտվում է, և հարմարությանը նայելով, այնքան ճարպիկ կերպով փոխում է իր պարապմունքների ձևը, որ այսօր նա հողագործ է, մյուս օրը վաճառական է դառնում, հետո արհեստավոր և այլն։ Նվ ամեն գործի մեջ նրան հետևում է կինը։ Դուք կտեսնեք մեր գյուղացիներից ոչ միայն հարուստ վաճառականներ և արհեստավորներ, այլ ծառայողներ, աստիճավորներ, բժիշկներ, վարժապետներ և պրոֆեսորներ։ Մինչ հզոր պետությունները դժվարանում են պարտադիր ուսումը մտցնել իրանց գյուղացիների մեջ, մերոնք արդեն զգլոցներ ունեն, կամ մտածում են ունենալ։ Մի առաջնորդող, մի օրինակ բավական է, որ նա հասկանա կրթության օգուտը։ Բայց բոլորի վրա գործնական և շահի կետից է նայում։ Օրինակ, տեսնում է, որ դրացու որդին մի վաճառականի մոտ ծառա մըտնելով, վերջը գործակատար դարձավ և հարստացավ, ինքն էլ է աշխատում որդուն վաճառականի հանձնել։ Կամ, մեկի որդին գավառական դպրոցում սովորելով, վերջը ծառայող դարձավ, ինքն էլ է նրա օրինակին հետևում։ Մեր գյուղացի կինը կամ աղջիկը, ամենևին չեք տեսնի, որ քաղաք գնալով, աղախին դառնային. որը և բոլորովին անուեր աղջիկները բացառություն են. գնում են քաղաք տղաները միայն, այն ևս ոչ թե տներում սպասավորություն անելու համար, այլ վաճառականի կամ արհեստավորի մոտ մտնելու համար։ Մեր գյուղացին բազմատեսակ ընդունակություններ ունի. այդ նրա գլխավոր հատկանիշն է։ Դրանից են առաջ գալիս այն երևույթները, որ տեսնում ենք կյանքի նշանակները չափազանց տարբերվում են միմյանցից։ Դա լավ նշան է։ Տեսնում ես գյուղեր, ուր ամբողջ բնակիչները պարապում են

վաճառականությունով, թեև այդ գյուղը ոչ կենտրոն է և ոչ վաճառականության հարմարություն ունի։ Բայց ի՞նչպես եղավ։ Գյուղացիներից մեկը վաճառականության մեջ բախտ գտավ, և բոլորը հետևեցին նրա օրինակին։ Նրանք տարածվում են Թուրքաստանի և Եվրոպայի զանազան քաղաքներ, խոսում են զանազան լեզուներով, և երբեմն միայն վերադառնում են գիլիմներով և ոսկյա շղթաներով իրանց կարոտ մնացած ընտանիքը տեսնելու համար։ Շատ անգամ 5—6—10 տարի է տևում նրանց պանդխտությունը, և ազնվասիրտ կինը համբերում է առանց աղմկարդի, միշտ անարատ պահելով իր ամուսնական հավատարմությունը։ Եվ նկատել եմ, կանայքը, որ պատսպարված են այդ վիճակին, ըստ մեծի մասին մեռնում են բարեկացավուլ։ Ջոկերը կարող են այս դասակարգի օրինակ լինել։ Կան գյուղեր, ուր բնակիչների մեծ մասը հյուսն, ոսկերիչ, որմնադիր և ուրիշ արհեստավորներ են, որոնց պատրաստությունքն իրանց տեղում գործադրության չդանելով, թափառում են քաղաքից քաղաք։ Մինչև անգամ ամենատնքարոյական օրինակները մի ամբողջ գյուղի հասարակության մի կեղտոտ գործով են զբաղեցնում. «խաչագողները» հայտնի են արդեն... Այդ բոլորը կյանքի նշաններ են, բայց վատն այն է, որ գյուղացին, հենց որ փոքր ի շատե փող է ձեռք գցում, տեղափոխվում է դեպի քաղաքը։ Գյուղական ասպարեզը նեղ է գտնում իր ընդարձակ գործունեության համար։ Այն ժամանակ միայն գյուղացին իր կանոնավոր և նորմալ դրության մեջ կմտներ, երբ ճանապարհների հաղորդակցությունը կհեշտանա. դյուղատնտեսությունը նոր ձև կստանա, փոխելով իր նահապետական կերպարանքը։

Պետք չէ մոռանալ և դպրոցի անբարեբախտանացնող ազդեցությունը։ Երևակայեցեք աղջկա դրությունը, որ նա մանկությունից փակված է եղել տան պատերի մեջ, որ նա երբեք անից դուրս չէ եկել առանց մոր, որ նա մարդերից այնպես է վախում, որպես գայլերից, հանկարծ նրան մենակ դուրս են ձողնում, որպես թռչունը՝ վանդակից։ Նրա ծնողները ծառա կամ աղախին չունեն, նա մենակ պետք է գնա դպրոցը, որ շատ անգամ հեռու է գտնվում։ Արտաքին աշխարհը՝ փողոցը, այն աստիճան ավերված և անկարգ է, որ չէր կարող վնասակար ազդեցություն չանել նրա վրա, գավառական քաղաքներն ըստ մեծի մասին խառն լինելով մահմեդականների հետ, աղջիկը մինչև դպրոց հասնելը լսում է հազարավոր վատ խոսքեր թուրքի աղաներից (հայ տղերքն էլ նրանցից պակաս չեն)։ Սկզբում նա երկչոտ է լինում, ուշադրություն չէ դարձնում, անց է կենում։ Հետո փոքր առ փոքր սիրտ է առնում, սկսում է պատասխանել... Այս հանդամանքներն ի նկատի ունենալով, ես հաս-

նում եմ այն ցավալի համոզմունքին, թե աղջիկը, որ դպրոցի երես չէ տեսնում, ավելի բախտավոր է, թեև նա մնում է տգետ, բայց պահում է իր բարոյականությունն անարատ։ Այլևս չեմ ասում, թե թերի և անկատարակ ուսումը միշտ վնասակար է լինում։ Բարեբախտաբար մեր գավառական քաղաքներում դեռ չկան կարելու արհեստանոցներ։ Թիֆլիսում այժմ սովորության մեջ մտած կարուհիների մագազիններն ավելի մեծ թվով փչացնում են աղջիկներին...

Երբ աղջիկը դառնում է 14—15 տարեկան, ծնողները մտածում են նրան մարդու տալ։ Օժիտի սովորությունը սկսված լինելով գավառական քաղաքներում, որքան ընդհանրանում է նա, այնքան ավելի ծանրանում է աղջկա վիճակը աղքատ ընտանիքի վրա։ Աշխատում են շուտ ազատվել այդ բեռնից։ Այս պատճառով, աղջկա մահը շատ անգամ հանդիպում է ծնողների ներքին հոժարությանը, որ թեթևացնում է նրանց մի մեծ հոգսից։ Գյուղացիները բախտավոր են այդ մասին. այնտեղ փեսայի հորից փող են առանում։ Վատն այն է, որ աղջկան թույլ չեն տալիս ինքն իր ապագան անօրինելու. նա զուցե կգտներ մեկին, կընկներ նրա գիրկը և, առանց ծնողներին ծախսեր պատճառելու, կպսակվեր նրա հետ։ Այս պայմանում ևս հոր և մոր կամքը գերակշռություն ունի. նրանք պետք է անօրինեն աղջկա բախտը, նրանք պետք է գտնեն իրանց հավանած և սրտի ուզած մի փեսա։ Բայց աղջկան «իրանց սրտի ուզած» մարդուն տալու համար փող պետք է. առհասարակ արհեստավորները փող չեն ունենում։ Նրանք կամ պետք է պարտք անեն օժիտ պատրաստելու համար, կամ պետք է աղջկան գցեն առաջին հանդիպող անպիտանի ձեռքը, եթե նա սակավ փող էր պահանջում։ Քան մեծի մասին պատահում է վերջինը։ Սերն ամենևին դեր չէ խաղում արհեստավորների ամուսնության մեջ. և ո՞րտեղ կարելի էր սիրել, երբ աղջիկները տղաների հետ բնավ չեն տեսնվում։ Ջարդավճեռի սովորությունը դեռ ոչ բոլորովին վերացել է գավառական քաղաքներից. աղջիկը տնից դուրս է գալիս ոտքից ցգուխ ծածկված սպիտակ սփածանելիքի մեջ։ Արհեստավորի աղջիկը տալիս են արհեստավորի տղային. շատ անգամ նոր պսակվում է իր հոր աշակերտի հետ, եթե այդ վերջինը դուր էր եկել իր վարպետին, կամ խոստանում էր լավ ապագա։ Խիստ սակավ է պատահում, որ նա պսակվեր մանր վաճառականի հետ։ Աղջիկը տեսնում է իր փեսային այն օրը, երբ նրան տարել էին եկեղեցի պսակելու, այնտեղ միայն քահանան ձեի համար հարցնում է նրա հոժարությունը, արդյոք սիրո՞ւմ էր իր փեսային, արդյոք համաձա՞յն էր կին լինելու... Աղջիկը ոչինչ չէ պատասխանում, միայն հավանական շարժում է անում

գլխով։ Բայց եթե նա չգիտեր այդ, կամ առաջուց չէին սովորեցրել, մի կին եռանից նրա ղլուխը ձեռքով դեպի ցած է խոնարհեցնում, որ նշանակում է «այո՛»... «համաձայն եմ»։

Կին լինելուց հետո նրա վիճակն ավելի վատթարանում է. նա միանգամայն կորցնում է և այն փոքրիկ ազատությունը, որ վայելում էր առաջ։ Դավառական քաղաքներում, ավելի ժողովրդի սուր և միջին դասերի մեջ, կնոջ պահպանությունը դեռ կրում է իր վրա շատ հարեմական առանձնահատկություններ. նրա վրա ավելի խիստ են հսկում, քան թե գյուղերում, ուր անտեսական աշխատությունները շատ անգամ նրան տանից դուրս են կոչում արտը, այգին, կամ դաշտում բանելու, որտեղ նա գոնյա արձակ աշխարհ է տեսնում։ Բայց այստեղ կնոջ աշխարհը փակված է տան պատերի մեջ, և ոչ ոքի հետ հարաբերություն չունի։ Նա ապրում է բանտի մեջ, կամ ավելի փափուկ լեզվով խոսելով, որպես մի ծաղիկ թառամում է ապակյա գրվանի ներքո, առանց լույսի և առանց օդի։ Եվ իրավ, դուք չեք տեսնի մի կին արհեստավորների մեջ, որ երեսին գույն ունենար, նա միշտ գեղնած է լինում, շրթունքները՝ ցամաքած, որպես տենդոտ, և աչքերը՝ մարած։ Հասարակաց զբոսանքի և զվարճության տեղերը, եթե կային այսպիսիները գավառական քաղաքներում, դեռ մատչելի չեն ժողովրդի աղքատ դասին. արհեստավորն իր կնոջը բաց չէ թողնում հաճախել այնպիսի տեղեր, որոնք իր կարծիքով անառակների համար են։ Կինը մաշվում է տան մեջ. նրա մեծ զվարճությունն այն է, որ երբեմն նստում է լուսամուտի առջև և նայում է փողոցի անցուդարձին. բայց փողոցի վրա բաց արած լուսամուտներ բոլոր տները չունին։ Նա տեսնվում է խիստ հազիվ անգամ մերձավոր ազգականների հետ. կյանքը շատ առանձնացած է, որովհետև բարեկամների հետ հարաբերություն պահպանելը պահանջում է ծախսեր, պետք է մի բանով գոհացնել հյուրերին։

Ընտանիքի կազմակերպությունը և նրա սովորությունները համարյա նույնն են, որպես գյուղերում, միայն այստեղ ավելի որոշ ձև են ստացել։ Նույնպես գերդաստանի հայրը բարձր հեղինակություն ունի, նույնպես կինը ստորագրվում է իր ազգամարդին ամենայն հնազանդությամբ, նույնպես օտար տղամարդի հետ չէ խոսում նա և ոչ երեսը է մի ուրիշ մարդու աչքին։ Իր ամուսնի հետ տեսնվում է նա միայն պիշերով, երբ վերադառնում է նա խանութից բոլորովին հոգնած և շուտով պառկում է հանգստանալու։ Մի բան կարող էր նրան մոլորեցնել ուղիղ ճանապարհից, այն է՝ տարածվող շռայլությունը, որ սկսել է մուտք գործել և արհեստավորի համեստ խրճիթում։ Բայց շահվել ուրիշից իր պա-

ճուճանքի և զարդարանքի համար նա չէ կարող, որովհետև մի ավելորդ բան նրա վրա. որ ամուսնի դնածը չէր, իսկույն կարող էր նկատելի լինել մարդու աչքին։ Գավառական քաղաքներում յուրաքանչյուր ընտանիքի առանձին տուն ունենալը, և մի ամբողջ տան մեջ միմիայն մեկ ընտանիքի բնակվելը բավական պահպանում է կնոջ բարոյականությունը։ Առհասարակ նկատված է, կինը ավելի շուտ է փչանում այն ժամանակ, երբ բազմաթիվ ընտանիքներ ածած են միմյանց վրա միևնույն տան մեջ և շատ սեղմված կերպով բնակվում են զանազան կացարաններում։ Մեր գավառներում անկարելի է տեսնել, որ երկու ընտանիք միևնույն տան մեջ բնակվեին. ընտանեկան պայմանները չեն ներում մի այսպիսի խառնակություն։ Դա ունեցավ իր օգուտն այն կողմից, որ ամեն մարդ, որքան էլ աղքատ լիներ նա, աշխատեց առանձին տուն ունենալ։ Այդ մասին պետք է շնորհակալ լինել պարսիկներից, թե չէ շուտով կկազմվեր մեր մեջ անտուն, անտեղ պրոլետարիատ։

Եթե արհեստավորների կնիկների մեջ կարելի էր դտնել մեկին, որ մեղանչեր ամուսնական հավատարմության դեմ, կարող եմ հաստատ ասել, որ հանցավորը աղամարդ ամուսինն է։ Նա կամ արբեցող է, կամ չափազանց ծույլ և անպիտան. օրվա վաստակը գիշերը վատնում է գինեվաճառի մոտ, թողնում է կնոջը տանը քաղցած և ամենևին չէ մտածում կիսամերկ երեխաների վրա։ Նա շաբաթներով տան երես չէ տեսնում. ո՞րտեղ է անցկացնում, հայտնի չէ, և երբեմն հարբած տուն է դառնում, կարծես նրա համար միայն, որ կնոջը մի լավ ծեծե։ Երբեմն զավակները վկա են լինում սարսափելի տեսարանների իրանց ծնողների մեջ, և այստեղից դրվում է նրանց փչանալու սկիզբը։ Բայց չկա մի ավելի երջանիկ, մի ավելի խաղաղ շրջան, որպես աշխատասեր և արդար արհեստավորի ընտանիքը. ժրաջան կինը տան և երեխաների հոգսն է քաշում, պահում է նրանց մաքուր և առողջ, մարդը գործում է արհեստանոցում. նրանք ապրում են գոհ և անվրդով կյանքով. խնայողությունը իրանց տնտեսության գլխավոր օրենքն է, մտածում են զավակների վրա և նա են գցում փոքրիկ դումար սև օրվա ապրուստի համար։

Բայց լինում են ցավալի դեպքեր։ Կինը, բայի տնային տնտեսությունից, որ արհեստավորի ընտանիքում այնքան ծանր չէ, ուրիշ ոչընչով չէ օգնում տղամարդին, այսինքն, նա չէ սովորել որևիցե բան, որ կարողանար ինքն ևս տղատ կերպով փող վաստակել։ Ընդունված սովորությունները և հասարակական կյանքի պայմանները թույլ չեն տվել նրան ընտանեկան օջախից դուրս մի ուրիշ գործով զբաղվելու։ Ընտա-

նիքի գլխավոր աշխատողը, նրա ապրուստը հայթայթողը մնում է տղամարդը։ Քանի որ նա կենդանի է, կինը թախտավոր է, նա աշխատում է և ընտանիքը պահում է։ Իսկ երբ տղամարդը մեռավ, առանց բողնելու որևիցե կարողություն, այն ժամանակ կինը իր ապրուստը շարունակելու համար ունի մի ճանապարհ միայն, կամաց-կամաց դիմել դեպի մահ։ Ըստ մեծի մասին այդ պատահում է... Աղքատությունը սարսափելի զոհեր է տանում։

Արհեստավորի կնոջ վիճակը բարձրացնելու համար և նրա ապրուստն ապահովելու համար այնքան պետք չէ ուսումը, որը ոչինչով նրան հաց տալ չէ կարող, որքան պետք է սովորեցնել մի արհեստ, որ նրանով ապրել կարողանար։ Այդ միայն կարող է բարձրացնել կնոջ վիճակը և նրան հավասար աստիճանի վրա դնել տղամարդի հետ։ Երբ կինը տղատ պարապմունք ունի, երբ նա էլ իր կողմից օգնում է ընտանիքին, այսպիսով նա կախում չի ունենա տղամարդից. և կդժի իր վրից նրա բռնության կոպիտ լուծը։ Տղամարդն էլ իր կողմից կունենա դեպի նա, բացի սերից, մի առանձին պատիվ, երբ կգտնի նրա մեջ մի լավ աշխատակից։ Այսպիսի կինը միշտ տղատ կմնա այն ախտից, որի մեջ ձգում է նրան տղքատությունն ամուսնի մահից հետո։ Նա կարող կլինի արդար և ազնիվ կերպով հայթայթել իր հացը։ Բացի դրանից, երբ կինը մի բան գիտե, երբ նա ունի իր մեջ կենդանի կապիտալ, այն ժամանակ նա կարեւորություն չի ունենա մեռած կապիտալով՝ օժիտով իր համար փեսա գնել. ամեն մարդ կցանկանա իր վիճակը մի այնպիսի ընկերուհու հետ կապել։ Բայց արհեստավորի կնոջն իր այժմյան վշտալի դրությունից ազատելու համար նախ և առաջ պետք է փոխել հասարակական հիմար նախապաշարմունքները, և պետք է նրան դուրս քաշել ընտանիքի փակված շրջանից։

Բ

Մինչև այստեղ ինչ որ խոսվեցավ արհեստավորների մասին, վերաբերում էր գավառներին միայն, բայց չէ կարելի մի քանի խոսք չասել և Թիֆլիսի արհեստավորների կանանց մասին, ուր կյանքը և նրա պահանջները բոլորովին տարբերվում են, ուր կինն այն չէ, ինչ որ է գավառներում։

Թիֆլիսը, որպես Կովկասի քաղաքակրթության կենտրոն, միևնույն ժամանակ է և մոլության կենտրոն, այստեղ դարբնվում են ամեն տեսակ ախտեր և տարածվում են դեպի գավառները։ Այդ փոքրիկ քաղա-

քը ներկայացնում է մի ամբողջ Բաբելոն, ուր Եվրոպան, Ասիան և Կովկասն իր վայրենիներով, բոլորը զետեղված միասին, ներկայացնում են մի զարմանալի խառնափնթորություն։ Տիպերի բազմատեսակությունն առաջ է բերում բնավորությունների և սովորությունների անթիվ տարբերություններ, որոնց հետազոտելը չափազանց դժվարին է։ Ընտանիքի նահապետական կազմակերպությունը քայքայված է։ Ոչինչ ավելի վնասակար չէ կարող լինել, քան թե այն, երբ հանկարծ քանդվում են դարերով հաստատված և կյանքի մեջ մտած սովորությունները, և առանց փոխարինվելու նոր և ավելի բարոյական հիմունքներով, նրանց տեղը դրվում է կատարյալ համարձակություն։ Այդ կրիզիսի մեջն է գտնվում Թիֆլիսի հայ կնոջ վիճակը։ Ընտանիքի փակված շրջանից հանկարծ նրան բաց են թողնում դեպի լայն աշխարհ, առանց նախապես աշխարհի հետ վարվելու պնաքները նրան սովորեցնելու։ Խիստ հետաքրքրական է լինում որսալ այն թռչուններին, որ երկար ժամանակ վանդակի մեջ էին պահվել...

Այդ կարճ, բայց ընդհանուր նկատողությունից հետո ես անցնում եմ դեպի արհեստավորի կինը։

Արհեստավորի կյանքի մեջ նկատվում է երկու տեսակ մրցություն. մեկը, նրա ասիական արհեստի մրցությունը եվրոպականի հետ, մյուսը, նահապետական կյանքի մեջ սնված նրա կնոջ մրցությունը նոր սովորությունների հետ։ Երկուսն էլ, որպես փուած հետաքրքիր, ընկնելու և անհետանալու վրա են. նորը սիրապետում է։

Արհեստավորներին, մանրավաճառներին, առևտրական գործակատարներին, մանր ապրանքավորներին և զանազան ատենական տեղերի սուր ծառայողներին կարելի է զետեղել մի դասակարգության ներքո և կոչել միջին դաս*: Կնոջ դրությունն ամենի մոտ, աննշան տարբերություններով, միևնույն է։ Բայց ես գլխավորապես ի նկատի ունեմ արհեստավորներին և մանրավաճառներին։ Բարքերի մաքրությունը վերաբերական է. կան մաքուրներ և կան անմաքուրներ. պետք է խոստովանել, որ վերջիններիի թիվը առավելություն է կազմում, և վատն այն է, որ հետզհետե աճելու վրա է։ Արհեստավորները և մանրավաճառները

---

* Իսկապես, մեր քաղաքներում ժողովրդական դասակարգերը դեռ լավ չեն կազմակերպված, որոշ ձև չեն ստացել Ստոր դաս, որի ներկայացուցիչներն են մշակները, և առհասարակ պրոլետարիատը, չունենք. ժողովրդի դասակարգությունը սկսում է միջին դասից և վերջանում է կարողության տեր բուրժուազով, որի ներկայացուցիչներն են գլխավորապես հարուստ վաճառականները և, մասնավորապես, մեծ ատենանավոր ծառայողները, դրանց պետք է կոչել բարձր դաս: Արիստոկրատիա չկա։

Թիֆլիսում, իրանց գավառացի համարվևստների նման, սեփական տներ չունեն. այստեղ ըստ մեծի մասին բնակվում են վարձով. ամենաբախտավորը երկու սենյակ ունի։ Ամուսին այրը գործում է առանձին, բազարումը, իր խանութի մեջ։ Կինը մենակ մնում է տանը։ Աղջիկը ծնվում է նեղ սենյակում, որ ղրկված է թե օդից և թե լույսից։ Շնորհները միշտ վրդովմունքով են հանդիպում նրա աշխարհ գալուն, որ բերում է իր հետ հոգսերի մի ահագին ծանրություն։ Փոքրիկ գերդաստանը, որ հազիվհազ քարշ է տալիս իր տնտեսությունը, պետք է սնուցանե նրան, հսկե նրա վրա, մի բան սովորեցնի և, վերջապես, մարդու տա։ Դա ամենից դժվարն է։ Եթե մայրը բավական առողջ է, ինքն է ծիծ տալիս փոքրիկին, իսկ եթե կաթ չունի, կերակրում են այծի կաթով։ Միջոցները չեն ներում ծծմայր վարձել։ Նեղ և խեղդված սենյակում, ուր ամեն ինչ խառնված է մինը մյուսի հետ, մանուկը մեծանում է ամեն կեղտոտության մեջ։ Գյուղերում երեխան ավելի բախտավոր է, չի նեղվում, այլ արձակ օդի մեջ բավական լայն ասպարեզ ունի։ Այստեղ բնակարանը, որ ընդամենը երկու քայլ լայնություն ունի, դառնում է կատարյալ լվացքի փոս. պետք է լողացնել մանուկին, ամեն օր տաք անգամ փոխել նրա շորերը։ Երբ աղջիկը դառնում է երկու-երեք տարեկան, իսկույն դուրս է փախչում բանից. փողոցն ավելի է հրապուրում նրան, այնտեղ կարող է ազատ շունչ քաշել։ Մայրն ուրախ է լինում նրա բացակայությամբ, որ տան կարգը չէ խանգարում, չէ կոտրում։ Իսկ դրսում ի՞նչ է անում, դլուխը քարին։

Երբ աղջիկը դառնում է վեց, յոթը տարեկան, մայրը թույլ է տալիս վազել իրանց փողոցի փուրունջու մոտ, երբ պետք էր հաց գնել, կամ միս տալ խորովելու. նրան ուղարկում են և մերձավոր մանրավաճառի մոտ, երբ պետք էր շաքար գնել։ Երբեմն նրան թույլ են տալիս նստել փողոցի բաց դռան շեմքի վրա և նայել անցուդարձին, այդ ավելի զվարճացնում է. տանը չափազանց նեղ է և տխուր։ Եվ այսպես, նրա առաջին դաստիարակությունը սկսվում է փողոցից։

Եթե տունը մոտ էր եկեղեցուն, և այնտեղ գտնվում էր ծխական դպրոց, մայրը ուղարկում է աղջկան կարդալու, երբ ժամանակը հասնում է։ Բարձր դպրոցներում տալու միջոցներ չկան։ Առանց ազախնի և առանց ծառայի նա կարողանում է ամեն օր հաճախել դպրոց, որովհետև բավական վարժված է փողոցին։ Դպրոցում սովորեցնում են նրան ամեն բանից շատ փոքր, որ ասել է, ոչինչ չեն սովորացնում։ Այդ ոչինչ. մայրն ունի իր առանձին փառասիրությունը. նա ուսման վրա շատ էլ ուշադրություն չէ դարձնում. բավական է միայն, որ իր աղջկան տեսնում է

դպրոցական համազգեստի մեջ, կրում է գրքերով լի պայուսակ, խառնում է իր մայրենի լեզվի հետ օտարազգի բառեր, և ավարտելուց հետո, որպես ուսյալ և լուսավորված, իրավունք կունենա փոխանակ «բավսակրավիի», իր գլխին ծածկել «շլյապա»։

Ես վեր առնչի խիստ մասնավոր օրինակ. արհեստավորների կամ մանրավաճառների աղջիկների մեծ մասը դպրոցի երես չեն տեսնում, այլ մեծանում են առանց մի բան սովորելու։ Նրանց կարելի է ճանաչել գլխի ծածկոցներից, թե որն է կրում շլյապա և որը բավսակրավի։ Թե այսպես և թե այնպես, տարբերությունը միայն հագուստի մեջն է, բայց կրթությունով մենը մյուսից չէ որոշվում։

Ահա աղջիկը տասնվեց և տասնյոթ տարեկան է։ Այդ շատ վտանգավոր մի հասակ է։ Նրա վրա հսկում է և մտածում է մայրը միայն. հայրը ուշադրություն չէ դարձնում, և կարելի է ասել, որ թշնամաբար է նայում նրա վրա, որպես մի գող, որ վաղ թե ուշ պետք է նրա տունը կողոպտեր։ Աղջիկը դեռ բավական ամոթխած է և երկչոտ. պետք է «բացել» նրան, աշխարհ մտցնել։ Մայրը առաջնորդում է։ Սկզբում նրան թույլ են տալիս կտուրի վրա, իր հասակակիցների հետ, ածել, «լեզդևար» պար գալ և «տաշի» խփել։ Հետո մայրը տանում է իր հետ ուր և գնում է, երբեմն բարեկամների մոտ, երբեմն բազարը, երբ պետք է մի նոր հագուստ գնել։ Լինում են և որոշված այցելություններ. օրինակ, շաբաթ երեկոները գնալ Բեզեհեմ համբուրելու[5], այս և այն եկեղեցու տոնախմբությանը (օրա) ներկա գտնվել և այլն։ Դրանք մի տեսակ աշխարհահանդեսներ են, ուր աղջիկները գրվում են ցույցի համար։ Երբեմն դուրս են բերում նրան հասարակաց զբոսարանի այգին, բայց [illegible]արան չեն տանում։ Շատ ծիծաղելի մի հակապատկեր է ներկայանում, երբ տեսնում ես մորը, շատ անգամ փաթաթված սպիտակ «չադիփի» մեջ, ման է ածում վերջին մոդայի ձևով հագնված աղջկան։ Ցամաք փայտը նեցուկ են ավել դալար տունկին, որ չծռվի։

Տան մեջ աղջիկը բավական համեստ է և գործունյա. նա հագնվում է հասարակ կերպով, գլխին ծածկում է մի թաշկինակ, կամ բոլորովին բաց է թողնում, աշխատում է խոհանոցում և չէ արհամարհում մինչև անգամ լվացք անել։ Այսպես նա բավական սովորում է տնտեսություն։ Մյուս ժամանակներում կամ կարում է և կամ հյուսում է։ Մոր գաստիարակությունը գլխավորապես կայանում է այն բանի մեջ, որ անընդհատ հսկում է նրա վրա։ Բայց նա այնքան անփորձ չէ, որքան կարծվում է։ Դպրոցում նա բավական բան է լսել և սովորել. հասկանալի աղջիկներն ամեն գաղտնիք բացատրել են նրան։ Նա միայն ձե-

վանում է, թե ոչինչ չդիտե և պահում է իրան, որովհետև համոզված է, թե «կատարած ամանը դին չի ունենա», և պահպանում է իր անարատությունը, մինչև ամուսինը կշնորհեր նրան ազատություն։ Շատ անգամ իրանք, մայրերը փչացնում են աղջկան, երբ նրա ներկայությամբ, ուրիշ կնիկների հետ բաց են անում ամենակեղտոտ բամբասանքներ այս և այն աղջկա վարքի մասին։ Ամեն ինչ ներշնչում է նորահաս աղջկա մեջ պահվելու սաստիկ ցանկություն, բայց նա ակամա թաքցնում է, ապահելով իր դառն ճակատագրին։

Մեծ դժվարություններ կան արհեստավորի և առհասարակ ժողովըրդի միջին դասի համար՝ լավ կերպով անօրինելու աղջկա ապագան։ Մնողների դժգոհությունը չափը անցնում է։ Հայրը հանդիմանում է աղջկան, թե իր համար պետք է կատարյալ չքավորություն պատճառե, իսկ մայրը պաշտպանում է աղջկան։ Ամեն անգամ, ամեն մի նոր հագուստի գնելը մեծ ազմուկ է բարձրացնում ծնողների մեջ։ Աղջիկը հասկանում է իր վիճակի անտանելիությունը և երբեմն մահը օգնություն է կանչում։ Մայրը, որպես կին, ավելի լավ է հասկանում կնոջ պահանջը. որոնում է արժանավոր փեսա, ցանկանում է, որ նա հարուստ լիներ, կամ գոնյա ապահովված գրություն ունենար։ Հայրը ցանկանում է գցել առաջին հանդիպողի ձեռքը, միայն թե ինքն ազատվի։ Ամենից ավելի շատ են եղբայրները, նրա կային հասած եղբայրներ, որովհետև մտածում են, թե «քույրը նրանց բախտի վրա էր նստել, մինչև նրան գլխից ոտ չանեին, իրանք չէին կարող պահվել»։ Բայց մայրն ավելի փորձված է. նա աշխատում է ընտրություններում մեջ չսխալվել։ Երբեմն գործի մեջ խառնվում է և սերը։ Բայց նա ոչինչ հետևանք ունենալ չէ կարող, նրա մայրն ավելի գործնական կետից չէ արտահայտում պահանջական զգայմունքը։ Երբեմն գործը վերջանում է, բոլորովին հույս դնելով հաջողության վրա։ Հայտնվում է մի անծանոթ, որի ով և ինչ անելից լինելը հայտնի չէ, և խնդրում է աղջկա ձեռքը։ Մնողները օգուտ քաղելով այն հանգամանքից, որ դա փող չէ պահանջում, կամ պահանջում է շատ չնչին բան, իսկույն որոշում են փեսային։ Այսպիսի ընտրությունները երբեմն վերջանում են սկանդալով, երբ իմացվում է, թե նորահարսնան մի քանի տեղերում պահված է եղել...

Թե այսպես և թե այնպես, աղջիկը մարդու է դնում. ընտանիքի վրայից ծանր բեռը բարձվում է։ Սակավ անգամ նա տանում է իր հետ հինգ հարյուր կամ հազար ռուբլի. երբեմն միայն հագուստներ և մի քանի կարասիներ։ Այդ չնչին գներով նա գնում է իր համար և չնչին փեսան Հարսանիքի հանդեսից անմիջապես հետո փեսան շարունակում է իր

գործը, դիմում է խանութը կամ արհեստանոցը։ Նվ սկսվում է վշտալի կյանքը։

Մանկահասակ կինը երբեմն լինում է լավ տանտիկին, նայելով թե որպիսի մարդի էր հանդիպել նա։ Սկզբում մայրը հաճախ այցելում է անփորձ աղջկա մոտ, խրատում է նրան իր նոր տնտեսության այս և այն կարգադրություններին մեջ։ Հետո փոքր առ փոքր մոռանում է նրան, և բոլորովին ձգում են իր կամքին։ Այժմ մանկահասակ կինը թեև աղքատ է, բայց դարձյալ գոհ է, որովհետև ինքնագլուխ է։ Սկեսուրը, եթե կենդանի է նա, չէ փոխարինում իր մորը, չէ նեղացնում նրան, երբեմն ինքն է ծեծում պառավին։ Նրա տնտեսությունը լինում է իր մոր տնտեսության կրկնությունը. միևնույն փոքրիկ և նեղ սենյակը, միևնույն անհարմարությունները տիրում են և այստեղ։ Ամուսին այրը բազարի մարդ է, առավոտյան մութին գնում է խանութը և դիշերվա մութին վերադառնում է տուն։ Նա ճաշում է խանութում, առանց կնոջ վրա մտածելու, թե ինչ պիտի ուտի։ Կյուրակի օրերը միայն խոհանոցի օջախներում կրակ է ձգվում. ամբողջ շաբաթ կինը անց է կացնում ցամաք հացով։ Ոչինչ այնքան սարսափելի չէ լինում, որպես թաքնված աղքատություն, որը դրսից հրապուրիչ երևույթ ունի, բայց ներսից մաշում է ընտանիքի կյանքը։

Օրերն անցնում են օրերի հետևից, միատեսակ և անգործ կյանքը սկսում է ծանրանալ մանկահասակ կնոջ սրտի վրա։ Տանը նա ոչինչ պարապմունք չունի, ոչինչ է զբաղեցնում նրան։ Անգործության մեջ ղէրբինում են բոլոր ախտերը։ Պետք է մի բանով զբաղվել և վերջապես զվարճանալ։ Իր հոր տան մեջ մի կողմից երջանիկ էր. մայրը ման էր աճում նրան, ցույց էր տալիս աշխարհին։ Մայրը նրա համար մի լավ ընկեր և բարեկամ էր։ Այդ կարեկցությունները նա չէ գտնում իր ամուսնի մեջ։ Սառնությունը առաջ է գալիս ինքն իրան։ Միջին դասի մարդիկը սովորություն չունեն զբաղեցնել իրանց կնիկներին. դուք չեք տեսնի նրանց միասին փողոցում, կամ որևիցե զբոսանքի տեղում։ Մանկահասակ սիրուը անունդ է պահանջում։ Սկզբում նա տանից դուրս է գալիս իր հարևան կնիկներից մեկի հետ՝ մենակ։ Այդ առաջին քայլն է, որ տանում է նրան դեպի մոլորություն։ Ամուսին այրը տան մարդ չէ, նա չի էլ կարող դիտենալ, թե կինը ինչպես է անցկացնում իր օրը։ Նա ամբողջապես խրված է իր բազարային գործերի՞մեջ, կնոջ վրա չէ մտածում։ Կինը գառնում է խորամանկ և խիստ վարպետությամբ տանում է իր գործը։ Նա դիտե մարդու որոշված ժամերը, երբ բազարից տուն է դառնում. և սկսում է կեղծավորել նրա առջև, խաբել նրան։ Իհարկե,

կինը չէր ընկնի այդ փորձանքների մեջ, եթե նրա կյանքի պայմաններն ուրիշ տեսակ կարգադրված լինեին։ Նա մտավ ամուսնի տունը որպես անմեղ և անարատ աղջիկ, բայց գտավ այնտեղ կատարյալ պատարկություն։ Նրան գործ չավելցին, նրան չզբաղեցրին, աշխատությունը կարող էր փրկել նրան, բայց այդ չկար։ Անդորձ և արձակ կյանքի մեջ աճեցին զգայական ախտեր։ Բայց կա ևս մի ուրիշ բան, որ դնում է կնոջը մոլորության ճանապարհի վրա։ Սարսափելի հետևանքներ ունեն կյանքի առաջին պահերը, երբ նրանց բավականություն տալու միջոցները սուղ էին։ Կինն առաջին զոհն է դառնում աղքատության, որովհետև ավելի հակումն ունի դեպի պերճախոսություն և առհասարակ շռայլության։ Դավառացի կինը բախտավոր է այդ դեպքում. այնտեղ կյանքի պահանջները թեթև են. բացի դրանից, դեռևս տիրող արևելյան փակ կյանքի շնորհիվ կինը կարողանում է իր աղքատությունը թաքցնել տան չորս պատերի մեջ, նրան չեն տեսնում։ Բայց այստեղ կյանքն ավելի արձակ է. կինը պետք է իրան ցույց տա աշխարհին, իսկ աշխարհը սիրում է նրան տեսնել միշտ զուգված, զարդարված։ Ես վկա եմ եղել մի քանի Թիֆլիսում, թե որպես կինը սկզբում բոլորովին անարատ և մաքուր վարքով, հանգամանքներից ստիպված, ընկել է ապականության մեջ։ Նա ավելի բարեհաջող պայմաններում կարող էր պահպանել իր բարքի մաքրությունը։ Մի անգամ ընկավ նա, այլևս իրան պահել չէ կարող. գլորվում է դեպի ցած և ցած. կյանքը ետևից մղում է նրան դեպի ամոթալի կործանումը, մինչև բոլորովին խրում է ցեխի մեջ։ Նույն ցեխի մեջ և մեռնում է նա։

Անարդարություն կլիներ բոլորովին սև գծերով վերջացնել իմ նկարագիրը Թիֆլիսի միջին դասի կանանց մասին, ես պետք է ամբողջացնեմ իմ պատկերը, ձգելով նրա վրա մի քանի լուսավոր շուքեր։

Լինում են և բախտավոր ամուսնություններ։ Մանկահասակ կինն իր հերթում դառնում է մայր։ Եթե նրա առաջին ծնունդը աղջիկ էր, դա ավելի շուտով ներշնչում է նրա մեջ այն խելամտությունը, թե պետք էր մտածել երեխայի ապագայի մասին։ Իր անցյալ վշտալի կյանքը թողել է նրա մեջ փորձերի մի ամբողջ շարք. նա գիտե, թե ինչ դժվարություններով ինքը կարողացավ պսակվել, կին դառնալ։ Նույն դժվարությունները սպասում են և նորածին մանկան։ Եվ այն օրից սկսում է տնօրինել իր զավակի օժիտը։ Եթե նրա առաջին ծնունդը տղա էր, գարձյալ գիտե, որ նրա կրթությունը սակավ հոգսեր, սակավ ծախսեր չէ պահանջում. պետք է դպրոց տալ և մի բան սովորեցնել։ Եվ այսպես, խնայո-

զուրյունը ընտրում է նա որպես պլհսավոր օրենք իր փոքրիկ անտեսության մեջ։ Նա այնքան խելացի է լինում և այնքան բարոյական ուժ է ունենում, որ բոլորովին «իր ձեռքն է առնում» տղամարդին։ Երբևէն նա է պահում նրան շռայլ կյանքից կամ խմելուց, ինչպես որ «փող նա գցել»։ Իր հասարակական դրությունը, իհարկե, չէ նրան, որ ինքն էլ մի կողմից օգներ ամուսնին հարստանալու նպատակի մեջ և բազարումը նրան գործակից լիներ։ Պատերազմելու համար ընդունված նախապաշարմունքների դեմ դեռ անզոր է նա։ Բայց տան մեջ ամենայն հանդգնությամբ աշխատում է։ Ամբողջ դիշերը նա անց է կացնում ասեղով, բացի մանավոր կարերից, որ ընդունում է հարուստ տների տիկիններից, նա վեր է առնում կարելու հագուստներ և մոդային մագազիններից, բոլորը պատրաստում է տանը։ Ոչ մի շորի կտոր անպետք չէ կորչում նրա ձեռքում. ամեն մի հնոտիք շուտ է տալիս, ձևը փոխում է. և վերջապես նրանից մի կատր հագուստ է պատրաստում իրա կամ երեխաների համար։ Ափսո՜ս, որ ժրաջան կնիկների տնային աշխատությունների պրոպրաման շատ ընդարձակ չէ, կարել, հյուսել, նախշել, այսքանով վերջանում է նրանց գործունեությունը։ Այսուամենայնիվ, ես տեսել եմ կնիկներ, որ կարելով մի ամբողջ ընտանիք էին պահում. տեսել եմ աղջիկներ, որ կարելով փող էին աշխատել, իրանց համար օժիտ պատրաստել, որ մարդու գնան։ Ժրաջան կինն այնքան թեթևացնում է իր ամուսնի հոգսերը, որ նա չգիտե, թե ինչպես է առաջ գնում փոքրիկ տնտեսությունը. երեխաները միշտ մաքուր են և առողջ, և ամեն ինչ տան մեջ կարգին է։ Ամենաանակնկալ հյուրեր պատահելիս, միշտ տանտիկինը պահած ունի առատ պաշար նրանց զարմացնելու համար։ Տան մեջ ամեն բան կա, ոչինչ պակաս չէ, և գլխավորն այն է, որ մեծ մասը գնել է ու պատրաստել կինը։ Երբ կինն իր նյութական օժանդակություններով օգնում է ընտանիքին, նրա բարոյական ազդեցությունն ավելի կշիռ է ստանում։ Այն ժամանակ նա մտնում է իր ուղիղ դերի մեջ, դառնում է քաղաքակրթող տարր, եթե ոչ դրսի աշխարհի մեջ, գոնյա իր ներսի աշխարհում՝ ընտանիքի մեջ։

Կրկնում եմ, դպրոցը, միայն դպրոցը չէ կարող բարձրացնել ժողովրդի միջին դասի կնոջ նշանակությունը։ Ապրուստն այստեղ կապված է ծանր կենսական անհրաժեշտությունների հետ, որ պահանջում են կնոջ գործակցությունը։ Պետք է ընդունակ կացուցանել նրան գործելու, աշխատելու և իր ձեռքի վանտիկով կերակրելու իր ընտանիքը։ Ես հետու եմ պահում ինձ այն ծայրահեղություններից, որ կինը բժիշկ լիներ, գրող լիներ, կամ դատավոր լիներ, այլ ավելի կցանկանայի, որ նա

մի լավ խանութպան կամ լավ տանտիկին լիներ։ Ոչինչ այնպես եռա չէ պահում կնոջը կործանումից, որպես արդար և ջանասեր աշխատությունը։ Քանի որ մենք կնայենք կնոջը որպես մի հեշտասիրության առարկայի վրա, այնքան կստորացնենք նրա բարձր նշանակությունը։ Կինը որպես բաժանում է իր ամուսնի սերը, այնպես էլ բաժանորդ պետք է լինի նրա աշխատությանը։ Մեղավորը տղամարդն է, որ նրան գործ չէ հանձնում։ Ո՞վ կարող է լինել այնքան հավատարիմ հաշվապահ կամ գործակատար մի մանրավաճառի խանութում, որպես իր կինը։ Լավ կինը մի մեծ երախտավորություն է առևտրական ֆիրմայի համար. ոչ ոք նրա նման չէ կարող գրավել և գոհացնել հաճախորդներին. այսքանս բավական է, որ տղամարդիկ այնքան շատախոս և ժլատ չեն լինում, երբ մի բան գնում են կնոջից։ Ո՞վ կարող է այնպես լավ կառավարել մի կոշկակարի արհեստանոցը, որպես վարպետի կինը։ Ես ճանաչում եմ մի կոշկակարի կնոջ միայն, որ իր ամուսնի հետ ապրում էր խանութում։ Նա պատրաստում էր կոշիկների երեսները. կարի մեքենան բավական հեշտացրել էր նրա գործը։ Առևտուրն ընթանում էր արագ և արդյունավետ կերպով, և խաղաղ ու բախտավոր ապրում էր փոքրիկ ընտանիքը։ Մի՞թե կինը չէր կարող գործ գտնել իր դերձակ ամուսնի խանութում. կարն իսկապես կնոջ գործն է։ Ի՞նչ անե կինը, երբ նրան անգործ ձգում են տանը և թող են տալիս անձնատուր լինել իր կրքերին։ Տվեցեք նրան աշխատություն, և նա չի ընկնի բարոյական փտության մեջ։ Աշխատության մեջ միշտ թարմ և զվարթ կպահվի նրա սիրտը։ Եթե Թիֆլիսում միջին դասի կինն անկման վիճակի մեջ է, ես գլխավոր պատճառը գտնում եմ նրա անգործության մեջ։ Այդ դասը դեռ բոլորովին փչացած չէ, կարելի է բարձրացնել նրան, միայն պետք էր կնոջ համար պարապմունք գտնել։ Ես գոնյա հասկանում եմ գավառներում այդ դասին վերաբերող կնոջ պարտավորությունը. այնտեղ նրա երեսին պարզ ասում են. «Տե՛ս, քո աշխարհն այս տունն է, իսկ քո սահմանը՝ այս տան չորս պատերն. դու այս տան լավ կարասիներից մեկն ես, նիստ, կեր, խմիր, բայց ոտքդ տնից դուրս չպիտի դնես»։ Այդ դրության մեջ կինը թեև բթամտանում է, անասնանում է, բայց դարձյալ մնում է կին իր նեղ նշանակությամբ։ Բայց Թիֆլիսում կյանքը և նրա պահանջները բավական փոխվել են, նա հեռացել է արևելքից, բայց դեռ չէ մոտեցել արևմուտքին։ Կինն այստեղ հագել է եվրոպացու հագուստը, բայց դեռ չէ ստացել նրա կրթությունը։ Ես շատ հեռու չեմ գնում, թե ինչ է կատարվում Եվրոպայում, բայց առանց անուններ հիշելու ցույց կտամ մի քանի եվրոպացի կնիկներ Թիֆլիսում, որոնք առաջ

ծամապոծներ (парикмахерша) էին, քաղցրավեճիք շինողներ էին, և մեկը մի հայ ընտանիքի դաստիարակուհի էր, իսկ այժմ հարստացել են, առևտրական մեծ տներ են բաց արել, գործարաններ ունեն։

Իմ հետազոտությունը վերջացնում եմ Թիֆլիսի և գավառական միջին դասի կանանց վերաբերյալ, մնում է մի քանի խոսք ավելացնել նրանց ծերության մասին։ Որպես առհասարակ կնոջ վիճակը, այնպես էլ պառավների դրությունը համեմատաբար շատ տարբեր են գավառներում և Թիֆլիսում։ Գավառներում, երբ կինը ծերանում է, որպես մի պատկառելի հնություն, ավելի հարգանքով են վարվում նրա հետ, մանավանդ, երբ նա երախտիք ուներ ընտանիքի վրա։ Որդիքը աշխատում են չվիրավորել նրան, մանկահասակ հարսները խոնարհվում են նրա առջև։ Գերդաստանի բոլոր անդամները ցանկանում են, որ նա օրհնությունը բերանումը մեռնի, նրա անհծքից վախենում են։ Այդ հասակում պառավից գործ չեն պահանջում, այլ թույլ են տալիս առավոտ և երեկո եկեղեցի գնալ, իր հոգու և իր որդիների համար աղոթելու։ Նրան չեն զրկում մանավոր ծախսերից, որ պատկերների համար մոմ գներ և քահանայի սիրտը շահեր։ (Առհասարակ մեր կանայքը սկսում են եկեղեցի հաճախել, երբ մոտենում են գերեզմանին. մանկահասակ կնիկներից չէ պահանջվում ջերմեռանդ լինել, ժամ գնալ, աղոթել)։ Թիֆլիսում, ընդհակառակն, կինը խիստ ընչաքաղց ծերություն է ունենում։ Որդիքը վարվում են նրա հետ անգութ կերպով, իսկ հարսները ծածում են։ Ես տեսել եմ մի քանի օրինակներ, որ որդիները պառավ մորը տնից արտաքսել են առանց պատառ հացի։ Մայրը ստիպվել է դիմել դատաստանի և որդիներից ապրուստ պահանջել, որ քաղցած չմեռնի։ Պետք է բավական բարեխիղճ համարել այն որդուն, որ հոժարել էր հանձնել պառավ մորը մի աղքատ ընտանիքում ամսական 15 ռուբլիով կերակրելու համար։ Մի սարկավագի ընտանիքում պատահեց ինձ տեսնել մի այսպիսի պառավ, որի որդիների համար ասում էին, թե հարուստ են, երկու տներ ունեն։ Պառավների այդ ցավալի վիճակն իմ կարծիքով առաջ է գալիս այն հանգամանքից, որ նրանք, իբրև հին սերունդի մնացորդներ, անտանելի են լինում ընտանիքի մեջ, որ արդեն փոխել էր իր նահապետական կերպարանքը։ Նրանց կռիվը «մոդնի» հարսների հետ ծագում է գլխավորապես այդ հանգամանքից։ Որդին բռնում է իր կնոջ կողմը և մորը արտաքսում է։ Մնողներն իրանց աղջիկը մարդու տալու ժամանակ միշտ հաշվի մեջ են դնում այն հարմարությունը, որ փեսան մայր չունի։ «Մենակ տղա է,— ասում են,— մայր չունի»։ Մնողներն այդ դեպքում ի նկատի ունեն, որ մայր չլինելու պատճառով իրանց աղ-

ջիկը կարող էր կատարելապես սիրել փեսային տան վրա, իսկ հարսն իր կողմից ուրիշ հաշիվ ունի, որ ազատ կլինի, իր վրա հսկող չի լինի։ Դավառներում, ընդհանրապես, ուրախ են լինում, երբ պատառ մայրը կար, մտածում են, որ նա խնամք կտաներ անփորձ հարսի վրա. և նրանք միշտ հաշտ են ապրում, որովհետև թե հինը և թե նորը շատ նման են լինում միմիանց։ Բայց Թիֆլիսում ևս որքան անարդված լիներ պատառ մոր ծերությունը, և որքան հոժարությամբ հանդիպում են նրա մահվանը, այսուամենայնիվ, նրա թաղումը կատարվում է բավական հանդիսավոր կերպով. այն ժամանակ միայն ցույց են տալիս, թե պատվում են նրան։ Այդ, իհարկե, առաջ է գալիս այն սովորությունից, որ մարդիկ եկեղեցական խորհուրդները գործ են դնում իրանց փառասիրությունը հագեցնելու համար։

Խոսենք Թիֆլիսի ունևոր ընտանիքի աղջկա մանկության վրա։ Երկու տարեկան հասակում ծծմայրը նրան տանում է որևիցե հասարակական այգի մաս ածելու։ Եթե նա առաջին աղջիկ ծնունդն է, բախտավոր է լինում, սիրվում է և հենց ծնած օրից վայելում է ճոխություն։ Դեռ չորս տարեկան չեղած, մայրը նրան հպգցնում է բոլորովին ֆանտաստիկական զգեստներ և տանում է կլուբ, երբ լինում է «ընտանեկան գիշեր» կամ երբ տալիս են մանկական բալ։ Ամառը նրան տանում են կոջոր[6] կամ մի ուրիշ ամառանոց, ուր նրա քնքուշ դեմքը մի փոքր այրվում է արեգակի և արձակ օդի տակ։ Աշունքին նա դառնում է տուն, բավական լցված։

Դեռ հինգ կամ վեց տարեկան չեղած, նա հայտնվում է իր մոր հյուրերի հասարակության մեջ, երբ նա տալիս էր «վեչեր», ուր կնիկները հավաքված՝ կամ լոտո են խաղում, կամ թուղթ։ Մայրը զմայլվում է, տեսնելով, որ աղջիկը փոքրիկ ծառայություններ է անում հյուրերին. լոտոյի համար լոբի է բերում, կամ հավաքում է վեր թափված կարտերը։ Ամբողջ ժամերով աղջիկը անքուն նստած, նայում է նրանց խաղին. և լսում է նրանց շատ անգամ անպատշաճ խոսակցությունները և ժպտում է։ Դա էլ մի տեսակ կրթություն է, որ ստացվում է օրինակից։ Մոր հասարակության մեջ երբեմն հայտնվում է մի երիտասարդ, որ բզդում է կոպիտ կատակներ. նա իրան ձևացնում է, թե սիրահարված է փոքրիկ աղջկա վրա և իրան կոչում է նրա ապագա փեսան։

Վերջապես հասնում է ուսման ժամանակը։ Պետք է նկատել, որ Թիֆլիսի հարուստ ընտանիքներում ապաստավորները և ապաստուհիքը բոլորը օտարազգիներ են. ծառաները՝ վրացի կամ իմերել, ծծմայրը՝ օսեթուհի, իսկ վերջին ժամանակներում սովորության մեջ մտան և ռուս

աղախիններ։ Երևանների սկզբնական կրթությունը համարյա հանձնված է նրանց ձեռքը։ Աղջիկը ծծմայրից սովորում է վրացերենը, իսկ ռուս աղախինը ուսուցել է նրան ռուսաց լեզուն։ Մայրենի լեզվից նա մի բառ չգիտե, որովհետև այդ լեզվով ընտանիքի մեջ ոչ ոք չէ խոսում։ Օտար լեզուների մեջ ունեցած պրակտիկան բավական հեշտացնում է նրան սովորել օտարազգի դպրոցներում։ Հայոց ծխական դպրոցներն անպատշաճ են համարվում։ Աղջկան տալիս են կամ պանսիոն բավական բանկ գնով, կամ իգական գիմնազիա։ Սակավ է պատահում, որ տանը հրավիրեն վարժապետ։

Պանսիոնում թեթև կերպով սովորեցնում են աշակերտուհուն օտար լեզվով կարդալ և սխալներով գրել. փոքր-ինչ տեղեկություն են տալիս պատմության, աշխարհագրության և թվաբանության։ Բնական գիտությունների հետ հազիվ թե ծանոթացնում են, իսկ կյանքի գործնական կողմերի հետ նա մնում է բոլորովին անծանոթ։ Այն, որ սովորում է կյանքի համար, սահմանափակվում է մի քանի սալոնական սովորություններով, թե որպես պատշաճ է պահել իրան հասարակության մեջ, որպես գլուխ տալ և այլն։ Ավելացնում են դրանց վրա պարը և պիանոյի վրա ածելը, որ միշտ ամաչում է նա օտարների մոտ ածելիս։ Բայց ինչ որ գլխավորն է, դա է պանսիոնի մեջ տիրող ոգին և ուղղությունը, որ նկարագրում է նրա մեջ միայն թեթևամտություններ... Աղջիկը կորցնում է ինքնուրույնությունը, և բնական նրա մեջ ոչինչ չէ մնում։ Ամեն ինչ նրա մոտ կեղծ է լինում, թե ձայնը, թե խոսելու ձևը, թե աչքերի հայացքը և թե ժպիտը։ Հիմնավոր նրա մեջ ոչինչ չկա. բոլորը զարտակ է, թե սիրտը և թե գլուխը։ Նվ ուրիշ կերպ լինել կարող չէր, արևմտյան կրթությունը նա ստանում է երկրորդական ձեռքից...

Պանսիոնից առնում են «մոդնի» աղջկան, երբ մարդու տալու ժամանակը մոտանում է։ Դպրոցի կրթությունը լրացնում է մայրը։ Երեվակայենք ձեզ մի մայր, որ հանկարծ արևելյան կյանքից արևմտյանի մեջ էր ընկել, փակ ընտանիքից դեպի արձակ աշխարհ էր դուրս եկել։ Տարբերություն ահագին է։ Կինը, որ պատրաստված չէ աշխարհի համար, որ ծանոթ չէ ժողովրդի հետ, որ չգիտե կյանքի արատաքին պայմանները, միշտ անզոր կլինի վտանգների դեմ։ Դրանով պետք է բացատրել շատ մայրերի վարքը...

Ազատվելով պանսիոնից, աղջիկը բոլորովին մի կողմ է ձգում գրքերը, նա սիրում է նայել ավելի «մոդնի ժուռնալների» վրա։ Բայց լինում են այնպիսիները, որ սկսում են կարդալ այն գրքերը, որ պանսիոնում արդելված էին։ Նրանք դառնում են ավելի սանտիմենտալային և

ավելի ցնորամիտ։ Թերի ուսումը և անհիմն կրթությունը երբեմն առաջ են բերում տարապայման անձնավորություններ, այս պատճառով զարմանալի չէ տեսնել, որ մեր թերուսներից հայտնվում են երբեմն «նիհիլիստականեր»։ Ծայրահեղությունները շղշափում են միմյանց։ Տգետ, անհավատ, նախապաշարմունքներով լի և խավար ընտանիքը տալիս է շատ անգամ ծայրահեղ ազատամիտներ, երբ կրթության լույսը մոտեցնում ես նրան։ Բայց այսպիսիների թիվը մեր աղջիկների մեջ շատ փոքրը է։ Ես առիթ եմ ունեցել միայն մեկի հետ ծանոթ լինելու։ Մինչև այսօր չեմ կարող երևակայել մի ուրիշ ողորմելի արարած, որ նրա նման մտավոր հիվանդության մեջ ընկած լիներ։ Ես հարգում էի նրան, որովհետև նա ներկայանում էր որպես մի բաղոք ընտանիքի հնացած նախապաշարմունքի դեմ, բայց ցավում էի, որ այնքան դարտակ էր։

Ընտանիքն ավելի է փչացնում անմեղ աղջկան, քան թե պանսիոնը։ Ծնողների բարքերի կոպտությունը, վայրինությունը, կյանքի համարձակությունը, ասա օրինակ, ահա՛ ընտանիքի այն պայմաններըը, որոնց մեջ կազմվում է աղջկա բնավորությունը սկսյալ նրա մանուկ հասակից։ Աղջիկը հոր երեսը համարյա չէ տեսնում. նա առավոտյան դիմում է իր գործին, երբ բոլորը քնած էին. ամբողջ ցերեկը անց է կացնում խանութում կամ կանտորում։ Երբ գիշերը խանութը կողպվում է, այնտեղից ուղղակի դիմում է կլուբը թուղթ խաղալու և վերադառնում է առն այն ժամանակ, երբ բոլորը նույնպես քնած էին։ Լինում են դիշերներ, որ նա չի էլ վերադառնում... Հայրը զվարճանում է դրսում, իսկ մայրը տանը «վեչերներ» է սարքում, և լոռան ու թղթախաղերը նրա սալոնից անպակաս են լինում։ Աղջիկը սկսում է կամաց-կամաց մասնակցել մոր զվարճություններին, և նեն կին հյուրերի հետ հրավիրված էին տղամարդիկ (որ առանց նրանց չէ լինում), աղջիկը սկսում է ցույց տալ իր բոլոր շնորհքը՝ «կոկետություն» անել նրանց հետ, և զվարճախոսությունն ընդունում է վերին աստիճանի ցինիկյան կերպարանք։

Շռայլություն և բարքերի համարձակություն, ահա՛ երկու ախտեր, որ փտեցնում են մեր բարձր և հարուստ դասի ընտանիքի բարոյական հիմքը։ Ես ուրիշ կերպով չեմ կարող բացատրել այդ երևույթների պատճառները, բայց միայն նրանով, որ Թիֆլիսի մեր բոլոր հարուստները, ինչպես ասում են, «նորաքսակ» մարդիկ են, այսինքն՝ ժառանգությամբ չեն ստացել իրանց հարստությունը, այլ վաստակել են բախտի կամ հանգամանքների հաջողությամբ, և շատ անգամ անպատիվ միջոցներով։ Աղքատությունից հանկարծ հարստության տեր են դարձել։ Այսպիսի մարդիկ չէին կարող տնօրինել մի կանոնավոր տնտեսություն և մի

վայելուչ ընտանեկան կյանք։ Շռայլությունը միշտ կից է լինում հանկարծահաս հարստության հետ, և այս պատճառով նա երկրորդ սերունդին չէ հասնում։ Վայելուչ կյանքը, լի ամեն բավականություններով, բայց միևնույն ժամանակ չափավոր սահմանի մեջ, կազմվում է այն ժամանակ, երբ հարստությունն անցնում է մի քանի սերունդ։ Ես մի շատ հասարակ օրինակով կպարզեմ իմ միտքը, դնենք մի քաղցած հավ մի ցորենով լիքը ամբարի մեջ, ի՞նչ կտեսնեք. նա կսկսի ոչ այնքան ուտել, որքան քթութ անել և ոտներով ցորյանը ցրիվ տալ այս կողմ և այն կողմ։ Նոր հարստացած աղքատն այդ հավի նման է լինում։ Միևնույն օրինակով կարելի է բացատրել և կնոջ բարքի համարձակությունը։ Կինը, արևելյան փակ կյանքի մեջ ճնշված կինը, որին հանկարծ տալիս են ազատություն (դա էլ մի տեսակ հարստություն է) չէ կարող օրինավոր կերպով գործադրել իր ազատությունը, չէ կարող վայելել նրան որպես հարկն է։

Բավական հետացա նպատակից։ Կրկին վերադառնալով դեպի գյուղական ընտանիքը, իմ նկարագիրը վերջացած կլինի։ Կարդալով այս հետազոտությունն, ինքնըստինքյան ծագում է հարց, արդյոք ի՞նչից առաջ եկավ կնոջ մի այսպիսի վիրավորական վիճակը, որ նա ձայն չունի ոչ ընտանիքի և ոչ հասարակության մեջ, որ նա պահվում է անմատչելի ծածկոցի տակ, որպես մի նյութ, որին արտաքին աստիճանական ազդեցությունը կարող էր փշացնել, որ նա իր անձի տերը չէ, այլ գործ են ածում նրան որպես մի սեփականություն, որ ուրիշին էր պատկանում, և վերջապես, որ նա խրեն մարդ զրկված է մարդկային ամեն իրավունքներից։ Այդ հարցերի լուծումը շատ դժվար է, մանավանդ այն պատճառով, որ պատմությունը մեր հին ընտանեկան կյանքից ամենևին տեղեկություն չէ տալիս։ Շատերը կարծում են, թե կնոջ այս դրությունը կազմվեցավ մահմեդական աղդեցության ներքո, ամանք տղամարդի բռնատիրություն են պատճառ բերում։ Բայց իմ կարծիքով, հայ ընտանիքի կազմակերպությունը չէր կարող մի ուրիշ տեսակ վիճակ ստեղծել կնոջ համար, քան թե այն, որ այժմ կա։ Նրա կացությունն այն աստիճան համապատասխանում է իր շրջանին, որ ստիպված ես մտածել, եթե այլ կերպ լիներ, անպատշաճ կլիներ։ Երևակայեցեք ձեզ մի գյուղական ընտանիք, որ բաղկացած է քսան-երեսուն կամ ավելի անդամներից. մի քանի ամուսնացած եղբայրներ միասին են ապրում. նրանց որդիները նույնպես կնիկներ ունեն. տունը լցված է զանազան հասակի երեխաներով. հենց դա մի փոքրիկ պետություն է, ուր մարդիկ կապված են

իրար հետ ընդհանուր շահերով։ Մի այսպիսի ընտանիքի ամբողջությունը և ներքաշնակությունը պահպանելու համար, արևելյան հայացքով, շատ բնական էր, որ կնիկներին ձայն և իրավունք չտրվեր։ Երկպառակությունը եղբայրների մեջ միշտ ծագում է կնիկների անհամաձայնությունից։ Կինը չափազանց բծախնդիր և նախանձոտ է։ Տղամարդը մտածեց նրա բերանը փակել, որ ընտանիքի կապերը չքանդվեն։ Կնոջ դրության մյուս մանրամասներն ևս բնականաբար առաջ եկան միևնույն ընտանեկան պայմաններից, որ պահանջում են նրանից անպայման հնազանդություն։ Իհարկե, կնոջ դրության վրա փորր չազդեց և արտաքին աշխարհը. սիրող ազգերի բռնաբարությունները ստիպեցին քողի տակ պահել նրան։ Մի արաբական խալիֆա ասում է. «Երկու բան պետք է ծածուկ պահել օտարի աչքից, մեկը՝ փողը, մյուսը՝ կինը»։ Այդ խրատը արևելքի պահանջն էր։

Կասեք, ի՞նչ հարկ կար, որ անպատճառ մի քանի եղբայրներ անբաժան ապրեին, երբ կարող էր յուրաքանչյուրը մի առանձին ընտանիք կազմել։ Աշխատանքի բաժանումը պահանջում է հիմնել մի այսպիսի, եթե կարելի է ասել, ընկերական ասոցիացիա։ Գյուղական ընտանիքն անպատճառ պետք է շատ աշխատող ձեռքեր ունենա իր բազմատեսակ գործերի համար։ Ավելացրեք դրա վրա և այն հանգամանքը, որ մեր գյուղային ապրել է միշտ բարբարոս և ավազակ ցեղերի բռնության ներքո. արտաքին ճնշումը ստիպում էր, որ մոտ ազգականները սեղմվեին միմյանց հետ և կազմեին մի մեծ ամբողջ, ոչ միայն ավելի աշխատող ձեռքեր ունենալու համար, այլ մի մեծ ուժ կազմելու համար, և կըռվելով աշխատության արդյունքը հափշտակությունից ազատ պահելու համար։ Դա նահապետական դրության պահանջն է։ Մեր նախապապ Հայկի ընտանիքը բաղկացած էր 300 հոգուց։

Այժմ, որ ազատություն է տիրում, և կյանքի պայմանները փոխվում են, նրա հետ էլ ընտանիքի կազմակերպությունը փորր առ փորր ուրիշ ձև է առանում. զերդաստանի անդամների թիվը պակասում է, եղբայրները պսակվելուց հետո բաժանվում են։ Եվ այստեղից կնոջ վիճակը մասամբ կփոխվի։ Ի՞նչու։ Նրա համար, որ եթե նրանից պահանջում էին հնազանդություն, պահանջում էին լուռ լինել, դա գլխավորապես այն նպատակով էր, որ պահպանվի ընտանիքի ներքաշնակությունը, որ բաղկացած էր շատ անդամներից։ Բայց եթե այր և կին ու իրանց զավակները մի փորրիկ ընտանիք են կազմում, այն ժամանակ տղամարդը նրա հետ շատ խիստ չի լինի, և ինքն իր շահերով միակ կնոջ հետ կապված լինելով, նրա վրա կնայի որպես իր ընկերի վրա և նրան իրա-

վունքներ ու ազատություն կտա։ Եվ կինը, այսպիսով ընտանիքի մեջ փոխելով իր դրությունը, նրա հասարակական դրությունն էլ կփոխվի։ Այս դատողությունները գուցե խորթ երևան, բայց պետք է խորամուխ լինել գյուղական կերդաստանի մեջ, այն ժամանակ կհամոզվի մարդ, թե այդ այդպես է։ Որքան էլ սիրելու լիներ աղամարդն իր կնոջը, որքան էլ ցանկանալու լիներ նրան լավ և հանդիստ պահել, դարձյալ չէր կարող, որովհետև աշխատանքի բաժանումն ընտանիքի մեջ պահանջում է, որ բոլորը հավասար գործեին։ Եթե ամուսինը մի փոքր խնայեր իր կնոջը, իսկույն կգրգռեր իր եղբոր կնոջ նախանձը. և դրանով եղբայրների մեջ համաձայնությունը կխանգարվեր։ Բայց այդ պատահել չէր կարող, եթե բոլոր ամուսնացած եղբայրները միասին չեն բնակվում։

Ընտանիքի նույնիսկ կազմակերպությունը պահանջում էր մտցնել կերդաստանի մեջ միապետական սիստեմա, հանձնելով իշխանությունն այն անձի ձեռքը, որ բոլորից երիցն էր հասակով և բարոյապես հեղինակություն ուներ։ Իհարկե, կինը, որպես ֆիզիկապես մի թույլ արարած, պետք է երկրորդական տեղ բռներ այդ ընկերության մեջ, ուր պահանջվում է ավելի մարմնական ուժ։ Իսկ կինն իր դրության այդ ձևի մեջ, թեև զարերով անցկացրուց շատ դժնդակ օրեր, բայց կարողացավ պահպանել իր բարքի մաքրությունը և առանց փչացնելու հասցրուց իրան մեր ժամանակին։ Այժմ ունենք ձեռքում մի անարատ և դեռ չձևավակերպված տարր, որ սովորել է ընդունել ինչ որ լավ է, ինչ որ օգտավետ է, ում՝ւր նրան ուսում, և նա կլինի քաղաքակրթող տարր, որպես մինչև այսօր եղել է ընտանիքի բարոյական հիմքը և նրա աշխատությունները բաժանող անդամը։ Մեծ բարերարություն արած կլինի կնոջ սեռին այն մարդը, որ լուսավորության կայծը կմտցնի ամենախուլ գյուղական խրճիթներում. այդ լույսը միայն կարող է նրան առաջնորդել և դուրս բերելով անապին փակ շրջանից, կանի նրան հասարակական ընկերության անդամ։

Ես սկսեցի գեղջկուհու ծնունդից. պետք է վերջացնեմ նրա մահով։ Այժմ մնում է խոսել նրա ծերության մասին։ Գյուղացի կինը որքան հնանում է, այնքան անտիկային բնավորություն է ստանում, և որքան հիմարանում է, այնքան խելացի է համարվում։ Տարիների բարդության հետ ավելանում է և նրա հեղինակությունը։ Այդ հասակում որդիքն ավելի պատկառանքով են նայում նրան, հարսներն աշխատում են չվշտացնել։ Ծերունի ծնողների թե անհծքը և թե օրհնությունը մեծ նշանակություն ունին տանիկի մոտ։ Պատահից աշխատություն չեն պահանջում, բողնում են, որ հանգստանա։ Այդ հասակում նա գործում է ավե-

լի եկեղեցում, քան թե տան մեջ։ Նա նախապատրաստվում է գերեզմանի համար։ Պառավի ջերմեռանդությունը հասնում է մինչև խելագարության. նա լինում է չափազանց անհավատ։ Մանկության օրերում և միջին հասակում նա ժամանակ չուներ մտածելու հոգու և երկնքի համար. կյանքն ավելի շատ էր պահանջում։ Տարվա մեջ մի քանի անգամ եկեղեցի գնալով և հաղորդվելով, նա իր պարտքը վճարում էր։ Այժմ հանգամանքները փոխվեցան։ Այսուամենայնիվ, տան մեջ դարձյալ նա հանգիստ չէ մնում. ոսկրացած ձեռները չեն սովորել անգործ մնալ։ Նա է հսկում խոհանոցի վրա, բաժանում է կերակուրները, մատանի բալասնիներն իր մոտ է պահում, և նրա դիտող աչքերը չեն թողնում մի բան իզուր կորչել։ Պառավը որովհետև պառավելով կրկին երեխայանում է, այս պատճառով լինում է նա մի լավ ընկեր երեխաների համար, զբաղեցնում է նրանց, պահպանում է, օրոր է կարդում և երբեմն հեքիաթներ է ասում։ Երեխաներն ընտանիքի մեջ չունեն մի ավելի մտերիմ բարեկամ, մի ավելի հզոր պաշտպան, որպես պառավ տատը։ Սպառող կյանքը և նոր սկսվող կյանքը մոտենում են և գրկում են միմյանց։ «Տան ծերը տան խնչր-բարաքյային (օրհնությունն) է»,— ասում է ռամիկը և շատ ցավում է, երբ նա պակասում է տնից։ Ամենաաղքատ գյուղացին աշխատում է պառավ մոր թաղումը հանդիսավոր կացուցանել, ոչինչ չպակասեցնելով ընդունված սովորություններից։ Նա արժանավոր կերպով վարձատրում է քահանային, «հոգեհաց» է տալիս գյուղական հասարակությանը և «հոգեբաժին» է տալիս հոգևոր կառավարության գործակալին։ Պառավի մահն ավելի թանկ է նստում, քան թե նրա մի քանի տասն տարիների կյանքը։ Չեք գտնի մի գյուղացի, որ իր մոր գերեզմանը թողներ առանց տապանաքարի, որ ամեն տարի նրա շիրիմը օրհնել չտար. կամ քահանային փող չվճարեր «հոգվոց» կարդալու համար։ Հայը առհասարակ հարգում է գերեզմանը՝ երկնքի այդ նախագավիթը, բայց մի բան, որ արժանավոր կերպով չէ գնահատում, դա է՝ կյանքը։

Պ.

ՔԱՂԱՔԱՑՈՒՀԻՆ

Քաղաքում շատ բան փոխվում է։ Իմ խոսքը գավառական քաղաքների մասին է։

Մեր գավառական քաղաքներում չկա արիստոկրատիա, չկա պրո-

լեռարիատ, և չունենք մշակ դաս, ինչ որ հասկացվում է Եվրոպայում այդ անունով։ Մենք ունենք միայն վաճառականներ և արհեստավորներ, ունենք և ծառայողներ ու եկեղեցականներ, եթե վերջինները կարելի էր դասակարգ համարել։ Ես սկսում եմ արհեստավորի կնոջից։

Փոքրիկ մանրավաճառները և արհեստավորները շատ նման են մեկմեկու, կնոջ դրությունը երկուսի ընտանիքում ևս միևնույն է։ Մեր քաղաքներում հարյուրավոր արհեստավորների ընտանիքներ չեն ածած մխյանց վրա և միևնույն տան մեջ, այլ բոլորն առանձին տներ ունեն։ Կյանքի պայմանները թույլ չեն տալիս, որ մի քանի ընտանիքներ մեկ բնակարանում ապրեին։ Քաղաքացին իր տունը վարձով է տալիս այն ժամանակ, երբ իր համար ավելորդ էր, այսինքն, երբ մի քանի տներ ուներ։ Կանանոցն ըստ մեծի մասին տների առանձին բաժնումն է գտնվում։ Ընտանիքի անդամների թիվը համեմատաբար փոքր է լինում, քան թե գյուղերում։ Այստեղ եղբայրները հենց որ պսակվեցան, խիստ սակավ է պատահում, որ միասին ապրեին։

Քաղաքացի արհեստավորն ավելի թշվառ է, քան գյուղացի երկրագործը։ Կյանքի պետքերը շատ են, քան թե նրանց լցուցանելու միջոցները։ Արհեստավորի հին, ասիական ձևով պատրաստած արդյունաբերությունը օրըստօրե գործածությունից ընկնելով, պատճառ է տալիս նրա դառն չքավորության։ Ընտանիքի հայրը վազ առավոտյան գնում է իր խանութը և վերադառնում է մութ գիշերով. նա տանում է իր հետ որդիներից, որը կարող էր իրան օգնել։ Կինը չէ մասնակցում ամուսնի արհեստին և ոչ կարող է օգնել նրան։ Այդ կարևի էր, եթե արհեստանոցը միևնույն տան մեջ լիներ, ուր նրանք բնակվում էին, բայց նա գտնվում է բազարում, և կնոջ համար բազար դուրս գալ անպատշաճ էր. շատ անգամ նա չգիտե, թե ամուսինը որտեղ է գործում և երբեք չէ տեսել նրա արհեստանոցը։ Եվ այսպես, արհեստավորն առավոտյան գնում է իր գործին, կինը մնում է տան մեջ մենակ։ Նա ոչ սպասավոր ունի և ոչ աղախին. ինքն իր տան ծառայողն է, և եթե չուներ նա հատած աղջիկ, որ օգներ իրան, տնային գործերը բոլորն ինքն է կատարում։ Պառավ սկեսուրը միայն հրամայող է և շատ անգամ խանգարում է նրան իր անտեղի պահանջներով, քան թե օգնում է։

Աղջիկն այստեղ ևս ծնվում է միևնույն հանգամանքների մեջ, որպես գյուղերում, և եթե նկարագրեինք նրա որպես աշխարհ գալը և ընդունակությունը, պետք է շատ բան նորից կրկնեինք։ Մայրն ինքն է կերակրում նորածին աղջկան, ինքն է հոգ տանում նրա մաքրության

վրա, որ սկզբում շատ խնամք է պահանջում։ Միևնույն ժամանակ նա պետք է օջախը վառե, կերակուր պատրաստե և ամուսնի համար դուքանը ճաշ ուղարկե։ Փոքրիկ աղջիկը միշտ խանգարում է, այս պատճառով նրան շատ անգամ հենց օրորոցի մեջ ծեծում են, որ ձայնը կըտրի, աղաղակ չբարձրացնե։ Եվ երբեմն խմեցնում են կաթնով եփած խաշխաշ, որ քնե և չխանգարե մորը. թմրությունն և ապշությունն ափիոնի հետ փոքր հասակից մտնում է նրա ուղեղի մեջ։

Աղջկա վիճակը փոխվում է, երբ նա ազատվում է օրորոցից, երբ այլևս չէ կերակրվում մոր ստինքով, և երբ կարողանում է սողալ, կամ չորս թաթիկների վրա քաշ գալ, և կամ պատերը բռնելով ման գալ։ Այժմ նա ինքն իրան կարող է կառավարել։ Նա երբեմն դուրս է գալիս բակը և ամբողջ օրը թավալվում է հողերի և ցեխերի մեջ։ Մայրը մասամբ ուրախ է, որ նրա երեսը չէ տեսնում, և երբեմն դնում է նրան դրսում քնած սառը գետնի վրա, կամ խրված ցեխի մեջ։ Տան շեմքից ոտքը դուրս դնել և փողոցը գնալ նա չէ կարող, որովհետև դուռը միշտ կողպված է լինում, բայց բակը նրա խաղերի համար բավական ընդարձակ տեղարեզ է, մանավանդ երբ զարդարած է լինում պարտեզով, որը գավառական քաղաքներում ընտանիքների միակ մխիթարությունն է։

Դեռ հինգ տարեկան հասակը չհասած, մայրը սափրեցնում է նրան կատարել այս և այն տնային գործը, օգնել իրան։ Ամեն մի անուշադրություն հանդիպում է ծանր ապտակների։ Այդ հասակում նրան թույլ են տալիս գնալ մերձավոր հարևանի տունը, երբ պետք էր մի բան փոխառնել։ Իսկ երբ դառնում է նա տասն կամ տասներկու տարեկան, այնուհետև տան դռները փակվում են նրա առջև։ Խիստ հազիվ անգամ մոր հետ նա աղգականների մոտ է գնում։ Գյուղացի աղջիկն այդ դեպքում ավելի բախտավոր է. նա ապրում է ավելի արձակ աշխարհում. և շատ անգամ, թեև ոչ առանց հսկողության, գնում է այգին, պարտեզը, դաշտը, սարը և շատ բան սովորում է բնությունից։ Բայց արհեստավորի աղջկա աշխարհայեցողությունն իր չափազանց նեղ շրջանի մեջ մնում է խիստ սահմանափակ և միակողմանի։ Փակված տան չորս պատերի խուլ առանձնության մեջ, փակվում է և նրա մտավոր զարգացումը։ Թեև մայրն աշխատում է նրան մի բան սովորեցնել, բայց բոլոր նրա դաստիարակությունը բարոյական բնավարություն ունի, կրթող, զարգացուցիչ նրա մեջ ոչինչ չկա։ Աղջիկը միշտ լսում է միևնույն խրատները, թե պետք է խոնարհ լինի, հնազանդ լինի, սակավ խոսե, ամենևին չծիծաղե, տղամարդերի երեսին չնայե, պառավ կնիկների ձեռ-

քը համբուրև և այլն։ Նրա միտքը, սիրտը և հոգին ճնշում են հին նախապաշարմունքների ներքո և խլում են նրանից ամեն մի ազատ, ինքնուրույն զարգացում։ Նա դառնում է մտավորապես իդիոտ, բայց բարոյապես՝ հրեշտակ։

Աղջկանց դպրոցներ դավառական քաղաքներում չկան, կամ եղածները դեռ մատչելի չեն ժողովրդի աղքատ դասին։ Բողյալ այդ, սակայն դասը դեռ նայում է դպրոցին որպես մի անբարոյականացնող հիմնարկության։ Այդ կարծիքը ստեղծել է ռամկի մտքում նույն ինքը դպրոցը։ Եվ եթե հաջողվում է արհեստավորի աղջկան դպրոց մտնել, ընտանիքի բռնակալությունը շարունակում է դպրոցը։ Վարժապետը և վարժուհին վարվում են նրա հետ նույնպես կոշտ-կոպիտ կերպով և երբեմն՝ ապտակներով, որպես տանը վարվում էր մայրը կամ հայրը։ Ծնողներից նա չտեսավ որևիցե զարգացնող և կատարելագործող օրինակ, իսկ չոր ու ցամաք ուսումը չէ տալիս սնունդ ոչ նրա մտքին և ոչ՝ հոգուն։ Աղջիկը տարիներով երթևեկում է դպրոցը կատարյալ ոգեւորության մեջ, և վնասակարն այն է, որ թերի և անկարող ուսումը, արգելք դնելով բնական զարգացմանը, շինում է նրանց բթամիտ։

Բայց մայրը, ինչ վարքի տեր և լիներ նա, դարձյալ աշխատում է աղջկա սանձը իր ձեռքում պահել։ Ոչինչ օրինակ այնքան կորստաբեր լինել կարող չէ, քան թե այն, որ մարդ խրատում է ուրիշին այն առաքինությունները, որ ինքը չէ կատարում։ Այստեղից առաջ է գալիս մոր և աղջկա մեջ հարաբերությունների մի կեղծ խարդավանք, որով մինը մյուսին խաբում է։ Բայց աղջիկն ավելի վարպետ է լինում։

Դպրոցից դուրս բերելեն հետո աշխատում են աղջկան շուտով մարդու տալ։ Օժիտի քանակությունն առաջուց հրապարակվում է, թե քանի հազար է. նրա համեմատ որոնում են փեսա։ Մայրը սկսում է այնուհետև աղջկան ցույց տալ աշխարհին, այցելություններ են անում, տանում է նրան բալ, թատրոն, «կրուժոկ» և դրանց նման տեղեր։ Աղջիկը միշտ իրան նեղված է դառնում անկիրթ, անտաշ մոր մոտ, որ ամեն տեղ հետևում է նրան որպես մի սև սովեր, բայց թաքցնում է իր տհաճությունը։ Հայրն ամենևին չէ խառնվում գործի մեջ. նա իրան հեռու է պահում։ Դուք չեք տեսնի հարուստ հայրերից մեկին, որ իր աղջկա հետ մանը գալիս լիներ փողոցում։ Այս դեպքում հայը պահպանել է իր ասիականությունն այլև կնոջ վերաբերությամբ։

"Ամուսնությունները լինում են ըստ մեծի մասին հավասարը հավանաբի հետ (նյութական կարողության կողմից)։ Առաջ գերադասում էին ատաիճանը, «մունդիրը», բայց հիմա ատաիճանավորին բանի տեղ

չեն դնում, եթե փող չունի կամ որևիցե բարձր դիրք բռնած չէ։ Մի ժամանակ էլ մոդայի մեջ մտան օտարազգի փեսաները, բայց հիմա նրանք էլ կորցրել են իրանց վարկը, որովհետև համարյա բոլոր ամուսնություններն օտարազգիների հետ անբախտ եղան։ Փեսան աղջկա բերած փողը կերավ և նրան քաղցած թողնից։ Ծնողները սկսեցին տիտոսալ ոչ թե աղջկան, որ մի անպիտանի ձեռքում մաշվում էր, այլ իրանց աված փողին։ Եվ այսպես, ամուսնության մեջ պխավոր դերը խաղում է հաշիվը, և ամուսնական կապը դառնում է փողը։ Ամենևին չեք տեսնի, որ մի աղջիկ, մի քանի տասն հազար օժիտով, պսակվեր մի գեղեցիկ և առողջ երիտասարդի հետ, որ միայն ուսում ուներ, բայց փող կամ պաշտոն չուներ։ Եվ ընդհակառակը, շատ կտեսնեք այնպիսի փեսաներ, որ ամուսին լինելու ընդունակությունը կորցրել էին, որ կյանքը սպառել էին վատ կացության մեջ, բայց պսակվում են աղջիկներից ամենագեղեցիկի հետ, որովհետև փող ունեն։ Սերն ամենևին դեր չունի այս դասի ամուսնության մեջ, և երբ հայտնվում է նա, առաջ է բերում այնպիսի մի բաման, որ ոչ մի գրիչը հարկող բամանիսաը չէր ցանկանա նկարել նրան։ Շատ ցավալի է լինում աղջկա դրությունը, երբ նա միայն փողով պետք է իր համար ամուսին գտնե։ Այդ դեպքում նրա անձնական արժանավորությունները բոլորովին իրանց նշանակությունը կորցնում են։ Գուցե նա գեղեցիկ էր, գուցե խելացի էր, և կարող էր լավ կին լինել, բայց փեսաները նրա մոտով անցնում են կարծես արհամարհելով։ Նա մնում է որպես մի անվաճառ ապրանք, որ խանութպանի լեզվով կոչվում է «փամանդա»*։ Տարինների հետ նրա բնավորությունը փոխվում է։ Կապիկը որքան պառավում է, այնքան չարանում է։ Պառավ աղջիկը սեփականացնում է մազոտ բնավորություն։ Նա դառնում է և նախանձոտ, մանավանդ երբ տեսնում է, որ վատերը փողով մարդիկ են գնում։ Մի հարսից, որ կաղ աղջիկ ուներ, հարցրին. «Ինչպես պետք է մարդու տաս աղջիկդ»։ Նա պատասխանեց. «Հիսուն հազար ռուբլի կդնեմ ոտքերի տակը, երկուսն էլ կդրսուվին»։

Վերջապես աղջիկը մարդի է դնում։ Կին լինելուց հետո սկսվում է նոր կյանք։ Առաջին ամիսներից հետո անցնում է ամուսնական սիրո առաջին ջերմությունը։ Այնուհետև սառնությունն աննկատելի կերպով մեջ է մտնում։ Այր և կնոջ հարաբերությունները պաշտոնական ձև են ընդունում։ Դեպքերն առաջ են բերում սոսկալի պայթումը։ Հետո սկըսվում է ընտանեկան դժոխքը։ Եվ այդ ծագում է խիստ բնական կերպով։

---

* Փամանդա նշանակում է ցած մնացած կամ ետ ընկած։

Ամուսին այրն ունի իր պարապմունքը, իր արուեստին բարեկամները և բարեկամուհիքը. նա ունի իր առանձին զվարճութիւնները, գնում է կլուբ և ուրիշ այսպիսի տեղեր։ Նա այնքան զբաղված է լինում իրմով, որ համարյա մոռանում է, թե կին ունի։ Կինն էլ իր կողմից պետք է իր համար կյանք տնօրինե։ Այս բանի մեջ նրան առաջնորդում է մոր օրինակը։ Նա անում է այն, ինչ որ տեսել ու սովորել է մորից։ Այցելութիւններ է անում, զբոսանքի է գնում, տանը երեկոյթներ է սարքում, թրև է գալիս մագազիններում, զբաղվում է ավելի իր պչրանքներով, քան թե զավակներով, իսկ տնտեսութիւնը մնում է ավազակ ծառաների կամ աղախինների կամքին։ Ամառն անց է կացնում ամառանոցում, իսկ ձմեռը սկսվում է միևնույն դարտակ կյանքը։ Տարիներն անցնում են միմյանց հետևից, միօրինակ և աննպատակ զվարճութիւնները սաստիկ հոգնեցնում են նրան։ Այլևս ի՞նչ անե. ամեն բան փորձել, ամեն բան մաշել է նա։ Վերջին տարիներում սովորության մեջ մտավ արուեստահմանը. կնիկները սկսեցին ձգել ամուսիններին և հետու օտարության մեջ թաքցնել իրանց ամոթը։ Այս բոլորի մեջ ևս մեղադրում եմ տղամարդին, նա ինքն է առիթ տալիս նրան վատ լինելու։

Պատահում են բախտավոր ամուսնութիւններ։ Տղամարդը զբաղվում է իր գործերով, աշխատում է ընդարձակել իր ասպարեզը։ Կինը կառավարում է տունը և նրանից դարձնում է մի փոքրիկ դրախտ։ Երկուսն էլ օգնում են միմյանց. մեկը՝ որպես դրսի մարդ, մյուսը՝ որպես ներսի մարդ։ Կյանքը սահում է իր խաղաղ ընթացքով և լի ամեն վայելչութիւններով։ Զավակները բուլսում են ծնողների բոլորտիքը մաքուր, առողջ, որպես հրեշտակներ։ Ամեն ինչ դրվում է կարգի և օրինավորության ներքո։ Ամուսնական ներդաշնակութիւնը լինում է հիմքն ընտանիքի բարօրության, իսկ բարոյականութիւնը՝ նրա մեջ տիրող ոգին։

Մինչև այստեղ ինչ որ խոսեցի Թիֆլիսի հարուստ կամ բարձր անվանված դասի մասին, վերաբերում էր խոշոր վաճառականներին, նշանավոր կապալառուներին, բանկիրներին, կալվածատերերին, բախտախնդիր սպեկուլյանտներին, և առհասարակ այն հասարակութեանը, որ մեծ կարողության հետ ունի և մեծամեծ մոլութիւններ։ Մնում է մի քանի խոսք ասել աստիճանավորների կնիկների մասին։ Այստեղ ընտանեկան կյանքը գտնվում է իր այլափոխության տագնապի մեջ. դեռևս անձև և անկերպարան է նա։ Ոչինչ այնքան անշնորհք և անարդ չէ լինում, որպես մի կացութիւն, որ ոչ այս է և ոչ այն։ Օտարացումը գտնվում է իր տգետ այլանդակության մեջ։ Ընտանիքը խլվելով մայրենի

բնական հողից, դեռևս հաստատ հիմք չէ ձգել օտար հողի վրա։ Նա տատանվում է որպես մի ծառ, որ արմատ չունի։ Դրանից հետևում է նրա դատապարտումը։ Եթե ավելացնենք և «չինովնիկության» ոգին, որ մտնում է ընտանիքի մեջ, շատ հասկանալի կլինի նրա դրությունը։ Այդ հատաբակության մեջ չքավորությունը կապված է լինում մեծ ծախսերի և շռայլության հետ, որոնք պատճառ են տալիս անբարոյական ձեռնարկությունների նրանց լուծյանելու համար։ Արդարև, այստեղ տղամարդը դեռևս բոլորովին չի կորցրել իր ասիական կատաղի խանդը, որ հոժարվեր կնոջը բաբեկամացնել իր մեծավորի հետ, իր ապարեկը լայնացնելու համար, բայց ուրիշ ցածություններից դեմ նա անզոր է։ Այստեղ նույնպես կնոջ բարքերի աստիճանը վերաբերական է. կան մաքուրներ և կան անմաքուրներ։ Աղջկան փոքր հասակից կրթում են, տաշում են, կոկում են, աշխատելով տալ նրան այն փայլը ավելի «бонтон» լինելու համար։ Նա դառնում է մի «մոդնի կուկլա», որը ոչ սիրտ ունի և ոչ՝ միտք։ Դիտե, արդարև, վարվել, գիտե ծնբծնբվել, գիտե կաշազակի նման շատախոսել, բայց չգիտե մտածել։ Նրա ամբողջ գոյության մեջ տիրում է դատարկություն։ Ծնողներն իրանք են անօրինում նրա ամուսնական բախտը։ Կին լինելուց հետո, ամուսնից շուտով ձանձրանում է, որովհետև նրա սիրտը չէ սովորել երկար սիրել մեկին։ Եվ առաջ է գալիս մի ծիծաղելի վեպ։

Այսուամենայնիվ, այս հասարակության մեջ կան ծնողներ, որոնք դեռ պահպանել են իրանց հայկական խելքը և սովորություններ և որոնք խնայողությամբ շինել են լավ կարողություն և սնուցանում են լավ աղջիկներ։ Այս կարգի մարդկանց վերաբերում են գավառներից Թիֆլիս տեղափոխված և դեռ չփչացած ընտանիքները, և մասամբ՝ տոհմային ազնվականները։ Դրանք ապրում են այն աստիճան պարզ, համեստ, հասարակ և միևնույն ժամանակ վայելուչ կյանքով, որը չեք տեսնի նոր հարստացած վաճառականների մեջ։ Վերջիններն իրանց հարստության հետ ունեն մի տեսակ ցուցամոլություն, որով աշխատում են միշտ աչքի ընկնել։ Նորելուկներն առհասարակ քիթը բարձր են պահում։ Բայց հին և հիմնավոր ընտանիքների մեջ, որոնց սովորաբար կոչում են «ջախի որդիք», օրինավորությունը, պատշաճավորությունն ավանդվել է սերունդից սերունդ տոհմային գերազանցության հետ։ Աղջկա ուսումն այստեղ նույնպես ստացվում է միևնույն աղբյուրներից, ուր սովորում են հարուստ վաճառականների աղջիկները։ Բայց որովհետև աղջիկն ընտանիքի մեջ սկզբից փչացած չէ, դպրոցն իր ավերիչ ներգործությամբ շատ չէ աղդում նրա վրա։ Ավարտելուց հետո դպրոցի թերու-

Բյուններըը լրացնում են տանը, հրավիրելով տնային վարժապետ մայրենի լեզվի համար, այլև օտարերկրյա լեզուների համար, որպես են ֆրանսերենը և գերմաներենը, հրավիրում են և մուղիկայի վարժապետ։ Այս տեսակ կրթություն ստացած աղջիկը, թեև այնքան ինքնակամ չէ լինում, որ իր համար փեսա ընտրեր, և պսակվում է ծնողների համաձայնությամբ, բայց միշտ լավ կին է լինում։ Նրանք երբեմն մարդի են գնում առանց օժիտի, նրա ծնողները հարուստ չէին։ Դա մի շատ ուրախալի երևույթ է, որ աղջկա անձնական արժանավորությունը գնահատվում է։ Նրանց վրա պսակվում են այնպիսի ուսումնական երիտասարդներ, որոնք թեև փող չունեն, բայց հարուստ ապագայի հույս ունեն։ Դրանց մեջ կարելի է տեսնել բախտավոր ամուսնության բոլոր վսեմությունը։

Թիֆլիսի հարուստ դասի մեջ կնոջ ծերությունն այնքան ցավալի չէ լինում։ Պառավի տարիների հետ մոտացվում է և նրա անցյալը. նա դառնում է ավելի բարեպաշտ և սկսում է հաճախել եկեղեցիները։ Տան մեջ նրա վրա նայում են, որպես մի հին կարասիի վրա, որ երկար ծառայելով, մի տեսակ նվիրականություն էր ստացել, որին չեն կամենում դեն գցել, բայց չեն էլ ցանկանում, որ շատ աչքի երևար։ Նրան պահում են որպես մի հնոտիք։ Ցանկալի մահն օգնության է հասնում պառավին։ Դառարկ կյանքից նա անցնում է դեպի դերեզմանի դառարկությունը։ Որդիները նրա թաղումը կատարում են հանդեսով, և մոտ ազգականները սև են հագնում։

Դ

Այժմ դառնում եմ դեպի գավառները։

Գավառներում, ինքնըստինքյան հասկանալի է, որ կյանքի պայմանները փոխվում են։ Մեծ տարբերություն կա Թիֆլիսի բարձր դասի և գավառական բաղաքների նույն դասին պատկանող կնիկների մեջ։ Ընտանիքը շատ չէ հեռացել նահապետականությունից և դեռևս գտնվում է իր արևելյան կազմակերպության մեջ։ Աղջկան մեծացնում են ավելի սաստիկ հսկողությունների ներքո։ Սա պետք է շատ բան նորից կրկնեի, եթե մանրամասնություններ մեջ մտնեի, որովհետև կյանքը և կնոջ դրությունն այստեղ ավելի չէ տարբերվում թե բարձր և թե միջին դասի մեջ, որի մասին խոսեցի իմ հետազոտության նախընթաց գլուխներում։ Ջանազանությունը միայն նրանում է, որ մեկն ապրում է ապահով վիճակի մեջ, իսկ մյուսն իր վշտալի կացության հետ կրում է և աղքատության դառնությունը։

Գավառներում պանսիոն կամ որևիցե բարձր ուսումնական հիմնարկություն չկա։ Նրանք հրավիրում են տնային վարժապետ, դասատվության ժամանակ աշակերտուհու մայրն ուսուցչի կողքին նստած է լինում։ Իսկ նրան ուղարկում են ծխական դպրոց, առանց սպասավորի չէ գնում։ Բայց մեծ մասամբ աղջկան մեծացնում են առանց ուսում տալու, կատարյալ տգիտության մեջ։ Եվ տգիտությունը լինում է նրա անմեղության գլխավոր պայմանը։ Նա չէ առանում և աշխարհային կրքություն. նրան ոչ մի տեղ չեն տանում, օտարներին ցույց չեն տալիս և միշտ հետու են պահում տղամարդի հասարակությունից։ Նա մնում է դանդաղկոտ, ամոթխած, երկչոտ և լի ամեն նախապաշարմունքներով։

Ծնողները տալիս են աղջկան իրանց ընտրած փեսային, և օժիտի առվորությունը շատ ծանր լինելով, փեսա գտնելը միշտ հեշտ է լինում։ Երբ հայրը հարուստ էր, կամ աղդեցություն ունեցող մեկն էր, ամեն երիտասարդ ցանկանում է նրան փեսա դառնալ, կողմնակի կերպով նրանից օգուտ քաղելու համար։ Մեր մեջ վաղուց հարց է բարձրացել, թե աղջկան թույլ չեն տալիս ազատ կամքով իր ամուսնական վիճակը ընտրելու։ Մի՞թե նա կամք ունի։ Նրան այն աստիճան միամիտ, անփորձ և կյանքի հետ անծանոթ են մեծացրել, որ նրա համար իր կամքին թողնելին, առաջին պատահած շարլատանը կարող էր խաբել և անբախտացնել նրան։ Ծնողները գոնյա ճանաչում են աշխարհը և գիտեն նրա պահանջները, աշխատում են իրանց զավակին մի հուսալի և ապահով մարդու ձեռքը տալ։ Այնուհետև աղջիկը, որպես հղել էր իր հոր և մոր խոնարհ զավակը, այնպես էլ դառնում է իր ամուսնի հնազանդ և հլու ամուսին։ Եթե հազիվ դեպքեր առաջ են բերում անհամաձայնություն, և ամուսնական անհավատարմությունը նույնպես հազվադյուտ երևույթ է գավառներում։

Կին լինելուց հետո նա իսպառ կորցնում է իր ազատությունը։ Նրան պահում են փակված, տան չորս պատերի մեջ և ոչ որի ցույց չեն տալիս։ Նա իրավունք չունի բացի իր աղամարդից մի օտարի հետ ոչ տեսնվելու և ոչ խոսելու։ Նա տեսնվում է և խոսում է, այն էլ խիստ սահմանափակ անգամ, միայն իր ամենամերձավոր ազգականների հետ, որպես են հայրը, մայրը, քույրը, եղբայրը և այլն։ Նա չէ խոսում և իր ամուսնի հոր, նրա եղբոր և նրա ազգականների հետ արական սեռից։ Բացի ընտանեկան նեղ շրջանից, արտաքին աշխարհում կինը տեղ չունի գավառների մեջ։ Թատրոն, բալ, «կլուժոկ» և մինչև անգամ ամենահասարակ զվարճության տեղեր չկան։ Հասարակաց այգիները աղամարդե-

րի համար նա։ Կինը զրկված է բոլոր արտաքին վայելչություններից։ Նա իրավունք չունի այլևս իր ներքին շրջանի մեջ, ընտանեկան «օջախում» մի ուրախ օր անցկացնել։ «Վնչներներ» տալ չէ կարող։ Նվ եթե լինում են երբեմն հրավերներ, այն ևս ամենամերձավոր բարեկամների կնիկներն են կանչվում. ոչ մի տղամարդ նրանց «մեջլիսի» մեջ մասնակցել չէ կարող, և մինչև անգամ տանտիկնոջ ամուսին այրն այն օրն իր տունը չէ մտնում, էլ տանը կին հյուրեր կային։ Սակավ է պչրանքը, սակավ է զարդարանքը։ Փակված տան մեջ ո՞ւմը պետք է իրան ցույց տա կինը։ Նվ այդ հևռու է պահում նրան շռայլությունից։ Չկա դատարկաշրջիկ կյանք, որ սարսափելի կերպով տանում է կնոջը դեպի մոլորություն։ Նա ապրում է որպես մի ողորմելի միայնակյաց. և ճգնում է տնային լռության մեջ։ Եթե հազիվ անգամ նա երկչոտ դեմքով լուսամուտից նայում է դեպի փողոցը, երբ պատահել էր մի օտարոտի աղմուկ։ Այս պայմանների մեջ, թեև գավառացի կինն իր նազելությամբ չէ քաղցրացնում աղամարդի սիրտը, թեև նա առհասարակ զուրկ է լինում այն հրապուրիչ հատկություններից, որ կոչվում է կանացիություն, բայց տնտեսության մեջ, իբրև անխոնջ տանտիկին, նա հրաշալի է։ Եվ այդքանն է պահանջում նրանից տղամարդը։

Պատահում են և օտարոտի երևույթներ։ Տեսնում ևս մի վաճառական, որ եղել էր Թիֆլիսում, Մոսկվայում, կամ իր գործերով ընկել էր արտասահման։ Տեղային կնիկները նրա մեջ առաջ են բերում մի տնսակ ազատամտություն։ «Ինչո՞ւ իմ կինս էլ դրանց նման չպիտի լինի»,— մտածում է վաճառականը։ Նա կարծում է, թե բավական էր, որ կինն այնպես հագնվեր, որպես մի ֆրանսուհի, և իսկույն նրա նման կլիներ։ Ապսպրում է հագուստներ վերջին մոդայի ձևով և վերադառնում է տուն։ Կինը հագնելու հղանակն անգամ չգիտե. մարդը օգնում է նրան, որքան իրան հայտնի է։ Եվ հանկարծ «մոդնի կապիկը» սկսում է հայտնվում փողոցներում, մտնում է զանազան շրջանների մեջ։ Նա ինքը շատ գոհ չէ իր այլափոխությունից. նեղվում է, կարմրում է, քրտնում է և կարծում է, թե ամբողջ աշխարհը ծիծաղում է իր վրա։ Բայց ի՞նչ անե. մարդը ցանկանում է, որ նա քաղաքակրթված կին լիներ։ Դա կատարյալ տանջանք է։ Ով որ տեսել էր մոդնի մադազիններում դրած «մաննեկենը», որ գործ են ածում զգեստներ չափելու և փորձելու համար, կարող է մի ճիշտ նմանություն դանել դրա և մեր գավառացի «մոդնի» տիկնոջ մեջ, որն այնքան է հասկանում իր նոր հանդերձի գործածությունը, որքան հասկանում է փայտից շինած «մաննեկենը»։ Ես նախապաշարմունքով չեմ նայում երևույթի վրա։ Ես սիրում եմ կնոջ «զրա-

ցիան», սիրում եմ նրա նազելիությունը։ Բայց չեմ կարող չվրդովվել, երբ կնոջն անփորձ, անպատրաստ բայց են թողնում դեպի աշխարհ։ Այսպիսի կինն առաջին ղոհն է դառնում կյանքի հանդուգն այլափոխությյան։ Ես կարող եմ մատներով համբարել շատ օրինակներ, բայց ի՞նչ հարկավոր է. կենցաղավարության ընդհանուր օրենքները սատարիկ պատժում են, երբ կինը նրանց դեմ գնդծումներ է գործում։ Մի մարդ, երբ երկար ժամանակ պահվել էր մութ սենյակում, երբ հանկարծ նրան դուրս են թողնում լույսի մեջ, նրա աչքերը լավ չեն տեսնում, շլանում են, և նա ընկնում է։ Նույնը պատահում է տան մեջ փակված կնոջ հետ։

Գավառներում ատաքճանավորի կամ կառավարության պաշտոնյայի ընտանիքը բավական տարբերվում է հարուստ վաճառականի և կալվածատերի ընտանիքից։ Այստեղ աշխատում են կյանքին տալ, որքան կարելի է, եվրոպական ձև։ Ծառայող հայրը ինչ որ տեսել էր իր ուսումնավորի տանը, նույնը աշխատում է մտցնել և իր ընտանիքի մեջ։ Աղջկան, եթե հոր կարողությունը ներում է, ուղարկում են Թիֆլիս որևէ պանսիոնում սովորելու համար։ Նա վերադառնում է, իր հետ բերելով Թիֆլիսի մոլությունները։ Հայրը խոսում է նրա հետ ռուսերեն, իսկ մայրը ներողամտությամբ է նայում իր դստեր թեթևամտությունների վրա, կարծելով, թե «ուսյալ» օրիորդն այնպես պետք է լինի։ Բարեկամներից մեկը, որ ֆրանսերեն լեզվի վարժապետ էր, պատմում էր, թե ինքն առիթ ունեցավ ծանոթանալ մի օրիորդի հետ, որ բնակվում էր մի փոքրիկ գյուղաքաղաքում, որովհետև այնտեղից էր։ Օրիորդի հայրը ատերության ծառայության մեջ այնքան վարպետ էր գտնվել, որ դիզել էր բավական փող և կարողացել էր աղջկան Թիֆլիս ուղարկել, ուր նա ուսում էր ստացել։ Բարեկամս խոստովանվում էր, թե օրիորդը չէր սիրում նրան, բայց ուներ դեպի նա մի առանձին համակրություն այն պատճառով միայն, որ երիտասարդը խոսում էր ֆրանսերեն և երկար ժամանակ ապրել էր Փարիզում։ Նա հավատացնում էր, թե ինքը Փարիզի ամենացած «դրիզետկաների» մեջ չէ տեսել մի աղջիկ[8], որ նրա նման արձակ վարքի տեր լիներ։ Օրիորդն աշխատում էր ազատամիտ ձևանալ և հետու մնաց նախապաշարմունքներից և իր ազատամտությունը ցույց էր տալիս նրանով, որ շատ անգամ ընդունում էր երիտասարդին իր քնարանում, և ինքը մահճակալի վրա պառկած, ոտները հենարանի վրա ցցած, խոսում էր նրա հետ Վոլթերի և Ռուսոյի վրա, որոնց մտքերի հետ ամենևին ծանոթ չէր։ Ահա այսպես փչացնելով աղջկան, դյուղ են գավառական համեստ քաղաքը։ Գալիս է ժամանակը, որ պետք է մարդու տալ։ Մի վաճառական տղա, թեև հարուստ, անարժան է համարվում «ուս-

յալ» և «կրթյալ» օրիորդին ամուսին լինելու (խոսքը մեր մեջը մնա, վաճառականն ամենևին չի էլ ցանկանա նրա ամուսին լինել)։ Տալիս են «մունդիր» ունենալ մարդու։ Որովհետև այսպիսիների թիվը շատ սակավ է, ուրևմն ընտրության մեջ խիստ չեն վարվում. գյում են առաջին պատահողի ձեռքը։ Կին լինելուց հետո «ուսյալը» շրջապատում է իրան քաղաքի ծառայողներով, ինչ ազգից և լինեին նրանք՝ հայ, թուրք, ռուս և այլն։ Բոլորը հավաքվում են նրա սալոնում և թուղթ են խաղում։ Ուրիշ զվարճություն չկա։ Եվե ամուսին այրը լավ խաղացող է, կամ դիան վարպետությամբ կարտերը «շինել», լավ օդուտ է քաղում իր կնոջ «ֆիրմայից», ամեն գիշեր կողոպտելով իր հյուրերին։ Ես մի գիշեր ունեցել պատահել մի այսպիսի ընտանիքում. ոչինչ շրջան այնքան զզվելի չէր կարող լինել, քան թե այն։ Ինձ վրա նայում էին որպես մի տիմարի վրա, որովհետև խաղալ չգիտեի։ Բայց դատարկ կյանքը շուտով ձանձրացնում է մեր «ուսյալին»։ Դավառական փոքրիկ քաղաքը խիստ նեղ է գտնում իր ասպարեզի և բավականությունների համար։ Այս պատճառով երբեմն գնում է Թիֆլիս իր հին բարեկամների և բարեկամուհիների հետ տեսնվելու համար։ Եվ ամեն անգամին ապսպրում է իր համար նոր զգեստներ, որովհետև իր քաղաքում գերձակը «մոդայի» հետ ծանոթ չէր։ Եվ ամեն անգամ վերադառնում է մի նոր շրջի։

Բայց այսպիսիներին պետք է բացառություն համարել, որովհետև նրանց թիվը շատ փոքր է։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ իմ վերևում նկարած տիպը Թիֆլիսի պատուղ է, որտեղից կեղծ կրթությունը, որպես պղտոր աղբյուրից, հոսում է դեպի գավառները։ Բայց առհասարակ գավառացի կինը չունի այն համարձակությունները։ Այստեղ կինը, որքան էլ հարուստ, որքան էլ բարձր տան հարսն լիներ, ապրում է փակված կյանքի մեջ. և շատ վախենում է բամբասանքից։ Մեծ քաղաքներում ոչ ոք ուշադրություն չէ դարձնում, թե ինչ է գործում նրա դրացին, բայց գավառական փոքրիկ քաղաքում կնոջ ամեն մի սխալ քայլը գրգռում է ընդհանուր հետաքրքրություն։ Նա իսկույն դառնում է մեղադրանքի առարկա, որ նկատում են նրա մոտ որևիցե տարապայման վարմունք։ Նրան կսկսեն մատով ցույց տալ, նրա մասին կշարադրեն զանազան պատմություններ և պատահած ժամանակ կհանդիմանեն տղամարդին, թե՝ քո կինն անառակ է։ Այս պատճառով գավառացի կինը չէ համարձակվում ոտքը դուրս դնել ընդհանուր սովորությունից։ Շատ էլ ցանկանար, չի կիրողներ։ Նկատված է, եթե տղամարդը, հետևելով մեծ քաղաքների օրինակին, կամենում է կնոջը փոքր-ինչ ազատություն տալ, նրան աշխար-

դուրս բերել, ընտանիքի մեջ ծագում է մի մեծ փոթորիկ, եթե նրա մեջ կային դեռ պառավ մայր և ծերունի հայր։ Հին և նոր սերնդի կռիվը դեռ չէ վերջացել։ Եվ եթե դերևզմանը կծածկեր այդ հներին, նախապաշարմունքը և վաղեմի սովորությունը դարձյալ ընդ երկար կպահեին կնոջն իր կաշկանդյալ վիճակի մեջ։ Ես ճանաչում եմ շատ գավառացի վաճառականներ, որոնք գործով իրանց կնիկների հետ բնակվում են Թիֆլիսում։ Այստեղ նա ման է ածում իր կինը, տանում է զանազան զվարճության տեղեր և տանը նրան չէ թաքցնում իր հյուրերից։ Բայց եթե միևնույն մարդուն իր բարեկամը կպատահի գավառում, նա կնոջն այլևս ցույց չի տա։ Ի՞նչու եմ օրինակ բերում վաճառականին։ Բարձր ուսում ստացած երիտասարդը, որ նույնպես ուսյալ կին ուներ, գավառը վերադառնալիս, ենթարկվում է միևնույն ընտանեկան պայմաններին, եթե չէր ցանկանում հասարակաց բամբասանքի առարկա դառնալ։

Ընտանիքը և կյանքը դարերով մշակել են այնպիսի սովորություններ, որոնք երկաթի օրենքի զորություն են ստացել։ Հեշտ չէ միանգամով նրանց խորտակել։ Կնոջ դերը և տղամարդի դերը բոլորովին որոշված են։ Կինն իշխում է տան վրա, չորս պատերի մեջ, և միանգամայն անձնատուր է լինում իր զավակներին, սպասավորներին և խոհանոցին։ Տղամարդը գործում է դրսում։ Կնոջ և տղամարդի գործունեությունն այն աստիճան բաժանված են միմյանցից, որ առաջինն ամենևին չգիտե, թե ինչ է շինում իր ամուսինը դրսում։ Եվ այս պատճառով, նա ձգում է իրանից ամեն պատասխանատվություն տղամարդի գործերի հաջողության մասին։ Քանի տղամարդն աշխատում է, վաստակում է, բերում է, միասին վայելում են։ Իսկ երբ նա տկարանայով, այնուհետև կինը լինում է նրա անբախտության անարատ բաժանորդը։ Կնոջ և տղամարդի մեջ ընկերական կապ չկա։ Կա միայն կրոնի, ամուսնական կապ։ Որպես գործով բաժանված են նրանք միմյանցից, այնպես էլ բաժանված են և հասարակական կյանքով։ Ամուսին այրը, երբ պատահում է փողոցում իր կնոջը, երեսը շուռ է տալիս և անցնում է, կարծես չէ ճանաչում նրան։ Երբ կնոջ գործունեությունը սահմանափակվում է ընտանեկան «օջախի» շուրջը, ահա այս է, որ նրան փոքրացնում է և շինում է բոլորովին կրավորական էակ։ Կինն այն ժամանակ միայն կմանար իր մեծ դերի մեջ, և այն ժամանակ կդառնար բաղաքակրթող ազդ, երբ կրոնի ամուսնական կապի հետ նրա և տղամարդի մեջ կկազմվեր և բնկերական կապ, մինը մյուսին փոխադարձ համերաշխությամբ, կյանքի բոլոր պետերի մեջ։ Բայց քանի որ մենք կնոջ կրթությունը սկսում ենք նրանից, որ պատրաստում ենք նրան հանդես դուրս բերել, ցույց

տալ աշխարհին որպես մի գեղեցիկ բան, միշտ սխալանքի մեջ կընկնենք։ Կնոջ գործակցությունն իր տղամարդի հետ այն աստիճան կտրված է լինում, որ եթե ամուսին այրը հանկարծ մեռնում է, նրա որդիքը մնում են առանց մի պատառ հացի։ Ահագին հարստություններ, երբ հուսալի ձեռքերում չէր գտնվում, մի քանի տարվա մեջ ոչնչանում է, կողոպտվում է։ Կինը, որովհետև անտեղյակ է լինում ամուսնի գործերին, տգետ և անփորձ է լինում, այս պատճառով չէ կարողանում պահպանել նրա թողած ժառանգությունը։ Այսպիսի օրինակներ շատ են եղել. բայց դեռևս չէ տեսնվել մի օրինակ, որ ամուսնի մեռնելուց հետո կինը շարունակեր նրա գործը, մահվան հետ և նրա ֆիրման ծածկվում է։ Գյուղացի կինն այդ դեպքում ավելի բարձր է. մարդու մեռնելուց հետո նա շարունակում է երկրագործությունը և կերակրում է նրա թողած որբերին, որովհետև նա նույն գործին սկզբից ծանոթ էր, նրա մեջ աշխատել էր։

Մնում է ավելացնել մի քանի խոսք գավառական կնոջ մտավոր զարգացման մասին։ Մի՛ մոռացեք, որ խոսքս բարձր դասի մասին է։ Փակ կյանքի մեջ, ընտանեկան նեղ շրջանում նրա աշխարհայեցողությունը մնացել է չափազանց սահմանափակ։ Տղամարդը մի կողմից իրավունք ունի, որ նրան ոչ ոքի ցույց չէ տալիս, իրան չխայտառակելու համար։ Ես ուրիշ եմ ունեցել ծանոթանալ մի քանի գավառացի կնիկների հետ. ահա այն տպավորությունները, որ երբեք մոռանալ չեմ կարող։ Մտնում ես, դիցուք թե, մի հարուստ վաճառականի տունը, աղան տանը չէ, քեզ ընդունում է կինը, երբ իմանում է, որ գործով ես եկել, և մանավանդ շատ անգամ քեզ տեսել էր իրանց տանը, փոքր-ինչ ընտելացել էր, ընտելացել էիր և դու։ Քեզ հրավիրում են հյուրանոցը. դու նստում ես առանց տանտիկնոջ կողմից քեզ ցույց տալու, իսկ նա ոտքի վրա կանգնած է մնում։ Պետք է դու մի քանի անգամ ասես, խնդրես նրան, որ նստե։ Նա որոշում է միշտ քեզանից ցած նստել և հետու։ Եթե դու չխոսես, նա ամբողջ ժամերով լուռ կնստե։ Սոսկալի ես զբաղեցնել տիկնոջը։ Անկարելի է նրա հետ որևիցե խոսակցություն շարունակել, պետք է անդադար մի առարկայից թռչել դեպի մյուսը։ Այսպիսով խոսակցությունը կընդունե հարց-պատասխանի ձև։ Դու նրան միայն հարցեր կառաջարկես, նա կտա երկու բառով մի պատասխան և կլռե։ Խոսել նա չգիտե, բառերը միշտ պակասում են նրա մոտ այն ժամանակ, երբ խոսում էր իրան ծանոթ ամենահասարակ մի առարկայի վրա։ Նրա լեզվի բառարանն այնքան աղքատ է, որպես այդ լինում է երեխաների կամ վայրենիների մոտ։ Երբ դու խոսում ես, նա միշտ ցած է նայում.

նա իր երևոը չէ բարձրացնում և ինքը խոսելիս՝ Միշտ մատներով անդիտակցաբար խաղում է ղգեստի որևիցե մասնի հետ։ Երբ պատահմամբ նրա աչքերը հանդիպում են քո աչքերին, իսկույն ցած հայտնվում է վարդագույն ներկ։ Փորձում ես պատմել նրան ծիծաղելի անեկդոտներ, նա երբեմն ժպտում է, բայց չէ ծիծաղում։ Ոչինչ բանով նրան հետաքրքրել չես կարող։ Երբ նա մենակ է քեզ հետ, կարծես նեղվում է և միշտ ուիլ է որոնում դուրս փախչելու։ Մի երբորդ անձն, թող թե նա փոքրիկ երեխա լիներ, որպես պաշտպան, կարող էր հանգստացնել նրան։ Դեպքեր շատ են եղել, որ մի պատվավոր կին զոհ է գնացել իր ամոթխածությանը։ Նա այնքան համարձակություն չէ ունեցել ընդդիմադրելու մի լրբի դոնժուանությանը։ Դժվար կարելի է գտնել մի կին, որ իր զգացմունքը, թե՛ սերը, թե՛ տխրությունը և թե բարկությունը կարողանար արտահայտել լեզվով։ Այսպիսի դեպքերում նա միայն գործ է ածում միավանկ ձայնարկություններ։ (Դա անասունների զգացմունք հայտնելու ձևն է)։ Եվ կամ լուռ արտասուքը լինում է նրա սրտի ինքնամաքրությունը։ Բայց արտասուքը բազմիմաստ նշանակություն ունի։ Գավառացի կինը, որպես չէ նշանավորվում իր մտքի և խելքի առաձգականությամբ, այնպես էլ նա զուրկ է մարմնի դյուրաբեկությամբ, անդամների համարձակությամբ։ Նա շարժվում է ամբողջ մարմնով, ինչպես մի արձան։ Եվ արձանի նման սառն ու անարյուն է նա։

Գավառներում շատ տեսնի, որ կինը աղամարդի մոտ երբեք կամ նրա հետ պար բռներ։ «Յալլիի» սովորությունը պահվել է մի քանի տեղերում միայն, առավելապես գյուղերում։ Իսկ այն գավառական քաղաքներում, որպես են Նուխին, Բաքուն և Շամախին, ուր հայ կինը դեռ մուրք կնոջ հպարտա ունի, նա սահմանագրել է իրան բոլոր հարմարական սովորությունները։ Կնիկները, որ պար են գալիս միայն հարսանիքների մեջ, առանձին հավաքվում են մի սենյակում, լուսամուտների վարագույրները իջնցնում են, իրանց մոտ են կանչում «սազանդարներին», ածել են տալիս և պար են գալիս։ Ոչ մի աղամարդի աչք նրանց վրա նայիլ չէ կարող։ Իսկ հին ժամանակներում, որպես պատմում են, ածողներին ևս իրանց մոտ չէին թողնում, որովհետև աղամարդիկ էին, այլ նրանց կանգնեցնում էին գահլիճի մի առանձին մասնում, որ բաժանված էր պարահանդեսի տեղից վարագույրով. կնիկները միայն նվագարանի ձայնն էին լսում, բայց ածողներին չէին տեսնում։ Դա կատարյալ մահմեդական սովորություն է։

Տարիների ընթացքի հետ, գավառական կինը, երբ հետանում է, երբ կորցնում է իր կանացիությունը, այն ժամանակ սառնում է մի տեսակ

առձակաւթյուն, այն ժամանակ միայն մարդ է դառնում և խառնվում է մարդկային հասարակության մեջ։ Նրան այդ հասակում կարելի է տեսնել, նրա հետ կարելի է խոսել։ Նա այլևս կին չէ, այլ իրան կոչում է ամենի «մայրիկը»։ Եվ այսպես, կինն այն ժամանակ միայն մտնում է իր հասարակական դերի մեջ, երբ պատռվում է, ասել է թե՝ երբ կրկին երևիայանում է։ Կյանքի երկու ծայրերում՝ տղայության և ծերության հասակում, նա մատչելի է լինում. երկուսն էլ շատ նման են մեկմեկու Դավառացի կնոջ ծերությունը, ինչպես առհասարակ նահապետական ընտանիքների մեջ, պատվավոր է լինում։ Նրա ձեռքը համբուրվում է, և ամեն ոք դիմում է նրանից օրհնություն առնելու։ Որդիները լսում են նրա խրատները, իսկ հարսներն ավելի հպատակում են նրա հեղինակությանը։ Նրա մահն անկեղծ ցավ է պատճառում տղամարդկանց, իսկ թաղումը կատարվում է հանդեսով։

Ե

Վերջացնում եմ հետազոտությունը մի քանի ընդհանուր նկատողություններով։ Ես սկսեցի դյուղացի կնոջից և ապա անցա դեպի քաղաքացի կինը, նկարեցի նրա տիպերը գավառներում ընդհանրապես, իսկ Թիֆլիսում մասնավորապես։ Ջանց չարեցի նաև պատկերացնել կինը ժողովրդի յուրաքանչյուր դասակարգի մեջ առանձին կերպով։ Հիշյալ հետազոտության մեջ, երբ հայ կնոջ նմանեցնենք մի ծառի, նա այսպիսի կերպարանք կստանա. հողը արգավանդ է, ծառի արմատն առողջ է, բունը՝ նույնպես, բունից բաժանված ճղները դարձյալ պահպանել են իրանց թարմությունը, իսկ ծառի վերին մասի ոստերը՝ նրա բարձր կատարը, սկսել է գոսանալ, տերևները դեղնել են և մասամբ թափվել են, այնտեղ կենդանությունը վերջացել է։ Դա մի հակաբնական երևույթ է։ Ծառի հիվանդությունը սկսվել է գլխից։ Եվ դույտ հատուկ է մեր ժողովրդին միայն, որպես արդարացնում է դրան հայկական առածը, թե «ձուկը գլխից կհոտի»։ Պարզ խոսենք։

Կինը ժողովրդի ստոր դասի մեջ (որի ներկայացուցիչն է մեզանում դյուղացին) ցույց է տալիս կենդանություն. նա թեև ռամիկ է, տգետ է, նախապաշարմունքներով լի է, բայց ավելի աշխատասեր է, ավելի գործունյա է և պահպանել է իր բարոյական մաքրությունը։ Դա ծառի արմատն է։ Կինը, ժողովրդի միջին դասում, փակվում է տան չորս պատերի մեջ և իր գործունեությունը սահմանափակում է միայն տնային «օջախի» շուրջը. բարոյականությունը այստեղ ևս գտնվում է իր սրբության մեջ,

բայց զարգացման մակերևույթը չէ բարձրանում։ Դա ծառի բունն է։ Կինը ժողովրդի բարձր դասի մեջ, զավառներում շատ չէ տարբերվում միջին դասից, և գրեթե միևնույն հատկություններ է կրում. բարոյականությունն այստեղ ևս պահպանվում է կնոջ բանտարկության մեջ։ Դա ծառի ճյուղն է։ Իսկ Թիֆլիսում, ժողովրդի բարձր դասակարգի մեջ, արդեն սկսվում է կնոջ բարոյական չքավորությունը։ Ապականությունը տիրում է այնտեղ, և կինը դառնում է իր դասացած դրության մեջ։ Դա ծառի կատարն է։

Նկատելի է մի ուրիշ երևույթ։ Կինը, սկսյալ ժողովրդի ստոր դասակարգից, որքան աստիճանաբար բարձրանում է, որքան նա ծանոթանում է աշխարհի հետ և որքան նա մոտենում է գիտության լույսին, այնքան ավելի անպիտանանում է, և այնքան ավելի սեփականացնում է իրան այնպիսի հատկություններ, որ բարոյական չեն։ Բողյալ այդ, կինը ժողովրդի ստոր և միջին դասերի մեջ պահպանել է իր ցեղական առանձնահատկությունները, հավատարիմ է մնացել իր ազգային անհատականությանը, խոսում է մայրենի լեզվով, հարգում է վաղեմի ավանդություններր, ավելի մոտ է եկեղեցուն և չէ հեռացել այն սովորություններից, որով ապրել են նրա մայրերը։ Որի ընդհակառակն, կինը բարձր դասի մեջ (բացի գավառներից) արդեն սկսել է օտարանալ, չէ խոսում մայրենի լեզվով, հեռանում է եկեղեցուց և զզվանքով է նայում ազգային ավանդությունների վրա։ Այսպիսի տխուր երևույթները տեսնելուց հետո ի՞նչ ասենք. արդյոք կրթությունը վնասակա՞ր էր, թե կինն իր մեջ հիմք, ամրություն չուներ, և կրթության լույսը ու ջերմությունը նրան մոտեցրածին պես, նա լուծվեցավ, իր բաղադրությունը փոխեց։ Ոչ այն և ոչ այս, կասեմ ես. պատճառները պետք է ուրիշ բանի մեջ որոնել...

Դրությունը բոլորովին հուսահատական չէ. կանացի ամբոխը պահպանել է իր անարատությունը իր կատարյալ մաքրության մեջ. դա, թեև անմշակ, բայց չափազանց արգավանդ հող է, որ հմուտ երկնագործի ձեռքում կարող է հրաշալի պտուղներ ընծայել։ Փույթ չէ, եթե ամբոխի մակերևույթից բարձրացած առանձին մասերը ցույց են տալիս մի քանի փտության նշաններ, դրանք կամ ժամանակով կփոխվեն դեպի լավը, և կամ կորվելով, կհեռանան մարմնի ամբողջությունից... Բայց միևնույն ժամանակ ցավալի է տեսնել, որ ժողովրդի բարձր դասի մեջ, ուր կինը թե իր դիրքով և թե կրթությամբ նշանավոր տեղ էր բռնում, փոխանակ բարոյապես ներգործելու իրանից ցած աստիճանների վրա դրված իր սեռակից քույրերի վրա, նա ինքը դառնում է վատ օրինակ, նա ինքը տարածում է շռայլություն և բարքերի ապականություն։

Այլևս որտե՞ղ է մնում կնոջ բարձր, քաղաքակիրթ նշանակությունը, ո՞ւր է նրա կենսագործող հեղինակությունը ոչ միայն ընտանեկան նեղ շրջանում, այլև ժամանակակից հասարակության վրա։ Իմ կարծիքով, հայ կինն այդ աստիճանին հասնել չէ կարող, քանի որ նա փակված կմնա տան պատերի մեջ։ Մինչև այսօր, երբ կինն ասիական կյանքով էր ապրում, երբ հայը մահմեդականի հպատակ էր, մասամբ նպատակահարմար էր նրան արգելված պահել։ Իսկ այժմ կյանքի պայմանները փոխվել են. պետք է բաց անել կանանոցի դռները։ Մինչև այսօր կնոջ կրքերը զսպվում էին, նրա բարոյականությունը պահպանվում էր փակ կյանքի մեջ մի կողմից, ազիտության մեջ՝ մյուս կողմից։ Կարո՞ղ է արդյոք միշտ շարունակվել այդ դրությունը։ Այժմ պահպանել կնոջ բարոյականությունը կանանոցի բանտարկության մեջ նույնն է, որպես զսպել մի գազանի վայրենությունը երկաթի վանդակի մեջ։ Դուրս հանենք նրան վանդակից, իսկույն գործ կդնեն իր չարությունը։ Եվ իմ հետազոտության մեջ շատ անգամ ցույց տվեցի, որ կինը հենց որ իր բանտարկված վիճակից ազատվում է, ընկնում է զանազան ախտերի մեջ։ Ուրեմն ի՞նչ պետք է անել, երբ թե կանանոցը և թե դրսի աշխարհը միօրինակ վատ են ներգործում նրա վրա՝ մեկը բթամտացնում է, խլում է նրանից ամեն հոգևկան զորություն, իսկ մյուսը անբարոյական է դարձնում։ Այդ հարցին ևս շատ անգամ եմ պատասխանել իմ տեղում, իմ հետազոտության մեջ, թե պետք է նախքան կնոջն աշխարհ դուրս հանելը, նրան նախապատրաստել աշխարհի համար, և դրա մեջ պետք է լինի կնոջ կրթության բուն խորհուրդը։ Դուցե կնկատեն, թե կինն աշխարհի համար պատրաստվում է, նրան ուսումնասիրում է հենց աշխարհի մեջ ընկնելով։ Ես կպատասխանեմ. այն ժամանակ նա պետք է անցկացնի ապականության մի պերիոդ, և ինքն անցկենա զանազան ախտերի միջից, մինչև փորձվի, մինչև խելքը գլուխը գա... Կնոջ ազատություն, կնոջ անկախություն (эмансипация), կնոջ հավասարություն, դրանք շատ գեղեցիկ բառեր են, բայց դեռ լուսավոր ազգերի մեջ ևս կենսական անվճիռ հարցերի կարգումն են դնում։

Իմ հոդվածի նպատակից դուրս լինելով խոսել հիշյալ խնդրի վրա, կրկին դառնում եմ դեպի հայ կինը։ Դուցե ընթերցողը նկատեց, որ հայ կինը ոչ մի դասակարգի մեջ չէ հայտնվում որպես հասարակական գործիչ, որպես ազդող տարր և որպես քաղաքակրթության ղեկավար։ Նրա շրջանը ներկայացնում է դատարկ կյանքի ամենատգեղ և ամենավատ օրինակները։ Դեռևս նրա սալոնը չէ հանդիսացնում մի կենարոն, ուր հավաքվելով հասարակական գործիչ ուժերը, կինն իր խելքով և քաղց-

բուլյամբ ոգևորեր նրանց, ներշնչելով նրանց մեջ եռանդ և վստահություն։ Ես ճանաչում եմ երկու կանայք միայն Բիբլիսում, որոնց սալոնները ծառայում էին որպես կենտրոն երիտասարդության։ Մեկը վախճանված է (Թո՛ղ օրհնյալ լինի նրա հիշատակը), իսկ մյուսը դեռ կենդանի է։ Առաջինը կարելի է համարել որպես ջերմ խնամակալուհի մի ուսուցչական խմբի, որոնց ջանքերով կենդանացրուց մի օրիորդական դպրոց։ Այդ առաջին օրինակն էր, որ կինը հանդես գուրս եկավ իբրև պաշտպան կրթության գործի։ Իսկ երկրորդը, որ ինքը պարապել էր գրականությամբ, որ գիտեր վանազան լեզուներ, աշխատում էր լինել միջին կապ մեր մանուկ ինտելիգենցիայի ցրված ուժերի մեջ։ Բայց ցավալի է ասել, որ երիտասարդությունն այն աստիճան անպատրաստ գտնվեցավ, որ հարգելի տիկնոջ սալոնը շուտով փակվեցավ նրանց առջև։

Մեր զարգացած կանայք կարող են ունենալ միայն գրականական սալոններ, բայց մեր գրականությամբ պարապող երիտասարդությունը դեռևս այն աստիճան անկիրթ է, որ հազիվ թե իր պատիվը հասկացող մի տիկին կցանկանար նրանց առջև բաց անել իր դռները։ Կնոջ սալոնի ազդեցությունը գործող երիտասարդության վրա հաղարավոր օրինակներով ապացուցված է լուսավոր ազդերի մեջ։ Այնտեղ ոչ միայն ոգևորվում է բանաստեղծը, ոչ միայն կրթվում է վիպասանի ճաշակը, և ոչ միայն պարզվում են պուբլիցիստի հայացքները, այլ այնտեղից ոգի են առնում երևելի քաղաքական մարդիկը։ Մեզանում գրողներն ապրում են առանձնացած խմբերով և տևանվում են ավելի կաֆեներում։ Երբ որևիցե կին ընդուներ այս և այն խումբը, դուրս կգար խիստ նեղ շրջան, և այն դեպքում նրա սալոնը կծառայեր որպես գործիք մի կուսակցության, որը մեր մեջ կազմվում է ոչ թե գաղափարի անունով, այլ շահասիրական ինտերեսներով։

Կինն իր նուրբ խելքով և հրապուրիչ բնավորությամբ կարող էր լինել մի լավ կապ գործող ուժերի մեջ։ Նրա սալոնում կարող էին մշակվել և հաստատանալ ամեն տեսակ հասարակական խնդիրներ։ Եվ կինը կարող էր առաջնորդել և խրախուսել տալ գործող անձնիքներին։ Եվ դրանումն է բովանդակվում կնոջ բարձր նշանակությունը, երբ նա կմասնակցեր հասարակական կյանքին, իր ձեռքում որպես գործիք վարելով տղամարդին։ Եվ ոչ միայն ժողովրդի բարձր դասի մեջ, այլ իջնելով դեպի ցած, նրա բոլոր ծալքերում կինը կարող էր հայտնվել որպես ազդող ոգի, որպես ներգործող ուժ, թե խաղող և թե մաներ բաների մեջ։ Ահա՛ դրանումն է նրա մեծ հասարակական կոչումը։

Մեր գավառները, առանձին պարբերական թերթեր չունենալով, իրանց մեջ պատահած անցքերի բանակռիվը տեղափոխում են Թիֆլիսի լրագրության մեջ, ուր տարբերաբար մեկայն երկու օրգան կա՝ «Մշակը» և «Մեղուն»։ Ով որ ուշի ուշով քննել է գավառներում պատահած անցքերի բանակռիվները, մեզ հետ կհամաձայնվի, որ նրանցից և ոչ մեկը չի հասել որևիցե վճռական կետի, չի պարզվել, չի ստուգվել, և ընթերցողները միշտ մնացել են տարակուսության մեջ, թե արդյոք ով էր արդարը, և ով՝ մեղավորը։ Այդ ինչի՞ց է։

Պատճառը շատ պարզ է։ Օրինակ, այս և այն գավառում պատահել է որևիցե ժողովրդական երկպառակություն, պատահել է այս և այն դպրոցի մեջ խռովություն, պատահել է անհամաձայնություն հոգ. իշխանության հաջորդի և հասարակության մեջ և այլն, այս բոլոր անցքերի մեջ, իհարկե, կլինեն պանազան կուսակցություններ, և յուրաքանչյուր կուսակցությունը դիմում է մեկ լրագրի իր իրավունքները պաշտպանելու համար։ Լրագիրներ, ասացինք, երկուսն ունենք միայն՝ «Մշակը» և «Մեղուն», և այդ երկու լրագիրների հարաբերությունները միմյանց հետ հայտնի են արդեն. երանք իրանց մեջ ունեցած կրքերը տարածում են և այն կուսակցությունների վրա, որ դիմել էին իրանցից ամեն մեկին։ Ո՞վ չգիտե, ինչ որ սև է «Մշակի» մեջ, «Մեղուի» համար սպիտակ է, բայց ինչ որ սպիտակ է «Մշակի» համար, «Մեղուի» մեջ սև է։ Այս հանգամանքների մեջ, հայտնի բան է, որ ոչ մի խնդիր լուծվել կարող չէ։

«Մեղուն» նույն դերն է խաղում պուբլիցիստիկայի մեջ, ինչ դեր որ խաղում է Թուրքի բեգը իր դանգատավորների վերաբերությամբ։ Երկու դանգատավորներից որն առաջ է վազում նրա մոտ, դատավորը նրա կողմն է բռնում։ Եվ դա բավական չէ, դատավորը, մոռանալով իրան, իջնում է իր դատավորական աթոռից և կանգնում է անազնիվ փաստաբանի գրպալի մոտ և կամ անդադար պրոկուրորի նման մեղադրական ճառ է կարդում, առանց սպասելու կամ թույլ տալու, որ մեղադրվածը պաշտպաներ իրան։

Վ. Ագուլիսի մեջ պատահած անցքերի վերաբերությամբ «Մեղուն» ցույց տվից մի այսպիսի զվարճալի օրինակ։ Այդ լրագիրը, կարծես, ուխտել է մուրտատ ճանճի նման ամեն բանի մեջ ընկնել և մարդու սիրտը պղտորել։ «Մեղուն» սկզբից հայտնից իր առաջնորդող հոդվածի մեջ, թե

պատրաստ է իր էջերից մի քանիսը նվիրել Ադուլիսի դատը վճռելու համար (ի՞նչ դատավոր), բայց առանց սպասելու, որ հակառակ կողմերը վիճեին, առանց թույլ տալու, որ գործը ավելի պարզվի և փաստերի բավական քանակության մեջ բերվի, և որպես ինքն խոստովանվում է, «միմիայն մի կուսակցությունից ստացած տեղեկությունների հիման վրա»։ Նա կնքից իր վճիռը։ Չգիտի՞ կարմրի «Մեղուի» պ. խմբագիրը, երբ վերջապես կտեսնի, թե այն բոլորը, ինչ որ մինչև այսօր տպվել է նրա թերթի մեջ Ադուլիսի խռովությունների մասին, նրանցից և ոչ մեկը չէ վերաբերում գործի էությանը և ոչ քննում-է բուն խնդիրը, որից առաջ եկան բոլոր խռովությունները։

Այդ մենք կպարզենք մի ընդարձակ և մանրամասն հոդվածով, որ կտպվի շուտով։ Բայց այժմ հարկավոր եմ համարում մի քանի խոսք ասել մեր լրագրության բռնած ընթացքի մասին, թե ինչպես է վերաբերվում նա դեպի անձնավորություններըւ

Մի ժամանակ արևելյան իշխանները զվարճության համար կանչել էին տալիս հմուտ ստախոսներին և սրամիտ հայհոյիչներին, միմյանց հետ մրցել էին տալիս։ Եվ որը խոսում էր մի այնպիսի սուտ կամ ասում էր մի այնպիսի հայհոյություն, որին մյուսը պատասխանել չէր կարողանում, ստանում էր մրցանակը։ «Մեղուն» կարծես մի այնպիսի մրցանակի է ձգտում։ Արդեն մեր հասարակության մեջ ընդհանրացել է այն կարծիքը, թե «Մեղուն» ոխակալ է, հաջող դեպքում կխայթե... Ի՞նչ մեծ բան է դա. օձն էլ կծում է, կարիճն էլ խայթում է, իշամեղուն էլ խայթոց ունի, բայց ո՞վ է սիրում նրանց, ի՞նչ օգուտ են բերում մարդկությանը։

Ոչինչ բան այնքան հնշտ չէ, որպես հայհոյելը, բայց ավելի հնշտ է հայհոյությանը հայհոյությունով պատասխանելը։ Տեսնում ես, մի մարդ, որ պատրաստ էր մեր լուսավորիչ պապի փափուճները գողանալու, մի մարդ, որ պատրաստ է Հայկի և Արամի ոսկորները մի գոռոզով վաճառելու, իրան ազգասեր է ձևացնում և հայհոյում է մի ուրիշին, թե ինչու հայ ազգին խարդախ է կոչում։ Ապա ի՞նչ կոչն, երբ այդ ազգի մեծամասնությունը բաղկանում է այդ ազգասերի նման խարդախներից։

Տեսնում ես, մի մարդ, երեսին ժիշտ կպցրած[1], ամեն անամոթություն գործ է դնում, ամեն նախատինքի համբերում է և ամբողջ քսան տարի տզրուկի նման կպել է մի դպրոցի պոչին, և ոչինչ հնարքով չեն կարողանում հեռացնել, այդ հայկաստակ աղվեսը այն աստիճան լիրբ է, որ համարձակվում է մի համեստ վարժապետի մեղադրել շահախրության մեջ։

Տեսնում ես, մի մարդ, որ իր գրիչը ամբողջ տասնվեց տարի մի բարձրաստիճան եկեղեցականի ձեռքի ավելն էր շինել և նրա ամեն անմաքրությունները սրբում էր, որը ազավաղում էր ճշմարտությունը, պաշտպանում էր սուբյեկտը, մի այսպիսի զղջաքաղը չի էլ ամաչում, որ մեղադրում է ուրիշին գրչի վաճառելու մեջ։

Տեսնում ես, մի մարդ, որ հաճոյամոլությունը հասցրել է մինչև սոր խեղկատակության, որին իր ընկերներն անգամ ուրիշ բառերով չեն կոչում, եթե ոչ «քալթաո» կամ «պամպուլի», մի այսպիսի խաբեբա ձևանածուն թույլ է տալիս իրան ուրիշին մեղադրել շողոքորթության մեջ։

Տեսնում ես, մի մարդ, որ ճշանավոր էր միայն հետադիմության, բթամտության, խավարասիրության մեջ, իսկ աննշան այն բոլոր բանների մեջ, ինչ որ բարի է, ինչ որ ազնիվ է, ինչ որ օգտավետ է, մի այսպիսի անատակը վստահանում է սորացնել ուրիշի առավելությունը աննշան ածականով։

Այդ բոլորը շատ բնական է։ Կույրի աչքումը լույս աշխարհը սև է երևում։

Գրականության անամոթությունը մեղանում այն աստիճան կեղտոտության է հասել, որ բավական է մեկը մյուսի հետ մի փոքր ծշնամության, մի փոքր նախանձ ունենար, միշտ պատրաստ է հաջող դեպքում նրան ցեխի մեջ կոխելու և ամեն անմաքրություն նրա գլխին թափելու։ Եվ երբ մի այսպիսի թերթը կոչում ես ապրանոց, խմբագիրը կատաղում է, փրփրում է. ապրանոց չէ, ասա ի՞նչ գահրամար է։

Մեր հասարակության առանց դրան էլ փչացած ճաշակը ավելի ապականվում է, երբ կարդում է լրագրի մեջ անամոթ հայհոյանքներ միայն։ Ինձ շատ անգամ պատահել է նկատել ոչ թե ռամիկների մեջ, այլ բարձր ուսում ստացած մի երիտասարդ, կարդալով որևիցե հոդված, երբ հանդիպում է մի սուր հայհոյության, իսկույն ժպտալով ասում է. «Ինչ լավ կոխել է»... Հոդվածի մեջ մյուս բոլորը նրան չեն հետաքրքրում։

Իսկ հայհոյելը ի՞նչ մի մեծ շնորհք է։ Վերջին կինոան, Թիֆլիսի հանրածանոթ ժորժը, ունեն իրանց լեզվում այնպիսի հայհոյական բառեր, որ ոչ մի խմբագիր իր բոլոր հանճարով ստեղծել չէր կարող։ Մեր լեզուն բավական ընդունակ և առատ է հայհոյական բառերով. կարելի է*

---

* *Այս մարդը ծանոթ է համարյա բոլոր Թիֆլիսին, նա հնարել է հայհոյություններ մի երկար շարք, որոնք այն աստիճան ծաղրական են, որ ամեն մարդ ախորժում է հեղինակին մի քանի կոպեկ տալով լսել։ Ափսոս, այդ ծաղրածուն չէ հրատարակում մի թերթ, կարծեմ, ավելի առորագրողներ կունենար, քան թե «Մեղուն»։*

միանգամից հազարը մինը մյուսի ետևից շարել և խիստ քաղաքավարի կերպով կպցնել այս և այն անձնավորության ճակատին, առանց անունն անգամ հիշելու։ Բայց «փայտը որ վերցնես, գող կասուն իր բանը կհասկանա»...

Բայց ինչ շահ կա հայհոյութիւնից. մի՞թե անամոթը, լիրբը, անբարոյականը կամաչի հանդիմանությունից. «Դորտի երեսին թքեցին, ասաց. խո լճի ջրից էլ շատ չէ»։

Ջոյիլները, այսպես անվանված գրականական շները, միշտ եղել են և միշտ էլ կլինեն։ Դրանց գործն է մեկին կծել, մյուսի վրա հաչել։ Բայց ո՞վ է ուշադրություն դարձնում շների վրա, շան սովորությունն է հաչելը։ «Շունը կհաչի, քարավանը կքաշի»,— ասում է մի առած, որ ընդհանրացած է բոլոր արևելյան լեզուների մեջ։ Բայց ինչ անես, որ այդ անպիտան անասունը այն վատ սովորությունն էլ ունի, որ ապականում է հենց այն տեղերը, որ ավելի մաքուր են...

Կ. Պոլսի խմբագրությունը իրան այն առորության հասցրեց, որ երկու լիրայի համար պատրաստ էր մի ամենապատվավոր անձին ցեխի մեջ կոխելու։ «Մեղուն» թեև երկու լիրա կաշառք չէ ընդունում, բայց բավական էր մի փոքր նախանձ, մի փոքր ոխակալություն, հաջող դեպքում նա չի խնայի արատավորել ում որ ուզես։ Կարծես պատկառանք կոչված բանը բոլորովին անծանոթ լիներ այդ լրագրին։ Տեսնում ես, գավառից լածիրակի մեկը, չաթուքեսանի մեկը կամ մի անհայտ, աննշան տիրացու և կամ մի հարստահարող աղա, ուղարկում է մի դաբատակ թղթակցություն առանց բովանդակության, որ նույնիսկ նամակը վկայում է հեղինակի ոչնչությունը, խմբագիրը վեր է առնում, ուղղում է և տպում, այդ բավական չէ, նա ավելացնում է իր կողմից առաջնորդող հոդված ևս։ Ինչո՞ւ։ Որովհետև նույն նամակի մեջ հայհոյություններ կային մի անձի դեմ, որին խմբագիրը վաղուց ցանկանում էր պատժել։ Այսպես պատսպարված անհայտության վահանի հետևում և օգուտ քաղելով մամուլի անամոթությունից, յուրաքանչյուր ստահակը կարող է խայտառակել ում որ ցանկանում է, մանավանդ երբ նա իրան աջակից է գտնում լրագրի խմբագրին։ Այս դեպքում ինչ պետք է անե վիրավորված անձը։ Նա մեկ հակառակորդի փոխարեն ունեցավ մի երկրորդ ավելի զորեղ թշնամի՝ լրագրի խմբագրին։ Հայտնի բան է, եթե ցանկանում է իր պատիվը պահպանել, նա ստիպված է երկուսի հետ ևս բանակռիվ սկսել։ Հնարավոր է։ Դուցե նա գրելու շնորհք չունի, դուցե հարաբերություն չունի մի ուրիշ լրագրի հետ, էլ ինչո՞վ պետք է քաղե իր վրա բարդված զրպարտությունները։

Մեր մեջ հասարակական գործիչները այնքան փոքր են թվով, որ կարելի է մատներով համբարել, և նրանցից ամեն մեկը ծանոթ է մեր խմբագիրներին։ Լրագրությունը պետք է խրախուսեն, պաշտպանեն նրանց և ոչ թե ուրիշ բարմաթիվ հալածիչների հետ, ինքն էլ մի կողմից հարվածեն։ Մենք չենք ցանկանում ասել, թե պետք էր քողարկել, ծածկել նրանց թերությունները, որովհետև ընդունում ենք, որ անաղնվությունը, արատը, մեղքը միևնույն կերպով պախարակելի են թե հասարակական գործիչի և թե մի աննշան անձի մեջ։ Բայց աննկարելի է այն, երբ ճշմարտությունը մանր կրքերի մեջ խեղդվում է։

Կրկին վերադառնալով դեպի գավառական բանակռիվները, մենք կասենք, որ բոլորովին ապարդյուն է մեր լրագրության մեջ պոլեմիկա վարելը, որովհետև անկարելի է, որ երկու պատավորների մեջ վճռվի մի գործ, երբ նրանք միմյանց հետ անհաշտ էին. պետք է լինի անպատճառ մի երրորդ անձ։ Այսպես էլ անկարելի է, որ մի հարց վճռվի «Մեղուի» և «Մշակի» մեջ, երբ որ մեկի հատատածը մյուսը պետք է ջրե։ Պետք է լինի մի երրորդ լրագիր ևս։ Քանի որ այդ չկա, միակ ճարն այն է, որ հակառակ կողմերը փոխանակ առանձին-առանձին լրագրերների մեջ սկսելու իրենց բանակռիվը, ընտրեին մեկ լրագիր միայն։ Մենք, թեև մի ուրիշ բանակի ենք պատկանում, բայց Ագուլիսի անցքերի վերաբերությամբ պատրաստ էինք դիմել «Մեղուին», բայց կարելի՞ է հույս դնել նրա անկողմնապահության վրա, երբ նա առանց պատճառի հենց սկզբից խայթից մեզ։

Չի՛ թե մեզանում լիներ հասարակական կարծիք, որ դատել կարողանար լրագրության մեջ հայտնված երևույթների վրա, այն ժամանակ ավելի հեշտությամբ կվճռվեր գործը, բայց այդ չկա։ Տեսնում ես՝ երկու հոգի բանակռիվ ունեն, մեկը տպել ավեց մի հոդված, որքան և դարտակ լիներ նա, այսուամենայնիվ հասարակությունը գրավվում է նրանով։ Հետո հակառակ կողմը պատասխանում է, այն ժամանակ առաջին հոդվածի տպավորությունը անհետանում է, և հասարակությունը հափշտակվում է վերջին հոդվածով։ Եվ այսպես հասարակական կարծիքը օրորվում է երբեմն այս և երբեմն այն կողմը, որքան պոլեմիկոսները համառությամբ շարունակում էին իրանց կռիվը։ Դա վերջ չի ունենա։ Այդ դեպքում ինքը՝ լրագրի խմբագիրը, մնում է շվարած, և միակ ելքը նրա մեջն է գտնում, որ հայտնում է կռվողներին, թե այլևս չպիտի տպի նրանց հոդվածները։

Վերոհիշյալ հանգամանքները ի նկատի ունենալով, բոլորովին հիմարություն է մեր լրագրության մեջ պոլեմիկա սկսելը, մանավանդ

այն պատճառով, որ մեզանում չկա այն բանը, ինչ որ կոչվում է գրականական աղնվություն։ Մանրակրկիտ հավի նման քաճել մի գրվածք և նրա միջից դուրս բերել աննշան և չնչին հատիկներ, այդ մեր պոլեմիկոսների գործն է։ Բծախնդրությունը հասցրած է մեզանում վերին աստիճանի անարգության։ Օրինակ, դուք հրատարակել եք մի հոդված, ձեր հակառակորդը հոդվածի ամբողջ բովանդակության հետ գործ չունի, նա ընտրում է նրա միջից միայն մի քանի բառեր և անամոթ իմաստակությամբ աղավաղում է, խեղաթյուրում է նրա միտքը և դուրս է բերում ծուռ ու սխալ եզրակացություններ։ Նեռելի էր, եթե այսպես կվարվեր մի համբակ, մի աստհակ, բայց աննեռելի է, երբ այսպես վարվում է մի խմբագիր։ Այդ ինչի՞ց է։ Նրանից, որ քննող չկա, թե դու ինչ ես ասել, ինչ միտք ես հայտնել, իսկ քո հակառակորդը ինչպես է բացատրում քո խոսքերը։ Դա սարսափելի գրություն է գրողների համար։

Միակ ելքն այն է՝ արհամարհել, թքել, երբ մարդիկ ուշադրություն չեն դարձնում մանր բանների վրա։ Բայց ի՞նչ անես, հատարակությունը դեռ զարգացած չէ, նա այլապես է նայում գործի վրա։ Դու լռեցիր, չպատասխանեցիր, քեզ կասեն՝ ուրեմն դու մեղավոր ես։ Պատասխանիր, աղմուկ բարձրացրու, հայհոյանքներ թափիր, այդ բավական է, փույթ չէ, եթե քո պատասխանը մի զզվելի վայրահաչություն լիներ։ Տեսնեք, ինչ տեղ է հասնում գրականական լրբությունը։

Օրինակ, ի՞նչ նշանակություն ունեն այսպիսի չնչին խոսքերը, պ. Սիմոնյանց, թե Մելիք-Հակոբյանը ապուլեցիներին «կովկասի ամերիկացիք» կոչեց, և դուք մատիդ փաթաթած գրանով մեզադրում եք նրան շողոքորթության մեջ։ Եթե ձեզանից հարցնեն, թե երբ, որտեղ, որ գրվածքում կոչեց, դուք ի՞նչ կպատասխանեք։ Դիցուք թե ճշմարիտ լիներ այդ, ի՞նչ մեղք բան է մի ժողովուրդ քաջալերելու համար նրան մի քանի խրախուսական բառեր շռայլել։ Դուք կարծում եք, թե դրա համար զոկերը փո՞ղ կտային, մի խաբվեք, դուք էլ հետևում եք հաճոյանալու նույն ձևին, եթե ապուլեցուն երկնքի հրեշտակներ կոչելու լինիս, դարձյալ մի հատ կոպեկ ձրի չեն տա մարդու։

Կամ թե ի՞նչ մի պակասություն է, երբ մի քանի ապուլեցիք չեն ցանկացել, որ Մելիք-Հակոբյանը այնտեղ վարժապետ լիներ։ Մի՞թե միևնույնը ամեն տարի ձեզ հետ չի պատահում, պ. Սիմոնյանց, Ներսիսյան դպրոցի մեջ։ Բայց հիշյալ լուրը վրդովեցուցիչ է այն պատճառով միայն, որ սուտ է. ապուլեցիք մինչև վերջը աշխատում էին նրան պահել իրանց դպրոցներում, բայց նա չցանկացավ, և այդ մասին բավական փաստեր կան։

Ի՞նչ մի հանցանք է, երբ մի վարժապետ այս և այն պատճառներով դասերից հետ է ընկել և ամեն դպրոցներում ընդունված կարգով, նրա ռոճիկից կտրում են։ Մի՞թե ձեզ հետ չի պատահել, պ. Սիմոնյանց։ Բայց այդ լուրը վիրավորական է այն կողմից, որ Մելիք-Հակոբյանը երկու տարվա ընթացքում թողել է միայն մոտ 20 դաս և դրա փոխարեն մի ամբողջ տարի, իր պարտավորություններից դուրս, փոխանակ շաբաթական 26 դասի 30 դաս է տվել և 6 ավելորդ դասերի համար փող չէ պահանջել, բայի դրանից, անցյալ տարի եկել է Թիֆլիս և երկու ամիս ձրի աշխատելով, Ագուլիսի դպրոցների համար վարժապետներ է վարձել։ Եվ հոգաբարձությունը դասերի կամ այլ պատճառով նրա ռոճիկից մի կոպեկ չէ կտրել, այլ ամբողջությամբ տվել և ճանապարհ է դրել։

Ի՞նչ մի հանցանք է, եթե Մելիք-Հակոբյանը մի նշանավոր աղայի, որը Թիֆլիսի նման քաղաքում հետին մարդու առջևը թեքվում է, իսկ Ագուլիսում հայտնվում է որպես կատարյալ Շեյխ-Ջալալեդդին, կրկնում ենք, ի՞նչ մի հանցանք է, եթե մի այս տեսակ հարստահարողին ասած լինի. «Ես քո գլուխը կշահջահնեմ»։ Եթե դուք լինեիք, պ. Սիմոնյանց, ինչպե՞ս կվարվեիք։ Լինում են դեպքեր, լինում են հանգամանքներ, երբ մարդն ինքն է դառնում իր դատավորը։ Խոսք չկա, որ կգտնվի և այնպիսի մարդ, որի երեսին թքում են, անարգում են, և նա առանց ամաչելու սրբում է և դառնում իր անպատվողին ասում՝ ես ձեր խոնարհ ծառան եմ...

Ի՞նչ մի խելքի գալու բան է, թե Մելիք-Հակոբյանը ասած լինի. ով որ ինձ փող տալու լինի, ես նրան կգովեմ, կամ ումը որ ուզելու լինի, կխայտառակեմ։ Մի՞թե իր գրիչը վաճառողը դնում է հրապարակներում և այսպիսի մտնեմիկ է կարդալ տալիս։ Դուք էլ շատ բան եք անում, պ. Սիմոնյանց, բայց ոչ օրին չեք հայտնում ձեր դաղտնիքը։

Ի՞նչ մի մեծ քաջություն է, պ. Սիմոնյանց, ասել. «Մի աննշան Մելիք-Հակոբյան», «ասիացի պարսիկ», «սալմաստեցի խաչագող» և այլն։ Դուք չդիտե՞ք, ինչ ձայն որ արձակելու լինեք, այն տեսակ էլ արձագանք կլսեք։ Այդ շատ բնական է։ Եթե մեկին ասում ես գող, նա էլ քեզ կասե ավազակ, եթե մեկին ասելու լինես աչքդ ծուռն է, նա էլ քեզ կասե. դու երկու աչքով կույր ես։

Ահա այսպես, պ. Սիմոնյանց, չնչին, մանր, աննշան բամբասանքների հետևից ընկած, դուք խառնում եք անձնականությունը հասարակական գործի հետ։ Բամբասանքը մի առանձին շնորհք չէ, դա քավթառ պառավներին է միայն սեփական։ Դուք էլ թեև երիտասարդ չեք, բայց

Եթե սիրում եք բամբասանք, դոնե ընտրեցեք մի հետաքրքիր նյութ։ Ի՞նչ դուրս կգա երեխայական բարբաջմունքից։

Իսկ ինչ որ վերաբերում է Ագուլիսի անցքերին, ես ձեզ խորհուրդ կտայի ավելի խոհեմ լինել, որովհետև, ինչպես երևում է ձեր ընդհակություններից, դեռ բուն խնդիրը չեն հաղորդել ձեզ, և ես հույսով եմ, որ դուք կփոխեք ձեր կարծիքը, երբ իսկությունը երևան կգա։

Այդ կլինի մեր առաջին և վերջին խոսքը «Մեղուի» դեմ։

Վ. ԱԳՈՒԼԻՍԻ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Ա.

Վերջին ամիսներումս «Մեղուի» մեջ տպվեցան մի քանի ընդհակություններ, որոնք հայտնում էին Ագուլիսի դպրոցների անկարգությունները, վարժապետների միմյանց հետ ունեցած անմիաբանությունը, հոգաբարձության անգործունեությունը, ժողովրդի անտարբերությունը և այլն, և միևնույն ժամանակ խուլ, վիրավորական ակնարկություններ էին անում գնալի մի անձնավորության, առանց անունը հիշելու։ Այս նամակները այնքան սերտ կապ ունեին միմյանց հետ, որ կարելի էր կռահել՝ կամ մի մարդու գրչից են դուրս եկել և կամ մի որոշ խմբի ֆաբրիկացիա լիներին։ Եվ իրավ այդպես էր։ Մի քանի անձինք, դարան մտած, մութ տեղից քարեր էին արձակում։

Գրողները փաստերը պարզապես երևան չէին հանում, իրողություններ մեջ չէին բերում, միայն մթին ակնարկություններ էին անում։ Ոչինչ հասկանալ չէր կարելի, թե ինչ էր պատահել, որովհետև մի «ամերիկացի» բառ միայն մատի փաթաթան եղած կրկնվում էր համարյա բոլոր նամակների մեջ։ Այսուամենայնիվ, հիշյալ նամակները աղմուկ բարձրացրին, մի քանի թերևամիտների ուրախացրին և մի քանի բարեմիտների մեջ զզվանք հարուցին։ Իսկ «Մեղուն» խոհեմ և անկողմնապահ «Մեղուն», «միայն մի կուսակցությունից ստացած անվկնությունների հիման վրա» կազմից մի քանի անխոհեմ առաջնորդող հոդվածներ և նվիրեց Ագուլիսի հասարակությանը։

Մենք մինչև այսօր լռություն էինք պահում Ագուլիսում կատարվող անցքերի մասին, պատճառն այն էր, որ փորձով համոզված լինելով, որ երբ մի ժողովրդական երկպառակության խնդիր մեր լրագրության մեջ

է մանում, գործը ավելի խառնվում է, կուսակցությունները սաստիկ գրգռվում են, կրքերը կատաղի կերպարանք են ստանում, և հակառակ կողմերը ավելի և ավելի անհաշտելի են դառնում։

Մենք ունինք մեր ներքին գործերը և կամենում էինք մեր մեջ վերջացնել, բայց հիմա, որ բանը բացվեցավ, ուրեմն խոսենք։

Մենք ամենևին ուշադրություն չպիտի դարձնենք մի քանի անհիմն խոսքերի վրա, նախ այն պատճառով, որ երբեք սովորություն չենք ունեցել պատասխանելու անստորագիր նամակներին, երկրորդ՝ այն պատճառով, որ նրանցից և ոչ մեկը չեն վերաբերում բուն, էական խնդրին, որից ծագեցան բոլոր երկպառակությունները։ Մենք ուշադրություն պիտի դարձնենք միայն երկու բանի վրա. ա. Ագուլիսի դպրոցների ներկա նյութական դրության, բ. նրանց բարվոքելու համար գործ դրած միջոցներ։ Դրանով կպարզվին վերջին անցքերի բոլոր ինարիգանները։

Եվ իրավ, Ագուլիսի դպրոցների անբարեկարգությունը և նրանց ողորմելի վիճակը պետք է որոնել ոչ թե վարժապետների անմիաբանության կամ հոգաբարձության թուլության մեջ, որոնք երկրորդական պատճառներ են, այլ նույն իսկ դպրոցների կազմակերպության և նրանց նյութական չվավորության մեջ է կայանում բոլոր յավը։

Խոսենք առաջ նյութականի վրա։

Այդ խնդիրը ավելի շոշափելի կացուցանելու համար մենք ստիպված ենք դիմել դպրոցների պատմության, թե որպես հիմնվեցան նրանք։ Մինչև 1867 թվականը, այսինքն՝ 12 տարի առաջ, Ագուլիսում կար միայն մեկ աղայոց դպրոց, և դա գտնվում էր Հին Նախիջևանի արքունական դպրոցի տեսչության հսկողության ներքո։ Ագուլիսի հասարակությունը, որպես գրավական, ներկայացրել էր 8000 ռուբլի, և Հին Նախիջևանի արքունական դպրոցի տեսչությունը նշանակում էր վարժապետներ, տալիս էր պրոգրամա, մի խոսքով, ամեն կերպով կառավարում էր Ագուլիսի դպրոցը, բոլոր ծախսերը հասարակությունից ստանալով։ Այդ դրությունը անբավականացուցիչ գտնելով, հասարակությունը 1867 թվին խնդրքով դիմում է Նորին Վեհափառության ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ին, որ Նորին բարձր Օծությունը թույլ տա Ագուլիսում բաց անել երկու հոգևոր դպրոցներ՝ մեկը աղայոց համար, մյուսը աղջկանց համար, այլև խնդրում են, որ Նորին Վեհափառությունը բարհաճի ընդունել հիշյալ երկու դպրոցները իր անմիջական հովանավորության ներքո։ Ամենայն Հայոց Հայրապետը կատարում է հասարակության բաղձանքը և առանձին կոնդակով թույլ է տալիս բաց անել դպրոցները, ընդունելով նրանց իր գերագույն հովանավորության ներքո։

Մինչև դպրոցների բացվելը, նրանց գոյությունը ապահովելու համար, արդեն եղել էր ժողովրդի մեջ նվիրատվությունների ստորագրություն, որի գումարը հասնում էր մոտ 30 000 ռուբլու։ Այդ գումարը, նույն ժամանակ Վեհ. Կաթողիկոսից հաստատված կանոնագրության համեմատ (հոդ. 18), պետք է հանձնված լիներ դպրոցների հոգաբարձության գանձապետին, և հոգաբարձությունը պետք է շահեցներ հարյուրին ութն (8 %) տոկոսով, կորուստի պատասխանատվությունը իր վրա առնելով։ Բայց երբ առաջին ոգևորությունն անցնում է, երբ սրտերը սկսում են փոքր առ փոքր հովանալ, հիշյալ գումարը փոխանակ իր ժամանակին ներկայացնելու, յուրաքանչյուր նվիրատու իր ստորագրած փողը իր մոտն է պահում, և հարյուրին ութն տոկոսի տեղ հարյուրին վեց տոկոսն է միայն վճարում ամեն տարի։ Եվ այսպես շարունակվում էր մինչև ներկա տարին։

Այդ գրության մեջ, շատ պարզ է, որ դպրոցները իսկապես զուրկ էին նյութական ապահովությունից։ Որովհետև նրանց արդյունքը կազմող հիմնական գրամագլուխը՝ 30 000 ռուբլին, այնքան անհատատա, այնքան երևակայական մի գումար էր, որ կարող էր մի րոպեում ոչնչանալ։ Ինչո՞ւ։ Նրա համար, որ նաղդ փող մեջտեղում չկար, կային միայն ստորագրությունների անվճար թվանշաններ, որ գրված էին գանձապետ հոգաբարձուի մատյանի մեջ։ Այդ դեպքում, հայտնի բան է, 30 000 ռուբլու վիճակը կախված կլիներ նվիրատուների վիճակից. մեկը անանկանալով, մյուսը աղքատանալով կարող էր և գրամագլխից պակասել։ Այսպես էլ եղավ։ Այժմ 30 000 ռուբլուց մնացել է մոտավորապես 20 000-ը, լավ ևս է ասել քսան հազարի տոկոսը։

Այստեղ պարզելու մի հարց կա։

Հիշյալ 20 000 ռուբլի գումարը ամբողջապես նվիրատվություն չէ, այլ նրա մի մասը, այսինքն՝ 12 000 ռուբլին, բարեբարների ստորագրած փող է։ Պետք է հասկանալ, թե ինչ է նշանակում «բարեբար», և նրանք այդ գումարը ինչու են ստորագրել։ Բարեբարները ստորագրել են 600 և 400 ռուբլի. առաջին գումարի տոկոսով դպրոցների հոգաբարձությունը պարտավորվում է պահել բարեբարի անունով մի որդեդիր, իսկ երկրորդ գումարի տոկոսով հոգաբարձությունը պարտավորվում է պահել բարեբարի անունով մի որդեգրուհի։ Ուրեմն 12 000 ռուբլի բարեբարների ստորագրած փողը դուրս գալով նաև հազարից, մնում է 8 000 ռուբլի, որի տոկոսը կարելի է դպրոցների մշտական արդյունք համարել։

Առհասարակ խոսելով, բոլոր եղած նվիրատվությունների ձևի և

նպատակի մեջ այնպիսի հետաքրքիր կետեր կան, որ մենք բացատրելու համար ստիպված ենք մի քանի մանրամասնությունների մեջ մտնել։

Մենք տեսանք, որ նվիրատուներին կարելի է երկու կարգի բաժանել՝ առաջինը՝ բարեարարներ, երկրորդը՝ գոհաբերողներ, այս վերջիններին իրանց կոչում են «հիմնադիրներ»։ Խոսենք յուրաքանչյուրի վրա առանձին։ Բարերարները, որպես հիշեցինք, ստորագրած փողը իրանց դրպանում պահելով, տարին 400 ռուբլու տոկոս են վճարում (հարյուրին վեցով) մի որդեգրուհի պահելու համար, իսկ 600 ռուբլու տոկոս են վճարում մի որդեգիր պահելու համար։ Գլխավոր դեղծումը նրանումն է, որ դպրոցների կանոնադրության 4, 5 և 19-րդ հոդվածների համեմատ թե որդեգիրների և թե որդեգրուհիների ընտրությունը պետք է լինի հոգաբարձության հավանությամբ, և նրանք պետք է ընտրվեն չքավորներից միայն։ Բայց բարերարները, առանց հոգաբարձության կամքը հարցնելու, իրանք են ընտրում, այն ևս իրանց ազգականներից* կամ մերձավոր բարեկամների զավակներից։ Եվ եթե պատահում է նրանց դպրոց տալ մի օտարական աղքատի որդին կամ աղջիկը, անպատճառ որդեգրի հայրը կամ մայրը ծառայելիս պետք է լինի բարերարի տանը, և նրանց ռեֆիկից հաշվում են**։

Այսքանը բարերարների մասին, հիմա դառնանք դեպի ինքնակոչ «հիմնադիրները»։

«Հիմնադիրներ» կոչում են իրանց այն պարոնները, որոնք ստորագրել են հօգուտ դպրոցների մի գումար (ոչ պակաս 300 ռուբլուց) և մինչև այսօր փողը իրանց մոտ պահելով, նույնպես տոկոսն են վճարում։ Դպրոցների կանոնադրության համեմատ, այդ «հիմնադիր» կոչվածները ոչ մի առանձին իրավունք չեն վայելում, բայց նրանք փողը իրանց գրպանում պահելով, դրանով սնիփականացրել են իրանց անսահման արտոնություններ դպրոցների վերաբերությամբ։ Օրինակ, կանոնադրու-

---

* Մեզ պատահեց նկատել մի քանի այսպիսի օրինակներ, ոմանք վարձում են մի տղա տանը սպասավորության անել տալու համար, կամ վարձում են մի աղջիկ որպես աղախին. նրանց վարձ չեն տալիս, այլ փոխարենը ուղարկում են դպրոց կարդալու։ Այս ողորմելիները այն ժամանակ միայն կարող են դասի գալ, երբ տանը գործ չիար. և ամբողջ օրը տան գործերով զբաղված լինելով, երբեք ժամանակ չեն ունենում իրանց դասերը պատրաստելու։ Այս կերպով ծառա կամ աղախին վարձելը շատ էժան է նստում։

** Բարերարները եթե իրանց ստորագրած փողերը վճարած լինեին, այդ ուրիշ բան էր, բայց այդ դրության մեջ նրանց դպրոցը ոչնչով չի կարելի դասակարգել թոշակառու աշակերտներից։ Դումար ստորագրել և չտալ, նույն գումարի տոկոսը միայն վճարել այն չափով, որքան վճարում է մի թոշակառու աշակերտ, դա մի չե է մի պատվավոր անուն կրելու՝ բարերար։

թյան համեմատ (հոդ. 10) Ագուլիսի ամբողջ հասարակությունը իրավունք ունի, որպես իր ներկայացուցիչ, ընտրել 25 երեսփոխաններ, որ այս վերջիններս ընտրեին պրոցեսների հոգաբարձուներին։ Բայց ինքնակոչ «հիմնադիրները» իրանք են ընտրում երեսփոխաններին, այն ևս իրանց միջից։ Մինչև այսօր մի անգամ ևս չէ պատահել, որ ժողովրդից մի մարդ երեսփոխան կամ հոգաբարձու ընտրված լիներ, եթե «հիմնադիր» կամ բարերար չի եղել։ Եվ որովհետև այդ բարերար կամ «հիմնադիր» կոչվածները մի քանի ազաներ են, այդ իսկ պատճառով պրոցեսների վիճակը միշտ կախված է եղել մի քանի ազանների կամքից։ Դրանից առաջ էին գալիս շատ երկպառակություններ, որ միշտ եղել են և այժմ լինում են պրոցեսների անկարգության բուն պատճառները։ Ահա՛ ինչու։

Բաղձանք այն, որ փողը «հիմնադիրների» և բարերարների մոտ մնալով, կարող է հետզհետե կորչել և ոչնչանալ. բաղձանք այն, որ փողի իրավունքը իրանց ձեռքում պահելով, բարերարները կամ «հիմնադիրները» իրանց են սեփականացրել ընտրողական իրավունքը. խոսանք այն բանի վրա, որ հիշյալ ազանները բանեցնում են անսահման ինարիգաներ պրոցեսների ներքին գործերում միջամտելով, և որքան շատ էր նրանց ստորագրած դումարի որքանությունը, այնքան մեծ է լինում և նրանց համայականության չափը։ Օրինակ, դուր չեկավ նվիրատու ազային այս և այն բարեխիղճ վարժապետը, նա կարող է առաջարկել հոգաբարձության, որ նրան դուրս անեն։ Կամ հաճելի էր այս և այն նվիրատու ազային մի անպիտան վարժապետ, նա կարող է անարգել կերպով ներս խցկել նրան պրոցեսի մեջ։ Այսպիսի հանգամանքներում հոգաբարձությունը կամ պրոցեսների տեսչությունը կամ-ակամա ստիպված է հաշտվել այս և այն ազայի կապրիզների հետ, որովհետև, հակառակ դեպքում, ազան նրան կասե. «Ես ամեն տարի այսքան փող եմ տալիս, ևթե իմ խոսքը չեք լսի, մի կոպեկ էլ չեք ստանա»... Եվ որովհետև միևնույն վարժապետը կարող է մի ազայի հաճելի լինել, իսկ մյուսին՝ ոչ, այստեղից առաջ են գալիս երկպառակություններ ազանների մեջ. մեկը պաշտպանում է անպիտանին, մյուսը հալածում է։

Այսպիսի հանգամանքներում Ագուլիսի վարժապետի դրությունը անտանելի է։ Նրա արժանավորությունը պայմանավորվում է ոչ թե այն բանի մեջ, թե որքան տիրում է իր հանձն առած առարկային, թե որքան հմուտ է նա մանկավարժական եղանակներին, այլ գլխավորապես այն բանի մեջ, թե որքան ճարպիկություն ունի դուր գալու։ Որովհետև նա կախումն ունի ոչ միայն հոգաբարձուբյունից, այլ բոլոր այն ազաներից, որոնք պրոցեսներին փող են տալիս։ Վարժապետը ստիպված է բոլորի

առջևը ցածանալ, բոլորին շողոքորթել, որ կարողանա պահպանել իր պաշտոնը։ Վարժապետի ականջները իուլ պետք է լինեն, իսկ լեզուն՝ կարճ։ Մի փոքրիշատե անձնասիրություն ունեցող վարժապետը, մի փոքրիշատե ազնիվ մարդը պետք է հազար ու մեկ անախորժություններ հանդիպի։ Ո՞ր մեկին կարող է հաճոյանալ նա, որքան նվիրատուներ կան, այնքան էլ աղայական կապրիզներ ունեն։

Մենք գրում ենք ոչ միայն այս տարվա անցքերը աչքի առջև ունենալով, այլ Ագուլիսի դպրոցների ամբողջ տարիների պատմությունը քննելով. պպ. Ջալալյանցը, Պռոշյանցը, Բարխուդարյանցը և ուրիշ դրանց նման բարեխիղճ վարժապետներ, և ոչ մեկը գոհությամբ հեռացել են Ագուլիսից։ Բոլոր մեր թեմական կամ միջնակարգ դպրոցների մեջ չէ կարելի գտնել մեկը, որ այնքան բազմաթիվ վարժապետներ փոխած լինի, որպես Ագուլիսի դպրոցները։ Դրա վնասը ինքնըստինքյան հասկանալի է։

Վերոհիշյալ հանգամանքների մեջ դպրոցների հոգաբարձության դրությունն նույնպես անտանելի է։ Նա չէ կարող ազատ վարվել իր գործունեության մեջ, այլ ստիպված է համբերել այս և այն աղայի կամայականությանը և կատարել նրանց միշտ անիրավացի պահանջները, որ չկորցնեն դպրոցների արդյունքները, որովհետև փող ավողներն նույն իսկ նվիրատու աղաներն են։ Հոգաբարձությունը պետք է ամեն մի չնչին բանի համար նրանց հետ խորհրդակցի, և որովհետև ամենի մեջ չէ կարող համաձայնություն գտնել, մինը այսպես կասե, մյուսը՝ նրա հակառակ, ուրեմն հոգաբարձությունը միշտ անել դրության կհանդիպի։ Իսկ ինչ որ վերաբերում է հոգաբարձական ընտրություններին, մենք արդեն վերևում ցույց տվեցինք նրանց գործ դրած բռնակալությունը, որով միանգամայն ոչնչացնում են ժողովրդական իրավունքը իրանց դպրոցների վերաբերությամբ։

Այժմ կրկին տեսնենք, թե ինչ է այդ աղաների տված, որ այնքան մեծ ազդեցություն են բանեցնում դպրոցների վրա։

Վերևում մենք տեսանք, որ դպրոցների նվիրատվությանց ամբողջ գումարը 12 տարի առաջ եղել է 30 000 ռուբլի*, թե 10 000 ռուբլի այս գումարից կորել է և այժմ մնում է 20 000 ռուբլի, այն ևս բացատրեցինք, որ հիշյալ քսան հազարից 12 000-ը բարերարների սառրագրած փող է,

---

* Հիշյալ բոլոր թվանշանների մեջ մենք վեր ենք առել միայն կոլոր թիվ, ավել կամ պակասը ի բաց ձգելով։

որի պատճառով նրանք իրավունք են ստացել որդիգրներ տալ դպրոցներում, իսկ 8 000-ը իսկական նվիրատվություն է, որի համար նվիրատուները «հիմնադիր» անուն են ձեռք բերել։ Մենք տեսանք նաև, թե «հիմնադիրները» և թե բարերարները իրանց ստորագրած գումարները մինչև այսօր չեն հատուցել և միայն տոկոսներ են վճարում։ Այժմ տեսնենք, որքան տոկոսներ են տառնում դպրոցները։

Դպրոցների այժմ մնացած քսան հազար ռուբլի նվեակայական դրամագլխից ստացվում է տոկոսադրամ (փոխանակ 8 %) հարյուրին վեցով՝ 1 200 ռ.։ Մի՞թե այս չնչին գումարովն են կառավարվում դպրոցները, որ տոկոս վճարողները սնփականացրել են իրանց այնքան անիրավացի արտոնություններ. ոչ։

Հիշյալ 1 200 ռուբլի տոկոսադրամը աշակերտներից և աշակերտուհիներից ստացած ընշակադրամի հետ և Բոմա առաքելո վանքից ստացած 600 ռուբլու հետ բերում են տարին մոտավորապես 4 000 ռուբլի արդյունք։ Այս գումարով պետք է կառավարվեն երկու դպրոցներ՝ օրիորդաց և տղայոց։ Թե որքան անբավականացուցիչ գումար է այդ, կհայտնվի հետևյալ հաշվից։

Երկու դպրոցները՝ օրիորդաց և տղայոց, ունեն իրանց նախակրթարաններով ութն դասատուն։ Դասերի (շաբաթական 204 դաս) և ուսուցիչների թվի համեմատ ինն վարժապետ պետք էր, որ այս ութ դասատուններում կառավարվեին։ (Այս տարի կար միայն ութն վարժապետ)։ Օրիորդաց դպրոցը ուներ վարժուհի և մի օգնական, իսկ տղայոց դպրոցը՝ երկու վերակացու։ Ուրեմն 13 անձինք գործում էին դպրոցների մեջ, այլևս չենք հաշվում ստորոտները։ Եթե հիշյալ 4 000 ռուբլի տարեկան արդյունքը տարեկան գործ դրվի միմիայն վարժապետների, վարժուհիների և վերակացուների վրա և բաժանվի նրանց մեջ որպես ռոճիկ, 13 անձանց թվի համեմատ յուրաքանչյուրին կհասնի 300 ռուբլի մի քանի մանեթ ավելի։ Ի՞նչ տեսակ մարդիկ կարելի է վարձել այսքան ռոճիկով, ինքնըստինքյան հասկնալի է։

Այս դեպքում ի՞նչ կարող էր անել Հոգաբարձությունը։ Նա ստիպված էր գործ դնել խնայողություն ամեն բանի մեջ, ստորին դասատուններին համար վարձել չնչին վարժապետներ* և նրանց ռոճիկներից կտրելով, բարձր դասատունների վարժապետներին տալ «Թևից կտրել, փեշը կարել», ասում են ամենական խոսքով։

* Որպես երկու դպրոցների չորս նախակրթարանները, զանազան բաժանմունքներով, հանձնված էր մի տիրացուի։ Նախակրթարանները, որոնց մեջ կրթության սկզբնական հիմքը պետք է դրվեր, գտնվում էին մի անփորձ մարդու ձեռքում։

Դրամի/աղուբյան պատճառով հոգաբարձուբյունը սահպված էր դպրոցների վերաբերուբյամբ զանց առնել շատ անհրաժեշտուբյուններ. օրինակ, նա չէր կարող տեսուչ վարձել, առանց որին դպրոցների մեջ սիրում էր կատարյալ անարխիա. նա չէր կարող լավ ընտրուբյուն անել վարժապետների մեջ և օրինավոր ուսուցչական խումբ կազմել. նա չէր կարող օրինավոր վերակացուներ վարձել, որ հսկեին աշակերտների բարոյականուբյան և դպրոցների կարգապահուբյան վրա. նա չէր կարող մատակարարել դպրոցների ամենաանհրաժեշտ դասական պիտույքները*, այլևս չեմ խոսում այն բանի վրա, որ դպրոցները բոլորովին զուրկ էին պատկերներից, ֆիզիքական գործիքներից, ուսուցչական մատենադարանից և այլն։ Եվ ոչ հարկավոր եմ համարում ասել, որ դասատները և Ազատ-խանի ժամանակից մնացած նատարանները բոլորովին հարմարացրած չէին դպրոցական առողջապահուբյան կանոններին։ Հոգաբարձուբյունը սահպված էր ամեն պահանջների մեջ խնայողուբյունը աչքի առաջ ունենալ և ուշադրուբյուն դարձնել դպրոցների մեծ գործող անձինքների ոչ այնքան արժանավորուբյանը, որքան նրանց էժանուբյանը։ Ինչպես այս տարի վարձվեցան մի քանի տեղացի վարժապետներ նրա համար միայն, որ հանձն առան փոքր ռոճիկներով ծառայել։

Բայց մի՞թե կարելի էր դպրոցների ամբողջ արդյունքը ծախսել վարժապետների վրա. ապա ինչո՞վ պետք էր հոգալ մյուս պահանջները։

Բ.

Մեր հոդվածի առաջին գլխի նկատողուբյուններից ընթերցողը տեսավ, որ Ագուլիսի դպրոցների թշվառուբյան պատճառը գլխավորապես նրանց նյութական չքավորուբյունն է։ Մենք նույնպես ցույց ավելցինք, որ երկու դպրոցները ունեն տարեկան արդյունք 4 000 ռուբլի, այն ևս խիստ անհատատ մի նկատուտ, որով անկարելի էր դպրոցներին փոքրիշատե բարեկարգված ձև տալ։ Բայց ցույց տալու համար, թե որքան փող պետք էր, որով կարելի լիներ բարեկարգել դպրոցների խարխուլ կազմակերպուբյունը, ես հարկավոր եմ համարում մեջ բերել այն հաշիվը, որ մենք կազմեցինք մի քանի բարեմիտների հետ, երբ առաջին

---

* Շատ անգամ դասերը անօգուտ են անցել կավիճ չլինելու համար, շարաթներով, ամիսներով դասեր չեն եղել, որովհետև գրատախտակի գույնը մաշվել էր. շատ անգամ վարժապետը առավոտյան առաջին դասին դասատուն չէ մտել, որովհետև վառած չէր, և սպասել է, մինչև սենյակը աշակերտների շնչով տաքանա...

անգամ հարց բարձրացավ, թե պետք է ապահովել դպրոցների նյութական դրությունը։

Նախ տեսնենք, երկու դպրոցների մեջ քանի դասարաններ կան և յուրաքանչյուրի մեջ որքան դասեր և առարկաներ են պահանջվում, որ նրա համեմատ դիտենանք վարժապետների թիվը.

ՏՂԱՅՈՑ ԴՊՐՈՑ

Առաջին նախակրթարան. *յուրաքանչյուր օր երեք դաս հաշվելով, շաբաթական կլինի 18 դաս*

Երկրորդ նախակրթարան. *օրական 4 դաս հաշվելով, շաբաթական կլինի 24 դաս։*

Առաջին դասատուն. *օրական 5 դաս հաշվելով, շաբաթական կլինի 30*

Երկրորդ դասատուն. *նույն կարգով՝ 30*

Երրորդ դասատուն. *նույն կարգով՝ 30*

Ընդամենը շաբաթական 132 դաս։

ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ

Առաջին նախակրթարան. *18 դաս*

Երկրորդ նախակրթարան. *24 —»—*

Առաջին դասատուն. *30 —»—*

Երկրորդ դասատուն. *30 —»—*

Ընդամենը շաբաթական 102 դաս։

Ուրեմն երկու դպրոցների մեջ ամեն շաբաթ պահանջվում է 234 դաս։ Բաժանենք այդ թիվը վարժապետների վրա յուրաքանչյուրի առարկայի համեմատ, և յուրաքանչյուրին շաբաթական 24 դաս հանձնելով. այն ժամանակ հարկավոր կլինի 10 վարժապետ։

Տեսնենք, որքան պետք է ծախսել տասն օրինավոր վարժապետներ դանելու համար, որովհետև Ագուլիսը, կենտրոնից հեռու լինելով և իր մեջ վարժապետության ընդունակ մարդիկ չունենալով, ստիպված է բոլորին ուրիշ երկրներից հրավիրել։ Բայց մենք բանկ ոսկիներ չենք նշանակի, մենք յուրաքանչյուր վարժապետի համար, առարկայի համեմատ, կնշանակենք ավելի պակաս ոսկիներ, որքան որ տասնում են վարժապետները Երևանում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում և Շուշիում։

1. Հայկաբանության վարժապետին բարձր դասատներում՝ 800 ռուբլի
2. Ռուսաց լեզվի . . . . 800 ռուբլի
3. Մաթեմատիկայի . . . 800 ռուբլի
4. Աշխարհագրության և հայրենագիտության . . 700 ռուբլի
5. Ընդհանուր և հայոց պատմության . . . 700 ռուբլի
6. Կրոնի և եկեղեցական պատմության . . . 400 ռուբլի
7. Բնական գիտությունների . . . 700 ռուբլի
8. Հայոց լեզվի տղայոց դպրոցի նախակրթարանի համար . 500 ռ.
9. Հայոց լեզվի օրիորդաց դպրոցի նախակրթարանի համար 500 ռ.
10. Գեղագրության, երգեցողության և ձայնագրության . 400 ռ.

Դումարը կլինի 6300 ռ.։

Բացի հիշյալ 10 վարժապետներից, դպրոցների համար անհրաժեշտ են.

1 տնօրէն	1500 ռ.
1 վարժուհի	800
1 վարժուհու օգնական	300
1 վերակացու	600
1 ստորոժ	300
Ընդամենը՝	3500 ռ.։

Երկու դպրոցների վառելիքի, նորոգությունների, զանազան ուսումնական պիտույքների և ձրիավարձներին բաժանելիք դասական առարկաների համար մենք նշանակում ենք տարեկան 1000 ռուբլի։

Ուրեմն երկու դպրոցները պետք է ունենան տարեկան 10 800 ռուբլի հաստատ եկամուտ, որ կարողանան իրանց վիճակը օրինավոր կերպով բարեկարգել։ Կա՞ այսքան փող։ Մենք 800 ռուբլին բաց ենք թողնում, բայց տասն հազար անպատճառ պետք է լինի։

Հիշյալ դումարի փոխարեն, որպես վերևում ցույց ավելցինք, դպրոցներն ունեն տարեկան միայն 4000 ռուբլի արդյունք։ Ի՞նչ կարելի է անել այդ չնչին դումարով։ Հայտնի բան է. ամեն ինչ թերի, ամեն ինչ անկարգ կլինի։

Կար ժամանակ, որ Ագուլիսի դպրոցների նյութական դրությունը բավական ապահովված է եղել. վարժապետներին վճարում էին 1000—1200 ռուբլի, որ այն ժամանակ Կովկասի ոչ մի հայոց դպրոցում այսքան չէին տառնում, և դրա համար Ագուլիսի դպրոցները ունեին ամե-

նալավ վարժապետներ, և իրանց առաջադիմությամբ գերազանցում էին բոլորին։ Բայց հետո շռայլ ծախսերը մեկ կողմից, անհոգությունը մյուս կողմից, դպրոցների եկամուտները օրըստօրե սպառնցին և այժմյան չքավորության հասցրին։

Յանկանալով դպրոցների կրկին բարեկարգությունը, այն օրից, որ մենք ոտք դրեցինք Ագուլիս, մեր ջանքը միշտ այն է եղել՝ խոսել, հորդորել թե ազդեցություն ունեցող անձերին առանձնապես, և թե նրանց ժողովներում հրապարակապես, որ աշխատեն դպրոցների նյութական դրությունը ապահովելու։ Գուցե վիրավորած կլինեինք մի քանի բարեկամների համեստությունը, եթե հիշեի մի քանի անուններ, որոնք ամենայն եռանդով աշխատում էին մեզ հետ։ Այս խնդիրը մենք արծարծեցինք առավելապես ներկա տարվա սկզբում, երբ պ. Տեր-Միքայելյանի տանը կազմված ժողովում առաջարկում էին մեզ ընդունել դպրոցների տեսչությունը երեք տարի պայմանով։ Նույն ժողովում ներկա էին հոգաբարձությունը և Ագուլիսի առաջավոր անձինքներից շատերը։ Մենք հրաժարվեցանք, պատասխանելով, թե քանի որ դպրոցների նյութական միջոցները սուղ և անապահով դրության մեջ են, ոչ մենք և ոչ էլ մի ուրիշ բարեկիրթ մարդ չի ցանկանա ընդունել տեսչության պաշտոն, որովհետև դրամի պակասության պատճառով նա անկարող կլինի օրինավոր ուսուցչական խումբ կազմել կամ ուղղել դպրոցների բոլոր թերությունները, որ վերջը կարելի լիներ որևիցե արդյունք ցույց տալ։

Երկար խորհրդակցություններից հետո նույն ժողովում հարուցվեցան հետևյալ հարցերը. 1) Աշխատել, որ հավաքվին բոլոր նվիրատուներից դպրոցական փողերը, որոնք 12 տարի առաջ առորագրվել են և տակավին չեն վճարել, 2) իսկ նրանք, որ այնքան հարուստ չեն, որ մի անգամով վճարել կարողանան, նրանց ժամանակ տրվի, որ մի որոշ ժամանակում վճարեն դրամագլուխը մաս առ մաս, տոկոսի հետ, մինչև վերջացնեն, 3) իսկ որոնք բոլորովին աղքատացել են, ոչինչ չպահանջվի, այլ սպասել, մինչև նրանց բախտի կրկին վերադարձը։ 4) Նոր նվիրատուներ գտնել նոր հարստացած պարոններից, որոնք առաջին նվիրատվության ժամանակ չեն մասնակցել կամ առորագրվել են շատ փոքր գումար... Որոնել ուրիշ արդյունքների աղբյուրներ եւս։

Հիշյալ հարցերի բարձրացնելը նոր բան չէին ազուլեցոց համար, նրանք զանազան ժամանակներում մի քանի անգամ բարձրացած և կրկին խնդրված են եղել։ Բայց մեր աշխատությունը, իրագործելու համար այդ խնդիրները, պետք է կատարյալ գոնքիշոթություն համարել. ի՞նչ արած։ Դոնքիշոթը միշտ կմնա ազնիվ մարդ, թեև երևակայություններով

և ցնորքների հետ է պատերազմել... Դեռ բոլորովին ճանաչած չլինելով ագուլեցոց բնավորությունը, մենք կարծում էինք, թե շատ հեշտ է իրագործել, և փողերը հավաքել տալով՝ մի ապահով տեղ հանձնել, բայց սխալվում էինք։ Ագուլեցին չափազանց ծածկամիտ էակ է, նրա հետ խոսում ես մի հարցի վրա, որ բոլորովին հակառակ էր նրա կամքին, նա սկզբումը երբեք անհամաձայնություն ցույց չի տա, այլ կաշխատի իրան այնպես ձևացնել, որ բոլորովին համակրում է քո մտքերը, բայց հետո կողմնակի կամ ուղղակի կերպով կսկսե քեզ ընդդիմադրություն գործել։ Առաջին համաձայնությունը նա ցույց է տալիս նրա համար միայն, որ ծանոթանա քո դիտավորությունների հետ։ Այդպես էլ եղավ։ Գլխավոր պարոնը՝ Ս. Տեր-Մկրտչյանը, որի հետ շատ և շատ անգամ խորհրդակցել էինք վերոհիշյալ հարցերի վերաբերությամբ, թե մեր տան մեջ, թե իրանց տան մեջ և թե առանձին շրջաններում, այդ պարոնը բոլորովին համաձայն էր մեզ հետ, բայց նա առաջինը եղավ, որ քանդեց ամեն ինչ։ Այդ կտեսնեն ընթերցողը մեր հոդվածի շարունակության մեջ։

Խնդիրը շատ դժվարին էր։ Պահանջել հին նվիրատուներից իրանց ստորագրած դումարները, այդ կնշանակեր նրանց դեմ պատերազմ հրատարակել կամ զրկել նրանց այն անիրավացի արտոնություններից, որ դպրոցների վերաբերությամբ գոյ էին ունում։ Բայց որքան էլ դժվար կլիներ, մի քանի կարևոր պատճառներ ստիպում էին օգուտ քաղել հանգամանքներից։ Հիշյալ պատճառներից մեկն այն էր, որ նվիրատուների ստորագրությունները և մի քանիսի տված պարտամուրհակները բոլորովին կորցրել էին իրանց օրինական նշանակությունը, տասն տարուց ավելի հնացած լինելով։ Բավական էր, որ մի նվիրատու կապրիզից դրդված, չկամենար վճարել իր ստորագրած փողի տոկոսը, այն ժամանակ բոլորը կհետևեին նրա օրինակին։ Այդ մարդիկը, որպես նախանձ ունեն մինը մյուսին հետևել բարեգործության մեջ, այնպես էլ նախանձ ունեն մինը մյուսին հետևել այն բանների մեջ, որ շատ հեռու են բարի լինելուց։ Ցավալին այն է, որ կային մարդիկ, որոնք մտքերում գրած էին իրանց ստորագրած փողերը նա քաշել դպրոցներից, միայն քաղաքավարի ստիպնների էին սպասում...

Հիշյալ հանգամանքները ի նկատի ունենալով, որ ոմանք ազատներից, ոչ թե գաղափարից դրդված, հանձն են առնում օժանդակել այս և այն բարեգործական նպատակին, այլ գրգռվում են մինը մյուսի նա-

խանձից, որ միմյանցից եաւ չմնան*, պետք էր աշխատել վաո պահելու նրանց բարի նախանձը։ Այդ ամենը մենք արեցինք։ Եվ պետք էր բացատրել, որովհետև դրա հետ կապ ունեին մի քանի դրպարտություններ, որ մեզ վրա բարդեցին մեր և պ. Բ. Տեր-Միքայելյանի հետ ունեցած սերտ հարաբերությունների պատճառով։

Մենք հետևյալ բացատրությունը փակագծի մեջ ենք դնում չշեղվելու համար մեր հոդվածի նպատակից։

Առաջին տարին, երբ մենք Ագուլիս էինք գնում, էջմիածնով անցանք. այնտեղ Վ. Ե. Մանկունին մեզ հայտնեց, թե ագուլեցի պ. Բ. Տեր-Միքայելյանը աղերսագիր է մատուցել Նորին Վեհափառության ամենայն հայոց կաթողիկոսին և թույլավություն է խնդրել Ագուլիսում մի եկեղեցի շինելու, և ավելացրուց, թե իրանք ուշացնում են հրաման տալը և կցանկանային, որ մի ուրիշ բարեգործական նպատակի համար գործ դրվեր այդ գումարը, որ պիտի ծախսվեր եկեղեցու վրա։ Նորին սրբազանությունը մեզ հանձնեց աշխատել և համոզել պ. Բ. Տեր-Միքայելյանին, թողնել եկեղեցու շինությունը, եթե կարելի էր, այն գումարը Ագուլիսի դպրոցներին ընծայվեր։ Այդ հանձնարարությունը առիթ եղավ Ագուլիս հասնելուց հետո մեր և պ. Բ. Տեր-Միքայելյանի մեջ եղած հարաբերություններին, որոնք հետզհետե բարեկամական ձև ստացան։ Թեև ինձ չհաջողվեց խորտակել ամուր նախապաշարմունքը և արգելել եկեղեցու շինությունը, որի կատուցումը առաջ էր եկել մի ուխտադրությունից, բայց ես կարողացա պ. Բ. Տեր-Միքայելյանից հաստատ խոստումն առնել, որ մի նշանավոր գումար ես կնվիրեի Ագուլիսի դպրոցներին։ Այդ բանը պիտավորապես պատճառ եղավ, որ բարձրացավ վերոհիշյալ հարցը, թե պետք է հավաքել հին նվիրատուների մոտ մնացած դպրոցական փողերը։ Որովհետև պ. Բ. Տեր-Միքայելյանը շատ իրավացի կերպով ասում էր, թե ինքը իր մատաղված գումարը (որ 10 000 ռուբլուց պակաս չպիտի լիներ) պատրաստ է նաղտ տալ միայն այն պայմանով, եթե բոլոր հին նվիրատուներն, որոնք կարողություն ունեն միանգամից վճարելու, նույնպես կատային իրանց մոտ դնված

---

* Օրինակներ շատ են եղել. մի ազա շինեց մի օտարազգի եկեղեցի, իսկ մի ուրիշ ազա նրա հակառակ նորոգից թուրքերի մեչիթները և, դրանով չբավականանալով, շինեց մի հայոց եկեղեցի եաւ Մի ազա մի ամբողջ տուն տասն տարի ժամանակով անվարձ ավից, որ նրա մեջ պահվի մի օտարազգի դպրոց, իսկ մի ուրիշ ազա նրա հակառակ ամեն տարի նվիրում էր ... ռուբլի մի օտարազգի դպրոցի։

դպրոցական փողերը*։ Մի այսպիսի առաջարկություն, իհարկե, հաճելի չէր կարող լինել հին նվիրատուներին, որոնք ավելի պարտավորվում էին իրանց 12 տարի առաջ ստորագրած և անվճար եղած գումարները հատուցանել։ Այս պատճառով նրանք ամեն տեսակ կողմնակի հնարներ գործ դրեցին, որ խափանվի պարոնի դիտավորությունը։ Կարծես նրանք ասում լինեին. «Ոչ քո ավածը կուզենք և ոչ էլ դու համարձակվիր մեղանից փող պահանջելու»...

Բայց պ. Տեր-Միքայելյանը ավելի ծայրահեղության հասցրուց. նա բերնից թռցրուց մի անզգույշ խոսք, ասելով, թե հին նվիրատուները չցանկանան տալ իրանց մոտ դանված դպրոցական փողերը, ինքը պատրաստ է բոլորը (30 000 ռուբլի) մի անգամով վճարել, թե թույլ կտային դպրոցները կոչել Տեր-Միքայելյան անունով։ Այդ, իհարկե, անիրագործելի էր, որովհետև ոչ մի ագուլեցի չէր ցանկանա, որ դպրոցները նրանց անունով կոչվեին, բայց հիշյալ խոսքը բարի նախանձ գրգռելու համար բավական զորավոր շարժառիթ էր։

Վերջապես, վերոհիշյալ խնդիրները քաշքշվում էին մինչև ներկա տարվա մարտ ամսի վերջը, երբ կազմվեցավ ընդհանուր ժողով, միմիայն այն նպատակով, որ մտածեն, թե ինչ եղանակով կարելի էր ապահովացնել դպրոցների նյութական դրությունը։

Նույն ժողովում գտնվում էին Ագուլիսի առաջավոր մարդիկը, դպրոցների նվիրատուները, բարերարները, «հիմնադիրները» և այլն։ Նույն ժողովում ներկայացանք և մենք**։ Նախքան բուն խնդրի մեջ մտնելը մենք հարկավոր ենք համարում մի փոքրիկ գաղափար տալ ընթերցողին, թե որպես են կազմվում Ագուլիսում ժողովները կամ ինչ եղանակով են վճռվում հարցերը։ Ոչ որ տեսել է ջհուդի սինագոգա, կարող է ճիշտ գաղափար ունենալ այտեղի ժողովների մասին։ Խոսում են ազանները միայն, ամեն ազա խոսում է առանց խոսք խնդրելու. մեկը մյուսին ընդհատում է առանց թույլ տալու, որ խոսքը վերջացնի. ժողովին ոչ ոք չէ նախագահում կարգ պահպանելու համար, ազանների որը իրան

---

* Պ. Տեր-Միքայելյանի պահանջը իրավացի էր այն կողմից, որ մինչև այսօր մի քանի նվիրատուների մասնավորապես վճարված գումարները ծախսվել և ոչնչացել էին։ Նա պահանջում էր, որ բոլորը միասին տային, բացի կարողություն չունեցողներից, որ մի ամբողջ դրամագլուխ կազմվեր և մի ապահով տեղում շահիվներ։

** Մեզ մեղադրում են, թե ինչու գնացինք այնտեղ, երբ հրավիրված չէինք (տես «Մեղու» 34 համար)։ Մենք ոչ որի հրավիրելուն կարոտություն չունեինք, որովհետև ժողովի ինիսիատիվը ավազը և ժողովը գումարող գլխավոր գործիչներից մեկն էլ մենք էինք։ Եվ ի՞նչ պետք, որ մեզ հրավիրել չէին...

նախապատիվ է համարում, ամենից շատ է խոսում, այլև խրոխտանում է լռեցնել մի ուրիշ իրանից սաոր համարվածին, թեև նրա խոսքը շատ իրավացի լիներ։ Բաբելոնյան խառնակությունը հասնում է վերին աստիճանի անկարգության։ Ահա մի այսպիսի ժողովում մենք դժբախտություն ունեցանք ներկա գտնվելու։

Ժողովի բուն նպատակը, որպես վերևում հիշեցինք, էր մտածել դպրոցների նյութական դրությունը ապահովելու մասին, իսկ այդ միտքը մնաց որպես երկրորդական հարց, որովհետև ձեռնատու չէր պատվելի նվիրատուներին... Այն հինգ խնդիրները*, որ առաջուց փոքրիշատե մշակված էին դպրոցների գոյությունը ապահովելու համար, ամենևին չհիշվեցան։ Առհասարակ մեր հայերի մեջ, երբ կամենում են մի օգտավետ խնդիր քաղաքավարությամբ խափանել, մեջ են գցում ուրիշ երկրորդական և շատ անգամ անիրագործելի խնդիրներ՝ գործը խառնելու համար։ Այսպես էլ եղավ։ Բարձրացրին այնպիսի հարցեր, որ կամ բոլորովին ավելորդ էին և կամ դեռ վաղ էր նրանց վրա ուշադրություն դարձնել։ Մենք առաջ կբերենք այն հարցերի երկուսը միայն, որ վիճաբանության առարկա դարձան մեր և երկու աղանների մեջ, և որի պատճառով մեզ մեղադրեցին, թե «անպատվեցինք և ոչնչացրինք նախ երիտասարդությունը (??) և ապա պատվելի հիմնադիրներին («Մեղու» 34 համ.) կամ թե «նախատինք և խռովություն ներս բերեցինք այդտեղ» («Մեղու» 47 համ.)։ Այս խոսքերի գրողները այն աստիճան սարկահոգի արարածներ են, որ նրանց աչքում հանդգնություն է թվում, երբ մի վարժապետ իրան թույլ է տալիս հակառակել, վիճել երկու աղանների հետ, որոնց առջևը պետք էր միշտ լուռ մնալ... Ահա եղելությունը։

Մենք հարկավոր համարեցինք մեջ բերել վիճաբանության առարկա դարձած երկու խնդիրները, ոչ թե մեզ արդարացնելու մտքով, այլ դրանք հետաքրքիր են այն կողմից, որ կապ ունեն Ագուլիսի դպրոցների ցավալի պատմության և նրանց մեջ կատարվող անընդհատ երկպառակությունների հետ։

Խնդիրները հետևյալներն էին. 1. որոշել դպրոցների նպատակը. 2. նույն նպատակի համեմատ կազմել դպրոցների պրոգրաման։

Ցավում ենք, որ այս երկու հարցերն էս այնպիսի փափուկ հար-

---

* 1. Պահանջել հին նվիրատուների ստորագրած դպրոցական փողերը. 2. Ով չի կարող միանգամից վճարել, նրան ժամանակ տալ փոքր առ փոքր հատուցանելու. 3. Ով բոլորովին անկարող է, թողնել մինչև նրա բախտը կվերադառնար. 4. Գտնել նոր նվիրատուներ նոր հարստացած պարոններից. 5. Որոնել ուրիշ արդյունքների աղբյուրներ, ահա այն հարցերի համառոտությունը։

ցեր են, որ չպիտի կարողանանք մեր այն ժողովում տեղի ունեցած բոլոր վիճաբանությունները երևան հանել։ Բայց մեջ կբերենք, ոլքան կարելի է։ Հաբեցերը բարձրացնողները պ. Հայրապետ Արասխանյանցն և պ. Մարտիրոս Տեր-Մկրտչյանցն էին։

Պարոն Հայրապետ Արասխանյանցն առաջարկում էր, թե դպրոցների կազմակերպությանը պետք է այնպիսի ձև տալ, որ աշակերտները ավարտելուց հետո կարողանային ռտղպակի մտնել ռեալական գիմնազիայի չորրորդ դասատունը։ (Այդ խոսքերը բավական հաճոյական էին մի քանի հարուստների, որոնք իրանց որդիքը ռուսաց դպրոցներ են տալիս և նախապատրաստելու համար մեծ ծախսեր են անում)։ Մենք հակառակկացինք պարոնին, պատասխանելով, թե դա բոլորովին անիրագործելի է, որովհետև գիմնազիայի այս և այն դասատան համար աշակերտ պատրաստելու համար պետք է, որ բոլոր առարկաները ռուսաց լեզվով դաս տրվին (պարոնի պահանջն էլ հենց այդ էր. տասն տարուց ավելի է, որ այդ հարցի մասին վիճում է նա)։ Բայց անկարելի է, որովհետև ոչ ընտանիքի մեջ և ոչ դրսում ոչ մի ռուսաց բառ չլսած զոկի երեխային առարկաները դաս տալ իրան անհասկանալի լեզվով, դա մանկավարժական կետից ևս սխալ կլիներ։ Մանավանդ զոկերի երեխաների համար նույնիսկ մայրենի գրական լեզուն համարյա թե մի օտար լեզու է, ուր մնաց ռուսերենը։ Եվ ավելացրինք, թե Ազուլիսի դպրոցները, որպես վեհափառ կաթողիկոսի անմիջական իրավասության ներքո գտնվող հոգևոր դպրոցներ, պետք է իրանց պրոգրաման հարմարացնեն մեր միջնակարգ կամ բնմական դպրոցների պրոգրամային, և ով որ ցանկանում է, որ իր որդին այստեղ ավարտելուց հետո գիմնազիա մտներ, կարող է առանձին կերպով պատրաստել տալ։

Իսկ այդ հարցը նյութական կողմից նույնպես անիրագործելի է, որովհետև Ազուլիսի դպրոցները այնքան դրամական միջոցներ չունեն, որ կարողանան մի պրոգիմնազիայի չափ ընդարձակել ուսման կուրսերը։

Մենք, իհարկե, ավելի լավ կանեինք, եթե ուշադրություն չդարձնեինք պ. Հ. Արասխանյանցի խոսքերի վրա, բայց շատ բան լսած լինելով այդ մարդու մասին, որ նա, սկսյալ պ. Ռուբեն Ջալալյանցի օրերից, միշտ պահանջել է, որ դպրոցներում ռուսաց լեզվով դաս տրվին առարկաները, և միշտ այդ մասին անբավականություններ է ունեցել վաղեմի ուսուցիչների հետ, մտածեցինք պարոնի գլխից դուրս բերել իր տարապայման իդեֆիքսը։

Իսկ գալով պրոգրամային և նրա կազմելուն, մենք ասեցինք, թե դա ձեր գործը չէ, այլ պետք է թողնել ապագա տեսչին, որ իր ուսուցչական խումբի հետ կազմի, հարմարեցնելով դպրոցների դրությանը և տեղային պահանջներին։ (Պարոն Մ. Տեր-Միրզեչյանը մեր խոսքերը այնպես բացատրեց ժողովին, իբր թե մենք ասեցինք, դուք բոլորդ հիմարներ եք։ «Տեսա՞ք, մեզ ամենևին իշացրուց»,— ընդմիջեց նա)։ Մենք ուշադրությունն չդարձնելով, շարունակեցինք, թե այժմ վաղ է մտածել պրոգրամայի վրա, քանի որ դպրոցների նյութական միջոցները դեռ հայտնի չեն, որովհետև դրամական միջոցների ընդարձակությունից կախումն ունի և պրոգրամայի ընդարձակությունը. երբ միջտեղում փող չկա, և փողի քանակությունը դեռ հայտնի չէ, ինչպե՞ս կարելի է նոր պրոգրամա կազմել*։

Այս խոսքերով մեր նպատակն այն էր, որ ժողովի ղեկավոր ուշադրությունը դարձնենք դպրոցների նյութական դրությունը ապահովելու միջոցների վրա մտածելու, թե բավական փող լինելուց հետո մյուս բոլոր բաները իրանց կարգով կկանոնավորվեն։ Բայց որովհետև մեր վերջին խոսքերը ուղղած էին պ. Մարտիրոս Տեր-Մկրտչյանին, նա վիրավորվեցավ, որովհետև նա էր հանձն առել մի քանի պարոնների հետ, որոնք իրանց անունն անդամ սխալներով էին ստորագրում, նոր պրոգրամա կազմել**։

Հիմա դատեցեք. խոսողը կամ վիճողը ինչո՞վ է մեղավոր, որ այդ մարդիկը այն աստիճան վարակված են փառասիրությամբ, և այն աստիճան սովորել են միշտ «այո» լսել իրանց ամեն մի սխալ ասածների դեմ, որ բոլորովին կատաղում են, երբ լսում են մի հակառակ խոսք։ Նրանք չեն կարողանում համբերել, երբ նրանց երեսին ասում ես. «Դուք սխալվում եք», կամ՝ «Դա ձեր գործը չէ», նրանք այդ խոսքերը ընդու-

---

* Ագուլիսի դպրոցները իսկապես ունեն պրոգրամա, որ անցյալ տարի հայր Սուրենյանցի տեսչության ժամանակ կազմվեցավ ուսուցչական խումբի թորհրդով. միայն այս տարի երրորդ դասատուն բացվելով, պետք էր մի քանի փոփոխություններ անել նույն պրոգրամայի մեջ։ Բայց ագուլեցոց վաղեմի սովորությունն է միշտ օդեղեն ամբոցներ կառուցանել... և թղթի վրա ընդարձակ պրոգրամաներ կազմել տալով, մտածել, թե դրանով կարող են ունենալ բարձր ուսումնարաններ։ Մի բավական ընդարձակ պրոգրամա նրանք կազմել են տվել պ. Բաբխուդարյանցին, որ մինչև այսօր մնացել է անդործադրելի, որովհետև փող չեն ունեցել, որ նրա համեմատ վարժապետներ վարձեին կամ դասատներ բաց անեին։

** Այդ պարոնները, որպես հետո լսեցինք, գրել էին Թիֆլիս մի գործակատարի, որ մի պրոգրամա առնե և ուղարկե... կարծես դա էլ մի տեսակ մթերք էր, որ վաճառում են։

նում են միևնույն նշանակությամբ, որպես թե ասեիր. «Դու ոգևոր ես, դու հիմար ես»։

Բայց ոչ, բանի մեջ ուրիշ բան կա... պետք է բացատրել։

Ժողովի գլխավոր նպատակը, որպես վերևում հիշեցի, էր մտածել դպրոցների նյութական դրությունը ապահովելու միջոցների վրա։ Դրա մեջ մտնում էին և այն հարցերը, որ պետք էր հավաքել հին նվիրատուների ստորագրած դպրոցական գումարները և նոր ստորագրություն ևս բաց անել։ Որպեսզի դրանց և ոչ մեկը չհաջողվեր, հարկավոր էր գործի մեջ մի հանգույց դնել, կամ որպես ասում են, մեջտեղում երկպառակության խնձոր գլորել։ Եվ հարուցին պրոգրամայի խնդիրը։ Ինչո՞ւ նպատակը շատ պարզ էր։ Փող չտալու համար պետք էր մի այնպիսի բան մտածել, որ չասեին, թե դու անաղնիվ մարդ ես, քո ստորագրությունը չես հարգում, քո խոստացած գումարը չես տալիս... Նվիրատուները կամ ինչպես իրանց կոչում են՝ դպրոցների «հիմնադիրները», գլխավորապես ազդեցոց հարուստ աղաներն են, որոնք իրանց ստորագրած փողերը իրանց մոտ պահելով, գործ են դնում դպրոցների վերաբերությամբ ամեն բան, ինչ որ ցանկանում են։ Հիմա, որ հարց էր բարձրացել փողերը նրանցից պահանջելու, հարկավոր էր մի բան սարքել, որ ամեն մի նվիրատու առիթ ունենար ասելու. «Ինչո՞ւ եմ տալիս փողը, ի՞նչ նպատակի համար, ես ցանկանում եմ, որ իմ որդիքս այստեղ պատրաստվելով՝ դիմնազիա մտնեին, բայց քանի որ մեր դպրոցներից այդ հուսալ չէ կարելի, էլ ինչո՞ւ եմ կորցնում փողերս։ Ուրեմն փոխեցեք դպրոցների պրոգրաման և նրանց այնպիսի ձև տվեցեք, որ իմ նպատակիս համար լինեն. այն ժամանակ ես էլ փող կտամ...»։

(Եթե պրոգրաման նրանց նպատակների համեմատ փոխվելու լիներ, այն ժամանակ մի ուրիշ բան կլինարևին ասելու)։

Այդ կռիվը Ապուլիսի հարուստների և ազքատ դասի մեջ մի հին կռիվ է. առաջիններըը միշտ պահանջել են, որ դպրոցները ծառայեցնեին իրանց նպատակներին. բանի-բանի անգամ հարց է բարձրացել, որ հայոց լեզուն միայն նախակրթարաններում լինի, իսկ բարձր դասարաններից պետք է սկսվեն առարկաները ռուսաց լեզվով, որ նրանց որդիքը վարժվելով, կարողանան ռուսաց դպրոցներ մտնել։ Զարմանալին այն է, որ այդ բոլոր նվիրատուների վճարի տարեկան տոկոսը, որպես սկզբում ցույց տվեցինք, հասնում է 1200 ռուբլու, իսկ դրանք հարստահարում են ժողովրդի իրավունքները, որոնց դպրոցներին հատցրած արդյունքի գումարը հասնում է 3 000 ռուբլու։

Մենք ցավում ենք, որ նույն ժողովում հարուցին մի ուրիշ, ավելի ոչ

մարդասիրական հարց ևս, այն է, թե պետք է սահմանափակել աղքատների որդիների դպրոց մտնելը, և դրա համար մատծեցին աշակերտների թոշակները ավելացնել, որ միջոց չտրվի աղքատ ծնողներին իրանց որդիքը ուսումնարան տալու, որովհետև մատծում էին, թե աղքատ աշակերտների բազմությունը արգելք է լինում հարուստների որդիներին լավ սովորելու... Այդ հարցը բարձրացրուց պ. Մարտիրոս Տեր-Մկրտչյանը, և որովհետև մենք նրան հակառակեցինք, ժողովն արձակվելուց հետո նա մի քանի մարդկանց մոտ ասաց մեզ. «Դուք շատ միամիտ եք երեվում ինձ. մեզ ի՞նչ օգուտ աղքատների երեխաներով լեցնել մեր դպրոցները, մեզ մեր որդիքն են պետք գալու»*...

Այս բոլորը նկարագրելու պատճառն այն էր, որ ցույց տանք, որ այսպիսի խառնիխուռն և անտեղի խնդիրներ մեջ դնելով, ժողովի բուն նպատակը մեջտեղում խեղդվեցավ։ Մի մարդ միայն հասավ իր նպատակին, և դա էր պ. Մարտիրոս Տեր-Մկրտչյանը...

Դա առանց ժողովի կամքը կամ հաճությունը խնդրելու, առաջարկեց իր փեսաներից և մոտ ազգականներից վեց հոգի, որ մասնաժողով կազմվի, իսկ ինքը ընդունեց նույն մասնաժողովի նախագահությունը, առանց ոչ ոքից ընտրված լինելու։ Մասնաժողովի գործը պետք է լիներ մշակել այն բոլոր հարցերը, ինչ որ առաջարկվեցան նույն ընդհանուր ժողովի մեջ, որոնց շարքում վերջին տեղն էր բռնում և դպրոցների նյութական դրությունը ապահովելու խնդիրը։ Թե ինչ շինեց մասնաժողովը, և որքան արդարացրուց ժողովրդի ցանկությունները, այդ կտեսնեն ընթերցողը մեր հոդվածի երրորդ գլխի մեջ։

Գ.

Մարտի 24-ի ընդհանուր ժողովը, որպես տեսավ ընթերցողը, վերջացավ նրանով, որ ընտրվեցավ մի մասնաժողով պ. Մարտիրոս Տեր-Մկրտչյանի նախագահությամբ, որ պետք է մշակեին այն հարցերը, որոնք հարուցվեցան ընդհանուր ժողովի մեջ։

Առհասարակ խոսելով, ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ Տեր-Մկրտչյանի ազգատոհմը այն հարգելի և միշտ երախտավոր գեր-

---

* Ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ պ. Հայրապետ Արտախտայացը (թեև մենք սաստիկ հակակրություն ունենք դեպի այդ պարոնը), բայց առաջարկեց մի շատ մարդասիրական հարց, ասելով, որ յուրաքանչյուր եկեղեցու մոտ բացվեն առաջին ծխական դպրոցներ աղքատների համար, քանի որ Ագուլիսի մեծ դպրոցներում նրանց ընդունելու հնարները դժվարանում են։

դաստաններից մեկն է եղել, որոնց մատուցած բարերարությունները Ագուլիսի թե դպրոցներին, թե վանքին, թե եկեղեցիներին և թե այլ հիմնարկությունների միշտ անմոռաց կմնան ամեն մի ագուլեցու սրտում, և միշտ պատկառանքով է վերաբերվում ամեն մարդ դեպի այդ ազնիվ ազգատոհմը, որ իրապես արժանի է պատվելու։ Մկրտիչ աղան՝ դերդաստանի այդ ծերունի նահապետը, որ այժմ դեռ կենդանի է, այն առաքինի անձնավորություններից մեկն է, որի նմանները խիստ հազվադյուտ են մեր հին ծերունիների մեջ։

Մկրտիչ աղան Ագուլիսի դպրոցների նվիրատուների մեջ առաջինն է, որ ստորագրել է համեմատաբար ավելի մեծ գումար, եթե չենք սխալվում, 7 000 ռուբլի։ Պատմվում էր, և պետք է ճիշտ լինի, որ բարեպաշտ ծերունին իր արդեն պատրաստած կտակի մեջ նշանակել է, որ հիշյալ գումարը ստացվի իր ժառանգներից։ Բայց այն ևս խոսում էին, որ ժառանգներից մեկը, պ. Մ. Տ.-Մ., աշխատելիս է եղել, որ համոզի հորը, որպեսզի նա կտակի դպրոցներին վերաբերյալ մասը ջնջի։ Մենք բոլորովին հավատալ չենք կարող, որ Մկրտիչ աղայի նման բարեպաշտ անձը հոժարվեր ոչնչացնել մի բարի գործ, որ մշտապես անմոռաց պիտի պահեր նրա հիշատակը։ Բայց ինչ որ վերաբերում է որդու մատուցություններին, մենք մի փոքր կասկածավոր ենք։ Իհարկե, մենք շատ հավատ չէինք ընծայի այն խոսքերին, որ խոսվում էին, եթե այդ պարոնը մի քանի անգամ մասնավոր խոսակցության մեջ և մի քանի անգամ վկաների առջև մեզ ասած չլիներ, թե «իմ հայրը իզուր է կտակել Ագուլիսի դպրոցներին մի այնքան գումար, թե Ագուլիսի դպրոցներից ոչինչ օգուտ սպասել կարելի չէ»։ Մենք հարցրինք. «Ուրեմն ի՞նչ անելու էր ձեր հայրը»։ Նա պատասխանեց. «Եթե հայրս այն գումարը ինձ տալու լիներ, ես ավելի օգտավետ բարեգործական նպատակի կծառայեցնեի»։

Մենք մի մեծ նշանակություն չենք տալիս վերոհիշյալ խոսակցություններին, բայց մի անգամ մի պարոն ցույց ավեց մեզ մի նամակ, որի բովանդակությունից երևում էր, որ դեռևս շատ տարի առաջ պ. Մ. Տ.-Մ. հայտնել է իր տհաճությունը հոր՝ Ագուլիսի դպրոցներին մի այնքան նշանավոր գումար կտակելու մասին։ Բացի դրանից մեզ ավելի կասկածանքի մեջ էր գցում պարոնի և այն վարմունքը, որ միշտ աշխատում էր դպրոցների թե ներկան և թե ապագան ավելի սև գույնով նկարել հոր աչքում...

Հիմա դառնանք դեպի մեր հոդվածի շարունակությունը։

Պ. Մ. Տ.-Մ. վերոհիշյալ ձգտումները անհայտ չէին ագուլեցիներին։ Այն օրից, որ մասնաժողով կազմվեցավ դպրոցների գրությունը բարե-

լավելու համար, այն օրից, որ նա իրան մասնաժողովի նախագահ նշանակեց և մյուս անդամներին ընտրել տվեց իր մերձավորներից միայն, որոնք բոլորը նրա հլու հպատակներն էին, այն օրից ագուլեցիք (իհարկե, մատծողները միայն) ոչինչ բան չէին ստանում այս մասնաժողովից, և ոչ հույս ունեին, թե մասնաժողովը կկանգնեցնի մատծել պարոցների նյութական դրությունը ապահովելու միջոցների վրա, որ նրանց գլխավոր գործը պետք է լիներ։ «Միծաղելի բան է, ասում է մի պարոն, ինչպե՞ս կարելի է հանցավորներին դատավոր նշանակել իրանց վրա. այդ մարդիկը, որ 12 տարի գլորոցների փողերը իրանց գրպանումն են պահել և ամենևին հոժարություն չունեն տալու, ինչո՞ւ կասեն ուրիշներին, թե քերեք փող տվեցեք. չէ՞ որ այդ ուրիշները նրանց կասեն. առաջ դուք տվեցեք, հետո մենք էլ կտանք»։

Կասկածանքները մասամբ իրավացի էին, առավել պ. Մ. Տ.-Մ. վերաբերությամբ, որովհետև այդ պարոնին չէին համարում ագուլեցի, այլ Մոսկվայի քաղաքացի, որ ժամանակավորապես միայն եկել էր Ագուլիս և սպասում էր, որ իր ժառանգությունը (նրա հետ, ևթե կարելի է, հոր գլորոցներին կտակած փողերը) ստանա և թողնե և գնա։ Այս հանգամանքները, որ իրավ այսպես կարծել էին տալիս, մեծ ազդեցություն ունեին մասնաժողովի գործունեության վրա, որի կառավարության գլխը պատնվում էր պ. Մ. Տ.-Մ. ձեռքում։ Նվ պետք է գլորոցների նյութական դրությունը ապահովելու խնդիրը կամ բոլորովին խեղդվեր, կամ նրա վրայից պիտի անցնեին հարևանցիորեն։ Ինչո՞ւ Նրա համար, որ մասնաժողովի նախագահը, ինչպես շատերը մատծում էին, բնավ չէր ցանկանա պաշտպանել այն հարցը, թե պետք էր հավաքել նվիրատուների մոտ գտանված գլորոցական փողերը, որովհետև նույն նվերների շարքում գտանվում էր և իր հոր ստորագրած 7 000 ռուբլին, որ նա ցանկանում էր ինքն ստանալ մի ուրիշ բարեգործական նպատակի համար գործ դնել...

ԵՒթե այդ այդպես էր, ևթե այդ բոլորը գիտեին, էլ ինչո՞ւ էին ընտրում այս տեսակ անձինքներին։ Ո՞վ ընտրեց. նրանք իրանք իրանց ընտրել տվեցին, և ոչ ոք էլ ձայն չհանեց։ Ագուլեցիք զարմանալի մարդիկ են, նրանք միայն եռևից խոսել և արտնջալ գիտեն, իսկ առջևում կլռելին։ Բացի դրանից, ագուլեցին իր գյուղի մեջ, հենց իր հայրենիքում պանդուխտ մարդ է. նա տարիներով օտարության մեջ է լինում, վերադառնում է, մի կամ երկու ամիս մնում է տանը, և ոչ մի հասարակական գործ նրան չէ հետաքրքրում. «Ես ի՞նչ բան ունեմ,— ասում է նա,— ինչ ուզում են, թող անեն, ինչո՞ւ եմ գլուխս զարմանալի մեջ գցում...»։ Կան

մի քանի աղանձեր միայն, որոնք այնտեղից չեն հեռանում, նրանք են, որ ամեն գործ իրանց ձեռքն են առել։ Ժողովուրդը բոլորովին անտարբեր է պահում իրան։

Յավալին այն էր, որ մասնաժողովի անդամների մեջ չկար և ոչ մեկը, որ մյուսներին հակառակ լիներ. բոլորը մեկ հոգով, մեկ սրտով միացած էին։ Բոլորը այնպես հարմարեցրած էին, որ պարոն նախագահը որպես ածելու լիներ, նրանք այն եղանակով պար կդային։ Մի մարդ միայն օտար էր նրանց մեջ, և դա էր պ. Բ. Տեր-Միքայելյանը, որը հենց առաջին նիստից հետո հրաժարական ավեց և դուրս եկավ նրանց միջից։ Այդ պարոնի հրաժարականի մեջ այն կետերը ավելի ուշադրության արժանի են, որ նա սկզբից հայտնեց նրանց, թե մասնաժողովի գլխավոր գործը պետք է լինի մատչել գարոցների նյութական դրությունը ապահովելու միջոցների վրա, բայց քանի որ մասնաժողովը զրաղվում է չնչին, մանր և երկրորդական հարցերով, նա բոլորովին ապարդյուն է համարում այս տեսակ ձեռնարկությունները։

Վերոհիշյալ բոլոր ենթադրությունները ավելի կատարվեն, եթե քննելու լինենք մասնաժողովի գործունեությունը։

Պետք է ասել, որ մասնաժողովը իր գործը բոլորովին թաքցրեց մեզանից՝ վարժապետներից. մի անգամ միայն մեզ պատահեց մի բարեկամի մոտ իմաստ հարևանցիորեն կարդալ ժողովի նիստերի արձանագրությունները, և այնքան ժամանակ չկար, որ գոնե գլխավոր կետերը արտագրեինք։ Մենք մեջ կրեինք, որքան մնացել է մեր հիշողության մեջ։

Մասնաժողովը իրան կոչել է վ. Ազուլիսի ուսումնարանական բարեկարգության մասնաժողով։ Նա իր գործունեությունը վերջացրել է մոտավորապես երկու ամսվա մեջ. այդ ժամանակամիջոցում ունեցել է, կարծեմ, վեց նիստ. հիշյալ նիստերի մեծ մասը նվիրված է եղել կրոնուսույցչական և նրա տիկնոջ՝ վարժուհու, մի քանի զանցառությունների իրանց պաշտոնի մեջ (Դրանց բավական զզվելի են, երևի հաճույքն էր պատճառում ամենին...)։ Հետո զբաղված են եղել մի ուրիշ վարժապետի՝ պ. Կ. Տ. Ս. մի քանի դասեր իողնելու հարցով. նրան նամակ են գրել և պատասխան են ստացել մի բառով՝ «հիվանդություն»։ Հետո նամակով դիմել են պ. Մելիք-Հակոբյանին և կամեցել են նրա հաճությունը առնել, թե ինչ պայմաններով նա կցանկանար հետևյալ տարին ևս շարունակել իր պաշտոնը. նա պատասխանել է, թե Ազուլիսում մնալու ցանկություն չունի։ Իսկ տեղացի չորս վարժապետներից հաճույն են ստացել, որ կմնան իրանց պաշտոնի մեջ։ Հետո այս և այն

պարոնին Թիֆլիսից որպես վարժապետ հրավիրել են և մերժողական պատասխան են ստացել։ Հետո վճռել են, որ այս և այն վիրակացուներին պետք չէ պահել։ Այս բոլորը, ինչպես տեսնում է ընթերցողը, հոգաբարձության գործ է։ Մասնաժողովը ուշադրություն է դարձրել ուրիշ մի քանի կարևորությունների վրա ևս։ Օրինակ, գրել է Թիֆլիս և այնտեղից պրոգրամա է պահանջել դպրոցների համար, բայց պատասխան է ստացել, որ Թիֆլիսի հայոց դպրոցների և ոչ մեկը տպված պրոգրամա չունի։ (Այդ մարդիկը հանձն էին առել, որ իրանք կազմեին պրոգրաման)։ Հետո բարվոք են համարել, որ դպրոցները տեսուչ ունենան, իսկ առանձին եկեղեցիների մոտ ծխական դպրոցներ բաց անել մերժվել է։ Արձանագրությունների մեջ կա և այն, որ մասնաժողովը վարժապետական խմբից Ղազով հարցրել է, թե ինչու եք դադարեցրել ուսուցչական ժողովները, և նրանք պատասխանել են, թե այդ մասին դիմեցնք հոգաբարձությանը և բացատրություն պահանջեցնք։ Ահա բոլորը այսպիսի մանր-մունր բաներ, նրանք ձեռնամուխ են եղել և այն գործերի մեջ, որ իրանց չէին վերաբերում։ Եթե մեր հիշողությունը մեզ չէ խաբում, կարող ենք համարձակ ասել, որ բացի վերոհիշյալներից, ուրիշ ոչինչ չկար մասնաժողովի արձանագրությունների մեջ։''

Բայց մի բան թողնենք, դա էր դպրոցների նյութական դրությունը ապահովելու համար սահմանված վճիռը, որ ամենատրոր տեղ է բռնում արձանագրությունների մեջ։

Այդ մասին մասնաժողովը վճռել է, թե պետք է մի ահագին երկաթե արկղ գնվի, և այդ արկղը պետք է դրվի վանքի պահարանումը. նա պետք է երկու բանալի ունենա, և երկու բանալին պետք է լինի երկու դանձապետների ձեռքում. նրանք միասին պետք է բայ անեն արկղը և միասին կողպեն։ Եվ դանձապետները պետք է դպրոցների բոլոր փողերը տոկոսաբեր թղթեր շինեն և պահեն այն երկաթե արկղի մեջ, «որ ոչ ուտիչ ապականն և ոչ գողք սկսան հատանել»...

Այդ բոլորը շատ լավ է... բայց պ. դանձապետները որտեղի՞ց պետք է բերեին փողերը և լցնեին երկաթե արկղի մեջ՝ ահա մի հարց, որ մասնաժողովը թողել է անորոշ։

Ճշմարիտ, երբ մտածում ես այդ բոլորի վրա, սկսամայից քեզ թույլ ես տալիս կարծել, թե այդ մարդիկը կամեցել են մի ծիծաղելի կատակ խաղալ հասարակության հետ՝ երկաթե արկղ... երկու բանալի... երկու դանձապետ... տոկոսաբեր թղթեր... բոլորը դուրեկան բաներ են, բայց որտեղի՞ց, ո՞վ ավելց փողերը։

Բայց պետք էր մի բան ցույց տալ, մի բանով շլացնել ժողովրդի

աչքերը, թե որ ոսկու աղբյուրներից պետք էր լցնել երկաթե արկղը։ Որոշվեցավ, առաջին, որ ս. Աստվածածնա ուխտատեղիի* եկամուտները սեփականվի դպրոցներին։ Ի՞նչ եկամուտներ ունի այդ ողորմելի մատուռը, կամ մի՞թե կարելի է, առանց հոգ. իշխանությունից թույլտվություն խնդրելու, որևիցե ուխտատեղիի եկամուտները սեփականացնել դպրոցներին։ Մենք երբեք չէինք հակառակի, եթե մասնաժողովի պ. անդամները, փոխանակ մի աղքատ մատուռի վրա ուշադրություն դարձնելու, աշխատեին Թոմա առաքյալի վանքի հարուստ եկամուտները դարձնել դպրոցներին, որը ունի ընդարձակ կալվածքներ, կամ թե Սգուլիսի բոլոր եկեղեցիների եկամուտները սեփականացնեին դպրոցներին։ Դրանց համար պետք էր միայն Վեհ. կաթողիկոսի հաճությունը ստանալ, որը, մեր կարծիքով, նա չէր մերժի իր գերագույն հովանավորության ներքո գտնվող դպրոցներին, որ այժմ կարոտության մեջ են։

Երկաթե արկղը լցնելու համար մասնաժողովի երկրորդ որոշումն այն էր, թե պետք է աշակերտների և աշակերտուհիների վճարները բարձրացնել։ Դա մի միջոց էր աղքատ երեխաների առջև փակել դպրոցների դռները։ Բայց հաշվի մեջ մի մեծ զանազանություն չէր լինելու, այսինքն դրանով դպրոցների եկամուտները չէին բազմանալու, որովհետև աշակերտների և աշակերտուհիների մեծամասնությունը աղքատներից լինելով, նրանց փոքր վճարները ավելի մեծ գումար կկազմեին, քան թե մի քանի հարուստների վճարած լի թոշակները, որոնք առանց դրան էլ տալիս էին։

Երկրորդ միջոցը երկաթե արկղը լցնելու, որ ամենազլխավորն է, այն է, որ մասնաժողովը «բարվոք է համարել» դպրոցների հարկելի բարերարներին և «հիմնադիրներին» տասն տարի ժամանակ տալ, որ այս տասն տարվա միջոցում նրանք մաս առ մաս վճարեն իրանց 12 տարի առաջ սահմանած դպրոցական փողերը։ (Կնշանակե, 22 տարվա մեջ հարուստ ազուլեցիները պետք է լրացնեն իրանց պարտքը. ի՞նչ մեծ բարերարություն)։ Այդ կետի վրա պետք է դարձնենք մեր ուշադրությունը։

Եթե մասնաժողովի պ. անդամների տնօրինությունը անկեղծ լիներ դպրոցների փողերը այս կերպով հավաքելու ձևի մեջ, նախ, ի՞նչ էր ստիպում տասն տարի ժամանակ տալ, այն ևս այնպիսի հարուստներին,

---

* Դա մի ավերակ մատուռ էր, որ հոգու համար ձեռք առեց պ. Մ. Արաբեխանյանցը և ոտքերի կաշին մաշկելով, ամեն օր գնալ-գալով, կոպեկներով փող հավաքելով, կարողացավ փոքրիշատե նորոգել, որ դեռևս շատ նորոգությունների կարոտ է։ Առաջ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրա վրա, բայց երբ այդ պարտքը մի փոքր շենացրուց, ուզում են ձեռքից խլել, որ կրկին ավերակ դառնա։

որոնք միանգամից կարող էին վճարել, որոնք իրանց հարստությունը չեն էլ բանեցնում, այլ բանկերում քնացնում են։ Երկրորդ, ինչո՞վ պարտավորացրին պարտականներին, որ տասն տարվա ընթացքում անպատճառ լրացնեին իրանց պարտքերը։ Դոնե մասնաժողովի պ. անդամները, որոնց ամեն մեկի մոտ գոնվում էին դպրոցների խոշոր դումարները, գոնե իրանք օրինակ տային մյուսներին և իրանց մոտ եղած փողերի համար հաստատ պարտամուրհակներ տային դպրոցների անունով և այսպիսով իրագործեին իրանց վճիռը։ Ինչո՞ւ չարեցին, ինչո՞վ կարելի է պահանջել մյուսներից։ Մի՞թե նրանք չգիտեին, որ բոլոր հին ստորագրությունները այժմ կորցրել են իրանց օրինական նշանակությունը, տասն տարուց ավելի հնացել են, և այժմ դպրոցների փողերը վճարելը կամ չվճարելը կախված է պարտականների խղճմտանքից...

Ասեցինք, ձևի համար էր այդ բոլորը։ Այս տեսակ անհիմն, դատական անօրինություններ Ապուլիսում շատ անգամ եղել են և միշտ մնացել են ապարդյուն, անկատար, իսկ դպրոցների փողերից մի կոպեկ էլ չէ ստացվել։ Այսպես էլ եղավ այս տարի, և մասնաժողովի վճռի թանաքը դեռ չցամաքած, վճիռը ոչնչացավ։ Մասնաժողովի վճռից հետո ժամանակն էր, որ պետք է փողերը հավաքեին, բայց հավաքեցին միայն տոկոսները, ինչպես ամեն տարի, և վարժապետների ռոճիկները վճարեցին, իսկ դրամագլխից մի դրոշ էլ չստացվեցավ, որ մտներ երկաթի արկղի մեջ...

Մենք կարծում ենք, որ այդ երևակայական դրամարկղը միշտ դատակ կմնա։ Ահա ինչու։

Նախ, որպես տեսանք, դպրոցների պարտականներից ոչ ոք (բացի տոկոսից) մի կոպեկ դրամագլխից չի վճարի, ինչպես մինչև այսօր չէ վճարել։ Երկրորդ. դիցուք թե նրանք հոժարվեին, մասնաժողովի անօրինության համեմատ, տասն տարվա ընթացքում մաս առ մաս վճարել իրանց պարտքերը, բայց դուք կարծում եք, թե փողը կմնա՞ր երկաթի արկղի մեջ, չէ՞ր ծախսվի։ Հայտնի բան է, որ կծախսվեր։

Մենք մեր հոդվածի առաջին և երկրորդ դուխներում ցույց տվեցինք, որ երկու դպրոցները՝ օրիորդաց և տղայոց, դոնե պետք է տարեկան տասն հազար ռուբլի զուտ արդյունք ունենան, որ կարելի լիներ նրանց փորձիշատ բարեկարգ դրության մեջ պահել։ Այն ևս ցույց տվեցինք, որ տասն հազարի փոխարեն երկու դպրոցներն ունեն միայն 4 000 ռուբլի տարեկան արդյունք. այդ հաշվից շատ հասկանալի է, որ ոչ թե տասն տարվա ընթացքում, այլ եթե միանգամից ևս վճարվեին դպրոց-

նների բոլոր սահմանափակումները սոցիալիստական (20 000 ռուբլի), դա կլիներ երկու կամ երեք տարվա պաշար միայն, եթե ազատվեինք չաշխատանքին ուրիշ արդյունքների աղբյուրներ ևս սահմանել։

Իրոք ապացույց, հարկավոր ենք համարում բերել մի պարզ հաշիվ, օրինակ, գալոշ ուսումնական տարվա համար հոգաբարձությունը վճռել է հրավիրել տեսուչ և վարժուհի. երկուսի համար նշանակվել է ռոճիկ 1 800 ռուբլի, որը շատ փոքր է. դիցուք թե 800 ռուբլի մի վարժուհու տալով, և 1 200 ռուբլի տեսչին տալով, կարողացան վարձել։ Եվ ահա 2 000 ռուբլի ծախսվում է միայն տեսչի և վարժուհու վրա։ Իսկ դպրոցներն ունեն միայն 4 000 ռուբլի արդյունք. կնշանակի, արդյունքի կեսը ծախսվեցավ, և մնացած կեսով (այսինքն՝ 2 000 ռուբլով) պետք է հոգալ դպրոցների մյուս պետքերը՝ ուրիշ վարժապետներ վարձել, վերակացուներ վարձել և այլն։ Կարելի՞ է։ Շատ սարսափելի է, որ հոգաբարձությունը կամ պետք է պարապ անի, կամ պետք է դրամագլխից ծախսե, եթե հավաքելու լինեին դպրոցների սահմանափակները։ Հարցնում ենք, էլ ի՞նչ գումարով պետք է գնվեին տոկոսաբեր թղթերը, էլ ինչո՞վ պետք է լեցնվեր երկաթե արկղը...

Մենք լավ հիշում ենք, որ մարտի 24-ի ընդհանուր ժողովի մեջ բարձրացավ և այն ամենակարևոր հարցը, թե մասնաժողովը պետք է կազմե դպրոցների ծախսերի տարեկան բյուջետը այն չափով, որ հարմար լիներ դպրոցների վիճակը բարձրացնելու, և պետք է այն ծախսերի համեմատ եկամուտներ սահմանե, որպեսզի դպրոցների ներքին հավասարակշռությունը պահպանվի։ Այդ հարցը նույնպես մտավ այն խընդիրների շարքում, որ պետք է մշակեր մասնաժողովը։ Իսկ այդ հարցը, որ ամենագլխավորն էր, բոլորովին բարձիթողի է արված մասնաժողովի գործերի մեջ։

Այդ բոլորից երևում է, որ մասնաժողովի անդամներին չէր հետաքրքրում (լավ կե՛ս է ասել, ձեռնտու չէր) շոշափել դպրոցների նյութական դրությունը ապահովելու խնդիրները։ Որովհետև նրանց յուրաքանչյուրի գրպանին շատ հաճելի չէր կարող լինել փող դուրս տալ... որովհետև իրանք դպրոցների պարապականներից գլխավորներն էին... բացի դրանցից, մեր հոդվածի սկզբում ցույց ավեցինք մասնաժողովի պ. Նախագահի դիտողությունները այդ մասին... որ ուրիշ բան չէ կարելի համարել, եթե ոչ «մի խորովածի համար մի կենդանի եղն սպանել»...

Վերջապես մի բան պետք էր ցույց տալ ժողովրդին, մի բանով պետք էր շլացնել նրան, և կազմվեցավ մայիս 15-ի ընդհանուր ժողովը, ուր մասնաժողովի անդամները պետք է կարդային իրենց երեքի զոր-

ծունհութ յան հաշիվը։ Մենք էլ պատրաստել էինք մի գրվածք, որի մեջ հայտնում էինք մեր նկատողությունները դպրոցների ֆշվառ գրութ յան և նրանց բարվոքելու միջոցների մասին և մի քանի բարեկամների խընդրանոք ներկայացանք ժողովի մեջ կարդալու համար։ Բի որպիսի ընդունելութ յուն գտանք մենք, և ինչ խայտառակութ յամբ վերջացավ հիշյալ ընդհանուր ժողովը, այդ բոլորի մասին տպվեցան բավական մանրամասն ֆղթակցութ յուններ «Մշակի» մեջ[1], և մենք ցանկութ յուն չունենք կրկնել ղզվելի անցքերի պատմութ յունը... Միայն այսքանը կասենք,-որ ուրիշ կերպ լինել չէր կարող... և որովհետև պ. Մ. Տեր-Մկրտչյանը չէր ցանկանա, որ մենք մերկացնեինք նրա և իր ընկերների արարմունքը...

Ընթերցողը տեսավ, որ բուն խնդիրը, որից ծագեցավ Ադուլիսի երկպառակութ յունները, էր դպրոցների նյութական դրութ յունը ապահովելու և նրանց բարեկարգելու խնդիրը։ Այդ բոլորի մեջ մենք խոսն ենք եղել ոչ Բի իրրև կուսակցական մարդ, այլ որպես խորհրդատու։ Մենք ավելի մոտ ենք եղել մեր հակառակ կուսակցութ յան պարագլուխ պ. Մ. Տեր-Մկրտչյանին, մինչև այն րոպեն, որ նրա հետ անբավականութ յուն ունեցանք։ Այդ կվկայե և ինքը։ Իսկ ինչ վերաբերում է մեր անկեղծութ յանը, մենք չենք կարծում, որ մի ադուլեցի, որ փորրիշատե խղճմտանք ուներ, կարտահար, որ մենք սրտով և հոգով նվիրված չենք եղել նրանց դպրոցների օգտին և ուրիշ շահ աչքի առջև չենք ունեցել։

Մի երկու խոսք էլ դպրոցների մեջ պատահած մանր խռովութ յունների մասին։ Դպրոցների հոգաբարձութ յանը (հնի համար ենք ասում, նոր հոգաբարձութ յան հետ մենք հարաբերութ յուն չենք ունեցել) և մեր պաշտոնակից եղբայրներին, Բի տեղացիներին և Բի պանդուխտներին ենք Բողնում վկայել, որ մենք ընկերութ յան մեջ, այսինքն՝ վարժապետական խումբի մեջ, միշտ աշխատել ենք պահպանել ներդաշնակութ յուն. միշտ մեր ջանքն այն է եղել, որ բոլորը գործին իրանց հանձն առած պարտականութ յունների համեմատ։ Եվ Եթե մեկին վշտացրել ենք, այդ մեր մեղքը չէ. խռովութ յունը պաշտոնի մեջ պետք չէ, որ վիրավորի պղնիվ մարդուն։ Այստեղ ենթադրենք, կասենք, որ մենք մի տեղին անբավականութ յուն չենք ունեցել ոչ մի ընկերի հետ, բացի մեկից, որի անարդար լինելը բոլորին հայտնի էր...

Վերջացնում ենք մեր հոդվածը, դարձնում ենք դրա վրա ադուլեցոց բարի ուշադրութ յունը, միևնույն ժամանակ խոստանում ենք ավելի մանրամասն կերպով հայտնել մեր կարծիքը, Բի ինչ միջոցներով պետք

էր և կարելի էր բարեկարգել Ագուլիսի դպրոցները, որոնց համար մի բախտավոր վիճակ ցանկալը միշտ եղել է մեր բաղձանքը։

Այլև խորհուրդ կտայինք մի քանի պարոնների հետու պահել իրանց դարտակ բանակռիվներից լրագրության մեջ և զբաղվել իրանց գործերով։ Ինչ եղավ, եղավ... կրկին քրքրել մարած մոխիրը, այդ կնշանակի նորից բորբոքել երկպառակությունները, որից խեր դուրս տանել հազիվ թե կարելի է։ Հասկանո՞ւմ ևք։

ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԻՐ ՀԵՌԱՎՈՐ ՎԻՃԱԿՆԵՐԸ ՕՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Մի կողմ դնելով այն հարցը, թե արդյոք պի՞տք է, որ էջմիածնի իրավասությունը տարածվի համայն հայ ազգության հոգևոր իշխանությունների վրա, ուր և որ պետության մեջ լինեին նրանք, այլև, չքրքրելով այն շատ անգամ հարուցված և կրկին դժբախտաբար արծարծվող խնդիրը, թե արդյոք պի՞տք է էջմիածնի Վեհ. հայրապետին ընդունել որպես միմիայն գահակալ ս. Լուսավորչի աթոռի և որպես բարձրագույն ներկայացուցիչ եկեղեցու, իսկ բոլոր մյուս կամովսիկոսություններր համարել հակաթոռ և «հետանալ», հիշյալ խնդիրները որքան կարևոր, որքան և ծանր նշանակություն ունենային, այսուամենայնիվ, նրանց մասին լռելը այժմ ավելի խոհեմություն ենք համարում, քան թե հրապարակավ քննության ենթարկելը։

Մենք պետք է խոսենք մի քանի վրա միայն, թե ինչպես է կառավարում այժմյան էջմիածինը իր հետևյալ վիճակները, որոնք գտանվում են օտար պետություններին մեջ և որոնք անմիջական կախումն ունեն նրանից։ Դրանով կբացատրվի այն միտքը, թե որքան կորցրել է էջմիածինը իր բարձր նշանակությունը և որ աստիճան անընդունակ է դարձել Ռուսաստանի սահմաններից դուրս պահպանել իր հեղինակությունը։

Մեր խոսքը Պարսկաստանի և Հնդկաստանի հայերի մասին է։

Մեր հոդվածին առիթ տվեցին մի քանի նամակներ և պաշտոնական թղթեր, որ այս օրերում տտացվեցան «Մշակի» խմբագրատան մեջ Պարսկաստանի Սպահան քաղաքից և Հնդկաստանի Կալկաթա քաղաքից, և գլխավորապես հիշյալ թղթերի վրա հիմնելով մեր հոդվածի բովանդակությունը, հարկավոր ենք համարում նրանց հանել մի քանի ցավալի իրողություններ։

Ռուսաստանի սահմաններից դուրս միայն Պարսկաստանի և Հընդկաստանի հայերն են մնացել, որ կարված չեն էջմիածնից, որ ենթարկվում են սուրբ Աթոռի հոգևոր իշխանությանը։ Հիշյալ երկու պետությունների հայերը, միասին վեր առած, երկու մեծ թեմեր կամ վիճակներ են կազմում, որ կառավարվում են երկու առանձին առաջնորդներով, որոնք ուղարկվում են էջմիածնից։ Առաջինը Ատրպատականի վիճակն է, երկրորդը՝ Սպահանի և Հնդկաստանի* վիճակը միասին։ Ետևենք յուրաքանչյուրի մասին առանձին։

Ատրպատականի վիճակը Անդրկաս արքեպիսկոպոսի էջմիածին կանչվելուց հետո, որ երկու տարի կլինի, բոլորովին զուրկ է մնացել առաջնորդից, և ժողովրդի հոգևոր հովվությունը թողած է անտեր։ Կարծես, էջմիածինը մոռացել է, թե այնտեղ հայեր կան, որոնց պետքերը այն աստիճան սուրպողական են, որ հարկավոր էր նրանց վրա ավելի ու ավելի մտածել, հարկավոր էր ավելի հոգ տանել նրանց պահանջները դարմանելու։ Առաջնորդի կարևորությունը և հատկապես նրա բացակայության վնասները շոշափելի կացուցանելու համար պետք է ի նկատի ունենալ այն պայմանները, թե ինչ նշանակություն ունի նա մահմեդական աշխարհում։ Այստեղ առաջնորդը չէ համարվում իր հոտի լոկ հոգևոր ներկայացուցիչը, որ եկեղեցական գործերի նեղ շրջանից դուրս նրա իրավունքները սահմանափակված լինեին։ Առաջնորդը մահմեդական Պարսկաստանում միևնույն ժամանակ ընդունվում է կառավարությունից որպես մարմնավոր գլուխ իր թեմի, որ իրավունք ուներ միջամտություն գործելու հայ ժողովրդի և տեղային իշխանության հարաբերությունների մեջ։ Նա է պաշտպանում հարստահարված հային գատավորների, խաների, բեկերի, կալվածատերերի և մասնավոր անձերի բռնությունից։ Եվ եթե առաջնորդ չկար, ժողովուրդը, բոլորովին անտեր մնալով, կրում է սարսափելի տառապանքներ։ Բայի դրանից, այժմ Պարսկաստանում ամեն տեղ սաստիկ տարածվել են բողոքական և կաթոլիկ միսիոնարները, որոնց գործունեությանը հայերի մեջ կարող էր արգելք դնել միմիայն առաջնորդը, դպրոցների թիվը բազմացնելով, եղածները բարեկարգելով և ամեն տեղ օրինավոր քահանաներ նշանակելով։ Առաջնորդն է խաղաղացնում ժողովրդի մեջ ծագած երկպառակությունները, որոնք շատ անգամ կորստաբեր հետևանքների են հասնում, նա է վճռում մասնավոր անձերի մեջ եղած վեճերը։ Այս բոլորից հաս-

* Սպահանի վիճակի հետ միացրած են բացի Հնդկաստանից, նաև պարսից Քեհրան, Համադան, Շիրազ, Բուշիր քաղաքները իրանց գյուղերով։

կանալի է, թե ինչ անկարգություններ կարող էին ծագել, երբ Ատրպատականի նման մի մեծ վիճակը, որ ունի իր մեջ տասնի չափ հայաբնակ գավառներ, էջմիածնի անհոգությունից ամբողջ երկու տարի թողած է առանց առաջնորդի։ Մենք ավելորդ ենք համարում մի ըստ միջն ցույց տալ բոլոր անկարգությունները, որոնք ծագեցան այս երկու տարվա ընթացքում և որոնք մեզ լավ հայտնի են, թե որպես Թավրիզի ազգային դպրոցը միանգամայն ընկավ և համարյա իր օրհասականին հասավ, թե որպես գավառներում հայ աղջիկներ առևանգելը և բռնությամբ մահմեդական կրոնը ընդունել տալը սովորական դարձավ, թե որպես այս և այն տեղ հայ գյուղացին կեղեքվեցավ, կողոպտվեցավ հափշտակիչ ոգանիներից, թե որպես օտարազգի որսորդները սկսեցին ամեն տեղ բույն դնել հայերի մեջ և նրանց հեռացնել իրանց մայրենի եկեղեցուց և այլն, և այլն, այս բոլորը շատ հասկանալի, միևնույն ժամանակ ցավալի երևույթներ են։ Բայց մենք չենք հասկանում մի բան, թե ի՞նչն էր ստիպում, որ էջմիածինը ամբողջ երկու տարի Ատրպատականի վիճակը թողել է առանց առաջնորդի, ի՞նչ է նրա համառ անտարբերության պատճառը։ Մի՞թե մի ժողովուրդ, որ վճարում է զանազան տեսակ հոգևոր տուրքեր՝ պտղի, պսակադրամ, մեռելի և կենդանու հոգեբաժին, չունի իրավունք պահանջելու, թե՝ ինձանից փող եք ստանում, ինձ առաջնորդ տվեցեք, քանի որ չեք տալիս, էլ ինչո՞ւ եք ստանում իմ փողը... Մենք այդ համարում ենք մի տեսակ արհամարհանք դեպի ժողովուրդը, մի տեսակ հարստահարություն, որ ընդունակ է կատարելու միմիայն կղերը։

Այսքանը բավական համարելով Ատրպատականի մասին, այժմ դառնանք դեպի Սպահանի և Հնդկաստանի հայերը, որոնք երկուսը միասին մի առաջնորդական վիճակ են կազմում։

Սպահանի նահանգի և Հնդկաստանի հայերը ունեն առաջնորդ, էջմիածնից ուղարկված Գրիգորիս եպիսկոպոսին։ Բայց, որպես երևում է Սպահանից և Կալկաթայից ստացած թղթակցություններից, գուցե թեմի դրությունը ավելի լավ կլիներ, եթե նրանք ևս Ատրպատականի պես բոլորովին զուրկ մնացած լինեին առաջնորդից և Գրիգորիսի նման հովիվ չունենային։

Սպահանի և Հնդկաստանի վիճակի առաջնորդական աթոռը միշտ եղել է և է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում։ Տեղային ավանդական օրենքների համեմատ, եթե առաջնորդին պետք լիներ Սպահանից նվիրակությամբ գնալ Հնդկաստան, նա կարող էր իր աթոռից բացակա գտնվել երեք ամիս, առավելն՝ վեց ամիս միայն։ Բայց Գրիգորիսը թող-

նելով Սպահանի ամբողջ թեմը, որի հետ կից են Ինհրանը, Համադանը, Շիրազը, Բուշիրը իրանց գյուղօրայքով, ընդունելով առանց հավելի, մոտավորապես չորս տարի կլինի, որ գտանվում է Հնդկաստանում և այնտեղ թափառում է երբեմն Բաթավիայում[1], երբեմն Բիրմանիայում, երբեմն Ջավայում և երբեմն Կալկաթայում։ Մենք շատ օգտավետ և միանգամայն զովելի կհամարենք Դրիգորիսի այցելությունները հետևյալ արևելքում ցրված և համարյա կորած մեր ազգայինների մեջ, եթե նրա նվիրակությունը չլիներ շահեկան նպատակներով. եթե նա կաշխատեր զարման տանել նրանց հոգևոր պետքերին և ուշադրություն կդարձներ այն հիմնարկությունների վրա, որոնք անհրաժեշտ էին նրանց կապված պահելու իրանց եկեղեցու և ազգի հետ։ Բայց ինչպես երևում է մեր ձեռքը հասած թղթակցություններից, Դրիգորիսի նվիրակությունը հնդկաստան երկու թերակղզիներում ցրված հայերի մեջ ունի միայն դրամ հրնձելու նպատակներ։ Նա քրքրում է միայն հին կտակները, եկեղեցական գումարները, անտեր մնացած ժառանգությունները, աշխատելով նրանց միջից իր և էջմիածնի վերահասի համար բաժին հանել։ Առաջնորդի այս տեսակ վարմունքը, իհարկե, մի կողմից կգրգռեր ժողովրդի զզվանքը, որ սպասում էր նրանից բարի գործեր միայն, մյուս կողմից պատճառ կտար զանազան երկպառակություններին։ Դրանցից մեկն է կալկաթայում պատահած այն մեծ խռովությունը, որ ծագեց ժողովրդի և նրանից ընտրված «եկեղեցպանի» և «ավանդապահի»* միջև։ Խռովությունը այն աստիճան սաստկացավ, որ եկեղեցու դռները փակվեցան, ժամասացությունը դադարեց, և գործը հնթարկվեցավ անպլիսկան բարձր տայանի քննության, և եկեղեցին հազար ոսկի տուգանք կրեց։ Այդ բոլորը կատարվեցավ Դրիգորիսի աչքի առջև և մասամբ նրա ներգործությամբ։

Իհարկե, այդ բոլորը չէին կարող դայթակղության պատճառ չտալ Հնդկաստանի հայ ժողովրդին, որը առանց դրան ևս զզված է հոգևորականից, խորթացած իր եկեղեցուց և օտարացած է իր ազգությունից... Եվ Դրիգորիսը բոլորովին անտանելի դառնալով, Կալկաթայի հայ հասարա-

---

* «եկեղեցպան» և «ավանդապահ» բառերի նշանակությունը մեզ շատ հայտնի չէ, թե նրանք ինչ պաշտոն են կատարում աղդային գործերի մեջ, բայց որքան հասկացվում է Կալկաթայից ստացված մի նամակի բովանդակությունից, «եկեղեցպան» միևնույն նշանակությունն ունի, ինչ որ մեզ մոտ հասկացվում է բառերով եկեղեցու երեսփոխ կամ գանձապետ։ Իսկ «ավանդապահը» մի տեսակ գանձապետ պետք է լինի, որ կարգված է եկեղեցական այն գումարների վրա, որոնք Հնդկաստանի հայերի հարուստ ժամանակներում հավաքվել և մինչև այսօր պահպանվել են ազգատներին կամ օտար երկրներից Հնդկաստան դաղթողներին օգնելու նպատակով։

կության դեմքով, ժողովուրդը 53 անձերի ստորագրությամբ մի բողոք է ներկայացնում իրան՝ Գրիգորիսին*, որ նա այլևս պետք չէ իրանց, որ Բողնի Հնդկաստանը և շուտով հեռանա, եթե ոչ՝ ուրիշ կերպով կվարվեն նրա հետ։ Բայց Գրիգորիսը առաջվին իր տեղից չէ շարժվել և Թիֆլիսանցոց լավ ծանոթ Պետրոս Հաքիմյանի արբանյակությամբ դարձյալ շարունակում է իր գործունեությունը...**

Հայտնի բան է, այս բոլորը ծածուկ չէին կարող մնալ էջմիածնից, ուր մի քանի անգամ դիմել է միևնույն ժողովուրդը իր բողոքներով, բայց էջմիածինը ինչո՞ւ հետ չկանչեց Հնդկաստանից իր ներկայացուցչին։ Շատ հասկանալի է, թե ինչու, հեռավոր արևելքի հայ ժողովրդի ձայնը էջմիածնի համար ոչինչ նշանակություն չունի, երբ նա Գրիգորիսից ուրիշ օգուտներ է ապասում...

Մինչ Հնդկաստանում վերոհիշյալ անկարգությունները խռովեցնում էին ժողովրդին, մինչ Գրիգորիսն այնտեղ իր առանձին գործովն էր զբաղված, այն ժամանակ այդ եպիսկոպոսի առաջնորդությանը հանձնված և չորս տարի անտեր թողած վիճակի մյուս մասում, Սպահանում, ավելի վատ անկարգություններ էին կատարվում։ Սպահանի հայերը, տեսնելով մի կողմից Գրիգորիսի անպիտանությունը և նրա բոլորովին անպոհացուցիչ լինելը իրանց պետքերի համար, մյուս կողմից, մտածելով, որ նա եթե որևիցե օգուտ ևս ցանկանար բերել, դարձյալ անկարող էր, որովհետև անունով միայն Սպահանի առաջնորդ էր, այլ ինքը էջմիածնի հրահանգների համեմատ գնդերվում էր Հնդկաստանում և տարիներով Սպահանը թողել էր անտեր, 1876 ամի 27 մայիսի դիմում են էջմիածին, Վեհ. կաթողիկոսից խնդրելով, որ Գրիգորիսին հետ կանչի և իրանց համար մի նոր առաջնորդ ուղարկի***։ Ժողովրդի խնդիրքը մնում

---

* Բողոքագրի պատճենը Կալկաթայից ուղարկված էր «Մշակի» խմբագրատանը, որի մեջ մի առ մի բվել են Գրիգորիսի անկարգությունները։

** Ջարմանում ենք, թե ինչ աղբյուրներից էր քաղում «Արարատ» ամսագիրը այն տեղեկությունները, որ մի քանի տարի առաջ անդադար հրատարակում էր Գրիգորիսի սխրագործություններ։

*** Գրիգորիսը հենց սկզբից չհարողացավ գրավել սպահանցոց համակրությունը և առնչի դարձավ, որովհետև, որպես տեղեկանում ենք մի մատնավոր նամակից, նա նշանակվել է Սպահանի և Հնդկաստանի առաջնորդ Պարսկաստանի մեծ սոլից անմիջապես հետո, և Սպահան գնալու ժամանակ, Թեհրանից անցնելով, այնտեղ հանձնում են Գրիգորիսին, որպես առաջնորդի, մի գումար, որ հավաքված էր Սպահանի սովալլուկներին բաժանելու համար։ Գրիգորիսը բերում է փողերը և, փոխանակ իր նպատակին հասցնելու, պահում է իր գրպանում... սովատանջ ժողովուրդը մի քանի տարուց հետո է հոսկանում այդ։

է անկատար, և մինչև անգամ պատասխանի ևս չեն արժանացնում, թեև հասարակությունը իր խնդիրքը երեք անգամ կրկնում է հեռագրով։ Բոլոր ջանքերից հետո ներկա տարվա փետրվար ամսի 4-ին Սպահանում կազմվում է ընդհանուր ժողով, 117 անձերից բաղկացած և Գրիգորիսի փոխարեն ընտրում են ս. Ամենափրկչի վանքի (Նոր Ջուղայում) աթոռակալ պ. Մովսես Նահապետ անունով մեկին (երևի աշխարհական) և դրանով չբավականանալով, ժողովը վճռում է դիմել Թեհրան և մի օտարազգի դեսպանի միջամտությունը խնդրել, որ նա ներդործի էջմիածնի վրա Գրիգորիսին փոխելու և մի նոր առաջնորդ ուղարկելու համար*։

Մենք բոլորովին դատապարտում ենք Սպահանի հասարակության վարմունքը, որ իրան թույլ է տվել օտարազգի դեսպանի միջամտությունը հրավիրել հայոց հոգևոր կառավարության գործերի մեջ, բայց միևնույն ժամանակ չենք կարող արդարացնել էջմիածնի համառությունը, որ նա մի ամբողջ հասարակության խնդիրքը թողնում է անկատար և առանց պատասխանի և նրան առիթ է տալիս ծայրահեղ միջոցների դիմել։

Հարցնում ենք, ինչո՞վ կարելի է բացատրել էջմիածնի քաղաքականությունը, որ նա երկու հեռավոր վիճակների՝ Սպահանի և Հնդկաստանի ժողովրդի կամքին հակառակ պահպանում է Գրիգորիսի նման մի անձ։ Երկուսից մեկը, կամ էջմիածինը կամենում է հասկացնել ժողովրդին, թե նա ձայն չունի առաջնորդի ընտրության և փոփոխության մասին, կամ, որպես գրում են, Գրիգորիսը մի ագենտ է, որ առաջնորդի անունով ուղարկվել էր Հնդկաստան առանձին մթին գործերի համար... Թե առաջին և թե երկրորդ ենթադրությունները երկուսն էլ անօգուտ և միանգամայն վնասակար են։ Որովհետև էջմիածինը այնքան ուժ չունի, որ Ռուսաստանի սահմաններից դուրս, հեռավոր արևելքում ցրված մի հայ ժողովրդի բռնությամբ հնազանդության մեջ պահի, այսօր դիմեցին օտարազգի դեսպանին, էգուց կդիմեն օտարազգի միսիոնարին, իսկ մյուս օրը՝ անգլիական կառավարությանը... Ի՞նչ կլինի հետևանքը, այդ ամեն ոք կարող է հասկանալ։ Մենք, իհարկե, ուրախ կլինեինք, որ մեզ հասած տեղեկությունները մասամբ սխալ լինեին, բայց միևնույն ժամանակ չենք կարող չհայտնել մեր ցավակցությունը, որ էջմիածինը այս աստիճան անհոգությամբ և արհամարհանքով է վերաբերվում դեպի գործը։ Վերջացնում ենք մեր հոդվածը, խնդրելով Պարսկաստանի և Կալկաթայի մեր թղթակիցներից՝ հաղորդել ավելի մանրամասն տեղեկություններ, և մի-

* Ժողովի վճռի պատճենը ուղարկված է «Մշակի» խմբագրատուն։

նույն ժամանակ հրավիրում ենք Վեհ. կաթողիկոսի հայրախնամ ուշադրությունը, վերջ տալ խռովություններին և հոգալ հետու արևելքում ցրված, մոլորված իր կորուսյալ ոչխարների վրա...

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Մտադրված լինելով նկարել մի փոքր ի շատե ամբողջ պատկեր մեր ժողովրդի կյանքից, ես հարկավոր եմ համարում «Հայ կինը» հոդվածից հետո հետազոտել հայ երիտասարդությունը: Եթե ընդունում ենք, թե երիտասարդությունը է այն թարմ ուժը, այն մանուկ և աճող զորությունը, որից կախված է ժողովրդի առաջադիմությունը և հատկապես նրա ապագան, պետք է լավ ուսումնասիրենք այդ տարրը: Իմ հետազոտության մեջ ես հետևելու եմ միևնույն եղանակին, որպես էր «Հայ կինը», այսինքն՝ անցնելով մանուկ[ա]վորից դեպի ընդհանուրը և գյուղական ազգաբնակությունից բարձրանալով դեպի քաղաքացիները, ես կաշխատեմ ներկայացնել մեր երիտասարդությունը ժողովրդի ամեն մի դասակարգի մեջ առանձնապես: Ես պիտի վեր առնեմ Ռուսաստանի և գլխավորապես Կովկասի հայ երիտասարդությունը:

Ա.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Սկսում եմ ծնունդից:

Գյուղացի ծնողները միշտ ուրախությամբ են հանդիպում տղա մանուկի աշխարհ գալուն. ծնվում է նոր ուժ, ընտանիքի մեջ ավելանում են նոր աշխատող ձեռքեր: Եթե հայրը տանը չէր, եթե նա գործում էր դաշտում, բարեկամները վազում են նրա մոտ, «ավետիք» են տանում, և ականջներից բռնելով, «մուշտուլուղ» են պահանջում: Տերտերն իր մաշ-*

---

* *Իսկապես մյուժդալուղ է, որ նշանակում է այն ընծան, որ տալիս են ավետիք կամ բարի խաբար բերողներին:*

տոցով իսկույն դիմում է մոր մոտ, օրհնում է նրան և նորածնին և «փաթաթում է» տունը։ Պառավ կնիկները դնում են մոր անկողնի մոտ մի սուր կամ պողվատի կտորներ, որ շար ոգիները չվնասեին նրան։ Կրոնը և սնահավատությունը միացած, գործ են դնում իրանց բոլոր զորությունը, որ պահպանվի նոր սկսվող կյանքը։

Երբ մայրը երկար ժամանակ ուղա չէ բերում, դա համարվում է աստուծո մի առանձին պատիժը. ծնողները դիմում են սրբերի բարեխոսությանը, իսկ երբ այդ էլ չէ օգնում, դիմում են կախարդներին։ Գյուղերում շատ անգամ կարելի է տեսնել տղաներ չկտրված երկար մազերով, որ աղջիկների նման հյուսած գիսակներ ունեին. դրանք ուխտյալ, կամ այս և այն տաճարին նվիրված մանուկներ են, որովհետև աշխարհ էին եկել սրբերի շնորհիվ։ Ամեն մի սրբից շնորհված մանուկը համարվում է նրա «զուլը» (ճորտ) և կրում է նույն սրբի անունը։ Բայց պետք էր ճորտին թափել իր ճորտությունից, և այս մտքով նվիրված մանուկին մինչև յոթ տարի ուխտ են տանում բարեբար սրբի տաճարը նրա տոնախմբության օրում, և ամեն անգամ տղայի փոխարեն զոհում են մի ոչխար։ Երբ տարիների խորհրդավոր թիվը լրանում է, մանուկի մազերը կտրում են։ Տղաների տաճարներին ընծայումը հայտնի է մեր պատմության մեջ նրա միֆական ժամանակներից, երբ Անուշավանը նվիրվեցավ Արմավիրի սոսիներին[1]։

Երբ նորածինը տակառ էր երևում, նրան եկեղեցի չեն տանում մկրտելու համար, այլ այդ խորհուրդը կատարում են տանը օջախի (թոնրի) մոտ, համոր հունցելու տաշտի մեջ, և մկրտության ջրով սրսկում են ամբողջ տունը։ Նրա վզից քաշ են տալիս մի փոքրիկ խաչ, իսկ գդակի վրա շատ անգամ կարելի է տեսնել կարած արծաթյա մանիկ (կիսալուսին), որ ազատ էր պահում նրա անձը շար աչքից և շար ոգիներից։ Հուլունքներով զարդարած բազրանդները (բազկակապ), որ կապում են տղայի թևքերի վրա, նույնպես կախարդական նշանակություն ունեն։ Գնաները տղա մանուկների համար միևնույն զարդն են համարվում, որպես աղջիկների համար։ Բայց գնաեր արևելքում կրում են կնիկները և սարուկները միայն, երկու արարածներ, որոնց վիճակը շատ չէ տարբերվում միմյանցից... Երեխան փոքր հասակից սկսում է տեսնել նյութական և շոշափելի առարկաների մեջ աներևույթ զորության ներկայությունը, մինչև արծաթյա մահիկից նա հասնում է Ամենաբարձրյալի գաղափարին։ Նրա կյանքի մեջ կատարվում է այն, ինչ որ կատարվում է ամբողջ մարդկության կյանքի մեջ՝ տղայության պերիոդի նյութապաշտությունից անցնել զարգացած պերիոդի ոգեպաշտությանը։

Երբ մանուկը դառնում է 3—4 տարեկան, երբ սկսում է խոսել, մտածել, վազվզել և փոքրիկ չարություններ գործել, այն ժամանակից սկսվում է նրա ընտանեկան դաստիարակությունը։ Երկու գլխավոր ուժեր ներգործում են մանուկին չափի և պատշաճի մեջ պահելու համար, մեկը՝ ֆիզիքական կոպիտ ուժը՝ ծնծը, իսկ մյուսը՝ բարոյական ուժը, որ արտահայտվում է երկյուղի և խոստման մեջ։ Պատիժ և խոստում, ահա երկու գործիչներ, որ իշխում են մարդու բարոյականության վրա, սկսյալ երեխայությունից մինչև նրա մահը։ Ծեծել, պատժել երեխային, որ չարություն չգործե, կամ խոստանալ նրան զանազան հրապուրիչ բաներ, որ իրան կարդին պահե, դրանք գլխավոր միջոցներ են հոգատար ծնողների կողմից երեխային խրատելու համար։ Բայց միևնույն միջոցները գործ են դրվում և ոգիների անուններով։ Երկյուղ տալ երեխային դևի, չար սատանայի, ալքերի, խլվլիկի, մարդագայլի, դերվիշի և այլ սարսափելի անուններով, և միևնույն ժամանակ հրապուրել նրան սատուծո, հրեշտակների և սրբերի խոստումներով, այդ բոլորն ավելի նուրբ միջոցներ են երեխային կրթելու համար։ Այս ապավորությունները մնում են մանուկի մեջ մինչև նա իր հասակը առնում է, ծերանում է, և նրա հետ գերեզման են մտնում։ Երեխան սովորում է վատ բան չգործել, ոչ թե նրա համար, որ վատը վատ է, այլ նրա համար, որ ծնողները կպատժեն նրան՝ կամ ծեծելով և կամ զրկելով մի լավ բանից։ Նրա ամբողջ կյանքում այդ մտքերն իշխում են նրա վրա։ Նա սովորում է չար բան չգործել, ոչ թե նրա համար, որ իբրև մարդ և իբրև մարդկային ընկերության անդամ պարտավոր էր բարի լինել, այլ վախենում է իշխանությունից՝ երկնքի և աշխարհի իշխանությունից, վախենում է այն տանջանքներից, որ սպառնում են այդ երկու իշխանությունները, և վախենում է զրկվել այն խոստումներից, որ արել էին նրան։

Դաստիարակության այդ բթացնող սպանիչ եղանակն այն հետևանքն է ունենում, որ ոչ միայն խլում է մանուկից նրա ինքնուրույն, ազատ զարգացումը, և ոչ միայն բարոյապես մեղացնում է նրան, այլ նա իր ամբողջ կյանքում մնում է երկչոտ, թուլասիրտ, խոնարհվող և գլուխը ծռող ամեն մի զորության առջև։ Նա դառնում է բարոյական մեքենա, որ բարի է նրա համար միայն, որ վախենում է պատժվել չար լինելուց։ Իսկ երբ այդ վախը, այդ երկյուղն անհետանում են նրա սրտից, էլ ոչինչ չէ մնում նրան օրինավորության մեջ պահելու համար, և նա դառնում է ամենասարսափելի անբարոյական։

Ինչ որ ավելի ցավալին է, դա է գյուղական մանուկների սատիկ մահացությունը։ Թևև այդ մասին չունենք վիճակագրական տեղեկու-

թյուններ, բայց կարելի է ասել, որ նրանց մեծ մասը մնանում են մոտավորապես դեռ հինգ տարեկանին չհասած, այնուհետև, որպես ինքը գյուղացին ասում է՝ «երեխան շապիկը պատռում է», այսինքն՝ աճում է, մեծանում է և կարող է դիմանալ կյանքի խիստ պայմաններին։ Երեխաների բազմաթիվ մահացության գլխավոր պատճառը պետք է որոնել նրանց վատ պահպանության մեջ։ Մեր գյուղացիներն ավելի հոգ են տանում իրանց փոքրիկ անասուններին, քան թե որդիներին։ Անասունների վիճակն իրանցից կախում չունի, բայց որդիների հոգսը թողնում են աստուծո վրա։ Որպեսզի կարողանամ մի փոքրիկ գաղափար տալ, թե որպիսի շրջանի և պայմանների մեջ է սկսվում մանուկի կյանքը, հարկավոր եմ համարում մի քանի մանրամասնություններ մեջ մտնել։ Երևակայեցեք ձեզ մի խոնավ և գետնափոր խրճիթ, առանց օդի և առանց լույսի, որ ինքնըստինքյան սպանիչ ազդեցություն ունի երեխայի դեռ սակար կազմվածքի վրա, որը տակավին չէր սորված կեցության վնասակար խստություններին։ Մահճակալ կոչված կարասին բոլորովին անծանոթ բան է այս խրճիթներում. մի տախտակի կտոր անգամ չեք տեսնի, որ ձգած լիներ հատակի վրա. երեխան պառկում է սառն, խոնավ և մերկ գետնի վրա, փաթաթված ցնցոտիների մեջ։ Ջորված մարդը կարող էր իսկույն ոմանալ սառնալ։ Ավելացրեք դրանց վրա վատ կերակրելը, սովորություն չէ երեխային սեղան նստեցնել։ Նա ուտում է ոտքի վրա՝ ինչ որ ձեռքն ընկնում է։ Ավելացրեք վատ հագուստը, տարվա բոլոր եղանակներում կարելի է տեսնել նրան միևնույն հագուստով, որ հագիվ ծածկում է մարմինը։ Այդ լինում է ոչ թե աղքատների մեջ միայն, այլ հարուստներն անգամ խիստ փոքր հոգ են տանում որդիներին լավ կերակրելու և եղանակների համեմատ հագցնելու մասին։ Իսկ ինչ վերաբերում է կեղտոտության, այդ արդեն չափն անցնում է։ Դրա մեջ մեղավոր են գլխավորապես մայրերը, որ իրանք էլ, քիչ է պատահում, որ ամեն առավոտ իրանց ձեռները և երեսները լվանային։ Բայց երեխան ամբողջ օրը նրանց աչքի առջև թավալվում է ցեխերի մեջ, «վնաս չունի, թող ջանը պնդանա»,— ասում են և ուշադրություն չեն դարձնում։ Բայց կա և մի գլխավոր պատճառ, որ ավելի մեծ դեր է խաղում գյուղական երեխաների մահացության մեջ։ Միգանում ոչ մի գյուղ չեք գտնի, որ բժիշկ ունենար։ Վիճակային բժիշկներն այցելություն են գործում մի գյուղ այն ժամանակ միայն, երբ պատահել էր մի սպանություն, և պետք էր պաշտոնական քննություն անել։ Նրանք հիվանդների հետ գործ չունեն։ Պատահում է, որ գյուղացու երեխան հիվանդանում է. ծնողները նրա վրա ուշադրություն չեն դարձնում, և անմիջական օգնության չեն

դիմում, քանի որ նա ուրքի վրա էր, բայց երբ ուժերը իրենց պահակից, այն ժամանակ միայն համարում են նրան հիվանդ։ Սովորական միջոցները, որ գործ են դնում բժշկության մեջ, են ֆալլինների և դրբացների կախարդությունները, կամ մի քանի տնային դարմաններ, որ անխտիր ամեն հիվանդության համար բանեցնում են. այժմ հիվանդի բախտին էր կախված, թե որքան գործ դրած հնարները կօգնեին նրան։ Ահա այսպիսի փորձությունների միջից է անցնում դյուղացի մանուկը, բայց երբ մի անգամ ազատվեցավ նա, երբ տարիքը առնց, այնուհետև նրա կազմվածքը կարողանում է պատերազմել սարսափելի խստությունների դեմ։

Ընտանիքի ճնշումն ամենափոքր հասակից պատրաստում է մանուկին լինել ճկուն, ծալվող և համբերող։ Ամոթխածությունը, միամտությունը և մինչև խուլումունջության հասցրած լռությունը համարվում են նրա մեջ պարկեշտության նշաններ։ Նա դառնում է դանդաղկոտ, աշխույժը և առանդը խեղդվում են նրա մեջ, և դեռ չմանկացած, ծերանում է նաև Ջնք տեսնի դյուղացի մանուկի մեջ այն մշտապվարձ կենդանությունն, այն ուրախ, մշտայծիծաղ դեմքը, որ հատուկ է նրա հասակին, նա միշտ տխուր է, և միշտ, կարծես, մի բանի վրա մտածում է։ Դանդաղկոտությունը տիրում է նրա ամբողջ գոյության վրա. նրա քայլերի, նրա ամեն մի շարժվածքի մեջ չէ նկատվում ոչ մի համարձակություն, և նա զուրկ է մնում այն սատանայական ճարպիկ չարաճճիությունից, որ տալիս է մանուկի բնավորությանն ավելի կենդանություն։

Ոչինչ այնպես չեն արդելում երեխային, որպես խաղը, մինչև անգամ ամենահամեստ խաղը։ Խաղամոլ երեխան ոչ սակավ անգամ պատժվում է իր անմեղ զվարճությունների համար։ Բայց մանկական բնավորությունը երբեմն ելք է գտնում խոտորվելու ծնողների խստությունից և իր պարապ ժամերը նվիրելու զանազան խաղերի։ Նա մեջ կբերեմ մի քանի տեսակ խաղերի նկարագիրը, ցույց տալու համար, թե այդ խաղերը նոր հնարված չեն, այլ մնացել են հայերի հոյակապ անցյալից, երբ մեր նախնիքն մի առանձին հոգ էին տանում իրանց զավակներին կրթելու մարմնամարզական վարժություններ մեջ։ Մուշտեկոխվն այն պատմական խաղերից մեկն է, երբ զենքերը տակավին կատարելագործված չէին, և մարդը ստիպված էր իր զորավոր բազուկները կրթելու, որ հարկադրված ժամանակում գործ դներ իր բշնամու դեմ։ Երեխաները, երկու խմբերի բաժանված, հարձակվում են միմյանց դեմ և մուշտիների (բռունցքների) հարվածներով աշխատում են հետ մղել

հակառակորդին, և երբ մի խումբը նահանջում էր մյուսին իր բռնած դիրքից, հաղթությունը տարած էր համարում։

Գռանելախաին նույն պատերազմական բնավորությունն ունի, որպես մուշտակավիվը, այն զանազանությամբ միայն, որ մանուկները մուշտակների փոխարեն գործ են դնում իրանց գոտիներից ոլորած լախտերը։

Աւրթուման (ոստնուլ) և վազը (վազ տալը) այն մարզությունների տեսակներից են, որոնց մեջ մի ժամանակ վարժվում էին և սպարտացոց մանուկները։ Աւրթուման կատարվում է թռչելով մի որոշյալ բարձրության վրայից. մանուկներից մեկը կռացած դիրք է ընդունում, և բոլոր մնացածները նրա վրայից թռչում են. հետո բարձրությունը փոքր առ փոքր ավելանում է, այսինքն՝ կռացած մանուկը հետզհետե ուղիղ դիրք բռնելով, վերջը բոլորովին կանգնած ձև է տալիս իրան. այն ժամանակ թռչում են նրա գլխի վրայից։ Բայց խաղի գլխավոր պայմանը նրա մեջն է, որ թռչելու միջոցին թռչողը չպիտի դիպչի այն առարկային, որի վրայից թռչում է։

Վազը կամ վազ տալն այն ձևով, որ կատարվում է մեր մանուկների մեջ, մի դժվարին վարժություն է թոքերը զարգացնելու և ոտներին արագաշարժություն տալու համար։ Որոշվում է մի ասպարեզ, որի ծայրին դրած էր մի նշան, և մինչև նշանակած կետն ասպարեզի բոլոր տարածությունը, սաստիկ վազելով, պիտի անցնեն մրցողն այն պայմանով, որ ամենևին շունչ չպիտի առնեն. և որպեսզի մյուսներին հայտնի լինի, թե նա շունչ չէ առնում, պետք է վազելու միջոցին անընդհատ կերպով արձակե մի տեսակ ձայն։ Մականախաղը (հոլ) խաղում էին մեր նախաբարեների որդիքն անգամ. երեխաները երկու խումբ բաժանված, յուրաքանչյուրն ունի ձեռքին բռնած մի երկայն փայտ (վարոց), որը կեռ ծայր ունի, և փայտի կեռ ծայրովն ամեն մեկն աշխատում է հափշտակել իր հակառակորդից նույնպես փայտից շինած մի գնդակ, որ ձգած է գետնի վրա, և այնպես, մինը մյուսից խլելով, գնդակը քշում են դեպի հակառակ կողմը, մինչև հասցնում են նշանակված տեղը։ Այս խաղը հին ժամանակներում խաղում էին ձիու վրա նստած և նույնպես մականոցով, որ նշանակում է կեռ ծայր ունեցող փայտ կամ գավազան։ Գնդախաղի տեսակները զանազան են, որոնցից նշանավոր է մագուն*. դա իսկապես բիլիարդի խաղն է, միայն դեռ իր նահապետական ձևի մեջ մնացած։ Մագուկի գնդակները շինված են լինում գունավոր գրանիտից և ձեռքով գլորում են հարթ գետնի վրա, աշխատելով գնդակները մի-

* Մագու նշանակում է գլխատոր, որ փոքրիկ գնդակի նմանություն ունի։

յանց դիպչելով, և ձգել գետնի վրա փորած փոքրիկ փոսերի մեջ։ Տուշը (չիլիկաջոխին) առաջին փորձն է նետաձգություն սովորելու։ Փայտից շինված նետեր և աղեղներ մինչև այսօր գործ են ածում մեր երեխաները։ Պարսամարով (շուլդուր) նրանք խիստ ճարպիկ կերպով դիպչնում են նպատակին։ Ջիրիդը* դեռևս հիշեցնում է հին նիզակախաղը. զարգացած պատանիներն այդ խաղը խաղում են ձիու վրա նստած։ Մնացած խաղերի մեջ նշանավոր են ճանը (վեգ) և դաման (շարուքար). վերջինը շախմատի խաղի նմանություն ունի և խաղում են ավելի զարգացած տղաները։

Խաղերի տեսակներն այնքան զանազան են հայ մանուկների մոտ, որ առանձին ուսումնասիրության արժանի են, բայց ես մի փոքրիկ գաղափար տալու համար բավականանում եմ այդքանով միայն։ Պետք է նկատել, որ ինչպես վերևում հիշեցի, ծնողները սաստիկ արգելում են խաղը, և եթե մանուկները ժամանակ են գտնում խաղալու, դա կատարվում է որպես կոնտրաբանդա։ Գյուղացին այնքան պետք ունի օգնականի, որ ամենափոքր հասակից սովորեցնում է իր մանուկին աշխատության, որ նա գնահատե ժամանակը և հեռու մնա դատարկությունից։ Պետք է օգուտ քաղել փոքրիկ ուժից, և աշխատությունների ծանրությունը համեմատաբար աճում է նրա տարիների հետ։ 5—6 տարեկան հասակում նրան սովորեցնում են կատարել անային թեթև ծառայություններ. 8—10 տարեկան հասակում նրան կարելի է տեսնել կալի մեջ, նստած կամնասայլի վրա, քշում է եղները։ 12 տարեկան հասակում նա արածացնում է հորթերը, գառները կամ նստած լծան վրա, օգնում է իր հորը գութանը վարելիս. իսկ 15 տարեկան հասակում նա իր ձեռքն է առնում բահը և մանգաղը։ Ոչինչ այնքան չէ կարող զարմացնել ժողովըրդի սուր դասի վիճակով հետաքրքրվողներին, որպես գյուղացի մանուկի աշխատասիրությունը։ Նա ամբողջ տարին անգործ չէ մնում, տարվա ամեն մի եղանակում նրա հասակի և ուժի համեմատ գործեր կան։ Տղայությունից անվելով և աճելով խիստ պայմանների մեջ, նա հեռու է մնում փափկությունից և թուլացնող քնքշություններից. անձրևը, կարկուտը, ձյունը, ամառվա տոթը, ձմեռվա ցուրտը միօրինակ այրում են նրան, թրծում են, մխում են և տալիս են նրա կազմվածքին ուժ և երկաթի ամրություն։ Ամեն պայմանները պատրաստում են նրան վշտալի կյանքին դիմանալու համար։

---

* Ջիրիդ կամ ջիդդա նշանակում է նիզակ, տեգ, մրցախ։

Ֆիզիքական կրթության հետ զուգընթաց տարվում է մանուկի և բարոյական կրթություն, որ պայմանավորվում է գլխավորապես խոնարհության, համեստության և միամտության մեջ։ Ամենափոքր հասակից նա գիտե, թե պետք էր ուրուների աջը համբուրել, հասակավոր մարդկերին գլուխ տալ և պատռվ տատին ու ծերունի պապին չբարկացնել։ Նա գիտե, թե տանը հյուր եկած ժամանակ պետք էր սեղանի մոտ սպասավարել, կամ ձեռքերը սրտին դրած և կանգնած սպասել հոր հրամաններին, մինչև հյուրերը ուտեին, խմեին, հետո նրանց ձեռքերի վրա պետք էր ջուր ածել, որ նրանք լվացվեին և այլն։ Ընտանիքի մեջ ամենի առջև խոնարհվում է նա, բացի իր քույրերից։ Ծնողների գործ դրած խրատությունն աղջիկ զավակի և տղա մանուկի մեջ շատ վաղ զգալ է տալիս վերջինին իր դերապանցությունը. նա սկսում է բռնանալ քրոջ վրա և երբեմն ծեծել նրան։ Ծեծելով քրոջը, նա սովորում է ծեծել և իր կնոջը։ Տղամարդի բռնակալությունը սկսր սեռի վրա սկսվում է երեխայությունից։

Գյուղացի մանուկը խիստ փոքր հասակից անձնատուր է լինում ցնորամտության։ Նախապաշարմունքներով և անհավատությամբ լի ընտանիքն աղջում է նրա մեջ ֆանտազիայի սաստիկ զարգանալուն։ Ամեն մի հասարակ երևույթ բացատրվում է նրան առանձնական առեղծվածներով։ Երազը, կայծակը, ամպի որոտը, ցոլացող աստղը, արեգակի և լուսնի խավարումը, թաթառը, և մինչև անգամ կատվի մռնչյունը, բուի կռնչյունը նրա համար ունեն խորհրդավոր և գերբնական նշանակություններ։ Գառավ մամիկի հրաշալի հեքիաթները վառում են, բորբոքում են նրա երևակայությունը շարժական դրախտների, կաքնի աղբյուրների, խոսող տանկերի, յոթն գլխանի դիվերի*, վիշապների, հուրիների և փերիների պատմություններով։ Ես քսան եմ ունեցել երկու տարի մի մեծ գյուղում վարժապետ լինելու. շաբաթության առաջին դասերը ես տալիս էի, որ աշակերտները և աշակերտուհիները գրեին իրանց լսած առածները և առակները. երբ մի փոքր զարգանում էին, ես գրել էի տալիս իրանց գիտցած հեքիաթները։ Որքա՜ն շատ հեքիաթներ իմանում էին նրանք։ Ամենահմուտ վիպասանը չէր կարող այնպես պարզ, այնպես բնական խոսքերով շարադրել մի հեքիաթ, որպես գրում է մանուկը. նրա տղա հասակին խիստ հատուկ է մարդկության աղայամտության առեղծագործությունը։

* Դիվ բառը պետք չէ շփոթել մեր դևի հետ, որ ընդունված է չար ոգու նշանակությամբ. դիվը հեքիաթների մեջ պետք է հասկանալ այն մարդուն, ինչ նշանակություն որ ունի այս բառը պարսից լեզվում, այսինքն՝ հսկա, փահլևան։

Նվ զարմանալի չէ տեսնել, որ բացի կլիմայական պայմաններից, կան և ուրիշ շարժառիթներ, որոնք նպաստում են մանուկի շուտ հասունությանը։ 15—16 տարեկան հասակում նրա մեջ արդեն զարթնում են կրքերը. սիրուն աղջիկ տեսնելիս նրա սիրտը բաբախում է, և սկսում է իր ընկերների հետ զաղտնի խոսել կնիկների վրա։ Բայց ընտանեկան խիստ օրենքները, գյուղացի կնիկների անմատչելիությունը դեռևս երկար պահում են նրա նոր բորբոքվող սիրտը մանկական անմեղ ազնվասրտության մեջ։

Կյանքը ոչ բոլորովին զուրկ է մեր գյուղացի մանուկների համար հոգևկան և մտավոր սնունդից, որ մատակարարում է նրան ժողովրդական բանաստեղծությունը, որ դեռևս պահպանված է իր մաքուր, լուսապայծառ պարզության մեջ։ Դողթան հին երգիչներին, հայոց հին վիպասաններին այժմ փոխարինում են աշղներ։ Նա իր սազով շրջում է գյուղից գյուղ, երգում է և վեպեր է պատմում։ Գյուղերում շատ անգամ կարելի է տեսնել աշղին, ամառային լուսնկա գիշերների պահուն, հրապարակի վրա, արձակ, աստղալից երկնքի տակ, սազը ձեռին, խորին ոգևորության մեջ երգում է, ածում է և պատմում է մի վեպ լի հերոսական և սիրահարական արկածներով։ Գյուղացիները նրա շուրջը հավաքված, նստել են մերկ գետնի վրա և ուշադրությամբ լսում են սիրելի երգչին։

Գյուղական կյանքում շատ բաներ նպաստում են մանուկներին, որ նրանք չլինեին անզգա, անսիրտ, գաղտարկ և զուրկ մարդկային ազնիվ կրքերից։ Ամեն գյուղերում գտնվում են մի տեսակ տեղեր, որ ուրիշ խոսքով կարելի է կոչել գյուղական կլուբներ, իսկ գյուղացիները անվանում են օդա*։ Օդան ախոռատան մի բաժանված մասն է, որ ունի իր մեջ վառարան, հատակը ծածկված է հարդով, որի վրա սփռված են հասիրներ (փսխաթ) և որը ձմեռը խիստ տաք է լինում անասունների շնչառությունից և խիստ հարմար ժողովարան է գյուղացիների համար։ Ամենամաքուր օդա ունենում են գյուղի տանուտերը կամ փոքր ի շատե կարողություն ունեցող գյուղացիները։ Բայց գլխավոր կենտրոն լինում է տանուտերի օդան. այստեղ հավաքվում են գյուղացիները և անց են կացնում ձմեռվա երկար գիշերները։ Այստեղ լինում են ամեն տեսակ խոսակցություններ, դատում են իրանց հասարակական գործերի վրա, պատմում են իրանց կյանքում պատահած զանազան արկածներ, կատակներ և սրախոսություններ են անում, առակներ և առածներ են ասում,

* Օդա՝ համկորեն օթաղ կամ դրոց օթյակ բառերի նշանակություն ունի։

և երբեմն գյուղական տերտերը կամ տիրացուն իրանց խելքին զոռ են տալիս և սկսում են խոսել սրբերի, հրեշտակների, սատանաների, դժոխքի, արքայության, վերջին դատաստանի մասին այնպիսի առասպելական ավանդություններ, որ ոչ մեկ գրքի մեջ չեք գտնի։ Մանուկ սերունդը, թեև չէ մասնակցում ծերունիների զրույցներին, բայց հավաքված նրանց շուրջը, լսում է նրանց իմաստալից խոսակցությունները։

Օդաններն ավելի կյանք են ստանում, երբ այնտեղ հայտնվում են աշղնները։ Այդ կույր Հոմերոսները, որ մի ժամանակ իրանց երգերով զմայլեցնում էին մեր թագավորների և նախարարների պալատները, այժմ զվարճացնում են գյուղացու ձմեռային օդան։ Աշուղը գիտե հարյուրավոր բերանացի վեպեր, որոնք դեռ ոչ թղթի վրա են գրվել և ոչ տպագրության մամուլի տակ են ճնշվել։ Նրա վեպերը երգախառն են լինում, և որպես արևելյան բորբոքված ֆանտազիայի ծնունդ, բովանդակում են իրանց մեջ սեր և հրաշալի արկածներ։ Նա միանգամ սկսած վեպը հաճախ կարողանում է վերջացնել մի քանի դիշերվա մեջ։ Գյուղացի մանուկները դառնում են աշղի վեպերի մեջ այն կենսատու աղբյուրը, որ կազդուրում է նրանց ոգին, աղնվացնում է սիրտը և վառում է նրանց զգացմունքները մի սրբազան ջերմությամբ։ Գյուղացի մանուկն այնքան անգամ լսել է աշղի վեպերը, որ մեծ մասն ինքն էլ գիտե։ Նա գիտե արկածախնդիր Քյոռօղլիի արշավանքները, գիտե Քարամի և Ասլիի սիրահարությունները, Աշղ Ղարիբի և Շահսանամի վառված սերը, Լեյլիի և Մաջնունի անձնազոհությունները, Շահ Սմայիլի քաջագործությունները, Ֆարհադի անբախտ սերը, հարյուրավոր այսպիսի բոմաններ գիտե նա։ Այժմյան աշղների երգերը մի բերանացի հավաքածու են իրանցից առաջ եղած երգիչների, և ամեն մի երգ կրում է իր վերջում հեղինակի անունը և այս պատճառով ամեն մի երգ զանազանվում է իր բնավորությամբ. մի մասը քնարերգություն (լիրիկա) է, մի մասը փիլիսոփայական և քան մեծի մասին միստիքական հայեցվածներ է բովանդակում, մի մասը խրատական կամ բարոյագիտական բնավորություն ունի, իսկ պարսավաբանական, հեղնական, ծաղրական երգերը կրում են իրանց մեջ թեև կոշտ, բայց խիստ կենդանի սրամտություններ, թե որպես կծել և կատակել գիտե արևելքցին։ Այս բոլորն ազդում են մանուկների սրտի վրա և թողնում են նրանց մեջ անջնջելի տպավորություններ։ Աշղն ավելի մեծ պաշտոն է կատարում ժողովրդի ստոր դասի կրթության, մտավոր և բարոյական ուղղության մեջ, քան թե տերտերը, որի չոր ու ցամաք քարոզները միայն սառցնում են, քարացնում են սրտերը։

Զարմանալի է, թե ո՛րպիսի եռանդով մեր գյուղացիներն աշխատում

են, որ իրանց զավակներն ուսում ստանային։ Մի անբացատրելի զորություն մղում է նրանց դեպի այդ ցանկությունը։ Մեզ մոտ գյուղ չկը գտնի, որ եկեղեցուն կից մի փոքրիկ դպրոց չունենար, և ուր որ այդ չկար, մանուկները հավաքվում են գյուղի քահանայի կամ տիրացուի մոտ։ Տարվա երեք եղանակներում՝ գարունը, ամառը և աշունը, մանուկները զբաղված են լինում գյուղատնտեսական գործերով և ժամանակ չեն գտնում դպրոց գնալու, իսկ ձմեռը նրանք ավելի ազատ են տնտեսական հոգսերից և սկսում են սովորել։ Բայց կան այնպիսի գյուղեր, որոնց թիվը սակավ չէ, որ ունեն կանոնավոր դպրոցներ, որոնց մեջ մանուկները սովորում են ամբողջ տարին, բացի ամառվա երկու տաք ամիսներից։ Մեր գյուղացիները, մանավանդ վերջին տասն տարվա ընթացքում, այն աստիճան հասկացել են ուսման կարևորությունը, որ ամեն զոհաբերություն հանձն են առնում, որ որքան կարելի է, իրանց դպրոցները կանոնավոր վիճակի մեջ դնեին։ Շատերը, որոնց նյութական դրությունը ներում է, չեն բավականանում գյուղական դպրոցներով և ուղարկում են իրանց զավակներին մերձավոր քաղաքները, կամ Թիֆլիս, Մոսկվա, Ս. Պետերբուրգ և մինչև անգամ արտասահման, բարձր, համալսարանական կրթություն ստանալու։ Եվ մեր գյուղացիներից կարելի է տեսնել բազմաթիվ բժիշկներ, իրավաբաններ, տնտեսագետներ, դիտություն ամեն մեկ ճյուղի մեջ ավարտածներ և մինչև անգամ պրոֆեսորներ և բարձրաստիճան եկեղեցականներ։ Առհասարակ խոսելով, պետք է ասած, որ մեր գյուղացին բոլորովին ազատ է այն նախապաշարմունքից, թե որդին պետք է լինի հոր կյանքի շարունակությունը և բնավ չպիտի շեղվեր այն ճանապարհից, որով ապրել էին նրա պապերը։ Նա, կարծես, բնազդումով զգում է իր վիճակի դաժանությունը և ցանկանում է որդու համար մի ավելի լավ վիճակ։ Այդ վիճակը նրա կարծիքով կարելի է գտնել միմիայն ուսման և կրթության մեջ։ Վերջին աղքատն անգամ այսպես է մտածում։ Ինձ շատ է պատահել, երբ ցանկացել եմ գյուղացի մանուկներից սպասավոր վարձել, տեսնում եմ, մի հնոտ և անհայտ գյուղից հայրը բերում է իր որդին, երբ հարցնում եմ, թե ո՞րքան պետք է վճարել, նա պատասխանում է. «Աղա, ոչինչ չեմ ուզում, թող ձրի ծառայե, միայն դուք սովորեցրեք որդուս գրել և կարդալ»։

Խոսելով առհասարակ գյուղական մանուկների կրթության վրա, ես ստիպված եմ փոքր-ինչ շեղվել իմ հետազոտության նպատակից և ցույց տալ, թե ինչ են դուրս բերում մանուկները գյուղական բազմաթիվ դպրոցներից։ Եթե ընդունում ենք, թե ուսումը և կրթությունը պետք է համապատասխանեն յուրաքանչյուր դասի իրական պահանջներին և

պետք է լրացնեն այն, ինչ որ պակաս է նրան, այս կետից նայելով, մեր գյուղական դպրոցները բոլորովին ապարդյուն և մինչև անգամ վնասակար կդառնան։ Գյուղացին գործ ունի հողի և անասունների հետ։ Արդյոք դպրոցը տալի՞ս է նրա որդուն փոքր-ինչ տեղեկություն, թե՛ որպես պետք էր խնամել անասուններին, որ նրանք աճեին, բազմանային և ազնվացնելին իրանց ցեղը։ Արդյոք դպրոցը ծանոթացնո՞ւմ է նրա որդուն հողի որպիսության հետ և բույսերի լավ մշակելու պայմանների հետ։ Դրանցից ոչ մեկը չէ անում դպրոցը։ Նա սովորեցնում է մանուկներին գրել, կարդալ, հաշվել, կրոն և այլն, որոնց մեջ մեծ պետք չունի գյուղացու զավակը։ Այբուբենը սոված փորին հաց չէ տալիս։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ իմ խոսքը կանոնավոր գյուղատնտեսական դպրոցների մասին չէ, որ շատ ցանկալի էր, եթե մի խումբ գյուղերի կենտրոնում գոնե մի հատ գտնվեր, ես խոսում եմ գյուղատնտեսական բոլորովին մասնավոր և տարրական հմտություններ մասին, որ ամեն հասարակ վարժապետը կարող էր քաղել դասագրքից և հաղորդել իր աշակերտներին։ Գուցե ինձ կնկատեն, թե մենք այսպիսի վարժապետներ չունենք։ Մենք իսկապես ոչ մի առարկայի համար պատրաստված գյուղական վարժապետներ չունենք. նրանք իրանք իրանց ուսումնարանում են, իսկ եթե կպահանջվի նրանցից, կարող են սովորել և շատ բան գյուղատնտեսության մասին։ Այն էլ պետք է ի նկատի ունենալ, որ մեր գյուղերում վճարում են վարժապետին ավելի շատ, քան թե մի վարժապետ ստանում է, օրինակ, Գերմանիայի մի գյուղում։ Ուրեմն կարելի է լավ ընտրություն անել ուսուցիչների մեջ։

Այլ է, եթե գյուղական դպրոցներն այն աստիճան զարգացնելին մանուկներին, որ նրանք ավարտելուց հետո կարողանային ամեն գրքեր կարդալ, հասկանալ, կարողանային ինքնակրթությամբ իրանց տնտեսության վերաբերությամբ հմտություններ ստանալ։ Այդ անել անկարող են նրանք, որովհետև դպրոցներից խիստ փոքր գիտություն են դուրս բերում։ Բայց այդ փոքր գիտությունն ավելի խանգարում է նրանց օրինավոր գյուղացիներ լինել, քան թե նպաստում է։ Կիսակատար և թերի յրթությունը միշտ հպարտացնում է ուսանողներին։ Մանուկները մի բան սովորելով, լավ ևս է ասել՝ ոչինչ սովորելով, սկսում են այնուհետև արհամարհանքով նայել իրանց ծնողների պարապմունքի վրա. նրանք դառնում են մի տեսակ թշվառ արարածներ, որ կորցնում են իրանց հպարտ դեպի ծնողների ապրուստի ավանդական եղանակը, և մի նոր ձև, մի նոր եղանակ էլ չեն սովորում, և այսպիսով մնում են «ավարտ», այսինքն՝ մոլորված, ոչ այս և ոչ այն։ Գյուղը սկսում է անտանելի լինել

նրանց, և միակ ելքը, որ գտնում են իրանց դժվար դրությունից դուրս գալու համար, այն է, որ դիմում են դեպի օտար երկրներ նոր ապրուստ գտնելու։ Ահա ինչով է բացատրվում գյուղացի մանուկների սաստիկ գաղթականությունը դեպի քաղաքները։ Այս դեպքում մեծ ազդեցություն է գործում օրինակը։ Այսինչ գյուղացու որդին, ուսում ստանալով, դարձավ աստիճանավոր, բժիշկ, վարժապետ, բարձրաստիճան եկեղեցական, կամ հարուստ վաճառական, մյուսներն աշխատում են, որ իրանք էլ միևնույն բախտավորությանը հասնեին։ Այստեղից առաջ է գալիս գյուղացի մանուկների սաստիկ հոսանքը դեպի մեծավոր և հեռավոր քաղաքները։ Մի գաղտնի և մանուկի համար անհասկանալի զորություն քաշում է նրան դեպի քաղաքը. նա դիմում է այնտեղ լի անորոշ հույսերով, ինքնավստահ. և միանգամայն հանձնված իր բախտին։ Տարակույս չկա, որ այսպիսի անփորձ և անմեղ բախտախնդիրներից ոմանք անտարբերությունից, ոմանք խնամակալ չունենալով, ընկնում են քաղաքների մոլորությունների մեջ և դառնում են թշվառ արարածներ, բայց մեծ մասը հասնում են իրանց նպատակին։

Գալով քաղաքը, գյուղացի մանուկն անպատճառ ունի մի նպատակ։ Եթե ցանկանում է նա վաճառական դառնալ, մտնում է մի վաճառականի մոտ որպես «դուքնի աշակերտ». նա ոչինչ վարձ չէ պահանջում, միայն թե տային նրան հաց և հագուստ։ Երբեմն մինչև տասն տարի անտանելի նեղությունների համբերելով, վերջապես նա փոքրիկ գումարի տեր է դառնում և սկսում է իր համար մի առանձին առևտուր անել։ Նա բացի սովորելուց առևտրական եղանակները, միևնույն ժամանակ ստանում է վարպետից նրա բարոյականության լավ կամ վատ հատկություններ։ Միևնույն կերպով են սկսում իրանց ասպարեզը և այն մանուկները, որոնք ցանկանում են որևիցե արհեստ սովորել. աշակերտությունից անհնարին նեղությամբ հասնում են վարպետության։ Քաղաքների թե վաճառականները, թե արհեստավորները մեծ հոժարությամբ ընդունում են իրանց մոտ գյուղացի մանուկներին, որովհետև նրանք հավատարիմ են լինում, չեն գողանում, և շուտ սովորելով, օգուտ են տալիս իրանց վարպետներին։

Որպես հայ աղջիկներից չէ կարելի գտնել աղախիններ, այնպես էլ հայ մանուկներից չէ կարելի գտնել ատան սպասավորներ։ Բացառությունները խիստ աննշան են։ Եթե հայ մանուկը մտնում է մեկի մոտ ծառայելու, անպատճառ նպատակ ունի մի բան սովորել, որ կպչանակ նրան ատոր պարապմունքից։

Ոչ սակավ հետաքրքրության արժանի է, թե որպիսի եանդով, որպիսի անձնվիրությամբ և առանց բնավ միջոցների գյուղացի մանուկը քաղաքում աշխատում է ուսում ստանալ։ Դա մի կատարյալ նահատակություն է, որի մասին կխոսեմ իր տեղում, երբ կնկարագրվի առհասարակ մեր ուսանողների դրությունը։

Գյուղացի մանուկների սաստիկ հոսանքը դեպի քաղաքները զրկում է գյուղական ժողովրդին իր թարմ ուժերից և բուլացնում է նրա ճեռնությունը։ Մանուկը քաղաքում սովորելով որևիցե արհեստ, կամ վաճառականություն, և կամ ուսումնական դառնալով, այլևս սովորելով քաղաքի կյանքին և հեշտություններին, այլևս չի վերադառնում իր հայրենական տունը, որովհետև իր արհեստը, իր դիտությունը գյուղում գործադրություն չեն գտնում։ Նա բնակություն է հաստատում քաղաքում, այնտեղ ամուսնանում է և այնտեղ էլ ապրում է մինչև իր կյանքի վերջը։ Երբեմն միայն գնում է տեսնելու իր ծնողներին և ազգականներին, և նրա իր դրությունը ներում էր, ծնողներին, քույրերին, եղբայրներին իր մոտ է բերել տալիս, և այսպես գյուղական հասարակությունը զրկվում է մի ծուխից։ Բայց որքան այդպիսի ծուխեր են մարում ամեն տարի։

Գյուղական մանկատու սաստիկ հոսանքը դեպի քաղաքները, ինչ, որպես հիշեցի, մի կողմից զրկում է գյուղացուն իր թարմ ուժերից, բայց մյուս կողմից մացնում է գյուղերի մեջ նոր կյանք, նոր քաղաքակրթված տարր։ Քիչ չէ պատահում, այն երիտասարդները, որոնք քաղաքներում զարգացել էին, աչքները բացվել էին, և հասկացել էին կյանքի նպատակը ու պահանջները, կրկին վերադառնում են գյուղը, հորդորում են իրանց հայրենակիցներին կրթության գործի մեջ, դպրոցներ հիմնել տալով և նրանց հասարակական կյանքի և տնտեսության մեջ նոր ձևվեր, նոր բարվոքումներ մացնելով։ Օրինակներ շատ են եղել, որ մի գյուղացի պատանի, մանկության հասակում քաղաքը գնալով, այնտեղ մնալով և հարստանալով, դարձյալ չէ մոռացել իր ծնված տեղը, և հայրենասիրական զգացմունքից դրդված, կամ բոլորովին իր ծախսով, կամ օժանդակություններ հավաքելով, հիմնել է իր հայրենի գյուղում մի դպրոց և կամ օգնել է իր հայրենակիցներին այս և այն տնտեսական գործի մեջ։ Այսպիսով գյուղացիները դուրս են գալիս իրանց անշարժությունից, և իրանցից բաժանված ուժերն առաջնորդում են նրանց դեպի առաջադիմություն։

Գյուղացի մանկտին չափազանց առաձգական և դյուրաթեք բնավորություն ունի. նա շատ չէ հնթարկվում պապերից մնացած ավանդական

սովորություններին ոչ միայն կյանքի մեջ, բայց և պարապմունքների մեջ։ Նրա մոտ չէ կարելի տեսնել այն կաստայական ջոկությունը, որ պահում է գյուղացուն իր անփոփոխ, անշարժ և քարացած միակերպության մեջ։ Բավական էր մի օրինակ, բավական էր, որ հանգամանքները նպաստեին նրան, նա արդեն փոխում է իր կացության ձևերը։ Այս է պատճառը, որ մենք չունենք գյուղական ազգաբնակություն իր նեղ նշանակությամբ վեր առած։ Տեսնում ես, նա պարապում է հողի մշակությամբ, այգեպանությամբ, անասնապահությամբ և այլն, իսկ միևնույն ժամանակ վաճառականությունն է անում, մտնում է արքունական կապալների մեջ, և հենց որ փողի տեր դարձավ, էլ չես ճանաչի երեկվա կոշտ, գռեհիկ գյուղացուն, նա ոտքից ցգլուխ փոխվում է և ցույց է տալիս բոլոր ձևերը փոքր ի շատե կրթված քաղաքացու։ Ես կբերեմ մի համեմատություն։ Վեր առնենք օրինակի համար ռուս մուժիկին, նա որքան էլ հարբեցոտանա, մինչև անգամ միլիոնի տեր դառնա, դարձյալ կմնա նույն մուժիկը, դարձյալ կտեսնես նրան ահագին մորուքով, ուղիղ կտրած երկայն մազերով, կարմիր չթեղեն շապիկով, մինչև ծնկները վեր քաշած կոպիտ կոշիկներով, և ուսերի վրա ձգած տուլուպով. թե քաղաքում և թե գյուղում նա միևնույն հագուստն է կրում, միևնույն ոամկական լեզվով է խոսում, և միևնույն կերպով թեքվում է, մինչև գետին խոնարհվում է և գլուխ է տալիս, երբ գործ ուներ մի դեղին կոճակավոր մունդիրի հետ։ Հարստությունը և միջոցները չեն փոխում նրան. բնակվում է սովորական խրճիթի մեջ, ուտում է իր «ըշչին» փայտե ամանի մեջ, փայտե գդալով, խմում է արաղ և «կրվաս», հաստացնում է փորը և օրըստօրե բթանում է, հիմարանում է։ Բայց մեր նորահաս գյուղացին այսպես չէ։ Նյութական միջոցների համեմատ նա փոխում է և ապրուստի ու կացության ձևերը։ Ես տեսել եմ գյուղացի երիտասարդներ ցիլինդրով, դունավոր նուրբ ձեռնոցներով, օսլայած սպիտակ շապիկներով, հագնված որպես մի փարիզյան ֆրանտ, մատին դրած ունի բրիլիանտ մատանի, ոսկի ժամացույցով, խոսում է զանազան լեզուներով, լրագրեր է կարդում, եղել է եվրոպական զանազան քաղաքներում, դատում է պոլիտիկայի վրա, բնակվում է ճաշակով կահավորված տան մեջ, որի լուսամուտները զարդարած են գույնզգույն ծաղիկների թաղարներով։ Իհարկե, բացառությունը մեծ է, մանավանդ այն գյուղերի վերաբերությամբ, որ հեռու են քաղաքներից և մեծ ճանապարհներից, որ ընկած են խուլ անտառների, անմատչելի լեռների և անհայտ ձորերի մեջ։

Անցնում եմ դեպի այն երիտասարդությունը, որ գյուղից դուրս չէ

նկել, քաղաք չէ տեսել, որ դեռ պահպանել է իր պապերի ընտանեկան և ավանդական հատկանիշները։

Բարոյականությունը մանուկ սերնդի մեջ պահպանելու համար դյուղացի ծնողներն աշխատում են շուտով ամուսնացնել իրանց որդիներին։ 15—16 տարեկան հասակում նրանք արդեն կնոջ տեր են, իսկ դեռ քսան տարեկան չեղած, զավակներ ունեն։ Սովորած լինելով ամեն պետքերի մեջ ընդունել ծնողների հաճությունը, և՛ կնոջ ընտրության մեջ պատանին խոնարհվում է նրանց կամքին։ Նա իր սրտից չէ հարցնում՝ արդյոք սիրո՞ւմ է աղջկան, թե ոչ, և կամա-ակամա հաշտվում է անհրաժեշտության հետ։ Եվ ինչո՞վ կարող էր նա հասկանալ կնոջ լավ կամ վատ հատկությունները, քանի որ նա երբեք կնոջ հասարակության մեջ չէր գտնվել, չէր փորձել և չգիտեր, թե ինչպես է լինում կնոջ սերը։ Պսակվելին նրան մի աղջկա հետ, լավ թե վատ, միևնույն է նրա համար։ «Այս է, որ կա»,— մտածում է նա, նրանով գոհանում է և նրա մեջ գտնում է իր բավականությունները։ Եթե հայրը գնել էր մի նոր եզ, որին շուտով կարող էր հասկանալ, թե որքան այդ անասունը կարող էր հարմարվել գործին, որովհետև շատ այդպիսիները փորձել էր նա, բայց կնոջ հետ գործ չէր ունեցել, կինը նրա համար մի անծանոթ առարկա էր։

Կինն առհասարակ խիստ աննշան դեր է խաղում գյուղական երիտասարդության վիճակի մեջ։ Նա ապրում է փակված տան չորս պատերի մեջ և պահպանվում է ստոիկ հսկողության ներքո։ Եվ եթե պատահում է, որ նա տնից դուրս է գալիս, հարևանի տղան իրավունք չունի մոտենալ նրան կամ խոսել նրա հետ։ Եվ ի՞նչ հաճություն կարող էր գտնել երիտասարդությունը կանանց հասարակության մեջ, երբ նրանցից կտրված էր, և երբ ամբողջ գյուղի մեջ չէր կարելի գտնել մի կամ երկու կին, որ թեթև վարքի տեր լինեին։ Ես ականատես եմ եղել մի ծիծաղելի հանդեսի, թե որպիսի խայտառակությամբ գյուղական հասարակությունից արտաքսում էին մի կնոջ։ Նրան նստեցրել էին էշի վրա դեպի հակառակ կողմը, այսինքն՝ երեսը դարձրած դեպի գավակը, և նոխազի (երասանակ) փոխարեն ձեռքումը բռնել էին տվել էշի ագին։ Կնոջ գլուխը բոլորովին բաց էր և առանց ծածկոցի, ծամերը սափրել էին, իսկ երեսը ածուխով էին մուրել։ Մի մարդ քաշում էր էշի նոխտան, իսկ երկու մարդիկ առջևն ընկած, մեկը թմբուկ էր ածում, իսկ մյուսը՝ զուռնա։ Բազմությունն աղաղակներով և կատակներով ճանապարհ էր դնում ողորմելի հանցավորին դեպի գյուղից դուրս։

Պետք է նկատել, որ բարոյականությունը պահպանելու համար գործ

դրված այսպիսի խիստ միջոցներն այժմ օրըստօրէ թուլանալու վրա են։ Բարքերի ապականութիւնը, որպես ժանտախտ, սկսել է վարակել գիւղական մաքուր պահված ժողովուրդը։ Այս ախտից ղերծ մնացել են այն գիւղերը միայն, որոնք առանձնացած են և քաղաքների հետ հաղորդակցութիւն չունեն և որոնք սալդաթի կամ աֆիցների երես դեռ չեն տեսել։

Պատահում է ամէնի զգայուն բնաւորութիւն, որ իսկապես սիրում է, սիրում է մի աղջիկ, որին տեսել էր, որի հետ գուցե ունեցել էր մի քանի գաղտնի խոսակցութիւններ։ Բայց որդիների սերը երբեք չէ մրսնում ամուսնական հաշիւների մէջ, որոնք միանգամայն կախված են ծնողների կամքից։ Որպես որդին չէ կարող ուտել այն կերակուրը, որից ինքը ախորժում է, այլ պետք է ուտե այն, որ մայրը նրա համար պատրաստում է, որպես որդին չէ կարող հագնել այն հագուստը, որ ինքը ցանկանում է, այլ պետք է հագնե այն, որ հայրը նրա համար գնում է, այնպես էլ պատանին չէ կարող կին ունենալ այն աղջկան, որին ինքը սիրում է, այլ նրան, որին ծնողներն ընտրում են։ Այս պարագաներիս մէջ խիստ հատկանիշ է այն պսակը, որ տեղի էր ունեցել մի գիւղում. քահանան հարցնում է պատանուց, ցույց տալով նորահարսի վրա, թէ՝ տե՞ր ես, սիրում ե՞ս։ «Հայրս գիտե, տերտեր, նրանից հարցրու»,— պատասխանում է պատանին։

Առհասարակ սերը գիւղացի պատանիների և աղջիկների մէջ լոկ բանաստեղծական ֆանտազիա է, որ վերջին տարիներում նկատի է դարձել մի քանի անշնորհք և անհամ վեպիկների, բայց կեանքի մէջ նա չկայ։ Վեր առէք մեր բոլոր ժողովրդական երգերը և աշղների վեպերը, նրանց մէջ չէք գտնի իսկական սեր իր հոգեբանական ճշգրիտ կողմերով։ Բանաստեղծը խորին հիացմունքով գովերգում է կնոջ թուխ մազերը, կարմիր թշերը, սևորակ աչքերը, չինարի պես ձգված հասակը, մարգարտի նման ճերմակ ատամները և այլն, մի խոսքով, նա հափշտակված է կնոջ արտաքին գեղեցկութիւններով միայն, բայց նրա հոգու և սրտի մէջ ոչինչ չէ տեսնում, նրա բնաւորութեան, բարքի և վարքի մէջ ոչինչ գրավիչ բան չէ նկատում։ Դա շատ բնական է։ Ի՞նչպես կարող էր սիրողը թափանցել կնոջ սրտի և հոգու մէջ, երբ նրա հետ հարաբերութիւն չէր ունեցել, նրա բերնից մի բառ անգամ չէր լսել։ Իսկ հարաբերութիւնները մեր գիւղերում տղաների և աղջիկների մէջ միանգամայն կտրված են։ Տղային գրավում է աղջկա արտաքին ֆիգուրան միայն, երբ հեռվից հանդիպում է նրան, ինչպես շատ մարդ կարող է հափշտակվել մի գեղեցիկ արձանի արտաքին կերպարանքով, բայց հոգին և սիրտը քննել չէ կարող, որովհետև նա սիրտ չունի, որովհետև նրա լեզուն չէ խոսում։

Բայց հոգու արտահայտություններն արտաքին կերպարանքի վրա տեսնելու համար պետք է ունենալ բավական կրթված ճաշակ և նուրբ դիտողություն, որոնցից զուրկ է գյուղացին։

Տարվա երեք եղանակներում՝ գարունը, ամառը և աշունը, գյուղացին այնքան զբաղված է իր մշակություններով, որ ամենևին ժամանակ չունի իր սրտի հետ խոսելու. այն ժամանակ գործում են նրա ֆիզիքական ուժերը միայն, իսկ հոգին մնում է անգործ։ Բայց ձմեռը մի փոքր հանգստանում է նա, և դատարկության մեջ զարթնում են զգայական կրքերը։ Ձմեռը կատարվում են գյուղական հարսանիքները, որ մոտեցնում են տղամարդերին կնիկների հետ։ Գյուղական հարսանիքն ամբողջ գյուղի հարսանիքն է. վերջին աղքատը մասնակցում է այդ ընդհանուր ուրախության, կերակրվում է նրա սեղանից և խմում է նրա դինին։ Գյուղական հարսանիքը մի մեծ միխիթարություն է, մանավանդ ջահել աղջիկների և պատանիների համար, որոնք շատ զուրկ են մնում ուրախալի հանդեսներից։ Հարսանիքը, նայելով փեսայի հոր կարողության, տևում է մի քանի օրեր. առհասարակ երեք օրից պակաս չէ լինում։ Ցեղակիներն անց են կացնում ուտելով և խմելով, իսկ գիշերները՝ նվագ-բաններ ածելով, պար գալով և երգելով։ Ձևանաբռնուկ խաղը (յալլի) այն բարերար խաղերից մեկն է, որ տալիս՝ տղամարդերին շոշափել մի կնոջ ձեռք։ Բայց այստեղ ևս հայկական պարկեշտությունը դրել է իր խիստ սահմանները։ Պարի մեջ տղամարդն իրավունք չունի բռնել մի օտար կնոջ ձեռքը, նա անպատճառ պետք է ընտրե իր մոտ ազգականներից, կամ իր քրոջը, կամ մորաքրոջը և այլն։ Ամուսնավոր կնիկները բոլորը դիմակավորված են լինում, այսինքն՝ երեսները ծածկված է լինում թանձր և անթափանցելի քողով, ոչինչ չէ կարելի տեսնել։ Բայց ազատ աղջիկների երեսները բաց են լինում։ Կին և տղամարդ, աղջիկ և պատանի, միմյանց ձեռքից բռնած, կազմում են մի երկար շղթա, որ զանազան ուղղությամբ պտտվում է ընդարձակ տան մեջ։ Սազանդարների ածելու եղանակով շարժվում են պարողները, լուռ ու մունջ կերպով, կարծես, կատարվում է մի բալետ իր խորհրդավոր պանտոմիմայով։ Այն գյուղերում, ուր ժողովուրդը դեռևս դտնվում է նահապետական պարզության մեջ, տղամարդերի հարաբերությունը կնոջ հետ ավելի արձակ է, և հարսանիքների մեջ կամ զանազան տոնական հանդեսներում պարերը և խաղերն ավելի զվարճալի կերպարանք են ստանում։

Հարսանիքի ժամանակ հայկական ավանդությունները երևան են գալիս իրանց նախնական պարզ կերպարանքով. հետաքրքիր աչքը կարող է տեսնել նրանց մեջ ժողովրդական հանճարի շատ ստեղծագոր-

ծուխյուններըը, որ այժմ կորչելու, անհետանալու վրա են։ Եթե ունեցել ենք մենք մի ժամանակ թատերական ներկայացումներ, եթե մեր նախնիքներն ևս զվարճացել են իրանց էսքիլեանների, Սոֆոկլեանների և Էվրիպիդեանների արարչուխյուններով, այժմ նրանցից ոչինչ չէ մնացել, այժմ նրանց նշույլները միայն մնացել են պյուղական ժողովրդի մեջ, որ հայտնվում են զանազան հանդեսներում։ Հարսանիքի համար ընտրում են առհասարակ ընդարձակ տներ, որ բավական լիներ բազմության համար։ Եթե հարսանիքատիրոջ բնակարանը փոքր էր, դրացին տալիս է նրան իր տունը։ Ամեն գիշեր սովորական կերուխումը, ուրախությունները և պարերը վերջանալեն հետո լինում են մի տեսակ թատերական ներկայացումներ, որ ամենի լեզվով կոչվում է օյին (խաղ)։ Դերասանների պաշտոն կատարում են գլխավորապես սազանդարեները (նվագածուներ)։ Ներկայացնում են ժողովրդի կյանքից առած ծիծաղաշարժ պատկերներ, երբեմն առանց բովանդակության և երբեմն իրանց տգիղությամբ անցնում են բարոյականության չափը։ Բայց այդ կոշտ, կոպիտ և անմշակ վոդեվիլները սաստիկ ազդում են մանուկ սրտերի վրա։ Մանկտին նրանց մեջ տեսնում է այն գաղտնիքները, որոնք իր համար առաջ անորոշ էին, անբացատրելի էին։

Վերջապես պատանին ամուսնանում է։ Հարսանիքի որախությունները շուտով անցնում են, որպես թե ոչինչ չէր պատահել, և մյուս օրը նորափեսան սկսում է իր սովորական պարապմունքը։ Կրկին սկսվում է տաժանական կյանքը։ Երկու նորապսակ ամուսինների հարաբերությունները հենց առաջին օրից խիստ օտարոտի ձև են առնում։ Գյուղացու ընտանեկան պայմաններին անծանոթ մարդը, տեսնելով նրանց, կկարծի, թե նրանք խոսվել են, կամ միմյանց հետ անհաշտ են ապրում։ Դրսումը միասին չեն հայտնվում, իսկ տան մեջ միմյանց հետ չեն խոսում։ Հարսն իր քողը չէ բարձրացնում և երեսը չէ ցույց տալիս փեսային, եթե այնտեղ ներկա էր ընտանիքի անդամներից մեկը։ Միասին չեն ճաշում, ընթրիք չեն ուտում. որդին ուտում է հոր հետ, իսկ հարսը՝ սկեսրոջ հետ։ Գյուղերում կանանց սեռի սեղանը տղամարդկերից բաժանված է։ Այսպես անցնում են տարիներ և շատ տարիներ. հարսը տեսնվում է իր ամուսնի հետ կամ գաղտնի, կամ գիշերը, երբ բոլորը քնած էին։

Ամուսնությունից հետո երիտասարդի վիճակը փոխվում է ընտանիքի մեջ. հայրը նրա հետ այլևս խստությամբ չէ վարվում, իսկ մայրը հարգում է։ Նա այժմ այր է և ոչ տղա։ Նրա խոսքերը, նրա կարծիքները

բանի տեղ են դնում, և նա սկսում է ձայն տալ ընտանեկան խորհուրդների մեջ։ Բայց ասպիճանը հարաբերությունների մեջ չէ փոխվում, մնում է միևնույնը։ Խորհուրդների մեջ գերակշռում է ավելի հասակավորի կարծիքը։ Սրեն նոր ամուսնացածը կրտսեր որդի էր, խոնարհվում է երկու եղբորը, իսկ երկու եղբայրը՝ հորը։ Ընտանիքի պլհավորությանը պատկանում է նրան։ Հոր մահից հետո նրա տեղը բռնում է անդրանիկ որդին։ Որպես կրտսեր եղբայրը հնազանդվում է երկու եղբորը, այնպես էլ կրտսեր եղբոր կինը պետք է հնազանդվի երկու եղբոր կնոջը։ Ինձ շատ է պատահել տեսնել գյուղերում, երբ երկու եղբայրն իր հոյրի հետ սեղան էր նստել, կրտսեր եղբայրը ոտքի վրա ծառայում էր նրանց։ Փոքր եղբայրն այն ասպիճան պատկառում է և հարգում է մեծ եղբորը, որ ասպիճան հարգում է և իր հորը։ Նրա ներկայությամբ չէ ծխում, գինի կամ արաղ չէ խմում, թեև մեծ եղբայրը դիտե բոլորը, և առհասարակ մատների մեջից է նայում իրանից փոքրի այս տեսակ համեստությունների վրա։

Հոր կենդանության ժամանակ որդիների մեջ բաժանում լինել կարող չէ. եթե նրանցից մեկն անհնազանդ էր գտնվում և խանգարում էր ընտանեկան կարգերի ներդաշնակությունն, արտաքսվում է ժառանգությունից զրկված։ Հոր մահից հետո եղբայրները երկար շարունակում են դարձյալ միասին ապրել, մինչև նրանք ևս ունենում են որդիներ, որոնց ամուսնացնում են և թոռների տեր են լինում։ Տունը լցվում է ահագին բազմությամբ, գերդաստանը սովարանում է, և ընտանիքի կազմակերպությունն ավելի բազադրյալ ձև է ստանում։ Երբ հին սերունդն անցնում է, մնում են ջահելները, այդ ժամանակ առաջ է գալիս բաժանումը. Հանկարծ մեկ մասնաված գերդաստանից կազմվում են 5—6 ընտանիքներ։ Բայց նկատողության արժանի է այն, որ գյուղացի հայրերը չափազանց հեռատես են լինում և իրանց կենդանության ժամանակ կարգադրում են այն բոլորը, ինչ որ պետք էր որդիների ապագա անհատության և ապրուստի համար։ Օրինակ, մեկ հայր ուներ երեք որդի, գիտեր, որ իր մահից հետո, վաղ թե ուշ, նրանք կբաժանվեին, նա աշխատում է շինել յուրաքանչյուրի համար մի առանձին խրճիթ, և եթե իր միջոցները չէին նեղում այդ անել, նա դռնեն տալիս է իր տան շինությանն այնպիսի ձև, որ կարելի լիներ երեք հավասար մասերի բաժանել, որ հետո երեք որդիների համար հարմար բնակարաններ լինեին։ Գյուղերում սովորաբար լսվում է՝ այնինչ ագայի յոթը ջրաղացները, յոթը օրավար հողը, յոթը այգիները, յոթը հոտ ոչխարները և այլն. խելոքն կարելի էր եղրակացնել, թե նա ունեցել է յոթը որդի և ամեն մե-

կի համար առաջուց անօրինել է միևնույն կայքերը, որ եղբայրներից յուրաքանչյուրը հավասար չափով ստանա հոր ժառանգությունից իր բաժինը։ Բայց եթե հայրն այնքան աղքատ էր, որ իր կենդանության ժամանակ չկարողացավ տնօրինել որդիների համար մի ապահով ապագա, նրանից հետո որդիներն այնքան ժամանակ միմյանց հետ անբաժան ապրում են, միասին աշխատում են, մինչև կարողանում են վաստակել այնքան, որ բավական կլիներ յուրաքանչյուրի կանոնավոր տնտեսության համար, եթե հարկավոր կլիներ բաժանվել միմյանցից։

Այսքանը բավական համարելով երիտասարդների ընտանեկան հարաբերությունների մասին, այժմ դառնում եմ դեպի նրանց հասարակական գործունեությունը։

Այն գյուղերում, ուր նահապետական սովորությունները դեռ տիրում են կյանքի մեջ, երիտասարդությունը չէ մասնակցում հասարակական գործերում։ Որպես ընտանիքի մեջ, այնպես էլ հասարակական գործերի մեջ ձայն ունեն ավագները (սպիտակ մորուք ունեցողները) միայն։ Օրինակ, պետք էր հարկերը բաժանել ծուխերի կամ կայքերի վրա, պետք էր ջրերին հերթ նշանակել, եկեղեցու երեսփոխանի հաշիվը տեսնել, կամ պետք էր այս և այն հանցավորին պատժել, մի խոսքով բոլոր գյուղական գործերի համար հավաքվում են «սպիտակամորուքները», ժողով են կազմում, խոսում են, գաղում են և վճռում են։ Բայց նույն օրից, երբ գյուղերում հիմնվեցան կանոնավոր շինական դատարաններ, երբ նրանց տրվեցան որոշյալ օրենքներ, և երբ կանցելարիական ֆորմալիստությունը մերժեց սպիտակամորուքների բերանացի դատավճիռները, այն օրից ծերերի դարն անցավ, և ասպարեզը մնաց երիտասարդներին։ Որովհետև շինական դատարաններում մասնակցելու համար պետք է փոքր ի շատե գրագետ լինել, պետք է փոքր ի շատե ծանոթ լինել օրենքների հետ, և վերջապես պետք է կանոնավոր խոսել դիտենալ, բայց դրանցից զուրկ են ծերունիները։ Ես առիթ եմ ունեցել մի քանի անգամ ներկա լինել շինական դատարաններում ժողովների վիճաբանություններին. նախագահում է տանուտերը, խոսել ցանկացողները ձայն են խնդրում, միմյանց չեն խանգարում, չեն ընդմիջում, վերջապես տեսնում ես մարդիկ, որ հասկանում են իրանց պետքերը, և վիճաբանությունների մեջ տիրում է ավելի առողջ դատողությունը, քեև պարզ և համեստ կերպով, և ոչ սոփեստական պերճախոսությունը, որ շատ անգամ կարելի է նկատել մեր քաղաքների դումաների մեջ։

Այսուամենայնիվ, հին սերունդը դեռ ոչ բոլորովին կորցրել է իր նշանակությունը։ Երբ պատահում են գյուղում դանազան հրավերքներ,

օրինակ, երբ կնունքաճաշ են տալիս, երբ մի հանդուցյալի համար հոգեհաց են տալիս, երբ մի տան մեջ նավասարդին հարիսա էին եփել, կամ զավուրմայի համար մորթած ոչխարներից խաշ էին պատրաստել, միշտ հրավիրում են ծերունիներին, իսկ երիտասարդներին չեն կանչում: Եթե հրավերքներում պատահում են երիտասարդներ, նրանք ծերերի հետ սեղան նստելու համարձակություն չունեն, այլ նրանց պատվելու համար ոտքի վրա սպասավորություն են անում: Երիտասարդներն իրանց զվարճությունը գտնում են իրանց շրջանի մեջ. հավաքվում են միասին, գնում են գյուղից դուրս, առանձնանում են մի այգու կամ ձորի մեջ և այնտեղ քեֆ են անում, բայց տանը հյուրեր հրավիրելու իրավունք չունեն, քանի որ դեռ կենդանի էր ծերունի հայրը: Հայրերն առհասարակ չեն ներում որդու անձնիշխանությունն ընտանիքի մեջ, իսկ դրսումը, եթե մի լավ բան անում է նա, չեն արդելում, որովհետև որդու փառքը, որդու ստացած գովասանությունները դարձյալ իրանց են վերաբերում: Այս է պատճառը, որ նրանք երբեմն անում են այն մեծ զիջողությունը, երիտասարդ որդիներին թույլ տալով իրանց հաճույքների համեմատ վարվել:

Անցնում եմ դեպի գյուղական երիտասարդության մտավոր, հոգեկան և առհասարակ կուլտուրական առանձնություններր:

Տեղագրական և կլիմայական պայմանները Հայաստանում, ավելի քան թե ուրիշ տեղ, արտահայտում են իրանց ազդեցությունը ժողովրդի մտավոր, հոգեկան և առհասարակ կուլտուրական առանձնությունների վրա: Այս կետից նայելով՝ մեր գյուղական ազգաբնակությունը կարելի է երկու որոշ խմբերի բաժանել՝ լեռնաբնակներ և դաշտաբնակներ: Խոսենք յուրաքանչյուրի մասին առանձին:

Լեռնաբնակները, թե հովիտների մեջ, թե ձորերում, թե բարձրավանդակների վրա և թե անտառներում, դեռ ապրում են գետնափոր խրճիթների մեջ, որոնք ավելի գազանների որջի են նման, քան թե մարդկային բնակության: Խրճիթը բաժանված է երկու մասերի, մեկի մեջ կենում են անասունները, մյուսի մեջ՝ տերերը: Աշտավառ խարույկը՝ տնային օջախը, հարաժամ ծխում է բնակարանի կենտրոնում, որ սրփռում է իր շուրջը լույս և ջերմություն: Գլխավոր պարապմունքն անասնապահությունն է: Անասունը մատակարարում է նրանց ամեն ինչ, որ պետք էր ապրուստի համար՝ կերակուր, հագուստ և վառելիք: Հագուստի համար գործվածներ պատրաստում են կնիկները բուրդից և իր բնական գույնով, որ շատ տեղերում բավական երբության է հասցրած: Մսակերությունը սովորական եղած չէ, կերակրվում են անասունների կաթով,

մածնով, յուղով, պանրով և բանջարեղեններով միայն։ Ջմեռը բավական երկարատև լինելով, իսկ տարվա մյուս եղանակները՝ ցուրտ, այս պատճառով երկրագործությունը զարգացած չէ. մշակում են ցորյան, գարի և հաճար միայն։ Մշակության համար մեծ աշխատություն պետք չէ, որ զարգացներ մեծ հմտություններ. թեթև արորով փոքր-ինչ խրխըրում են լեռների հողով պատած կուրծքը, ցանում են և թողնում են բնության կամքին. անձրևը ինքը ջրում է, և արեգակի անզոր ճառագայթները բուսցնում են։ Շատ անգամ վաղահաս ձմեռը ձյունով ծածկում է դեռ չհասունացած հունձքը, և գյուղային ուտելու հաց չունի։ Կյանքը նահապետական է։ Մարդը դեռ չէ տաշվել, չէ կոկվել. դեռ պահպանել է իր նախնական կոշտությունը՝ թե լեզվի, թե մտածության և թե կենցաղավարության մեջ։ Կյանքի պահանջները խիստ սակավ են, մարդը բավականանում է փոքրով, և չափավոր կարիքը չէ սոխրում շատ մտածել։ Դոհությունը վիճակից տիրում է կյանքի վրա անշարժության հետ միասին։

Երիտասարդությունը լեռնաբնակների մեջ նշանավոր է իր ուժական հատկանիշներով։ Նա, որպես բնության աղատ զավակ, դաշտեցիների նման ցած, խորամանկ և տափակ բնավորություն չունի։ Լեռնցի երիտասարդությունը նույնպես պարզամիտ, նույնպես կշտամոսիտ, նույնպես անխորտակելի և նույնպես վայրենի է, որպես ինքը՝ լեռը։ Նա ծանոթ է զենքերի հետ, որոնց է անասուններ, պատերազմում է գազանների հետ, և հարկավորված դեպքում չէ խնայում իր զենքը գործ դնել և իր նման մարդերի դեմ։ Մեր բոլոր նշանավոր ավազակները, որոնց քաջագործությունները հերոսության են հասնում, լեռնցիներ են եղել։ Հայոց անկախությունը մինչև մեր մոտ ժամանակները պահպանվեցավ Ղարաբաղի լեռներում։ Դավիթ-բեկը, մեր 18-րդ դարու հերոսը, նույն տեղացի է։ Նշանավորն այն է, որ այդ քաջ և կազմվածքով, հոգով, ուղեղով առողջ և զորավոր երիտասարդներից առաջ են գալիս նրևելի մարդիկ, երբ դեպքերը գցել էին մեկին կրթության ճանապարհի վրա, և նա համալսարանական բարձր ուսում էր ստացել։

Խոսենք դաշտաբնակների մասին։

Բոլորովին հակառակ պատկեր են ներկայացնում դաշտաբնակները։ Նրանք գետնափոր խրճիթներում չեն ապրում, բնակվում են կավաշեն կամ քարաշեն տներում, որոնք բավական բարձր են գետնի մակերևույթից։ Անասունների ախոռատունը միացած չէ տերերի բնակարանի հետ։ Ուտում են մսեղեն կերակուրներ և հագնում են գունավոր գործվածքներ, որ արդյունաբերվում է ոչ թե իրանց կնիկների աշխատասեր ձեռ-

քով, այլ եվրոպական ֆաբրիկանների շոգիով։ Բնավորությամբ, որպես հիշեցի, նման են իրանց բնակած դաշտերի տափարակությանը, նույնպես ցած, նույնպես հարթած և նույնպես տափակ են, բայց կրթությամբ և խելքով՝ բարձր են, քան թե լեռնաբնակները։ Ձենք չեն սիրում, վառոդից վախենում են, երկաթը գործ են ածում միայն բահի, մանգաղի և խոփի համար։ Երկաթով պատերազմում են հողի հետ։ Դաշտեցիքը չսվեցին մեզ ոչ մի ավազակ և ոչ էլ մի քաջ մարդ, միայն հասցրին բարեսիրտ երկրագործներ և խորամանկ վաճառականներ։ Գյուղատնտեսական աշխատությունների մեջ աշխատության գլխավոր ծանրությունը բառնում է իր վրա հրիտասարդությունը։ Ալևոր հորը, հասակ առած եղբորը շատ չեն բանեցնում, խնայում են, որպես խնայում են երկրագործական ծերացած անասուններին։ Հասկանալի է, որ դաշտային տափարակ երկրների վրա, ուր հողն արգավանդ է, ուր ջուրն առատ է, ուր բավական տաք է լինում, ուր ձմեռը երկարատև չէ, գյուղատնտեսական պարապմունքներն ավելի բազմազբյալ ձև են ստանում։ Այս է պատճառը, որ մեր դաշտաբնակների ձեռքում երկրագործությունն իր բոլոր ճյուղերի մեջ բավական ծաղկած և զարգացած վիճակի է հասել։ Գյուղացին մշակում է ընդեղեններն և հացահատիկների բոլոր տեսակները, մշակում է զանազան ազարակային բանջարեղեններ և սեխանոցի պտուղներ։ Ջրավետ տեղերում բրնձի մշակությունը կատարելագործության է հասցրած։ Բայց բամբակի և մետաքսի մշակությունը գյուղական հարստության ամենամեծ մասն է կազմում։ Այգեգործությունը նույնպես ծաղկած վիճակի է հասցրած, մրգազեղենների ամեն տեսակները հիանալի են. խաղողը որքան ազնվացրած է, այնքան դինեն շատ տեղերում դեռ կատարելագործված չէ։ Անասնապահությամբ չեն պարապում, որովհետև երկիրը մշակված լինելով, արոտատեղիներ չկան։ Պահում են այնքան անասուններ, որքան պետք է իրանց վարուցանքի և տնտեսության համար։

Այժմ ինքնըստինքյան հասկանալի է, որ մեր դաշտաբնակ գյուղացիները թե կրթությունով, թե մտավոր զարգացումով և թե նյութական կարողությունով գերազանցում են լեռնաբնակներից, բայց չունեն այս վերջինների ոչ բարքի մաքրությունը, ոչ հոգու ազնվությունը, ոչ մարմնի առողջությունը և ոչ սրտի քաջությունը։ Մի սաստիկ բաղձանք հարըստանալու և խիստ շուտ հարստանալու՝ թուլացնում է նրանց մեջ բարոյական կողմերը և ամեն ինչ զոհում է ագահության։ Նրանք բավական չեն իրանց վիճակով և միշտ ըղդոքում են, թե սակավ ունեն։ Բայց մի փոքր հարստացան թե չէ, թողնում են գյուղը և տեղափոխվում են դիպի քաղաքը։ Այնտեղ այլևս չես կարող ճանաչել մեր գյուղացուն։ Բայց

պետք չէ մոռանալ, որ այս դեպքում մեծ պատճառ է տալիս հողերի անձկությունը։ Մեր գյուղերում հողը բնակիչների թվի համեմատ այնքան սահմանափակ է, որ չէ բավականացնում նրանց ընդարձակ գործունեության։ Շատերն այժմ սկսել են գնել կալվածատեր խաների, բեկերի և վրաց ազնվականների հողերը, որոնք խաղաղության մեջ ապատում են իրանց հարստությունը, և կալվածներն անցնում են մի ժամանակ նրանցից ճնշված հայ գյուղացու ձեռքը։ Ամեն տեղ նշմարվում է մի տեսակ ձգտում դեպի նյութական հարստություն, որ առհասարակ հայի գաղափար հատկանիշն է եղել։

Ես սկսեցի գյուղացի մարդու երևակայությունից, կվերջացնեմ մի քանի խոսքով նրա ծերության մասին։ Երբ հասնում է խորին ծերության, գյուղացի հայրը շատ չէ խառնվում ընտանեկան և անտեսական գործերի մեջ, նա թողնում է, որ «ջահելները» անեն, որպես խելքները կարում էր։ Երբեմն բարի խրատներ և խորհուրդներ է տալիս, բայց պահանջումներ չէ անում։ Այդ հասակում նա հաճախ խոսում է աներաների հետ, մոռնում է եկեղեցուն և առավոտ ու երեկո ժամից հետ չէ մնում։ Տան մեջ նրա վրա նայում են որպես մի հյուրի վրա, որ երեկ երկար մնալու լիներ, կարող էր ձանձրացնել։ Բայց նա դարձյալ չէ հրաժարվում իր հեղինակությունից, դոնե աղղելով բարոյական կողմից։ Գերդաստանի մեջ հարգանք է վայելում և գյուղի մեջ համարվում է պատկառելի անձնավորություն։ Երե ծերունին փոքր ի շատե կարողության տեր մարդ էր, նա ընդունվում է որպես հասարակության հայր։ Երբ նա նստած էր իր տան դռան մոտ, «տեր ողորմյա» էր քաշում և սառած անդամները ջերմացնում էր արեգակի ճառագայթներով, գյուղացի կնիկները չեն համարձակվում այն կողմով անց կենալ, որ նրանց չտեսնի ծերունին։ Երբ նա նկատում է մանուկներին դրսումը որևիցե անկարգություն անելիս, ում զավակները որ լինեին նրանք, իրան իրավունք է համարում մոտենալ, հանդիմանել և երբեմն ականջներից բռնել ու ձիգ տալ։ Փողոցով անցնելիս, նստած երիտասարդները ոտքի են կանգնում նրա առջև։ Նրա աչքը համբուրվում է, որպես քահանայի ձեռք. ամեն ոք նրան «ափիս» կամ «պապի» է կոչում և ցանկանում է լսել նրա խորհուրդները։

Մեր ալևորներն իսկապես այնքան հիմար չեն լինում, որպես առհասարակ լինում է շատ աղղերի մեջ ծերացած մարդը։ Կյանքի մեջ այնքան տանջվել է նա, այնքան մաքառել է զժվարությունների դեմ, որ նրա մտածությունները դարձել են մի տեսակ ճշմարտություններ, որ հետևվանք էին դառն փորձերի։ Այս հատկություններն ավելի երևում են այն ալևորների մեջ, որ մնացել են պարսկական տիրապետության ժամանակ-

ներից։ Ես ասիբ եմ ունեցել մեծ բավականությամբ խոսակցել շատ գյուղացի ալևորների հետ, որոնք բոլորովին անդրադետ մարդիկ են եղել։ Նրանց հայացքները կյանքի պայմանների վրա այն աստիճան ուղիղ են լինում, որ բոլորովին զարմանք են պատճառում։ Մի պարզ առածով, մի խորհրդավոր առակով, մի կարճ նախադասությամբ նրանք այնքան խորին միտք են հայտնում, որ հազիվ թե մի փիլիսոփա կարող էր բացատրել իր բոլոր մթին ֆրազների ուժով։ Առողջ դատողություն, ահա հատկանիշը մեր գյուղական ծերունիների մտավոր կարողության, իհարկե այն առարկաների վերաբերությամբ, որ ծանոթ էր նրանց։

Համարյա բոլոր գյուղացի հայրերը մեռնում են առանց կտակ թողնելու, իսկ այդ ժառանգներին խռովություն չէ պատճառում։ Վաղեմի սովորություններ ընդունված են որպես օրենք. ամեն մեկը ստանում է իր բաժինը։

Բ

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ*

Կյանքը մեր գավառական քաղաքներում շատ նման է միմյանց, բավական է վերցնել մի քաղաքի երիտասարդությունը, և մյուսների մասին կստանանք համանման տեղեկություն։

Այստեղ ավելի պարզ կերպով աչքի է զարկում այն սթափումը, որ նշմարեցինք գյուղերում։ Ամեն ինչ մի անհայտ խթանով ձգտում է դեպի նորը, դեպի ավելի վայելուչը։ Տարակույս չկա, որ ամեն մի փոփոխություն կյանքի մեջ, որ ինքնուրույնաբար չէ ծագում նույնիսկ կյանքի փոքր առ փոքր և հաջորդաբար քաղաքակրթվելուց, այլ միանգամայն ընդունում է ամեն ինչ դրսից և օրինակից, մի այսպիսի կապակցությունը շատ անգամ կարող է ձգել և ծուռ ճանապարհի վրա։ Այդ դեպքում քաղաքների վիճակի մեջ մեծ դեր է խաղում Թիֆլիսը։

Միայն մի քանի գավառական քաղաքներ ունեն արքունի գիմնազիաներ, մյուսները՝ պրոգիմնազիաներ, իսկ մեծ մասը՝ տարրական միջնակարգ դպրոցներ։ Բացի հիշյալներից, համարյա բոլոր քաղաքներում հայերն ունեն իրանց ազգային կամ թեմական կամ ծխական դպրոցնե-

---

* Գավառական քաղաքներ ես կոչում եմ Թիֆլիսի վերաբերությամբ մնացած բոլոր քաղաքները։

րը։ Վերջիններիը լցված են լուսավորչական հայերով միայն, օտարազգիներ, կաթոլիկ կամ բողոքական հայեր չեն ընդունվում։ Արքունական դպրոցների մեջ նույնպես հայ աշակերտների թիվը մեծամասնություն է կազմում. կարելի է մոտավորապես ասել, որ 10 ուսանողից 9-ը հայ է։ Բայց պետք է գիտենալ, որ ռուսական Հայաստանի քաղաքներից շատերի մեջ, որպես են՝ Հին Նախիջևանը, Օրդուբադը, Շուշին, Գանձակ, Շամախի, Նուխի, Բաքու, Դերբենդ, մահմեդականները, նրա մեծամասնություն չեն կազմում, դոնե թվով հայերից շատ պակաս չեն, այսուամենայնիվ նրանց զավակները դպրոցների մեջ ամենաչնչին տեղն են բռնում։ Կրոնական մոլեռանդությունն առաջնակարգ դեր է խաղում այստեղ։ Զարմանալին այն չէ, որ դպրոցները լցված են ըստ մեծի մասին հայ աշակերտներով, այլ այն, թե որպես այդ ողորմելի հիմնարկություններից դուրս են գալիս նշանավոր մարդիկ, որ սովորել էին միայն ռուսերեն գրել, կարդալ և սխալներով խոսել։ Ես ճանաչում եմ նահանգական դատարանի նախագահ, հաշտարար դատավորներ, նոտարիուսներ և այլ բարձր պաշտոնավարներ, որոնք բացի գավառական միջնակարգ դպրոցներից, մի այլ տեղ չեն սովորել։ Հասկանալի է, որ դրանք իրանց առաջադիմությունով պարտական են ոչ թե դպրոցներին, այլ իրանց անձնական աշխատությանը, որ սկսելով ստոր ծառայություններից և գործնականապես վարժվելով, զարգանալով, վերջապես ծերության հասակում հասել են բարձր պաշտոնների։

Դժվար է որոշել, թե ո՛ր դասակարգի մանուկները հաճախում են արքունական և ո՛րը՝ բուն ազգային դպրոցները, բայց այսքանը հայտնի է, որ արքունական դպրոցները մտնում են գլխավորապես որդիները մանր աստիճանավորների, որոնց ծնողները միջոց չունեին նրանց Թիֆլիս ուղարկելու, որ պահանջում է մեծ ծախսեր։ Իսկ մեր ինամական և ծխական դպրոցները մտնում են որդիները վաճառականների և արհեստավորների, որոնք շատ պետք ունեն ռուսաց լեզվի մեջ և կամենում են շարունակել իրանց հորերի պարապմունքները։ Բայց լինում են և այնպիսիները, որոնց թիվը փոքր չէ, որոնք ազգային վարժարաններում պատրաստվելով, մտնում են արքունական դպրոցները։

Բոլոր աշակերտները բնակվում են իրանց ծնողների հետ և բացի հոր տնից և ուսումնարանից, մի ուրիշ տեղ չեն ճանաչում, շատ-շատ կարելի է տեսնել նրանց հասարակաց այգում, խումբով նստած իշոտիքի վրա, անշարժ նայում են զբոսնողներին։ Մինչև անգամ մերձակա գյուղերից եկած աշակերտները չեն վարձում առանձին սենյակներ բնակության համար, այլ կենում են մի բարեկամի կամ ծանոթի ընտանիքի

մեջ։ Ծնողները վճարում են, դյուղից ուղարկելով յուղ, պանիր, ալյուր և այլն։ Շատ գյուղացի աշակերտներ, որոնց ծնողները բոլորովին աղքատ են, վճարում են իրանց ծառայությամբ։ Դա մի զարմանալի միջոց է ուսում առնելու, որով հայտնվում է այն սաստիկ ծարավը, որ քաշում է մեր մանուկներին դեպի դպրոցը։ Գյուղից եկած աշակերտը մտնում է մի ընտանիքի մեջ որպես ծառա, առավոտյան վաղ վեր է կենում, տնային գործերը կատարում է, հետո գնում է վարժատուն, այնտեղ մնում է մինչև ճաշ, և վերադառնալով, կրկին շարունակում է իր տնային ծառայությունները. ե՞րբ է պատրաստում նա իր դասերը, դա մի հրաշք է, միայն գոհ է, որ նրան տալիս են մի կտոր հաց, հագցնում են տան հնոտիքներով, թեև պատահած ժամանակը սաստիկ ծեծում են, նրան գրտնում են որևիցե զանցառություն իր պարտավորությունների մեջ։ Այսպես է սկսում գյուղացի աղքատ ուսանողը, և պատերազմելով ամեն դժվարությունների հետ, հասնում է մինչև համալսարան։

Գավառներում ծնողները սաստիկ խիստ են դեպի ուսանող աշակերտը. նրան պահում են զգույշ հսկողության ներքո, որպես մի աղջիկ, և դրսումը կորցրած ամեն մի ավելորդ րոպեի համար հաշիվ են պահանջում։ Միջոց ունեցող հայրերը որդուն առանց սպասավորի դրսրոց չեն ուղարկում, և նա նրևիայությունից սովորում է այն բանին, որ միշտ մեկը պետք է առաջնորդեր նրան կյանքի մեջ։ Այսպես, բարոյականության հետ պահպանվում է և աշակերտի անձնավորությունն աշխարհի հետ։ Ամենահարուստ աղայի որդին դրպանում չունի մի կոպեկ ծախսելու համար, և այդ, հոր կարծիքով, կպահեր նրան շռայլությունից, բայց որդին երբեմն խարջելու փող է գտնում... Ո՞րտեղից, աստված գիտե...

Գավառական քաղաքներում նշմարվում է նույնը, ինչ որ տեսանք գյուղերում, այսինքն, թե մանուկների և թե ծնողների մեջ մի սաստիկ բաղձանք դեպի բարձրը և դեպի ավելի կատարյալը։ Ավարտելավ տեղային տարրական դպրոցում, աշակերտն աշխատում է դիմել Թիֆլիս, ինչ հնարքով և լիներ, մտնել այնտեղի գիմնազիաներից մեկի մեջ և հետո Մոսկվայում կամ Պետերբուրգում համալսարանական բարձր ուսում ստանալ։ Բայց ոչ բոլոր ծնողներն ունեն այնքան նյութական միջոցներ, որ կարողանային հոգալ որդու ծախսերը. այն ժամանակ ապրուստի հոգսն ընկնում է որդու վրա։ Ես ծանոթ եմ եղել Թիֆլիսում մի քանի գավառացի աղքատ գիմնազիստների հետ, որոնց աշխատությունները և անձնազրկությունը կատարյալ հերոսության են հասնում։ Բնակվում են մի քանի հոգի միասին մի խոնավ և նեղ սենյակում, առանց սպա-

սավորի, կերակրվում են օրը մի անգամ ամենաէժանագին հյուրանոցում, շատ անգամ ամբողջ օրեր անց են կացնում մի կտոր երշիկ ուտելով. բայց դարձյալ միշտ կտեսնեք նրանց ուրախ և գոհունակ դեմքով։ Դիմնազիայից տուն դառնալով, նրանք շտապով ճաշում են, հետո տարածվում են քաղաքի մեջ, ընտանիքներում կամ մասնավոր դպրոցներում դասեր տալու։ Շատ անգամ նրանց աշակերտները մեկը մյուսից կես վերստ կամ ավելի հեռավորության վրա են գտնվում, բայց այդ հոգ չէ, միայն թե դասեր լինեին։ Ամբողջ ճաշից հետո պտտելով քաղաքի մեկ ծայրից մինչև մյուսը, վերադառնում են տուն ուշ գիշերային պահուն, բոլորովին ուժաթափ։ Մի կամ երկու գավաթ թեյը սև հացով կազդուրում է նրանց, այնուհետև սկսում են պատրաստել իրանց սեփական դասերը։ Ամառային արձակուրդները մեծ հունձք են ընծայում գավառացի աղքատ գիմնազիստներին։ Նրանք պատրաստում են զանազան դպրոցների այս և այն դասատունը մտնելու համար աշակերտներ և փող են ստանում։ Այսպես մի կողմից իրանց ապրուստը հայթայթելով, մի կողմից իրանք սովորելով, մյուս կողմից ուրիշներին սովորեցնելով, աղքատ գիմնազիստները շարունակում են իրանց ուսումը։ Միևնույն ժամանակ նրանք չեն զրկում իրանց մի քանի բավականություններից, որպես են՝ երբեմն թատրոն գնալ, տեսնել մի լավ պիեսա, լսել մի նշանավոր երաժշտի, հասարակաց գրադարանից գիրք վեր առնել, կամ ընկերությամբ վճարելով, ստանալ մի լրագիր, ամսագիր և այլն։ Լինում են և այնպիսի երախտավորներ, որ իրանց վաստակած փողի ավելորդով օգնում են ընկերներին, կամ ուղարկում են իրանց չքավոր ծնողներին, որոնց թողել էին հայրենիքում։ Հայտնի բան է, որ միջոց ունեցող գիմնազիստները, որոնք ստանում են ծնողներից ամսական 50—60 ռուբլի, բոլորովին տարբեր պայմանների մեջ են սովորում։ Լավ կահավորված սենյակ, լավ ճաշ, զանազան տեսակ զվարճությունները և զբոսանքները նրանցից շատ ժամանակ են խլում, և այս պատճառով նրանք լինում են ավելի թույլ ուսանողներ, քան թե իրանց աղքատ հայրենակիցները։

Ես պառնում եմ դեպի այն աշակերտները, որոնք ուսանելու համար Թիֆլիս կամ ուրիշ քաղաքներ չեն գնում, այլ ավարտելով գավառական միջնակարգ դպրոցներում, մնում են այնտեղ և գործում են իրանց հայրենիքում։

Մեր ժամանակից 20—30 տարի առաջ, և կարելի է ասել այն օրից, երբ ռուսները տիրապետեցին Կովկասը, հայ երիտասարդության առջև բացվեցավ մի ընդարձակ ասպարեզ։ Նոր տիրապետողներն անծանոթ

լինելով երկրին և տեղային պայմաններին, և որ ավելի կարևորն է, իրանցից պատրաստի մարդիկ չունենալով, որ գիտենային զանազան շիղերի լեզուները, կարոտ էին տեղային գործիչների՝ նոր կառավարության բոլոր հիմնարկութիւնների մեջ։ Հայերի մեջ գտան ընդունակ գործիչներ։ Փոքր ի շատե ռուսերեն խոսող երիտասարդը, փոքր ի շատե ռուսերեն գրել-կարդալ իմացողը սուպայավ տեղ, պաշտոն և ծառայութիւն։ Դատարանները, պոլիցիանները, գանձատները, պոստերը և մաքսատները լցվեցան հայերով։ Ժամանակի սաստիկ պահանջը խարութիւն չէր գնում ոչ անձերի և ոչ ընդունակութիւնների մեջ, բավական էր, որ գործը «յոլա էին տանում»։ Այսպես շատերը հարստացան, շատերը բարձր աստիճանի հասան։

Բայց հետզհետե պահանջը պակսելով, կառավարութեան հիմնարկութիւններն ավելի կանոնավոր ձև ստանալով, ծառայել ցանկացողներից պահանջվեցավ մի որոշ չափով գիտութիւն։ Այժմ կարելի է հասկանալ, թե գավառական դպրոցներից դուրս բերած ողորմելի գիտութեան համեմատ ստացած պաշտոնն ինչ կլինի։ Համարյա բոլոր ավարտողները սկսում են գրագրութիւնից կամ ստոր պաշտոններից։ Սարսափելի բան է ամբողջ կյանքում, թեքված լինել գրասեղանի վրա, գրել և միշտ գրել։ Մարդը դառնում է կատարյալ մեքենա, երբ աշխատում է ձեռքը միայն, իսկ գլուխը մնում է անգործ։ Այստեղից հասկանալի է այն իդիոտութեան հասած բթամտութիւնը մեր ծառայողների, որ իսկույն աչքի է զարկում, երբ նրանց հետ խոսում ես։ Մշտապես թեքված լինելով գրասեղանի վրա, նրա իրանը նույնպես ծալված դիրք է ստանում, այդ ներգործութիւնն անցնում է սրտի, հոդու և ամբողջ բնավորութեան վրա։ Նրա մեջ ուղիղ ոչինչ չէ մնում։ Սաստիկ դյուրաթեք է լինում նա. ամեն հոդմից շարժվում է և ամեն ճնշման ներքո խոնարհվում է։ Այդ հատկութիւնները նպաստում են նրա առաջադիմութեանը, և քիչ չէ պատահում, որ ծերութեան հասակում դառնում է ստոլնաչալնիկի օդնական[2], կամ մի ավելի բարձր պաշտոն է ձեռք գցում։

Դատաստանական բարենորոգումներից հետո ռուսերեն խոսել և գրել-կարդալ իմացող երիտասարդների համար բացվեցավ մի նոր ասպարեզ ևս, ավելի ազատ և ավելի շահավետ։ Բոլորը վարպետվեցան փաստաբանութեան ախտով և սկսեցին սերտել օրենքների ստատուտներ։ Շատերն առանց ամենափոքր տեղեկութիւն ունենալու իրավաբանութիւնից, ընդունում էին մեծ-մեծ գործեր։ Դրանք ավելի թարգմաններ էին իրանց հավատարմատարների կողմից, քան թե փաստաբաններ։ Ժողովուրդը չգիտեր դատարանի լեզուն, ստիպված էր խոսող վարձել։ Բայց այս տե-

սակ անկիրթ, անուս փաստաբանների հաջողությունը մի քանի տարի միայն տևեց, երբ սկսեցին նրանցից պահանջել մի որոշ չափով գիտություն և վկայական։ Մեծ մասը զրկվեցավ իր պարապմունքից, և ապարիզը մնաց բարձր ուսում ստացածներին։

Գավառական դպրոցներում ավարտող երիտասարդներից ոչ բոլորը մտնում են արքունական ծառայությունների մեջ։ Ստոր պաշտոնով, չընչին ռոճիկ ստանալով, դժվար է ամբողջ ընտանիք պահել։ Նրանք տեսնում են, որ վաղեմի ժամանակների շահերը չեն մնացել, և, ինչպես ասում են՝ «խերը դուրս է եկել»։ Իսկ զինվորական ծառայության մեջ մտնողները բոլորովին աննշան թիվ են կազմում։ Շատերը սկսում են վաճառականություն անել, ձեռք են զարկում կապալների, կամ ազգային դպրոցներում վարժապետություն են անում։ Սակավ է և այսպիսիների թիվը, որ քահանա դառնային, կամ մտնեին մի վանքի մեջ վարդապետ լինելու համար։ Առհասարակ պետք է ասել, որ գավառական դպրոցների պատուղները խիստ փոքր առաջադիմություն են գործում կյանքի մեջ։ Այժմ օրըստօրե սահմանափակվում է այն բախտավորների ասպարեզը, որոնք շատ փոքր գիտությամբ, կամ ոչինչ գիտություն չունենալով, կարողանում էին առաջ գնալ։ Ես չեմ խոսում մի քանի անհատների մասին, որոնք ինքնակրթությամբ և բնական խելքով իրանց համար ճանապարհ են բաց անում առաջ գնալու։

Այժմ խոսենք գավառացի ուսանողների մասին, որոնք դիմում են Մոսկվա, Պետերբուրգ, արտասահման և, համալսարանական բարձր ուսում ստանալով, վերադառնում են դեպի իրանց հայրենիքը։

Գավառացի ուսանողները գլխավորապես ավարտում են իրավաբանական և բժշկական ֆակուլտետներում. երկու մասնագիտություններ, որոնց մասին այժմ մեծ պահանջ կա։ Վերադառնալով իրանց հայրենիքը, փոքրիկ քաղաքի տժգույն և տխուր կյանքը կարծես շուտով ձանձրացնում է նրանց. մի քանի ամիսներ որպես հյուր մնում են ծնողների մոտ, հետո գնում են Թիֆլիս, ուր կյանքն ավելի վայելուչ պայմաններ մեջ է դրված, ուր ասպարեզը լայն է, ուր վերջապես կարող են մի հարուստ աղջկա հետ պսակվել։ Կարծես նրանք այնքան մեծ և խոշոր մարդիկ լինեին, որ փոքրիկ քաղաքներում չեն զետեղվում։ Խիստ սակավներին միայն պատահում է մնալ գավառներում, բայց նրանք ևս իրանց կնիկները բերում են Թիֆլիսից, հայրենիքում իրանց զույգը չեն գտնում։ Իրավաբանները կամ պարապում են փաստաբանությունով, կամ նահանգական դատարանի անդամի պաշտոն են վարում, կամ բաց են անում նոտարիուսի կանտորա և կամ հաշտարար դատավոր են դառ-

նում որևիցե փոքրիկ քաղաքում։ Բժիշկները չեն պարապում ազատ պրակտիկայով, այլ արքունական պաշտոնի մեջ են վարում իրանց ծառայությունը։

Բայց ինչ որ ավելի աչքի է զարկում, այն է, որ այդ բարձր ուսում ստացած երիտասարդները գավառներում շուտով ենթարկվում են այնտեղի շրջանին, այն աստիճան փոխում են իրանց դույնը, որ չես կարող ճանաչել, թե մի ժամանակ դրանք ուսանողներ են եղել։ Ես մի քանիսներին միայն ճանաչում եմ, որոնք իսկապես չեն կորցրել իրանց արժանավորությունները, գործում են, աշխատում են և ցույց են տալիս կենդանության նշույլներ։ Բայց մեծ մասն այն աստիճան վայրենացել և բթամտացել են, որ կարծես թե ապրում են մի առանձնացած կղզու մեջ, որը բոլորովին կտրված էր ուսումնական աշխարհից։ Ոչինչ չեն կարդում, ոչ մի ժամանակակից հարցով չեն հետաքրքրվում, ուտում են, խմում են, քնում են, հաստանում են և պատահած ժամանակ արհամարհանքով ժպտում են, երբ խոսում ես նրանց հետ մի ազգային կամ հասարակական խնդրի վրա, կարծես, կամենալով ասել, թե՝ մենք ամեն բան փորձեցինք, այստեղ ոչինչ չէ կարելի շինել։ Մեր դպրոցները, մեր ևկեղեցին, մեր նոր լեզուն, մեր լրագրությունը, մեր նոր ծաղկող գրականությունն այն աստիճան բարկացնում են նրանց, որ մինչև անգամ ասել են տալիս, թե՝ խնդիացել եք, ո՞ւմ համար եք աշխատում, ո՞ւմ համար եք գրում, եթե մեզ համար է, մենք ամեն բան գիտենք, իսկ եթե ամբոխի համար է, նա չէ կարդում։ Անցնում են տարիներ, բարձր ուսում ստացած երիտասարդն ալևորվում է, պառավում է, բայց դարձյալ նա իրան երևակայում է նոր մտքի, նոր գաղափարների ներկայացուցիչ, չնայելով, որ նրա շուրջը ամեն ինչ փոխվել էր, իսկ ինքն անշարժ, անփոփոխ մնացել էր իր տեղում, առաջադիմության մի քայլ անգամ չանելով։

Կհաղորդեմ մի քանի գծեր առհասարակ գավառական երիտասարդության կյանքից։

Հասարակական կյանքը գավառական քաղաքներում, եթե չասեմ բոլորովին քարացած է, բայց և չէ արտահայտում այն կենդանությունը, որ կարելի է տեսնել փոքր ի շատե զարգացած հասարակության մեջ։ Գավառները դեռ չեն թոթափել իրանցից հին պարսկական փոշին, ասիականությունը դեռ տիրում է իր բոլոր այլանդակ ձևերի մեջ։ Ամեն մարդ իր տխրությունը և իր զվարճություններն անց է կացնում իր տան չորս պատերի մեջ։ Նա իր զգացմունքները չէ բաժանում հասարակության հետ։ Ամեն մարդ իր շահերի համար է աշխատում, իսկ հասարակաց շահերի

վրա չէ մտածում։ Այստեղից ինքնըստինքյան առաջ է գալիս անհատների առանձնությունը, և մի ընդհանուր կապ չէ ամբողջացնում նրանց այն միության մեջ, որ կոչվում է հասարակական կյանք։ Այս բանին փոքր արգելք չէ լինում և այն, որ հասարակությունը կազմված է տարբեր ցեղերից, որոնք բոլորովին բաժանված են միմյանցից թե լեզվով, թե կրոնով, թե սովորություններով և թե իրանց շահերով։

Երիտասարդությունն անց է կացնում իր օրերը կատարյալ դատարկության մեջ, եթե նա իր գործերով զբաղված չէր, ուրիշ մի զվարճություն չկա, որ պարապ ժամանակում զբաղեցներ նրան։ Մի քանի քաղաքներում վերջին տարիներում միայն հայտնվեցան հասարակաց պարտեզներ, ուր ծառերը դեռ սալեր չեն ձգում, և ճեմելիքները ծածկված են խոտերով։ Խիստ սակավ երեկոներ կարելի է տեսնել այնտեղ մի ծառայող ռուս զբոսնում է իր կնոջ հետ. տեղացի կնիկները տան մեջ փակված են, նրանց դուրս չեն թողնում։ Վաճառական և արհեստավոր մարդիկ չեք տեսնի այդ պարտեզներում, նրանք ամբողջ օրը զբաղված են իրանց գործերով, երեկոյան խանութները կկողպեն, կդնան կմտնեն իրանց տունը, դռները կփակեն։ Ժողովրդի այդ դասերն առողջության վրա չեն մտածում։ Պարտեզներում կարելի է տեսնել երբեմն մի քանի ծառայողներ և մանր աստիճանավորներ միայն, և երբեմն պարոցների վարժապետներին, երբ մանավանդ ածվում էր զինվորական մուզիկա։

Կաֆեներ և հյուրանոցներ կամ բոլորովին չկան գավառական քաղաքներում, կամ եթե պատահում են այսպիսիները, նրանք ծառայում են անցուդարձ անող օտարականների համար միայն, երբ ցանկանում էին բավական թանկ գնով մի փոքր ի շատե մաքուր տեղ գտնել օթևանելու։ Սոփական հին քարվանսարաները դեռ չեն կորցրել իրանց նշանակությունը. նրանք ծառայում են և որպես մթևրանոց ապրանքների, և՛ որպես հյուրանոց նույն ապրանքները կրող անասունների և վաճառականների։ Վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ այն քաղաքներում, որ ավելի մոտ էին կռվի դաշտին, որպես են՝ Երևանը, Ալեքսանդրապոլը, հայտնվեցան բազմաթիվ հյուրանոցներ, որոնք անմիջապես փակվեցան պատերազմը վերջանալուց հետո։ Կաֆեն և հյուրանոցը դեռ ժողովրդի պահանջ չեն դարձել գավառներում. բնիկներից ոչ ոք այնտեղ չէ մտնում, չէ ճաշում. ամեն մարդ ունի իր խոհանոցը. իսկ մի քանի ծառայող ռուսներով հյուրանոց պահպանել անկարելի է։ Պետք է ասած, որ նրանք էլ ենթարկվում են տեղային սովորություններին։ Եվ այսպես, հիշյալ հիմնարկությունները կամ գոյություն չունեն, կամ եթե

գտնվում են, երիտասարդությունը նրանց մեջ չէ խմբվում։ Միայն Ալեքսանդրապոլում կարելի է տեսնել մի տեսակ կաֆեներ տաճկական ձևով, ուր կարելի է նարգիլե ծխել և փոքրիկ ֆինջաններով դառն սուրճ խմել։ Այնտեղ հայտնվում է երբեմն մի թափառական երգիչ, ածում է թամբուրայի վրա և երգում է[3]։ Դա տաճկական սրճանոց է, որ բերել էին իրանց հետ այդ քաղաքի գաղթական բնակիչները Թուրքիայի Հայաստանից։ Ուրիշ հիմնարկություններ ևս չեմ ճանաչում, ուր կարելի լիներ հավաքվել, խոսակցել և ժամանակ անցկացնել, բացի դինետներից։ Այդ անբարոյականացնող հիմնարկությունները մեծ դեր են խաղում գավառացիների կյանքի մեջ։

Վերջին տարիներում միայն մի քանի քաղաքներում հիմնվեցան կլուբներ, որոնք միացնում են իրանց մեջ և հյուրանոց, ուր կարելի է կերակուր գտնել, եթե մի ժամ առաջ կպատվիրեիր պատրաստել։ Կլուբները դարձյալ բնիկների պահանջներից առաջ չեն ելել, նրանց հիմնողները կամ ինիցիատիվ տվողները եղել են ռուս և օտարազգի ծառայողները, որոնց պետք էր մի կենտրոն հավաքվելու համար։ Բայց որովհետև միայն փոքրաթիվ ռուսներով կլուբները պահպանվել կարող չէին, այս պատճառով և հայ ծառայողներն իրանց ռուս մեծավորների «խաթրը չկոտրելու համար» հարկադրված անդամ են գրվել։ Թե այսպես և թե այնպես, կլուբները, իրանց որոշյալ պայմանների պատճառով, հասարակաց հիմնարկություն չէ կարելի համարել, որովհետև նրանք մատչելի չեն այս և այն վիճակի մեջ գտնվող երիտասարդներին, եթե անդամակցություն ունենալու միջոցներ չունենին։ Այս բոլորից կարելի է եզրակացնել, թե ինչ տեսակ հասարակություն է հավաքվում կլուբներում՝ միայն զինվորական և քաղաքական ծառայողներ, անգործ ազնվականներ, երբեմն վարժապետներ, բայց ոչ երբեք մի վաճառական կամ արհեստավոր մարդ։ Այնտեղ հավաքվում են միմիայն թուղթ և բիլիարդ խաղալու համար։ Թեև մի առանձին սենյակում ձևի համար դրասեղանի վրա ածած են մի քանի լրագրներ, բայց նրանց ոչ ոք չէ նայում։ Բղթախաղը որպես ժանտախտ տարածված է գավառներում, մանավանդ այն հասարակության մեջ, որ համարվում է ընտրյալ, բարձր հասարակություն։ Եվ այդ շատ բնական է, քանի որ ուրիշ զբաղմունք չկա. պետք է մի բանով սպանել ժամանակը։ Բայց մեծ մասը ընտրել է բղթախաղը որպես ապրուստի միջոց։ Կլուբներում շատ անգամ ամբողջ դիշերները լուսացնում են խաղալով։ Շատ անգամ խաղում են առանց գրպանում մի կոպեկ ունենալու, պարտքով միայն։ Ամսական 15 ռուբլի սառցողը մեկ դիշերվա մեջ տանել է տալիս մի քանի հարյուրներ։ Ո՞րտեղից պետք է

վճարն։ Աստված գիտե՝ կլուբներում երբեմն լինում են պարահանդեսներ, ուր պարում են գլխավորապես ռուս կամ օտարազգի աստիճանավորների կանայքը, որոնք այնքան սակավ են թվով, որ հազիվ 10 կավալերին հասնում է մի դամա։

Գավառներում թատրոններ չկան. շատ-շատ ամեն տարի լինում է սիրողների մի կամ երկու ներկայացում բարեգործական նպատակով։ Տոմսակները զոռով են ծախվում։

Հասարակաց դրադարան կամ ընթերցարաններ չկան։ Ինձ պատահել է տեսնել մի քանի քաղաքներում բուն հայոց ընթերցարաններ, բայց երբեք չեմ տեսել, որ մի մարդ այնտեղ նստած կարդալիս լիներ։ Եվ ի՞նչպես կարելի է այդ ողորմելի հիմնարկութիւններն ընթերցարաններ կոչել, ուր բացի մի քանի հնացած գրքերից, բացի երկու-երեք լրագրից, կարդալու համար ուրիշ բան չես գտնի։ Գրավաճառանոց ոչ մի քաղաքում չկա, եթե հարկավոր էր մի գիրք, պետք է բերել տալ Թիֆլիսից։

Կինը, որպես դյուղերում, այնպես էլ գավառական քաղաքներում բոլորովին աննշան դեր է խաղում երիտասարդների կյանքի մեջ։ Կարելի է կարճապես ասել, որ նրանք բացի իրանց մայրերից և քույրերից, ուրիշ կնոջ երես չեն տեսնում։ Նըքայրը եղբոր կնոջ հետ խոսակցելու իրավունք չունի։ Այստեղից հասկանալի է, որ օտար ընտանիքների մեջ մտնելիս, երիտասարդները միայն կարող են տղամարդերի հետ տեսնվել։ Հարեմական դրութիւնը դեռ տիրում է ընտանիքի մեջ։ Բողյալ այդ, երիտասարդները մուտք չունեն օտար ընտանիքների մեջ, եթե մերձավոր ազգական չլինեին։ Գավառներում մի բարեկամի կամ ծանոթի տուն կարող ես մտնել այն ժամանակ միայն, երբ քեզ հյուր են կանչում։ Գործի համար կարելի է տեսնվել փողոցում կամ բազարում, ուր կարող ես ուղած մարդիդ միշտ գտնել։ Եթե մի երիտասարդ սկսում է հաճախել որևիցե տուն, իսկույն աչքի է ղարկում, իսկույն կասկածանքով են նայում՝ «այստեղ մի բան կա»,— մտածում է ամեն մարդ։ Ջամուսնացած երիտասարդը վարում է կատարյալ ամուրի կյանք։ Գավառներում բացարձակ ախտեր չկան։ Խիստ սակավ է այն կնիկների թիվը, որ թեթև վարքի տեր լինեն։ Մնում են «համբերատար տները», ուր չես գտնի երկու կամ երեք կին ամբողջ քաղաքի համար։ Այստեղ մտնում է երիտասարդը մեծ երկյուղով, ամաչում է ոչ միայն ծնողներից, այլև մինչև անգամ իր մտերիմ ընկերներից։ Հասարակութիւնը խիստ սուր աչքով է նայում դեպի այս տեսակ մոլորութիւնները։ Եթե պատահում է մի կին, որ փոքր ի շատե շեղված լիներ բարոյական ճանապարհից, անպատճառ նա եկած պիտի լիներ Թիֆլիսից։ Այսպիսիները լինում են ըստ

մեծի մասին եկվոր ռուս ծառայողների աղախիններ, որ չեն ցանկանում հետևել տերերին՝ նրանց վերադարձի ժամանակ։ Տեղային հայ կնիկները չեն մտնում հասարակաց տները. նրան պատահում է մեկին մեղանչել, այդ անում է նա ծածկաբար։ Իսկ մահմեդական կնիկներին միշտ սպասում է մահ իրանց հավատակիցների կողմից, երբ ոչ մահմեդականների հետ հարաբերություն են ունենում։ Կրոնական ֆանատիզմը մեծ վիհ է ձգել հաղորդակցությունների մեջ։

Վերջացնում եմ գավառացիների մասին, ձգելով մի թեթև հայացք նրանց հասարակական, ազգային և կրոնական հատկանիշների վրա։

Առհասարակ պետք է ասել, որ գավառներում դեռ նոր է սկսվել նոր սերունդի մաքառումը հնի դեմ։ Հաջողությունը նորերի կողմն է. հները հետզհետե կորցնում են իրանց բռնած դիրքերը, որոնց վրա գարերով ամրացած՝ իշխում էին ժամանակը, կյանքի այժմյան պայմանները, որոնց մեջ անընդունակ են հները, և մտավոր զարգացումը նպաստում են նոր սերնդի հաղթությանը։ Ոչ միայն ապագան դրանց է պատկանում, այլև ձեռք են ձգել և ներկայի մի մասը։ Առաջ որդին հորից խորհուրդ-ներ էր հարցնում, այժմ հայրը ստիպված է որդու հետ մասլահաթներ անել։ Գործը, իրավ է, դանդաղ է ընթանում, բայց հաջողությունը մեծ ապագա է խոստանում։

Երիտասարդությունն այժմ աշխատում է իր տիրապետության ներքո առնել հասարակաց առաջադիմության երկու գլխավոր գործիչները՝ ընտանիքը և դպրոցը։ Ընտանիքի մեջ նա չանք է անում վերանորոգություններ մտցնել, իսկ դպրոցի հոգաբարձությունն իր ձեռքն առնել։ Այդ անում է նա գուցե առանց նախատեսության, առանց սկզբից խորհած նպատակների, և միայն դրդվելով իր հասակին հատուկ զգացմունքներից, բայց հետևանքը բարի է։ Ընտանիքի վերանորոգությունը սկսվում է կնոջ դրությունից. նոր պսակված երիտասարդն աշխատում է իր ամուսնին փոքր ի շատե ազատ վիճակի մեջ դնել. փոխում է նրա հագուստի հին ձևերը, ցանկանում է, որ նրա հետ վարվելին որպես մի մարդու հետ, և պատահած ժամանակ նրան չէ թաքցնում իր բարեկամներից։ Օրինակները սակավ են, բայց այդ սակավ օրինակները բազմաթիվ հետևողներ են գտնում։ Նույնը անում է երիտասարդը և իր քույրերի վերաբերությամբ։ Սրբեմն պատահում են ընդդիմադրություններ. ալևոր ծնողները հակառակում են, և երիտասարդը ստիպված է լինում թողնել իր հայրենական տունը և առանձին բնակվել։

Հասարակական գործերում, բացի դպրոցից, երիտասարդությունը մի ուրիշ հող չունի։ Բայց պետք է նկատել, որպես ընտանիքի մեջ դեռևս

իր հեղինակությունը չի կորցրել ծերունի հայրը, այնպես էլ հասարակական գործերում դեռևս մեծ նշանակություն ունի աղան և աղայությունը: Դպրոցների հոգաբարձությունից խիստ դժվար է լինում հեռացնել այդ հիմար, տգետ և բոլորովին անգրագետ փառասերներին, որոնք բացի վնասից և խռովություններից, մի այլ օգուտ չեն բերում: Բայց երիտասարդությունը փոքր առ փոքր հաղթող է հանդիսանում և իր ձեռքն է ձգում դպրոցները:

Խոսելով դպրոցների հոգաբարձության վրա, ես չեմ կարող չհիշել վարժապետներին, որոնք ներկայացնում են գավառական քաղաքների մտավոր զորության գլխավոր մասը: Ամեն տեղ դպրոցների սաստիկ բազմացնելու և նոր դասատներ բացվելու համեմատ, պետրատի վարժապետների թիվը շատ փոքր լինելով, յուրաքանչյուր բախտախնդիր, յուրաքանչյուր անուս տիրացուն մուտք է գտնում գավառական դպրոցներում: Թիֆլիսում անգործ թափառող անաջողակները վազում են դեպի գավառները և իրանց ձեռքն են առնում կրթության գործը: Հայտնի է, որ մարդիկ, որոնք իրանց գիտությամբ չէին կարող ապահովել բայ անել, միշտ դիմում են խարդախ և անազնիվ միջոցների: Դրանով կարելի է բացատրել, թե ինչու ինտրիգան և խռովությունները միշտ անպակաս են լինում գավառական դպրոցներից: Այստեղից հասկանալի է, թե ինչ բարոյական ազդեցություն կարող էր ունենալ վարժապետն իր աշակերտների վրա, որոնք ամեն օր լսում են նրա մասին շատ գայթակղական խոսքեր, նկատում են նրա մոլի վարքը, ականատես են լինում նրա կռիվներին իր ընկերների հետ: Վարժապետի բարոյականությունն ազդում է նույնիսկ ժողովրդի վրա, որ քննում է նրա յուրաքանչյուր քայլը, և որի վարմունքը չէր կարող անհայտ մնալ փոքրիկ քաղաքում, ուր բամբասանքը հասարակաց խոսակցության գլխավոր նյութն է կազմում:

Մի քանի խոսք գավառների մտավորական զարգացած երիտասարդության մասին, որոնք ներկայացնում են, եթե այսպես կարելի է կոչել, գավառների ինտելիգենցիան: Բարձր ուսում ստացած համալսարանական երիտասարդությունը, որպես նկատեցի այս գլխի մեջ, իրան հեռու է պահում ազգային գործերից, նա ապրում է իր համար, հասարակությունը չէ հետաքրքրում նրան: Նրանք անպատվություն են համարում թղթակցել որևիցե հայոց լրագրին (պետք է խոստովանել, որ շնորհք էլ չունեն), աշխատակցել մի ամսագրի, կամ հրատարակել մի փոքրիկ գրքույկ: Ուսումը նրանց միջ ոչինչ չէ արդյունաբերում: Բացառությունները խիստ մանավոր են: Փոքր ի շատե կենդանություն երևում է ոչ մի բարձր գպրոցում չավարտած, ինքնուս երիտասարդների մեջ. դրանք են,

որ ամեն բանի վրա գրում են, ամեն բանի վրա դատում են, շատ անգամ ծուռ և սխալ կերպով, բայց գրում են, բանի որ ուրիշ լուրը չկա։ Դրանք գործում են, որքան կարող է գործել մի մարդ, որ բնական խելք և սաստիկ եռանդ ունի, բայց մի նշանավոր բան արդյունաբերելու համար պակասում է նրան հիմնավոր գիտությունը։

Կրոնական զգացմունք ավելի վատ է պահված գավառներում։ Երիտասարդությունը թեև չէ համակրում եկեղեցականին, բայց սիրում է իր եկեղեցին։ Անհավատությունը երիտասարդների մեջ կորցրել է իր նշանակությունը, նախապաշարմունքները չեն կաշկանդում նրան։ Շատերի մեջ հայտնվում է բողոք դեպի եկեղեցական այս և այն ծիսապաշտությունը։ Բայց դարձյալ նրանք հաճախում են հանդիսաներին, որովհետև կարծում են, թե այդ բոլորը դեռևս հարկավոր են անզարգացած ժողովուրդն իր եկեղեցու հետ կապված և հայության մեջ հաստատուն պահելու համար։ Ազգայնության գաղափարն ավելի զարգացած է գավառական երիտասարդության մեջ. նա հասնում է մինչև ազգասիրական մոլեռանդության։ Բայի մի քանի մանր աստիճանավորներից, չեք գտնի մեկին, որ ամոթ համարեր հայերեն խոսելը։ Որպես հայ հասարակության մեջ, այնպես էլ ընտանիքներում տիրապետում է մայրենի լեզուն։ Բայց չեմ կարող չհիշել հայերի այն ընդհանուր մոլությունը, որ սովորական է դարձել և մեր գավառներում. տեսնում ես մի տեղ, մի ժողովի մեջ, մի խմբի մեջ տասն հայ, իսկ նրանց թվում մի օտարազգի, անպատճառ տասը հոգի հայերը կսկսեն մեկ օտարականի լեզվով խոսել, ինչ ազգից և լիներ նա։ Չգիտեմ ե՞րբ պետք է հայն ազգային հպարտություն ունենա։

Գ

ՈՒՍԱՆՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Իսկապես մենք չունենք այն տարրը, որ հասկացվում է բառիս ուսանող կամ ուսանողություն։ Ասելով գերմանական ուսանողություն, ֆրանսիական ուսանողություն, մենք իսկույն ըմբռնում ենք մի միտք բոլորովին որոշ և կազմակերպված տիպերի մասին, որ հայտնի են իրանց գաղափարներով, ձգտումներով և հատկանիշ առանձնություններով։ Բայց հայ ուսանող ասելով, մենք հասկանում ենք միայն բարձր ուսում ստա-

ցած երիտասարդ, որ սովորել էր այս և այն համալսարանում, և ավելի ոչինչ։ Այդ տարրը մեղանում մի որոշ ձև չէ ստացել. նա դեռ իր քաոսական դրության մեջն է գտնվում։ Եվ շատ բնական է, որովհետև մի ազգ, որ սեպհական համալսարան չունի, նա չի էլ կարող ունենալ իր հատուկ ուսանողությունը։ Գիտությունն, արդարև համազգային սեպհականություն է, բայց ոդին, որ համալսարանի մթնոլորտը ներշնչում է ուսանողի մեջ և տալիս է նրա բնավորության մի որոշ գույն, դա առանձնական նշանակություն ունի։ Այդ պատճառով շատ դժվարին է ներկայացնել հայ ուսանողությունը որպես մի կազմակերպված մարմին և նկարել նրա պատկերն իր ամբողջական ձևի մեջ, քանի որ նրանք ուսանում են զանազան պետությունների զանազան համալսարաններում։ Այսուամենայնիվ, ես կաշխատեմ իմ ընթերցողներին մոտավորապես ծանոթացնել այդ հասարակության հետ, որ համարվում է նոր սերընդի ներկայացուցիչը*։

Հայ ուսանողները սովորում են մեծ մասամբ Ռուսաստանի համալսարաններում և ընտրում են գլխավորապես Ս. Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանները, իսկ փոքր թվով դիմում են արտասահման՝ Գերմանիա, Ֆրանսիա և Ջվիցերիա։ Սկսենք առաջ Ռուսաստանի ուսանողների մասին։

Ես ի նկատի ունեմ երկու մայրաքաղաքների, այսինքն՝ Ս. Պետերբուրգի և Մոսկվայի ուսանողներին։ Հայ ընտանիքի մեջ սեղմված և փոքրիկ գավառական քաղաքներում դեռ աչքերը չբացված երիտասարդը հանկարծ ընկնում է մեծ աշխարհի ծովի մեջ։ Ընկերները վարձում են նրա համար մի կահավորված սենյակ, և նա սկզբում, կարծես, վախենում է դրսի լույսից և պատվում է իր համազգիների նեղ շրջանի մեջ։ Բավական պատրաստված չլինելով կյանքի համար, նա իրան միշտ հեռու է պահում հասարակությունից, ռուս կամ օտարազգի ուսանողների հետ հարաբերություն չէ կազմում, նրանց ընտանիքների մեջ չէ մտնում, և հայ ընտանիքներից հազիվ է պատահում, որ իրանց մոտ ուսանողներ ընդունեին, եթե տանը հասած աղջիկ չունեին, որին դժվար էր մայրաքաղաքում «խարջել»։ Երբեմն նա տեսնվում է հայ հասարակության հետ, երբ, աղգասիրությունից դրդված, կիրակի կամ տոն օրերում հայոց եկեղեցի է գնում։ Եվ այսպես բնականաբար կազմվում է հայ ուսանող-

---

* Ես իմ տեղեկություններն առհասարակ ուսանողական կյանքի մասին քաղել եմ զանազան գրքերից, իսկ ինչ որ վերաբերում է հայ ուսանողներին, այդ վերաուղել եմ իմ բարեկամներից։

նների նեղ և սահմանափակ շրջանը, որ միշտ առանձնացած և անխառն է մնում օտար տարրերից։ Ճանաչ մեր աղգասերներից խիստ գոհացուցիչ են գտնում այդ դրությունը, մտածելով, թե այսպիսով հայ ուսանողները պահպանում են իրանց հայությունը և չեն օտարանում։ Բայց իմ կարծիքով, կյանքի միջ կուլ չգնալու համար պետք է մտնել նո՛ւյն իսկ կյանքի մեջ, որպես ծովի մեջ չխեղդվելու համար պետք է անպատճառ ջրի մեջ մտնել և լողալ սովորել...

Այսպես առանձնացած կյանք վարելով, իրանց նեղ հայկական շրջանից չդուրս գալով, օտարազգի ուսանողներից և օտարազգի ընտանիքներից միշտ իրանց հեռու պահելով, հայ ուսանողները, թեև պահպանում են իրանց ցեղական հատկությունները, բայց միևնույն ժամանակ չեն փոխում իրանց բնավորությունը և իրանց վարքը, որ շատ կարող էին քաղաքակրթվելու։ Բայի դրանից, նրանք մտավորապես ևս չեն վարգանում։ Ուսանողն ավելի շատ բան սովորում է դրսի աշխարհից, քան թե համալսարանի ամբիոնից։ Կյանքը, ահա՛ մարդու գլխավոր վարժապետը։ Ով որ իրեն հեռու է պահում կյանքից, մնում է անկիրթ, անտաշ և վայրենի։ Դրանով կարելի է բացատրել հայ ուսանողների նեղ աշխարհայեցությունը, որ միշտ սահմանափակված է մնում նախապաշարմունքների շրջանակի մեջ։

Ես հիշեցի հայկական ուսանողների հայկական շրջան և այլն, բայց իսկապես այդ էլ չկա։ Ի՞նչ շրջան կարող է կազմվել հայ ուսանողների մեջ, քանի որ նրանց մեջ ոչինչ կապ չկա, քանի որ ոչ մի ընդհանուր միտք և ոչ մի ընդհանուր նպատակ չէ միացնում նրանց։ Նրանք միայն հայրենակցական և ազգակցական կապեր ունեն և ավելի ոչինչ։ Հայ ուսանողը երբեմն հայ գնկերի մոտ է գնում, նրա հետ տեսնվում է, նրա հետ ժամանակ է անցկացնում, որովհետև մի ուրիշին չէ ճանաչում։ Իսկ նա իր ներքին կյանքի մեջ ևս բոլորովին առանձնացած է ապրում, առանց սերտ հարաբերություններ ունենալու նույնիսկ իր ազգակիցների հետ։ Կարճ ասեմ, նա իր բավականությունները, իր զվարճությունները և իր զարգացումը գտնում է իր սենյակի չորս պատերի մեջ։ Բացառությունները խիստ աննշան են։

Կբերեմ մի քանի պատկերներ նրանց կյանքից։

Մտնում ես ուսանողի սենյակը, այնտեղ կտեսնես մի քանի աթոռներ, մահճակալ և գրասեղան, որի վրա մի թղթի կտոր անգամ չես գտնի գրելու համար։ Թանաքամանի մեջ մի անգամ ածված մելանը վաղուց է ցամաքել։ Գրքեր չես տեսնի։ Գրասեղանի վրա դրած են մի քանի վիմագրությամբ տպված տետրակներ միայն՝ դրանք պրոֆեսորի

լկկյիանների տետրակներն են, որոնց վրա մի թերթ փռշիր է նստած, երևի ուսանողի ձեռքը վազուց չէ դիպել նրանց։ Սենյակի մեջ աչքիս են ընկնում կանացի պատճառանքներ, ժապավենի կտորներ, երկայն գուլպաներ և այլն։ Դրանք ի՞նչ են շինում այնտեղ։ Ուսանողը սերուհու հետ է ապրում։

Եթե անսենք, թե ինչ տեսակ կնիկներ դեր են խաղում ուսանողների կյանքի մեջ, հասկանալի կլինի նրանց քաղաքակրթության աստիճանը։ Մոսկվայում և Պետերբուրգում կա մի ամբողջ դաս աղջիկների, որոնք կոչվում են սպիտակեղենների կարուհիք (белошвейка). այդ ողորմելի արարածները մողնի մագազինների դործավորներ են, որոնք երբ ձանձրանում են աշխատությունից, մտնում են ուսանողի մենարանը զվարճանալու համար։ Մի կնոջ սեր կապում է ուսանողին այդ աղջիկների հետ, որոնք այնքան անդամ խարված են երիտասարդներից, որ իրանք էլ այլևս չեն հավատում սերին։ Ուսանողն անդադար փոխում է նրանց, որպես հնացած կոշիկներ։ Բայց լինում են այնպիսի միամիտներ, որոնք, խաբվելով երիտասարդի խոստումնքներից, իսկապես սիրում են նրան։ Երիտասարդը տարիներով ապրում է նրա հետ, ավարտում է իր ուսումը և վերադառնում է իր հայրենիքը, իսկ թերուհուն, որպես մի լաթի կտոր, ձգում է մի կողմ, առանց խղճահարվելու և առանց բնավ մտածելու, թե ում խնամակալությանն է թողնում իր սիրո պտուղները... Դնացող ընկերոջ սիրուհին մնում է մնացողին, և այսպես նա անցնում է ձեռքից ձեռք և երբեք չէ դուրս գալիս ուսանողների աշխարհից։

Իմ վերևի նկարագրությունը դեռ բավական ազնիվ ձևն է ուսանողների հարաբերությանն կանանց հետ։ Բայց լինում են և այնպիսի վիլացած բնավորություններ, որ հաճախում են և հասարակաց տները։ Մեկն այս ասպարեզի հերոսներից ինձ պատմում էր, թե ինքն ամբողջ օրը քնում էր, իսկ գիշերը սկսում էր ամենարարձր հասարակաց տից, ուր կարելի էր գտնել պիանո, լավ նախաճաշիկ և նուրբ ըմպելիքներ, և առավոտյան վերջացնում էր այն ցած և կեղտոտ տներում, ուր բավական էր հինգ կոպեկ միայն ծախսել։ «Ինչո՞ւ»,— հարցրի նա։ «Այնպես, այդ զվարճություն էր պատճառում ինձ»,— պատասխանեց նա։ Բայց պատահում են և այնպիսի անպնդիվներ, որ գտնում են մի պառավ, բայց հարուստ այրի կին և ապրում են նրա հետ և նրա հաշվով։

Ուրիշ զվարճություններից, որ կարող էին կրթողական ազդեցություն ունենալ, զուրկ են հայ ուսանողները։ Թատրոն հազիվ են գնում, թատրոնով հետաքրքրվում են այն ժամանակ միայն, երբ պետք էր տեսնել մի սիրուն պարուհի, կամ լսել մի հռչակավոր երգչուհու։ Կաֆեներում ժամանակ չեն անցկացնում, այլ իրանց հայկական սովորությամբ հա-

վաքվում են մի ընկերոջ սենյակը, «տնավարի» կերպով արաղ են խմում, ծխում են և թուղթ են խաղում. արաղը և թղթախաղը, ահա գլխավոր պարապմունքները, որ զբաղեցնում են ուսանողներին։ Այսպիսի շրջաններում, որոնք խաղալու փող չունեն, նստում են, կամ ապուշ կերպով նայում են խաղացողների դործողությանը, և կամ մի կողմ քաշված, խոսում են, վիճում են բոլորովին իրանց անծանոթ, բոլորովին չսովորած և չկարդացած առարկաների վրա։ Հյուրանոց մտնում են միայն ճաշելու համար և անմիջապես դուրս են գալիս։ Ուսանողը երբեմն ամբողջ ամիսներ ուտում է մի հյուրանոցում պարտքով. երբ պարտքը շատացավ և անկարող էր վճարել, փոխում է հյուրանոցը, գտնում է մի նորը, ուր նրան չեն ճանաչում և նոր կրեդիտ է բաց անում։

Հայ ուսանողներն առհասարակ փոքր են սովորում, ոչ թե այն պատճառով, որ նրանցից շատ ժամանակ է խլում արաղը, թղթախաղը և սիրուհին, ոչ, այլ ընդհանրապես ծույլ են։ Խիստ սակավ է այն ուսանողների թիվը, որոնք ճշտությամբ հաճախում են դասախոսություններ լսելու. ոմանք գնում են շաբաթը մի անգամ, ոմանք ամիսը մի անգամ, իսկ ոմանք ամենևին չեն գնում։ Մեծ մասը, համարյա 10-ից 8-ը լսում են դասախոսություններ իրավաբանական և բժշկական ֆակուլտետներում։ Մի բան, որ ավելի հատկանիշ է Ռուսաստանի մեր ուսանողներին, այն է, որ նրանց չէ հրապուրում գիտության սերը, այլ ընտրում են այս և այն մասնագիտությունը որպես միջոց կյանքի մեջ ապահովում իրանց համար որևիցե դրություն հասատատելու։ Ավելի պարզ ասած, նրանք սովորում են դիպլոմի համար։ Բայց դիպլոմ ստանալու համար մեծ գիտություն, մեծ աշխատություն պետք չէ, բավական էր տարին մի քանի անգամ դասախոսություններ լսել, հետո սերտել մի քանի տետրակներ և քննություն տալ։ Որպես համբակի սերտողությամբ լցնում է իր գլխում ուսանողը գիտության պաշարն այդ ողորմելի վիմագրական տետրակներից, այսպես էլ շուտով դուրս է թռչում նրա գլխից, երբ թողնում է համալսարանը։ Բայց դիպլոմն իր զորությունը չէ կորցնում։ Իմ խոսքը բժիշկների մասին չէ, որոնցից պահանջվում է մի որոշ չափով գործնական աշխատություններ, բայց մնացյալ մասնագիտությունների մեջ գլխավորապես գործ է կատարում հիշողությունը, աշակերտի սերտողությունը, և ոչ թե գիտության յուրացնելը, կամ ուրիշ խնդրով՝ մարսելը։ Եվ ի՞նչով կարող էր հարստացնել ուսանողն իր մտավոր պաշարը, երբ նա իր մասնագիտության վերաբերյալ ոչ մի ուրիշ գիրք չէ կարդում, այլևս չեմ խոսում այն դանդաղության վրա, որ նա

հետաքրքրվեր զանազան գիտություններով, որոնք իր մասնագիտության հետ կապ չունեին։

Ռուսաստանի հայ ուսանողը ոչինչով չէ զանազանվում հայ վաճառականից։ Երևակայեցեք ձեզ մի թիֆլիսեցի, որ գնացել էր Մոսկվա. նա առնում է այն ապրանքները միայն, ինչ որ պետք էր իր կրպակի համար, ինչ որ ինքը ծախում էր, ինչ որ իր վաճառականության մասնաբաժինն էր կազմում. բայց ուրիշ ինչ էր վաճառվում առևտրական հրապարակի վրա, որոնցից դարձյալ կարելի էր շահվել, նրանցով չէ հետաքրքրվում։ Նույն կերպով վարվում է և հայ ուսանողը. նա բացի իր մասնագիտությունից ուրիշ գիտություններով չէ հետաքրքրվում։ Այս է պատճառը, որ մեր ուսանողներից չեն հայտնվում զորավոր տաղանդներ կամ փոքր ի շատե գիտնականներ։ Հայ ուսանողի ամբողջ գործունեությունը պայմանավորվում է մի հաշվի մեջ, սկզբից նախագծած մի վաճառականական հաշիվի մեջ, որ հասցնում է նպատակին։ Այս հաշիվից դուրս նա ուրիշ բան չէ ճանաչում։ Գիտությանը վերաբերվում է նա բոլորովին նրա պաշտոնական կողմից։ Նա հաշվել է, թե բժիշկ, փաստաբան, նոտար լինելու համար պետք է այսչափ գիտություն, որ կարողանա դիպլոմ ստանալ, և այն չափից չէ անց կենում։

Ուսանող մանկտին ամեն տարի ազգի մեջ և ամեն ժամանակներում եղել է ազատության սիրահար, բռնության թշնամի, առաջադիմության առաջնորդ և լուսավորության առաքյալ։ Նա պաշտպան է հանդիսացել նեղյալին և պահանջել է արդարություն մարդկանց հարաբերությունների մեջ։ Նա ցանկացել է ընդհանուր մարդկային բարին, ցանկացել է, որ մարդն ապրեր հանգիստ, գոհ և հարստահարիչ ձեռքը չհափշտակեր նրա օրական հացը։ Բայց հայ ուսանողը չափազանց եսական է. նա երբեք չէ հափշտակվում ընդհանուր մարդասիրական բարձր գաղափարներով։ Նա մինչև անգամ չէ մտածում իր ազգի վրա, այլ մտածում է իր անձի մասին միայն։ Իդևալ կոչված բանը նրա համար չկա. նա սաստիկ նյութապաշտ է։

Եվ ո՞րտեղից կարող էր նա հրապուրվել բարձր գաղափարներով, երբ գրքեր չէ կարդացել, ծանոթ է մի քանի հեղինակների անուններին հետ, առանց նրանց գործերի հետ ծանոթ լինելու. լրագրության չէ հետևում. և ամենևին չէ հետաքրքրվում, թե ինչ է կատարվում իր շուրջը, կամ ի՞նչ են անում զանազան ազգեր զանազան երկրներում։ Այս է պատճառը, որ հայ ուսանողի աշխարհայեցության շրջանակը մնում է խիստ նեղ, և նա այնքան փոքր ծանոթ է ժողովուրդների պատմության և նրանց կենցաղավարության պայմանների հետ, որ իր զարգացումով շատ չէ զանա-

զանվում մի հատարակ պիմնազիստի։ Բայց գտնվում են և այնպիսի խնդիրներ, որոնք պրավվում են բուն ռուս ուսանողների մեջ բորբոքվող մի քանի նոր գաղափարներով, որպես անմիտ թիթեռը հափշտակվում է ճրագի լույսով և այրում է իր թևիկները...

Ավելորդ չէր լինի համեմատության համար հիշել մի քանի գծեր ռուս ուսանողների մասին։

Ռուս ուսանողները, իրավ է, նույնպես ծույլ են, ընտրած մասնագիտությանը չեն հետևում, վատ են սովորում, բայց նրանք ունեն մի առավելություն, որ զուրկ են հայ ուսանողները։ Ռուս ուսանողները շատ կարդում են, թեև ոչ գիտական գրքեր, գոնե տենդենցիայով գրված բոմաններ, կրիտիկաններ, փիլիսոփայություններ, հետևում են ժամանակակից մարների և շարժումների և հետաքրքրվում են ժողովրդի սաոր դասի վիճակով, զբաղվում են քաղաքական մտքերով։ Կա և մի ուրիշ բան, որ ռուս ուսանողների գլխավոր հատկանիշն է, և որով որոշվում են նրանք եվրոպական բոլոր ուսանողներից, այն է, որ ռուս ուսանողը խիստ բարձր կարծիք ունի կնոջ վրա։ Նա կնոջ մեջ տեսնում է մի զորություն, որ մեծ դեր պիտի խաղա ժողովուրդների քաղաքակրթության մեջ, և ամեն ջանքով աշխատում է մշակել, զարդացնել այդ զորությունը։ Այս պատճառով նա ոչ միայն մեծ նշանակություն է տալիս կնոջ դաստիարակության, այլ ինքն ընտանիքների մեջ մանելով, միսիոնարի նման աշխատում է առանձնապես ազդել, ներգործել կնոջ վրա, զարդացնել նրա միտքը և ծանոթացնել ժամանակի ոգու հետ։ Այս է պատճառը, որ նա իրան հետու չէ պահում ընտանիքներից։ Տեսնում ենք մի ուսանող որևիցե ընտանիքի մեջ ծանոթանում է մի մանկահասակ աղջկա հետ, հենց որ նկատեց նրա մեջ ընդունակության մի նշույլ, իսկույն կսկսի ինքնակոչ վարժապետի դեր կատարել։ Նա այնքան շատ կարդացել է, այնքան բազմակողմանի հմտություններ ունի, որ աղջիկը երբեք նրանից չէ ձանձրանա։ Աղղեցությունը սկսվում է անզգալի կերպով։ Ուսանողը վազ կտա այս և այն գրատունը, կրնրե նրա համար նոր գրքեր. ցույց կտա, թե այսինչ ամսագրի մեջ մի հետաքրքրիր հոդված է տպված, որ արժեր կարդալ, շատ անգամ ինքը կնստե, կկարդա նրա համար, կբացատրե, կվիճե նրա հետ, վերջապես այնքան կաշխատի, մինչև աղջկա միտքը բոլորովին կդարձնի ուսումնասիրության վրա։ Եթե աղջիկը միջոցներ չուներ, նա իր վերշին կոպեկները կդրհե նրա համար զանազան ուսումնական պարագայք գնելով և չի խնայի ոչ ժամանակ և ոչ աշխատություն նրան զարդացնելու համար։ Պատահում է, որ աղջիկը բոլորովին անբախտանում է ուսանողի ազդեցության տակ, այսոսամենայնիվ, նրանից

պատրաստվում է մի էակ, որ հակառակ է ընթանում հասարակական նախապաշարմունքների դեմ։ Ուսանողների ազգեցությունն է պատճառը, որ այժմ բազմաթիվ ռուս աղջիկներ եվրոպական զանազան ուսումնական հիմնարկությունների մեջ դասախոսություններ են լսում։

Բայց հայ ուսանողը կնոջ վրա բոլորովին ասիական կետից է նայում։ Ապրելով իր հայրենակիցների նեղ շրջանում և ուրիշ խմբերի մեջ չմտնելով, նա գոնե չէ ստանում այն արտաքին փայլը, որ տալիս է մարդուն մեծ աշխարհի քաղաքակրթությունը։ Դրսից նա երևում է իր կոպտությամբ և անշնորհք դանդաղկոտությամբ, իսկ ներսից՝ խորին դատարկությամբ։ Նա այնքան սակավ է կարդացել, այնքան սակավ ծանոթ է, թե ինչ է կատարվում իր շուրջը, որ անընդունակ է վարել որևիցե լուրջ և բաղաղրյալ վիճաբանություն։ Մի քանի սերտած և «մոդնի» ֆրազներից հետո նրա գիտության պաշարը սպառվում է, և սկսում է դուրս տալ ծիծաղելի հիմարություններ։

Ես նկարագրեցի Ռուսաստանի հայ ուսանողներին, բոլորովին նրանց մեծին կողմերը վեր առնելով, բայց անարդարություն կլիներ ասել, թե բոլորը ծույլ են, բոլորը ոչինչ չեն սովորում, բոլորն անբարոյական են և այլն։ Կան և ճշմարիտ աշխատասեր ուսանողներ, բայց, դժբախտաբար, այսպիսիների թիվն այնքան փոքր է, որ պետք է բացառություն համարել։ Դժվար է ճշտությամբ որոշել, թե մեր ժողովրդի ո՞ր դասակարգին են պատկանում լավ ուսանողները։ Միայն մի երևույթ, որ ճշմարիտ է, այն է, որ գյուղացիները գերազանցում են գավառացիներից, գավառացիները՝ թիֆլիսցիներից, իսկ աղքատները՝ հարուստներից։ Ինչի՞ց է այդ, արդյոք ընտանեկան կրթությունի՞ց, թե առանձին ֆիզիոլոգիական պատճառներից, ես պարզապես բացատրել չեմ կարող։ Բայց հասկանալի են պատճառները, թե ինչու աղքատ երիտասարդներն ավելի հաջողակ ուսանողներ են լինում, քան թե հարուստները։ Իսկ այն, որ գյուղացի և գավառացի երիտասարդները միշտ գերազանցում են բուն թիֆլիսցիներից, ես այդ երևույթին մի ուրիշ պատճառ չեմ գտնում, բացի նրանից, որ գավառացիների և գյուղացիների ընտանեկան կրթությունն ավելի լավ պայմաններով է կատարվում. նրանք երեխայությունից սովորում են աշխատության, և որ ամենագլխավորն է, նրանք ունեն բարոյական հաստատուն հիմք, մինչդեռ թիֆլիսեցի երիտասարդը հենց ընտանիքից փչացած է դուրս գալիս թե բարոյապես և թե մտավորապես։ Միևնույն կերպով կարելի է բացատրել և այն երևույթը, որ թիֆլիսեցի երիտասարդը Ռուսաստանի գպրոցներում բոլորովին օտարանում է,

որովհետև հենց սկզբից անունով միայն հայ էր, չէր սովորել իր մայրենի լեզուն, չէր կրում իր ազգի ցեղական առանձնություններ։ Բայց մի երեվանցի, մի զարմաքաղցի և մի լոռեցի երիտասարդ, որ կրթվել էր բուն հայկական ընտանիքում, որ դիտեր իր մայրենի լեզուն, երբեք չէ օտարանում, այլ ընդհակառակն, ավելի հաստատվում է իր ազգայնության մեջ։

Գավառացի և գյուղացի ուսանողները լինում են կամ բոլորովին աղքատ, կամ փոքր միջոցներ ունեցող երիտասարդներ։ Աննկարելի է նկարագրել, թե որպիսի դժվարությունների դեմ պատերազմելով, աղքատ ուսանողը կարողանում է ավարտել իր ուսումը։ Նրա տոկունությունը, եռանդը, անձնազոհությունը հասնում է կատարյալ նահատակության։ Երևակայեցեք կյանքի բոլոր դաժանությունը Մոսկվայի կամ Պետերբուրգի նման քաղաքներում, ուր փոքր ի շատե համեստ ապրուստը պահանջում է ամսական գոնե 30 ռուբլի, իսկ նա կառավարվում է 10 կամ 15 ռուբլով։ Եվ այդ ողորմելի գումարը նա պիտի ձեռք բերի ահագին դժվարություններով։ Ես ճանաչում եմ մի քանի խեղճ ուսանողների, որոնք ամառվա արձակուրդների ժամանակ գալիս էին Թիֆլիս դասեր դոնելու, կամ պարապելու մի հարուստ երեխաների հետ ամառանոցում և այսպիսով փող էին վաստակում և կրկին վերադառնում էին Մոսկվա կամ Պետերբուրգ՝ շարունակելու իրանց ուսումը։ Եվ այսպիսինները լինում են ամենալավ ավարտողներն իրանց մասնագիտությունից։

Յուրց տալով հայ ուսանողների թույլ և վտրավոր կողմերը, ավելորդ չէր լինի ասել մի քանի խոսք ևս նրանց ընդհանուր գաղափարների մասին։

Միանգամայն անարդար կլիներ ասել, թե բոլոր հայ ուսանողների ձգտումները միայն առանձնական և նյութական նպատակ ունեն, թե նրանց մեջ չկային բարի երիտասարդներ՝ աղնիվ ցանկություններով։ Կան շատ ուսանողներ, որոնք հափշտակվում են եթե ոչ ընդհանուր մարդասիրական գաղափարներով, գոնե նեղ ազգասիրական բաղձանքներով։ Նրանք հավաքվում են միասին, ծխում են, վիճում են և անօրինում են իրենց «սիրելի ազգի» համար մի լավ ապագա։ Սկսում են սովորել հայոց լեզուն, ծանոթանալ նրա գրականության հետ և ուսումնասիրել նրա պետքերը, և լի բարի ցանկություններով վերադառնում են իրանց հայրենիքը գործելու համար։ Մենք մյուս անգամ կտեսնվենք այդ պարոնների հետ կյանքի մեջ, թե ո՛ր աստիճան նրանք հավատարիմ են մնում իրանց ուխտին։ Այժմ վերջացնում եմ իմ նկարագիրը Մոսկվայի և Ս. Պե-

Պետերբուրգի ուսանողների մասին, ավելացնելով մի քանի խոսք նրանց ժողովների վերաբերությամբ։

Վաղուց է, որ Մոսկվայի և Ս. Պետերբուրգի ուսանողներն ունեն մի տեսակ ժողովներ, կազմել են մի տեսակ եղբայրություն, բոլորովին բարեգործական նպատակով։ Նրանք ունեն առանձին կասսա, որի մեջ հավաքվում են ուսանողների նվերներն իրանց չքավոր ընկերներին օգնելու համար։ Մի համակրական գործ, որ կատարել են հայ ուսանողները, այդ է։ Բայց ցավալի է տեսնել, այն ուսանողները, որ մի ժամանակ վայելել էին հիշյալ կասսաների օժանդակությունը, ավարտելուց և կյանքի մեջ մտնելուց հետո բոլորովին մոռանում են անցյալը։ Ինձ պատահել է լսել շատ տրտունջներ, թե այսինչ ուսանողն այսքան հարյուր ռուբլի պարտ է մնացել ուսանողական կասսային, իսկ վերադարձնելու մասին չէ մտածում, թեև այժմ տարեկան մի քանի հազար ռուբլի եկամուտ ունի։ Ինձ հայտնի են մինչև անգամ այդ ապերախտների անուններն...[*]։

Հայ ուսանողները, բացի Ռուսաստանի երկու մայրաքաղաքների համալսարաններից, փոքր ինչով դիմում են Օդեսա, Կիև, Կազան և Դորպատ։ Դրանք չեն զանազանվում առանձին հատկանիշներով, բայց նույնը չէ կարելի ասել Դորպատի ուսանողների մասին։ Դորպատի համալսարանը, նրա չեմ սխալվում, առաջինը եղավ, որ քաշեց դեպի ինքը հայ ուսանողներին, և ճանապարհը դեպի այդ ռուս-գերմանական քաղաքը բաց արեց Աբովյանցը. նրան հետևեցին շատերը, իսկ այժմ համարյա թե դադարել են Դորպատ գնալուց։ Դորպատի համալսարանը ավելց մեզ երկու նշանավոր մարդիկ՝ Աբովյանցին և Նազարյանցին։ Բայց պետք չէ մոռանալ և այն, որ առհասարակ Դորպատի ուսանողներն ունեն մի առանձին հատկանիշ գույն, որով որոշվում են ուրուց մյուս համալսարանների հայ ուսանողներից։ Մի տեսակ ծածկամտություն, մի տեսակ քրմական ֆանատիկոսություն, մի տեսակ կույր համառություն տիրում է նրանց ամբողջ մտավոր կարողության վրա։ Նրանք փոքր ի շատ կարդացել են և առանց համոզմունքի մարդիկ չեն, բայց իրանց համոզմունքների մեջ այն աստիճան կամակոր են, որ դա պահում է նրանց միշտ քարացած անշարժության մեջ։ Այդ պատճառով զարմանալի չէ

---

[*] Մինչև այսօր մենք չունենք որևիցե գրվածք հայ ուսանողների մասին, բացի դոր. Դ. Արծրունիի «Այնտեղ և այստեղ» վիպիկը, որ մի կեղեքիկ պատկեր է Ռուսաստանի ուսանողների կյանքից։ Այս աշխատությունը տպվեցավ «Մշակի» մեջ և թարգմանվեցավ ռուսաց լեզվով։

տեսնել, որ Դորպատից ավարտողները մեր ազգային, հասարակական և եկեղեցական խնդիրների վերաբերությամբ համարյա բոլորն էլ պահպանողականներ են։ Ինչ որ ավելի աչքի է զարկում, այդ է նրանց թիու ազգասիրությունը, որ չեն թաքցնում երևան հանել, երբ այդ ցույցամոլությունը չէր պահանջում նրանցից որևիցե աշխատություն կամ զոհ։

Դառնում եմ դեպի արտասահմանյան ուսանողները։

Ռուսաստանի սահմաններից դուրս հայ ուսանողները դիմում են մեծ մասամբ Գերմանիա, իսկ մասնավորապես՝ Ֆրանսիա և Ջվիցերիա։ Սկսենք Գերմանիայից։

Հայ ուսանողը դիմում է Գերմանիայի այս և այն համալսարանական քաղաքն առանց մի բաո գերմաններեն գիտենալու։ Նա վարձում է մի ընտանիքի մեջ բնակություն, ուր վեց ամսից հետո սովորում է նրա ոչ վարժ խոսել, բայց հասկանում է լսածը։ Տարին լրացած, նա համարձակ կարող է հաճախել իր ընտրած մասնագիտությունից դասախոսություններ լսելու։ Սկզբից քննություն տալ չէ պահանջվում, բավական է, որ ուսանողը հայտնում է համալսարանի վարչության իր ցանկությունը՝ մտնել ուսանողների թվում, հետո նրա անունը գրվում է վարչության դրքի մեջ (матрикулярная книга)։ Գերմանական համալսարանն ազատ հիմնարկություն է. նրա կազմակերպության մեջ չեն տիրում այն պաշտոնական խիստ ձևերը, որ կարելի է բացատրել բառով արհուեստականություն (казенщина)։ Ուսանողին տված է կատարյալ ազատություն թե առարկայի և թե պրոֆեսորի ընտրության մեջ. նշանակված կուրսեր և քննություններ չկան. ուսանողն ինքն է տնօրինում իր ժամանակը, որի ընթացքում նա մտադիր է սովորել։ Եթե հանգամանքները չեն ներում, նա կարող է ընդհատել իր ուսումը և ամբանեներից կամ տարիներից հետո կրկին շարունակել։ Շատ անգամ միևնույն ուսանողն իր ընտրած առարկայից լսում է զանազան պրոֆեսորների մոտ, զանազան քաղաքներում. այստեղից առաջ է գալիս ուսանողների գաղթականություն մի համալսարանական քաղաքից դեպի մյուսը՝ Բեռլին, Լայպցիգ, Մյունխեն, Հայդելբերգ, Ենա և այլն։ Այդ նպաստում է ուսանողին ծանոթանալ զանազան դիտանականների հայացքների հետ իր ընտրած առարկայի վերաբերությամբ։ Լսելով զանազան պրոֆեսորներին, զանազան համալսարաններում, ուսանողը կարող է վերջապես ընտրել մեկը և այն համալսարանում քննություն տալ. այդ մասին արգելք չկա, բավական է, որ նա ցույց տար իր թղթերը, թե այսինչ պրոֆեսորների մոտ այսքան ժամանակ լսել էւ Շատ անգամ պատահում է, որ մի ուսանող, բացի իր ընտրած մասնագիտությունից, լսում է և մի քանի ուրիշ առարկաներ. պատ-

մաբանը կամ ֆիլոլոգը միևնույն ժամանակ հաճախում է լսել մի նշանավոր նատուրալիստին, կամ նատուրալիստը գնում է լսելու մի երևելի փիլիսոփայիս։ Եվ այսպես, ամեն մի լսող կարող է ազատ կերպով ուսումնասիրել իր ընտրած արհեստի բոլոր հայտնի ավտորիտետներին։

Պրոֆեսորի հարաբերություններն ուսանողի հետ ընտանեկան բնավորություն ունեն։ Նա չէ վարվում որպես մի զորապետ իր սպաների հետ։ Նրա տունը մատչելի է ամեն մի ուսանողին, որ դիմում էր նրա մոտ որևիցե խորհրդի համար։ Այս է պատճառը, որ գերմանական պրոֆեսորը, գերմանական համալսարանը չէ վախեցնում ուսանողներին. և ոչ մի ազգի մեջ պրոֆեսորն այնքան հարգված և այնքան սիրված չէ իր լսողներից, որպես Գերմանիայում։ Նկատված է, որ պրոֆեսորներն ավելի մեծ ուշադրություն դարձնում են օտարազգի ուսանողներին, քան թե բուն գերմանացի ուսանողների վրա, որոնք գիտեն իրանց գործը և շատ կարող չեն նրանց խնամատարություն։

Համալսարանական պարապմունքները լինում են գլխավորապես դասախոսություններ, որ լսում են ուսանողները, վճարելով մի նշանակված վարձ իրանց պրոֆեսորին, այլև մասնավոր հետազոտություններ և փորձեր լաբորատորիաներում պրոֆեսորի աջակցությամբ, և վերջապես սեմինարիաներ, որ կատարվում են ուսանողների վարժության համար։ Սեմինարիաները որոշվում են նրանով, որ պրոֆեսորը տալիս է իր լսողներին մի հարց նրանց մասնագիտության վերաբերությամբ մշակելու համար, ուսանողները պատրաստում են, և նրանցից մեկը բարձրանում է ամբիոնի վրա և խոսում է։ Պրոֆեսորն այդ միջոցին նստած է լինում մյուս ուսանողների շարքում, լսում է և նշանակում է իր նկատողությունները, և միևնույնը անում են և մյուս ուսանողները։ Հետո յուրաքանչյուրն իր կողմից հարցեր է առաջարկում, և ամենքին պետք է պատասխանի դասախոսը։

Գերմանական համալսարաններում ամեն ինչ առաջնորդում է ուսանողին դեպի արհեստի և գիտության խորին ուսումնասիրությունը։ Ջմռան ամիսներ պրոֆեսորի զանազան զբոսանքները և քննական հետազոտությունները (экскурсия) իր լսողների հետ։ Ուսանողը հույս չէ դնում պրոֆեսորի լիտոգրաֆիական տետրակների վրա[1], որպես լինում է այդ Ռուսաստանում, որ նա ամբողջ տարին անգործ մնա և հետո շտապով թուքակի նման սերտի քննության համար. և այնուհետև շուտով մոռանա։ Ամեն մի ուսանող զգում է գիտության սաստիկ պահանջը, և նրա բոլոր շրջապատը, ուր չես գտնի մի անգործ մարդ, հարկադրում է նրան

աշխատել և անդադար աշխատել։ Առանց դիտության դժվար է ապրել այնտեղ, ուր յուրաքանչյուր ոք ունի մի նշանավոր պաշար գիտության. մրցությունը սաստիկ է։

Գերմանական ուսանողը չէ բավականանում նրանով, ինչ որ սովորում է համալսարանի ամբիոնից. նա կարդում է համարյա բոլոր նշանավոր հեղինակությունները, որ վերաբերում էին իր առարկային։ Այդ բավական չէ, նա հաճախում է զանազան ուսումնական հիմնարկությունների մեջ։ Դիցուք թե մի ուսանող ընտրել էր իր մասնագիտության համար քաղաքական տնտեսությունը. միևնույն ժամանակ նա անդամ է դառնում զանազան ժողովների և զանազան ընկերությունների, որպես են՝ աշխարհագրական, բժշկական, երաժշտական, հնագիտական և այլն։ Միևնույն ժամանակ կարելի է տեսնել նրան մի դրատան մեջ քրքրում է հին ձեռագրներ, ուսումնասիրում է մի անծանոթ արևելյան լեզու, կամ թանգարանի մեջ քննում է հին դրամներ և կամ հետաքրքրվում է զանազան հազվագյուտ բաներով։ Այս բոլոր աշխատությունները հետո նա ժամանակ է գտնում պարապելու մարմնամարզությամբ, վարժվելու ձինավարժության մեջ, կամ զվարճանալու որսորդությունով։ Օրերը, ժամերը, րոպեները նրա մոտ այնպես հաշված են, որ նա ամեն ժամանակի համար զբաղմունք ունի։ Եվ այս է պատճառը, որ գերմանական ուսանողն ունի չափից դուրս բազմակողմանի հմտություններ։ Ամբողջ օրն աշխատելով մի բան սովորել, նա դարձյալ իրան հետ չէ պահում սովորական զվարճություններից. նրան կտեսնես մի հյուրանոցում, շրջապատված իր ընկերներով, գարեջուր է խմում, խոսում է, դատում է և վիճում է։ Մի բան, որ չէ հետաքրքրում գերմանական ուսանողին, այդ է՝ զբաղվիլ պոլիտիկայով։ Նա քաղաքական պրոպագանդիստ չէ, բայց հասարակական գործիչ է։ Նա սիրում է երկու բան՝ գիտություն և գարեջուր։

Կինը մի առանձին դեր չէ խաղում գերմանական ուսանողի կյանքի մեջ։ Նա ոչ թույլ է տալիս իրան ֆրանսիական ուսանողի նման գրիզետաների հետ բուլվարները չափչփել, և ոչ ռուսական ուսանողի նման սիրուհու հետ է ապրում։ Նա իր կրքերի մեջ չափավոր է և համեստ, բացարձակ ախտերով չէ հրապուրվում։ Այս է պատճառը, որ գերմանական ուսանողն ամեն մի պատվավոր ընտանիքի մեջ մուտք ունի. նրանից չեն վախենում։ Կնոջ վրա նայում է նա որպես մի քնքուշ առարկայի վրա, որին եթե զորավոր գործերի մեջ գցեիր, կարող էր շուտով կոտրվել, և այս պատճառով, ռուսական ուսանողի նման նա կնոջը չէ ընտրում որպես պրոպագանդայի գործիք։ Նա համարում է կնոջը մի դեղեցիկ արարած, որով կարելի է զբաղվել առանց ձանձրանալու, որով կարելի է

զվարճանալ առանց տխրելու, այսքանը միայն։ Կինը նրան խնդքից չէ հանում, բայց երբ սիրում է, սիրում է միայն ամուսնանալու համար։

Ուսանողական կազմակերպությունն ամեն գերմանական համալսարանում բաժանվում է երկու որոշ մասերի, մեկը՝ գունավորներ, որոնցից կազմված են զանազան առանձին խմբեր (корпорация), որոնք տարբերվում են իրանց գլխարկների և կուրծքի ժապավենների գույներով, իսկ երկրորդը, հասարակ ուսանողները, որոնք չեն համարում իրանց հիշյալ խմբերի կամ կորպորացիաների անդամ։

Գունավոր ուսանողների յուրաքանչյուր խումբը կամ կորպորացիան ունի իր առանձին դրոշը, նշանաբանը, օրդեններ, սովորություններ, ծեսերը և վերջապես՝ պրինցիպները։ Մեկը, օրինակ, ներկայացուցիչ է աղնվապետական սկզբունքի, մյուսը ռամկապետական է, երրորդը գիտնական նպատակների է ծառայում, չորրորդը հասարակական տենդենցիաներ ունի և այլն։ Յուրաքանչյուր խումբն ունի իր առանձին ավանդական օրենքները կամ վարչության սահմանադրությունները, որ կազմվել են պատմականաբար վաղնջի ժամանակներից և պահպանվում են ամենայն սրբությամբ։ Ուսանողը, որ մեղանչում է իր խմբի օրենքների դեմ, պատժվում է խմբի վարչությունից։ Երևակայեցեք ձեզ մի ուսանող իր կորպորացիայի պաշտոնական վենդերկայով[5]. սև թավշից, գունավոր գլխարկով, ժապավենով անցկացրած ուսի տակով, և ետարտ կուրծքը ծածկված օրդեններով, այստեղ կան խաչեր, աստղեր, այստեղ կան զանազան տեսակ նշաններ և զարդեր, բոլորը էժանագին մետաղներից, բայց ամենի մեջտեղում, գունավոր լայն ժապավենի վրա, փայլում է գարեջրի բաժակի մեծ պատկերը, որպես բարձր նշան, որ նվիրած է նրան գարեջրական թագավորությունից (Biersctaat)։ Ամեն մի կորպորացիա ունի իր առանձին ժողովները և խնջույքները, որոնց մեջ սովորական ծեսերով կատարվում է գարեջուր խմելու ուրախությունը։ Խմելու պայմանները չափազանց բազմազբյալ են, որ պետք էր առաջուց սովորած լինել, ինչպես, օրինակ, սալամանդրա կոչված ձևը։ Ուսանողական երգերը և ճառերը մի առանձին կենդանություն են տալիս այս տեսակ խնջույքներին։ Գարեջուրը, որ ուսանողների զվարճության ոգին է, շատ անգամ գործ է դրվում որպես սրբություն։ Օրինակ, խիստ ծիծաղելի է այն ծեսը, որպես է գարեջրով մկրտելը մի ուսանողի, որ նոր մտնում է որևիցե կորպորացիայի մեջ։ Բացի սովորական ժողովներից և խնջույքներից, կատարվում են և հանդիսավոր օվացիաներ և դեմոնստրացիաներ։ Տեսնում ես, գունավորների զանազան խմբեր, զարդարված իրանց համազ-

գեստով և օրհնություններով, ձեռներին բռնած դրոշակներ և ջահեր, գիշերային պահուն, երգելով անցնում են փողոցների միջով, կանգնում են մի սիրված պրոֆեսորի տան առջև և արտահայտում են նրան իրանց հարգանքը։ Երբեմն այսպիսի դեմոնստրացիաներ կատարվում են, որպես արտահայտություն զանազան հասարակական ցույցերի, երբ կատարվում էր մի անարդարություն օրենքի կողմից։ Ուսանողներն այդ ժամանակ սաստիկ վրդովվում են, հուզվում են և խմբերով հրապարակ են դուրս գալիս, իրանց բողոքը հայտնելով զանազան ցույցերով։ Ժողովուրդը միշտ իր ձայնը խառնում է ուսանողների ոգևորված երգերին և նրանց աղնիվ բարկության ձայնին։

Գունավոր ուսանողները, որ առհասարակ նշանավոր են իրանց քաջությամբ, համարձակությամբ և անձնասիրությամբ, միշտ պատրաստ են վրեժխնդիր լինել մի ամենաչնչին վիրավորանքի համար պատվի դեմ։

Այս պատճառով մենամարտությունը նրանց մեջ այնքան սովորական է, որպես մի գավաթ գարեջուր խմելը։ Եվ շատ անգամ կարելի է տեսնել երեսը բոլորովին սպիներով այլանդակված ուսանողներ, որ ստացել էին զանազան մենամարտությունների մեջ։ Բայց նույն ուսանողը, երբ իր ղարհուրելի դեմքով կանգնում է ամբիոնի վրա և կարդում է մի ոգևորված ճառ, այն ժամանակ առանց հիացմունքի չէ կարելի չլսել նրան։ Նա որպես հաջողակ է զենք բանեցնելու մեջ, այնքան էլ ընդունակ է ընդհանուր մարդկային բարձր գաղափարներ արտահայտելու։ Այսուամենայնիվ, գունավոր ուսանողներին նասարակ ուսանողների հետ համեմատելով, առաջիններն այնքան նշանավոր չեն լինում իրանց աշխատասիրությամբ։ Քաջությունը մենամարտության մեջ և զորությունը գարեջուր խմելու, ահա՛ երկու առարկաներ, որոնցով պարծենում են նրանք։ Եթե գերմանական ուսանողների մեջ կան տոկուն աշխատողներ և ճշմարտասիրա կետության հետևողներ, դրանք են հասարակ ուսանողները, որոնք ոչ մի կորպորացիայի չեն պատկանում։

Պետք է նկատել, որ այլ և այլ կորպորացիաներ, որոնք իրանց սովորություններով և պաշտոնական ձևերով այժմ կաստայական բնավորություն են ստացել, ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ Գերմանիայի միջնադարյան ասպետության զանազան ուխտերի և կարգերի մի նմանություն, որ անցել է ուսանողական կյանքի մեջ։ Այժմ այդ մաշված սովորությունները հնանալու և մոդայից ընկնելու վիճակին են հասել։ Եվ որպես հակակշռություն գունավորների ժողովների, վերջին ժամանակներում կազմվել են ուսումնական ընդհանուր ժողովներ, ավելի լայն և ընդարձակ նպատակներով և ժամանակակից սկզբունքների վրա։ Այդ ժողովներին մասնակ-

ցում են հասարակ ուսանողները, և երբեմն նրանց մեջ լինում են պրոֆեսորներ։

Բայց մի բան, որ պետք է նկատողության առնել, այն է, մինչդեռ մի ուրիշ պետության մեջ չորս-հինգ ուսանող մի տեղ հավաքվելիս, մի ժողով կազմելիս, միշտ կառավարությունը կասկածանքով է նայում նրանց վրա, դրա ընդհակառակն, գերմանական ուսանողներին տրված է այնքան ընդարձակ ազատություն, որ նրանք կարողանում են վերև հիշած կորպորացիաների նման առանձին-առանձին խմբեր կամ ժողովներ կազմել, ամենևին նրանցից չեն վախենում։ Գերմանական ուսանողն իր հայրենիքի հավատարիմ զավակն է։ Եվ այդ ցույց տվեց նա վերջին ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ։ Նա թողնց համալսարանը և անցավ կռվի դաշտի վրա։

Մինչև այստեղ ինչ որ խոսվեցավ, վերաբերում է բուն գերմանացի ուսանողներին, հիմա տեսնենք, ի՞նչ են անում այնտեղ հայ ուսանողները։

Հայ ուսանողները ոչ մի կորպորացիայի մեջ չեն մտնում. նրանք սպասկանում են հասարակ ուսանողների թվին։ Բայց որպես հասարակ ուսանող ևս, հայերը չունեն այն բազմակողմանի պարապմունքները, որոնցով, բացի իր մասնագիտությունից, զբաղված է լինում բուն գերմանական ուսանողը։ Օրինակ, հայ ուսանողը ոչ մի ուսումնական ժողովի և ընկերության մեջ չէ մտնում. ոչ մի ուրիշ բան, որպես են մուզիկա, մարմնամարզություն և այլն, չէ սովորում, և որպես Մոսկվայում կամ Պետերբուրգում, այստեղ էլ նույնպես դուրս չէ գալիս իր հայ ընկերների նեղ շրջանից։ Ես մի քանի գերմանական հայ ուսանողներ միայն ճանաչում եմ, որոնց կարելի է բացառություն համարել։ Իսկ մնացածները ճանաչում են միայն համալսարանի շինությունը, իրանց պրոֆեսորին և իրանց ընտրած առարկան, ուրիշ ոչինչով չեն հետաքրքրվում, թե ինչ է կատարվում իրանց չորս կողմում։ Շատ-շատ հեն մեկն այնքան աշխատասեր էր, բացի իր ընտրած մասնագիտությունից, կլսե դասախոսություններ մի քանի ուրիշ առարկաներից ևս, որոնք կապ ունեին իր մասնագիտության հետ։ Ամեն ինչ նա սպասում է համալսարանից, իսկ դրսի ուսումնական շրջաններից օգուտ չէ քաղում։ Երբեմն լրագրներ կկարդա, կամ դրքեր կվեր առնի մի գրադարանից։ Բայց պետք է խոստովանվիլ, որ գերմանական հայ ուսանողները դարձյալ գերազանցում են Ռուսաստանի հայ ուսանողներից թե իրանց աշխատասիրությամբ և թե իրանց վարքով. դրանք գոնե համեստ են. ինչ որ սովորել են, սովորել են հիմնավոր կերպով։ Բայց Ռուսաստանի հայ ուսանողը շատ առարկաներ է սովորում առանց լավ մարսելու և շուտով էլ մոռանում է։ Բացի

դրանից, զանազանությունը մեծ է։ Ռուսաստանի հայ ուսանողը, որպես իր տեղում նկատեցինք, սովորում է ոչ թե գիտության համար, այլ դիպլոմ ստանալու համար, որ պաշտոնի մեջ այս և այն արտոնությունը կարողանա ձեռք բերել, և այս պատճառով նա վեր է առնում գիտությունից այնքան միայն, որ կարող է հասցնել նպատակին։ Իսկ գերմանական հայ ուսանողի վրա ազդում է շրջապատը, նա իրան նվիրում է միմիայն գիտության, ուսանում է ուսման համար, առանց որևիցե արտոնություն աչքի առջև ունենալու։ Գիտության առաքելությունը, ահա՛ նրա գլխավոր նպատակը։ Նա ծառայում է մի դրոշի, որի նշանաբանն էր՝ գիտությունը միայն։ Եվ այսպիսով շատերը մեր երիտասարդներից նշանավոր եղան ոչ միայն հաջող քննություն տալով, բայց նույնիսկ Գերմանիայում պրոֆեսորի կամ պրիվատ դոցենտի ամբիոն ստանալով։ Թեև գոնվեցան այնպիսիները, որ վերադարձան մեզ մոտ առանց քննություն տալու, դարձյալ զանց չառնելով իրանց այցետոմսակի վրա տպել տալ դոկթոր փիլոսոփա...

Չեմ կարող չհիշել, որ ոմանք մեր ուսանողներից վատ համարում թողեցին Գերմանիայում, ոչ միայն իրանց վերաբերությամբ, այլ իրանց վարքով մրոտեցին մինչև անգամ հայ անունը, որ այնքան փոքր ծանոթ է Եվրոպայում։ Խաբել, պարտքով ուտել, խմել և փողը չվճարել, այդ արել են ոչ միայն ուսանողները, որ զուրկ են եղել նյութական միջոցներից, այլ նրանք, որ ստանում էլն ծնողներից մեծ փողեր։ Այստես չեմ խոսում այն բանի վրա, որ ամեն մի հասարակ վաճառականի որդին կամ զանհիկ դյուղացին իրան ներկայացնում էր իբրև հայոց մի երևելի ազնվական տոհմից։ Այս տեսակ խաբեբաներից մեկի համար պատմում էին, թե իրան կոչում էր իշխան Աւարատա...

Իհարկե, վերև հիշած տխուր նկատողությունները պետք է բացատական երևույթներ համարել, որ ավելի հետևանք են ընդհանրական վատ դաստիարակության, որը չէ փոխում հայի զավակը, երբ նա ընկնում է մի նոր և ավելի քաղաքակրթված աշխարհի մեջ։ Բայց առհասարակ խոսելով, գերմանական աշխարհը, գերմանական կրթությունը, գերմանական ուսումը շատ նպատակահարմար է մեզ՝ հայերիս համար, որ ունենք բավական նմանություն գերմանացիների հետ։ Թե բնավորության, թե տոկունության, թե տնտեսական խնայող, հաշվող չափավորության կողմից։ Հայն ասիական գերմանացի է։ Ինչ որ պակաս է մեզ, կարող ենք ստանալ նրանցից։ Մեր նախնիքը Քսենոֆոնի օրերում գարնջուր էին խմում[6], իսկ գերմանացին խմում է այսօր։ Մեր մեջ նմանություններ կան, ամեն կողմից նայելով։

Նկատողության պետք է առնել մի ուրիշ պայման ևս, այն է՝ գերմանական համալսարանի ազդեցությունն օտարազգի երիտասարդների վրա։ Նա վերադարձնում է ամեն ազգին իր որդուն, ավելի կատարելագործված, ավելի զարգացած, ոչինչ չխլելով նրա ցեղական հատկություններից, այլ ընդհակառակն, ավելի ամրապնդելով, ավելի հաստատելով։ Նա չինացուն տալիս է լավ չինացի, ճապոնացուն՝ ճապոնացի, հայաստանցուն՝ հայ։ Բոլորը մկրտվում են միևնույն համալսարանական տաճարի մեջ դիտության, իմաստության լույսով, բայց յուրաքանչյուր ազգի որդին կրում է իր ցեղական դրոշմը։ Շատ ժամանակ չէ անցել, մի խընջույքի մեջ, որ ուսանողները տալիս էին ի պատիվ իրանց պրոֆեսորի, երբ առաջարկվեցավ յուրաքանչյուրին իր ազգի լեզվով մի փոքրիկ ճառ կարդալ, և երբ հերթը հասավ մի հայ ուսանողի, նա հայտնեց, թե չգիտե հայերեն. ամեն կողմից ծանր հանդիմանություն ստացավ։ Եվ նա այնուհետև սկսեց սովորել իր ազգի լեզուն, որովհետև նրանից խոստումնք առեցին, որ մյուս տարվա խնջույքի ժամանակ անպատճառ պետք է կատարե իր ընկերների ցանկությունը։

Պետք չէ մոռանալ և այն, որ գերմանական և առհասարակ արտասահմանյան դիպլոմները որևիցե արտոնություն չտալով ուսանողին Ռուսաստանում, նրանք վերադառնալուց հետո ստիպված են լինում ընտրել ազատ պարապմունքներ։ Եվ այսօր ուրախալի է տեսնել, որ նրանց մեծ մասն ազգային գործիչներ են։ Մեր դպրոցների նշանավոր վարժապետները, տեսուչները, մեր այժմյան խմբագիրները, բոլորը գերմանական համալսարանների պտուղներ են։

Դառնանք դեպի ֆրանսիական ուսանողները։

Ֆրանսիայում հայ ուսանողներն ընտրում են միայն Փարիզը։ Ես գոնե, բացի մի բժշկից, չեմ ճանաչում ուրիշ ուսանողներ, որոնք Ֆրանսիայում մի բան սովորած լինեին։ Բայց ճանաչում եմ շատ թերուսներ, որոնք երկար տարիներ Ֆրանսիայի մայրաքաղաքում թափառելեն հետո, առանց մի հիմնավոր դիտություն սովորելու, վերադարձել են հայրենիքը, բերելով իրանց հետ միայն ֆրանսիական արտաքին փայլը, որ աչքի է զարկում կապկության բոլոր միմոսություններով։ Երևում է, Փարիզը՝ այդ դիտության, հեղափոխության, մարսելիեզի և շռայլության մայրաքաղաքը, իր գրիզետներով և կաֆեշանտաններով բոլորովին կախարդում է, խելքից հանում է միամիտ հայ ուսանողին, երբ ընկնում է այդ համաշխարհական Բաբելոնի մեջ։ Փարիզը միջին կետ չունի. նա միշտ պատրաստում է ծայրահեղ մարդիկ, կամ խոշոր հասարակական

դործիչներ, կամ երևելի հանճարներ, և կամ շրջմոլիկ, աննպատակ շարլատաններ։

Փարիզում լատինական թաղը պատմական նշանակություն է ստացել որպես ուսանողների բնակարան։ Նրա խուլ փողոցներով ոչ մի պատվավոր կին իրան թույլ չի տա անց կենալ գիշերվա 9 ժամից հետո, վախենալով, մի՛ դուցե հանդիպի ուսանողների անպատկառ մի խմբի։ Փարիզի ուսանողներն առհասարակ սակավ են պարապում, խիստ փոքր է այն աշխատավորների թիվը, որոնք ամիսը մի անգամ հաճախում են դասախոսություն լսելու։ Նրանք ավելի շատ սովորում են այն տարերքից, որոնցմով տոգորված է Փարիզի մթնոլորտը։ Զվարճությունները չափից դուրս շատ և բազմատեսակ են։ Կան բալեր, թատրոններ, ռեստորաններ, կաֆեներ և այլն։ Բայց մանավանդ կնիկները նրանցից շատ ժամանակ են խլում։ Մեծ մասն ապրում է սիրուհու հետ։ Մի ամբողջ դաս աղջիկների, որոնք կոչվում են Լատինական թաղի կանայք, խիստ հետաքրքիր դեր են խաղում ուսանողների կյանքի մեջ։ Դրանք հասարակ գործավոր աղջիկներ են, որոնք բանում են զանազան հիմնարկությունների մեջ և ուսանողների սենյակներում ուրախություն ու հանգստություն են գտնում, երբ աշխատանքը ձանձրացնում էր նրանց։ Այդ մշտաղվարթ, անհոգ և դատարկամիտ արարածներն երբեք դուրս չեն գալիս ուսանողների աշխարհից և անդադար անցնում են մեկ ձեռքից մյուսը։

Ինչ-որ ավելի հատկանիշ է ֆրանսիական ուսանողներին, դա է նրանց արտաքին փայլը։ Փարիզը սաստիկ հզկում է և կոկում է նրանց։ Նրանք գերմանական ուսանողի նման անտաշ, անշնորհք և դանդաղկոտ չեն, որոնց բոլոր արժանավորությունները թաքնված են դրսի սառն և ցամաք կեղևի տակ։ Փարիզի ուսանողը կատարյալ աշխարհային մարդ է իր բազմակողմանի ձևերի մեջ։ Նա խոսում է, դատում է ամեն բանի վրա, մինչև անգամ այն բանների վրա, որ ինքը չգիտե։ Նրա խելքը սաստիկ հզուն է, դեպի ամեն կողմ ուղղվում է։ Նա վարում է խիստ բազդատյալ վիճաբանություններ և կարկտի նման թափում է խոշոր ֆրազներ։ Այդ նրանից է, որ նա կարդում է մեծ հեղինակների գրքերը, րոմաններ, կարդում է լրագրներ, գնում է թատրոն, ծանոթ է ամեն բանի հետ, ինչ որ կատարվում է նրա չորս կողմում։ Նա թեև հիմնավոր գիտություն չունի, թեև խորին կրթություն չէ ստանում, բայց շուտով հափշտակվում է իղեաներով։

Ինչ որ վերաբերում է ընդհանուր գաղափարներին, մեծ մասը ազատամիտ և առաջադիմականներ են և պատկանում են հասարակապետա-

կան կուսակցության։ Այդ բավական չէ, շատերը նրանցից երազում են համաշխարհային հասարակապետություն, երազում են ազգերի եղբայրության և չքավորության վախճան։ Ազատության և արդարության իդեալները սաստիկ արբեցնում են նրանց։ Այսուամենայնիվ, ֆրանսիական ուսանողը սրոպագանդիստի ոգի չունի, որ մտներ ընտանիքների մեջ, որ մտներ ամբոխի մեջ և առանց աղմուկի տարածեր իր մտքերը։ Նա իր նեղ, ուսանողական շրջանից դուրս չէ գալիս։ Օրինավոր ընտանիքներում մինչև անգամ նրան չեն ընդունում։ Բայց երբ պատահում է մի ժողովրդական շարժում, երբ ծագում է մի քաղաքական հեղափոխություն, ուսանողները խլրտում են, զարթնում են որպես քնած առյուծ և առաջինն են լինում, որ թնդեցնում են փողոցները մարսելիեզներով, փշրում են բռնակալների արձանները և թռչում են բարիկադների վրա։ Ով որ փոքրը ի շատե ծանոթ է ֆրանսիական պատմությանը, գիտե, թե որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թվականներում, մանավանդ Կոմունայի ժամանակ[7]։

Չէ կարելի ասել, թե բոլոր ուսանողները Ֆրանսիայում հետևում են հասարակապետական կարծիքների։ Տակավին կղերը և մանավանդ հզվիտները մեծ ջանք են գործ դնում, որ իրանց մտքերն անցկացնեն երիտասարդության մեջ, և այս պատճառով նրանք սաստիկ եռանդով ձգտում են իրանց ձեռքը ձգել ուսումը և կրթությունը։ Եվ կարողացան հաջողացնել, Ֆրանսիայի զանազան գավառներում պահպանելով բավական ծաղկած դպրոցներ և նույնիսկ Փարիզում բաց անելով մի քանի ուսումնական հիմնարկություններ, այլև մի կաթոլիկական համալսարան։ Այդ հիմնարկությունների ուսանողները ոչինչ կապ չունեն իրանց հասարակապետական ընկերների հետ և ներկայացնում են սաստիկ ռեակցիա։ Բայց մի բան, որ ուրախալի է, այն է, որ այժմ Ֆրանսիայի ամենաբարձր մտածողներն աշխատում են ամրապնդել կղերի իրավունքները կրթության գործի մեջ։

Հայ ուսանողն, ընկնելով Փարիզի քաոսի մեջ, բոլորովին իր ղեկը կորցնում է։ Անթիվ կուսակցություններ, անթիվ կարծիքներ և անթիվ ձգտումներ, նա չգիտե, թե որին պետք է հետևել։ Վերջապես ավելի զորեղ հոսանքը նրան իր հետն է տանում։ Նա մոռանում է իր անձը, մոռանում է իր երկիրը, մոռանում է, թե ինչ ազգի որդի է ինքը։ Նա էլ միտքը չէ բերում, թե իր եղբայրները ինչ դրության մեջ են ապրում Տաճկաստանում, Պարսկաստանում, Ռուսաստանում և Հնդկաստանում, սկսում է երազել ընդհանուր եղբայրության վրա։ Նա դառնում է կոսմոպոլիտ և ուրանում է իր հայությունը։ Որպես վերևում հիշեցի, մենք չունենք շատ

Թվով ֆրանսիական ուսանողներ, իսկ այդ երևույթը նշմարվում է Կ. Պոլսի երիտասարդների մեջ, որոնք դժբախտություն էին ունեցել մի քանի տարի Փարիզում բնակվելու։ Զարմանալին այն է, որ Փարիզի ուսանողն իր ընդհանուր կոսմոպոլիտական հայացքներով հանդերձ, դարձյալ մնում է ֆրանսիացի. նա առաջ սիրում է իր ազգը, իր հայրենիքը և ավելորդը միայն տալիս է օտարներին։ Բայց հայ ուսանողը մոռանում է բոլորը... Սրտի և մտքի դատարկության մեջ միշտ տեղ են գտնում հիմար ցնորքներ...

Ես վերջացրի իմ նկարագիրը Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի հայ ուսանողների մասին. հիմա տեսնենք, ինչ են շինում նրանք, երբ վերադառնում են իրանց հայրենիքը և մտնում են կյանքի մեջ։

Դ

ԹԻՖԼԻՍԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՏՐՈՆ

Թիֆլիսն իր այժմյան դրությունով ներկայացնում է մի կենտրոն, ուր հանդիպում ենք մեր երիտասարդության բազմատեսակ տիպերին։ Այստեղ են գտնվում մեր մտավոր զորության ներկայացուցիչները՝ մեր ինտելիգենցիան, այստեղ է գործում մեր մամուլը, այստեղ են խմբվում գավառներից մեր նշանավոր ուժերը, և վերջապես այստեղ մեր խոշոր և մանր դրամատներները հրաշք են գործում առևտրական հրապարակի վրա։

Իմ հետազոտության մեջ ես անձնավորություններ չպիտի շոշափեմ. ես կվեր առնեմ առանձին-առանձին խմբեր միայն, որոնք պատկանում են այս և այն դասակարգին և գործում են մի որոշ ասպարեզի վրա։ Բայց ինչ պետք է արած, որ մեր շրջանն այն աստիճան նեղ է, որ ամեն մի խմբի վրա խոսելիս, ընթերցողը կամա-ակամա պիտի երևակայե որևիցե անձնավորություն։

Սկսում եմ համալսարանականներից։

Ավարտելով իր ուսումը որևիցե համալսարանում, կամ կիսավարտ, երիտասարդը գրքերը ծալում մի կողմ է դնում, ապսպրում է հմուտ դերձակներից մեկին մի քանի ձևոք հագուստ, դնում է ցիլինդր և պենսնե, ջոկում է ձեռնոցների համեմատ գույները, թողնում է ծնոտի վրա մի պուրակ մազ և այս բոլոր պատրաստություններով վերադառնում է իր

հայրենիքը, ուր նրան սպասում են հայր, մայր, բարեկամներ և վերջապես ազգը։ Արտաքին կերպարանքը վատ չէ, ներկայացնում է ուսյալ մարդու բոլոր ընդունված ձևերը, իսկ ներքինը զգուշությամբ թաքցնում է։ Նա քիչ է խոսում, չէ մտնում ծանր վիճաբանությունների մեջ և միշտ աշխատում է ցույց տալ, թե «արհամարհում է»։ Բայց պատահած տեղը, երբ իր առումների հարմար մարդ է գտնում, լավ զզղում է, այլև նրա սոֆիզմներին և ճոռոմաբանությանը չափ չկա[8]։

Դա այն տեսակ տիպերիցն է, որ հենց սկզբից ուսման և գիտության վրա նայում էր որպես միջոցի վրա, որ իրան լավ ապագա պատրաստե, որ սովորում էր դիպլոմի և արտոնության համար։

Մտնելով կյանքի և հասարակության մեջ, հանդամանքները, կարիքը, նպատակին հասնելու պահանջները սաստիկ զարգացնում են նրա ուշիմությունը։ Նա դառնում է մի ճարպիկ որսորդ։ Նա իսկույն հասկանում է, թե որ կողմիցն է փչում քամին և նրա համեմատ պարզում է իր նավի առագաստները կյանքի ծովի մեջ։ Համոզմունք սասած բանը չկա նրա մեջ։ Հանդամանքներից օգուտ քաղել, ահա՛ նրա գլխավոր համոզմունքը։ Եվ այդ է, որ շինում է նրան մի տեսակ քամելեոն, մի տեսակ առասպելական էակ, որ անդադար փոփոխվում է թե կարծիքների և թե գործողությունների մեջ, որը ինչ առարկայի և մոտենում է, իսկույն նրա գույնը և ձևն է ընդունում։ Անհատատակամությունը նրա գլխավոր հատկանիշն է։ Բայց մի գիծ, որ մնում է նրա մեջ անփոփոխ, այդ է շահամոլությունը, որի համար զոհում է ամեն ինչ, որքան և սուրբ լինեն։

Նա հիմար չէ։ Նա լեզվով գոնե ցույց է տալիս իր համակրությունը և հակակրությունը դեպի ամեն լավ և վատ գործ։ Լիբերալի մոտ ազատամտություն է մսխում. հետադեմի մոտ վերջին աստիճանի պահպանողական է ձևանում. ազգասերի մոտ լաց է լինում Թուրքիայի հայերի վիճակի վրա. մի օտարականի մոտ ասում է, թե բոլոր հայերը «ճամշենիկներ» են. հայր սրբի մոտ կղերական է ձևանում. մի ուրիշ տեղ պահարակում է ազգային եկեղեցին. խոսում է անձնական պատվի և ազնվության վրա, բայց պատահած տեղը լիզում է ազդեցություն ունեցող մի մարդու ոտները. վերջապես դեպի ամեն կողմ թեքվում է, դեպի ամեն կողմ ծալվում է, մինչև կարողանում է մի պաշտոն ձեռք բերել։ Այժմ հասավ ցանկալի նպատակին։ Այնուհետև նա կտրվում է հասարակությունից և սկսում է իր նեղ շրջանի մեջ գործել։ Նա, որ առաջ շաղոքորթում էր ամբողջ հասարակությանը, այժմ սկսում է շաղոքորթել իր պաշտոնակիցներին, իր մեծավորին, որ, ոտքը նրա օգնության վրա դնելով, կարողանա բարձրանալ իր բռնած դիրքի աստիճանները։

Բայց որտեղի՞ց, ե՞րբ վարժվեցավ նա այդ տեսակ պրակտիկայի, այդ տեսակ գործնականության մեջ։ Ընտանիքը ավելց նրան այդ դաստիարակությունը։ Նույնը, ինչ որ գործում էր վաճառական հայրը, գործում է և բարձր ուսում ստացած որդին։ Ջանադանությունը միայն ձևի և կրթության ստիճանի մեջն է։ Անկիրթ հայրն ավելի կոշտ-կոպիտ կերպով էր խաբում, իսկ կրթյալ որդին ավելի նրբացրել է խաբեությունը։ Նա հարստահարում էր իր խանութի մեջ, իսկ դա հարստահարում է մի ուրիշ ասպարեզում։ Գործողությունների բնավորությունը չէ փոխվում։ Այս պայմանների մեջ հին և նոր սերունդը ձուլվում են միասին։ Գոնըվում են, այո՛, և ազնիվ անձնավորություններ, որոնք ավելի մաքուր ճանապարհով են գիմում իրանց բախտին, բայց ցավելով պետք է ասել, որ այդպիսիները բացառություն են համարվում։

Գառնանք դեպի մյուս տեսակ ուսանողները, որոնք հանիշատակված էին բարձր գաղափարներով, որոնք պատրաստվել էին իրանց հասարակությանը և ազգին ծառայելու։

Գլուխը լցրած զանազան ծրագրներով, նա մտնում է կյանքի մեջ. ինչ բարի գործ ասես, որ չէ ցանկանում սկսել. լրագիր, ամսագիր, գրքերի հրատարակություն և այլն։ Ժողովրդին շատ բան պակաս է, պետք է լրացնել բոլորը, մտածում է նաև Հաղնվում է հասարակ կերպով, խոսում է տաք և եռանդով. նրա թե լեզվի և թե ձևերի մեջ նըշմարվում է պարզություն և անկեղծություն։ Նա մոտենում է այս և այն դործող խմբին, որպես իր եղբայրակիցներին, քաջալերում է նրանց, ասելով. «Պետք է կրկնապատկել ուժերը, գործը դանդազ է ընթանում, բայց ժամանակը չէ սպասում»։ Խոսում է, վիճում է, տալիս է նոր խորհուրդներ, ստեղծում է նոր պլաններ։ Անցնում են շաբաթներ, ամիսներ, տարիներ... նա դեռ մտածում է, նա դեռ խոսում է... Ցանկանում է մի հրաշք գործել և մի անգամով զարմացնել աշխարհը։ Նա չէ սիրում փոքրից սկսել, իսկ մեծ բան գործելու համար չեն ներում հանգամանքները։ Մոտենում է նա, օրինակ, մի ամբագրի, որ շաբաթը մի անգամ հազիվ կարողանում էր հրատարակել իր թերթը, «գրանով բան չի դառնա, ասում է նրան, պետք է ամեն օր հրատարակել, պետք է այս գրել, այն գրել»... Բայց ինքը մի տող անգամ չէ գրում։ Անգործության մեջ եռանդը, ոգևորությունը թուլանում է, սրտի կրակը մարում է... Նա սկսում է զգալ իր գրության անատանելիությունը։ Տեսնում է, երեկվա ընկերը, հիմար, իդիոտ և ոչինչ չսովորած ընկերը, այսօր սեփական կառք ունի, հազարներով եկամուտ է ստանում։ Այդ փառքը հրապուրում է նրան։ Նա բոթափում է իր առաջին հավիշատակությունը և սթափվում է

իր ազնիվ սրբեցուցիչից... Ազգ, հայրենիք, հասարակություն, այս բառերը փոքր առ փոքր անհետանում են նրա գլխից... Նրա աչքի առջև կերպավորվում է իր Եսը, որին առաջ մոռացել էր։ «Չէ,— մտածում է նա,— պետք է առաջ իր անձը ապահովել, հետո ուրիշների վրա մտածել»։ Հանկարծ առաջարկում են մեր ազգասերին մի պաշտոն, մի «յուղալի պաստառ»։ Նա այժմ ծառայության մեջ է, տարեկան մի քանի հազար եկամուտ ունի։ Նա մեծ կրեդիտ է ստանում ամուսնության վերաբերությամբ. ամեն կողմից առաջարկում են հարուստ աղջիկներ։ Պահվում է։ Այժմ աշխատում է իր կացությանը փառավոր շուք տալ. վարձում է ամենագեղեցիկ տան վերին հարկը և զարդարում է սենյակները զանազան սնոտիքներով։ Նա, որ առաջ դեմոկրատական պրինցիպների էր հետևում, և ինքը նույն ծագումից էր, այժմ ձեացնում է իրանից ազնվություն արիստոկրատ։ Պատվիրում է սպասավորին իր սալոնի մեջ մուտք չտալ այն մաշված այուրթուքով պարոններին, որոնց հետ առաջ իր ազգի առաջադիմության մասին երկար ու երկար մասլահաթներ էր անում։ Երբ փողոցում հանդիպում է հին բարեկամին, երբ ցանկանում է արժանացնել նրան իր ուշադրությանը, արհամարհական ժպիտը երեսին հարցնում է. «Как идет ваша газета», և շուտով անցնում է, նեղվելով, մի գուցե տեսնեին իրան նրա հետ խոսելիս։

Չի կարելի ասել, թե այս տեսակ տիպերի ոգևորությունը և բարի ցանկությունները հենց սկզբից անկեղծ չէին։ Միայն բնավորության թուլությունը, համոզմունքի անհաստատությունը, տկունության բացակայությունն ուրիշ է տալիս նրանց շուտով փոխվել։ Նրանք այն աստիճան տկար են լինում, որ չեն դիմանում կյանքի հակառակ հոսքին և սկսում են նրա ընթացքով գնալ։ Այս տեսակ տիպերը նմանում են այն մետեորական երևույթներին, որ կոչվում է աստղ, որը հանկարծ հայտնվում է մթնոլորտի մեջ, փայլում է, բոցավառվում է, և հետզհետե սառչելով, վերջապես հանգչում է և ընկնում է ցած...

Ես նկարեցի պատկերները երկու տարբեր տիպերի, որոնք հակառակ ճանապարհներով մոտենում են միմյանց, ձուլվում են և կազմում են մի ամբողջություն։ Այժմ համեմատենք այդ երկու տիպերը։ Մեկը, որպես գործնական մարդ, հենց համալսարան մտած օրից իրան նպատակ է դնում այնքան սովորել, որ դիպլոմ ստանա, արտոնություններ ձեռք բերի, որ իր համար մի լավ ապագա պատրաստե։ Նա բացի իր անձից ուրիշի վիճակով չէ հետաքրքրվում։ Այս տեսակ մարդուն, եթե չէ կարելի համակրել, գոնե կարելի չէ և պախարակել։ Նա հավատարիմ է մնում իր ուխտին և նրա համեմատ գործում է։ Իսկ մյուսը, որպես իդեալական

մարդ, աշխատում է, սովորում է և համալսարանից իրան նպատակ է դնում, որ կյանքի մեջ մտնելուց հետո պետք է ծառայի այս և այն գաղափարի իրագործելուն, պետք է օգուտ բերի հասարակությանը և իր ազգին։ Բայց վերջը բոլորը մոռանում է, բուրժուազանում է և սկսում է մտածել իր փառքի, հանգստության և քսակի մասին։ Այս տեսակ երիտասարդը բնավորությունից զուրկ, թույլ և զզվելի արարած է, որովհետև դավաճանում է իր ուխտին։

Ես ցույց տվեցի բարձր ուսում ստացած երիտասարդությունը որոշող երկու ընդհանուր գծերը։ Բայց գտնվում են և հզոր բնավորություններ։ Դրանք հերոսներ են, այսպիսիներին չէ կարելի չհարգել։ Դրանք աշխատում են ձեռք բերել մի պաշտոն, մի գործ այն մտքով միայն, որ ապահովեն իրանց անձը, որ հարստանան և այն հարստությունով կարողանան իրագործել իրանց ազգօգուտ նպատակները։ «Ինձ ես կունենամ տարեկան հինգ հազար ռուբլի ավելորդ եկամուտ,— ասում էր ինձ մի երիտասարդ,— այն ժամանակ կսկսեմ հայերին մի ամսագիր հրատարակել»։ Բայց հայերեն ամսագիր հրատարակել նշանակում է՝ տարեկան 3—4 հազար ռուբլի դեֆիցիտ ծածկել։ Եվ նա կատարեց իր խոստումնքը, երբ պաշտոնի մեջ մտավ։ Այդ ամենահիմնավոր ձևն է հասարակական գործունեության։ Մեր ազգային գործերը պահանջում են մեծ զոհաբերություններ։ Ազքատ և անապահով վիճակի մեջ գտնվող երիտասարդները հազիվ թե կարող էին մի նշանավոր գործ կատարել։ Կամ պետք է ժառանգական հարստություն ունենալ, կամ պետք է մի կողմնակի պարապմունք գտնել, փող վաստակել, մի մասով ապրել, իսկ մնացածը ծախսել որևիցե հասարակական բարի նպատակի համար։ Որովհետև մեզանում ազգային պարապմունքները ոչ միայն նյութական շահ չեն բերում, այլ պետք է մի բան էլ իր գրպանից ծախսել, որ գործը առաջ գնա։ Այդ ես ցույց կտամ իր տեղում, երբ կխոսեմ Թիֆլիսի մեր գործիչների մասին։ Այժմ տեսնենք՝ ինչ է շինում երիտասարդությունը մյուս ասպարեզներում։

Ինչ որ նկատեցի իմ հետազոտության նախընթաց գլխում ուսանողների կյանքի և աշխատասիրության մասին, հայտնվում այն միտքը, թե դավառացիները գերազանցում են բուն Թիֆլիսեցիներից, նույնը պետք է ասեմ և այժմ։ Եթե կտեսնեք Թիֆլիսում մի երիտասարդ, որ հետաքրքրվում էր ազգային և հասարակական գործերով, որ իր աշխատության մի մասը նվիրում էր նրանց, անպատճառ նա գավառից եկած պետք է լինի, կամ ինքը, կամ հայրը, կամ պապը։ Բուն Թիֆլիսեցին փչացած, այլանդակված և հրեշավոր արարած է, նրա համար հայ կամ

հայի առաջադիմություն կոչված բանը ցնորք է։ Նա ընկնում է միշտ երկու ծայրահեղությունների մեջ, կամ վազում է միայն «չինի» և փառքի հաճիկ, կամ համալսարանից վերադառնալով դարտակ գլխով և դարտակ սրտով, լինում է իր հոր հարստության ցեցը և սկսում է շռայլաբար վատնել այն բոլորը, ինչ որ ողորմելի հայրը դիզել էր իր հոգու, մարմնի և պատվի դնով։ Այդ վրացիացած ընտանիքների զավակները ոչ մի օրինավոր բան չեն արդյունաբերում։ Դավառացի երիտասարդը թե բարձրյապես և թե մտավորապես բարձր լինելով, հենց որ ընկնում է Թիֆլիսում, սկսում է հրաշքներ գործել։ Թիֆլիսի հայոց նշանավոր խմբագիրները, վարժապետները, գրողները, բժիշկները, դատաստանական ծառայողները և մինչև անգամ խաշոր կապիտալիստները, բոլորը գավառացիներ են։ Եթե կան մի քանի բուն Թիֆլիսեցի գործիչներ, նրանց կարելի է մատներով համբարել։

Մի տասը տարի առաջ «չինովնիկությունը» և առհասարակ արքունական ծառայությունը Թիֆլիսի երիտասարդների համար իր ծաղկյալ մոդայի մեջն էր։ Բայց այն օրից, երբ հիմնվեցան բանկեր, երբ երկաթուղու ծայրը հասավ այս քաղաքին, բարձր ուսում ստացած երիտասարդությունը սկսեց որոնել ազատ պարապմունքներ։ Կարծես թե, ատենական տեղերի ճնշված օդը խեղդում լիներ նրանց։ Այժմ մի յուրիստ բարվոք է համարում ազատ փաստաբանությունը կամ նոտարիուսի կանտորան, քան թե նահանգական դատարանում լինել դիվանի անդամ։ Ֆինանսական ձեռնարկությունները ավելի հրապուրում են մեր երիտասարդներին. բանկերը լցված են նրանցով։ Ռեալական կյանքի ռեալական ոգին բաց է արել նրանց առջև մի նոր ասպարեզ։ Շատերը գնում են հողեր և անտառներ Թիֆլիսի շրջակայքում կամ Վրաստանի կողմերում։ Ոմանք կառավարում են այս և այն դրամատիրոջ կալվածները։ Ոմանք աբցիաների հետ են խաղում։ Իսկ շատերը, որոնք առաջ արհամարհում էին վաճառականությունը և կապալառությունը որպես ստոր պարապմունքներ, այժմ սկսել են նույն գործերով զբաղվել։ Ագենտուրան և կոմիսիոներությունը նույնպես ոչ սակավ գրավում են մեր երիտասարդներին։ Կան օրինակներ, որ համալսարանական երիտասարդը հիմնում է աղյուսի գործարան, կամ արտասահմանից բերել է տալիս տախտակներ սղոցելու մեքենաներ։ Այս տեսակ ձեռնարկությունների մեջ, կամ առհասարակ առանձին պարապմունքներով զբաղվողները լինում են խիստ գործունյա, ուրախ, զվարթ, նյութապես ապահովված և երբեք չեն կորցնում իրանց կենդանությունը։ Մինչդեռ արքունական ծառայողները գործի միակերպության մեջ վաղօրոք ծերանում են, բթամտանում են, և

մահը երբեմն ավելի շուտ է հասնում, մինչև նրանք կատանային պենսիա կամ ստաժակի ռուբեանիկի չին։

Մեծ հաջողություն են գտնում Թիֆլիսում բժիշկները, մանավանդ նրանք, որ ռուսաց համալսարաններում ավարտելուց հետո մի կամ երկու տարի անց են կացնում արտասահմանում։ Ոմանք քեֆի համար են դնում, իսկ ոմանք իսկապես մի բան սովորում են։ Բայց ժողովուրդը միշտ նշանակություն է տալիս Գերմանիա կամ Ֆրանսիա տեսած բժշկին, որպես արտասահմանի ապրանքին։ Ավելի դժբախտ են լինում այն ուսանողները, որոնք սովորել էին գյուղատնտեսական մասը՝ երկրագործություն, այգեգործություն, գինեգործություն և այլն։ Իրանք կապիտալ չունենալով սովորած մասնագիտությունն իրացնելու համար մնում են անգործ։ Իսկ կալվածատերերը չեն հրավիրում նրանց, որովհետև կանոնավոր գյուղատնտեսությունը դեռ մուտք չէ գործել Կովկասում։

Ճշմարիտն ասած, շատ դժվարին է լրագրական հոդվածի մեջ ցույց տալ այն ընդարձակ աշխարհը, ուր զանազան ասպարեզներում գործում է մեր համալսարանական երիտասարդությունը։ Ես պետք է նկատեմ միայն ընդհանուր գծերը։ Այժմ մնում է մի քանի խոսք ասել այն երիտասարդների մասին, որոնք ավարտում են կամ կիսավարտ դուրս են գալիս զանազան գիմնազիաններից և միջնակարգ դպրոցներից, և համալսարան մտնելու միջոցներ չունենալով, մնում են Թիֆլիսում։ Դրանք լինում են ըստ մեծի մասին աղքատների որդիներ և դպրոցի նստարանները թողնելուց հետո ստիպված են աշխատել օրական հացի համար։ Մեր վաճառականները նրանց չեն ընդունում գործակատարության մեջ, մտածում են, որ ուսյալներին չեն կարող հնազանդության մեջ պահել, որպես իրանց սովորությունն է։ Ուրիշ ոչինչ չէ մնում նրանց, բացի արքունական ծառայություններից, բացի վարժապետություններից մանր դպրոցներում, կամ անգործ թափառելուց։ Դրանք լինում են ավելի փառասերներ, քան համալսարանականները, սոսկ պարապմունքների «լայտղ» չեն անում։ Դեղին կոճակները և մունդիրը սաստիկ հրապուրում են նրանց։

Հիմա մտնենք մտավորական աշխարհը, տեսնենք, ինչ են շինում գրողները, ուսուցիչները, արտիստները և առհասարակ այն երիտասարդությունը, որ ներկայացնում է Թիֆլիսի մեր ինտելիգենցիան։

Ես մի առանձին բավականություն եմ զգում, երբ այժմ պետք է նկարագրեմ կյանքն այն երիտասարդների, որոնք հանձն առնելով ամեն տեսակ զոհաբերություններ, որոնք համբերելով ամեն տեսակ հալածանքների, պատերազմում են արգելքների դեմ, գործում են, աշխատում են,

թեև առանց խրախույս և մխիթարության գտնելու ամբոխից, բայց դարձյալ լի հավատքով կրկնում են. «Ապագան մեզ է պատկանում»։ Այդ հույսը լցնում է նրանց սիրտը մի սրբազան հպարտությամբ, և իրանց աղքատության մեջ խիստ ղժվանքով նայում են մոտից անցնող բուրժուային, որ, փառավոր կառքի մեջ նստած, ինդացնում է Թիֆլիսի փողոցները։

Առանձին ուշադրության է արժանի այն երիտասարդությունը, որ պատվում է այս և այն խմբագրատան շուրջը։ Դրանք կազմում են տարբեր շրջաններ, որ որոշվում են իրանց հատուկ ավանդություններով։ Ես ոչ մի լրագրի ուղղությունը, լավ կամ վատ կողմերը քննադատելու նպատակ չունեմ։ Ես սիրտ վեր առնում գործիչներին միայն։

Յուրաքանչյուր սերնդի համար թանկ է ժամանակի մի որոշ շրջանը։ Ես երբեք մոռանալ չեմ կարող 72 թվականը, երբ սկսվեցավ հրատարակվել «Մշակ» լրագիրը[9]։ Ի՞նչ կյանք էր տիրում այն ժամանակ Թիֆլիսում, ի՞նչ դրության մեջ էր գավառների վիճակը։ Ամեն տեղ տիրում էր մի տեսակ անշարժություն, մի տեսակ թմրություն, մի տեսակ մեռելություն։ Հանկարծ, կարծես մի դյութական գավազանի հարվածքից, զարթնեցավ կյանքը։ Ոչ ոք չէր հավատում, թե այսպես կարող էր լինել։ Հավատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ։ Ես հիշում եմ այն գեղեցիկ տարիները, այն հրաշալի գիշերները, երբ այդ խումբը հավաքված խմբագրատան մեջ, կարդում էին, ծխում էին և վիճում էին։ Մեղանից շատերը հագներին շապիկ չունեին, մտնում էին այնտեղ բուլորովին պատատոտած կոշիկներով, այսուամենայնիվ, մենք ամենքս էլ ֆատալիստի հույսով հավատում էինք, թե կտիրապետենք մի մեծ ապագայի։

Սկզբում այս լրագրի շուրջը խմբվեցավ համալսարանական դիպլոմավոր երիտասարդությունը[10]։ Բայց նրանք շուտով ցրվեցան. կարծես թե, գործը խորթ թվեցավ իրանց։ Նրանք չհավատացին այս լրագրի ճակատագրին։ Մնացին դիպլոմից զուրկ իմքնուսներ՝ ինքնակրթությամբ զարգացած մանկտին, անաջողությունների տակ ճնշված, ամեն տեղից հալածված, բայց դարձյալ իր վեհությունը պահպանած մանկտին։ Ահա այդ ուժերը իրանց ուսերի վրա բարձրացրին «Մշակի» դրոշակը։

Հին «Մեղուն» այն ժամանակ նմանվում էր մի մաշված և ջարդված սայլակի[11], որին ճռնչալով քաշ է տալիս մի ուժաթափ ձի։ Սայլավարը բոլորովին հուսահատված, մոլորված և կես ճանապարհի վրա կանգնած, մտածում էր. «Հիմա դեպի ո՞ր կողմը քշեմ»։ «Մշակից» բա-

ժանված խումբն այս դրութեան մեջ գտավ մաշված սայլակը։ Նրան նորոգելին, կարկատելին և սկսելին միևնույն ճանապարհով առաջ գլխի...

Երիտասարդության աշխատանքը սուրբ է ինձ համար, որովհետև նոր կյանքի և նոր զորության արտահայտություն է։ Ես «Մեղուի» ուղղությունը քննադատելու նպատակ չունեմ. այստեղ նույնպես գործում են մանուկ ուժեր։ Բայց պետք էր ի նկատի առնել այն մեծ վերանորոգիչի խրատը, թե «նոր գինին պետք է նոր տիկի մեջ ածել. եթե տիկը հին է, կպատռվի, և գինին վիթվիթով, կոչնչանա...»[12]։

Թե ինչ կյանք էր տիրում «Մեղուի» խմբագրատան մեջ՝ այդ մասին ոչինչ ասել չեմ կարող, որովհետև նրա շրջանի մեջ երբեք չեմ գտնվել։ Բայց այսքանը հայտնի է, որ «Մեղուին» շրջապատում էր համալսարանական և ապրուստի կողմից փոքր ի շատե ապահովված երիտասարդությունը, որոնք չէին կրում կյանքի այն դժվանությունները, որոնց դեմ ստիպված էին պատերազմել «Մշակի» աշխատակիցները։

Եվ այսպես, համալսարանականները հեռանալով «Մշակից»՝ ասպարեզը մնաց ինքնուսներին։ Այդ լրագրի խմբագիրը խիստ ճիշտ համեմատություն արեց, թե նա թողեց պլիրներին և փարիսեցիներին և իրան շրջապատեց հասարակ ձկնորսներով՝ ժողովրդի չփչացած զավակներով։ Բայց պետք էր ցույց տալ հասարակությանը, թե այդ դիպլոմից զուրկ ուժերով կարելի էր կազմել մի նոր շկոլա։ Գործիչների առաջ դրած էին ահագին դժվարություններ ահագին պարտականությունների հետ։ Հողը միանգամայն խոպանացած էր։ Աշխատանքի բաժանություն չկար։ Ուզում եմ ասել, չկային ուրիշ օրգաններ, որոնց յուրաքանչյուրը հանձն առնելով մշակության մի ճյուղը, սկսեին աշխատել։ «Մեղուն» խիստ ծույլ գործակից էր, նոր բան արդյունաբերել չէր սիրում, իսկ «Արարատի», «Հայկական Աշխարհի» և «Դպրոցի» մասին խոսելն անգամ ավելորդ է[13]։ Բայց հասարակությունը մտավոր սնունդ էր պահանջում։ Եվ այս պատճառով «Մշակը» ստիպված էր իր թերթերը բեռնավորել ամեն տեսակ նյութերով։ Պուբլիցիստիկան և բելետրիստիկան ձեռք ձեռքի տված էին ընթանում։ Վիպասանը նկարում էր պատկերներ ժողովրդի կյանքից, ցույց տալով նրա տգեղ այլանդակությունները։ Տնտեսագետը հարվածում էր անխիղճ վաշխառուի և հարստահարիչ կապիտալիստի հարաբերությունները մշակ դասի հետ։ Մորալիստը խորտակում էր այն սև նախապաշարմունքները, որ ծանրացած էին ամբոխի հոգու վրա, և մատուցանում էր բարոյական նոր սնունդ։ Առողջ խոսքը բխում էր կենդանի աղբյուրից և տարածում էր դեպի ամեն կողմ նոր մտքեր։ Կրիտիկական ոգին գոր-

ծում էր իր անխոնա անդրուիյամբ։ Նա մտնում էր հեղինակի կաբինետը, վաճառականի խանութը, արհեստավորի գործարանը, ծառայողի աոյանը, գյուղացու խրճիթը, մեծատան սալոնը, վարժապետի դպրոցը, կղերի մենարանը, մի խոսքով, կյանքի բոլոր ծալքերում պատվում էր նա և խավարի միջից դուրս էր քաշում, մերկացնում էր այն ամենը, ինչ որ տգեղ էր, ինչ որ անարժան էր։ Այդ բոլորը գործվում էր այն շիոլայի մեջ, որ հիմնեց «Մշակը», ուր երիտասարդությունը ուսանում էր և ուսուցանում էր։

Ես երբեք չեմ կարող մոռանալ այն աղմկալի ժողովները, որ կազմըվում էին այդ լրագրի խմբագրատան մեջ մի քանի տարի առաջ։ Թեև ես ունեցել եմ իմ կյանքում մի քանի ոսկի րոպեներ, դրանք պատկանում են այն ժամանակին։ Ժողովների մեջ ոգևորված և բորբոքված վիճաբանությունները տևում էին շատ անգամ մինչև գիշերվա ժամը երկուսը։ Փոքրիկ, բոլոր նյութական միջոցներից զուրկ, բայց բարոյապես հարուստ խումբը ծրագրում էր հսկայական պրոեքտներ։ Այդ դոնքիշոտությունը, երևակայության այդ տենդագին բորբոքումը, թեև մասամբ ծիծաղելի էր, բայց գեղեցիկ էր, որպես մանուկի ժպիտը, որ արտահայտություն է նոր սկսվող կյանքի։ Իդեանների խորին արբեցության մեջ ամեն մի երիտասարդ մոռանում էր իր վիճակի տաժանությունը և մտածում էր, վիճում էր հասարակաց բարօրության մասին։ Կնպիշներից հետո նիստը վերջանում էր։ Խումբը ցրիվ էր գալիս բուլվարների վրա, երբ բոլոր հյուրանոցները փակված էին լինում։ Բայց դարձյալ խուլ և անապատացած փողոցների մեջ շարունակվում էր ընդհատված վիճաբանությունը։ Այն ժամին, երբ բախտավոր Բիֆլիսեցին հանգստանում էր իր փառավոր քնարանի մեջ, մեր կիսամերկ շրջմոլիկները, Գոլովինսկի պրոսպեկտի սալերը դղրդելով, քննադատում էին մի նշանավոր հասարակական հարց։ Ձյունը, անձրևը, սառը քամին չէր թշում նրանց դեպի իրանց ողորմելի բնակարանները, այլ ավելի զովացնում էր և ավելի կազդուրում էր տաքացած գլուխները։ Նրանք բաժանվում էին միմյանցից, երբ զարկում էր առավոտյան զանգակը. այն ժամանակ գնում էին հանգստանալու, որ մյուս օրը նոր ուժով սկսեն աշխատել։

Եթե ընդունենք այն ընդհանուր պայմանը, թե յուրաքանչյուր 25 տարուց հետո ամեն մի երկրի երիտասարդությունը փոխվում է, այն ժամանակ 58 և 72 թվականները խորհրդավոր նշանակություն կստանան մեզ համար։ Երկու որոշ ժամանակամիջոցներ ներկայացնում են երկու որոշ երիտասարդություն, մեկը՝ իդեալական, մյուսը՝ ռեալական։ Առաջինը ծնունդ է «Հյուսիսափայլի», իսկ երկրորդը ծնունդ է «Մշակի»։ Ես

հիշում եմ երկու պերիոդներն էս, որովհետև երկուսի մեջ էլ գործել եմ. «Հյուսիսափայլի» ժամանակ հայտնվեցան բանաստեղծներ, իսկ «Մշակի» ժամանակ՝ պուբլիցիստներ։ Բացառություններըշատ աննշան են։ Եթե վեր առնենք մեր այժմյան փոքր ի շատե աչքի ընկնող, կամ մանրը-մունր գրողներին, կտեսնենք, որ բոլորը «Հյուսիսափայլի» ժամանակից մնացորդներ են։ Նոր տաղանդներ չհայտնվեցան։ Եվ այս պատճառով, թեև լրագրությունը ծաղկեց «Մշակից» հետո, բայց գրականության դաշտը մնաց անապատ։

Հիշյալ երևույթի պատճառը կարելի է հեշտ կերպով բացատրել։ Անհերքելի է, որ մեր մտավոր զարգացման և ուսումների մեջ կա մի ներքին կապ։ 40—60 թվականները տվեցին Ռուսաստանին իր ամենաերևելի գրողներին։ Նրանից հետո տիրեց թմրություն։ Նույնը պատահեց և մեզ հետ։ Համարյա միևնույն ժամանակներում լույս տեսավ «Հյուսիսափայլը» և ներկայացրեց մի ամբողջ շարք գրողների։ Իսկ նրանից հետո նոր քանքարներ չհայտնվեցան։

Երբ հսկաներ չեն հայտնվում, ասպարեզը մնում է գաճաճներին։ Ծիծաղելի էր տեսնել, որ վերջին տարիներում յուրաքանչյուր համբակ ձգտում էր բանաստեղծ և մտածող լինել։ Խիստ կրիտիկայի բացակայությունն ավելի լրբացրեց այդ խեղճերին։ Չպատրաստված և անտաղանդ գրողներն ավելի անհամեստ և ավելի հանդուգն են լինում։ Կարելի է իսկույն նկատել, թե որպես քիթը վեր քաշած և որպես հպարտությամբ թխթխի փողոցներով անցնում է մի իմաստակ, որի մի քանի նամակները տպվել էին այս և այն լրագրում, կամ հրատարակել էր մի հիմար բրոշյուր։ Վիկտոր Հյուգոն իր փառքի բարձրության վրա ավելի համեստ է, քան թե այս տեսակ խեղճերը։ Առհասարակ ամեն ազգի մեջ սկզբում հայտնվում են խոշոր տաղանդներ և ձգում են իրանց հետևից բազմաթիվ հետևողներ։ Իսկ մեր մեջ մի Աբովյան հայտնվեցավ, որի գիրքը, թեև աննդհնցիայով հարուստ, բայց լեզվի կողմից ճապաղ և գեղարվեստական արժանավորություններից թույլ մի ստեղծագործություն է։ Այդ հեղինակությունն ունեցավ մի քանի անշնորհք հետևողներ։ Ես հարկ չեմ համարում ցույց տալ օրինակները։

Բայց պետք է արտաքին հանգամանքները նույնպես նպաստեին նոր գրողների հայտնվելուն։ Առհասարակ գրականական երիտասարդությունն աղքատ է լինում։ Քաղցածությունը, թեև մի կողմից զորություն է տալիս տաղանդին, բայց մյուս կողմից կարող է սպանել նրան։ Ոչ բոլոր բնավորությունները լինում են տոկուն։ Թեև պատահում են ճշմարիտ հերկաթի բնավորություններ։ Ես ճանաչում եմ մեկին, որ ամեն տարի գրում

է մի կամ երկու վեպ և համառությամբ փակում է իր գրասենյակի արկղիկի մեջ։ Բայց նա շատ անգամ օրական ծխելու պապիրոսի փող չունի։ Մի օրինավոր ամսագիր կարող էր նպաստել նոր ծնվող ուժերի զարգանալուն։ Եվ այս պատճառով «Փորձի» հրատարակությունը սկզբում ուրախությամբ ողջունվեցավ մեր ամենի կողմից, մանավանդ, որ այդ ամսագրի խմբագիրն առաջին օրինակը եղավ, որ սկսեց վարձատրել իր աշխատակիցներին։ Բայց սպասված հույսը չպսակվեցավ։ Որովհետև «Փորձի» խմբագրատան մեջ հավաքվեցան միևնույն հին ուժերը՝ բարգմանիչները, կոմպիլյատորները, արխիվոգնները, մաշված բիմանները նորից ծամծմող վիպասանները, ավերակների արձանագրություններ արտագրող և դիվանատների մեջ թափառող, բայց կենդանի մարդիկ չտեսնող ճանապարհորդները, իսկ ինքնուրույն բաներ գրողները, կենդանի նյութերի մասին գրողները խիստ սակավ մտան այդ ամսագրի խմբագրատան մեջ։ Եվ այս է պատճառը, որ «Փորձը» ներկայացնում է կատարելապես Մասիսյանի խանութը, այսինքն՝ մի մագազին, ուր վաճառվում են դյուրավորապես մաշված հնոտիներ մի քանի թարմ ապրանքների հետ։ Կարծես թե, այս ամսագիրը մի ապսպրած (заказной) հրատարակություն լիներ, որի ուղղությանը, երևի, ինքը խմբագիրն էլ չէ հավատում...

Ես ցույց տվեցի Թիֆլիսի մեր ինտելիգենցիային պատկանող երիտասարդության երեք զանազան խմբերը, որոնք շրջապատում են երեք հիմնարկությունների՝ «Մշակի», «Մեղուի» և «Փորձի» խմբագրատները։ Դրանք ձևացնում են երեք տարբեր կուսակցություններ, որոնց դիտավորությունն իսկապես միևնույնն է, բայց զանազանությունը նրա մեջն է միայն, որ յուրաքանչյուրը այլ և այլ ճանապարհով, այլ և այլ ուղղությամբ է դիմում իր նպատակին։ Իսկ ո՞ր ճանապարհն ավելի ուղիղ է, ո՞րն ավելի շուտ կհասցնի, այդ ցույց կտա մերձավոր ապագան։ Այսուամենայնիվ, այդ երեք խմբերը, լավ թե վատ, գործում են, աշխատում են և այդ իսկ պատճառով հարգելի են։

Բայց կա մի ուրիշ խումբ էս, որ հիշյալ երեք կուսակցություններից ոչ մեկին չէ պատկանում։ Այդ խումբը ոչինչ չէ շինում, միայն մեջտեղում անգործ պտտվում է, խոսում է, բամբասում է, վեզեկություններ է անում և ինտրիգաններ է սարքում։ Ում պատահել է կարդալ Ալֆոնս Դոդեի վերջին րոմանը (Jacques)[14], խիստ ճիշտ գաղափար կարող է ստանալ հիշյալ խմբի մասին։ Այդ րոմանի մեջ կա մի տիպ Դարժանտոն անունով, որն իրան երևակայում է երևելի բանաստեղծ։ Նրա գլխում լցված են հարյուրավոր գրքերի վերնագրներ, որոնց նա մի ժամանակ

պետք է գրե։ Միայն սպասում է իր մուզային, սպասում է ոգևորության։ Այդ ոգևորությունը նրա կարծիքով կարող է տիրել իրան, երբ ինքը կբռնակվի մի շքեղ տան մեջ, շրջապատված դեղեցիկ պարտեզով և ծաղիկներով, նազելի սիրուհու կողքին և աչքի առջև կունենա բնության հրաշալի տեսարանները։ Այդ բոլորը սարքում է նա, բայց մուզան դարձյալ չէ հայտնվում։ Նրա իդեանները, նրա սյուժետները գողանում են։ Լույս է տեսնում մի գիրք, մի հոդված, Դարժանատոնը բարկանում է, թե դա գրականական գողություն է, թե այն նյութն ինքը վաղուց գլխումը ուներ և մտածում էր գրել։ Դարժանատոնը շրջապատել է իրան մի քանի անաջողակներով (неудачники), որոնք նույնպես մեծ կարծիք ունեն իրանց հանճարի վրա և ճաշեր են ուտում բանաստեղծի մոտ, շաղոքորթում են նրա տաղանդը և վճռում են ամբողջ մարդկության ճակատագիրը։ Վերջապես, Դարժանատոնը մտածում է մի թերթ հրատարակել և միանգամով ոչնչացնել Փարիզի բոլոր պարբերական հրատարակությունները։ Նրա բարեկամ անաջողակները խոստանում են աշխատակցել և միլիոններ վաստակելու հաշիվ են տեսնում։ Դարժանատոնը մի տեղից փող է գրտնում և սկսում է հրատարակությունը։ Համբագրատան հիմնական դրամագլուխը մտնում է նրա անաջողակ աշխատակիցների քսակը, իսկ ինքը ստանում է երկու բաժանորդներ միայն, մեկն՝ իր սիրուհին, մյուսն՝ իր սիրուհու նախկին սիրողը։ Դարժանատոնն այսքանը գոնե կատարեց, բայց Թիֆլիսի մեր դարժանատոնները դեռ մտածում են...

Ամեն մի պերիոդ երիտասարդության կյանքի նշանավոր է լինում մի առանձին գործունեությամբ։ Մեր գրական երիտասարդությունն այժմ զոհաբերության պերիոդի մեջն է գտնվում։ Եվ այս պատճառով մեր բոլոր կրթողական հիմնարկությունները, որպես են՝ լրագիր, ամսագիր, թատրոն, դպրոց և այլն, պահպանվում են զոհաբերություններով։ Խոսենք յուրաքանչյուրի մասին առանձին։

Մինչդեռ ուրիշ ազգերի մեջ լրագրապետները հարստանում են, և աշխատակիցներն ահագին փողեր են ստանում, մեր խմբագիրները ոչ միայն չեն շահվում, այլ իրանց քսակից ամեն տարի մի քանի հազար ռուբլի վնաս են կրում։ Այդ մեծ զոհաբերություն է։ Ժողովուրդը չէ նպաստում գործին։ Ամենահաջողված պարբերական հրատարակությունը հազիվ տարեկան 1 000 բաժանորդ է ստանում, իսկ անաջողները՝ 3—4 հարյուր։ Նույնը կարելի է ասել և գրքերի մասին։ Ուրիշ ազգերի մեջ մի բանաստեղծ մի լավ բոման գրելով, իր ամբողջ կյանքն ապահովացնում է։ Իսկ մեր մեջ բախտավոր պետք է համարել հեղինակին, եթե կարողա-

նա տպագրության ծախսը դուրս բերել։ Եվ այս պատճառով պրակտիկան տպարիզը մեր երիտասարդության համար մի փշոտ ասպարեզ է։ Նրանց պետք է ժամանակի նահատակներ համարել։ Ապագան կգնահատե նրանց, կամ կատավածացնե, այդ ուրիշ խնդիր է, իսկ ներկան հայ է պահանջում։ Իդեալական սերը ոչ ամեն ժամանակ կարող է օժանդակել գրողներին հարատևելու իրանց պարապմունքի մեջ, երբ որ այդ պարապմունքն ապրուստի միջոց չէ տալիս։ Այդ պարագաները փոքր պատճառներ չեն, որ մեզանում գրողներ կամ խպտաո չեն հայտնվում, կամ եղածներն առաջադիմության չեն դործում։

Մենք չէինք ունենա մեր այժմյան պարբերական հրատարակությունները, եթե նրանց խմբագրները նյութապես ապահովված անձինք չլինեին։ Այդ մեծ բախտ է, որ հարուստները ձեռնարկում են այս տեսակ դործերի և կարող են ամեն տարի մի քանի հազար ռուբլի զոհել իրանց գաղափարին։ Բայց մինչև ե՞րբ։ Ընդունում են, որ մի ժողովրդի մեջ, որպես մերն է, այս տեսակ ձեռնարկությունները սկզբում պետք է զոհաբերությամբ հիմնված լինեին։ Բայց այդ անում է մի ընկերություն, և ոչ մասնավոր անձինք։ Այդ կետից նայելով, մեր խմբագիրների աշխատությունը պետք է բոլորովին բացառական երևույթ համարել։ Բավական չէ, որ նրանք զոհում են իրանց արծաթը, այլ զոհում են իրանց հանդստությունը, առողջությունը և վերջապես բախտը. դուցե ուրիշ ասպարեզներում նրանք ավելի երջանիկ կլինեին։ Ես թեև շատ փոքր ծանոթ եմ մեր խմբագիրների մասնավոր կյանքին, բայց դարձյալ դիտեմ, թե ինչ տաժանական աշխատություն են կրում նրանք, դործի մեծ մասն իրանց ձեռքով կատարելով։ Խմբագիրը պետք է ինքն ուղղե գավառներից եկած թղթակցությունները և հոդվածները. պետք է շատ անգամ մինչև դիշերվա ժամի 3-ը տպարանում աշխատի, սրբագրե և տուն վերադառնալուց հետո պետք է դարձյալ չքնե, այլ նստած, պետք է մյուս համարի համար հոդվածներ պատրաստե։ Առավոտյան 9 ժամին դարձյալ կարելի է տեսնել նրան դրասենյակի մոտ, հասցեներ է գրում, որ նոր դուրս եկած համարը փոստից հետ չմնա։ Այդ բոլոր մտավոր և մեխենական աշխատությունները, որ սարսափելի կերպով մաշում են մարդու կյանքը, կատարում են մեր խմբագիրները, առանց որևիցե նյութական շահ ունենալու, միայն բարոյապես վարձատրվելու հույսով, որից դարձյալ զրկում է նրանց հասարակությունը։ Այլևս չեմ խոսում աշխատակիցների մասին, որոնց զոհաբերությունները նույնպես ոչ սակավ համակրության արժանի են։

Հիմա դառնանք դեպի արա՛ստական երիտասարդությունը, դեպի թատրոնը։

Ինձ պատահել է կարդալ Թիֆլիսի հայոց բեմի վերաբերությամբ մի թատրոնական ժամանակագրություն միայն, որքան հիշում եմ, նա դրծողությունների պատմական մի հավաքածու էր, բայց ոչ երիտասարդ արտիստների կյանքի նկարագիր։ Այսուամենայնիվ, այդ աշխատությունն ինձ վրա խիստ տխուր տպավորություն թողնց։ Անհնարին է երևակայել, թե որքան դժվարությունների դեմ մաքառելով, մեր դերասանները կարողացել են պահպանել հայոց բեմը։ Նրանք ստիպված էին պատերազմել ժողովրդի նախապաշարմունքի դեմ, որ դերասանի վրա նայում է որպես մի «օյինբազի» վրա և ոչ որպես կրթության տպատավորի վրա։ Նրանք ստիպված էին պատերազմել քաղցածության դեմ, որովհետև այդ արհեստը հայ չէր տալիս։ Եվ վերջապես, ստիպված էին պատերազմել ուրիշ զանազան ճնշումների դեմ, որոնք մեծ խոչընդոտներ էին դնում գործի առաջադիմության։ Այդ բոլոր զոհաբերությունների մեջ քաջալերում էր, ոգևորում էր նրանց բեմի դաղափարը։ Ինչպես լրագրությունը կամ օրագրությունը պահվելով և հաջողվելով միայն սիրողների ձեռքով, այնպես էլ հայոց բեմը պահպանվելով սիրողների ջանքերով։ Դերասանական խումբ իսկապես մենք չենք ունեցել։ Բայց ասելով սիրողներ, պետք չէ հասկանալ պատահական ներկայացնողներ, որոնք մի կամ երկու անդամ զվարճության համար բեմ էին դուրս եկել։ Մեր սիրողները մի կազմակերպված խումբ էին և որոշվում էին հասարակ գերասանից նրանով միայն, որ վարձկաններ չէին, այլ բարոյապես համակրում էին բեմի արհեստին։ Նրանց առաջնորդում էր բեմի կրթչական նշանակությունը և ոչ անձնական շահը, որ այնքան չնչին էր, մինչ հիշելն անգամ ամելորդ է։ Եվ պետք էր երկաթի տոկունություն ունենալ մի այսպիսի գործ երկար տարիներ առաջ տանելու համար։ Այս պատճառով, թեև հայտնվեցան տաղանդներ, բայց տվեցին և գնեցին...*

Ոչ սակավ ուշադրության արժանի է բեմական գրողների վիճակը։ Նրանք գրում էին պիեսներ և միևնույն ժամանակ ստիպված էին պահպանել կամ մի կերպով հովանավորել դերասանների խմբին, որ նրանց ամբողջությունը չխանգարվեր, որպեսզի խաղացվեին իրանց ստեղծա-

---

** Ես այժմյան թատրոնական կոմիտեի գործունեության մասին խոսել հարկ չեմ համարում, որովհետև գեռ հայտնի չէ, թե վաղճանն ինչ կլինի։ Միայն այսքանը կարելի է նկատել, որ առաջ դերասաններին թողում էին քաղցած մեռնել, իսկ այժմյանների դլխին ոսկիներ են թափում։ Երկու ծայրահեղություններ, որ չափազանցության են հասնում։*

գործունեությունները։ Այսպիսի մի աշխատություն հանձն էր առել Մոլիերը, բայց նա շահվում էր իր ձեռնարկությունից։ Իսկ մեր հեղինակներն իրանց քսակից ծախսում էին, որ տեսնեն բեմի վրա իրանց նկարած տիպերին։ Այդ բավական չէ, նրանք շատ անգամ ռեժիսորի պաշտոն էին կատարում, տոմսակներ էին ծախում, մի խոսքով, ամեն հնարք գործ էին դնում, որ դերասանները շահվեն։ Այդ բոլորն այժմ մեր աչքին խիստ հասարակ բաներ են երևում։ Բայց կգան օրեր, երբ վերջապես հայոց բեմական գրողը կստանա հազարներ իր հեղինակության համար։ Այն ժամանակ երկու անուններ միշտ անմոռաց կմնան հայոց թատրոնի ժամանակագրության մեջ, թե որպես հիմնողներ, թե որպես սիրեսների ստեղծագործող տաղանդներ։

Նույն երևույթները, ինչ որ տեսանք լրագրության, գրականության և թատրոնի մեջ, կտեսնենք նաև դպրոցների վերաբերությամբ։ Ուշադրեսանք մեր բոլոր նշանավոր դպրոցները, սկսյալ Լազարյան, Ներսիսյան դպրոցներից, մինչև էջմածնի ճեմարանը և Ախալցխայի ծխական դպրոցները, հիմնված են կամ մասնավոր անձերի կտակներով, կամ ժողովրդի նվերներով։ Դարձյալ զոհաբերություն, դարձյալ սիրողներ։ Բայց այդ բոլոր նվիրված հազարավոր ռուբլիներն ինձ այնքան չեն գրավում, որքան գրավում է ինձ օրվա մեջ մի կամ երկու ժամ ձրի դասատվությունը մի երիտասարդի, որ զոհում է նա իր քանկ ժամանակից այս և այն օրիորդաց դպրոցի օգտին։ Եթե մեր երիտասարդությունն ունի գովելի հատկություններ, ամենագլխավորներից մեկը այդ է։ Տեսնում ես, մի երիտասարդ որևէ ծառայության մեջ հաղիվ քաշ է տալիս իր ապրուստը, կեսօրվա ժամը երկուսին դառնում է տուն, շուտով ճաշում է և իսկույն վազ է տալիս այս և այն օրիորդաց դպրոցը ձրի դասատվություն անելու։ Նա այնքան ճիշտ է, որ մի րոպե հետ չէ մնում իր դասից։ Եվ այս տեսակ դպրոցները, որ հիմնվեցան և պահպանվում են երիտասարդների զոհաբերություններով, ամենածաղկյալ դպրոցներն են Թիֆլիսում։ Մինչդեռ մյուսների մեջ, ուր վարժապետներին վճարում են, անճշտություններ, անկարգություններ շատ անգամ անպակաս են լինում։ Առհասարակ խոսելով, վերջին տասը տարվա ընթացքում մեր երիտասարդությունն ուսման և կրթության վերաբերությամբ հրաշք գործեց։ Դպրոցների կազմակերպության մեջ մտան նշանավոր փոփոխություններ։ Մանկավարժական նոր ձևեր, նոր եղանակներ, նոր դասագրքեր մուտք գործեցին նրանց մեջ։ Իհարկե, այդ բոլորը, որպես առաջին և երկրորդ քայլ, չէր կարող կատարյալ լինել, բայց խոստանում է մեծ ապագա։

Բոլոր այդ գործող երիտասարդությունը, թե լրագրության մեջ, թե

գրականության մեջ, թե թատրոնի մեջ և թե դպրոցների մեջ, համարյա միևնույն անձինք են, որ կոչվում են ընդհանուր անունով ազգասերներ, թեև իրանց մեջ մի առանձին սեր չունեն։ Դրանք բաժանված են զանազան խմբերի և կուսակցություններին, որոնց յուրաքանչյուրն ունի իր պարագլուխը։ Այդ մեծ ցավ չէ, որովհետև այս տեսակ բաժանմունքները կարող են ծնեցնել հառնդ և բարի նախանձ։ Բայց ցավալին այն է, որ գործիչների թիվը շատ փոքր է, թեև պետք է մտածել, որ մի բուռն անձնանվեր երիտասարդներ կարող են կենդանացնել մի ամբողջ աշխարհ։

Ես պահեցի վերջի համար երիտասարդության մի քանի դասեր, որոնք կազմում են հիմնական կապիտալը մեր ժողովրդի ապագա բարօրության։ Իմ խոսքը գործակատարների (պրիկազչիկների), արհեստավորների և մշակների մասին է։

Մի փոքրիկ հայացք ձգենք, թե ինչ վիճակի մեջ էր վաճառականությունը Թիֆլիսում 15—20 տարի առաջ։ Վաճառականը որոնում էր մթին խորշեր իր ապրանքները ծախելու համար. խանութի նեղ լուսամուտները ծածկում էր նա թափանցիկ կտավով կամ փոքրիկ ապակիները ներկում էր կարմիր գույնով։ Խավարի մեջ նրա կարծիքով ավելի լավ էր երևում ապրանքը, և ավելի հեշտ կարելի էր խաբել «մուշտարուն»։ Պարսկական ճաշակով շինված հին քարվանսարաները բոլորովին համապատասխանում էին վաճառականների այդ կարևորությանը։ Հիմա էլ կարելի է տեսնել այն տեսակ խանութներ բաղնիքների կողմի քարվանսարաներում կամ հին բազաղխանայում (тёмный ряд)։ Յուրաքանչյուր քարվանսարա, որպես կենտրոն մի խումբ վաճառականների, ուներ իր առանձին ուստաբաշին կամ բաշիր բաշին, այսինքն՝ վաճառականների գլխավորին։ Նա վճռում էր առևտրականների մեջ ծագած վեճերը և թե պաշտոնական, թե բարոյական ազդեցություն ուներ նրանց վրա։ Վճիռները լինում էին բերանացի, առանց որևիցե ատենագրության։ Բայց առաջին վաճառականական դատարանի (коммерческий суд) բացվելուց հետո, որ տևեց միայն մի քանի տարի, բաշիրբաշիների ազդեցությունը թուլացավ, թեև մինչև այսօր հին վաճառականները մի առանձին ափսոսանքով են հիշում վաղեմի դրությունը, ասելով, թե այն ժամանակ ավելի լավ էր, գործերը շուտ էին վճռվում։

Բայց այն օրից, երբ հին քարվանսարաներն իրանց նշանակությունը կորցրին, և փողոցների վրա հայտնվեցան եվրոպական ձևով մագազիններ, վաճառականների կյանքի մեջ մի նոր փոփոխություն առաջ եկավ։ Ասիական դուքանը եվրոպական մագազին դառնալով, Թիֆլիսի վաճառականն էլ չտխան, արխալուղը և մորթե գդակը փոխեց, այլու-

թուկ, ժիլետ հագավ, շլյապա կրեց և սկսեց եվրոպացու նման առևտուր անել, թեև բուն գործողության մեջ չփոխվեցան վաղեմի ձևերը։ Այսուամենայնիվ, դա մի մեծ քայլ էր դեպի առաջադիմություն։ Թիֆլիսում մի ժամանակ մատով էին ցույց տալիս այն վաճառականին, որ մի անգամ ոտքը դուրս էր դրել Ռուսաստանի սահմանից։ Իսկ այժմ Փարիզ, Մարսել, Վիեննա, Լայպցիգ, Լոնդոն, Մանչեստեր, Մոսկվա և Նիժնի-Նովգորոդ քաղաքներն այնքան սովորական են դարձել Թիֆլիսցու համար, որպես Մուշաեիդի այգին։ Եվ այդ փոփոխությունները եղան զարմանալի արագությամբ, մի 10—15 տարվա ընթացքում։

Բայց հին սովորությունները, որպես հիշեցի, իսպառ չկորցրին իրանց հետքերը։ Ես չեմ խոսում վաճառականների թեթև բարոյականության, անկանոն հաշվապահության և ուրիշ անկարգությունների մասին։ Միայն կասեմ, ինչ որ վերաբերում է երիտասարդ գործակատարներին։ Առհասարակ Թիֆլիսցի վաճառականը խիստ դժվարությամբ է ընդունում իր խանութում մի արդեն վարժված և պատրաստված գործակատարի (արիկաղչիկ), որ բաղել էր իր ծառայությունը և ուրիշ տեղ էր որոնում։ Այսպիսիներին շատ չեն հավատում. «Եթե լավ լիներ, իր խաղեինը ձեռքից բաց չէր թողնի»,— մտածում են նրանք։ Եվ այս պատճառով մեր առևտրական աշխարհում չկա գործակատարների մի առանձին դաս, որ ազատ լինեին իրանց գործունեության մեջ և ցանկացած մարդու մոտ ծառայություն ընդունեին։ Համարյա բոլոր խանութներում դեռ պահպանվում է հին սովորությունը, վեր առնել փոքրիկ աշակերտներ, որոնք սովորելով, վերջը գործակատարներ են դառնում։ Դժվար է նկարագրել, թե որքան տանջանքների պետք է համբերի ողորմելի աշակերտը և որքան տարիներ պետք է ձրի ծառայի, մինչև կարողանա գործակատարության աստիճանի հասնել։ Դա մի ամբողջ կուրս է, որ նա պետք է անց կենա սաստիկ տոկունությամբ։ Առհասարակ այսպես է լինում, աշակերտությունից նա դառնում է իր «խաղեինի» գործակատարը, ոռճիկ է ստանում, հետո փոքրիկ դումարի տեր դառնալով, իր համար առանձին առևտուր է սկսում։ Թիֆլիսի բոլոր նշանավոր վաճառականները սկսել են աշակերտությունից։ Նրանք առաջ եղել են աղքատ աշակերտներ։

Խանութի աշակերտն ամբողջ օրը մեքենայի նման պտտվում է, մի րոպե հանգստություն չունի, նստել չէ կարող, ուտում է ոտքի վրա։ Երբեմն նրան կանչենք խանութից դուրս, քաշված մի անկյունում, նիրհում է։ Որքան քաղցր են հանգստության այն մի քանի րոպեները, որ նա գողանում է իր վարպետի զգույշ հսկողությունից։ Ծանր ապտակը զարթնեցնում է նրան, և նա արտասուքը սրբելով, կրկին ներս է վազում աշ-

խաղալու։ Աշակերտն ավելի բախտավոր կլիներ, նրան չտիպերին կատարել, բացի խանութից, և «խաղլինից» տան սպասավորություններ։ Աղջիկ պարոնի ապսպրանքները սաստիկ հոգնեցնում են նրան։ Կիրակի օրերը նա ազատ է։ Այսօր գործում է իր համար։ «Русский базар» կոչված տոնավաճառատնոցում փոքրիկ աշակերտը ծախում է զանազան իրեղեններ։ Նա ընկերացել է իր նման մի ուրիշ աշակերտի հետ և տարվա ընթացքում խնայած կոպեկներով, որ գումարվել էր նրանց տատած «շաղիրդանաներից», կազմել են մի փոքրիկ կապիտալ։ Սեղանի վրա դարսած է նրանց վաճառքը՝ զանազան տեսակ սապոններ, սանրեր, թաշկինակներ, գուլպաներ և ուրիշ այս տեսակ իրեղեններ։ Աղմկալի ձայներով գնողներ են հրավիրում և վաճառում են։ Այդ հիմքն է նրանց ապագա մեծ գործունեության։

Որպես խանութի մեջ տոքի վրա սովորում է աշակերտն առևտուրի եղանակները, որպես ծանոթանում է ապրանքների հետ, այնպես էլ տոքի վրա ծանոթանում է նա տառերի հետ և սովորում է գրել-կարդալ։ Նրա վարժապետը լինում է իրանից մեծ աշակերտը։ Տառերի գործածության մեջ, իհարկե, հետզհետե վարժվում է նա, բայց դարձյալ մնում է անգրագետ։ Բացառություն պետք է համարել այն աշակերտները, որոնք որևիցե ծխական դպրոցում ավարտելուց հետո խանութ մտնելին։ Մեծամասնության շղթան լինում է խանութը. այստեղ ստանում են նրանք իրանց մտավոր և բարոյական կրթությունը, որ շատ նախանձելի չէ կարելի համարել։ Մեծ բարերարություն կլիներ վաճառականական մանուկ սերնդին, եթե նրանց համար կկազմվեին առանձին լսարաններ, ուր շաբաթը մի կամ երկու անգամ հաճախելով, նրանք կսովորեին լեզուներ և կվարժվեին գրագիտության մեջ։

Աշակերտը 10—12 տարեկան հասակում մտնելով մի խանութ, հազիվ թե 7 տարուց հետո դառնում է գործակատար։ Երբ նրան ամեն կողմից հավատարիմ են գտնում, այնուհետև հանձնում են գործեր և երբեմն ուրիշ քաղաքներ են ուղարկում ապրանքներ գնելու համար։ Բայց հավատարմությունը վաճառականների կարծիքով պետք է ուրիշ մտքով հասկանալ։ Այն գործակատարը հավատարիմ էր, որ կատարում էր իր «խաղլինի» բոլոր պատվերները, թեև նրանք շատ հետու լինեին բարոյական հատկություններից։ Բայց ինչ որ հետաքրքրական է գործակատարների ձգտումների մեջ, դա է նրանց սաստիկ ցանկությունն ազատ լինել և իր համար առանձին գործ սկսել։ Նրանք խիստ ուշ են ամուսնանում, սպասում են մինչև խանութի տեր դառնային, փող վաստակեին, որ լավ աղջկա հետ պսակվեին։ Ուզում եմ ասել, որ հարուստ աղջիկ առնեին։

Գործակատարների կյանքը սաստիկ անվայելուչ կողմեր է ներկայացնում։ Ցերեկը նրանք խանութից հեռանալ չեն կարող, առավոտյան ժամը ութից մինչև գիշերվա ժամը 12-ը զբաղված են մուշտարիներով։ Կերակրվում են աղայի սեղանի փշրանքներով, որ բերել էին նրա համար տնից։ Բայց մանուկ սիրտը զվարճություն է պահանջում, և գիշերը նրանք չգիտեն, թե ինչպես պետք էր անցկացնել։ Գործակատարների կլուբը դեռ նոր է բացվել. դա կարող էր ազատել նրանց քաղաքի անարգ փողոցներում թափառելուց կամ Մուշտեիդի այգիում փողեր ծախսելուց։ Կաֆեն, ռեստորան. այսպիսի տեղեր չեն մտնում նրանք, որ աչքի չերևային, որ իրանց կեղծ համեստության վերաբերությամբ «խազինի» մոտ իրանց վարկը չկտրեին։ Պտրում են մթին և անհայտ տեղեր, ուր կարելի էր ազատ կերպով քեֆ անել։ Համարյա բոլոր փոքր ի շատե մեծ առևտրական տների գործակատարները ծածուկ սիրուհիներ են պահում, որոնց համար վարձում են առանձին սենյակներ և նրանց ապրուստի համար նշանակում են ամսական ռոճիկ, երբեմն ավելի, քան թե իրանք էին ստանում։ Որպես գործակատարները կողոպտում են իրանց «խազինիներին», այնպես էլ կողոպտում են նրանց ուրիշ կամ վրացի սիրուհիները։

Առհասարակ գործակատարների մտավոր զարգացման մակերևույթը խիստ ցած աստիճանի վրա է կանգնած։ Ես մի քանիսներին մեայն ճանաչում եմ, որ հետաքրքրվում էին գրականությամբ, լրագիր էին կարդում և երբեմն գրում էին լրագրական հոդվածներ։ Այսպիսիները նրանք են լինում, որ գոնե որևիցե դպրոցում եղել էին։ Մնացածները, որպես սխալներով գրում են և խոսում են իրանց մայրենի լեզվով, այնպես էլ սխալներով գրում են ու խոսում են բոլոր լեզուներով, որ ծանոթ էին նրանց։ Այնուամենայնիվ, այդ անասուններին պետք է փիլիսոփա համարել, իրանց «խազիններին» հետ համեմատելով, որոնք իրանց անունը հազիվ թե կարող են ստորագրել։ Թիֆլիսի վաճառականների մեջ առաջ գործ էր ածվում վրաց լեզուն և գրագիտությունը, իսկ այժմ սովորական է դառնում ռուսաց լեզուն։ Խիստ սակավ խանութներ կարելի է գտնել, որոնց մեջ հաշվապահությունը և գրագրությունները լինեին հայոց լեզվով։ Դա Թիֆլիսի վաճառականների աննշելի թերություններից մեկն է։ Այժմյան գործակատարները, որ ապագայի վաճառականները պետք է լինեն, ամենևին հակումն չեն ցույց տալիս մայրենի լեզվի և գրության մասնակցում առևտրական գործերի մեջ։ Նրանք խոսում են մուշտարիների հետ այն լեզվով, ինչ ազգության որ պատկանում են, ռուսի հետ՝ ռու-

սկրեն, վրացու հետ՝ վրացերեն, և մինչև անգամ վայրենի օսի, լեզգու, չերքեզի և կոպիտ թարաքամայի հետ նրանց լեզուներով, բայց ոչ երբեք հայերեն։ Դործակատարները երբեք չեն փոխում իրենց վարպետին, որի մոտ սկզբից աշակերտել էին, և այս պատճառով նրանց առևտրական դիտությունը մնում է միակողմանի։ Ինչ տեսակ ապրանքներ էր ծախում վարպետը, նույն տեսակ ապրանքների խանութ է բաց անում իր համար և գործակատարը, նրան մի օր կհաջողվեր նրան առանձին առևտուր սկսել։ Ամանք նրանցից պահվում են «խազեինի» աղջկա կամ մոտ աղգականի հետ, ամանք վերջն ընկերանում են նրա հետ։ Առհասարակ, մեր վաճառականներն օդնում են իրանց հավատարիմ գործակատարներին և ցանկանում են, որ նրանք փողի տեր լինեին։ Բայց գործակատարն այս համակրությանն արժանանում է երկար տարիների դառն աշխատություններից հետո։

Դառնում եմ դեպի արհեստավորները։

Արհեստավորների դասը Թիֆլիսում դեռ պահպանել է իր կազմակերպության վաղեմի ձևերը։ Բոլոր արհեստավորները, նայելով իրանց պարապմունքի տեսակին, բաժանված են զանազան դասակարգերի, որոնք ընդհանուր անունով կոչվում են «համքյար»*։ Օրինակ, դերձակները, կոշկակարները, հյուսները, դարբինները, ոսկերիչները և այլն, առանձին-առանձին «համքյարներ» են ներկայացնում։ Յուրաքանչյուր «համքյար» ունի իր «ուստաբաշին», այսինքն՝ վարպետների գլխավորին, որին հարգում են, որի հեղինակությանը հնազանդում են, որի մի խոսքը վճռում է արհեստավորների մեջ պատահած վեճերը։ Յուրաքանչյուր «համքյար» ունի այլև իր առանձին դրոշը, հանդիսավոր օրերում նրանք հավաքվում են այդ դրոշի ներքո և որոշվում են մյուս «համքյարներից» իրանց գլխարկների գույներով։ Դրոշակների վրա նկարված է սովորաբար այս և այն արքի պատկերը, որի պաշտպանությունը վայելում է «համքյարը»։

Թիֆլիսում «համքյարները» հիշյալ կազմակերպությունը պահպանել էին դեռևս 15—20 տարի առաջ։ Բայց այն օրից, երբ արհեստավորների համար հիմնվեցավ առանձին դատարան (ремесленная управа), ուստաբաշիներն իրանց նշանակությունը կորցրին, և այժմ համքյարների համարյա անունն է մնացել։

Մեր արհեստավորները միևնույն կերպով են պատրաստվում, որպես մեր վաճառականները։ Արհեստ սովորել ցանկացող տղան մանկու-

---

* Համքյար պարսկական բառ է, նշանակում է համարվեստ կամ միևնույն գործով աշխատողներ։

թյունից որպես աշակերտ մտնում է մի վարպետի մոտ, ազատությունը նրա մեջն է միայն, որ վաճառականն իր աշակերտի համար ժամանակ չէ որոշում, իսկ արհեստավորն ընդունում է աշակերտին մի քանի տարվա պայմանով։ Վարպետը միշտ աչքի առջև է ունենում մի հաշիվ. եթե աշակերտը, օրինակ, 3 տարվա մեջ կսովորի արհեստը, նա 7 տարվա պայմանով է ընդունում աշակերտին, որ սովորելուց հետո մի 4 տարի էլ իրան ձրի ծառայե որպես վարձատարություն։ Արհեստավորներն իրանց աշակերտների հետ ավելի վատ են վարվում, քան թե վաճառականները։ Եթե վաճառականը երկաթե արշինով է ծեծում, արհեստավորները ծեծում են ուրագով, ահագին մկրատով, մուրճով և այլն։ Աշակերտի մասնավոր զարգացումը մնում է խիստ սահմանափակ, միօրինակ մեքենական աշխատությունը զորացնում է մկնակները միայն, իսկ ուղեղով նա բթանում է, հիմարանում է և վերջապես ապուշ է դառնում։ Հազիվ կարելի է գտնել արհեստավորների աշակերտների մեջ այնպիսիներին, որ գրել-կարդալ գիտենային։ Նրանք չեն սովորում կարդալ, որպես սովորում է վաճառականի աշակերտը, որովհետև մեր արհեստավորները դեռևս շատ պետք չեն զգում գրելու մեջ։ Նրանք շատ բաղադրյալ առևտուր չունեն և հաշիվները պահում են իրանց գլխում։ Այն արհեստավորները, որ եվրոպական ձևեր են ընդունել, պետք է բացառություն համարել։ Նրանց խանութներում հաշիվներ պահվում են։

Աշակերտը արհեստը փոքր ի շատե սովորելուց հետո դառնում է «խարգյար» (подмастер)։ Եթե նա պայմանը լրացնելով ցանկանում է շարունակել վարպետի մոտ իր աշխատությունը, ոռճիկ է ստանում։ Բայց ըստ մեծի մասին թողնում են վարպետի խանութը և իրանց համար առանձին արհեստանոց են բաց անում։ Հին ժամանակներում, այսինքն, երբ «համքյարները» դեռ պահպանել էին իրանց օրենքները, ավանդությունները և սովորություններն, ամեն մի աշակերտ արհեստը սովորելուց հետո, առանց ձեռնադրության, իրավունք չուներ առանձին արհեստանոց բաց անել և իր համար գործ սկսել։ Նա պետք է առաջ օրինվեր և արհեստավորների կարգի մեջ մտներ։ Այս ծեսը կատարվում էր սովորաբար հետևյալ կերպով։ Նորընծա արհեստավորը ճաշ էր պատրաստում և հրավիրում էր «համքյարի» նշանավոր վարպետներին. այնտեղ գտնվում էր և «համքյարի» գլխավորը՝ «ուստաբաշին»։ Ճաշելուց հետո նորավարտ արհեստավորը ներկայացնում էր վարպետների ժողովին իր մի ձեռագործը. երբ նա հավանություն էր գտնում, և երբ վարպետները վկայություն էին տալիս նրա հմտության մասին, այնուհետև վարպետների գլխավորը կատարում էր օրհնության կարգը։ Եթե, օրինակ, ար-

հնասավորը պետք է դարբին լիներ, վարպետների գլխավորը վեր էր առնում մի մուրճ, օրհնում էր և տալիս էր նրա ձեռքը։ Նվ նրանից մի քանի խոսումներ առնելով, որ չխաբե, սուտ չխոսե, որ հավատարիմ մնա «համքյարի» դրոշին և այլն, հետո նա կարդում էր արհեստավորի գլխին մի քանի ինքնաձև օրհնություններ և երեսին զարկում էր մի ապտակ։ Դրանով օրհնությունը վերջանում էր, և երիտասարդ արհեստավորը «ուստա» էր դառնում և իրավունք էր ստանում այնուհետև «համքյարի» անդամ համարվել և իր համար առանձին արհեստանոց բաց անել։ Այդ ծեսը հիշեցնում է միջնադարյան ասպետներին, թե որպես նրանք օրհնվում էին և որպես այս ու այն ասպետական կարգի մեջ էին մտնում։ Բայց արհեստավորների վերաբերությամբ այս տեսակ սովորությունները հետաքրքիր են և այն կողմից, որ ցույց են տալիս, թե մեր նախնիքը որքան մեծ նշանակություն են տվել արհեստին և որքան հոգ են տարել նրան միշտ ծաղկյալ վիճակի մեջ պահելու համար։ Այդ իմարկե իր ժամանակում ուներ իր նշանակությունը, իսկ այժմ պայմանները փոխվել են։ Այսուամենայնիվ, դեռևս իրանց նահապետական դրությամբ մնացած արհեստավորների մեջ կարելի է և այսօր տեսնել վերոհիշյալ սովորությունները։

Առհասարակ խոսելով, արհեստավորների կյանքում նույն փոփոխություն է նկատվում, ինչ որ տեսանք վաճառականների մեջ։ Նվ որ հետաքրքրությամբ ուշադրություն է դարձրել Հայկական բազար (Միջին փողոց) կոչված թաղում արհեստավորների վրա, անպատճառ տեսած կլինի, որ այստեղ արհեստավորների յուրաքանչյուր դասակարգը միմյանցից բաժանված, առանձին-առանձին խմբեր են կազմում, որ վերտեղված էին զանազան շարք խանութների մեջ։ Մի փողոցի վրա գործում են ոսկերիչները, մյուսի վրա՝ մուշտակակարները (ճոնները), մի այլ տեղ՝ զինագործները, մի ուրիշ շարքում՝ կոշկակարները և սառաջները, հետո պղնձագործները, դերձակները, հյուսնները և այլն։ Դրանք զանազան «համքյարներին» ներկայացուցիչներ են, որոնց յուրաքանչյուր մեկ խումբը կենտրոնանալով իր համարվեստների շրջանի մեջ, գործում են միասին և ուրիշների հետ չեն խառնվում։ Այդ կաստայական դրությունը ներկայացնում է արհեստավորների դասակարգության հին ձևը։ Այստեղ արհեստը նախնական կերպով ավանդվում է սերնդից սերունդ, խիստ սակավ փոփոխություն միայն կրելով։ Բայց երիտասարդ արհեստավորները, որոնք սովորել էին կամ եվրոպացու, կամ մի օտարականի մոտ, և կամ մի այլ երկրում կատարելագործել էին իրանց արհեստը, այսպիսիները չեն մտնում վերոհիշյալ խմբերի մեջ, այլ հեռանալով նրանցից,

առանձնանում են և քաղաքի զանազան փողոցների վրա արհեստանոցներ են բաց անում։ Դրանք արհեստավորների նոր սերնդի ներկայացուցիչներն են, որ մեծ առաջադիմություն են խոստանում։ Երիտասարդ արհեստավորները համարյա զուրկ են ամեն տեսակ զվարճություններից։ Թիֆլիսում դեռևս չկան այնպիսի հյուրանոցներ և կաֆեներ, որ ժողովրդի միջին դասին մատչելի լիներին։ Իսկ արհեստավորների կլուբն այն բարերար ազդեցությունը չունեցավ, որքան սպասվում էր։ Համեստ և հասարակական կյանքին դեռ չընտելացած արհեստավորն ավելի շռայլություն սովորեց, երբ տան չորս պատերի մեջ փակված կնոջը հանկարծ դուրս բերելով, սկսեց հաճախել կլուբի «վեչերները»։ Այն ևս պետք չէ մոռանալ, որ կլուբում հաճախում են միայն հասակն առած արհեստավորները, ոչ թե երիտասարդությունը։ Այդ վերջինների զվարճությունն այն է, որ երբեմն հավաքվում են միասին և գնում են Օրթաճալա, քեֆ են անում, կամ կիրակի օրերը մանում են մի գինետուն և, մի չարեք գինի ոտքի վրա խմելով, դուրս են գալիս։ Այսուամենայնիվ, երիտասարդ արհեստավորների բարոյականությունը համեմատաբար ավելի բարձր է, քան վաճառականների գործակատարներինը։ Արհեստավորներն ավելի վաղ են ամուսնանում և շուտով ընտելանում են ընտանեկան կյանքին. չքավոր տնտեսությունը նրանց ժամանակ չէ տալիս հրապուրվելու ախտերով։

Վեր առնենք մշակ դասը։

Թիֆլիսի հայոց ժողովրդաբանության մեջ իսկապես մշակ դաս չկա։ Այն մշակները, որոնք փալանը ուսերին դրած լցնում են այդ քաղաքի հրապարակները, բոլորը գաղթականներ են Պարսկաստանից, Տաճկաստանից կամ Հին-Նախիջևանի և Երևանի գավառներից այստեղ եկած։ Չէ կարելի երևակայել մի ավելի տաժանական աշխատություն, քան թե այն, որ կատարում են այդ մշակները։ Դրանք ընդհանուր անունով կոչվում են «համալներ»։ Համալի վիճակը և բնակիր գրաստի վիճակը ոչնչով չեն տարբերվում միմյանցից, երկուսն էլ ծանրություններ են կրում։ Թիֆլիսի քարվանսարաների, մաքսատան, երկաթուղու կայարանի, հրապարակների բոլոր համալները հայեր են։ Օտարազգիները չնչին փոքրամասնություն են կազմում։ Աշխատությունների տեսակները զանազան են. ոմանք բեռնակրություն են անում, տեղափոխում են ահագին, երբեմն 10—15—20 փութի ծանրությամբ հակիր և տակառներ։ Հսկայի ուժ և մկնակների սաստիկ զորություն պետք է այս գործի համար, բայց հայ համալը տանում է փալանով ամրացրած մեջքի վրա իր բեռը որպես մի թևթև փետուրյա բարձ։ Ոմանք, որ կազմվածքով ավելի թույլ են, կթող-

նների մեջ տներից աղբ են դուրս տանում և թափում են Կուր գետի մեջ, կամ ավելում են փողոցների անմաքրությունները։ Ամանք ջրկիրներ են, փոքրիկ թուլուղների մեջ, որ քաշ են տալիս ուսից, ջուր են բերում աղքատ ընտանիքների համար։ Ամանք բանում են տների շինվածքների վրա, խճուղիների և երկաթուղու վրա որպես հասարակ մշակներ, կամ աշխատում են աղյուսի գործարանների մեջ, և կամ քարափից քար են կտրում։ Երկար կլիներ մի առ մի թվել այդ թշվառների անտանելի աշխատությունների զանազան տեսակները, որոնց կարող էր համբերել միայն այն անբախտը, որին դառն աղքատությունը ստիպել էր թողնել իր հայրենիքը, տունը, ընտանիքը, և պանդխտության մեջ հանձն առնել մի անասնական գործ։

Համեմատաբար ավելի երջանիկ են այն մշակները, որոնք խմբված են զանազան քարվանսարաներում։ Յուրաքանչյուր քարվանսարայի մեջ մշակների խումբը կազմում է մի տեսակ միություն «օդաբաշիի»* գլխավորության ներքո. դրանք ունեն իրանց ընդհանուր դրամարկղը (կասան), որի մեջ ձգում է ամեն մեկն իր օրական վաստակը, ծախսում են այդ դրամարկղից, կերակրվում են միասին և ամեն մի ամսի վերջը բաժանում են իրանց մեջ մնացորդը։ Հիվանդ ընկերը չէ զրկվում իր բաժնից, եթե ամբողջ ամիսը աշխատած ևս չլիներ։ Մի նոր մշակ ընդունվում է խմբի մեջ ամենի համաձայնությամբ։ Բոլոր այս տեսակ հիմնարկությունների մեջ աշխատող մշակները մի տեսակ ապահովություն ունեն այն կողմից, որ առանց գործի չեն մնում, այլ փոխադարձաբար օգնում են միմյանց։ Մինչդեռ մյուս մշակները ստիպված են ամեն օր և ամեն րոպե գործ պարել։ Շատ անգամ ամբողջ ժամերով նրանք կանգնած են հրապարակների և փողոցների վրա, սպասում են մինչև մեկը կկանչեր և մի շալակ կհանձներ այս և այն տեղը հասցնելու համար։

Ամբողջ օրվա դառն չարչարանքներից հետո մշակներից շատերը աշխատում են գիշերից ևս օգուտ քաղել։ Հանդստությունը զոհում են մի քանի կոպեկների։ Ո՞ւմ չէ պատահել տեսնել, գիշերը փողոցներով անցնելիս, մագաղինների դռանը, մերկ սալերի վրա, ձյունի և անձրևի տակ պառկած «հասասներին» (գիշերապահ)։ Դրանք յերեկն աշխատող մշակներն են։ Երբեմն նրանք այն աստիճան հոգնած և թմրած են լինում, որ գիշերվա քնից վերադարձող բուրժուան ոտքը կոխում է նրանց վրա և անց է կենում. թշվառները ոչինչ չեն զգում։ Իսկ երբեմն կտեսնեք մեկին, փաթաթված սոլդատի քրքրված վերարկուի մեջ, դառն-մելա-

* Օդաբաշի նշանակում է խանութպան։

մաղձական ձայնով երգում է։ Քունը մոտ չէ գալիս կարոտ աչքերին, նա երգում է իր «յարին», որին դեռ նոր էր նշանել, երբ Թողեց Հայրենիքը. այժմ անցել էին մի քանի տարիներ, անբախտ մշակը դեռևս այնքան փող չէր վաստակել, որ վերադառնա, պարտքերը վճարե, հետո կարողանա պսակվել։

Ում պատահել է մտնել Սալի կողմի քարվանսարաներից մեկի մեջ, ուր կանգնեցնում են ֆուրգոններ, կարող է փոքր ի շատե գաղափար ստանալ մշակների կյանքի մասին։ Թիֆլիսի այդ մասը, ուր թափում են ամեն տեսակ անմաքրություններ, ուր գարշահոտությունը թմրեցնում է մարդուն, ուր խոզերը միայն աղտոտությունների մեջ բախտավոր են ապրում, Թիֆլիսի այդ դժոխքը մշակների դիշերային կացարանն է։ Այնտեղ կարելի է գտնել փոքրիկ մթին սենյակներ, որ ամիսը 3—4 ռուբլով վարձով են տալիս. երբեմն 10—20 մշակները վարձում են այդ սենյակներից մեկը։ Ոչ մի կարասի չէ կարելի տեսնել այդ խոնավ և սառը գերեզմանների մեջ, ուր կարմիր աղյուսով ծածկված մերկ հատակի վրա, իրանց փալանները բարձի տեղ գլխների տակին գրած, գիշերը հանգստանում են մշակները ցերեկվա հոգնածությունից հետո։ Ոմանք այնքան խնայող են լինում, որ սենյակներ չեն վարձում, այլ մտնում են այս և այն քաղաքացու տանը որպես դռնապան (дворник)։ Գիշերը հրակում են դռան վրա, իսկ ցերեկը գնում են իրանց գործին։ Տանուտերն այնքան բարի է լինում, որ խեղճ մշակի աշխատության փոխարեն ձրի տալիս է նրան օթևանելու մի խորշ. դա լինում է ըստ մեծի մասին ներքնատան մի անպետք անկյունը։

Թիֆլիսի մշակների մեջ մի ավելի հետաքրքիր մաս ներկայացնում են բուլուղչիները (ջրկիրներ). դրանք կազմած ունեն մի տեսակ համայնք, որ ունի իր կանոնները և սովորությունները։ Թիֆլիսի բոլոր թաղերը բաժանված են (բուլուղչիների կարգադրությամբ) զանազան մասերի, որոնց յուրաքանչյուրը մի բուլուղչու «մուշտարին» է. այսինքն՝ բացի այն բուլուղչուց մի ուրիշն իրավունք չունի այն թաղերոց ջուր տալու։ Այդ իրավունքը վաճառվում է բուլուղչիների մեջ. օրինակ, մեկ թաղում հարյուր ընտանիքի ջուր էր տալիս մեկ բուլուղչի, նա իր դավթարի մեջ ունի անների ցուցակը և նույն ցուցակով վաճառում է իր ջուր տալու իրավունքը մյուսին, առանալով նրանից 500—1000 ռուբլի։ Եվ այսպես ժողովուրդն անցնում է մի բուլուղչու ձեռքից մյուսին։ Բուլուղչիներն իրանց մեջ կարգ պահպանելու համար ընտրում են մեկին իրանց միջից որպես «ուստաբաշի»՝ գլխավոր, որը ճանաչված է լինում քաղաքական վարչության։ Թիֆլիսի մշակների մեջ միայն բուլուղչիներն են, որ

ազատ են հարկից, որովհետև, նայելով այն ծառայությանը, որ նրանք կատարում են հրդեհների ժամանակ՝ առանց որևիցե վարձատրության, քաղաքը նրանցից հարկ չէ պահանջում։ Հենց էր մի տեղ հրդեհ է հայտնվում, քաղաքի ամեն ծայրերից թուլուղչիները թափվում են խոկույտ։ Զարմանալի է տեսնել, թե որպիսի անձնազոհությամբ այդ քաջերը նետվում են կրակի մեջ. ոչինչ նրանց չէ վախեցնում, ոչինչ նրանց չէ վհատեցնում։

Թուլուղչիները Պարսկաստանի Սալմաստ գավառից եկած կաթոլիկ և լուսավորչական հայեր են, նրանց մեջ գտնվում են և ասորիներ։ Բոլոր մշակների մեջ դրանք են, որ պահպանում են մի կազմակերպված միություն, և այդ միությանն են պարտական, որ ունեն համեմատաբար ավելի լավ վիճակ։ Կուկիայի Զուխուրեթ կոչված թաղում կարելի է տեսնել թուլուղչիների հյուրանոց, ուր նրանք ընթրիք են ուտում, խմում են և ծխում են պարսկական ղելյան։ Բացի թուլուղչիներից, մնացած բոլոր մշակները մի տեղ չունեն հավաքվելու համար։ Սին, ինչպես վերևում նկատեցի, Թիֆլիսում չկան այնպիսի հյուրանոցներ, ուր արհեստավորները կարողանային լժան ճաշ ուտել, չէ կարելի երևակայել անգամ, որ այս տեսակ հիմնարկություններից օգուտ քաղեին մշակները։ Այդ ողորմելիները կերակրվում են միայն յամաք հացով. հրապարակի վրա գնում են մի հատ վրացու «պուրի» և այնպես կրծելով, ծանր շալակի տակ, շարունակում են իրանց գործը։ Մշակը, որ գլուխը դնելու մի անկյուն չունի, ինչպե՞ս կարող է իր համար առանձին խոհանոց սարքել։ Կիրակի օրերը միայն մի քանիսն ընկերանում են միասին, առնում են մի կտոր միս և տալիս են փուրունչիին եփելու համար։ Այդ աշխատող դասը, որ ավելի ուտելու պետք ունի, բոլորովին զուրկ է մնում զորացնող սննդից։ Բացի զվարճությունից նույնպես զուրկ են մնում նրանք. երբեմն տոն օրերում մտնում են մի գինետուն և խմում են մի քանի բաժակ արաղ. ալքոհոլը միայն կարողանում է գրգռել մշակի բթացած և անզգայացած ջղերը։

Մի քանի խոսք մշակների մտավոր կյանքի մասին։ Մեր մեջ կան ազգասերներ, որոնք երազում են Մուշի, Վանի և Զեյթունի վրա, բայց այստեղ, Թիֆլիսում, մշեցի և վանեցի հայի զավակներն իրանց աչքի առջև չեն տեսնում։ Մեղանից դեռևս ոչ ոք չմտածեց հիմնել մշակների համար կիրակնօրյա դասախոսություններ, ծանոթացնել նրանց տնտեսական որևիցե հարցի հետ։ Ախր այդ՝ թշվառներն՝ առանց պատճառի չէ, որ թողել են իրանց հայրենիքն և այստեղ պանդխտության մեջ տարիներով մաշվում են։ Պետք չէ՞ արդյոք քննել այն պատճառները, որ դուրս են

բշում նրանց իւրանց հայրենիքից, և ցույց տալ ապրուստի ուղիղ ճանապարհը։ Մշակների մէջ կան մեծ թվով զրագետներ. այսպիսիները ուրիշ երկրում օգուտ են քաղում կոպեկանոց լրագրներից, բայց այստեղ կարդալու ոչինչ չեն գտնում։ Բողոքները մտավոր սնունդը։ Թիֆլիսի հայ մշակները զուրկ են մնում և բարոյական և հոգևոր մխիթարութիւնից։ Ոչ մի հայ քահանա չէ բաց անում մշակի խղճուկ օթեանի դուռը, որովհետև նրանից շահվելու ոչինչ չէ սպասում, բայց ինձ հայտնի են փաստեր, որ Պարսկաստանից այստեղ եղած փոքրաթիվ բողոքական մշակների համար՝ Ուրմիո ամերիկական առաքելութեան միսիոնարներն իրանց ծախսով ուղարկել են Թիֆլիս մի քարոզիչ քահանա, որ միշտ այստեղ է մնում, և թե հոգևորապես, թե բարոյապես մխիթարում է նրանց։ Ամեն կիրակի հավաքում է նա իր փոքրիկ հոտը գերմանական կոլոնիայում մի հատկացրած տեղ և քարոզ է կարդում։ Այդ բավական չէ, քահանան իսկույն վազում է բժշկի մոտ, երբ մեկը հիվանդ էր, և խնամք է տանում նրա առողջութեան մասին, եթե աղքատ էր։ Բայց մեր հայ մշակները հիվանդանում են և անտերութիւնից, ճանճերի նման, ամեն տարի հարյուրներով մեռնում են, ոչ ոք նրանց վրա չէ մտածում։ Այդ ողորմելիները մինչև անգամ չգիտեն, որ Թիֆլիսում կա այնպիսի տեղ, ուր բժիշկները ձրի են նայում հիվանդին (лечебница) և կա այնպիսի տեղ էլ, ուր հոգ են տանում աղքատներին ձրի կերակրելու և առողջացնելու համար (больница)։

Կա մի ուրիշ կետ էլ, որ ոչ սակավ ուշադրութեան արժան է։ Թիֆլիսում կարելի է հաշվել միջին թվով մինչև 5000 հայ մշակներ, որոնք օտար երկրներից են եկած*։ Դրանք երբեմն մինչև տասն տարի շարունակ մնում են այստեղ, անդադար աշխատում են, փող են վաստակում, բայց չգիտեն, թե որտեղ պահեն իրանց դառն քրտինքի դինը։ Մշակի դանձարանը կաշիից իր ձեռքով կարած փոքրիկ պայուսակն է, որ միշտ կարելի է տեսնել նրա կողքից քաշ ընկած։ Բայց քիչ չէ պատահում, որ բնած ժամանակ նրա պայուսակը կտրում են, և մշակը զրկվում է իր դանձից, իր մի քանի տարվա դառն աշխատանքից։ Ոմանք ծանոթանում են մի քաղաքացու հետ և փողերը նրան պահ են տալիս, առանց վնք-

---

* Ինձ Ջուլֆայի կարանտինում ասեցին, թե ամեն տարի մոտ 20 հազար մշակներ անցնում են Պարսկաստանից դեպի Կովկասի զանազան գավառները. այս հաշվով արքան հոգի անց կկենան Արաքսի վրա դրված ռուսաց մյուս կարանտինների անցքերից, որպես են Ջաբրայիլի, Շահթախտի, Իգդիրի և մյուս անցքերը։ Հետաքրքիր կլինէր թվան անձներ հավաքել այս տեղերից, և այն ժամանակ կբացատրվեր Պարսկաստանից և Տաճկաստանից ռուսաց հոգի վրա անցնող մշակների ճիշտ թիվը։

սիլի և առանց թղթի. և խղճմտանքով քաղաքացին շատ անգամ կամ ուրանում է «կռույի» հանձնած փողերը, և կամ վայրիվերո հաշիվներ է ցույց տալիս։ Վերջապես այդ ողորմելիները չգիտեն, թե իրանց վաստակած փողերն ինչ միջոցով կարող են ապահով կերպով հասցնել իրանց հայրենիքը, իրանց կարոտ ընտանիքներին։ Ըստ մեծի մասին այսպես են անում. մի քանի տարվա վաստակածը հավաքում են մի տեղ, փոխում են ռուսաց ոսկու հետ, և 40—50 հոգի միասին խմբվելով, դիմում են դեպի իրանց հայրենիքը։ Տաճկաց և պարսից սահմանների վրա միշտ պատրաստ են ավազակների հրոսակներ մշակների քարավանը կողոպտելու համար։ Այս տարի մի քանի անգամ կարդացինք լրագրների մեջ Ռուսաստանից Մուշ վերադարձող մշակների կողոպտվելը քրդերից։ Ուրեմն Թիֆլիսի մշակները ոչ իրանց վաստակած փողը պահելու տեղ ունեն և ոչ հայրենիքը հասցնելու ապահով միջոցներ։ Մի փոխատու խնայողական կասսա (ссудо-сберегательная касса) կարող էր ազատել նրանց վերոհիշյալ անբախտություններից, բայց այդ մասին մինչև այսօր ոչ ոք չմտածեց։ Եթե հայ մշակների թիվը հաշվում ենք Թիֆլիսում 5000 հոգի, մի այսքան էլ, և գուցե ավելի, Բուրքեր, ասորիներ և ուրիշ ազգերից կլինեն. և այս պատճառով հիշյալ հիմնարկությունը փողերի սակավ շրջաբերություն չէր ունենա, եթե կազմված ևս լիներ միմիայն մշակների համար։ Այլևս չեմ խոսում օգտավետության մասին, թե մի այսպիսի հիմնարկություն որքան կարող էր նպաստել մշակների շահերին։ Որովհետև փողը միշտ մշակի մոտ պահվելով, ոչ միայն կորցնում էր իր տոկոսը, այլ նա կարող է միանգամայն կորչել, կամ շռայլաբար ծախսվել։ Քիչ չէ պատահում, որ մշակը հանկարծ մոլության մեջ է ընկնում և մի քանի օրվա մեջ ոչնչացնում է իր մի քանի տարվա վաստակածը։

Չէ կարելի չավելացնել մի քանի խոսք մշակների հավատարմության մասին։ Կ. Պոլսի հայ համալների ազնիվ հատկությունները մինչև անգամ գրավեցին եվրոպական մամուլի ուշադրությունը։ Մեր մշակները ևս պակաս չեն նրանցից իրանց բարոյական կողմերով։ Հայաստանի այդ չքաշացած զավակները սաստիկ վախենում են մեղքից, որքան սարսափում են աստուծո պատժից։ Պանդխտության մեջ անգամ, օտար հասարակության մոլորեցնող ազդեցության ներքո, նրանք պահպանում են իրանց բնավորության մաքրությունը։ Թիֆլիսի վաճառականը մեծ վստահությամբ հանձնում է մշակին իր խանութի և ամբարների բանալիքները, ամենևին չկասկածելով նրա հավատարմության մասին։ Ինձ հայտնի են մի քանի փաստեր, որ մշակների ձեռքը որևէ դեպքով ընկել էին գումարներ և ապրանքների հակեր, որոնց հեշտությամբ կարող էին թաքցնել և իրանց

սեպհականացնել, բայց նրանք չեն կամեցել օգուտ քաղել դեպքից, և պահելով իրանց մոտ ուրիշի սեպհականությունը, կրկին հանձնել են տիրոջը։

Ես վերջացրի իմ հետազոտությունը։ Այժմ ընթերցողին եմ թողնում եզրակացնել, թե որպիսի ապագա է խոստանում հայ երիտասարդությունը։

Ի՞ՆՉ ԿԱՊ ԿԱ ՄԵՐ ԵՎ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Ա

Մինչև վերջին ռուս-թուրքական պատերազմը, ևթե պատահում էր մեր կողմերում մի տաճկաստանցի հայ ֆեսը գլխին, իսկույն «հոտոս» անունը կպցնում էինք ճակատին և երեսներս շուռ տալիս։ Մեր կողմերում մշեցի և վանեցի հայ մշակներին մեր երեխաներն անգամ «կուռո» էին կոչում, և շատերը մեզանից հավատացած էին, թե «կուռո» հայ չէ, այլ քրդերի մի որևէ ցեղին է պատկանում։

Տաճկաստանցին նույն սխալ և մութը կարծիքներն ուներ մեր մասին։ Եթե մեզանից մեկը հանդիպում էր Կ. Պոլսի կամ այլ քաղաքների փողոցներում, տաճկաստանցին մի կասկածավոր հայացք էր գցում մեր երեսին, և «անոնցմե է»... ասելով՝ ցույց էր տալիս իր ընկերին։ Մեզ համարում էին հայությունից օտարացած, մենք միմյանց չէինք ճանաչում, նրանք սուի էին մեզ, իսկ մենք՝ նրանց։

Մեր մեջ բոլոր հարաբերությունները կտրված էին։ Վաճառականությունը չէր մոտեցնում մեզ, վաճառականությունը, որ կարող էր մեր մեջ հաղորդակցության կապ լինել, այն ևս չկար։ Տաճկաստանցի հայը գործ ուներ եվրոպացիների հետ, իսկ մեր վաճառականը՝ Մոսկվայի և Նիժնայի հետ։ Մի քանի ծխախոտ ծախողներ վերջին ժամանակներում միայն սկսեցին հայտնվել Թիֆլիսում։

Մնում էր երկու բան, որ կարող էին մեզ ծանոթացնել միմյանց հետ, այն է՝ գրականությունը և լրագրությունը։

Բայց մի՞թե մենք ունենք գրականություն։ Մենք ունենք արդարև հին, կլասիկական հարուստ գրականություն, բայց նոր ոչինչ չունենք։

Նրիշեն կարդալով կարող ենք տեղեկություն ստանալ, թե որպես էր տանջվում հինգերորդ դարու հայը պարսիկներից, իսկ այժմյան Թուրքիայի հայի վիճակի մասին նա մեզ տեղեկություն չի տալ։

Մի ազգի կամ մի ժողովրդի հետ կարելի է ծանոթանալ իր գրականությունից, մինչև անգամ նրան չտեսնելով, բայց այն ժամանակ միայն, երբ գրականությունը կլիներ կատարյալ արտահայտություն նույն ազգի կյանքի և մտավոր զորության, երբ գրականության մեջ կհայտնվեր նա իր տնտեսական, արհեստագործական և ընկերական կյանքով, իր մտածություններով և ձգտումներով, մի խոսքով, իր կեցության բոլոր բազմատեսակ կողմերով։ Այսպիսի գրականությունից թե մենք և թե մեր տաճկաստանցի եղբայրները զուրկ ենք։

Ի՞նչ գործ էր կատարում լրագրությունը։

Մեր լրագրությունը «Մշակի» գոյության ստանալուց առաջ ամենևին չէր զբաղվում տաճկաստանցիներով. նա չէր զբաղվում և մեր տեղական հարցերով կամ մեր կյանքով։ Իսկ Տաճկաստանի հայոց լրագրությունը հենց այսօր նույն ողորմելի վիճակի մեջն է, ինչ որ էր մեր լրագրությունը տասը տարի առաջ։

Ես համոզված եմ, եթե մենք այժմ վեր առնի «Մշակի» և «Մեղուի» (նորի) բոլոր համարները և ուշադրությամբ ուսումնասիրի, կտեսնա, եթե ոչ բոլորովին կատարյալ, բայց բավականին պարզ գաղափար Թուրքահայոց կյանքի մասին. կտեղեկանա նրանց տնտեսական վիճակը և թե ուսումը, կրթությունը ո՛ր աստիճան առաջ է գնացել, կամ ի՞նչ դեր են խաղում նրանք արհեստի և վաճառականության մեջ, և մասնավոր վիճակագրական տեղեկություններ կունենա, թե ո՛րքան թվով ո՛րտեղ են բնակվում և այլն։ Իսկ Կ. Պոլսի լրագրությունը չէր կարող մեզ այս տեղեկություններից և ոչ մեկը տալ, որովհետև նա տեղական հարցերով չէր զբաղվում։ Կ. Պոլսի լրագրությունը զբաղված էր Եվրոպայի և պատրիարքարանի ինտրիգաններով, բայց Բոսֆորի մյուս կողմը, Փոքր Ասիայում նա ոչինչ չէր տեսնում, Հայաստանի հայ բնակչի վիճակը և նրանց հարաբերությունները իրանց օտարազգի դրացիների հետ չէին հետաքրքրում Կ. Պոլսի լրագրությանը, շատ-շատ նա կտպեր մի գավառական սկանդալ և ավելի ոչինչ։

Կ. Պոլսի լրագրությունը չէր ուսումնասիրում մինչև անգամ իր ոտքի տակի հողը՝ Կ. Պոլիսը։ Մենք ամենևին չգիտենք, թե մոտ երեք հարյուր հազար հայ բնակիչներ Թուրքիայի մայրաքաղաքում ի՞նչ գործով են զբաղված. մի բանի հատ ու կտոր, ծուռ ու սխալ տեղեկություններ

հասել են մեզ նրանց մասին օտարազգի լրագրությունից, իսկ բուն Կ. Պոլսի լրագրությունը նրանց մասին միշտ լուռ է եղել։

Բայց Կ. Պոլսում հրատարակվել է միշտ, 10-ից սկսյալ մինչև 15 կամ ավելի, զանազան տեսակ պարբերական թերթեր, և չնայելով նրանց բովանդակության աղքատությանը, լրագրության փոխանակությունը ևս չէ եղել մեր և նրանց մեջ։ Ուրեմն լրագրությունը ևս չէր կարող մեզ կատարելապես ծանոթացնել միմյանց հետ։ Մեզ մոտեցնելու և միմյանց հետ ծանոթացնելու կարևորությունը զգալով «Մշակը», սկսյալ իր հրատարակության օրից, և մանավանդ վերջին տարիներում սկսեց խիստ հաճախ խոսել տաճկաստանցոց վրա, և ես համոզված եմ, որ պոլսեցիք կարդալով «Մշակը», ավելի ճիշտ տեղեկություններ կարող էին քաղել Փոքր Ասիայի հայոց դրության մասին, քան թե իրանց բոլոր լրագրությունն ամբողջությամբ վեր առած։

Եվ այսպես, Տաճկաստանի հայոց դրությունը մեզ այնքան էր հայտնի, որքան Միջին Ափրիկայի վայրենիների դրությունը, և նույնիսկ պոլսեցիք մեզանից ավելի չգիտեին նրանց մասին։ Այս կարծիքը ուղիղ է, և որի ապացույցն է այն, որ հայոց պատգամավորներից մեկը արդեն գնում էր Լոնդոնում, իսկ մյուսը՝ Ս. Պետերբուրգում, երբ Կ. Պոլսում դեռ նոր մտածեցին, թե Հայաստանի մասին պետք է ճիշտ և մանրամասն տեղեկություններ ունենալ, և դեռ նոր վարդապետներ վազեցրին դեպի Հայաստան[2], որ գնան, տեսնեն, թե որտե՞ղ են բնակվում հայերը, ո՞րքան է նրանց թիվը և ի՞նչ հարաբերության մեջ են օտարների հետ։ Այն ժամանակ միայն մտածեցին Հայաստանի համար քարտեզ պատրաստել։ Բայց Կ. Պոլսում պատրիարքարան կար, Ազգային ժողով կար, այնտեղ էր հայոց ինտելիգենցիան, այս բոլորը պետք է գիտենային և պատրաստեին առաջուց, շատ և շատ առաջուց, և որի մեջ գլխավոր գործիչ պետք է լիներ լրագրությունը, և առհասարակ գրականությունը։

Ուրիշ օրինակ անհարմար կլիներ բերել, քան թե այն, որ Բեռլինի ավագաժողովի ժամանակ Կ. Պոլսի հայոց դրությունը նմանում էր մի վաճառականի, որ կամենում է սկսել մի մեծ առևտրական սպեկուլյացիա, առանց նախապես գիտենալու իր դրամական վիճակը. նա հասկանում է, որ կասսան դարտակ է, այն ժամանակ միայն, երբ գործը արդեն սկսել էր։ Այսպիսի հանգամանքում անհաջողությունն ինքնըստինքյան հասկանալի է։

Բայց անհաջողությունը, մանավանդ մի մեծ հեղաշրջումից հետո ժողովուրդների կյանքում, ինչպես և պարտությունը ձախորդ պատերազմից հետո, ունեն իրանց օգուտները, այն կողմից, որ նույն ժողովուրդ-

ներին հասկացնել են տալիս իրանց թերութիւնները, սխալները և առհասարակ նրանց անընդունակութիւնները, որոնք պատճառ եղան անհաջողութեան։ Եվ այդ գիտակցութիւնը բավական էր ապագայում նրանց առաջնորդելու համար դեպի ուղիղ և հաստատ ճանապարհը, որ հասցնում է նպատակին։ Եթե կա Տաճկաստանի հայոց անհաջող ձեռնարկութեան մեջ մի օգտավետ կետ, այդ է։ Իսկ արդյոք կարո՞ղ են տաճկաստանցիք օգուտ քաղել դրանից, ահա՛ մի հարց, որ պետք է պարզել։

Այդ հարցը այնքան բազմազրկալ է, որ դժվար է մի անգամուլ բացատրել. մենք կհետապռտենք նրա գլխավոր գծերը միայն։ Արդարև, ամեն մի անհաջող ձեռնարկութիւն ժողովուրդների կյանքի մեջ ունի իր օգուտները, որ նրանց ղգալ էր տալիս իրանց թերութիւնները և նախապատրաստում է մի նոր ապագայի համար, և դրանից է առաջ գալիս այն գիտակցութիւնը, որ կոչվում է ինքնաճանաչութիւն։ Բայց դժվար կարելի է գտնել ամբողջ մարդկութեան մեջ մի ժողովուրդ, որ ինքն իրան ճանաչեր, նրան ճանաչում են և բնում են նույն ժողովրդի առաջավոր մարդիկը, զարգացած մասը, որպես բժիշկը հիվանդներին։ Եվ այս վերջիններս հաղորդում են ժողովրդին նրա թերութիւնները, նրա պետքերը, և միևնույն ժամանակ հնարները նույն պետքերին բավականութիւն տալու։ Դրանք կոչվում են զանազան անուններով ժողովրդական գործիչներ, առաջնորդող մարդիկ, գրավոր և բերանացի խոսքը նրանց գլխավոր գենքն է, նրանք ներկայացնում են ժողովրդի մտավոր զորութիւնը, նրա ինտելիգենցիան։

Բայց մենք տեսանք մեր հոդվածի սկզբում Թուրքիայի հայի ինտելիգենցիան, նա կարո՞ղ է արդյոք առաջնորդող լինել, ազդել, զբաղել և բարձրացնել ամբոխը իր ընկած դրութիւնից, քանի որ ինքը ինտելիգենցիան ուղղվելու կարոտ է։

Պետք է ի նկատի ունենալ և տեղի դրութիւնը։ Կ. Պոլիսը, որպես պաշտոնական կայսրան, հասկանալի է, այնտեղ է Բ. Դուռը, այնտեղ հայոց պատրիարքը միշտ կարող է հարաբերութիւն ունենալ վեզիրների և եվրոպական պետութիւնների ներկայացուցիչների հետ։ Բայց Կ. Պոլիսը, որպես ներգործող կենտրոն Հայաստանի վերաբերութեամբ, անհարմար է։ Կ. Պոլիսը, թեև կրում է իր մեջ Տաճկաստանի հայոց առաջավոր մարդիկը, բայց իր առանձնացած դիրքով հազիվ թե կարող էր ազդել հեռավոր Հայաստանի վրա։ Կ. Պոլսի և Տաճկական Հայաստանի մեջ ծովեր կան, Անատոլիայի ցամաքը կա, այլևս չենք հիշում ճանապարհների վատ հաղորդակցութիւնը։ Այստեղից հասկանալի է ազդեցութեան թուլութիւնը, որ պոլսեցիք կարողանում են անել բուն հա-

յասատանցոց վրա։ Ուրեմն չէ կարելի ամեն ինչ հուսալ պոլսեցիներից կամ ամեն ինչ նրանցից միայն սպասել։

Տաճկական Հայաստանի հայերին, ավելի քան պոլսեցիքը, կարող ենք օգնել մենք՝ Ռուսաստանի հայերս, որովհետև նրանց հետ մոտ դրացության հարաբերություն ունենք։ Բողյալ այդ, Ռուսաստանի հայը համեմատաբար ավելի բարձր է, քան թե պոլսեցին, թե իր մտավոր և թե նյութական կարողությամբ։ Ի՞նչու մենք բոլոր հոգսը պոլսեցիների վրա ենք ձգում. մենք նրանց հետ պետք է բաժանենք բռնության լծի տակ ճնշված մեր եղբայրների ցավերը։

Տաճկաստանի հայերի վերականգնումը միշտ կարծիքական պետք է համարել, երբ հույս կդրվի միմիայն Կ. Պոլսի վրա։ Պետք է ամեն տեղից, ուր որ կան հայեր, օգնության ձեռք մեկնեն նրանց, և այդ պարտավորությունն առավելապես հասնում է մեզ՝ ռուսաստանցիներիս։ Մեր բարեհաճ կառավարությունը մեզ չէ արգելում օգնել նրանց. նա կցանկանա, որ մենք պատրաստեինք Փոքր Ասիայում մի ժողովուրդ, որպես վահան անգլիական ազդեցության դեմ. նա կցանկանա, որ մի քրիստոնյա ժողովուրդ ազատված լինի Թուրքիայի բռնությունից, որոնց համար թափեց իր զինվորների այնքան շատ արյունը։

Ի՞նչ կարող ենք անել, գուցե կհարցնի ընթերցողը։ Շա՛տ բան, միայն թե մտածեինք օգնել։

Բայց նախքան օգնելը, պետք է գիտենալ, թե ինչ բանի կարոտ են նրանք. իսկ այդ գիտենալու համար պետք է նրանց հետ որևիցե կապ և հարաբերություն ունենալ։ Բավական չէ այն, որ մենք նրանց հետ դրացիներ ենք, բայց մեր դրացությունը մինչև այսօր եղել է այնպես, որ առիթ չենք ունեցել լավ ճանաչել միմյանց։ Եվ մեր հոդվածի սկզբում նույնպես նկատեցինք, որ մեր և տաճկաստանցոց մեջ չկա և չի եղել որևիցե միացնող կապ։

Մեր մեջ կա մի կապ միայն, այն է՝ ազգակցական, որ նրանք և մենք միևնույն ցեղին ենք պատկանում, միևնույն լեզվովն ենք խոսում, և մեր երակների մեջ միևնույն արյունն է վազում, այսքանը միայն։ Մի ուրիշ կապ էլ ունենք, այն է՝ կրոնական, որ մենք և նրանք միևնույն եկեղեցուն ենք պատկանում։ Իսկ վերջին կապը հազիվ թե կարելի է ամբողջական համարել զանազան հերձվածների պատճառով, մեր կաթոլիկ, բողոքական և մահմեդական եղբայրների մեզանից բաժանվելով, այլև բուն լուսավորչականների վերաբերությամբ նույնպես թույլ է նա, որովհետև, մեր մեղքից, մեր եկեղեցական կառավարությունները երկու հակառակ պետությունների մեջ՝ Թուրքիայում և Ռուսաստանում, կարծես,

մինը մյուսին հակառակ աթոռներ են ներկայացնում, և այդ ավելի նկատելի եղավ վերջին քաղաքական հանգամանքներում, երբ էջմիածնի վեհարանն իրան խուլ անտարբերության մեջ պահեց, ամենևին չմասնակցելով Կ. Պոլսի պատրիարքարանի ձգտումներին։ Պատմությունը, իհարկե, կդատապարտե այդ մեծ անուշադրությունը, իսկ ժամանակակից բարեմիտ մարդը չէ կարող առանց խորին վրդովմունքի նայել դրա վրա։

Յավելով պետք է խոստովանվել, որ, չնայելով մեր ամենից բոլոր ցանկությանը, վերջին ժամանակներում, լուսավորչական ս. աթոռի վեհափառի ընտրությունը Թուրքիայի եկեղեցականներից չարդարացրուց այն հույսը, որ սպասվում էր, այսինքն, որ Տաճկաստանից ընտրված ընդհանուր հայոց վեհ. կաթողիկոսը կամբացնի հայրապետական աթոռի կապերը Կ. Պոլսի պատրիարքարանի հետ, որպես ավելի բազմաթիվ հայ ազգաբնակության եկեղեցու ներկայացուցչի։ Այս խոսքերը մեզ ասել են տալիս մի քանի տխուր փաստեր, որոնց հիշելը ավելորդ ենք համարում։ Եվ որ ավելի վնասակարն է, այն է, որ նույնիսկ ս. էջմիածնի մեջ առաջ եկավ մի տեսակ խորթություն, վեհարանն առանձնացավ ամբողջ միաբանությունից։ Ով որ փոքր ի շատե ծանոթ է ս. էջմիածնի այժմյան դրությանը, կհամաձայնի մեզ հետ։ Այդ, իհարկե, պետք է համարել մի կամայական զեղծում, որ առաջ է եկել ավելի անձնավորություններից և որն ապագայում կարող է ուղղվել, երբ նույն անձնավորությունները տեղի կտան ուրիշներին։ Իսկ մեր եկեղեցական բարձր կառավարության հիմնական գաղափարը դարձյալ կմնա այն, ինչ որ եղել է միշտ, այսինքն, թե ս. էջմիածինը, որպես գլուխ, կունենա սերտ և անմիջական կապ իր բոլոր մասների հետ, ընդհանուր հայոց հոգ. ներկայացուցիչների հետ, որտեղ և ինչ պետության մեջ լինեին նրանք։

Ես հարկավոր չեմ համարում այժմ մեր կեղտոտ լվացքը դուրս թափել և ուրիշների աչքի առջև լվանալ. դեռևս պետք է լռել... խոսելու ժամանակ շատ կա...

Խոսելով ազգային միության վրա, չէ կարելի չհիշել մեր այն եղբայրներին, որ կրոնական հերձվածներով բաժանվել են մեզանից. մեր խոսքը հայ-բողոքականների և հայ-կաթոլիկների մասին է։ Լրագրությունն այժմ զբաղված է այդ հարցով։ Բայց մենք երբեք մեզ թույլ չէինք տալ հակառակ լինել խղճի ազատության, եթե կրոնական հերձվածները Թուրքիայի հայերի մեջ չվնասեին ազգային միության և չբաժանեին նրա ամբողջությունը։ Բայց երբ տեսնում ենք բողոքականությունը հայերի մեջ դառնում է զանազան քաղաքական նպատակների գործիք անպլիացիների ձեռքում, որ չունի ոչինչ կապ քրիստոնեության և կրոնի հետ,

երբ տեսնում ենք, որ պապականությունը մոլեռանդ կղերի ձեռքում դառնում է գործիք ուլտրամոնտանիզմի[3], որ մի ամբողջ ժողովուրդ շինում է պապի և նրա արբանյակների սորուկ, այդպիսի դեպքերում չէ կարելի անտարբեր մնալ։ Կաթոլիկությունը, որպես ասուլածաբանական սխոլաստիկա, միշտ եղել է հակառակ կրթության և ժողովրդի ազատ ոգու զարգացման, իսկ բողոքականությունը, որպես նոր աղանդ, որպես նոր խմոր, ավելի ընդունդ է իր ֆանատիզմով։ Ով որ տեսել է բողոքականին Եվրոպայում, գուցե կծիծաղի մեր դատողության վրա, բայց Ասիայում նույնը չէ բողոքականը, այստեղ նա բաժանվելով իր մայրենի եկեղեցուց, դառնում է բոլորովին ուրիշ մարդ. նրա բոլոր կապերը կարվում են իր ազգի հետ, և նայում է իր ազգայինների վրա այնպես, որպես մի ժամանակ հրեաները նայում էին սամարացիների վրա[4]։ Կաթոլիկների մասին ավելորդ է խոսել անգամ, նրանք ավելի վատ են։ Մեկն իրան ինգիլիզ է կոչում, մյուսը՝ ֆրանգ։ Եթե սրանք այսպես են, լուսավորչականները նույնպես հետ չեն մնում իրանց աններողամտությամբ դեպի իրանց անջատված եղբայրները և ավելի նրանց առիթ են տալիս հեռանալու։

Ճանապարհորդելով մի ժամանակ Տաճկական Հայաստանում, ես շատ անգամ առիթ եմ ունեցել տեսնելու որպես կաթոլիկ, նույնպես բողոքական հայերի հետ. մտել եմ նրանց դպրոցներում, ժողովարաններում և երբեմն տաք վիճաբանություններ եմ ունեցել նրանց հետ։ Այդ մարդկանց վրա պետք է խղճալ, նրանք շատ ողորմելիներ են։ Նրանց այնքան փոքր բան են սովորացրել, որ ուրիշ կերպ լինել չէին կարող, Հին և Նոր կտակարանից մասնավոր տեղեկություն, մի քանի աղոթքներ, փոքրիկ քրիստոնեական վարդապետություն, եթե ավելացնենք դրանց վրա և այն համոզմունքը, թե ով որ իրանց եկեղեցուն չէ պատկանում, զրկվում է Քրիստոսի արքայությունից, կատանանք նրանց դիտության ամբողջ չափը։

Մեր կարծիքով, այդ խիստ բաժանումը մեր կաթոլիկ և բողոքական եղբայրների ազգային ամբողջությունից, լոկ դավանաբանական պատճառներով, պետք է համարել ժամանակավոր մի երևույթ, որ առաջ է եկել ավելի անկրթությունից, և որն ինքնըստինքյան կանհետանար, երբ ազգայնության զաղափարն իր բոլոր կենսագործող զորությամբ կմարմնանա նրանց մեջ։

Շատ ցանկալի էր, որ մեր ազգայինները պատկանեին նույն եկեղեցուն, որ հիմնից մեր լուսավորիչ պապը, բայց երբ որ կաթոլիկությունը և բողոքականությունը մեր մեջ արդեն մի կատարված իրողություն է,

այլևս ի՞նչ պետք է անել։ Մեր եկեղեցականները չունեն այն հոգին, որ աշխատեն նրանց կրկին միացնել մեզ հետ. ուրեմն պետք է թույլ տված, որ կրոնի վերաբերությամբ ազատ մրցություն ընթանա իր ճանապարհով, իսկ ազգայնության վերաբերությամբ աշխատել, որ պահպանվի նրանց հետ մեր միությունը։ Մենք այն կարծիքի ենք, թե դավանությունների բազմատեսակությունը չէ ոչնչացնում ազգային միությունը, միությունը պետք է որոնել այդ մասների ներդաշնակության մեջ, որի հիմնական մոթիվը պետք է լինի ազգայնությունն իր բարձր նշանակությամբ։ Մենք համոզված ենք, որ եկեղեցու անբաժան միությունը մի ազգի մեջ կարող է տանել դեպի միահոգիանություն, և հետևապես դեպի անկենդանություն, որի ընդհակառակն, եկեղեցու բաժանված մասերն, առանց մի ընդհանուր առաջնորդող ոգու (որ կարտահայտեր բոլորի շահերը), կտանեն դեպի թուլություն և կործանումն։

Կրկնում եմ, պետք է թողնել մրցությունը գնա իր ճանապարհով, գրանով ավելի կշահվեն լուսավորչականները, քան թե հալածելով իրանց եղբայրներին։ Տաճկաստանցիք փորր չօգտվեցան այդ մրցությունից. նրա նրանց մեջ փորր ի շատն ծաղկել սկսեց տպագրությունը և առհասարակ գրականությունը, դա առաջ եկավ վենետիկցոց հետ մրցությունից. նրա նրանք սկսեցին բարեկարգել և բազմացնել իրանց դպրոցների թիվը, դա առաջ եկավ բողոքականների հետ մրցելուց։ Կաթոլիկությունն այժմ հայերի մեջ հասել է մի կետի, որ այլևս առաջ չէ գնում, և կարելի է ասել, որ նրանցից շատերը վերադառնում են դեպի իրանց հայրենի եկեղեցին, երբ փորր-ինչ զարգանում են։ Իսկ բողոքականությունն այժմ մեծ գործունեության մեջ է. բայց հավանական չէ նրանցից սպասել այն վտանգը, որ կարծվում է, որովհետև Փորր Ասիայի մեջ գործող միսիոներներն ըստ մեծի մասին պատկանում են Ամերիկայի մեթոդիստների Պորտ ընկերությանը, որոնք անգլիականների կամ անգլիացոց հետ ոչինչ կապ չունեն և մինչև անգամ սաստիկ հակառակ են վերջիններին։ Իսկ նրա կմտանեն հայերի մեջ բուն անգլիականները, այն ժամանակ գործը կփոխվի, նրանք կարող էին վտանգավոր լինել. հայերից շատերը կընկնեն նրանց դիրկը, անգլիական կոնսուլներից և գործակատարներից պաշտպանություն գտնելու համար։

Նրա քննենք Թուրքիայում կրոնափոխությունների պատճառը, կտեսնենք որ դավանաբանական համոզմունքը, խղճի ազատությունը այստեղ բոլորովին երկրորդական դեր է խաղում, այլ ըստ մեծի մասին մարդիկ հետևանում են իրանց հայրենի եկեղեցուց կյանքի զանազան նյութական

կարիքների պատճառով։ Տեսնում եք, միսիոնարը հայտնվում է մի տեղ։ Նրանք առհասարակ ընտրում են խուլ անկյուններ, ուր տիրում է մտավոր և նյութական աղքատություն։ Նրա քարոզների առաջին ունկնդիրները լինում են այն մարդիկը, որ իր տանը ծառայում են՝ խոհարարը, սպասավորը, ձիապանը, նրանց կանայք և այլն։ Ստանալով մեծ միջոցներ իր հայրենիքից և օգուտ քաղելով երկրի էժանությունից, նա չնչին վարձատրություններով կարողանում է իրան շրջապատել անթիվ ծառաներով և շքեղ կացությամբ։ Տան ծառաների վրա ավելանում են վարժապետները, տպարանի մշակները, մասնավոր քարոզիչներ և բոլոր այն մարդիկ, որ որևիցե պաշտոն են կատարում և միսիոնարից ամսական են ստանում։ Այսպիսով, կազմվում է նրա փոքրիկ եկեղեցին։ Բայց կարվեցավ մեկի ամսականը, զրկվեցավ նա իր տեղից, մյուս օրը այլևս չի գնա «պատվելիի» քարոզը լսելու։

Բայց «պատվելին» իհարկե չէ կարող իր ունկնդիրների բոլորին գործ հանձնել և ոռճիկ տալ, և նրանց պահպանելու համար ստիպված է ուրիշ կերպով օգնել, կամ փող ընծայելով, կամ պաշտպանելով այս և այն հարբատահարություններից և կամ հրապուրելով զանազան խոստումներով ու հույսերով։ Մի փաստ, որին ես ականատես եմ եղել, կարող է բացատրել, թե այս եղանակով հաստատված եկեղեցին որքան հիմնավոր պետք է համարել։ Մի գյուղացի պարտքով վեր է առնում միսիոնարից մի քանի ոսկի և իր համար եղն է գնում։ (Նրանք շատ անգամ տոկոսով փող են տալիս իրանց ունկնդիրներին ավելի պարտավորեցնելու համար)։ Այնուհետև գյուղացին մի քանի ամիս հաճախում է լսելու «պատվելիի» քարոզները, իսկ հետո դադարում է գնալ։ Միսիոնարը պահանջում է ոսկիները և ստանում է խորամանկ գյուղացուց մի այսպիսի պատասխան. «Ես արդեն վճարել եմ ձեզ իմ պարտքը. դուք տվեցիք ինձ մի քանի ոսկի, ես փոխարենը երեք ամիս ձեր եկեղեցին եկա. իսկ հիմա երբ փողը հետ եք պահանջում, պետք է երեք ամիս էլ դուք մեր եկեղեցին գաք, որ սերսվենք (այսինքն՝ «քվիտ լիննք»)։ Իհարկե, դրանք պատահում են ավելի չափահաս մարդկանց հետ, բայց մանուկները, որոնք կրթություն են ստանում նրանց դպրոցներում, բավական տարբերվում են իրանց հայրերից։

Բայց դպրոցի աշակերտներն ևս, սկզբից կաշառվելով, մի տեսակ սովորում են փողի։ Աղքատ մանուկը, մտնելով միսիոնարի դպրոցը, ստանում է գիրք, թուղթ և բոլոր դասական պիտույքները ձրի. նա ստանում է շատ անգամ հագուստ և շաբաթական մի մասնավոր վճար։ Նա սովորում է ուրիշի հաշվով ապրելուն։ Նա դուրս է գալիս դպրոցից թո-

յորովին փոխված մարդ։ Սովորել է լավ հագնել, լավ ուտել, բայց չէ սովորել մի բան, որ կյանքի մեջ նրան հայց տար։ Իր հոր պարապմունքի վրա նա ամաչելով է նայում։ Սխրված է դիմել միսիոնարին, որ իրան գործ տա։ Բայց միսիոնարն ամենի համար գործ չունի։ Նա մնում է անգործ և առանց ապրուստի։ Նա դառնում է ավելի թշվառ աղքատ, քան թե իր հայրը։ Այն ժամանակ պատրաստ է նա պատահած մարդու դիրքը ընդունել, իր կրոնը փոխելով, եթե նրան ապրուստի միջոց կտար։ Այստեղից է առաջ գալիս բախտախնդիրների այն հասարակությունը, որոնց ուրիշ անուն տալ անհարմար կլիներ, բայց միայն կոչել կրոնավաճառներ, որոնք կաթոլիկներից փախչում են դեպի բողոքականները, իսկ վերջիններից՝ դեպի կաթոլիկները, որտեղ որ նրանց լավ էին վարձատրում։ Այդ պատահում է ոչ միայն մասնավոր անձերի հետ, այլ, ես գիտեմ մի ամբողջ բողոքական ժողովուրդ, ուր Ամերիկայի միսիոնարներն աշխատել էին ավելի քան քառասուն տարի և միլիոններ էին ծախսել, բայց երբ սկսեցին ծախսերի թիվը պակասեցնել*, ժողովուրդը պատգամավորներ ուղարկեց Լոնդոն, այստեղից հրավիրելու անգլիականների (եպիսկոպոսների) քահանաներ, այն հույսով, թե նրանք ավելի հարուստ են։

Վերոհիշյալներից պարզ է, որ Թուրքիայում կրոնափոխության գլխավոր պատճառները պետք է որոնել ժողովրդի դառն աղքատության և նրա անտանելի հարստահարությունների մեջ մահմեդականների կողմից։ Եվ մի եկեղեցի, որ հիմնվում է ժողովրդի չքավորությունից և նրա նեղ դրությունից օգտվելով, հասկանալի է, թե ո՛ր աստիճան կարող է նա հաստատուն լինել։ Եվ երբ ժողովրդի տնտեսական դրությունը կբարեկարգվի, երբ նրա կյանքը ապահովվի. և նա իր ղեկի և ապրանքի տերը կլինի, ես համոզված եմ, որ կրոնափոխությունն ինքն իրան կարգելվի և կզադարի, ինչպես նա այժմ չէ հաջողվում այն քաղաքներում, ուր ժողովուրդը փոքր ի շատե հանգիստ է, և եթե հաջողվում է, այն էս բնակիչների ամենաստոր դասի մեջ, որ տանջվում են դառն աղքատությամբ։

Ես շատ կտխրեի, եթե Ֆրանսիայում մի փոքրիկ հայ գաղթականություն կընդուներ կաթոլիկություն, իսկ Անգլիայում՝ բողոքականություն. կարող էի մարդարեի ոգով նախագուշակել, որ նրանք մեկ կամ կես դարից հետո կկորչեին. բայց երբեք չեմ կարող երևակայել, որ Հայաստանում հայը Ֆրանկ կամ ընգլիզ կարող է դառնալ։ Մի փոքրիկ աղգու-

---

* Այդ ընկերությունը, կարծեմ, 30 տարուց ավելի իրավունք չուներ մի ժողովրդի մեջ ծախսեր անելու. այսքան միջոցում պետք է նա իր գործն ավարտած լիներ, և այնուհետև ինքը ժողովուրդը պետք է իր եկեղեցու ծախսերը հոգար։

թյուն, իրավ է, կկլանվի, կանհետանա, երբ կմիանա իր տիրապետող պետությանն եկեղեցու հետ, ինչպես Թուրքիայում բոլոր մահմեդականություն ընդունող հայերը ձուլվեցան թուրքերի հետ։ Բայց նույնը չէ պատահում, երբ մի ժողովուրդ իր հայրենի երկրում ընդունում է մի ուրիշ դավանություն, որ տարբեր էր պետական կրոնից։

Թուրքիայի անհեռատես կառավարությունը, որ հայերի մեջ երկպառակություն գցելու մտքով և նրանց միությունը քանդելու համար թույլ էր տալիս, և մինչև անգամ ինքը նպաստում էր, որ կրոնափոխությունը տարածվի հայերի մեջ, բայց նա մի սխալանքից մի ուրիշ ավելի վատի մեջ ընկավ, որ հայերից կաթոլիկներ և բողոքականներ պատրաստելով, թևև մի կողմից քանդեց նրանց մյության կապերը, բայց մյուս կողմից իրան վնասեց, դրանով մի հանապարհ բացելով կաթոլիկ և բողոքական պետությունների (Անգլիայի և Ֆրանսիայի) դիպլոմատիայի առջև միջամտություն գործելու իրանց հավատակիցների ետևից Թուրքիայի ներքին գործերում։ Հիշյալ սխալանքի հետևանքը բացահայտ երևում է Բևռլինի դաշնագրի վրա։ Պարսկաստանն այդ մասին ավելի խելացի քաղաքականության է հետևում. նա ամեն կերպով աշխատում է բողոքականությունը և կաթոլիկությունը չտարածվի իր երկրում գտնված քրիստոնյաների մեջ, հայոց գպրոցներին պետական գանձից օժանդակություն տալով և հայ եկեղեցականների իրավունքները ու նրանց նշանակությունը բարձրացնելով, որ կարողանան օտարերկրյա քարոզիչների հետ մրցություն անել։ Այդ մասին ինձ հայտնի են շատ փաստեր, որոնց հիշելը ավելորդ եմ համարում։ Եթե Թուրքիան խելքը գլուխը հավաքեր, նույնը պետք է անե այսուհետև, որովհետև դրանից ավելի կշահվի։

Բայց մեզ շատ անգամ պատահել է լսել այսպիսի կարծիք. «Ի՞նչ ենք կորցնում, եթե անգլիացին և ֆրանսիացին մեր կրոնը փոխելու համար կռկռին համակրել և պաշտպանել մեզ, ինչո՞ւ օգուտ չքաղենք այդ հանգամանքից»։ Վասակները և Մհերուժանները բոլորը այդ կարծիքի էին, բայց մեր ազգը սաստիկ պատժվեցավ այդ քաղաքականությանը հետևելով. Կիլիկիայի մեր թագավորությունը զոհ եղավ այդ քաղաքականությանը, երբ հայերն, իրանց սեփական ուժերն արհամարհելով, մտածեցին միանալ հունաց եկեղեցու հետ, որպես Բյուզանդիայի կայսրությունից կամ պապից պաշտպանություն գտնեն։ Մեր պատմությունը լի է դրա նման շատ օրինակներով, որ միշտ կործանիչ հետևանք են ունեցել։

Կրկնում ենք, շատ ցավալի է տեսնել Թուրքիայում կրոնի պատճա-

ով հայերի մի մեծ անջատված ազգային ամբողջությունից։ Բայց քանի որ դա արդեն պատմական կատարված իրողություն է, ուրեմն պետք է միավորելու հնարներ որոնել և ոչ թե բաժանող վիհն ավելի և ավելի լայնացնել։ Վանը կարծիքների տարբերության մեջն է, թե ո՛րպես պետք էր միավորել։ Կրկին թվված ազգասիրությամբ քարոզել այն մաշված թեման, թե մենք մի կրոնական ժողովուրդ ենք, թե մեր ազգությունը ճանաչվում է մեր եկեղեցիով, թե ով որ լուսավորչական չէ, հայ ևս համարվել չէ կարող և այլն, այդ տեսակ քարոզներ դուցի մի ժամանակ հարկավոր լինեին, իսկ այժմ շատ և շատ հնացել են։ Այս տեսակ քարոզներով ոչինչ օգտվել չէ կարելի, ընդհակառակն, վնասակար են այն կողմից, որ դրանցով ավելի առիթ կտանք բողոքական և կաթոլիկ հայերին բոլորովին անջատելու ազգային միությունից։ Թուրքիայի հայերի մեջ միության միակ հնարն այժմ այն է, որ ոչ թե հայրենի եկեղեցուց բաժանված եղբայրներին կրկին դարձնել դեպի լուսավորչի փարախը, այլ աշխատել նրանց մեջ տարածելու ազգայնության գաղափարը, թե մի ազգի անդամները կարող էին այս և այն եկեղեցուն պատկանել, բայց դարձյալ մի ազգային ամբողջական մարմին կազմել, և ցրված ուժերը մի տեղ հավաքելով, միասին գործել բռնության և հարստահարության դեմ, և միասին թոթափել այն անտանելի լուծը, որ ամենի վրա միևնույն չափով ծանրացած է։

Ոմանք ասում են՝ այդ անհնարին է։ Ասիայում, հայերի մեջ եկեղեցին միայն կարող է լինել միավորիչ հոգ. ազգայնության գաղափարը Եվրոպայում միայն ունի իր ազդեցությունը, այնտեղ ամեն անհատ կարող է մինչև անգամ անհավատ լինել, բայց մի ազգի պատկանել և այլն։ Խիստ կարճամիտ դատողություններ են։ Ինչ որ հնարավոր է Եվրոպայի համար, այն և հնարավոր է երկրագնդի ամեն մի ժողովրդի համար, ազանազանությունը նրա մեջն է միայն, թե եվրոպացին ի՛նչ ճանապարհով հասավ այն կետին, դու էլ նույն ընթացքը բռնիր, քաղաքակրթությունը քեզ չի զլանա այն բարիքը, ինչ ոչ բոլոր մարդկության սեփականություն է։ Մի՞թե Եվրոպայի մեջ միևնույնը չէր մի քանի դար առաջ, ինչ որ այսօր հայերի մեջն ենք տեսնում, մի՞թե եվրոպացիք նույնպես չէին շփոթում ազգությունը եկեղեցու հետ, իսկ այժմ ի՞նչպես հասկացան, թե ազգությունը և կրոնը որոշ գաղափարներ են։

Իմաստակությունը մեր մեջ թվված ազգասիրության հետ ձեռք ձեռքի տված է գնում։ «Հայ կաթոլիկը և հայ բողոքականն անցյալ չունեն,— ասում են ոմանք,— լուսավորչական հայերը միայն անցյալ ունեն, որովհետև պատմությունը նրանց է պատկանում»։ Դրանից առոր երևեայա-

կան մտածություններ լինել չեն կարող։ Եթե մեր անցյալը բովանդակվում է միայն մեր եկեղեցու մեջ, ուրեմն էլ ինչո՞ւ ենք պարծենում Տրդատից և Լուսավորչից առաջ եղող մեր հեթանոս Հայկով, Արամով, Տիգրաններով և այլն։ Ուրեմն մենք մեր պատմությունը պետք է սկսենք այն օրից, երբ լուսավորչական եկեղեցին հիմնվեցավ, և նրանից առաջ եղող մեր նախնիքներին հայ չհամարենք, որովհետև կռապաշտներ էին և այդ եկեղեցուն չէին պատկանում։ Բայց մենք մի այսպիսի խորություն չենք դնում պատմության մեջ։ Այլևս ի՞նչ իրավունքով կարող ենք ասել կաթոլիկ և բողոքական հային, թե դուք անցյալ չունեք, երբ նրանք էլ միևնույն ցեղի շարունակությունն են, երբ Հայկը, Արամը, Տիգրանը, Տրդատը, Լուսավորիչը, Վարդանը, Ներսես Մեծը և այլն, որքան լուսավորչականին են պատկանում, այնքան էլ պատկանում են հայ բողոքականին և հայ կաթոլիկին։ Ազգային պատմությունը, ազգային անցյալն ամբողջ ազգի սեփականությունն է, ինչ կրոնի և ինչ աղանդի պատկանելու լինեին նրա կազմող մասերը։

Եթե այսօր հայ բողոքականը և հայ կաթոլիկն իրանց հայ չեն համարում, այդ անկրթության հետևանք է։ Մի՞թե անկիրթ հայ լուսավորչականը միևնույն աչքով չէ նայում նրանց վրա. մի՞թե նա բողոքականին և կաթոլիկին հայ է համարում։ Որպես հայ կաթոլիկը իրան ֆրանգ է կոչում, այնպես էլ հայ լուսավորչականը նրան ֆրանգ է կոչում։ Այդ բոլորն առաջ է գալիս այն համոզմունքից, թե ազգայնությունը պետք է որոնել եկեղեցու մեջ։ Եվ այդ բոլորը կանհետանան այն ժամանակ, երբ ազգայնությաւն գաղափարը կրթության միջոցով կընդհանրանա ամեն մի անջատված մասերի մեջ։

Եվ Թուրքիայի պետական մարդիկը շատ լավ են հասկացել վերոհիշյալ հանգամանքները. «Բաժանեա՛, դի տիրեսցես»՝ ահա նրանց դեվիզը։ Մեղանից ամեն մեկն առհասարակ խիստ արհամարհական կարծիք ունի Թուրքիայի պետական մարդերի վրա. նրանք, թեև հանճարներ չեն, նրանք թեև մի-մի երևելի ավազակներ են, որ կողոպտում են արքունի գանձը և ամբողջ նահանգների ժողովուրդը վերջին թշվառության մեջ են ձգում, բայց խորամանկության մեջ, դիվանագիտական խաբեության մեջ և ընդհանրապես մաքիավելլիզմի մեջ անհամեմատ շնորհալի են։ Նրանք շատ լավ են հասկանում պետության մեջ եղող բոլոր ցեղերի հարաբերությունները, նրանց ձգտումները, և եթե վնասակարության մի փոքրիկ նշույլ են տեսնում, գիտեն, թե ինչ եղանակով պետք էր կամ հարմար էր խեղդել նրանց ձգտումները, կամ բոլորովին ոչընչացնել։ Նրանք չեն արհամարհում օգուտ քաղել և ամենափոքր միջոց-

ներից, որոնցով կարելի էր մի ցեղի մեջ երկպառակություն ձգել և նրա միության կապերը քանդել։ Նրանք վաղուց են հասկացել, թե ի՛նչ միջոցով կարելի է քայքայել հայ ժողովրդի ամբողջությունը, որ լուսավորչական եկեղեցուց դուրս հայ չէ ճանաչում։ Եվ այդ է պատճառը, որ Թուրքիայում կրոնափոխությունն այնպես արագ քայլերով առաջ է գնում. որովհետև կառավարությունն ինքը նպաստում է։ Այս բոլորից հետո զարմանալի չէ տեսնել, որ հայկական խնդրին կից հարուցվեցավ հասունյանների և հակահասունյանների դադարած կռիվը։

Կրոնական երկպառակություններին ուժ տալը և նրանց միջոցով զանազան ցեղերի մեջ անմիաբանություն և անհաշտություն պահպանելը դա մի ժառանգական քաղաքագիտություն է, որ սեփականել է իրան մոնգոլական Թուրքիան Բյուզանդիայի գահի հետ։ Միայն հայերի վերաբերությամբ չէ վարվում նա այդպես. նույն երևույթները կրկնվում են նեստորական և նեստորականությունից բաժանված ասորիների մեջ, քլդանիների մեջ, մարոնիտների մեջ, հակոբիների մեջ, ղպտիների մեջ, և առհասարակ բոլոր քրիստոնյա ցեղերի մեջ։ Ո՞վ չգիտե, թե ամեն տարի, սուրբ Հարության տոնի օրը Երուսաղեմում, սուրբ Հակոբա տաճարի մեջ ի՛նչ խայտառակ խռովություններ են պատահում հայոց, լատինական և հույն աբեղաների մեջ։ Եվ չնայելով հայոց և հունաց պատրիարքարանների անդադար բողոքներին, մինչև այսօր Բ. Դուռը մի կարգ կամ սահման չդրեց նրանց մեջ և նրանց յուրաքանչյուրի իրավունքները չորոշեց, որ աբեղաները ստիպված չլինեին ամեն տարի միմյանց գլուխը ջարդել։

Բ

Մենք բավական հեռացանք հարցից, երկար կանգնելով կրոնափոխության խնդրի վրա։ Ցույց տալով, թե մեր և տաճկաստանցոց մեջ ոչինչ կապեր կամ հարաբերություններ չկան և հայտնելով այն միտքը, թե մենք պարտավոր ենք օգնել նրանց, գուցե ընթերցողը սպասում էր, թե մենք պետք է ցույց տանք որևիցե նոր կապեր, կամ մենք կասենք, թե ինչով և ինչ բանի մեջ կարող էինք օգնել նրանց։ Դրանց և ոչ մեկը մեր հոդվածի նպատակը չէ։ Մենք պետք է հետևենք հմուտ բժշկի եղանակին, որ առաջ հետազոտում է հիվանդի կազմվածքը, ուսումնասիրում է նրա ամբողջ կյանքը, քննում է նրա ցավերը, հասկանում է ցավերի առաջ բերող պատճառները, իսկ հետո մտածում է դարմանների մասին։ Մենք, որպես սկզբում հայտնեցինք, դեռ ոչ բոլորովին ճանաչում ենք մեր տաճ-

կատանցի եղբայրներին, չգիտենք ինչ բանի կարող են նրանք, և նրանց դրությունն իր բոլոր կողմերով դեռ մեզ հայտնի չէ. ուրեմն ինչ որ գրենք, ինչ որ մտածենք նրանց մասին, բոլորը կլինեն թերի, միակողմանի և շատ անգամ անհիմն ենթադրություններ։ Պետք է ունենալ ճիշտ տեղեկություններ։ Պետք է մեզ հիմնվել խնդրի բարձր նշանակության վրա և հասկանալ, որպես հարկն է, նրանց պետքերը, և ուսումնասիրել նրանց կյանքի և կացության բոլոր էական գծերը, նրանց տնտեսական վիճակը, անցյալ և ներկա քաղաքական դրությունը և այլն։ Բավական չեն միայն եղբայրական զգացմունքների արտահայտություններ կամ ազգաբիրական դարձակ ցուցումներ, որ վերջանում են նրանով միայն, որ ողորմելի տաճկահատանցու համար օդեղեն ամրոցներ ենք ստեղծում, մինչդեռ նա իր գլուխը դնելու և հանգչելու տեղ չունի։

Մեր մեջ պետք է կազմվի փոխադարձ հասկացողություն։ Մենք դեռ չունենք ոչ մի օրինավոր շարադրություն Տաճկական Հայաստանի մասին։ Մի քանի հատ ու կտոր, չնչին, անիմաստ հոդվածներ ի՞նչ լույս կարող էին ձգել նրանց կյանքի վրա։ Մեզ պետք են կատարյալ ժողովրդագրական (էտնոդրաֆիական) տեղեկություններ, հիմնված փաստերի վրա ոչ միայն հայերի կյանքն ուսումնասիրելու համար, այլ թուրքերի, քուրդերի, չերքեզների և բոլոր ցեղերի, որ այժմ Հայաստանում բնակված են։ Մեզ պետք են կատարյալ աշխարհագրական տեղեկություններ Հայաստանի ազգաբնակության, արդյունաբերության, տեղագրության, ճանապարհների հաղորդակցության և նրա թե բնական և թե քաղաքական կյանքի մասին։ Մեզ պետք են ճիշտ վիճակագրական և տընտեսագիտական տեղեկություններ հայոց ազգաբնակության մասին առանձնապես և օտար ցեղերի մասին ընդհանրապես։ Մեզ պետք են մինչև անգամ գիտենալ Հայաստանում բնակվող ժողովուրդների մեջ տիրող ոգին, նրանց բնավորությունները, ուղղությունը, ձգտումները, կրոնական և բարոյական զգացմունքները, մի խոսքով նրանց բոլոր մտավոր և հոգեբանական կողմը*։

---

* Որպես բացատրություն, պետք է հիշել, որ պ. Դ. Արծրունու դասախոսությունը «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» վերնագրով, որ տպվեցավ «Մշակի» №№ 15, 16, 17, 18, թե իր բովանդակության բովանդակության կողմից, և թե հայացքների ճշտության կողմից ներկայացնում է մի գեղեցիկ օազիս Թուրքիայի վերաբերյալ մեր դարձակ և անաչառացած գրականության մեջ, և ցավում ենք, որ Կ. Պոլսի մամուլը չհետաքրքրվեցավ հիշյալ աշխատությունով, և այդ մի տխուր նշան պետք է համարել նրանց անտարբերությանը դեպի այն բոլորը, ինչ որ իրական կյանքին և բնությանն է վերաբերում։

Կ. Պոլսի հայոց մամուլը և նրանց գրականությունը չավելցին մեզ վերահիշյալ տեղեկություններից և ոչ մեկը, ոչ իրանք ցանկացան ունենալ. դրա մեջ պետք է որոնել նրանց անհաջողության ամենամեծ պատճառը։ Թուրքիայի գրական մարդիկն այն աստիճան անզարգացած և մանրիկ մարդիկ են (թեև, պետք է խոստովանել, որ մեր մեջ էլ չկան մեծ մարդիկ), որ մինչև անգամ չէին կարող մտածել, թե ինչ պետք է իրանց և ինչ բանի համար պետք է գրել։ Տեղային սահմանափակ միջոցները չկարողացան ստեղծել զորավոր տաղանդներ զորավոր գործերի համար, և մնալով տակաւ, նրանք չկարողացան ծառայել ազգային զբաղմունքների զորավոր պահանջներին, նրա փրկությանը օտարի ճնշող ներգործությունից։ Իսկ մեր մեջ, թեև չկան զորավոր տաղանդներ, բայց կան զարգացած մարդիկ, որոնք կարող են ավելի նպատակահարմար և հիմնավոր կերպով գործել, քան թե կ. պոլսեցիքը։

Բայց կան և մարդիկ, որ այսպես են մտածում. «Թողնք տաճկաստանցիներին հանգիստ մնալ, մի՛ պղտորեք նրանց միտքը, նրանք ավելի լավ են հասկանում իրանց գործը, մենք մեծ հույսեր ունենք նրանցից» և այլն։ Երանի թե գիտենայինք՝ ինչ բանի վրա են հիմնված այդ հույսերը։ Այս տեսակ խոսքերով կարելի է ամբողջ գրքեր գրել, միայն թե ցանկություն լիներ անիմաստ բառեր շարել։ Եվ զարմանալին այն է, որ այդ պատռվախոտ իմաստակները համաբաժակվում են մի ամբողջ ընկած ժողովրդի «գեղեցիկ» ապագան նախագուշակել դարատակ հույսերով միայն, առանց նրան ճանաչելու, առանց նրա ներկա դրությունը հասկանալու։ Դրանք նմանում են այն եղերամարմ կոչված պառավներին, որ հրավիրվում են դիակների վրա երգ երգելու. նրանց համար միևնույն է, թե ո՛վ էր, ինչ տեսակ մարդ էր հանգուցյալը, կարող են նրան մինչև անգամ չճանաչել, կարող է նա բոլորովին ոչինչ մարդ լինել. բայց նրանք միշտ իրանց սովորական երգն են երգում, գովաբանում են նրա չգործած արիթագործությունները, նրա առաքինությունները, գութ և ափսոսանք են շարժում, որովհետև դրա համար վարձ են առանում։

Միշտ հույս և հույս, այդ է իմաստակների խոսքը, թեև դարատակ հույսն առանց գործի ոչ մի նպատակի չէ հասցնում։ Անշարժության այդ վարդապետները, ես համոզված եմ, կցանկանային, որ ամբողջ մարդկությունը մումիաներ լիներին և երբեք չփոխվեին, փույթ չէ, թե նրանց մեջ կյանք չէր լիներ։

Ո՛չ, մենք պետք է խոսենք, պետք է մտածենք մեր տաճկաստանցի եղբայրների մասին, պետք է քննենք նրանց և բոլորը կրիտիկական իրավունքով քննենք։ Քանի որ կատարելապես չենք ուսումնասիրել, քանի

որ չունենք և չենք աշխատի ունենալ նրանց դրության մասին ճիշտ և մանրամասն տեղեկություններ, մեր բոլոր ջանքը, մեր բոլոր աշխատությունը նրանց օգնելու մասին ապարդյուն կլինի։ Կանգնել հետու, չմտնել գործի մեջ, չտեղեկանալ մի ժողովրդի իսկական պահանջները և միայն ստեղծել իր գլխում իդեալական ցնորքներ, այդ բոլորը հրապուրիչ բաներ են, բայց խաբուսիկ են։ Կաբինետի երևակայություններն ինքն իրան ոչնչանում են, երբ զարկվում են իրականության հետ։

Կրկնում ենք, մեր և մեր տաճկաստանցի եղբայրների մեջ մինչև այսօր ոչ մի ամուր կապ չէ եղել և չկա։ Պատճառները բացատրենք։ Եվ ո՞ւր ժամանակ կկազմվի մեր մեջ փոխադարձ հարաբերության կապ, երբ կլինի մարի փոխանակություն, որին պետք է ծառայե իսկապես մամուլը և գրականությունը։ Գրականական հաղորդակցությունը կունենար և այն օգուտը, որ կստեղծեր մեր մեջ ընդհանուր գրականական լեզու, և այդ ամենակարևոր մի գործ է, որովհետև բազմաբարբառությունը, թեև մի կողմից կազմում է լեզվի հարստություն, բայց մյուս կողմից թուլացնում է, անջատում է գրականության կրթողական ուժը և դժվարացնում է միևնույն ազգի մեջ տոհմային հարաբերությունները։

Տաճկաստանի մեր հայ եղբայրները կարոտ են օգնության, կարոտ են, որովհետև անկիրթ են, կարոտ են, որովհետև աղքատ են, անկրթությունը և աղքատությունը երկուսն էլ մեծ արգելք են լինում ժողովրդի առաջադիմության։ Ամեն հայի պարտքն է օգնել նրանց, իսկ մեծ պարտավորությունը հասնում է Ռուսաստանի հայերին։ Մենք մեծ նշանակություն չենք տալիս այն մասնավոր նվիրատվություններին, որ լինում են Տաճկաստանի այս և այն ընկերության անունով, որովհետև չգիտենք, թե որքան այն ընկերությունների նշանակությունը նպատակահարմար էր, թեև չենք կարող ուրանալ և մեր ժողովրդի գովելի ջանքը, որ աշխատում է գոնյա այսքանով նպաստել մեր կարոտյալ եղբայրներին։

Բայց յավալի է խոստովանվիլ, որ մեր տաճկաստանցի եղբայրների վերաբերությամբ այն օժանդակությունը, որ արևց և անում է մեր ժողովուրդը, այն աստիճան աննշան և անբավականացուցիչ պետք է համարել, որ մինչև անգամ հիշելու արժանավորություն չունի։ Մեր հարուստները համարյա չմասնակցեցին, ժողովրդի այդ մասը, որի սրտի մեջ սառել է ազգային ամեն զգացմունք, որ իր քեֆի և փառքի համար ահագին դումարներ է վատնում, հարուստները, խիստ մասնավոր բացառությամբ, Տաճկաստանի կարոտյալների համար ոչինչ չնվիրեցին։ Մեր հոգևորականությունը, միայն իր շահերի և քսակի համար մտածող

հոգևորականությունը, բոլորովին անտարբեր մնաց, և որպես սկզբում հայկական խնդիրը զարթնելու ժամանակ լռություն պահից, այնպես էլ նյութապես օգնելու գործի մեջ նա առնասխրտ համաուժյամբ պահպանեց իր անկարեկցությունը։ Մեր արիստոկրատիան և այսպես անվանված չինովնիկ հասարակությունը ոչ սակավ առնասխրեց գտնվեցան, քան հարուստ և հարստահարող վաճառականը և քան ամեն բարի ձգտումներ խնդրող հոգևորականությունը։ Մի կնա, որ աչքի էր զարկում և որ ավելի մխիթարական էր, այն էր, որ Տաճկաստանի մեր կարոտյալ ազգայինների հառաչանքն արձագանք գտավ մեր ժողովրդի ստոր գտի մեջ. չբավոր գյուղացին, օրական աշխատանքով ապրող գործակատարը, փոքրիկ քաղաքների մանրավաճառները և միշտ դրպանը դարտակ պիմնազիստը բաժանեցին իրանց սուղ միջոցներից մի փոքրիկ մասն այն եղբայրների համար, որ ավելի կարոտության մեջ էին, քան ինքեանք։

Ինչի՞ց առաջ եկած պետք է համարել մեր առնասրտությունը դեպի մեր արենակից եղբայրները, և ինչո՞ւ պետք է մենք այս աստիճան անկարեկից գտնվինք։ Մենք ուրիշ պատճառ չենք ճանաչում, բայց միայն այն, որ ինչպես ցույց ավելցինք մեր հոդվածի առաջին գլխում, մեր և տաճկաստանցիների մեջ հենց առաջուց չի եղել և չկար որևիցե սերտ կապ. մենք կտրված էինք միմյանցից, և անջատման վիճակի մեջ մեր փոխադարձ համակրգությունը սառել և իսպառ օտարացման էր հասել։ Ծագից ռուս-Թուրքական վերջին պատերազմը, լսեցինք, կարդացինք մեր եղբայրների դառն թշվառությունները, և գտնվեցան գեռ ոչ բոլորովին մեռած սրտեր, որոնց գութը շարժեցավ, ոգևորվեցան և մատնցին օգնության ձեռք հասցնել։ Բայց որովհետև այդ ոգևորությունը րոպեական էր և առաջ էր եկել իրերի ժամանակավոր երևույթներից, ուրեմն և չէր կարող լինել տևողական, չէր կարող լինել հիմնավոր, այլ շարժառիթի պատճառների անհետանալու հետ պիտի անհետանար և ոգևորությունը։ Այսպես էլ եղավ և լինում է։ Սկզբում մենք խիստ հաճախ կարդում էինք «Մշակի» թերթերի մեջ նվիրատվությունների ցուցակներ «Արարատյան ընկերության» համար[5], իսկ այժմ նվիրատվությունները հետզհետե նվազում են, և շատ չի անցնի, որ ցույն իսպառ կդադարեն։

Մի ժողովրդի ոգևորությունը պահպանելու համար դեպի մի բարի գործ պետք են ազդու միջոցներ և նեանպատ աշխատություն, ոչ միայն նրա համար, որ սրտին հատարակությանը նյութապես նպաստամատույց լինել գործին, այլ գլխավորապես նրա համար, որ հատկացնին, ինչ նրանք կատարում են սրբազան պարտավորություն։ «Մշակի» մեջ մի քանի անդամ հայտնվեցավ այն մխորը, ինչ պետք է մեր մեջ կազմվի մի հանձ-

ժողովուրդ, որ հոգ տանի տաճկաստանցոց համար նվիրատվություններ հավաքել տեղային նոր բացված դպրոցներին և առհասարակ կրթության տարածմանը նպաստելու նպատակով։ Բոլորովին համակրելով հիշյալ միտքը և կրկին դառնալով մեր վերևում հայտնած նկատողություններին, թե մեզ պետք են նախ և առաջ հիմնավոր տեղեկություններ և ճիշտ հետազոտություն մեր տաճկաստանցի եղբայրների դրության և նրանց պետքերի ու կարոտությունների մասին, կավելացնենք, որ մի այսպիսի հանձնաժողովի նպատակը խիստ սահմանափակ կլիներ, եթե նա ուշադրություն դարձներ միայն նյութական օժանդակության վրա։ Որովհետև նախքան օգնելը պետք է հասկանալ, թե ինչ բանի մեջ նրանք ավելի կարոտություն ունեն, պետք է հասկանալ նրանց անհրաժեշտ պահանջները, մի խոսքով, նրանց այն ցավերը, որ շուտափույթ դարմանելու կարոտ են։ Իսկ այդ բոլորն ուրիշ կերպ կարող չէ լինել, բացի կատարելապես ծանոթանալուց նրանց վիճակի հետ։ Բայց տեղեկությունները մեզ մոտ խիստ պակաս են։

Գուցե ոմանք կնկատեն, թե այդ մեր գործը չէ, մենք փողը կհավաքենք, կտանք նրանց ձեռքը, նրանք իրանց պետքերը շատ լավ են հասկանում, թող ինչ հիմնարկության համար ցանկանում են, գործ դնեն փողերը։ Մենք մեզ սխալած կհամարեինք, եթե հայտնեինք այն միտքը, թե պետք է նրանց ձեռնարկություններ մեջ մենք ևս միջամտություն գործենք, կամ փող տալով, մեզ նրանց գլխին հոդաբարձու կանգնեցնենք, այդ մտքերը հեռու են մեր նպատակից։ Բայց չենք կարող թաքցընել և մեր կասկածանքը, թե մեր տաճկաստանցի եղբայրների գործող մասն այնպես հիմնավոր կերպով ուսումնասիրած լիներ ժողովրդի պետքերը, որպես հարկն է։ Միայն ուսումնարան, միայն դիր-կարդալ, միայն այբբենով չէ կարելի մի ընկած ժողովուրդ վերականգնել, դրա համար պետք են ուրիշ զանազան հնարներ, որոնք կրթության հետ պետք է զուգընթացաբար առաջ գնային։ Այլևս չենք խոսում այն բանի վրա, որ մեր տաճկաստանցի գործիչները, երևելապես ոգևորությամբ, միշտ սովոր են եղել մանր և մինչև անգամ չնչին գործերի համար մեծ աղմուկ բարձրացնել...

Մեր կարծիքով, պետք է սկսել մի հիմնավոր գործ, և փոխանակ ցրվելու, մասնավորացնելու ուժերը, հավաքել, կենտրոնացնել նրանց մի ամբողջության մեջ և խմբովին գործել։ Դա ուրիշ կերպ լինել կարող չէր, բայց մեկայն, երբ Ռուսաստանի հայերից կկազմվեր մի հանձնաժողով, գլխավորապես բարեգործական նպատակով՝ օգնելու մեր տաճկաստանցի եղբայրների կարոտություններին։ Ահա այդ հանձնաժողովը կարող էր

ձեռք բերել Տաճկաստանի մասին այն տեղեկությունները, որոնց մասին վերևում խոսեցինք։ Նա կարող էր գործին հմուտ ճանապարհորդներ ուղարկել Թուրքիայում հայերի դրությունն ուսումնասիրելու և հրատարակել ոչ միայն հայերեն լեզվով, այլ զանազան լեզուներով, նա կարող էր մինչև այսօր հրատարակված հատ ու կտոր տեղեկությունները հավաքել, ամբողջացնել և նույնպես առանձին գրքերով և թարգմանություններով հրատարակել։ Մի այսպիսի հանձնաժողովը, բացի նյութապես և բարոյապես օգնելուց, ուրիշ շատ օգնություններ էլ կարող էր անել, որոնց վրա հարկ չենք համարում խոսել, այս էլ բավական է, որ նա կծանոթացներ Տաճկական Հայաստանի դրությունը ոչ միայն մեզ՝ Ռուսաստանի հայերին, այլ բոլոր լուսավոր աշխարհին։ Այն ժամանակ մենք հաստատ կերպով կգիտենայինք, թե ինչ կարոտություն ունեն նրանք և ինչ բանի մեջ պետք է օգնել*։

Ժողովուրդների վիճակը հանկարծ չէ հեղափոխվում, մի օրվա մեջ չէ բորբոքվում, այլ նախապատրաստություն սկսվում է դուցե դարերով առաջ, իսկ հարմար ժամանակ նրան իրագործում է։ Տաճկաստանցիք նախապատրաստված չէին ժամանակից մեծ օգուտ քաղելու և այս պատճառով չհասան իրանց նպատակին, թեև ոմանք Բեռլինի վճռի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանք են տեսնում[6]։ Այդ հանքը մեզ շատ չէ շլացնում։ Այս և այն հոդվածը, մանավանդ, երբ նա ֆորմի համար գրված է լինում, մի ժողովրդի վերածնելության վերաբերությամբ այնքան նշանակություն ունի, որքան մեռած ռեցեպտը հիվանդի առողջության համար, երբ դեղերը չեն գործադրվում։

Մենք մեկ հանք ենք ճանաչում, որից կարելի է ստանալ ցանկացած ոսկին, եթե այդ հանքն անդադար և անընդհատ կերպով կբովագործվեր. դա կոչվում է նախապատրաստություն։ Եվ Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար և անընդհատ նախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ և պատրաստ հանդիպեն այն մեծ օրվանը, երբ կրկին անգամ կզարկե ազատության ժամը։ Իսկ այդ օրը կկրկնվի և շատ անգամ կկրկնվի... դուցե շատ հեռու չէ մեզանից...

Շատերը ժպտությամբ խոսում են. «Արևելյան խնդիրն այս անգամ էլ չվերջացավ... ա՛խ, ե՞րբ պետք է վերջանա այդ արևելյան խնդիրը...»։

---

* Վաղուց լսել ենք, թե մեր ռուսաստանցի հարուստներից մեկը ցանկություն ուներ Տաճ. Հայաստանում հիմնել մի բարձր դպրոց և այդ նպատակով վարժապետներ էր պատրաստում. եթե ճիշտ է այդ, արդյոք ո՞ր օրվա համար է պահել նա իր դպրոցը և վարժապետները։

Ինչպես միամիտ խոսքեր են դրանք։ Արևելյան խնդիրը Եվրոպայի կենսական խնդիրն է։ Կյանքի խնդիրները չեն վերջանում, այլ ժամանակավորապես պայմանավորվում են։ Ամբողջ հայոց ազգի մտածողների մեջ ես միայն մի մարդ եմ ճանաչում, որ իսկապես հասկացել էր, թե ինչ է նշանակում արևելյան խնդիր, և հասկացել էր այն ժամանակ, երբ այդ դիպլոմատիական տերմինը դեռ մեզանից շատերին ծանոթ չէր։ Մի՞թե արևելյան խնդիրը կարող է վերջանալ. ո՛չ, նա կմնա անվախճան, որքան ինքը արևելքը հավիտենական է։ Դա մի պատմական խնդիր է և պիտի ձգվի ազգերի պատմության հետ։ Մի ժամանակ արևելքից ազգերը հեղեղի հոսանքով թափվում էին Եվրոպան կողոպտելու համար։ Այժմ պերերը փոխվել են։ Այսուհետև Եվրոպայից պիտի հոսին դեպի արևելք՝ Ասիայի հարստություններից օգուտ քաղելու։ Եվ ամեն մի հոսանք կհարուցանի մի նոր արևելյան խնդիր։ Այսօր ռուսը և անգլիացին արևելքում շատ շահեր ունեն և մրցում են միմյանց հետ։ Հետո կսկսի գերմանացին, ֆրանսիացին և մյուսները։ Ամեն մի եվրոպական պետություն աճելով, սեղմվելով իր երկրի նեղ սահմանների մեջ և ապահովել նրա հարստությունները, պետք է դիմի դեպի արևելք՝ ապրուստ որոնելու։ Եվ ամեն մի նոր արշավանք կամ գաղթականություն կհարուցանեն մի նոր արևելյան խնդիր։ Եթե մինչև այսօր եվրոպական ազգերի հոսանքը դեպի արևելք թույլ էր գնում, այդ մասին պետք է շնորհակալ լինեն Ամերիկային, որի հայտնվելը մի քանի դար ետևյալորում Եվրոպացիների հոսանքը դեպի Ասիա. իսկ այժմ Ամերիկան էլ լցվելու վրա է։ Ուրեմն արևելյան խնդիրը միշտ կա ու կմնա, և տաճկաստանցի հայը պետք է նախապատրաստվի օգուտ քաղել հարմար դեպքից, երբ մյուս անգամ կհուզվի նա։

Իսկ եթե նա միշտ անպատրաստ կմնա՞։

Այն ժամանակ դժբախտ Հայաստանը, այդ Եվրոպայի և Ասիայի պատմական կամուրջը, ազգերի անցուդարձի ներքո կտրորվի և կոչընչանա...

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ
ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մտադրված լինելով նկարել Տաճկաստանի հայոց ներկա դրության և նրանց մոտավոր անցյալի ճիշտ պատկերը, վերջին քաղաքական անցքերի տպավորության ներքո ես ձեռնարկեցի գրել իմ «Կայծեր» անու-

նով վնասը։ Այս աշխատությունը բովանդակում էր իր մեջ այն բոլոր տարաստիճելիքը, որոնց ենթարկված է Տաճկաստանի հայը։ Վնասը բաղկանում է երկու առանձին հատորներից, որոնց յուրաքանչյուրը կունենա մոտավորապես 400 տպագրված երեսներ։ Գործողությունների կենտրոնը վասպուրականի նահանգն է. տիպերը հնդաիսխական բնավորություն ունեն a la «Djalaleddine»։ Իսկ անցքը վեր է առնված վասպուրականում երեք քառորդ դար առաջ կատարված հայերի մի շարժումից, որի մասուր հիշատակները մինչև այսօր պահված են տեղային ժողովրդի մեջ։

Ի նկատի ունենալով այն երևույթը, որ այսօր Տաճկաստանի հայերի խնդիրը գրավում է մեր բոլոր համազգիների բարի ուշադրությունը, ևս շտապեցի որքան կարելի է շուտով տպագրել հիշյալ աշխատությունը, համոզված լինելով, որ դրանով կարող եմ մի փոքրիկ լույս ձգել Թուրքիայի հայոց խնդրի լուծման վրա, որը գույն դեռևս երկար ուսումնասիրության պետք ունի։

Բայց տպագրության ծախսերի դժվարությունն ինձ ստիպեց դիմել մեր պատվելի ընթերցող հասարակությանը, խնդրելով նրա համակրությունը մի այսպիսի ձեռնարկության մասին, որը բարեմիտ անձանց օժանդակության կարոտ է։ Ես հուսով եմ, որ իմ ակնկալությունն անպատուղ չի մնա, և բաժանորդագրությամբ լույս կտեսնի «Կայծերը»։ Երկու հատորի բաժանորդագինն է միասին 3 ռուբլի. դրքերը կտպագրվեն մինը մյուսից անմիջապես հետո և առորագրությունների համեմատ կուղարկվեն պ. բաժանորդներին։

Տպագրությունը կսկսվի անհապաղ այն ժամանակ, երբ բաժանորդներից գոյացած գումարը կբացվեն տպագրության ծախսը։

ԻՆՉՈ՞Վ ԵՆՔ ՄՆՏԹԱՐՎՈՒՄ

Կույրը մի տեսակ մխիթարություն է զգում, երբ հանդիպում է մի ուրիշ կույրին, մտածում է, որ ինքը մենակ չէ։ Աղքատը նույնպես մխիթարվում է, երբ իրանից ավելի դժբախտին է տեսնում։

Բաժանված ախտը թեթևացնում է տխուսավորի արտասավորությունը։ Բաժանված դժբախտությունը մխիթարում է թշվառին։

Ո՞վ չգիտե, որ անանկացած վաճառականն ուրախանում է, երբ միևնույն անբախտությունը պատահում է և իր ընկերներին։ Երկրագործը շատ չէ տխրում, երբ կարկուտը փչացնում է բոլոր գյուղացիների ար-

տերը։ Մինչև անգամ մահը, որ այնքան ցավալի է լինում, խոլերայի և ժանտախտի ժամանակ կորցնում է իր սխուր ազդեցությունը, որովհետև շատերն են մեռնում, և վտանգը հասարակաց է դառնում։

Այդ ինչի՞ց է, որ մարդ իր թերությունների, կորստի և անբախտությունների մխիթարությունը գտնում է ուրիշի թերությունների, կորստի և անբախտությունների մեջ։ Չեմ չասենք, թե դա բնական է, կարող ենք ասել, որ այդ այդպես է լինում։

Այսպիսի հասկացողություններ, այսպիսի մտածություններ ոչ միայն տեսնում ենք մանավանդ մարդու մանավոր կյանքի մեջ, այլ մինչև անգամ ամբողջ ժողովուրդների և հասարակությունների կյանքի մեջ։ Մի ժողովուրդ կամ մի հասարակություն իր վատ վարմունքն արդարացնում է մի ուրիշ ժողովրդի կամ հասարակության նույն տեսակ վարմունքով։ Զարմանալի չէ, որ տգետ ամբոխն այսպես է դատում, բայց շատ անգամ ինտելիգենցիան նույն սխալանքի մեջ է ընկնում։

Ինձ շատ անգամ պատահել է վիճել այսպիսիների հետ. ես հիշում եմ մինչև անգամ մի քանի բանակռիվներ, որ լրագրության մեջ անցան։ Ասում ես, օրինակ, հայերի մի ընդհանուր մոլության կամ մի ընդհանուր թերության մասին. քո հակառակորդը խոսքդ սրտում է և գտնում է երկրագնդի վրա մի քանի ազգություններ, որոնք նույնպիսի թերություններ ունեին, և դրանով արդարացնում է հայի վարմունքը, ասելով, թե հայը մենակ չէ, որ այսպես է գործում։ Նա, կարծես, մի տեսակ մխիթարություն է գտնում, երբ օտարների մեջ իր ազգի նմաններին է գըտնում։

Այս տեսակ կարեկամիանները զուրկ են լինում հիմնավոր իմքնաճանաչությունից։ Նրանց հայացքները կյանքի թե ընդհանուր և թե մասնավոր երևույթների մասին ունենում են միշտ նեղ, սահմանափակ և միակողմանի բնավորություն։

Ուրիշների մոլություններով արդարացնել իր վատ վարմունքը, ահա՛ նրանց գլխավոր փաստը։

Ասում ես, օրինակ, հայ վաճառականը խաբեբա է։ Օրհնած, պատասխանում են քեզ, դու նայիր հույներին, հրեաներին և կրթյալ անգլիացուն, հային, նրանց հետ համեմատելով, պետք է հրեշտակ համարել։

Բայց խաբեբայությունը խաբեբայություն է, ինչ չափով և ինչ ազգի մեջ գործվեր նա։ Ուրիշի գողությունները մեր գողությունը չեն արդարացնում։

Ասում ես, մեր հեղեգյականները վատ են, ծույլ են, ժամանակի

պահանջների համաձայն չեն գործում, ազգի արծաթը վատնում են, ոչ մի օրինավոր բան չեն արդյունաբերում և այլն։ Իսկույն քո առջև գնում են կաթոլիկ կղերը, և սկսյալ եղիպտական բուրմերից մինչև Պիոս IX-ը, կարդում են եկեղեցականների վնասակար ազդեցությունը, դուրս բերելով այն եղրակացությունը, թե հայ կղերը համեմատաբար ավելի տաննելի է։ Բայց դրանով հայ կղերը չէ արդարանում։

Այսպես դատելով, կարելի է միշտ այն սխալ եղրակացությանը հասնել, թե ինչ որ մեր մեջ վատ է, անբարոյական է, անազնիվ է, վնասակար է, նեղելի է, որովհետև օտարների մեջ ևս գտնում ենք միևնույն հատկություններ։ Այսպես դատում էին և մինչև այսօր շարունակում են այսպես դատել այն փտած ազգասերները, որոնք հայի մեջ չեն ներում ոչ մի սև բիծ տեսնել։

Բայց մոռանում ենք մի բան։ Մի՞թե օտար ազգերը զոհ են իրանց վիճակից, մի՞թե նրանց մեջ ևս ժողովրդի ընտիր և մտավորապես զարգացած մասը չէ բողոքում, չէ դատապարտում այս և այն հասարակական զզվելի երևույթները։ Մոռանում ենք, որ օտար ազգերն իրանց թերություններից հետ ունեն և ահագին առավելություններ, որոնք պակասում են ողորմելի հային...

Մանավանդ եմ իմ խոսքը։

Մեզանից որի՞ հետ չէ պատահել աշակերտության ժամանակ տեսնել, երբ վարժապետը նկատել է մեր ընկերներից մեկի այս և այն անկարգությունը, ասելով. «Արշակ, անպիտան, ինչո՞ւ ես չարություն անում»։ Արշակը իրան արդարացրել է, պատասխանելով. «Վարժապետ, ես մենակ չէի, Արամն էլ էր այսպես անում»... Բայց Արամի անկարգությունն Արշակին չէ ազատում պատժից։

Նույն տպավորությունը գործեց, երբ կարդացի պ. Դադյանի նամակը («Մշակ», № 217)։ Ես շատ ուրախ կլինեի և մեծ հոժարությամբ հետ կանեի իմ խոսքը, եթե պարոնը իմ «Հայ երիտասարդության» մեջ նկարած Ռուսաստանի հայ ուսանողների պատկերը բոլորովին անճիշտ և աղավաղված գտներ։ Բայց նա աշխատում է արդարացնել հայ ուսանողների թերությունները նրանով, որ դրանք ընդհանուր ուսանողության հատկանիշներ են, ո՛ր ազգության և պատկանեին՝ ռուս, լեհացի, գերմանացի, վրացի և այլն։ Դարձյալ մտածության նույն ձևը, դարձյալ պատրվության նույն եղանակը, որ մենք լսում ենք մեր ազգային և հասարակական ամեն մի տգեղ երևույթների վերաբերությամբ։ Մենք մեղավոր չենք, որովհետև ուրիշներն էլ նույնն են գործում... մենք մեղավոր չենք, որովհետև մեր նմանները շատ կան... Արշակը մեղավոր չէ,

որովհետև Արամն էլ անկարգություն է անում... Պ. Դադյանի նման ուսանողին, որի գրվածները խոստանում են լավ ապագա, աններելի է այսպես դատել։

Ճշմարիտն ասած, իմ նկարագրած պատկերներն առհասարակ հայ ուսանողների կյանքից ուրիշ ոչինչ չեն, բայց միայն զանազան ժամանակներում «Մշակի» մեջ տպված հատ ու կտոր հոդվածներից և նամակներից դուրս բերած մի ամբողջ նկարագիր, որ իմ գրչի տակ ավելի ամփոփ շրջանակի մեջ է դրված։ Ես օգուտ եմ քաղել և այն վիճաբանություններից, որ ուսանողների վերաբերությամբ շատ անգամ տեղի են ունեցել այդ լրագրի խմբագրատան մեջ, իհարկե, ավելացնելով միևնույն ժամանակ և իմ սեպհական հայացքներն ու դիտողությունները։

Դուցե պ. Դադյանը այսօր տեսնում է իր աչքի առջև մի քանի իսկապես լավ ուսանողներ, որոնց ես էլ չեմ ուրացել, բայց «մի ծաղիկով գարուն չի լինի»,— ասում է հայտնի առածը։ Պետք է այն ևս նկատողության առնել, որ մի դրող, երբ կամենում է նկարել այս և այն հասարակության պատկերն իր բոլոր լավ և վատ կողմերով, նա չէ բավականանում միայն ճերմակ կամ աոօրյա երևույթներով, այլ հավաքում է մի որոշ պերիոդի, ժամանակի մի որոշ շրջանի մեջ հայտնած երևույթները, ամբողջացնում է և նրանցից դուրս է բերում մի ընդհանուր նկարագիր։ Նույնպես վարվում է և տնտեսագետը, մի քանի տասն տարվա ընթացքում կատարված փաստերից, մի քանի տասն տարվա ընթացքում հավաքած թվանշաններից դուրս է բերում միջին թիվ և նրա վրա հիմնում է իր կարծիքը։ Այսպես վարվել եմ և ես իմ հետազոտությունների մեջ հայ երիտասարդության վերաբերությամբ։ Ես վեր եմ առել մի ամբողջ սերունդ, որ գործում է և գործել է մի քանի տասն տարիների ընթացքում։ Հասարակական տիպերը մի օրվա մեջ չեն ծնվում, նրանք ներկայացնում են մի որոշ ընդհանրության հատկանիշներ, որ հայտնվել և զարգացել էին ժամանակի մի որոշ շրջանի մեջ։ Դուցե իմ նկարած ուսանողներից ոմանք դեռ չեն թողել համալսարանի նստարանները, դուցե ոմանք ավարտելով, այսօր պատում են մեր աչքի առջև, և ոմանք ծերանալով, թողել են կյանքի ասպարեզը։ Ես միացրել եմ երկու ծայրերը մի բոլորակի ամբողջության մեջ։ Բայց եթե ընթերցողը նրանում հրեշավոր տգեղություն է տեսնում, ո՞վ է մեղավոր։

«Հայ երիտասարդությունը» տպվելուց հետո «Մշակի» խմբագրատան մեջ ստացվեցան մասնավոր նամակներով մի քանի բողոքներ, ստացվեցան և շատ համակրական նամակներ։ Մի քանի պարոններ մինչև անգամ խնդրում էին, որ հիշյալ աշխատությունն առանձին տեսա-

կով հրատարակվի։ Բայց պ. Դադյանի նամակի մեջ իմ ուշադրությունը գրավում է այն կետը, իբր թե, ես դուրս բերելով ուսանողությունը մի «հրեշավոր պատկերի» մեջ, գրանով անդիտակցաբար մտցնում եմ հակակրություն և մինչև անգամ ֆշնամություն հասարակության մեջ դեպի այն սերունդը, որի ուժերի վրա շատ և շատ հույսեր է դրել ազգը։ Թող չվրդովվի պատվելի նամակագիրը, գրանով ուսանողությունը ամենևին չի վնասվի։ Ինքնաճանաչությունը միշտ եղել է օգտավետ և կլինի։ Հիմա կանվանեինք այն հիվանդին, որ թաքցնում է իր ցավերը։ Երբ «Մշակը» սկսեց անողոք կերպով մատակել եկեղեցականներին, գանվեցան միամիտներ, որ ասում էին. «Պարոններ, ի՞նչ եք շինում, դուք ձեր ձեռքով ձեր տունը քանդում եք. եկեղեցին մեր ազգի հիմքն է, հարձակվելով եկեղեցականների վրա, մերկացնելով նրանց այլանդակությունը, դուք դրանով կծնեցնեք հակակրություն և մինչև անգամ անհաշտություն ժողովրդի սրտում և կբաց անեք նրա ու եկեղեցականների մեջ մի անդունդ, որը հետո դժվար կլինի միացնել, դրանով կվնասվի մեր եկեղեցին»։ Բայց եկեղեցին ամենևին չվնասվեցավ, և եկեղեցականները սկսեցին փոքր առ փոքր լավանալ։

Ում շատ է տված, նրանից շատ կպահանջվի։ Ես և մեզանից ամեն մեկը, իհարկե, այնքան խիստ չէին լինի Ներսիսյան դպրոցում կամ որևիցե միջնակարգ ուսումնարանում ավարտած աշակերտի հետ, որովհետև նա գործում է ավելի, քան թե սովորել է։ Բայց համալսարանական բարձրը ուսում ստացած երիտասարդին պետք է մտրակել ամենայն անգթությամբ, երբ նա չէ համապատասխանում ոչ իր կոչմանը և ոչ ստացած գիտությանը։ Մեր լրագրությունը, մեր գրականությունը մեծ բարերարություն արած կլինի ազգին, երբ կսկսի քննադատել այդ փչացած և խարդախված սերունդը, որ մի նշույլ անգամ օրինավոր ապագայի չէ խոստանում։ Ի՞նչ են տվել մեզ, ի՞նչ ծառայություն են մատուցել։ Գնալ, ուսում առնել, դիպլոմ ստանալ, կյանքի մեջ բարձր դիրք բռնել, հարըստանալ, փառավոր կերպով ապրել, այս բաներից հազիվ թե հայոց ազգը կարող էր շահվել։

Պետք է և նկատի ունենալ մի ուրիշ կետ ևս։ Մեր ուսանողները ամեն տեղ, ամեն երկրում, օտարազգիների հետ համեմատելով, ամենաչնչին փոքրամասնություն են կազմում։ Եթե, օրինակ, մի համալսարանում կային 10 հայ ուսանողներ, իսկ 100 ռուս ուսանողներ, և հայերից 8-ը վատ էին, իսկ ռուսներից 50-ը, դարձյալ համեմատաբար հայերից վատերի թիվը մեծ պրոցենտ է ներկայացնում։ Բայց մեր նախնի ուսանողներն այսպես չէին, նրանք Աթենքի, Աղեքսանդրիայի դպրոցնե-

բուռ միշտ իրանց փոքրամասնությամբ դերազանցում էին մեծամասնությունից, որպես լավ ուսանողներ։

Պ. Դադյանի մի երկրորդ սխալն այն է, որ նա աշխատում է երևույթներն արդարացնել պատճառներով։ Պատճառները միայն բեթևացնում են հանցանքը, բայց հազիվ թե արդարացնում են։ Մի անբարոյական միշտ կհամարվի անբարոյական, թեև նրա մոլություններն առաջ եկած լինեին վատ դաստիարակությունից կամ կենսական այլ և այլ պահանջներից։ Այնպես էլ գողը, ավազակը միշտ ճանաչվում է ավազակ, թեև նրանց վարմունքը կլիներ հետևանք տնտեսական կամ հասարակական այս և այն անկարգ կազմակերպության։ Գողությունը փ֊ստ է, պատճառով չեն արդարացնում նրան։

Հասկացողության այդ եղանակը, երբ միակողմանի կերպով է վերաբերվում դեպի հայտնվող երևույթները, միշտ սխալ եզրակացությունների է հասցնում։ Իհարկե, ամեն երևույթ ունի իր արտադրիչ պատճառները։ Որպես բնության, նույնպես և կյանքի մեջ ոչինչ բան ինքնագոհ չէ։ Բայց պատճառները պետք չէ խառնել երևույթների հետ, որոնք միշտ պահպանում են իրանց բնավորությունը, լավ կամ վատ հատկություններըւ

Եթե այս մեթոդին հետևինք, այն ժամանակ ոչ մի բանի դեմ պետք չէր խոսել, ոչ մի անարդարության դեմ պետք չէր բողոքել, որովհետև և ոչ մեկը առանց արտադրիչ պատճառ չէր լինելու։ Բայց մեր մեջ կան շատերը, որոնք հետևում են մտածության այս եղանակին։ Օրինակ, ասում ես, թե հայը ցած և սարիկական բնավորություն ունի, թե նա զուրկ է այն բանից, որ կոչվում է ազգային ազնիվ հպարտություն, թե նա պատվի և անձնասիրության զգացմունք չունի, թե նա չէ հետաքրքրվում որևիցե բարձր իդեալով և այլն։ Հիմար անձնագովները հերքում են այս ճշմարտությունները, իսկ կարճատես խելացիները արդարացնում են։ Վերջիններս սկսում են քննել պատճառները և իսկույն դառնալով դեպի անցյալը, դեպի պատմությունը, պատասխանում են քեզ. «Դու գիտես, եղբայր, թե այդ ազգը ինչ է կրել իր կյանքում, թշնամու սուրը միշտ նրա գլխից պակաս չէ եղել. բռնության լծի ճնշման տակ նա կորցրել է իր զգացմունքը դեպի գեղեցիկը և ազնիվը»։ Շատ լավ, պատճառը հասկացանք, դիցուք թե հայը մի այսպիսի թշվառ անցյալ է ունեցել, բայց ներկայումս պետք չէ՞, որ ուղղվի և վերադարձնի իր հին կորուստը։

Ասա դու նրան, թե հայոց ընտանիքը այս և այն թերություններն ունի, թե նրա կազմակերպության մեջ տիրում են շատ անկարգություններ, թե մանուկ սերունդը ճնշվում է հներից, թե ամուսնական լծակցությունը

շատ անգամ անտանելի է դառնում և այլն։ Քեզ կպատասխանեն, թե դրանք մտել են մեր մեջ երկար տարիներով պարսիկների և մահմեդական ազգերի հետ դրացությունից։ Դարձյալ պատճառներ։ Բայց դրանք բավական չեն, որ մենք ներողամիտ լինենք դեպի մեր ընտանեկան մոլորությունները։ Ի՞նչ կասեինք այն բժշկին, որ, հիվանդի ցավը քննելով, կասեր մեզ, թե դա մի վնասակար տենդ է, որ առաջ է եկել մրսելուց, և կդադարեր նրան դարմանելուց։ Մրսելը պատճառ է, բայց տենդը հիվանդության փաստ է, որ կարոտ է բժշկության։

Վերջացնում եմ ձեզ հետ, պ. Դադյան, հասկանում եմ ուսանողի վրդովմունքը, երբ հարձակվում են նրա ընկերակիցների վրա։ Ցավում եմ, որ ավելի պարզ խոսել չէի կարող, և այս պատճառով իմ հոդվածը սառցավ ավելի այլաբանական և, ճիշտ ասած, ֆելիետոնական ձև։ Բայց եթե ես իմ կարծիքների մեջ ուսանողների վերաբերությամբ սխալ եմ, երանի թե այդպես լիներ...

* * *

Պատմության վրա խոսք գալով, ես չեմ կարող չհիշել, որ վերջին ժամանակներում մեր պարբերական հրատարակությունների մեջ կրկին սկսեցին հունցել միանգամայն մոռացված երկպառակության խմորը, կրկին բարձրացրին կռոնի և ազգության խնդիրը։ Խոստանալով առաջիկա տարվա սկզբներում նվիրել այդ հարցին մի քանի պատմական հոդվածներ, այժմ բավականանում եմ միայն մասնավոր նկատողություններով։

Տաճկաստանի հայոց մամուլը երկար տարիներ զբաղվեցավ հիշյալ հարցով և, բացի թշնամություն սերմանելուց, բացի ազգային ամբողջության պատռվածքի ճեղքերը ավելի լայնացնելուց, ոչ մի օգտավետ հետևանքի չհասավ։ Ես այսօր, երբ ավելի կարևոր խնդիրների մասին խորհելիք ունենք, երբ Տաճկաստանի հայերի վերածնելության հարցը գրավում է մեր ամենի ուշադրությունը, մեր մեջ գտնվում են մարդիկ, որ սկսում են կրկին քշշել մարած մոխիրը, սկսում են կրկին բորբոքել դադարած վիճաբանությունների կրակը, հայտնելով այն հնացած և լուսավոր ազգերի համար իր նշանակությունը կորցրած միտքը, թե կռոնը, այսինքն՝ եկեղեցին պետք է ճանաչել ազգության հիմք, և ով որ դուրս է գալիս այդ եկեղեցուց, նա կորվում է ազգի ամբողջության հետ անդամակցությունից և այլն։ Արդարև, մի հին և բոլորովին մաշված գաղափար, որ դարերի ընթացքում, Վատիկանի դարբնոցի մեջ, պապերի

հզոր կռանի տակ ծեծվեցավ, կոփվեցավ և դարձյալ չկարողացավ եկեղեցու մեջ ի մի ձուլել ազգությունները։

Իսկ այժմ մի քանի ողորմելի գրիչներ աշխատում են նույնը իրագործել, ինչ որ Հռոմի ահեղ բազուկը չկարողացավ կատարել։

Մենք պատմություն ունենք,— ասում են մեզ,— մեր պատմությունը ապացուցնում է, որ լուսավորչական եկեղեցին պետք է լինի հայի պատվապարանը և ազգության հիմքը, այդ եկեղեցուց դուրս հայը չէ կարող հայ համարվել, նա կորած է։ Եվ այդ հիման վրա՝ կաթոլիկ և բողոքական հայերը հայ չեն, նրանք, ո՞վ գիտե, թե ինչ են... Եվ այդ տիրացուական քարոզները մեզ կարդում են այն պարոնները, որոնք Զաքճյանի և Բիրքերյանի դասագրքերից մի քանի գլուխներ սերտելով, երևակայում են, թե պատմություն գիտեն[1]։ Մենք այսպիսիներին խորհուրդ կտայինք մի փոքր ուսումնասիրել Բոքլը[2], եթե կամենում էին հասկանալ, թե ինչ կապ կա ազգերի պատմության մեջ։

Պետք է լայն հայացքով նայել առարկայի վրա. պատմությունը առաչինք միրաժներ ունի, որոնք երբեմն ձգում են անհմուտ նայողին օպտիկական խաբեությունների մեջ։ Նեղ, միակողմանի հայացքը պատմության վրա միշտ մոլորեցնում է մարդուն։ Հայն աշխարհի ստեղծագործության մեջ մի առանձին արարած չէ և չէ կարող լինել։ Նա ազգերի պատմության մեջ բացառություն չէ կարող կազմել։ Նա ենթարկված է եղել և պետք է ենթարկվի միևնույն պատմական օրենքներին, որոնցմով կառավարվել են մարդկությունը ներկայացնող ազգերը։ Հայն առանձին պատմական օրենքներ ստեղծել չէ կարող։ Պատմությունն ազգերի առջև մի որոշ շավիղ է գծել, դա ընդհանուր մարդկության ուղին է, ինչ ազգ, որ ոտքը դուրս է դնում այն շավղից, մոլորվում է, կորչում է և ոչնչանում է...

Կրոնը, որպես մարդկային զգացմունքի արտահայտություն, ժամանակների հետ միշտ փոփոխվել է և անվերջ կերպով կփոփոխվի։ Մեր նախնիքը մի ժամանակ կռապաշտ էին, այժմ մենք քրիստոնյա ենք, իսկ դարերից հետո, ով գիտե, մեր ապագա սերունդը ինչ կրոն կստեղծի իր համար, գուցե ամենևին կրոն էլ չի ունենա։ Ուրեմն, մի բան, որ տևողական չէ, որ միշտ հեղուկ վիճակի մեջ է գտնվում, որ զգացմունքից միայն կախում ունի, նա չէ կարող ազգության հաստատ հիմք լինել. գուցե մասնավորապես կնպաստե նրա գոյությանը, բայց պահպանել չէ կարող։

Պետք է փայտից շինած գլուխ ունենալ և այդ ամենապարզ ճշմարտությունները չհասկանալ։ Բայց ի՞նչ օգուտ, հազար ու մեկ փաստեր

բեր, միևնույն է, դարձյալ քեզ կպատասխանեն, թե հայոց ազգը պահպանվեցավ իր կրոնով, իր սեղեցիներով։ Եվ այդ խոսքերը կրկնվում են մի հոյակապ ազգի վերաբերությամբ, որի ողորմելի փշրանքներն են մնացել այսօր։ Դուք գիտե՞ք, պարոններ, թե որքա՞ն էր առաջ հայերի թիվը, և այժմ որքան է մնացել։ Ինչո՞ւ կորան նրանք, ինչո՞ւ կրոնը չկարողացավ պահպանել։ Եթե հայերն ունեցել են փառավոր անցյալ, դա եղել է Էրա հեթանոսական դարերում, և քրիստոնեությունն ընդունելուց հետո այդ ազգը սկսեց տկարանալ և քայքայվել։

Շատ հեշտ է վեր առնել պատմությունից մի քանի երևույթներ, և առանց նրանց իսկական պատճառները քննելու, սխալ եզրակացություններ դուրս բերել։ Շատ հեշտ է մատի փաթաթան շինել Լեհաստանի հայ գաղթականությունը, ասելով, թե իրանց կրոնը փոխելու պատճառով կորան, ոչնչացան։ Բայց պետք է բոլորովին կույր լինել և չնկատել մեր պատմության մեջ այն ընդհանուր երևույթը, որ դեպի արևմուտք դիմող բոլոր հայ գաղթականությունները մեծ մասամբ ոչնչացան՝ առանց իրանց կրոնը փոխելու անգամ։ Եվ դրա պատճառը ոչ թե մի օտար ազգի սեղեցուն հարելն էր, այլ այն ընդհանուր բնական օրենքը, որ հայ գաղթականները, արևմուտքում հանդիպելով իրանցից ավելի բարձր կուլտուրական ազգերի, չկարողացան նրանց հետ մրցություն անել և կյանքի կռվի մեջ հաղթվեցան և կլանվեցին իրանցից ավելի զորեղ ազգերից։ Որի ընդհակառակն, դեպի հյուսիս և դեպի արևելք դիմող հայ գաղթականությունները պահպանվեցան, ոչ թե այն պատճառով, որ չփոխեցին իրենց կրոնը, այլ այն պատճառով, որ ապրում էին կուլտուրությով իրանցից ավելի ստոր ազգերի հետ և գոյության կռվի մեջ կարողանում էին նրանց հետ մրցություն անել։ Ուրեմն, եթե հայերից մնացել են մի քանի փշրանքներ, դրա համար պետք է շնորհակալ լինել ոչ թե լուսավորչական եկեղեցուն, այլ թուրքերին, թաթարներին, պարսիկներին և հնդիկներին։ Եթե հայը լիներ ֆրանսիացու, գերմանացու և անգլիացու հպատակ, արդեն վաղուց կորած կլիներ և լուսավորչական եկեղեցին հազիվ թե կարող լիներ փրկել նրան։

Մենք միշտ ասել ենք և դարձյալ կկրկնենք, որ ազգության գաղափարը պայմանավորվում է ոչ թե կրոնով, այլ նրա ցեղական հատկություններով, որոնց մեջ առաջին տեղը բռնում է լեզուն, որ է և միշտ կլինի ազգի պահպանության հիմքը։ Դա է, որ մշտական է, դա էլ անբաժանելի է մարդկությունից։ Լեզուն թեև փոփոխվում է, բայց իր փոփոխության մեջ ավելի կյանք է ստանում, զարգանում է և կատարելագործվում է։ Մի մարդ կարող է ոչ մի եկեղեցու չպատկանել և մինչև անգամ անկրոն

լինել, բայց չէ կարող որևիցե լեզվով չխոսել։ Խոսքը միշտ կմնա, որքան ապրում է մարդկությունը, նա հավիտենական է։

Հայը, թե կաթոլիկ լիներ նա, թե բողոքական, թե լուսավորչական և թե անկրոն, դարձյալ հայ է. որովհետև միևնույն ցեղական հատկություններն ունի, միևնույն լեզվով է խոսում, միևնույն առհմին է պատկանում։ Մենք եկեղեցու տարբերության մեջ ազգային տարբերություններ չենք ճանաչում։ Մենք չենք կարող ընդհանուր մարդկային կենցաղավարության պայմանների մեջ մեղ համար առանձին օրենքներ սահմանել։ Չկա մի ազգ երկրագնդի վրա, որի մեջ չլինեին զանազան աղանդներ, դավանություններ, եկեղեցիներ, բայց բոլորը միևնույն ազգին են պատկանում։ Ամերիկայում մինչև անգամ մի ընտանիքի մեջ հայրը, մայրը, որդին, աղջիկը, յուրաքանչյուրն առանձին եկեղեցիներում են աղոթք անում, բայց կրոնի տարբերությունը չէ վնասում նրանց ազգությանը։

Կրոնի երկպառակությունների խնդիրը մեջ գցել ուղիղ այն ժամանակ, երբ Տաճկաստանում պատրաստվում է հայերի համար մի ապագա, դա եղեռնագործությունից ավելի մեծ հանցանք է։ Մենք այսպիսիներին սաոր են դասում Հասուններից, Նիկոլներից, Վասակներից և Մհերուժաններից։ Մենք հայտնում ենք մեր անկեղծ ցավը, որ վերջին ժամանակներում Կ. Պոլսի մեր հակահասունյան եղբայրներից մի խումբ, զանազան սխալ հանգամանքներից ստիպված, դիմեցին լուսավորչական եկեղեցու գիրկը։ Մենք ավելի կհարգեինք նրանց, եթե, կաթոլիկ եկեղեցու մեջ մնալով, կշարունակեին քարոզել հայությունն և ազգայնությունն։ Մենք մի մեծ կորուստ ենք համարում, որ մեզ համակրողների մի խումբ դուրս եկավ հակառակ բանակից, որին խորամանկ Հռոմը Բշնամական դիրքի մեջ է դրել իր համազգիների դեմ։ Թող ուրախանան կարճամիտները, բայց մենք ոչ ոքի ուրախությանը կցորդ չենք լինում։ Մի այսպիսի ուրախություն զգաց հայոց ազգն այն ժամանակ, երբ չորս նշանավոր եկեղեցականներ բաժանվեցան Մխիթարյան միաբանությունից և վերադարձան լուսավորչական եկեղեցու գիրկը։ Մեծ եղավ վնասը, որովհետև Մխիթարյանների միաբանությունը, որ այնքան շատ գործել էր հայության համար, որ մի լավ թարգման էր մեր ազգի և Եվրոպայի մեջ, այն օրից, երբ այդ չորս արժանավոր անձինքը հեռացան, սկսեց հետզհետե թուլանալ և վերջապես դեպի հայոց ազգի շահերը անտարբեր լինել։ Վասակներին չորս մարդիկ, բայց կորցրինք մի ամբողջ միաբանություն։

Եթե այսօր կամ էգուց կզարկե Տաճկաստանի հայոց վերածնության ժամը, եթե Հայաստանին կարվի որևիցե ինքնավարություն, այդ բախտին պետք է միաձակակից լինեն Թուրքիայի բոլոր հայերն առանց կրոնի

խորութեան։ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մեջ հայերին խոստացված բարիքները միայն լուսաւորչականներին չեն պատկանում, այլ վերաբերում են և կաթոլիկ, և բողոքական հայերին։ Այդ իսկ պատճառով կրոնի խնդիրները մի կողմ դրած, այժմ Թուրքիայի հայերն ազգայնութեան դրոշը պարզելով, պետք է ձեռք ձեռքի տված աշխատին տնօրինել իրանց ապագա բախտը։ Եվ հայութեան գործը Թուրքիայում այն ժամանակ միայն հաջողված կարելի է համարել, երբ ազգի անջատված մասները կմիանան, կկազմեն մի ամբողջութիւն, ոչ թե կրոնական կապերով, այլ ազգայնական անունով։ Բավական է, որքան հայերն իրանց ճանաչել տվին որպես կրոնական համայնք, այսուհետև թող աշխատեն ճանաչվել որպես ազգ։

ՀԱՅԵՐԸ ՔԱԲՈՒԼԻ ՄԵՋ*

Անգլիայում հրատարակվող մի օրագրի մեջ տպվեցավ մի հոդված վերոհիշյալ վերնագրով, որի հեղինակն է Հնդկաստանի Փեշավուր քաղաքում բնակվող մատեր Հյուզը։ Այդ պարոնը մի քանի բարեկամների հետ Փեշավուր քաղաքում ավղանների համար հիմնած ուներ մի դպրոց, և ինքը մի քանի ամիս առաջ անձամբ գնացած էր Քաբուլ։ Քաբուլի մեջ նրա գտած հայերը մեր ամենին համար հետաքրքրական լինելով, հարկավոր ենք համարում մի քանի բաղվածքներ անել նրա հոդվածից։

Պատվելի Ճանապարհորդի հաղորդած տեղեկությունների համեմատ, սկսյալ Նադիր շահի օրերից (1738 ամ.), Քաբուլում կա հայոց մի եկեղեցի, որ գտնվում է Բալահիսար կոչված ամրոցի մեջ, ուր սպանվեցավ Անգլիայի դեսպանը։ Ժոզեֆ Վուլֆ անունով անգլիացի քարոզիչը 1832 թվին հիշյալ եկեղեցում քարոզ կարդաց, իսկ 1879 թվին Փեշավուր քաղաքի աղգով ավղան հովիվը՝ պատվելի Իման Շահ, նույն եկեղեցում քարոզ կարդաց։

Քաբուլ տարվեցան հայերը Նադիր Շահի ձեռքով. ո՞րտեղից, պարոն հոդվածագիրը չէ հիշում, միայն ասում է, որ սկզբում նրանց թիվը հասնում էր 200 ընտանիքի, իսկ այժմ մնացել են 4 այր, 8 կին և 2 երեխաներ, ընդամենը՝ 14 հոգի։ Դրանք երկար տարիներ քահանա չեն ունեցել և մկրտվում էին անգլիական եկեղեցու ներկայացուցիչների ձեռքով, որոնք ժամանակ առ ժամանակ այնտեղ այցելություն էին դործում։ Երկու

---

* *Այդ հոդվածը տպվեցավ Կ. Պոլսի հայերեն տառերով և թուրքերեն լեզվով հրատարակվող «Մանդումեի էֆքյար» լրագրի մեջ։*

հոգի մկրտվեցան 1839 թվին, 3 հոգի՝ 1842-ին, իսկ շատերը դիմում էին Հնդկաստանի Փեշավուր քաղաքի միսիոնարներից մկրտություն ընդունելու համար։

1842 թ։ին Քաբուլի մեջ հայոց եկեղեցուն այցելող մատեր Ալլեն անունով անգլիացի քարոզիչը նույնպես մկրտեց մի քանի հայերի, որոնցից մեկը՝ Սարգիս Խըդր-խան, դեռ կենդանի է։ Այդ այցելության մասին քարոզիչը հետևյալն է գրում.

«1842 ամ. օգոստոսի 1-ին Շեհրև գնացի։ Իմ բարեկամ մատեր Ֆիկոթից լսած էր, որ նա Քաբուլի մեջ հայազգի քրիստոնյաներ է գտել և 1839 թվին նրանցից երկուսին մկրտել է, ես էլ սկսեցի նրանց որոնել։ Շատերից հարցնելով, հայերին գտա Բալահիսար ամրոցում, դեպի ձեւալեբաղի դուռը տանող մի նեղ փողոցի մեջ։ Նրանց տները գտնվում էին փողոցի հարավային կողմում։ Այս փողոցից դուրս գալով, անցա մի բաղաղխանայի մեջ, որի շուրջը խանութներ և մեջը հայերի արհեստի և պարագամունքների վերաբերյալ գործիքներ ու պարագայք կային։ Այստեղից մի նեղ դռնով մտա եկեղեցու բակը։ Եկեղեցին փոքր-ինչ մութն էր, բայց հատակը խալիներով պատած և խիստ մաքուր պահված տեսա։ Եկեղեցու սեղանը գտնվում էր արևելյան կողմում, որ նայում էր դեպի արևմուտք, սեղանի վրա դրած էր մի հին պատկեր, որ Հիսուսի, Մարիամի և Հովսեփի նկարագիրն էր ներկայացնում։ Սեղանի վրա 6 աշտանակ, երկու խաչ և 2 Ավետարան կային։ Իսկ նրա հանդեպ կար մի դրքակալ, որի վրա դրած էր ժամագիրքը։ Մեզ եկեղեցին տանող հայերը պատմում էին, թե իրանց նախնիքը Քաբուլ բերված են եղել Նադիր-շահի ձեռքով, որոնց թիվը հասնում էր 200 ընտանիքի, իսկ այժմ մնացել է 14 ընտանիք միայն, որոնք հաշվում են 35 հոգի թե արական և թե իգական սեռից։ Այստեղի հայերի արհեստը Շիրազի գինի պատրաստել և արաղ քաշելն է։ Մեզ մոտ գտնվող հայերը հայտնում էին, թե ավղաններից խիստ հարստահարություններ և բռնաբարություններ են կրում։

Այդ հայերը հարստության տեր լինելը կամ չլինելը ինձ հայտնի չէ։ Նրանց թաղը մեկ աղքատ թաղի էր նմանում, բայց ինձ ման ածող կինը և աղամարդը բավական լավ էին հագնված։ Եթե դրանք հարստություն ունեն, բայց իրանց հարստությունը թաքցնելու շատ պատճառներ կային։ Այսպիսի խորին և խավար մի երկրում քրիստոնյաների մի փոքրիկ խումբ գտնելս մեծ ուրախություն ազդեց իմ մեջ։ Սրտումս աղոթեցի, որ ուրախությանս համեմատ, սուրբ հոգու շնորհիվ, այդ խումբը իր շրջապատի խավարը լուսավորելու համար մի պայծառ ճառագայթ դառնա։ Ինձ մոտ գտնվողները հասկանալով, որ ես քրիստոնյա մի եկե-

ղեցու ներկայացուցիչ եմ, նրանցից մի կին ոտներս ընկնելով, կամենում էր համբուրել։ Բայց ես թույլ չտվեցի, և երբ նրա լեզուն գիտենայի, Պետրոսի՝ Կուռնելիոսին ասածին պես, կասեի նրան. «Վեր կաց, ես ինքս էլ մարդ եմ»[1]։ Նրա հետ եղող Թիմուրի անունով տղամարդը, որ խոսում էր ալղաներեն, աջ ձեռքս բռնեց, նախ դեպի շրթունքները տարավ, համբուրեց, հետո ճակատի վրա դրեց։ Այդ պարոնը պատմում էր, 13 տարի է, որ իրանք քահանա չունեն, և ինքը անձամբ գնացած է եղել մի քահանա Հնդկաստանից հրավիրելու և Քարուլ բերելու, և քահանային մինչև Փեշավուր բերեց, բայց նա վախեցավ և ճանապարհից ետ դարձավ։

«Հոկտեմբերի 3-ին, հայերի մի քանի երեխաներ մկրտելու համար, անգլիացոց բանակից, մի հազարապետի և երեք հարյուրապետի հետ, ուղիղ քաղաքը (Քարուլ) գնացի։ Եկեղեցու մեջ բավական ժողովուրդ էր հավաքված, և սեղանի մոտ մի մեծ ամանով տաք ջուր էր դրած։ Հոգևոր խորհուրդը կատարելուց հետո իմ ընկերները ցանկացան տեսնել եկեղեցու պատկերները, խաչերը և այլ անոթները և հարցրին, արդյոք կարո՞ղ են տաճարը մտնել։ Նրանց պատասխանեցին՝ թե կարող են, եթե իրանց սրերը կարձակեն և ցած կդնեն։ Օֆիցերները իրանց սրերը արձակելով, հանձնեցին Թիմուրին պահելու, և իրանք տաճարի մեջ մտնելով, սկսեցին եկեղեցու սպասներին նայել։ Տեսնելով, թե ո՛ր աստիճան հարգանք և սեր ունեին այդ մարդիկը դեպի աստուծո տունը, ես շատ ուրախ եղա։ Եվ երբ հարցրի, թե Քարուլի մեջ այնքան բռնություն և հարստահարություններ կրելով, այլևս ինչո՞ւ են մնում այդ քաղաքում, նրանք ինձ պատասխանեցին. «Ա՛խ, մեր եկեղեցին ինչպե՞ս կարող ենք թողնել և գնալ»։ Մկրտության խորհուրդը կատարելուց հետո մեզ հրավիրեցին մի տուն, ուր հյուրասիրեցին մեզ թեյով և քաղցրավենիքով։ Այնտեղ ես տեսա Մարիամ և Սեկունդոս անունով երկու մանուկներին, որոնց 1839 թվին մկրտել էր մատեր Ֆիկոթը։ Թե այս մանուկները և թե նրանցից չափահասները գեղեցիկ դեմք և վայելուչ կազմվածք ունեին։ Դրանցից բաժանվելու րոպեում ես իմ մտքում ասում էի. «Մնացե՛ք բարյավ, Քրիստոսով սիրված բարեկամներ, մնացե՛ք բարյավ։ Եթե գտնվում են ձեր մեջ ապիտություն և մոլոր հավատքի նշույլներ անգամ, բայց ձեր սերը և պատիվը, որ քրիստոնեաբար ցույց եք տալիս օտարներին, և ձեր մաքրմությունը, որ ունեք դեպի քրիստոնյաների ներկայացուցիչները, և ձեր համակրությունը ու հարգանքը, որ ունեք դեպի աստուծո տունը և դեպի նրա առաքյալները, այդ բոլորը ձեր սիրտ ապացույցն է, որ ունեք

դեպի Հիսուս Քրիստոս։ Գուցե այս աշխարհում մյուս անգամ չհանդիպենք միմյանց, բայց հույս ունեմ, որ միրոջ առջև պիտի տեսնվենք։ Աղաչում եմ, որ հավատով և մկրտությունով մեզ իր հետ միացնող Հիսուս Քրիստոսը ձեզ ամրացնի և իր խաչի թշնամիների մեջ ձեզ օգնի և ազատություն շնորհի»։

Անցյալ աշնանը, երբ պատվելի Իման Շահը Քարուլ քաղաքը այցելեց, հայերից մեկը, քոլերայից բռնվելով, մեռավ։ Հանդուցյալը 14 տարեկան մի առողջ պատանի էր Աբդուլ-Մեսիհ անունով։ Պատվելի Հովիվը հիշյալ պատանու մասին գրում է. «Քարուլ հասած ժամանակս, այս պատանին մկրտվելու մեծ ցանկություն հայտնելով, նրան մի քանի ուրիշների հետ մկրտեցի։ Մկրտության շնորհը նրա վրա մեծ ազդեցություն գործեց։ Մկրտվելուց երկու շաբաթ հետո միրոջ մարմնի հետ հաղորդվելու ցանկություն հայտնեց. ինքը դեռ բավական մանուկ էր այսուամենայնիվ, հաղորդության խորհուրդը համառոտ կերպով բացատրելուց հետո, նրան մի քանի ուրիշների հետ հաղորդեցի։ Եկեղեցուց դուրս գալու ժամանակ նա ասաց. «Այժմ իմ փափագը կատարվեցավ. որովհետև համ մկրտվեցա, համ միրոջ ընթրիքին մասնակից եղա»։ Պատանին իր սրտում այն ատելիան հույս և հավատ էր զգում, որ հանդերձյալ կյանքի խոստումները ավելի երանություն էին պատճառում նրան։ Հանկարծ, նույն դիշերը իր տունը հասնելուց հետո, քոլերայից բռնվելով, մյուս օրը վախճանվեցավ»։

«Բալահիսարի հայոց եկեղեցին 36 ոտք երկարություն ունի, 15 ոտ. լայնություն. պատերի մեջ լուսամուտներ չունի, միայն առաստաղից բացված մի երդիկից լույս է առանում։ Բեմը ութ ոտք բարձրություն 5 ոտք լայնություն ունի։ Բեմի վրա դրած են երեք հատոր Նոր Կտակարան դեղեցիկ կազմով, մեռաքսյա թաշկինակների մեջ փաթաթած, որոնց ժողովուրդը մեծ հարգանքով է վերաբերվում։ Դասերի մեջտեղ կա մի դրքակալ, որի վրա դրած է ժամագիրքը, և ամեն օր նրանից կարդում են։ Երբեմն կարդացվում է անգլիական եկեղեցու պարսկերեն թարգմանված ժամագիրքը։ Քարուլի քրիստոնյա հայերը այս քաղաքը գալուց հետո, մինչև անցյալ օգոստոս ամիսը, ոչ մի անգամ իրանց եկեղեցում հաղորդության խորհուրդը կատարած չեն եղել։ Բայց յուրաքանչյուր տարի երկու անգամ, այսինքն՝ Քրիստոսի ծնունդի և հայտնության զատիկներին, ուտում էին մի տեսակ սուրբ հաց (նշմարք, որ ուղարկվում էր Երուսաղեմից)։ Հաղորդության համար պատրաստված անոթը (սկիհը), արծաթից շինված լինելով, ավազակների ձեռքը չընկնելու համար, զգուշությամբ պահվում է եկեղեցու պատի մեջ։ Անցյալ աշնանը, հաղորդու-

Բյան խորհուրդը կատարելու ժամանակ հայերը թույլ չավեցին պատվելի Իմամ Շահին հիշյալ անոթը գործ ածել, բայց եթե պատվելին այնտեղ մնալու և նրանց հովվելու խոսք տալու լիներ, պատրաստ էին սկիհը նրան հանձնել։

Հայերի գերեզմանատունը Բալահիսարից մոտավորապես մեկ մղոն հեռու էր։ Այդ գերեզմանատունը սկզբում մի պարտեզ է եղած և, հայերի պատմածին համեմատ, այնտեղ առաջուց մի քրիստոնյա նահատակ թաղված լինելու պատճառով հետո պարտեզը գերեզմանատուն դարձավ։ Գերեզմանատան տապանաքարերի ոմանց վրա տեսնվում է 1769 թվականը։ 1839—41-ին, երբ անգլիացիք տիրեցին Քաբուլ քաղաքը, այդ գերեզմանատան մեջ մի քանի անգլիացի օֆիցերներ թաղվեցան, բայց անգլիացիների այնտեղից հեռանալուց հետո ավազակները հարստությունն ըտնելու հույսով նրանց գերեզմանները բաց արին։

Քաբուլի մեջ գտնվող հայերը մի ժամանակ Ավղանիստանի կառավարության բարձր պաշտոնների գլուխը անցան, և շատերը պատերազմական բանակների զորապետներ եղած են։ Էմիր-Աշիմ խանը պսակվեցավ մի հայ աղջկա հետ, և այժմ Սամարկանտի մեջ ռուսաց բանակում հյուր եղող Սերգար-Իշայի խանը ծնված է նույն հայ տիկնոջից։ Իսկ այժմ Քաբուլի մեջ մեծ նշանակություն է ստացել տեղային հայերից մի բժիշկ, մի հայ ևս էմիրի տան անգլիական լեզվի վարժապետ է, որը ուսում և կրթություն է ստացել Փեշավուրի միսիոնարների դպրոցում»։

* * *

Կարդալով վերոհիշյալ տեղեկությունները Արևելքի խորքում կորած և սպառված հայոց մի գաղթականության մասին, ես ակամայից հիշում եմ մի խոսակցություն, որ շատ տարի առաջ ունեցա էջմիածնում մի բարձրաստիճան եկեղեցականի հետ։

— Սրբազան հայր, դուք ունե՞ք էջմիածնում աշխարհագրական որևիցե քարտեզ, որի վրա նշանակված լիներ, թե ո՞րտեղ են բնակվում հայերը։

— Մի այսպիսի քարտեզ,— պատասխանեց սրբազանը,— մինչև այսօր չէ հրատարակված, եթե ոչ, մենք ուրախությամբ կգնեինք։

— Այդ իրավ է, չէ հրատարակված, բայց բավական է գնել ամենահասարակ քարտեզներ և նրանց վրա կարմիր ասղանիշներով նշանակել, որտեղ որ հայեր կան։

— Այդ շատ դժվար է, որովհետև մեզ հայտնի չէ, թե Հայաստանից դուրս այլևս ո՞ր երկրներում հայեր են գտնվում։

— Ընդհանուր հայոց հովվապետը պետք է պետենա, թե իր հոտը որտեղ է գտնվում, որ նրա վրա խնամք տանելու դյուրություն ունենա։

— Մենք ըստ մեր կամաց հովվում ենք մեր հոտը, որ մեզ ավելի մոտ է, իսկ հեռավորների համար ինքը տերը հոգ կտանի։

— Բայց Հիսուս Քրիստոսը հովիվներին այսպես պատվիրեց. նա հրամայեց թողնել իննսունինը ոչխարները և գնալ մի հատ կորած ոչխարին որոնելու[2]։ Զանազան խուլ և անծանոթ երկրներում գտնվում են հայեր, դրանք ազգային ամբողջությունից բաժանված, հայրենի երկրից հեռացած, այլ խոսքով, հոտի ընդհանրությունից անջատված ոչխարներ են, պետք է այդ կորածներին որոնել, պետք է դրանց համար մտածել։

— Մարդիկ չունենք,— եղավ սրբազանի պատասխանը,— հովիվներ չունենք, որ Հիսուս Քրիստոսի ասածի համեմատ՝ իրանց անձը դնեին ոչխարների վրա։ Առաջարկեցեք մեր միաբանությունից, ումը որ կամենում եք, գնալ Հնդկաստան, գնալ Աֆրիկա, վերջապես մի հեռու երկիր, ուր որ հայեր կան, և կտանեք, ոչ ոք հանձն չի առնի։ Բայց ավելցեք նրանց Բևսարաբիայի, Շուշու կամ որևիցե մի ուրիշ վիճակ, իսկույն վազ կտան։ Այստեղ վայելչություններ, զվարճություններ և շահեր կան, իսկ հեռավոր երկրներում՝ դժվարություններ և վտանգ միայն։

— Այդ նրանից է ծագում, սրբազան հայր, որ մեր եկեղեցականներին չէ առաջնորդում որևիցե բարձր, վսեմ միտք, որևիցե իդեալական ձգտում, մեր եկեղեցականները միսիոնարի ոգի չունեն։ Նրանք զուրկ են քրիստոնեության գաղափարի տարածելու ներշնչություններից։ Նրանք ընդունակ չեն ոչ միայն հեթանոսներին դարձնելու դեպի մեր եկեղեցին, այլ պահպանելու նույնիսկ լուսավորչի զավակներին հայրենի դավանության մեջ։ Այս տեսակ հովիվների ձեռքի տակ հոտը հետզհետե նվազելով, վերջապես կսպառվի։

Կարդալով «Հայերը Քաբուլի մեջ» հոդվածը, ես ակամա հիշեցի այդ խոսակցությունը։ Մեկուկես դար առաջ Նադիր-շահը հայերից 200 ընտանիք տարել է Ավղանստանի մայրաքաղաքի մեջ. այդ մեկուկես դարվա ընթացքում մեր եկեղեցականները նրանց մասին ոչինչ տեղեկություն չեն ունեցել. նրանք մոռացված են եղել որպես ազգի ընդհանրությունից, նույնպես և ժողովրդի հովիվներից։ Բայց հավատարիմ իր հայրենի կրոնին, հայը շինել է այնտեղ իր համար եկեղեցի և, պատերազմելով բոլոր հալածանքների դեմ, սկսել է պաշտել իր կրոնը։ Անցել են հարյուրավոր տարիներ, տարանջատյալ ժողովրդի հետ եղած քահանաները

վախճանվել են, և նա մնացել է զուրկ բոլոր հոգևոր միխիթարություններից։ Մնվածները մնացել են առանց մկրտության, եկեղեցին մնացել է առանց ժամի և պատարագի, ննջեցյալները թաղվել են առանց քահանայի։ Այնուհետև հայոց եկեղեցականներից ոչ ոք ոտք չէ կոխել այդ երկրի վրա։

Անգլիացի միսիոնարը լսում է, որ Ավշանիստանի խավարի մեջ հայազգի քրիստոնյաներ են գտնվում։ Նա հայ եկեղեցականի նման անփույթ, անհոգ և երկչոտ չէ. նա որոնում է և գտնում է հայերին։ 200 ընտանիքից մնացել են մի քանի հոգի միայն. մկրտում է նրանց անկնունք մնացած որդիներին, հաղորդում է և հոգևորապես միխիթարում է նրանց։

Այժմ ի՞նչ ասենք այդ միսիոնարին։ Ասե՞նք, թե դու գնա հեթանոսներին քարոզիր, դու իրավունք չունես հայերի մեջ մտնելու, հայերը առանց քեզ էլ քրիստոնյա են, նրանք քրիստոնեությունը ընդունեցին այն ժամանակ, երբ ձեր հայրերը Անգլիայում վայրենիներ և կռապաշտներ էին։ Մենք այդ պատասխանը կտանք միսիոնարին, բայց անտեր և անհովիվ մնացած հայ ժողովուրդը դարձյալ նրան կընդունի իր մեջ, և մեր խոսքը կմնա «ձայն բարբառոյ յանապատի...»։

Հայ ժողովուրդը սիրում է իր եկեղեցին, նա հավատարիմ էր մնացել հայրենի ավանդություններին, նա երկար սպասեց իր հովիվներին, երբ տեսավ, որ նրանք իր վրա ուշադրություն չեն դարձնում, որ նրանք իր հոգևոր պահանջներին բավականություն չեն տալիս, ստիպված եղավ ընդունել օտարներին։ Իսկ մենք, հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչներս, վրդովվում ենք այդ երևույթները տեսնելով։ Եվ երբ գտնվում է մեզանից մեկը, որ ավելի հեռատես է, որ ավելի սուր հայացքով քննում է կատարվող իրողությունները, որ աշխատում է կրոնապես բաժանված հայերին միացնել ազգային ամբողջության հետ, ասելով, թե հայ կաթոլիկն էլ, հայ բողոքականն էլ, հայ մահմեդականն էլ մեր եղբայրներն են, մենք աշխատում ենք մի հրեական մոլեռանդությամբ նրա ճակատը դրոշմել ուրացության կնիքով, ասելով. «Դու մեզանից ես եկեղեցու անմասնակցության դեմ, մենք ազգություն չունենք, մեր ազգությունը եկեղեցին է»։

Ո՞վ է ասում լուսավորչականին. դնա՛ կաթոլիկ դարձիր, գնա՛ բողոքական դարձիր, գնա՛ մահմեդական դարձիր։ Ո՞վ է քանդում լուսավորչական եկեղեցին։ Նա ինքն իրան մաշվում է, ժամանակն է մաշում նրան։ Ոչ մի հին շենք չէ կարող դիմանալ ժամանակների խստություններին, մանավանդ, երբ պահպանողներ և վերանորոգողներ չունի։

Մեր եկեղեցին բանդվում է եկեղեցականների անհոգությունից։ Դեր-

սիմի բազմաթիվ հայերը երկար ժամանակ անհովիվ մնալով, հետզհետե քուրդ դարձան։ Ո՞վ էր մեղավոր։ Իսկ Դերսիմը ոչ Հնդկաստանումն է գտնվում, ոչ Աֆրիկայում և ոչ էլ Ավղանիստանում։ Դերսիմը շատ հեռու չէ Աղթամարա և Սսի կաթողիկոսարաններից, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքարաններից։ Այժմ Դերսիմի մեջ բողոքականները մտնելով, սկսել են քրդացած հայերին Մեսրոպի տառերով Ավետարան կարդացնել, սկսել են մոռացված մայրենի լեզուն սովորացնել նրանց։ Ի՞նչ ասենք այդ քարոզիչներին. ասե՞նք, Ի՛նչ գործ գնացիք հեթանոսներին քարոզելու, գուք հայերի հետ գործ չունեք։

Մենք սովորություն ունենք հարկավորած ժամանակ (երբ կամենում ենք մեր իմաստասիրություններին մի խաբուսիկ ձև տալ), հիմնվել Եվրոպայի օրինակների վրա։ Եվրոպան շատ սխալներ է գործել իր քաղաքակրթության պատմության մեջ, և մենք խելացի կլինենք այն ժամանակ միայն, երբ Եվրոպայի սխալներից օգուտ կքաղենք և ոչ ինքներն կհետևենք նրանց։

Ինչո՞ւ ընդունենք (որպես ոմանք պնդում են), Ի՞նչ Ավետարանը պետք է քարոզել հեթանոսներին միայն և ոչ ի՞նչ այն ժողովուրդներին, որոնք վաղուց արդեն ընդունել են քրիստոնեությունը, այդ դեպքում մեզ համ Լութերի ռեֆորմացիան հարկավոր չէր լինի, որ հայտնվեցավ կաթոլիկ ժողովրդի մեջ, որի եկեղեցին հիմնված էր առաքյալների օրերից։ Բայց պետք է վերջին ատենի ազդա լինել և չհատկանալ, ի՞նչ Լութերի ռեֆորմացիան որքան առաջ տարավ Եվրոպայի քաղաքակրթությունը, ինչ բազմաթիվ զոհերի արյունով գնվեցավ։

Ամեն մի ազգի միության գործը անհնար կլինի, եթե նույն ազգության գոյությունը պայմանավորվում է միմիայն եկեղեցու մեջ, և եթե այդ եկեղեցուց դուրս գտնված ցեղակիցները համարվում են ազգային մարմնի ամբողջությունից կտրված անդամներ։ Հետու պետք չէ գնալ. մենք ունենք մեր աչքի առջև մի պարզ և ժամանակակից օրինակ. պանսլավիզմը ցանկացած հաջողությանը չհասավ, երբ Կաթոլիկի շղթան և Մոսկվայի ռուսոֆիլները սկսեցին պահանջել, ի՞նչ զանազան սլավոնական ցեղերին ռուսների հետ միացնելու նպատակին պետք է ծառայի օրթոդոքս եկեղեցին[3]։ Այդ պահանջը վիրավորեց մյուս սլավոնների կրոնական զգացմունքը, և պանսլավիզմը մնաց որպես մի երևակայական իդեա։

Դժբախտաբար մենք էլ ունենք մեր ազգումիլի կատոլիկները, որոնք լուսավորչական եկեղեցու մասին նույն ցնորքների մեջ են գտնվում։

Մենք մեզ իրավ չենք տա մեր կաթոլիկ, մեր բողոքական և մինչև անդամ մեր մահմեդական եղբայրների կրոնական համոզմունքներին

դիպչել, միայն կաշխատենք զարգացնել նրանց մեջ ազգայնության գաղափարը։ Մենք կցանկանանք, որ նրանք ունենան իրանց ինքնուրույն և ազատ եկեղեցիները, անկախ Հռոմի պրոպագանդայից և անկախ օտարազգի միսիոնարների և պաստորների ազդեցությունից։ Մենք կցանկանանք, որ նրանք հայոց լեզվով խոսեին, հայոց լեզվով կրթեին իրանց զավակներին և հայոց լեզվով աղոթեին։ Իսկ հալածե՞լ նրանց, հերետիկո՞ս համարել և այսպիսով ավելի զզվեցնել և բաժանել մեզանից, այդ հիմարությունները մենք չենք անի։ Մենք խորհուրդ կտանք մեր լրագրությանը և մանավանդ Կ. Պոլսի մամուլին՝ հետևել այդ տակտիկային։ Անցյալ սխալները պետք է ուղղել։ Այժմ մեզ հայ է պետք և մեր իդեալը պետք է լինի հայությունը։ Կրոնական համոզմունքները պետք է խոնարհվեն այդ զազափարի առջև...

Բայց զարմանալին այն է, որ դեռևս գտնվում են մեր մեջ բանուպտիծ չունեցող մարդիկ, որ աշխատում են հարուցանել կրոնական վիճաբանություններ, մի այնպիսի ժամանակ, երբ մեզ պետք են ավելի լուրջ և ավելի նպատակահարմար աշխատություններ։

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Մշակի» խմբագրատան մեջ ստացվեցան Կ. Պոլսից և մեր գավառական քաղաքներից բազմաթիվ նամակներ, որոնց մեջ ցանկություն են հայտնում, որ «Խենթը» առանձին գրքով հրատարակվի։ Որքան էլ թանկագին լիներ կատարել մեր ընթերցող հասարակության հարգելի բաղձանքը, այսուամենայնիվ, ցավելով պիտի ասեմ, ինձ անհնար է այդ պահանջին լրում տալ, որովհետև պակասում են՝ թե ժամանակ և թե նյութական միջոցներ տպագրության համար։

Ըստ մեծի մասին վեպերը սկզբում մաս-մաս տպվում են որևիցե ամսագրի կամ լրագրի մեջ, հետո լույս են ընծայվում առանձին գրքերով։ Բայց այս աշխատությունը հանձն են առնում ոչ թե հեղինակները, այլ մասնավոր անձեր, որպես են՝ հրատարակիչներ, գրավաճառներ կամ տպագրական ընկերություններ։ Իսկ մեզանում, որպես երևում է, ամեն ինչ պետք է հեղինակը անե, համ գրե, համ տպագրե, համ աշխատե վաճառել, որ իր ծախսը էլ ստանա։ Մեր աղքատ հեղինակներին որքա՞ն հնարավոր կլինի այդ, ինքնըստինքյան հասկանալի է։

Մինչև այսօր միայն մեկ Միանասյանց հայտնվեցավ, որ աշխատեց

ամփոփել մեր պարբերական հրատարակություններում ցրված բանաստեղծությունները մի գրքի մեջ[1]։ Արդարև, դովլևի աշխատություն։ Բայց նրանից հետո ոչ ոք չհայտնվեցավ, որ հավաքեր և առանձին գրքերով տպագրել տար մեր բնլևտրիստիկային վերաբերյալ աշխատությունները։ Դեռևս գանգատվում ենք, որ ընթերցանության գրքեր չունենք։

Ինը տարվա ընթացքում «Մշակի» մեջ տպվեցան զանազան մեծ և փոքր վեպեր, պատկերներ, միմուարներ, ճանապարհորդություններ և այլ, և այլ բանասիրական աշխատություններ, եթե այդ բոլորը դասավորվեր և առանձին գրքերով հրատարակվեր, անտարակույս, բազմաթիվ հատորներ լույս կտեսնեին։ Բայց ի՞նչ եղան. ատացան լրագրական համարները, կարդացին, առժամանակ հետաքրքրվեցան, հետո մի կողմ ձգեցին, և բոլորը մոռացվեցավ, բոլորը կորավ...

Ես ցողնում եմ բարեգործական կամ ժողովրդի մեջ ընթերցանություն, միտք և նոր գաղափարներ տարածելու նպատակը, բայց նույնիսկ վաճառականական կետից նայելով գործի վրա, գործ լավ շատ օգտավետ կլիներ մի այսպիսի ձեռնարկություն։ Սխալ է այն կարծիքը, թե մեզ մոտ գրքեր չեն վաճառվում, թե տպագրությունը մեզ մոտ վատ ապրանք չունի, գրքեր վաճառվում են, մանավանդ ընտիր բանաստեղծական աշխատությունները։

Իսկ ինչ որ վերաբերում է «Նեներին», եթե գնահատում են նրա ժամանակակից նշանակությունը, եթե ցանկանում են, որ այդ աշխատությունը, առանձին գրքի մեջ ամփոփվելով, ավելի տարածվեր և ավելի մատչելի լիներ մեր ընթերցող հասարակությանը, ես պատրաստ եմ տալ իմ համաձայնությունը և ընդունել ամենանպաստավոր պայմաններ առաջին տպագրության իրավունքի մասին, եթե որևիցե պարոն կցանկանար առնել տպագրությունը[2]։

Իսկ ես այս տարի պիտի զբաղվեմ «կայծերի» հրատարակությունով, որի համար արդեն ստորագրություն եմ բացել և սպասում եմ բաժանորդների թվի լրանալուն։

ՄԻՆՉԵՎ ԵՐԲ

Ժամանակը և ժամանակակից պահանջները հարուցանում են ժողովրդի գործիչների մեջ նոր մտածություններ, նոր գաղափարներ, որոնք առաջ են գալիս իրերի անհրաժեշտությունից և, ավելի ճիշտ ասած, ներ-

կայի ծնունդն են։ Նոր մտածողությունները, նոր գաղափարները կարող են խորթ, օտարոտի և մինչև անգամ վնասակար երևնալ այն անձանց, որոնք ժամանակի պահանջներին չեն հետևում, որոնք անշարժ մնում են հին նախապաշարմունքների վրա։

Ազգայնության գաղափարը վաղուց անծանոթ էր մեզ՝ հայերիս, դեռ ներկա դարուս երկրորդ կիսաբաժնի մեջ նա սկսեց արծարծվիլ մեր մտածողների գլխում, բայց այնքան աղոտ և այնքան խառնափնթոր կերպով, որ մի որոշ կերպարանք ստանալ չկարողացավ։ Ամենաջերմ և ամենաանկեղծ ազգասերները շփոթում էին ազգը կրոնի հետ և կրոնը՝ եկեղեցու հետ։ Եվ եկեղեցուց բաժանված անդամների վրա նայում էին որպես հեթանոսների վրա և նրանց այլևս հայ չէին համարում։ Հայեր համարվում էին նրանք միայն, որ պատկանում էին լուսավորչական եկեղեցուն։ Եվ այսպես, ազգությունը և եկեղեցին կազմում էին մի անբաժանելի միություն, որի անջատումը, նրանց կարծիքով, կարող էր պատճառել երկուսի էլ մահացությունը։

Բայց այդ դրությունը երկար չէր կարող պահպանվել. նա ոչ միայն անբնական էր, այլ հակառակում էր ազգերի առաջադիմության օրենքներին։ Անկարելի էր, որ հայ ազգը պատկաներ միայն մեկ եկեղեցուն։ Երկրագնդի վրա թե բաղաքակիրթ և թե վայրենի ազգերի մեջ չկա և երբեք չի եղել մի ազգություն, որ մեկ եկեղեցու պատկաներ։ Օտար բազմաթիվ օրինակների վրա ցույց տալու հարկ չկա, այսքանը միայն կասենք, որ հայ ազգը իր հեթանոսական դարերում ուներ զանազան կրոնական աղանդներ, բուն հայկական, ղրադաշտական, ասորական, հունական, հրեական և մինչև անգամ չինեական, և այդ բոլոր աղանդների խառնափնթորության մեջ ազգությունը դարձյալ չէր կորցնում իր ամբողջությունը, ավելի ուժ և զորություն ուներ։

Քրիստոնեությունը Հայաստանում մանելուց հետո պետք է բնականաբար միևնույն երևույթները կրկնվեին։ Մեր սուրբ Լուսավորիչ հոր հիմնած եկեղեցին չկարողացավ մնալ իր սկզբնական պարզության մեջ։ Դեռ երկար ժամանակ հեթանոսական կրոնի հետքերը մնացին Հայաստանում։ Այդ բավական չէ, նույնիսկ լուսավորչական եկեղեցին, կաթոլիկ և հունական եկեղեցիների ազդեցության ներքո, սկսեց փոքր առ փոքր կերպարանափոխվել, եթե ոչ ներքին դավանաբանական հիմունքների կողմից, գոնե արտաքին ձիսապաշտությունների կողմից։

Մինչև վերջին դարերում հայտնվեցան մեր մեջ կազմակերպված կաթոլիկ, բողոքական և հունադավան եկեղեցիներ։

Ի՞նչ պետք էր անել այդ վերջինների հետ։ Երկուսից մեկը, կամ

պետք էր պարզ ասել (որպես շատերը ասում են), թե մենք հայոց ազգությունը հիմնված ենք համարում միմիայն լուսավորչական եկեղեցու վրա, որովհետև դուք բաժանվեցաք այդ եկեղեցուց և մտաք կաթոլիկ, բողոքական և հունադավան եկեղեցիների դիրկը, ուրեմն դուք այլևս մեզանից չեք (այսինքն՝ հայ չեք), ըստ որում, մենք լուսավորչական եկեղեցուց դուրս հայություն չենք ճանաչում։ Եվ կամ պետք էր ասել, թեև դուք ընդունեցիք այս և այն եկեղեցիները, բայց մենք ձեր կրոնական համոզմունքներին չենք դիպչում, դուք դարձյալ մեր անբաժան եղբայրներն եք և մեր ազգի սիրելի անդամները։

«Մշակը» իր հրատարակության հենց առաջին տարիներից, մեր այլադավան եղբայրների վերաբերությամբ, ընդունել վերջին եղանակը։ Այդ, իհարկե, կվրդովեցներ շատերին, որոնք ավելի բարվոք էին համարում, որ հաղարավորները և բյուրավորները մեր ազգից կորչեին, քան թե լուսավորչական եկեղեցու մի աղյուսը իր տեղից խախտվեր։

Բայց հարցը շատ պարզ էր, թեև ոմանք չհասկանալով և ոմանք չարամտությամբ աշխատում էին և աշխատում են այլապես բացատրել։ Քարոզել այն միտքը, թե մեր կաթոլիկ, բողոքական, հունադավան և մինչև անգամ մահմեդական եղբայրները մեզ նման հայեր են, մեր մսից և մեր արյունից են և մեր ազգությանն են պատկանում, այդ չէ նշանակում ի վնաս լուսավորչական եկեղեցու գործել։ Լուսավորչական եկեղեցին մեզ համար նույնքան սուրբ է, որքան սուրբ են և մյուս եկեղեցիները իրանց պատկանող անդամների համար։ Մենք չենք կարող և մինչև անգամ իրավունք չունենք ասելու նրանց, թե փոխեցեք ձեր կրոնը, կրկին մտեք մեր եկեղեցին, այն ժամանակ միայն մենք եղբայրական ձեռք կմեկնենք ձեզ և կհամբուրվենք ձեզ հետ։ Դրանով մենք իրավունք կտանք նրանց նույնը պահանջել մեզանից։ Եվ այսպես ազգային միությունը երբեք չի կայանա։

Ո՞վ է հերքում այն փաստը, թե լուսավորչական եկեղեցին պատմական կապ ունի մեր ազգայնության հետ։ Ո՞վ է հերքում, որ այդ եկեղեցին շատ դեպքերում ազատել է մեր ազգությունը կորստից և շատ դեպքերում ևս վնասել է նրան։ Այսուամենայնիվ, մենք կպաշտանենք այդ եկեղեցին, և եթե նա դարերի ընթացքում սասցել է այս և այն խորթ ներմուծությունը, կաշխատանք ինքներս ուղղել, առանց թույլ տալու մի օտարի միջամտությունը։ Մենք մեր տունը մեր ձեռքով կնորոգենք, եթե հարկավոր կհամարվի։ Բայց միևնույն ժամանակ կպահպանենք կատարյալ ներողամտություն դեպի մեր այլադավան ազգայինները, և առանց վիրավորելու նրանց կրոնական զգացմունքը, կաշխատենք հասկացնել

նրանց, որ մենք միևնույն ազգի զավակներ ենք, որ մեր ընդհանուր շահերը պահանջում են ազգային սերտ միություն, և ամեն ինչ, որ հակառակ է այդ միությանը, պիղծ, վնասակար և աննկարելի է։

«Մշակը», խոսելով կրոնի մասին, միշտ ազգային կետից է նայել նրա վրա։ «Մշակը» կրոնափոխություն չէ քարոզում. ով որ այսպես է մտածում, նա կամ կույր է, կամ՝ խարդախությամբ լի չարամիտ։ Եվ եթե «Մշակը» իր էջերը բաց է արել Ամիրխանյանցի, Կիրակոսյանցի և Մարկոսյանցի առջև, այդ չէ նշանակում, թե նա դառնում է գործիք զանազան «пропорщиների» ձեռքում, որպես պնդում են ոմանք[1]։ Մի լրագիր, որ իրան նպատակ է դրել հաշտարար լինել ազգի անջատված, թշնամացած և խորթացած անդամների մեջ, նրա պարտքն է լսել և հրատարակել յուրաքանչյուրի խոսքը։ «Մշակի» մեջ կարող են գրել որպես լուսավորչական, այնպես էլ կաթոլիկ, բողոքական, մահմեդական և հունադավան հայերը, նա ազգային օրգան է և ոչ՝ եկեղեցական։

Մենք Ամիրխանյանցներին և դրանց նմաններին ազգի թշնամի չենք համարում, մենք ազգի թշնամի ենք համարում այն զզվելի հայերին, որ հայերեն չեն խոսում, որ հայերեն չեն կարդում, որ Հայաստանի վրա չեն մտածում և, միայն տարին մի քանի անգամ հայոց եկեղեցին մըտնելով, հայ քահանայի ձեռքից հաղորդություն են ընդունում և դրանով իրանց բոլոր պարտքը կատարած են համարում։ Մենք ազգի թշնամի ենք համարում այն կարճամիտ ազգասերներին, որ լուսավորչական եկեղեցուց դուրս հայ չեն ճանաչում։ Ի՞նչ կլիներ այդ վերջիններիի կարծիքով, եթե հայերի մեծ մասը մի ժամանակ բողոքական կդառնային, կամ մի ուրիշ կրոն կընդունեին, իսկ ազգի փոքրամասնությունը միայն կմնար հավատարիմ լուսավորչական եկեղեցուն, ուրեմն այդ փոքրամասնությո՞ւնը միայն պիտի կազմեր մեր ազգությունը։

Մեզ ասում են, թե հայը լեզու չունի, թե հայը հայրենիք չունի, թե նրա լեզուն, հայրենիքը և ազգային բոլոր առանձնությունները բովանդակվում են միմիայն եկեղեցու մեջ, խլեցիր նրանից եկեղեցին, փոխեցիր նրա կրոնը, ազգությունը այն ժամանակ կքայքայվի։ Մի այսպիսի կարծիք կարող են ունենալ հայ ազգի մասին ագահները միայն, որոնք խիստ նեղ և սահմանափակ հայացքով են նայում ազգային խնդրի վրա։

Եթե իսկապես հայը զրկված է իր ազգային լեզվից, զրկված է իր հայրենիքից, կորցրել է իր ցեղական առանձնահատկությունները և պահպանվում է միմիայն եկեղեցու գրկում, այն ժամանակ նրան ազգ պետք չէ համարել, այլ պետք է համարել մի կրոնական աղանդ, որ մի-

ած է նույնիսկ եկեղեցու մեջ, որի մեջ ապաստան է գտել մի այսպիսի ազգի համար չարչն աշխատել, չարժե մտածել անգամ, որովհետև նա կքայքայվի, կլուծվի և կանհետանա զանազան ազգությունների մեջ, որը իր պաշտպանության համար ուրիշ հիմք չունի, բացի կրոնը։

Բայց մեր հավատը մեծ է հայ ազգության վրա, մենք հավատում ենք, որ նա ունի հարուստ կլասիկական և կենդանի, նոր գրականական լեզու. մենք հավատում ենք, որ նա ունի իր պատմական հայրենիքը և տակավին բնակվում է իր հայրերի հողի վրա. մենք հավատում ենք, որ նա ունի իր որոշ ցեղական հատկությունները, որ դարերի ընթացքում չեն փոխվել, և վերջապես, մենք հավատում ենք, որ նա ունի իր հատուկ ազգային եկեղեցին՝ լեզու, նայրենիք, եկեղեցի, ցեղական առանձնահատկություններ, ահա այն գլխավոր հիմունքները, որոնցով, հավատացած ենք, կպահպանվի մեր ազգությունը։ Չարիավոր են և ուրիշ մի քանի պայմաններ, այդ, իհարկե, մեզանից ամեն մեկը հասկանում է, դրանց մասին ոչ կարող ենք և ոչ պետք ենք համարում խոսել։

«Մշակը» «Տարեական մտքեր» վերնագրով առաջնորդող հոդվածների մեջ արդեն բացատրեց այն հարցերը, թե մի ազգի պահպանության համար ինչ դեր են խաղում կրոնը, լեզուն և հայրենիքը, և թե դրանցից յուրաքանչյուրը որքան և ինչ չափով են նպաստում ազգի գոյության պահպանվելուն, երբ պահպանվելու հանգամանքների պատճառով մինը կամ մյուսը փոփոխության են ենթարկվում։ Մենք այսքանը բավական համարելով, հարկավոր ենք տեսնում կրկին վերադառնալ այն հարցին, թե ի՞նչ շահ ունենք անդադար կրկնելով միևնույն հին երգը, թե լուսավորչական եկեղեցին մեր ազգի միակ հիմքն է, թե այդ եկեղեցուց դուրս ոչ փրկություն կա և ոչ՝ հայություն, թե բողոքական, կաթոլիկ, հունադավան և մահմեդական հայերը, եթե կամենում են մեզ հետ միանալ, պետք է կրկին վերադառնան դեպի իրենց մայրենի եկեղեցին, և այլ այսպիսի ցնդաբանություններ։

Այսպես կարող են մտածել այն մարդիկը միայն, որոնք չգիտեն մեր ազգի այժմյան վիճակը և տեղյակ չեն նրա ժամանակակից պահանջներին։ Եվ յավալին այն է, որ այսպես երկար ժամանակ մտածում էին մեր ազգի առաջնորդները։ Պետք էր մի զորեղ դեպք, մի պատմական շրջափելի անհրաժեշտություն, որ դուրս բերեր մեր ժողովրդի առաջնորդներին հիշյալ մոլորություններից, ցույց տալ, թե որքան անհիմն են նրանք։ Բարեբախտաբար այդ դեպքը տեղի ունեցավ։ Քրիստոնյանների ազատության անունով ծագեց ռուս-թուրքական պատերազմը, և հայերը կարմիր արյան փոխարեն սև մելանը գործածելով, ստացան Սան-Ստեֆա-

նոյի 16 և Բեռլինի ամագաժողովի 61-րդ հոդվածները։ Վերջին հոդվածի տրամադրության համեմատ, Թուրքիան պարտավորվում էր վերանորոգություններ մացնել իր պետության «հայերով» բնակեցրած գավառների մեջ։ Այստեղից ինքնըստինքյան ծագեց մի հարց. ովքե՞ր են հայերը։

Մեր հին ազգասերների կարծիքով, հայեր միայն լուսավորչականներն էին, և Թուրքիան բարվոք համարեց այսպես ընդունել, հաշվեց լուսավորչականների թիվը, այն ևս փոքրացնելով, և պատասխանեց Եվրոպային, թե իմ պետության մեջ հայերը այնքան չնչին փոքրամասնություն են կազմում, որ չարժե մինչև անգամ նրանց համար առանձին վերանորոգություններ անել։ Պատասխանը, կրոնական կետից, մասամբ ճիշտ էր, և մեզանից ոչ ոք իրավունք չունի մեղադրել Թուրքիային, երբ նա օգուտ է քաղում մեր տգիտությունից, երբ նա կրկնում է միևնույնը, ինչ որ մենք ենք ասում, թե բացի լուսավորչականներից ուրիշ հայ չկա։

«Մշակը» նախատեսում էր այդ բոլորը, նա գիտեր, թե որպիսի կորըստաբեր հետևանքներ կարող է ունենալ Հայաստանի վերանորոգության մասին, երբ մենք կշարունակենք անդադար կրկնել, թե լուսավորչական եկեղեցուց դուրս հայություն չկա։ Եվ այդ իսկ պատճառով «Մշակը» բարձրացրեց կրոնի և ազգության խնդիրը։

Բեռլինի ամագաժողովի 61-րդ հոդվածը տվեց հայերին երկու արտոնություն՝ առաջինը, որ Հայաստանում պետք է վերանորոգություններ մացվեին, երկրորդ, որ հայերը կրոնական համայնքից Եվրոպայի առջև ճանաչվեցան որպես ազգ։

Ի՞նչ է նշանակում՝ կրոնական համայնքից ճանաչվեցան որպես ազգ։ Այդ նշանակում է՝ մի ցեղական ամբողջություն, որի մեջ կան և կարող են լինել զանազան կրոններ և եկեղեցիներ։

Այդ կոչմանը արժանի լինելու համար պետք էր ցույց տալ, որ դա իսկապես այդպես է, որ մենք ազգ ենք, և այդ ազգի մեջ կան զանազան եկեղեցիներ՝ լուսավորչական, բողոքական, կաթոլիկ, հունադավան և մահմեդական։ Եվ այդ կազմակերպությունից ինքնըստինքյան պետք է առաջ գար կրոնական ներողամտությունը և համոզմունքի ազատությունը, որպեսզի ազգային միության գործը կատարյալ լիներ։

«Մշակը», որ շատ առաջ քարոզում էր այդ ցանկալի միությունը, Բեռլինի դաշնագրից հետո ավելի եռանդոտ սկսեց արծարծել նրան, որովհետև այդ միության մեջ էր տեսնում ազգի փրկությունը և Հայաստանի բախտն ու ապագան։ Բայց գտնվեցան մարդիկ, որ սկսեցին հակառակը քարոզել կամ մեր բռնած ընթացքը ծուռ ու սխալ կերպով բացատրել։ Մենք այսպիսիների հետ գործ չունենք, մեր գործը մեր ազգի

բարեմիտների հետ է։ Մենք անգադար պիտի մտրակենք այն չարագործներին, թե կաթոլիկ լիներին, թե լուսավորչական, թե բողոքական և թե մահմեդական, որոնք կրոնի պատճառով մեր ազգի միության գործի մեջ երկպառակություն են ձգում։ Եվ մենք սիրով կհամբուրենք մեր այն եղբայրներին, առանց դիպչելու նրանց կրոնին, որոնք միայն հայության և Հայաստանի անունով կգործեն և հայ ազգի շահերը կպաշտպանեն։

Մենք մեկ ազգի որդիներ ենք, մենք միևնույն ընտանիքի զավակներն ենք։ Կրոնը, որ մի ժամանակ բաժանել էր մեզ, այժմ ազգի և հայրենիքի սերը պետք է միացնե։ Կաթոլիկությունը, բողոքականությունը և մինչև անգամ մահմեդականությունը չեն զրկում հային հայ լինելուց, և ոչ էլ լուսավորչականությունը մեզ իրավունք է տալիս հայ կոչվել։ Մենք հայ էինք, երբ հեթանոս էինք, և հայ կմնանք, երբ հազար անգամ կփոխենք մեր կրոնը։ Մեր ազգությունը չի կորչի, երբ պահպանված կլինեն այդ բոլոր պայմանները, ինչ որ պետք են, ինչ որ անհրաժեշտ են մի ազգի գոյության համար։

ՆՊԱՍՏՆՈՒ

Երբ Կ. Պոլսում կազմվեցան զանազան ընկերություններ՝ «Աբարատյան», «Կիլիկյան», «Դպրոցասիրաց արևելյան», Հայաստանում ուսում տարածելու նպատակով, մեղանից շատերը սկսեցին մտածել՝ ինչ հարկավոր են այսքան ընկերություններ, մի՞թե նպատակը միևնույն չէ, ավելի լավ չէ՞ր լինի, եթե բոլորը միանային, կազմեին մի ամբողջ և ավելի հիմնավոր ընկերություն։

Մտածությունները իրավացի էին։ Ընկերությունները կազմված էին բարեդործական հիմունքների վրա և պիտի պահպանվեին նվիրատվություններով։ Բայց մեր հասարակությունը չգիտեր՝ ո՞ր մեկին նվիրել յուր հանգանակությունները։ Բոլորը միևնույն ասպարեզում, բոլորը միևնույն նպատակի համար էին գործում։

Կ. Պոլսի հայերը, որոնք ավելի մեծ հույսեր, ավելի մեծ ակնկալություններ ունեին մեզանից, ռուսահայերից, իհարկե նյութական օժանդակությունների կողմից, ընկերությունների միացնելու հարցի մեջ ոչ միայն մեզ հետ համաձայն գտնվեցան, այլ լիապես կատարեցին մեր փափագը. մամուլի մեջ հրատարակվեցավ, որ ընկերությունները արդեն միացել են՝ ընդունելով «Միացյալ ընկերություն» անունը։

Այժմ ի՞նչ է մնում մեզ անել։

Այժմ մնում է մեզ կրկնապատկել մեր բարեգործական եռանդը և մեր նյութական զոհաբերություններով միացյալ ընկերություններին ուժ և խրախուսս տալ։

Մեզանից ամեն մեկը համոզված է, որ ուսումը, կրթությունը ամենագլխավոր միջոցներն են, որոնք, թեև փոքր-ինչ ուշ, թեև դանդաղ կերպով, բայց վերջապես կհարթեն ավելի հիմնավոր ճանապարհ տաճկահայերի առջև մի ապագա բարօրության հասնելու համար։ Մենք համոզված ենք, որ Թուրքիայի հայը դպրոցի մեջ պիտի գտնե յուր վերածնությունը, յուր բախտը։ Եվ այն բարիքները, որոնցից մինչև այսօր զրկել էր հային բարբարոս Թուրքիան, այն բարիքները, որ եվրոպական դիպլոմատիան այնքան ժլատությամբ է բաժանում հայերին, հայի որդիները պիտի ստանան դպրոցական վարժապետի ձեռքից։

Բայց Թուրքիայի հայը աղքատ է։ Թուրքաց հարստահարությունը այն աստիճան քամել է նրա նյութական զորությունը, որ նա հազիվ թե կարող է յուր դպրոցները կանոնավոր, նպատակահարմար կերպով առաջ տանել, եթե դրսից օգնություն չլինի։

Ռուսաստանի հայերը այժմ պետք է կատարեն տաճկահայերի վերաբերությամբ նույնը, ինչ որ մի ժամանակ իրանց ոսկիներով անում էին Հնդկաստանի հայերը ամբողջ ազգի համար։ Ռուսաստանի հայերը, բնակվելով մի բարեկարգ պետության հովանավորության ներքո, նյութապես ավելի բարեբախտ վիճակի մեջ են գտնվում, քան իրանց տաճկահպատակ եղբայրները։

Հնդկաստանի հայերը թողեցին ազգի համար խոշոր կտակներ, նրանց փողերով զանազան երկրներում հիմնվեցան բազմաթիվ դպրոցներ։ Ցանկալի կլիներ, որ մենք հետևեինք նրանց օրինակին։ Բայց մեր պահանջը համեստ է, մենք խոշոր կտակներ չենք պահանջում։

Մեզանից ոչ մեկի տնտեսության մեջ մի զգալի փոփոխություն չէր լինի, եթե մեզ վրա բարոյական պարտք կդնենք յուրաքանչյուր տարի շարունակ կերպով, մեր կարողության համեմատ, մի քանի ռուբլի նվիրել Կ. Պոլսի միացյալ ընկերություններին։ Այդ ռուբլիներից կկազմվեին նշանավոր գումարներ։

Ռուսաստանի հայերը «Արարատյան» ընկերության վերաբերությամբ ցույց տվեցին իրանց բարեգործական եռանդը, թե որքան համակրում են կրթության գործին տաճկական Հայաստանում։ Հույս ունինք, որ այժմ

ավելի ևս պիտի բազմապատկեն իրանց գոհաբերությունները, երբ մեծ-նալով ընկերություններից կազմվել է մի հոյակապ, հիմնավոր ընկերու-թյուն։

ՓԱԽՈՒՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հետագիրը մեզ լուր բերնից, թե Բ. Դուռը յուր պատասխանի մեջ, որ հաղորդած է Կ. Պոլսի եվրոպական դեսպաններին, խոստացավ համոզել ալբանացիներին՝ ղիջանել Դուչինիոն Չհանոգորիային, և պարտավոր-վում է վճռել հունաց հարցը երեք ամսվա մեջ, իսկ հայոց հարցը՝ չորս ամսվա մեջ։

Այդ դարձյալ նույն մթին, երկդիմի և նենգավոր պատասխաններից մեկն է, որով Բ. Դուռը սովորություն ունի միշտ խուսք տալ Եվրոպայի պահանջումների ուղղակի կատարելուց, փախուստի ճանապարհ դտնել և նոր դժվարություններ, նոր արգելքներ սարքելու համար ժամանակ վատնակել։

Բ. Դուռը պարտավորվում է հայոց խնդիրը չորս ամսվա մեջ վճռել, բայց ի՞նչ կհրամայ, ի՞նչ ռեֆորմներ պիտի մտցնե Հայաստանում, այդ մասին լուռ է։

Ի նկատի ունենալով Բուրքաց Հայաստանում կատարվող այժմյան անցքերը, շատ հիշատ է նախազուշակել, թե Բ. Դուռը այս չորս ամսվա ընթացքում ինչ կերպով կվճռե հայկական խնդիրը։

Նա կուղարկե Հայաստան, ինչպես առաջ, կոմիսարներ, կուղարկե Հորարդ փաշայի նման բարեկարգիչներ[1], ցույց կուտա, թե աշխատում է վերանորոգություններ մտցնել, բայց միևնույն ժամանակ քրդերին, Բուր-քերին և ամբողջ մահմեդական ամբոխը զորացնի կերպով կրկին հա-յերի դեմ և, փոխանակ բարեկարգությունների, արյուն, կոտորած, ավեր-մունք կտարածե Հայաստանում։ Չորս ամիսը ժամանակ է այդ բոլորը կատարելու համար։

Սև երբ Հայաստանը կծխի արյան և կրակի մեջ, նա կպատասխանե Եվրոպային. իմ ժողովուրդը դեռ պատրաստ չէ. ես ամեն միջոցներ գործ դրեցի. Հայաստանում վերանորոգություններ մտցնելը առայժմ անհնա-րին է, որովհետև մահմեդական ամբոխի կրոնական զգացմունքը, Բուր-քերի ազգային հպարտությունը վիրավորվում է հայերին առանձնաշնոր-հումներ տալու պատճառով։

խոստանալ և չկատարել, այդ Թուրքիայի վաղեմի սովորությունն է։ Իսկ բարիք խոստանալ և չարը գործադրել, այդ պահանջում է նրա այժմյան ամենախարդախ քաղաքականությունը։

Հասկանալի է, որ Բ. Դուբը ամեն տեսակ հնարներ գործ պիտի դնե, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը գործադրության չդառնե Հայաստանում։ Նա շատ լավ հասկանում է, թե այդ հոդվածը ինչ ապագա է պատրաստում հայերի համար։

Հայաստան բառը խիստ անախորժ տպավորություն է գործում Թուրքիոյի ջղերի վրա։ Բ. Դուբը բացարձակ կերպով հայտնեց հայոց պատրիարքին, թե յուր պետության մեջ Հայաստան անունով երկիր չէ ճանաչում. նա հայտնեց Կ. Պոլսի եվրոպական դեսպաններին, թե Հայաստանում բացառապես վերանորոգություններ մտցնելու դիտավորություն չունի, այլ պիտի մտցնե իսկական վերանորոգություններ ամբողջ Փոքր Ասիայի մեջ։ Ի՞նչ են նշանակում այդ խոսքերը։ Շատ պարզ է, որ Բ. Դուբը չէ ցանկանում Հայաստանը դարձնել մի առանձնական երկիր, որպեսզի այդ երկիրը, իբրև մի որոշ մարմին չառանձնանա և չանջատվի յուր պետությունից։ Բալկանյան ներակղզու իշխանությունների կազմվելու պատմությունը, իհարկե, Թուրքիան շուտով մոռանալ չէր կարող։

Չնայելով, որ հայերի նպատակը խիստ համեստ է, չնայելով, որ հայերը ցանկանում են ունենալ մի բարվոք կառավարություն միայն և ազատվել մահմեդականների մինչև այսօր գործ դրած դարավոր բարբարոսություններից, այսուամենայնիվ, Բ. Դուբը չէ կամենում կատարել նրանց իրավացի պահանջումները, որ ամեն մի փոքրիշատե բարեկարգ պետության քաղաքային իրավունք ունի վայելելու։

Այդ բավական չէ, այժմ Թուրքիան աշխատում է հայկական խնդիրը խեղդելու նպատակով ոչնչացնել հայ տարրը։ Աշխատում է լցնել Հայաստանը քրդերով, չերքեզներով, լազերով, աջարացիներով և այդ բոլոր ցեղերի բարբարոսությունը գրգռել հայերի դեմ։ Բուսաց նոր նվաճած երկրներից գաղթող բազմաթիվ մահմեդականներին նա զետեղից Հայաստանի մեջ։ Իսկ եվրոպական Թուրքիայից դուրս եկող գաղթականների խումբերը նույնպես ուղարկում է դեպի Հայաստան։

Նպատակը հայտնի է, և չորս ամիսը բավական ձիգ ժամանակ է նրան իրագործելու համար...

Նշանները արդեն երևում են վատպուրականի մեջ, որ Հայաստանի սիրտն է, նկատվում է քրդերի կատաղի հուզմունք, այրվում են գյուղեր, սպանվում են մարդիկ, և ասպատակությունը օրըստօրե ավելի ընդարձակվում է, ավելի սպառնական ձև է առնում։ Տարոնի նահանգում

նույնպես արյուն է հոսում։ Սովուղ-Բուլախի դավառում Շեյխ Իբադուլլահը, յուր գլխին հավաքած ավելի քան տասն հազար ավազակներ, վտանգ է սպառնում Աստպատականի հայերին։ Հնթարիի կողմերում Բահրի բեկը, յուր ցեղի գլուխն անցած, ավերմունքներ է գործում։ Հին-Բայազետի կողմերում Հեյդարանլի քրդերը կողոպտում են հայերին։ Ամեն տեղ նկատվում են միևնույն չարագործությունները, որոնց կեղևի տակ թաքնված է Թուրք կառավարության պաշտոնատարների նենգավոր ձեռքը։ Իսկ Կ. Պոլսի մահմեդական մամուլը այդ բոլոր բարբարոսությունները բացատրում է քրդական միության անունով...

Ինչպե՞ս պիտի վարվեն Թուրքիայի հայերը վերոհիշյալ բոլոր չարագործությունների դեմ։

Թուրքիայի հայերը մինչև այսօր իրենց բոլոր հույսը դրել էին դիվանագիտական բանակցությունների վրա, ամեն ինչ սպասում էին Եվրոպայից և իրենց փրկությունը միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մեջ էին որոնում։ Բայց Անգլիայի պետական մարդիկներից մեկը, մխատր Բրայսը, այս օրերում (1880 թվին) խիստ ճիշտ կերպով նկատեց Կ. Պոլսի հայերին. «Աշխատեցեք չձանձրացնել Եվրոպային»[2]։

Մենք կավելացնենք հայասեր անգլիացու խոսքերին, ոչ թե Եվրոպան, այլ ասվածի ինքը չի օգնի Թուրքիայի հայերին, եթե նրանք ինքները իրենց օգնելու մեջ ծույլ կլինին...

Թուրքիան խոստանում է վճռել հայոց հարցը չորս ամսվա մեջ։ Գուցե վճիռը նրանով կվերջանա, որ չորս ամսից հետո էլ Հայաստանում հայ չի մնա...

ՔՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Բեռլինի վերջին կոնգրեսի վճիռները Հունաստանի և Չեռնոգորիայի վերաբերությամբ կոզմնակի կերպով մերժելու և Եվրոպական պետությունների պահանջումների առջև դժվարություններ հարուցանելու համար Բ. Դուռը ստեղծեց ալբանական միությունը։ Իսկ Հայկական խնդիրը յուր խանձարուրի մեջ խեղդելու համար նա աշխատում է այժմ կազմել մի բռդական միություն։

Դեռ մի քանի ամիս առաջ Կ. Պոլսի Թուրք մամուլը անամոթաբար սկսեց հռչակել քուրդ տարրի քաղաքակրթական հրաշալիքները, որոնցով հայկական լեռների այդ վայրենի զազանները աշխատում էր ներ-

կայացնել Եվրոպայի աչքում ոչ միայն իբրև արևելքի, այլև իբրև արևմուտքի լուսավորիչներ։ Մի այդպիսի երեխայական աչքակապությունը Թուրք մամուլի կողմից, սաոր է ամեն կրիտիկայից, այն մամուլի, որ մի ժամանակ պահանջում էր քրդերի խոպան բնաջինջ անելը, նրանց ոչընչացնելը, որպես անպետք և վնասակար մի տարր, որպեսզի Թուրքիայի արևելյան սահմանապուխենների աղատավեին այդ ավազակների անընդհատ ասպատակություններից։

Սուլթան Աբդուլ Մեջիդը[1] հայտնվելուցավ որպես մի սպառնալի գործիք քրդերին ոչնչացնելու համար, և նրանց անշուշտ վիճակված կլիներ ննիչներների կատարածը, եթե այն ժամանակվա երևելի դիպլոմատ և առաջին վեզիր Ալի փաշան չմեղմեր սուլթանի բարկությունը։ Խորամանկ վեզիրը կարողացավ համոզել խալիֆների դյուրահավատ գահակալին, հայտնելով այն միտքը, թե քուրդերը, թեև ավազակ, բայց միևնույն ժամանակ պատրաստի զինվորներ են Թուրքիայի համար, և կառավարությունը պետք է փոքրիշատե զիջանի նրանց անկարգություններին, որպեսզի նրանք միջոցներ ունենային ապրելու և հարկավորած ժամանակ ծառայեին որպես քաջ պատերազմողներ։

Իսկ այդ զիջողությունը խիստ բանկ էր նստում կառավարությանը։ Ամայացնելով սահմանագլխի ամբողջ գավառները, վերջին չքավորության մեջ ձգելով ժողովրդին, խանգարելով երկրագործությունը և վաճառականությունը, քրդերը ոչ միայն իրանք հարկ չէին վճարում, բայց միևնույն ժամանակ գրկում էին տերության գանձարանը որևիցե եկամուտ ստանալու այն երկրներից, որ այդ վայրենիները դարձրել էին իրանց հափշտակությունների ասպարեզ։

Սուլթան Աբդուլ Ազիզի[2] կառավարությունը քրդերին զսպելու համար այն եզրակացության հասավ, թե պետք է նրանց զինաթափ անել, թե պետք է նրանց հեռացնել վրանաբնակ հովվի թափառաշրջիկ կյանքից և ընտելացնել երկրագործի հաստատաբնակ կյանքին։ Ամեն աշխատություններ ապարդյուն անցան, և քրդերը մնացին միշտ ասպատնդական հովիվներ և իրանց անասունների հոտերով ամառը թափառում են Հայաստանի հովատուն լեռների վրա, իսկ ձմեռը իջնում Տիգրիսի հովտի ջերմ տափարակների վրա։ Իսկ ինչ որ վերաբերում է նրանց զինաթափ անելուն, այդ նույնպես մնաց անկատար, չնայելով, որ Վանի փաշանից մեկը հնարեց մի ծիծաղելի ուղի, որով քրդերը պարտավորվում էին վճարել մի նշանակյալ հարկ, եթե կշարունակեին զինք կրել։

Այդ միջոցներում սկսվեցան կառավարության ճնշումները քուրդ

չնպատակների վրա։ Բագրեւան բնակին աքսորելը և նրա ազգատոհմի մեծ մասը սրից անցկացնելը պետք է համարել այն սաստիկ հարվածներից մեկը, որ Բուրբ կառավարությունը որևիցե ժամանակ հասցրել է քրդերին։ Դրանից հետո քուրդ ցեղապետները դարձան կառավարության ներկայացուցիչների ձեռքում մի տեսակ ապահովության աղբյուր։ Նրանց բանտարկում էին, տանջում, աքսորում, և այդ բոլորը կատարվում էր ոչ այնքան երկիրը խաղաղեցնելու նպատակով, որքան օգուտ էր բերում վաշանեերին, որոնք, կաշառքներ ընդունելով, կրկին բաց էին թողնում կալանավորին։ Կարգ և կանոն պահպանելու այդ ձևը առիթ էր տալիս քուրդ ավազակներին ավելի ևս առանդով հարստահարել իրանց հավաշակությունների մեջ՝ կապիտալ ձևոք բերելու համար, որպեսզի նրանով կարողանային ազատվել, ելնի մյուս անգամ պատահելի նրանց կալանավորված լինելու։

Այդ, քրդերի հանգստությամբ, անիրավացի ճնշումները, այդ անդադար հալածանքները սնուցին քրդերի մեջ մի սաստիկ թշնամություն դեպի Բուրբ կառավարությունը մասնավորապես և դեպի առհասարակ Բուրբերին ընդհանրապես։ Խանգարում էին նրանց սովորական կյանքի հանգիստը, զրկում էին նրանց ապրուստի միջոցներից՝ ավազակությունից, որ քրդերի ցեղային և ավանդական սովորությամբ համարվում է ոչ բոլորովին անբարոյական մի պարապմունք։

Այդ սանձությունը դեպի Բուրքերը առիթ տվեց քրդերին ավելի մոտենալ հայերին և ավելի մտերմանալ նրանց հետ։

Քրդերի ամբողջ ժողովուրդը, բաժանված լինելով բազմաթիվ տարբեր և միմյանց հետ թշնամի ցեղերի, անկարելի էր, որ նրանց մեջ կազմվեր միություն, որով կարողանային ընդդիմանալ կառավարության ճնշումներին։ Պատսպարված լինելով հայկական լեռների մեջ, նրանք իրանց վրեժխնդրությունը լրացնում էին նրանով, որ, կողոպտելով երկրի մի մասը, հեղձղձի նման անցնում էին մի ուրիշ երկիր, և տեղային վարչությունները իրանց անզոր ուժերով երբեք չէին կարողանում վերջ դնել քրդերի անընդհատ արշավանքներին։

Իսկ այդ ցեղերի մեջ կային և այնպիսիները, որոնք համեմատաբար ավելի հանգիստ էին բնավորությամբ, որոնք, որպես միամիտ հովիվներ, ապրում էին նահապետական պարզ կյանքով։ Այդ վերջիններիի ցեղապետները ոչ սակավ անգամ դիմում էին հայ էֆենդիների և հայոց հոգևոր առաջնորդների օգնությանը՝ Բուրք կառավարիչների կամայականությունից պաշտպանություն գտնելու համար։ Հայ էֆենդիները և հա-

յոց հոգևոր առաջնորդները, որոնք ավելի նշանակություն ունեին կառավարության աչքին, որպես երկրի գլխավոր և մեծամասնություն կազմող ազգաբնակության ներկայացուցիչներ, չէին խնայում իրանց պաշտպանությունը, թեև այդ պաշտպանությունը շատ հաճելի չէր կարող լինել հայ ժողովրդին, որ պատմական ատելություն ուներ դեպի բրդերի առհասարակ բոլոր ցեղերը։ Այդ էր պատճառը, որ Վանի առաջնորդ Պողոս վարդապետը հարուց յուր դեմ մի ահագին կուսակցություն այն պատճառով միայն, որ նա պաշտպանում էր բուրդ ցեղապետներին, նրանց հետ բարեկամություն էր պահպանում և պատահած ժամանակ յուր սեպհական ծախքերով աղատում էր նրանց բանտերից։ Շարունակ տասն տարի Վանի հայերը բաժանված էին երկու կուսակցության, որոնցից մեկն աշխատում էր պաշտոնից հեռացնել քրդասեր առաջնորդին, իսկ մյուսն աշխատում էր պահպանել նրան։ Այդ կռիվները երկար զբաղեցրին Կ. Պոլսի հայոց մամուլին և ոչ սակավ հոգսեր պատճառեցին պատրիարքարանին։

Հայ առաջնորդների և հայ էֆենդիների՝ քրդերի խաղաղասեր ցեղերին պաշտպանելը մի ուրիշ նպատակ չուներ, բացի նրանից, որ վաճառականները այդ ցեղերի հետ առևտրական հարաբերություններ ունեին, մատակարարում էին նրանց կենսական անհրաժեշտ պիտույքներ և փոխարենն ստանում էին նրանց հովվական արդյունաբերությունը, որպես էին՝ յուղ, պանիր, բուրդ և անասուններ։ Շատ պարզ է, որ քրդերի կողոպտվելը թուրք կառավարության պաշտոնատարներից վնասում էր հայ վաճառականների, հայ կապիտալիստների շահերին, որովհետև քրդերը միշտ նրանց փողի պարտականություն ունեին։

Այդ հարաբերություններն ստեղծեցին հայերի և քրդերի մի քանի ցեղերի մեջ սերտ հավատարմություն, որ ավելի բարեկամական կերպարանք էր ստանում, որքան թուրքերը նեղացնում էին նրանց։ Բայց կային հայերին և թշնամի ցեղեր։ Այս վերջիններս նույնքան թշնամի էին հայերի հետ, որքան իրանց հարազատ ազգակիցների հետ։ Սակավ չէր պատահում, որ քրդի մի ցեղ հարձակվում էր մյուսի վրա և կողոպտում էր նրան. և այսպիսով կռիվը, կոտորածը, անհաշտությունը նրանց մեջ մնում էր որպես ժառանգություն և անցնում էր սերունդից սերունդ։

Այդ կռիվների մեջ խառնվում էին և հայերը։ Ազբակա, Շատախ, Բուլանըխ, Մոկաց երկրի և Սասունի հայերը ունեին իրանց դաշնակից բուրդ ցեղեր, որոնց հետ միացած շատ անգամ կռվում էին ընդհանուր թշնամու դեմ։ Ոչ մահմեդական, այլ «հզրդի» աղանդին պատկանող քըր-

դերը, միշտ հալածված լինելով իրենց մահմեդական ցեղակիցներից, հայերի հետ պահպանում էին բարեկամական հարաբերություններ։ Հայերն այն աստիճան հավատարմություն ունեին դեպի այդ ցեղը, որ իրանց անասունները հանձնում էին դրանց հովիվներին պահելու, հայերի տան սպասավորները, աղախինները, երկրագործական մշակները մեծ մասամբ եզդիներ էին։ Դրանք կատարում էին հայերի մի քանի կրոնական արարողություններ, պահում էին ս. Սարգսի, ս. Գևորգի պատերը, զոհ էին մատուցանում հայոց նշանավոր ուխտատեղիներում, և ս. Գրիգոր Լուսավորչին և Դավիթ մարգարեին համարում էին Աստուծո ընտրյալների ամենագլխավորը։ Եզդիները համարյա բոլորը գիտեին հայերեն խոսել, և մեր վարդապետներից մեկը միայն (որ հայ ծղերից ծաղրական մտքով սառացավ «հրաշագործ» ասիղոսը) մտածեց եզդիների մեջ տարածել լուսավորչական կրոնը և գրագիտություն հայոց այբբենարանով։

Քրդերի և հայերի հարաբերությունները այդ դրության մեջ էին մինչև վերջին ռուս-թուրքական պատերազմի ծագելը։

Պատերազմի ժամանակ թուրքաց կառավարությունը, նրան բոլորովին կրոնական բնավորություն տալով, շեյխերի, մուֆթիների և զաքիների ձեռքով կարողացավ վառել քրդերի ֆանատիկոսությունը։ Եվ այն բոլոր քուրդ հրոսակները, որ հազարներով դիմում էին Տեր-Ղուկասովի գունդերի դեմ, բոլորը կռվում էին նրանց հոգևորականների առաջնորդությամբ, որպիսիներն էին Շեյխ Ջելալեդդինը և Շեյխ Իբադուլլահը։

Թեև պատերազմի ժամանակ քուրդ հրոսակները մի նշանավոր օգուտ չկարողացան տալ, թեև նրանք կողոպտում էին և ավերակ էին դարձնում բուն թուրքաց երկրները, որոնք դեռ զրավված չէին ռուսներից, այնուամենայնիվ այդ բարբարոսությունները դարձրին քրդերի վրա անգլիական ագենտների ուշադրությունը, որոնք Հայաստանում տարածված էին թուրքաց բանակների մեջ։ Անգլիացիք գտան Հայաստանում երկու զլխավոր ցեղեր, որոնցից մեկը՝ քրդերը, ատում էին «գյավուրներին» և խառնվեցան թուրքաց զորքերի հետ, իսկ մյուսը՝ հայերը, համակրում էին «գյավուրներին» և ամեն հնարքներ գործ էին դնում հեշտացնելու ռուսաց հաղթությունները։ Քրդերի հակակրությունը դեպի ռուսները և հայերի համակրությունը, այդ երկու հակառակ արտահայտությունները բավական էին մի սխալ գաղափար տալու անգլիացիներին, հորինելու այն

պլանը, որ նրանք նպատակ ունեին կազմել Հայաստանի վերաբերությամբ։

Բայց անգլիացիք չուզեցին մտածել, որ եթե Թուրքաց հայերը համակրությամբ էին վերաբերվում դեպի ռուսները, այդ ուներ յուր բնական պատճառները։ Նրանք տեսնում էին իրանց ազգակիցներին ռուսական Հայաստանում ավելի բարեբախտ վիճակի մեջ, մինչդեռ իրանք օրըստօրե մաշվում և ոչնչանում էին մի անկարդ և նենգամիտ կառավարության բարբարոսությունից։ Եթե այդ կառավարությունը փոխվեր դեպի լավը, անտարակույս, հայերը կհաշտվեին նրա հետ։

Բայց հայերի վիճակը շատ չէր հետաքրքրում անգլիացիներին, նրանց մի ուրիշ բան էր հարկավոր։ Նրանց հարկավոր էր մի զորավոր պատնեշ, որ կանգնեցնեին ռուսների առջև, փակեին նրանց ապագա աշխարհակալությունների ճանապարհը դեպի Հայաստան, թույլ չտալով նրանց մոտենալ Եփրատի հովտին, որով իրանց Հնդկաստանի շահերը պահպանած էին համարում։ Եվ այդ պատնեշը, անգլիացիների կարծիքով, կարելի էր կառուցանել միմիայն քրդերից, որովհետև հայերին հավատալ և հայերի վրա հույս դնել նրանք չէին կարող, մանավանդ որ քրդերին ավելի ընդունակ էին գտնում իրանց նպատակների համար. քրդերը իրանց ձեռքում զենք ունեին, իսկ հայերը՝ ոչ։

Այդ էր պատճառը, որ երբ պատերազմի ժամանակ զանազան հայկական քաղաքներում նշանակվեցան անգլիական կոնսուլներ, Բիկոնսֆիլդի[3] մինիստրության և նրա Կ. Պոլսի ներկայացուցչի՝ Լեարդի առաջին հոգսը եղավ Հայաստանը Քրդստան անունով մկրտել և Իրդական միության սկիզբը դնել։

Պատերազմից հետո անգլիական կոնսուլներն սկսեցին առանձին ուշադրություն դարձնել քուրդ տարրերի վրա, երևակայական միությունը նրանց մեջ կազմելու մտքով։ Սկսեցին նրանց առաջ քաշել, հայերին հետ մղել, սկսեցին նրանց ցեղապետների և շեյխերի հետ բարեկամություն հաստատել և ամեն միջոցներ գործ դնել, որ քրդերի անջատված և միմյանց հետ թշնամական հարաբերություն ունեցող ցեղերի ընդհանուր ուժերը միացնեն մի ամբողջության մեջ։ Դա ոչ միայն դժվարին, այլև անհնարին էր։ Դարերով կազմված ժառանգական անհաշտությունը քրդերի հարյուրավոր ցեղերի մեջ չէր կարելի անգլիական քաղաքագիտության հրաշքով միանգամից անհետացնել, մանավանդ որ վայրենի քուրդը քաղաքացիական նրբության հետ շուտով ընտելանալ չէր կարող։

Այդ բոլոր ջանքերի հետևանքն այն եղավ, որ քրդերը, տեսնելով, որ իրանց վրա ուշադրություն են դարձնում, ավելի երես առան, ավելի հանդուգն դարձան և հենց այն ժամանակ, երբ ռուսաց բանակը կանգնած էր Սան-Ստեֆանոյի մեջ, Խնուսի կողմերում քրդերն սկսեցին կոտորել հայերին, իսկ Աղբակա Բաշկալեի կողմերում Շեյխ Իբադուլլահը ոչնչացրեց ավելի քան հիսուն հայոց գյուղեր և արժանացավ Վանի անգլիական կոնսուլի սիրալիր այցելությանը։

Բիկոնսֆիլդի մինիստրության ընկնելուց հետո հիշյալ երևակայական պատնեշը, այդ արհեստական խարխուլ շենքն ինքն իրան քայքայվեցավ։ Քրդական միության գաղափարը օդի մեջ ցնդվեցավ, բայց Քրդըստան անունը մնաց. անպլիացիք չկարողացան իրանց թքածը հետ լիզել։

Երբ Բևրլինի վերջին կոնգրեսի սեղանի վրա դրվեցան Հունաստանի և Չևռնոգորիայի խնդիրները, և երբ Կ. Պոլսի Եվրոպական դեսպանները ներկայացրին Բ. Դռանը իրանց միաբան գրությունը Հայաստանի վերանորոգությունների մասին, այն ժամանակ Թուրքաց կառավարությունը ակամայից հիշեց Քրդական միությունը, որ Բիկոնսֆիլդի մինիստրության ծնունդն էր։ Ասում ենք ակամայից, որովհետև Թուրքաց կառավարությունը շատ հաճելի չէր կարող լինել այդ միությունը, որի բաժանման մասին ինքը շատ տարիներով աշխատած էր, արհեստական կերպով անհաշտություն սերմանելով քուրդ ցեղերի մեջ, որպեսզի նրանց միաբանությունը խանգարի, նրանց ուժերը թուլացնի և այդպիսով հպատակ և հարկատու ժողովուրդ դարձնի։

Բայց պետք էր հաշտվել հանգամանքների հետ, քաղաքականությունն այդ պահանջում էր. պետք էր Եվրոպային մի խրտվիլակ (пугало) ցույց տալ։

Այդ ժամանակ, որպես սկզբում հիշեցինք, Թուրք մամուլը մի կողմից սկսեց վառել քրդերի խավար ֆանատիկոսությունը, մյուս կողմից հռչակել նրանց քաղաքակրթական արժանավորությունները, նրանց գրականությունը, դպրոցները, արհեստը և այլն, որոնք բոլորը միայն «Հակիկաթի» և «Վակիթի» երևակայության մեջ գոյություն ունեին։ Թուրք մամուլն սկսեց նաև դատապարտել «վայրենի» հայերին, որոնք «բարբարոսաբար» հարստահարում էին «խնդճ» քրդերին, այլ խոսքով, սկսեց բողոքել գառների դեմ, որ գիշատում էին գայլերին...

Դեռ Բ. Դուռը չէր աված դեսպանների միաբան գրության պատասխանը Հայաստանի վերանորոգությունների մասին, հանկարծ Կ. Պոլ-

սում հայտնվեցան քուրդ պատվիրակներ, իբր Շեյխ Իբադուլլահի* կողմից ուղարկված (բայց իսկապես Թուրքաց մայրաքաղաքի մեջ սարքված), որոնք ներկայացնելով Աբեդին փաշային, պահանջում էին քրդերի և Քրդստանի (անունը փոխած Հայաստանի) համար ինքնավարություն:

Ի՞նչ էր նշանակում այդ աչքակապությունը:

Հարցը շատ պարզ էր: Խոսքը Հայաստանի (Թուրքերի հայացքով՝ Քրդստանի) ինքնավարության և նրա վերանորոգությունների վրա էր: Եթե պետք էր տալ այդ երկրին ինքնավարություն, ինչո՞ւ չտալ քրդերի անունով, որոնք այդ երկրի տերն էին, որոնք այդ երկրի նախկին բնիկներն էին և որոնք իրենց կուլտուրայով բարձր էին մյուս բոլոր ազգաբնակությունններից, տուավելապես հայերից...

Եվրոպական դեսպանները, իհարկե, ուշադրություն չդարձրին Աբեդին փաշայի այդ ֆոկուսների վրա, և քուրդ պատգամավորությունը ոչինչ հետևանքի չհասավ:

Դրանից հետո ալբանական միության հեղինակը՝ Աբեդին փաշան, սկսեց Լոդական միության վրա երազել: Այդ միջոցին Թուրք մամուլը, հետևաբար, յուր խոսքը փոխել սկսեց: Այժմ քրդերին մի կուլտուրական, զարգացած, խաղաղասեր և բարոյական ժողովուրդ ներկայացնելը շատ ձեռնտու չէր կարող լինել: Նույնպես ձեռնտու չէր ասել, թե քրդերն այն աստիճան բարի, առաքինի և խելոք են, որ հարստահարվում են «վայրենի» հայերից: Պետք էր ներկայացնել նրանց որպես անգութ գազաններ, որպես բարբարոս ֆանատիկոսներ, որոնք պատրաստ են մի րոպեում ոչնչացնել բոլոր հայերին, եթե նրանց ինքնավարության վրա խոսք կլիներ:

Այդ բոլորի մեջ այն միտքը կար, որ Եվրոպային ցույց տային, թե Բ. Դուռը հակառակ չէ Հայաստանում վերանորոգություններ մտցնելու առաջարկությանը, և նա ինքը շատ է ցանկանում կատարել այդ, բայց

---

* Շեյխ Իբադուլլահը, Թուրքիայի քրդերի այդ կեղծ ներկայացուցիչը, իսկապես պարսից հպատակ մի քուրդ ցեղի շեյխն է, այսինքն՝ մոլլան կամ հոգևորականը: Նա ինքը և յուր ցեղը բնակվում են պարսից՝ երբեմն Ուլնիի, երբեմն Թար-գավառի և երբեմն Մար-գավառի կողմերում: Ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ Բայազետի վրա հարձակվող քուրդ հրոսակներից մեկի առաջնորդն էր նա: Այստեղ նշանակություն ստացավ և Թուրքաց կառավարության ուշադրությունը դարձրեց իր վրա: Այն ժամանակ, երբ Կ. Պոլսում հայտնվեցան իբր նրա կողմից պատվիրակներ, նա Պարսկաստանում էր և գուցե ամենևին տեղեկություն չուներ, որ յուր անունով բանակցություններ են լինում Բ. Դռան հետ: «Մշակի» № 167-ում տեսնում ենք, որ Շեյխ Իբադուլլահը Պարսկաստանի Սովուղ-Բուլաղ գավառումն է սկսել իր անկարգությունները:

նա ունի յուր առջև մի մեծ դժվարություն, և այդ դժվարությունը կայանում է քրդերի և առհասարակ մահմեդական ամբոխի մոլեռանդության մեջ, որոնց կրոնին և սովորություններին հակառակ է ամեն մի վերանորոգություն։ Կամենում էին ցույց տալ, որ եթե կառավարությունը մահմեդական ժողովրդի կամքին հակառակ գնար, կարող էր պատճառ տալ մի մեծ կատորածի քրիստոնեից դեմ, որի համար Բ. Դուռը դժվարանում էր իրան պատասխանատու համարել։

Թե որքան խաբեական էին այդ ենթադրությունները, կարող է հասկանալ ամեն մի մարդ, որ փոքրիշատե տեղեկություն ունի ասիական Թուրքիայի դրության վրա։ Մահմեդականներն այդտեղ նույնքան ճընշված են, նույնքան հարստահարված անկարդ կառավարությունից, որքան քրիստոնյաները։ Մահմեդականներն ավելի ևս ցանկանում են մի բարվոք կառավարություն, և դրան ապացույց կարող է լինել դեռ չզբաղված Մունթենֆիկ աթաբների ապստամբությունը, Դողան-դաղլիների ապստամբությունը և այն վերանորոգությունները, որ պահանջում էր Միհրդատ փաշան Սիրիայի համար, և որ համառությամբ մերժվեցավ Բ. Դռնից։

Մահմեդական մոլեռանդությունը մի խրտվիլակ է, որով Բ. Դուռն աշխատում է միշտ վախեցնել Եվրոպային։ Այնքան խոսվում է Հայաստանի վերանորոգությունների, Հայաստանի ինքնավարության մասին, այնքան բացատրություններ են տրվում Բ. Դռան կողմից, բայց որքան հայկական լեռների գայլերը տեղեկություն ունին այդ բոլոր բանակցությունների մասին, նույնքան տեղեկություն ունի քուրդ ժողովուրդը։ Այդ բոլորը խոսվում, շինվում, սարքվում են Կ. Պոլսում։ Քուրդին ինչո՞վ կարող են հետաքրքրել Հայաստանի ինքնավարությունը կամ այնտեղ մտցնելիք վերանորոգությունները։ Նա ոչ լրագիր է կարդում և ոչ գիտե, թե ինչ է կատարվում յուր բնակած լեռների մյուս կողմում։

Այսուամենայնիվ Բ. Դռանը նպաստավոր էր ցույց տալ մի իրական միություն, եթե նա գոյություն չուներ, պետք էր հայտնել, թե կարող է կազմվել, որպես այդ ենթադրում է «Օսմանլի» լրագիրը։

Արդյոք կարո՞ղ է կազմվել. ահա այդ հարցը պարզելու համար մենք հարկավոր ենք համարում մի փոքրիկ գաղափար տալ, թե ինչ տեսակ ժողովուրդ է քուրդը։

Նախնական ժողովուրդներից, որոնք մնացել են արևելքում, չկա մեկը, որ քրդերի նման պահպանած լինի կենցաղավարության այն ձևվերը, որով ապրում էին հովիվներն իրանց նահապետական դարերում։ Եվ արևելքում չկա մի ժողովուրդ, որ քրդերի նման բաժանված լինի

այնքան բազմաթիվ ցեղերի։ Միայն վաղապատրաստական մեջ կարելի է հաշվել մինչև 120 միմյանցից տարբեր ցեղեր, որոնք զանազանվում են բարբառներով, սովորություններով և մինչև անգամ կրոնով։ Այդ ցեղերը ընդհանուր ոչինչ չունեն, նրանց չէ միացնում որևիցե հասարակական կապ, ամեն մի ցեղ առանձնացած է իր մեջ, ապրում է իր նեղ, սահմանափակ կյանքով։ Մի ցեղի շահերը շոշափելով մյուսին, պատճառ է տալիս նրանց մեջ անհաշտ թշնամության. ոխակալությունը, արյան վրեժխնդրությունն անցնում է նրանց մեջ սերնդից սերունդ։

Որպես խաշնարած և հովիվ ժողովուրդ, քրդերը մինչև այսօր չսովորեցին հաստատաբնակ կյանքին։ Նրանց հայրենիքն այնտեղ է, որտեղ նրանց անասունների համար արոտ կա։ Այդ պատճառով ամբողջ տարի գաղթում են մի երկրից դեպի մյուսը։ Գարունը, ամառը և աշունը անց են կացնում հայկական լեռների վրա, իսկ ձմեռը գաղթում են դեպի ավելի տաք երկրներ, որպիսի են Գարմհանի, Հեքիարիի գավառները, Տիգրիսի արևելյան ափունքի դաշտավայրերը, կամ Միջագետքի անապատի տափարակները։ Կան այնպիսի ցեղեր, որոնք ձմեռը մնում են Հայաստանում, տարածվում են հայոց գյուղերում և հայոց տների մեջ հյուրասիրություն են գտնում։ Բուն քրդական գյուղերը, որոնք խիստ սակավաթիվ են Հայաստանում, ներկայացնում են մի կարգ գետնափոր խրճիթներ և տարվա երեք եղանակներում դարատակ են լինում։ Միայն ձմեռը կարելի է նրանց մեջ բնակիչներ գտնել, որոնք իրանց անասունների հետ խլուրդների նման պատապարվում են մթին, գետնափոր խորշերում և անհամբերությամբ սպասում են գարնանը, որ դուրս գան իրանց որջերից։

Ամբողջ Հայաստանում չէ կարելի ցույց տալ մի քաղաք, որ գոնե մի հատ քուրդ բնակիչ ունենա։ Ի՞նչ պետք է անե քուրդը քաղաքում. նա արհեստ չգիտե, վաճառականությամբ չէ պարապում, խանութ չունի, ծառայության մեջ չէ մտնում։ Քուրդը հովիվ է, նրա բնակության տեղը՝ լեռները, ձորերը և անապատներն են։

Թուրք կառավարության բոլոր ջանքերը, քրդերին հաստատաբնակ անելու մասին, անցան ապարդյուն։ Թուրք կառավարությունը ամեն հնար գործ էր դնում, որ քրդերը կալվածատեր լինեին, պարապվեին երկրագործությամբ։ Բայց քուրդը հող չէ սիրում. հողը կարող է կապել նրան երկրի հետ, մինչդեռ նա ցանկանում է ազատ լինել, գաղթել և անդադար գաղթել։ Ավազակը մեկ տեղում երկար կանգնել չէ կարող։

Քրդերի գյուղերը, ինչպես ասացինք, Հայաստանում շատ փոքրաթիվ

են, այն ևս ձմեռվա բնակության համար։ Այդ գյուղերը, ինչպես որ շուտով հիմնում են նրանք, այնպես էլ շուտով քանդում են և թողնում են ավերակ։ Քրդերի գյուղերը և նրանց շարժական «օբաները» (табор) ոչնչով չեն զանազանվում միմյանցից։ Տեսնում ևս քրդերի մի խումբ յուր «աշալուղները» (տաղավարները) կազմում է մի ձորի մեջ, մնում է այնտեղ, որքան ժամանակ անասունների համար ճարակ կա, հենց որ վերջացավ, հավաքում է «աշալուղները» և տեղափոխվում է մի ուրիշ ձոր։ Այսպես էլ նա հիմնում է իր «ղշլաղները» (ձմեռանոց). փորում է գետինը, ծածկում է թուփով և մացառներով, և ահա նրա խրճիթը պատրաստ է. մյուս ձմեռ բուրդը թողնում է նրան և մի այլ տեղ է շինում նրա նման մի բան։

Քրդերը Հայաստանում (մասնավոր բացառությամբ) կալվածքներ, անշարժ սեպհականություն չունեն։ Եթե նրանք ունեն մի կտոր հող, տալիս են հայերին մշակելու համար։ Հանդամանքները երբեմն ստիպում են նրանց թողնել բնակած երկիրը. այնուհետև նրանք այնքան հեշտությամբ մոռանում են իրանց հողերը, որքան հեշտությամբ ձեռք էին բերել նրանց։

Այս բոլորից պարզ երևում է, որ քրդերը հայրենիք չունեն. նրանք ոչնչով կապված չեն Հայաստանի հետ։ Դրանով պետք է բացատրել քրդերի անդադար գաղթականությունը Պարսկաստանից դեպի Թուրքիա և Թուրքիայից դեպի Պարսկաստան։

Քրդերը երբեք չեն եղել բարեկամ Թուրքին և լինել ևս չեն կարող։ Վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ թեև ավարառության նպատակով քրդերից մի քանի խմբեր խառնվեցան Թուրքաց բաշիբոզուկների հետ, բայց հենց որ Թուրքերը հաղթվում էին, քրդերը առաջինն էին լինում, որ սկսում էին կողոպտել նրանց բանակը։ Թուրք զինվորների ամենաընտիր զենքերը, որ ստացել էին անգլիացոց շնորհիվ, մեծ բանակությամբ անցել էին քրդերի ձեռքը և վաճառվում էին Պարսկաստանում ամենաչնչին գներով։

Սխալ է այն կարծիքը, որ առհասարակ տարածված է քրդերի մասին, իբր թե նրանք մի քաջ ժողովուրդ են։ Քրդերը, ինչպես մյուս վայրենի ցեղերը, այն քաջությունը չունեն, ինչ որ հասկացվում է այդ բառի բուն նշանակությամբ։ Իսկապես քաջ լինելու համար պետք է գիտակցաբար ոգևորված լինել որևիցե գաղափարով։ Բայց բուրդը իդեալ չունի։ Ի՞նչը կարող է դրդել նրան արյուն թափելու, բացի հափշտակասիրությունից։ Իսկ մի այդպիսի քաջություն՝ գազանի քաջություն է, երբ որսի ետևից է ընկնում։ Մի անգամ հաղթվեցավ բուրդը, մի անգամ ջարդ կերավ, այնուհետև նա կորցնում է իր բոլոր արիությունը։

Այնքան դարերի ընթացքում քրդերը չկարողացան Հայաստանում մի հասարակություն ստեղծել, հաստատ հիմք դնել և իրանց շահերով կապված լինել այդ երկրի հետ։ Քրդերը Հայաստանի քաղաքացի չեն։ Նրանք նույնպիսի թափառական խմբեր են, որպես այդ երկրի բոշաները, զազաները, թուրքմենները, չերքեզները և այլ վայրենի ցեղերը, որոնք այսօր այստեղ են, իսկ մյուս օրը նրանց հետքն անգամ չէ երևում։ Այս բոլորից շատ պարզ է, թե որքան իրագործելի է այն գաղափարը, որ կոչվում է Ռուդական միություն։

Քրդական միություն Հայաստանում կազմել անկարելի է, բայց մի բան կարող է պատահել։ Թուրք կառավարության ներկայացուցիչները կարող են գրգռել քրդերի զանազան ցեղապետներին, այս և այն շեյխին, որ կողոպտեն հայոց գյուղերը։ Քրդերն այդ հանձն կառնեն, երբ նրանց թույլ է տրվում անպատիժ ավազակություն գործել։ Նրանք կսկսեն Հայաստանում կողոպտել, այրել, սպանել, և այդ բոլոր բարբարոսություններին Կ. Պոլսում կտան քաղաքական կերպարանք։ Դեռ անցյալ տարվա աշնան ժամանակը Շեյխ Իբադուլլահն անցնելով Պարսկաստանի սահմանից թուրքաց հողի վրա, Աղբակա և Բաշ-Կալեի գավառում կրկին ոչընչացրեց մինչև քսան հայոց գյուղեր։ Այդ մի պարզ ասպատակություն էր, որ համարյա ամեն տարի պատահում է Հայաստանում, բայց Կ. Պոլսում նրան տվեցին քաղաքական բնավորություն։

Նույնը կարող է պատահել և այսուհետև։ Թուրքաց կառավարության ներկայացուցիչները գաղտնի կերպով կգրգռեն քրդերին հայերի դեմ, կոտորած կսկսվի, իսկ Կ. Պոլսում թե Բ. Դուռը և թե թուրք մամուլը կսկսեն գոչել՝ ահա Ռուդական միությունը, տեսա՞ք, այդ բոլոր կոտորածը Հայաստանին ինքնավարություն և հայերի համար արտոնություններ պահանջելու համար է։ Մինչդեռ քրդերն ինքնավարության և Հայաստանի վերանորոգությունների մասին ոչինչ գաղափար չունեն և հասկանալ անգամ չեն կարող, թե ինչ բան է վերանորոգությունը։ Նրանք կկատարեն իրանց բարբարոսությունները, ինչպես միշտ, լոկ հափշտակասիրության նպատակով, բայց թուրքաց կառավարությունը կտա նրանց քաղաքական նպատակ։

Թե այսպես և թե այնպես, զանազանությունը մեծ չէ, քուրդն արդյոք դիտակցաբա՞ր կգործե, թե՞ մեքենաբար, բոլորը միևնույն հետևանքին կհասնեն, որ Հայաստանում կոտորած տեղի կունենա։ Փաստեր արդեն կան։ Դեռ երեկ կարդացինք մի հեռագիր, որով Վանի անգլիական կոնսուլը իմացում է տալիս Կ. Պոլիս, թե քրդերը ոչնչացրին հայոց 13 գյուղեր։

Հարցնում ենք, ի՞նչ պետք է անեն այդ դեպքում հայերը։ Մինչև հիմա, երբ քրդերը կողոպտում էին, այրում էին, սպանում էին, հայերը դիմում էին Թուրքաց կառավարությանը և դատաստան էին պահանջում։ Բայց հիմա, երբ կառավարության ներկայացուցիչներն իրանք են դրդում քրդերին բարբարոսություններ գործել, էլ ո՞ւմ կարող են դիմել հայերը։ Մեզ կպատասխանեն, թե Եվրոպային, որ հանձն է առել հսկել Հայաստանի բարեկարգությունների վրա։ Բայց մինչև Եվրոպան կբննի, կտեղեկանա Հայաստանում գործվածները, մինչև օգնության ձեռք կհասցնեն (կհասցնե՞ արդյոք), ինչպես ասում են՝ ջուրը կգա, ջրաղացը կտանի...

Հայերն այժմ լավ հասկացել են այդ։ Հասկացել են, որ հասել է մի վճռական րոպե, երբ կամ պետք է հանձն առնել սարկաբար ոչնչանալ, կամ եթե ցանկանում են իրանց գոյությունը պահպանել, հարկավոր է միացած ուժերով ընդդիմադրել քրդերի վայրենի հարձակումներին։ Ուրիշ ճար չկա։ Այդ իսկ պատճառով կազմվեցան հայերից զինյալ խմբեր, որոնց նպատակն է ոչ թե ապստամբություն, ոչ թե պատերազմել Թուրքաց կառավարության դեմ, այլ պատժել քրդերին, եթե նրանք կհանդգնեին խոսվել երկրի խաղաղությունը և կողոպտել անզեն հայ գյուղացիներին։ Այդ զինյալ խմբերը, որոնց թիվը փոքր չէ, շրջում են հայկական լեռների վրա, դիտում են շարժումը և ամեն տեղ վրեժխնդիր են լինում, երբ նկատում են քրդերի կողմից որևիցե անգթություն։

Հայոց զինյալ խմբերը մինչև անգամ պաշտպանում են քրդերի խաղաղասեր ցեղերին, երբ պատահում է այս վերջիններին ենթարկվել իրանց ցեղակիցների բարբարոսությանը։ Այդ իսկ պատճառով քրդերից շատերը միացած են հայերի հետ և ավելի բարվոք են համարում կռվել ընդհանուր թշնամու դեմ, քան թե վնասել հայերին, որոնցից միշտ օգնություն և հավատարմություն են վայելած։

Հայոց զինյալ խմբերի հետ միացել են երևելի Մար Շիմոնի քաջ ասորիները։ Մար Շիմոնը՝ Ջոլամերիկի լեռների այդ հզոր իշխանը և պատրիարքը, չէր կարող մոռանալ այն հին և սոսկալի հարվածքը, որ նախորդ Մար Շիմոնի* ժամանակ Բոտանի բռնակալ Բադիրխան բեկ անունով քուրդ ասպատակը հասցրեց պատրիարքի տանը իսպառ կողոպտելով նրան և կոտորելով մինչև տասն հազար ասորիներ։ Այն օրից քրդերի և Մար Շիմոնի ցեղի մեջ շարունակվում է մի անընդհատ թշնա-

---

* Նեստորական ասորիների պատրիարքական աթոռը ժառանգական է. բոլոր պատրիարքները հաջորդաբար ընտրվում են միևնույն տնից և կոչվում են Մար Շիմոն, որ նշանակում է Տեր Սիմոն։

մություն, որ շատ անգամ պատճառ էր տալիս արյունահեղ կռիվների։ Դեռ երկու տարի առաջ, երբ քրդերը ասպատակեցին Ջոլամերիկի մի քանի գյուղերը և արոտից ավարի առան պատրիարքի ջորիների երամակը, ասորիները այդ ժամանակ, սաստիկ ջարդ տալով քրդերին, հետ խլեցին կողոպուտը։ Ունենալով անդադար ընդհարումներ քրդերի հետ, Մար Շիմոնը հենց խաղաղության ժամանակներում միշտ պատրաստ ուներ մինչև 30—40 հազար զինյալ մարդիկ, իսկ այժմ ամբողջ Ջոլամերիկի թե հայերը և թե ասորիները զինված են։

Անցյալ ձմեռվա սովը, յուր սարսափելի հետևանքների հետ, միևնույն ժամանակ սաստիկ նպաստեց հայերի այժմյան շարժմանը։ Սովի ժամանակ հայերը պարզապես տեսան Թուրք պաշտոնատարների չարամտությունը, որոնք ամեն նենգավոր միջոց գործ էին դնում, որքան կարելի է բազմացնել հայ սովամահների թիվը։ Այդ ժամանակից հայերը ավելի խորին կերպով համոզվեցան, որ Թուրքիան նպատակ ունի իսպառ բնաջինջ անել հայկական տարրը։ Այդ ժամանակից ծագեց հայերի մեջ անձնապաշտպանության զգացմունքը։

Սովը ունեցավ իր և ուրիշ օգուտները. նա կապեց բարոյապես ամբողջ հայ ազգի սրտերը, որոնք աշխարհի ամենահեռավոր անկյուններից սկսեցին թափել այնտեղ իրանց առատ նվերները։ Սովը հաշտեցրեց հայերի հետ մի քանի քուրդ ցեղեր, որոնք հավասար օժանդակություն էին ստանում հայոց մանաւոզովներից, որոնք Հայաստանի բոլոր քաղաքներում կազմված էին սովատանջներին օգնելու նպատակով։ Վերջապես, սովի պատճառով նորից տարվա գարնանը մշակների ահագին բազմություն՝ Վանի, Մուշի, Բաղեշի և Հին Բայազետի կողմերից անցան դեպի Ռուսաստան և տարածվեցան Անդրկովկասի բոլոր գավառներում։ Այդ մշակները, այժմ լսելով Հայաստանի վատնգը, խմբերով վերադառնում են դեպի իրանց հայրենիքը։

Թուրքաց հայերի այժմյան շարժումն իրական փաստ է. նա գարևոր տխուր հալածանքների մի ազդու հետևանք է, նա պատմական անհրաժեշտությունների մի սոսկալի արտահայտություն է։ Թուրքիան կարող է զսպել այդ շարժումը նրանով միայն, երբ կատարի հայերի իրավացի պահանջը։ Բայց քանի որ հայկական խնդիրը մեռցնելու նպատակով Թուրքիան կաշխատի բղոական միություն հնարել, դրանով ավելի ևս կբորբոքի հայերի արդար կատաղությունը...

ՊԱՏԱՍԽԱՆ

Շատերը հարցնում են, թե ինչո՞ւ «Կայծերը» այս տարի չտպվեցավ կամ ես ե՞րբ դիտավորություն ունեմ ի լույս ածելու այդ աշխատությունը։

Իմ հայտարարության մեջ ես սկզբից հայտնած էի, որ «Կայծերի» տպագրությունը կսկսվի այն ժամանակ միայն, երբ այդ գրքի բաժանորդներից ստացված գումարը կծածկի տպագրության ծախքը։ Յավելով պետք է հայտնեմ, որ մինչև այսօր ստացված փողերը հազիվ թե բավական կլինին բոլոր ծախքերը լրացնելու։

Այսուամենայնիվ, չհամենալով իմ հարգելի բաժանորդների համբերությունը ձանձրացնել և նրանց երկար սպասել տալ, ես, որքան կարելի էր, աշխատեցի փութացնել տպագրությունը։ Եվ որովհետև, բացի նյութական պակասությունից, ինչ-ինչ պատճառներով Թիֆլիսում այդ գրքի տպագրությունը անհարմար համարվեցավ, իմ բարեկամները խորհուրդ տվեցին Մոսկվայում տպագրել տալ, ուր մամուլի պայմանները ավելի նպաստավոր դրության մեջ են։ Այդ մասին ես արդեն բանակցություն եմ սկսել Մոսկվայի համալսարանի ուսանող պ. Գաբրիել Միրզոյանցի հետ, խնդրելով, որ հանձն առնե տպագրության հոգսերը, և հուսով եմ, որ առաջիկա տարվա սկզբի ամիսներում գիրքը պատրաստ կլինի։

Հարկ եմ համարում խնդրել պատվելի պարոններին, որոնք զանազան քաղաքներում հանձն են առել «Կայծերի» համար բաժանորդներ դտնել, չուշացնեն ուղարկել իրանց մոտ ունեցած փողերը, որով ավելի ևս նպաստած կլինեն գրքի շուտ հրատարակությանը։

1 8 8 1

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Սկսյալ այն օրից, երբ բարձրացավ հայկական խնդիրը, սկսյալ այն օրից, երբ այդ խնդրի վերաբերությամբ 61-րդ հոդված շնորհվեցավ Թուրքիայի հայերին, Բ. Դուռը ամեն տեսակ նենգավոր միջոցներ գործ էր դնում, որպեսզի կարողանա եթե ոչ իսպառ մահացնել նրան, գոնե զանազան դժվարություններ հարուցանել Հայաստանի վերանորոգության գործի դեմ։ Բ. Դուռը մտածում էր, թե Հայաստանի վերանորոգության խնդիրը Կ. Պոլսի հայոց պատրիարքի և նրա մի քանի շրջապատողների երևակայության ծնունդ է միայն, և բնավ չէր կամենում ընդունել, որ դա հետևանք է հայ ժողովրդի դարևոր թշվառության։ Այդ մտքով նա կարծում էր, թե ոչնչացնելով պատրիարքի անձնավորությունը, հետևապես կարող կլինի սպանել և բուն խնդիրը։ Աբդին փաշայի վեզիրության ժամանակ նա փորձեց թունավորել պատրիարքին, իսկ այժմյան Սայիդ փաշայի վեզիրության օրերում կամենում էր աքսորել նրան Իկոնիա։

Եվ որովհետև հիշյալ խիստ միջոցները որևիցե գործնական արդյունք չունենալին հետո կարող էին եվրոպական պետությունների ուշադրությունը դարձնել Բ. Դռան չարամտության վրա, այդ պատճառով այժմ նա ձեռք է առել մի այլ, ավելի նուրբ, ավելի նպատակահարմար միջոց ոչ թե պատրիարքի անձնավորությունը ոչնչացնելու համար, այլ նրա բարձր նշանակությունը ստորացնելու և նրա իշխանությունը սահմանափակելու համար։ Այստեղից ծագեց Կիլիկիայի կաթողիկոսական հարցը, որով այժմ զբաղված են Կ. Պոլսի թե մամուլը և թե Ազգային ժողովը։

Նախքան խոսելը այդ հարցի բուն էության մասին, մենք հարկավոր ենք համարում փոքր-ինչ ծանոթացնել մեր ընթերցողներին, թե ինչ իրավասություն ունի Կ. Պոլսի հայոց պատրիարքը Թուրքիայի հայերի վերաբերությամբ, որով ավելի բացահայտ կերպով ցույց տված կլիներ Բ. Դռան հորինած այժմյան մեքենայությունները։

Սկսյալ Կ. Պոլսի առաջին տիրապետողի՝ սուլթան Մահմեդ Ֆաթիհի օրերից, մինչև ներկա սուլթանի ժամանակը, Կ. Պոլսի պատրիարքը միշտ ճանաչված է եղել որպես հոգևոր և աշխարհական ներկայացուցիչ Թուրքիայի ընդհանուր հայերի։ Նրա իշխանությունը տարածվում է և Եգիպտոսի, և (բացի Ռուսաստանից) Եվրոպայում բնակվող հայերի վրա։ Իր ավելի քան 400 տարվա գոյության ընթացքում Կ. Պոլսի պատրիարքարանը, զանազան ժամանակներում, նորանոր արտոնություններով հարզհատ ավելի հաստատվել է և ավելի ընդարձակել է իր իշխանությունը սուլթանների խաթթերով ու ֆիրմաններով, իսկ 1863 թվին, սուլթան Աբդուլ Ազիզի օրերում, Ազգային սահմանադրության Բ. Դռնից հաստատվելուց հետո, Կ. Պոլսի պատրիարքի իշխանությունը իր կատարյալ օրինական ձևի մեջ մտավ։ Նա ընդունվեցավ որպես Ազգային ժողովի նախագահ և որպես Թուրքիայի հայերի հոգևոր ու մարմնավոր ներկայացուցիչ թե Բ. Դռան և թե Եվրոպայի առջև։ Այնուհետև պատրիարքի հոգևոր իշխանության հետ պաշտոնապես միացավ ժողովրդական իշխանությունը, այն է՝ Հայոց սահմանադրական վարչության ազգային ժողովը։

Շատ հասկանալի է, որ մի այնպիսի եկեղեցական-սահմանադրական կառավարության հիմնվելուց հետո Թուրքիայի հայոց մյուս հոգևոր իշխանությունները պետք է ենթարկվեին Կ. Պոլսի պատրիարքարանի գերիշխանությանը։ Այդ հոգևոր իշխանություններն էին՝ Աղթամարի կաթողիկոսությունը, Սսի կամ Կիլիկիայի կաթողիկոսությունը և Երուսաղեմի պատրիարքությունը։ Նրանք թեև առաջ ևս կախումն ունեին Կ. Պոլսի պատրիարքարանից, բայց յուրաքանչյուր կողմերի փոխադարձ հարաբերությունները դեռ ճիշտ որոշված չէին։ Բայց սահմանադրության հաստատվելուց հետո նրանք կատարելապես կախումն ունեցան կենտրոնական հոգևոր կառավարությունից, որի ներկայացուցիչն էր պատրիարքը Ազգային ժողովի հետ։ Այնուհետև թե Աղթամարի ու Սսի կաթողիկոսարանները և թե Երուսաղեմի պատրիարքը իրավունք չունեին ուղղակի Բ. Դռան հետ հարաբերություններ սկսելու, այլ ամեն մի ազգային հարցերում պարտավոր էին դիմել Կ. Պոլսի պատրիարքարանին և այնտեղից լուծումն խնդրել։ Թեև եկեղեցու կանոնական հայացքով Աղթամա-

րի ու Սսի կաթողիկոսները աստիճանով բարձր էին պատրիարքից, բայց քաղաքական կեսից Կ. Պոլսի պատրիարքը ընդունվեցավ որպես գլխավոր ներկայացուցիչ Թուրքիայի հայ հասարակության։

Իհարկե, այս բոլորը չէր կարող կատարվել հեշտությամբ կամ խաղաղական ճանապարհով։ Կ. Պոլսի պատրիարքարանը և Ազգային ժողովը պետք է երկար կռվեին վաղեմի ավանդական դրության հետ, մինչև կարողանային Թուրքիայի մյուս հոգևոր իշխանությունների իրավունքները չափի և սահմանների մեջ դնել։ Խիստ երկար կլիներ նկարագրել այն բոլոր կռիվների մանրամասնությունները, որ տեղի ունեցան սահմանադրության թե հիմնվելուց առաջ և թե հետո։ Այսքանը միայն կասենք, որ Կ. Պոլսում հաստատվեցավ մի կանոնավոր հոգևոր սահմանադրական կառավարություն, այնուհետև Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները իրենց նշանակությամբ շատ չէին տարբերվում մի հասարակ թեմական առաջնորդություններից։ Նրանց իրավունքները չէին տարածվում իրանց վիճակների սահմաններից դուրս և, որպես ամեն մի թեմական առաջնորդ նշանակվում ու հաստատվում է Կ. Պոլսի պատրիարքարանից, այնպես էլ հիշյալ կաթողիկոսները հաստատվում էին նույն պատրիարքարանից և իրանց կաթողիկոսության բերաթը Բ. Դռնից սատանում էին պատրիարքի միջնորդությամբ։ Ձևերի, անիրավությունների, մի խոսքով, բոլոր հանցանքների դեպքերում Կ. Պոլսի պատրիարքարանը իրավունք ուներ դատելու, պատժելու և մինչև անգամ փոխելու նրանց։ Շատ ժամանակ չէր անցել, որ Աղթամարի այժմյան խաչատուր կաթողիկոսը բերվեցավ Կ. Պոլիս, դատվեցավ և տասն տարվա չափ բանտարկված մնաց պատրիարքարանում։

Կ. Պոլսի պատրիարքարանի այդ ընդարձակ գերիշխանությունը, որ իրան հիմք ուներ մի կազմակերպված սահմանադրական կառավարության, իհարկե, Թուրքիայի այժմյան քաղաքական հանգամանքներում չէր կարող շատ հաճելի լինել Բ. Դռանը։ Պատրիարքը ոչ միայն իր ներքին՝ ազգային և կրոնական հարցերում գործում էր ամենայն եռանդով, այլև սկսել էր մի արտաքին դիվանագիտական հարաբերություն Կ. Պոլսի դեսպանների, կամ ուղղակի Եվրոպայի հետ։ Այս բոլորից հետո մեջտեղում դրված էր Բևլինի ամառգժողովի 61-րդ հոդվածը և Հայաստանի վերանորոգության խնդիրը։ Ի՞նչ պետք էր արած։ Նախորդ սուլթանները նրա նախագուշակին, թե այդքան հեռու կտաներ հայոց պատրիարքին սահմանադրական կառավարությունը, երբեք թույլ չէին տա, որ հաստատվեր նա։ Իսկ այժմ ոչ միայն խիստ ուշ էր, այլև անկարելի էր իրել այն, ինչ որ արված էր առաջուց, անկարելի, քանի որ Հայաս-

տանի համար նոր արտոնություններ, նոր բարենորոգումներ էին պահանջում։ Բայց Բ. Դուռը բավական վարպետ է իր խորամանկությունների մեջ. նա մտածեց, եթե ուղղակի կերպով չէ կարող ոչնչացնել պատրիարքի իշխանությունը, գոնե կողմնակի միջոցներով պետք է թուլացնել նրան և միանգամայն անդամալուծել, որ այլևս չկարողանա Բուրքաց շար նպատակների հակառակ գործել։ Այստեղից ծագեց Կիլիկիայի կաթողիկոսության խնդիրը։

Որպես կրոնական և եկեղեցական վեճերը սկզբում ծագում էին չնչին հարցերից, այնպես էլ Կիլիկիայի Մկրտիչ կաթողիկոսի վեճը Կ. Պոլսի պատրիարքարանի հետ ըստ երևույթին պետք է շատ չնչին համարել, եթե նրա կեղևի տակ չնկատվեր Բուրքաց կառավարության քաղաքական նենգավոր նպատակը։ Ահա ինչպես. Մկրտիչ կաթողիկոսը, օգուտ քաղելով Բ. Դռան այժմյան բշնամական հարաբերություններից դեպի պատրիարքարանը, աշխատում է, որքան կարելի է, դուրս գալ պատրիարքի և ազգային ժողովի իրավասության տակից, աշխատում է բարձրացնել իր դիրքը և, եթե հնարավոր կլինի, մի անկախ գրություն ստեղծել։ Նա պահանջում է, որ իր վիճակի սահմանները լայնացնեն, պահանջում է, որ իրան իրավունք տան առանց պատրիարքարանի միջնորդության ուղղակի հարաբերություններ սկսել Բ. Դռան հետ։ Այդ բոլորը Բ. Դռան ամենացանկալի բաղձանքներն են։ Նպատակը շատ պարզ է։ Եթե Կիլիկիայի կաթողիկոսությունը կբաժանվի, եթե նրա հարաբերությունները բոլորովին կկտրվեն պատրիարքարանից, այն ժամանակ, շատ հասկանալի է, որ թե Ազգային ժողովի և թե պատրիարքի իշխանությունը կթուլանա։ Եվ Բ. Դուռը այնուհետև իր փառասիրության համար ամեն ազգային շահերը ծախող մի դավաճան կաթողիկոսի հետ ինչպես կամենա, այնպես կվարվի։

Բ. Դուռը բավական վարպետությամբ է առաջ տանում իր գործը։ Նա գիտե, որ մի կաթողիկոս եկեղեցական աստիճանով ավելի բարձր է, քան թե մի պատրիարք։ Ինչո՞ւ պատրիարքից չվերև նրա բոլոր իրավունքները և չտալ կաթողիկոսին, երբ այդ կաթողիկոսը խոստանում էր ավելի հլու հպատակ դառնալ Դռանը։ Այդ հարցում Բ. Դուռը ի նկատի ունի մի ուրիշ, ավելի կարևոր կետ ևս։ Նա գիտե, որ Սիսը, Զեյթունը և առհասարակ Կիլիկիան, իրանց քաջ հայ լեռնաբնակներով, մեծ նշանակություն ունեն Հայաստանի վերականգնման գործում։ Հիմնվելով այդ երկրներում մի անկախ կաթողիկոսություն և կարելով նրա հարաբերությունները Կ. Պոլսի պատրիարքարանից, դրանով Բ. Դուռը բոլորովին

իր ճանկերի մեջ գցած կլինի Կիլիկիան։ Մկրտիչ կաթողիկոսի նման ազդավաճառ և թուրք կառավարությունից պաշտպանություն վայելող մարդը, իհարկե, երբեք չի սկսի նրա շահերի հակառակ գործել։ Մինչդեռ Կ. Պոլսի պատրիարքարանի գործողությունները Կիլիկիայի վերաբերությամբ չեն կարող շատ անտեղի կասկածներ չպատճառել Դռանը։

Մկրտիչ կաթողիկոսը, առանց պատրիարքարանի հրավերի, Կ. Պոլիս գալով, արդեն սկսել է իր մեքենայությունները։ Իր բազմամյա դիզած ոսկիներով (նրանց մասին մի քանի անգամ պատժվել է նա) այժմ սկսել է մի առանձին կուսակցություն կազմել։ Նա շարունակում է համառությամբ մերժել պատրիարքի և Ազգային ժողովի առաջարկությունները։ Թուրքայ մամուլը բացարձակ հայտնեց իր պաշտպանությունը ապատամբ կաթողիկոսին, հրավիրելով Բ. Դռան ուշադրությունը այդ վնճի վրա։ Հայ մամուլը դեռ վճռական ոչինչ չի ասել։ Կռիվը շարունակվում է։

Տարակույս չկա, որ այդ կռիվը կարող է երկար ըբաղեցնել թե պատրիարքին և թե Ազգային ժողովին մի անախորժ, միևնույն ժամանակ վտանգավոր եկեղեցական հարցով, ուղիղ այն ժամանակ, երբ պատրիարքի յուրաքանչյուր րոպեն այժմ շատ թանկ է մեր բուն ազգային խընդիրների վերաբերությամբ։ Ենթադրենք, թե Բ. Դուռը չի կարող հասնել իր նպատակին, այն է՝ Կիլիկիայի կաթողիկոսությունը բարձրացնելով, ոչնչացնել Կ. Պոլսի պատրիարքության նշանակությունը. բայց այդ էլ բավական է, որ երբ հունաց խնդիրը կվճռվի և հերթը կհասնի հայկական խնդրին, այն ժամանակ այդ կենսական խնդիրը առկախ մնացած, պատրիարքարանը և Ազգային ժողովը զբաղված կլինեն Կիլիկիայի կաթողիկոսության խնդրով, եթե չաշխատեն հիմիկվանից խաղաղական կերպով վերջ տալ նրան։

Բայց մենք համոզված ենք, որպես շատ դեպքերում Բ. Դուռը սխալվել է իր հաշիվների մեջ, նույնպես և այդ հարցի մեջ նրա ենթադրությունները կմնան ապարդյուն։ Սուլթաններից հաստատված և եվրոպական պետությունններից ճանաչված մի սահմանադրական պատրիարքություն, որ ներկայացնում է մի քանի միլիոն հայերի հոգևոր և աշխարհագրական իշխանությունը, հեշտ չէ ոչնչացնել։ Այս խոսքերին ապացույց կարող է լինել այն, որ այդ առաջին անգամը չէ, որ Բ. Դուռը փորձ է փորձում Կիլիկիայի կաթողիկոսությունը բարձրացնելով, Կ. Պոլսի պատրիարքարանի իրավունքները սահմանափակել։ Դեռ մի քանի տարի առաջ, այժմյան Մկրտիչ կաթողիկոսի նախորդ Նիկողոսյանի օրերում, Բ. Դուռը միևնույն դիտավորությունն ուներ։ Նա գրգռեց Նիկողոսյան կաթողի-

կոսին պատրիարքարանի դեմ, նրան անկախություն պահանջել տալով։ Պատրիարքարանի և Սսի կաթողիկոսության մեջ սկսվեցավ մի անվերջ կռիվ։ Նիկողոսյան կաթողիկոսը հկավ Կ. Պոլիս և փոխանակ հայոց պատրիարքարանը կամ մի որևիցե եկեղեցու բակում իջևանելու, ուղղակի դիմեց Բուի-կափու և այնտեղ իջևանեց տաճկաց մի մեդրեսեի մեջ, ուր մահմեդական մոլլաներ էին բնակվում։ Կ. Պոլսի հայերը այդ տեսնելով, մեծ վրդովմունքի մեջ ընկան։ Շատերը վախենում էին, որ հայոց կաթողիկոսը Բ. Դռանը ավելի հաճոյանալու համար մահմեդականություն կընդունե։ Բայց ոչինչ չօգնեց. պատրիարքարանը դարձյալ հաղթող հանդիսացավ և ապատամբ կաթողիկոսին աքսորեց Նիկոմիդիայի Արմաշու վանքը, և դեռ նրա կենդանության ժամանակ Սսի կաթողիկոս ընտրեց այժմյան Մկրտչին, որը սկսել է նույն անկարգությունները գործել, որոնց համար պատժվեցավ իր նախորդը*։

Այս բոլոր փաստերից պարզ երևում է, որ Բ. Դուռը միշտ դիտավորություն է ունեցել Կիլիկիայի կաթողիկոսությունը բարձրացնել և Կ. Պոլսի պատրիարքությունը նեղ ոչ բոլորովին ոչնչացնել. գոնե նրա իրավունքները սահմանափակել։ Թե ի՞նչ նպատակ կարող էր լինել այդ ձեռնարկության մեջ, շատ հեշտ է բացատրել։ Հայտնի բան է, որ Սսի նման մի հետ ընկած վանքի կաթողիկոսը չէր կարող այն գործերը կատարել Թուրքիայի հայերի վերաբերությամբ, ինչ որ կարող էր անել մայրաքաղաքի պատրիարքը, որ ավելի մոտ էր Բե Բ. Դռանը և Բե Եվրոպային, որ անդադար հարաբերություններ ուներ Կ. Պոլսի դեսպանների հետ, և որը ուներ սահմանադրական կառավարություն, Ազգային երեսփոխանական ժողով և այլն։

Կրոնական և եկեղեցական երկպառակություններով զբաղեցնել իր քրիստոնյա հպատակներին՝ դա Բ. Դռան վաղեմի և խիստ սովորական դարձած խորամանկություններից մեկն է։ Բայց Կ. Պոլսի պատրիարքությունը նրան անտանելի դարձավ մանավանդ վերջին քաղաքական հանդամանքների ժամանակ, երբ կրկին բարձրացավ արևելյան հարցը։ Այդ օրից նա վճռեց, որքան կարելի է, սահմանափակել պատրիարքարանի դերիշխանությունը և նրան լոկ եկեղեցական պետի նշանակություն տալ։ Այդ նպատակին հասնելու փորձերից մեկը պետք է համարել, որպես ցույց տվեցինք, Սսի կաթողիկոսի հարուցած խռովությունները։ Բայց Բ. Դուռը սխալվում է մի գլխավոր հաշվի մեջ. նա չէ կամենում հասկանալ, որ ավանդական սովորություններն անգամ, հետզհետե արմա-

* Այդ խռովությունները պատահեցան Պողոս պատրիարքի օրերում։

տաճալով, վերջապես օրինքի ձև են ստանում։ Բայց Կ. Պոլսի պատրիարքի դերիշխանությունը կազմակերպվել է ոչ միայն ընդունված վաղեմի սովորություններով, այլ հատատավել է և սահմանադրական օրենքներով։ Դրա դերիշխանությունը տարածվում է ոչ միայն Թուրքիայի հայոց երկու կաթողիկոսների վրա, որպիսիներն են Աղթամարինը և Սսինը, և մի պատրիարքարանի վրա, որպիսին է Երուսաղեմինը, այլև ասորաց կաթողիկոսի վրա, որ նույնպես կախումն ունի Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից։ Դեռ շատ ժամանակ չէ անցել, երբ մի քանի տարի առաջ ասորաց կաթողիկոսի և իր ժողովրդի մեջ խռովություններ ծագեցան, և երբ հայոց պատրիարքը բռնեց ժողովրդի կողմը, սկսեց պաշտպանել նրա իրավունքները, այն ժամանակ ասորաց կաթողիկոսը աշխատեց դուրս գալ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի իրավասության տակից, բայց չկարողացավ հաջողեցնել։ Մինչև այսօր նա իր պաշտոնական հարաբերությունները Թուրքաց կառավարության հետ կատարում է հայոց պատրիարքարանի միջնորդությամբ, իսկ ինքը ուղղակի Բ. Դռան հետ բանակցություններ վարելու իրավունք չունի։ Երբ մի օտար ազգի, մի օտար եկեղեցու կաթողիկոսին չհաջողվեցավ ոչնչացնել վաղեմի ավանդական կանոնները և դուրս գալ հայոց պատրիարքարանի իրավասության տակից, որքան ավելի ցնորք պետք է համարել Սսի Միքրիչ կաթողիկոսի վնասարար ձգտումները, մեև նա իրան պաշտպան և զորավիգ ունենար Թուրքաց կառավարությունը։

ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Բարեկամներից շատերը առաջարկում էին գրել մի պատմական վեպ։ Գրել պատմական վեպ, ինչպես Ալեքսանդր Դյուման էր գրում, շատ հեշտ գործ է։ Բայց գրել պատմական վեպ, ինչպես էրկերը գրեց իր «Եգիպտական թագավորի աղջիկը»[1], բավական դժվար է։

Պատմական վեպի մեջ հեղինակի երևակայության համար ընդարձակ ասպարեզ կա։ Մտախոհիր, որքան կարող ես, ո՞վ պիտի ստուգի, որ քո նկարագրները կեղծ են։ Բավական է անցքը տեղափոխել մի քանի հարյուր, մի քանի հազար տարի առաջ, վեր առնել մի քանի պատմական անձնավորություններ և նրանցից ուզածիդ պես տիպեր ստեղծել։ Ընթերցողների հարյուրից մեկը միայն կարող է հասկանալ, որ այս տեսակ մարդիկ այն ժամանակ չէին ապրում, որ այս տեսակ կյանք այն ժա-

մանակ չկար։ Այդ նշանակին էր հետևում Դյուման իր պատմական ռոմանների մեջ, թեև նրա գրքերը հետաքրքրությամբ կարդացվում էին։

Այսպես չէ էբերսի գիրքը։ Նա ժամանակի խորին հնությունից* երևան է հանում մեր առջև մի անծանոթ աշխարհ իր կենցաղավարության բոլոր ճշտություններով։ Ընթերցողը տեսնում է այդ գրքի մեջ կլասիկական եգիպտոսը իր հրեշավոր պիրամիդներով և սֆինքսներով, իր վեհափառ Ամազիսներով և Պտամմետիխներով, տեսնում է վշտալի աղքությունը, բռւրմի և թագավորի լծի տակ ճնշված ժողովուրդը։ Էբերսը ռոմանի միջոցով ծանոթացնում է մեզ մի վաղուց անցած, գնացած աշխարհի կյանքի և քաղաքակրթության հետ։ Մենք, ինչպես պարզ հայելու մեջ, տեսնում ենք այդ երկրի կենդանի պատկերը, նկարված բանաստեղծական ամենաճիշտ գույներով, տեսնում ենք նրա քաղաքական, հասարակական, ընտանեկան, կրոնական կյանքը իր ընդարձակ և բազմատեսակ գործունեության մեջ, իր բոլոր մանրամասն և հատկանիշ առանձնություններով։

Մի բարեխիղճ հեղինակ, որպես էր էբերսը, կարող էր այսպիսի ռոման գրել։ Նա եգիպտական հնախոսության, եգիպտական պատմության պրոֆեսոր է. իր ամբողջ կյանքը նվիրել է այդ երկրի անցյալի ուսումնասիրությանը։ Էբերսի մեջ միացած էին բանաստեղծական տաղանդը և խորին, լուրջ գիտություն։ Նրա գիրքը բացատրված է ավելի քան 500 ուսումնական ծանոթություններով, որոնցից երևում է, ինչ որ գրել է նա, հիմնվում է պատմական հնագիտական ճիշտ փաստերի վրա։

Որքան ինքը էբերսը խղճմտավոր աշխատող էր, այնքան ընդարձակ դյուրություններ կային իր աշխատությունը կատարելագործելու համար։ Նա կարող էր ձեռքի տակ ունենալ հարյուրավոր հեղինակների պատառատի գրվածքները եգիպտոսի հնության, պատմության, էտնոգրաֆիայի մասին։ Բայց դրանցով ևս չբավականանալով, էբերսը անձամբ գնաց եգիպտոս, իր վեպը իր տեղում մշակելու համար։

Ի՞նչ աղբյուրներից կարող է օգուտ քաղել մի հայ վիպասան, երբ կամենում է հին Հայաստանի կյանքից մի ռոման գրել։ Դեռևս ոչինչ ուսումնասիրված չէ, որ կարողանար լույս ձգել խավարի մեջ թաքնված անցյալի վրա, թե ինչպես էին ապրում մեր նախնիքը։ Մեր պատմությունը մի չոր ու ցամաք ժամանակագրական ցանկ է և ավելի ոչինչ։ Ձամչյանի, Ինճիճյանի գրքերը չեն կարող լիակատար բավականություն տալ վիպասանի պահանջներին։ Մենք կուլտուրայի պատմություն չունենք։ Մենք

---

* Քրիստոսից մոտ 500 տարի առաջ։

չգիտենք՝ ինչ էր ուտում, ինչպես էր հագնվում, ինչ տեսակ տան մեջ էր ապրում հայ մարդը մեզանից, եթե ավել չասեմ, մի հազար տարի առաջ։ Մենք չգիտենք հայոց հին ժողովրդի ընկերական, հասարակական, ընտանեկան, քաղաքական կյանքի առանձնահատկությունները, ժողովրդի զանազան դասակարգերի հարաբերության պայմանները միմյանց հետ։ Մեզ հայտնի չէ մեր նախնիների բարքը, վարքը, սովորությունները, կրոնական պաշտամունքները, ժողովրդական հանդեսները և այլն։ Մենք շատ փոքր տեղեկություններ ունենք մեր անցյալի մասին։ Մեր հնագիտությունը իր մութ և միանգամայն անմշակ վիճակի մեջն է։

Մինչ մի եվրոպացի հեղինակ, կամենալով մի պատմական վեպ գրել, կարող է օգուտ քաղել հարյուրավոր պատրաստի աշխատություններից, դրա ընդհակառակն, մեզ մոտ ոչինչ չկա, որ վիպասանին նյութ մատակարարեր, նրա հայացքը անցյալի վերաբերությամբ լուսավորեր, նրա առջև բաց աներ հին աշխարհը իր կյանքի բոլոր երևույթներով։ Այդ պատճառով հայոց պատմական վիպասանի համար, եթե նա բարեխիղճ է, մեծ աշխատություններ, ահագին դժվարություններ կան մի օրինավոր բան գրելու համար։ Նա ինքը պետք է ուսումնասիրե հայոց ամբողջ հնությունը, որ իր վեպը կատարյալ լինի։ Իսկ դրա համար մի մարդու ոչ թե հանճարը և աշխատությունը, այլև ամբողջ կյանքը բավական չէ։

Հիշյալ հանգամանքները ի նկատի առնելով, շատ հեշտ է բացատրել այն տխուր երևույթը մեր գրականության մեջ, որ առանց բացառության մեր բոլոր դրողների փորձը անհաջող անցավ, երբ կամեցան հեղինակել մի պատմական վեպ կամ դրամա։ Դրանց աշխատությունների մեջ մենք հանդիպում ենք պատմական անունների, պատմական անցքերի, բայց հայ մարդու վաղեմի կյանքը, հայ աշխարհի հին նկարագիրը չենք տեսնում։

Այս էր պատճառը, երբ ինձ առաջարկեցին գրել մի պատմական վեպ, ես չընտրեցի շատ հին ժամանակները, որոնք դեռևս մեզ համար մթության մեջ են թաքնված։ Ես վեր առի մեզանից մեկուկես դար առաջ պատահած մի անցք, այն է՝ Սյունյաց աշխարհի հայերի ապստամբությունը պարսից լուծը թոթափելու համար։ Այդ ժամանակից մինչև այժմ հայոց կյանքի մեջ մեծ փոփոխություններ չեն եղել։

Ցավալին այն է, հիշյալ անցքի պատմությունը, որ մեր նոր տարեգրության մեջ մի նշանավոր տեղ պիտի բռնե, դեռևս խիստ աղքատ է, թերի և անկատար։ Մենք ունենք այդ մասին մի փոքրիկ գրքույկ միայն, որ տպվեցավ 1871 թվին էջմիածնում պ. Ա. Գուլամիրյանցի հրատարակությամբ, այս վերնագրով՝ «Ընտիր պատմութիւն Դավիթ Բէկին և պա-

տերազմաց Հայոցն Խափանու, որք եղեն ընդդեմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է՝ յամի տեառն 1722 և Հայոց 1171»[3]։ Բայի դրանից, Ջամշյանի պատմության երրորդ հատորի 784 երեսից մինչև 800 երեսը նվիրված է Դավիթ Բեկին։ Ինչպես երևում է, Ջամշյանը իր տեղեկությունները քաղել է մի այնպիսի գրքից, որպիսին է պ. Դուլամիրյանցի հրատարակությունը, որովհետև երկուսի բովանդակության մեջ մի նշանավոր տարբերություն չենք դտնում։

Թե առաջին և թե երկրորդ պատմությունը, կրկնում եմ, թերի ու անկատար են։ Նրանց մեջ կան ահագին բաց մնացած տեղեր, որ անցքերի ամենագլխավորն են։ Օրինակի համար, այդ պատմությունների մեջ ամենևին հիշատակություն չկա, թե Սյունյաց աշխարհի հայոց պատմությունը ի՛նչ կապ ուներ Պետրոս Մեծի Պարսկաստանի արշավանքների հետ կամ ի՛նչ դեր էին խաղում այդ ապստամբության մեջ ռուսները, և կամ ո՛ր աստիճան հայերը իրանց զենքով ու խելքով նպաստեցին ռուսաց հաջողության գործին կասպիական ծովեզրյա երկրները տիրապետելու ժամանակ։

Այդ ժամանակի անցքերի ամենամեծ մասը մնացել է բաց մեր ազգային պատմության մեջ։ Հայտնի է, որ Ղաբարաղի հինգ ժառանգական մելիքությունները՝ Դյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Դյուզամարը և Վարանդան, այդ ժամանակ կազմում էին մի դաշնակցական միություն, որ ռուսաց ակաների մեջ հայտնի է անունով «Армянское собрание»։ Այդ միությունը ուներ մոտ 60 հազար զինված մարդիկ, որոնք մի հոգով աշխատում էին վերականգնել Սյունյաց աշխարհում հայոց անկախ իշխանություն։ Միության առաջնորդներն էին՝ Դանիէլասարի Եսայի և Նեբսես կիսոդիկոսները, Մելիք-Սվան խանը, Մելիք-Եգանը, Ավան-Յուզբաշին, Մելիք-Բաշին, տեր Անտոնը և ուրիշ շատերը։ Դրանք անդադար բանակցություններ ունեին թե Պետրոս Մեծի, թե նրանից հետո եկատերինա 1-ինի հետ, դեսպաններ էին ուղարկում Ս. Պետերբուրգ, Մոսկվա և դրանց անունով մենք դտնում ենք մի շարք հրովարտակներ, որ գրված են Պետրոս Մեծից ու նրա հաջորդներից, որ վերաբերում են հայոց շարժման գործին։ Բայց այդ բոլորի մասին լուռ է մեր պատմությունը։ Նա մինչև անգամ չէ հիշում անունները այն երևելի դիվլոմատների, որպես էին Իսրայել Օրին և նրա ընկեր Մինաս վարդապետը, որոնք, բացի Ռուսաստանից, եվրոպական այլ պետությունների դռներն ևս անդադար բա-*

---

* «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», *տպված Մոսկվայում 1833 թ.։*

խում էին հայոց անկախության գործը աջողացնելու համար։ Մելիք-Ասլան խանը (Հովհաննես իշխանը), որը հիշյալ միության պարագլուխն էր, որի անունով կայսրները հրովարտակներ և շահերը ֆիրմաններ էին ուղարկում, այդ երևելի հերոսը և միևնույն ժամանակ քաղաքագետ անձը, մեր պատմության մի քանի տողերի մեջ հայտնվում է ինչպես մի սավկ. և իսկույն անհետանում է։ Մեր պատմությունը համառոտ տեղեկություններ է տալիս միայն Ղափանի մեջ կատարված անցքերի մասին, որոնց պարագլուխն է Դավիթ Բեկը։

Ինձ նպատակ դնելով ռոմանի ձևի մեջ ամփոփել և ժամանակի պատմությունը, շատ պարզ է, որ մեծ աշխատությունների և ահագին դժվարությունների պիտի հանդիպեի բոլոր հարկավոր նյութերը ձեռք բերելու համար։ Ես այս աշխատությունը, եթե ոչ բոլորովին, գոնե մասամբ լրացրի օտար աղբյուրներից օգուտ քաղելով։ Բայց ինձ դեռ բավական տեղեկություններ մնում են պակաս։ Այս պատճառով ևս ընդհատեցի «Դավիթ Բեկի» հրատարակության շարունակությունը «Մշակի» մեջ, դիտավորությունն ունենալով անձամբ ճանապարհորդել Սյունյաց աշխարհում և այդ վեպի մնացած մասները իր տեղում մշակել։

Իմ ճանապարհորդության նպատակը ոչ միայն «Դավիթ Բեկը» կատարելագործելն է, այլ, որքան հնար է, նյութեր հավաքել Դավիթ Բեկից հետո հայտնված մելիքների կյանքից և գործունեությունից, որոնք կարող էին ծառայել ինձ առանձին վեպեր կամ պատկերներ ստեղծելու։ Որքան թանկագին է մեզ համար այդ ժամանակների հերոսների հիշատակը անմահացնելը, այնքան ցավալի կորուստ է, երբ նրանք կմոռացվեն, կանհետանան մեր անհոգության միջից։

Իմ ճանապարհորդությունը կտևի մի քանի ամիս։ Եթե կհաջողվի ինձ հավաքել իմ ցանկացած բոլոր տեղեկությունները, ես կկազմեմ Ղարաբաղի մելիքների ամբողջ պատմությունը, սկսյալ Դավիթ Բեկից մինչև վերջին ժամանակները։ Որովհետև այդ գործը ձեռնհաս անձինքների օգնության կարոտ է, այս պատճառով ես հրապարակավ դիմում եմ այն բոլոր պարոններին, որոնց մոտ կան թե գրավոր և թե բերանացի տեղեկություններ, խնդրելով, որ բարեհաճեն հաղորդել ինձ։ Ես այլապես անկարող եմ վարձատրել ինձ օգնողներին, միայն իմ գրքի առաջաբանի մեջ կհայտնեմ անունները այն բոլոր անձինքների, ումից ինչ տեսակ նյութեր որ ստացած լինեմ։

Առայժմ իմ հրապարակական շնորհակալությունը հայտնում եմ պոլկովնիկ Հ. Դ. Լազրովին, որ ոչ սակավ օգնեց ինձ Դավիթ Բեկի և նրա

գործակիցների մասին նյութեր հաղորդելով։ Այդ համեստ, միևնույն ժամանակ անդուլ աշխատանքը ամբողջ 20 տարի ուսումնասիրում է կովկասյան տեղերի հին և նոր պատմությունը։ Շատ ցանկալի էր, որ մեծ պարոնը մի օր տպագրություամբ ի լույս ածեր իր ուսումնասիրած պատմական հարուստ նյութերը, որով մեծ ծառայություն արած կլիներ մեր աղքատ գրականությանը։ Ինձ մի քանի տեղեկություններ հաղորդեց մատենադարան հայր Գաբրիել Պատկանյանը Ս. Պետերբուրգից, որոնց մասին հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը։

Խոստացել են նյութեր տալ պպ. պոլկովնիկ Ա. Ռ. Մելիք-Հայկազյանը, փաստաբան Հ. Աթաբեկյանը և դրամաճառ Ա. Լենֆիաջյանցը։

Իմ անունով նամակներ կամ թղթեր կարող են ուղարկվել «Մշակի» խմբագրատունը, որը իր ժողմից կհասցնի ինձ։

Ես երկար սպասել չեմ տա «Դավիթ Բեկի» ընթերցողներին. նշանավոր տեղերում իմ ճանապարհորդությունը կատարելուց հետո, սկսի առանձնանամ Տաթևի վանքում, այնտեղից կսկսեմ շարունակությունը ուղարկել «Մշակին»։

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻՑ

Սեպտեմբերի 28-ին

Այս նամակով ուղարկում եմ ձեզ մի թերթիկ հին գրչագրի, որի երկրորդ երեսի վրա կգտնեք երկու տող հայոց նշանագրերի օրինակներ։ Այդ թերթիկը ես վեր առա մի հին գրչագիր Ավետարանից, այժմ ուղարկում եմ ձեզ մեր հայ հնագետներին ցույց տալու, գուցե դա մի փոքրիկ դաղափար կտար մեր հին նշանագրերի մասին։

Նշանագրերի ներքև հայկական նոր տառերով գրված է՝ «Զամաւայ ծառայ սուրբ Գրիգոր Լուսաւորչին, սուրբ Յովաննէս Մկրտչին»։ Իսկ այդ տողերի յուրաքանչյուր բառի վրա գրված են նրա համապատասխան նշանագրերը։ Պետք է նկատել, որ ամեն մի բառը ներկայացնում է մի առանձին տեսակ նշանագրեր։ «Զամաւայ» բառը սեպաձև տառերով է գրված. «ծառայ» բառը մի առանձին տեսակ սեպաձև է. իսկ «սուրբ» և «Գրիգոր» բառերը սեպաձևներ չեն, այլ մի այլ տեսակ նշանագրեր. «լուսաւորչին» բառը նույնպես մի այլ տեսակ սեպաձև է։ Մնացյալ «սուրբ Յովաննէս Մկրտչին» բառերը հայոց ծածկագրության օրինակներ են։ Մի խոսքով, այդ երկու տողը բավական պարզ դաղափար է տալիս, թե քանի տեսակ նշանագրեր էին գործածում մեր նախնիքը։

Թերթիկի առաջին երեսի վրա գրված հիշատակարանից երևում է, որ հիշյալ Ավետարանը գրված է եղել Վանա երկրի Ավանց* գյուղում (այսինքն՝ հայոց բևեռագրերի հայրենիքում) հայոց ՌԽՀ (1048) թվականին, ատյրբ Հովհաննես Մկրտչի և սուրբ Գրիգոր Լուսավորչի վանքում։ Ուրեմն 283 տարի հնություն ունի։ Երևում է, որ 283 տարի առաջ հայոց հին բևեռագիրները ոչ միայն ընթերցանելի էին մեր գրագիտներին, այլ մինչև անգամ գործածության մեջ էին։ Ինչո՞ւ չմտածել, խորենացին, որ միևնույն երկրից էր, ծանոթ չէր բևեռագրների ընթերցմանը իր պատմությունը գրելու ժամանակ օգուտ չքաղեց նրանցից։

Թե հայոց հին բևեռագրների ընթերցումը ծանոթ է եղել մեր նախնիքներին, մինչև անգամ երկու-երեք դար առաջ, դրա համար ուրիշ ապացույցներ ևս կան։ Մի պարան ինձ խոստացել է տալ մի մագաղաթյա թերթ, որ դուրս է բերել մի հին բառարանից, որի վրա գրված են բևեռագրների այբուբենարանի բացատրությունները։ Երբ ձեռք բերեմ, կուղարկեմ ձեզ։

Եղանակի վատության պատճառով երկու օր ավելի մնացի Ագուլիսում. այսօր դուրս եմ գնում դեպի Պարսկաստան։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Հրեից ազգը իր հայրենիքը ճանաչում էր Երուսաղեմի մեջ, այսինքն՝ այն տաճարի մեջ, որ Եհովայի տուն էր կոչվում։ Դա էր ժողովրդի սրբավայրը, դա էր, որ Իսրայելի որդիներին շաղկապում էր «ուխտյալ» երկրի հետ։

Եվ Հիսուս Քրիստոսի աշակերտները հիացմամբ իրանց վարդապետին ցույց էին տալիս տաճարի շքեղությունը, նա խիստ սառնասրտությամբ պատասխանեց. «Կգան օրեր, որ մի քար էլ քարի վրա չի մնա, և բոլորը կքանդվի»[1]։

Մարգարեությունը կատարվեցավ. քանդվեցավ տաճարը, և նրա հետ կտրվեցավ այն կապը, որ կապում էր Իսրայելի որդիներին մեղր ու կաթ բխող «ուխտյալ» երկրի հետ։ Նրանք սկսեցին գաղթել դեպի զա-

---

* Ավանց գյուղը գտնվում է Վանա լճակի ափին, Վան քաղաքից 20 վերստ հեռավորության վրա և լճակի նավահանգիստն է։

նաղան կողմերը. նրանք այլևս հայրենիք չունեին։ Մի ամբողջ ազգ քայքայվեցավ նյութեղեն տաճարի հետ...

Քրիստոնեությունը հիմնեց հին տաճարի ավերակների վրա նորը։ Քրիստոնեությունը, որի իդեալն էր կենդանի մարդերից Աստծո տաճարներ պատրաստել, խոտորվելով իր ուղղությունից, սրբացրեց այն բոլոր նվիրական տեղերը, ուր կատարվել էին Փրկչի այս կամ այն անօրինությունները։ Դավթի քաղաքի հողն անգամ նվիրական դարձավ քրիստոնյա աշխարհի համար, երկար ժամանակ նավերով կրում էին դեպի արևմուտք իրանց գերեզմանատները նրանով սրբացնելու համար։ Այդպիսի սնահավատություններից ծնվեցան «խաչակիրների» արշավանքները. քրիստոնյա աշխարհը սկսեց կռվել արևելքի հետ սուրբ տեղերի ազատության համար և շարունակ 84 տարի Փոքր Ասիան ներկվեցավ մարդկային արյունով...

Հայերը նույնպես հետ չմնացին ժամանակի քրիստոնեական ֆանատիզմից. հայերը նույնպես իրանց բաժինն ունեցան այն քաղաքում, ուր խաչվեցավ մարդկության փրկիչը։ Հայերը ևս այնտեղ հիմնեցին վանքեր, հաստատեցին վանական միաբանություն։ Այնուհետև մեր թագավորներից, թագուհիներից, իշխաններից և հարուստներից շատերը, երբ իրանց հայրենիքին վտանգ էր սպառնում, երբ թշնամուն դեմ դնալ չէին կարողանում, թողնում էին ժողովուրդը բարբարոսների ձեռքում և, իրանց գանձերը առնելով, դիմում էին դեպի Երուսաղեմ, այնտեղ սրբերի հետ ապրելու և իրանց հոգու փրկության համար աղոթելու։ Մեր անդրանիկ քրիստոնյա Աբգարի կինը՝ Հեղինե թագուհին, առաջինը եղավ, որ ճանապարհ բաց արավ դեպի սուրբ քաղաքը։

Երուսաղեմը դարձավ հայերի համար նույնը, ինչ որ էր Մեքքան և Մեդինան մահմեդականների համար։ Ամեն մի մահմեդական կրոնական պարտականություն ունի, եթե նրա նյութական կարողությունը հասնում է այնքան դումարի, որ կկրացնեն ուխտագնացության ծախքը, պետք է իր կյանքում գոնե մի անգամ գնա Մեքքա և Մեդինա, համբուրի Մուհամմեդի գերեզմանը և «հաջի» դառնա։ Մի այդպիսի պարտավորություն դրվեցավ և հայերի վրա։ Աշխարհի ամեն կողմերից ուխտավորների ահագին բազմություն դիմում էին դեպի Երուսաղեմ՝ Փրկչի գերեզմանը համբուրելու համար, այն Փրկչի, որ 1881 տարի առաջ համբարձավ երկինքը և բազմեցավ Հոր Աստուծո աջ կողմը։

Հայոց ուխտավորները, որպես նշան ուխտագնացության, դրոշմում էին իրանց ձեռքերը, բազուկները վանքի կնիքով, որի կապտագույն տպավորությունը մնում էր անջնջելի։ Նրանք ստանում էին մի նոր, սըր-

բաղան մակնանուն, կոչվում էին մուղդուսի*։ Նրանք սահմանում էին վանքի պատրիարքից օրհնության կոնդակներ, որոնց մեջ նշանակված էր լինում, թե որքան փող ընծայից վանքին յուրաքանչյուր «մուղդուսին» իր հոգու փրկության համար։ Իսկ թե որքա՞ն ահագին գումարներ էին դուրս քաշում հայոց ազգի քսակից այդ օրհնության կոնդակները, բավական է հիշել միայն այն հանգամանքը, որ ուխտավորների թիվը յուրաքանչյուր տարի հասնում է հազարների։ Այլևս չեմ խոսում այն ծախքերի վրա, որ ամեն մի ուխտավոր պիտի աներ հետևյալ երուսաղեմ հասնելու համար։

Բացի նախապաշարմունքը, բացի ժողովրդի մեջ սովորական դարձած անհամեմատությունը, ուխտավորներին հրապուրում էր այնտեղ և մի հրաշք, որ կատարվում էր յուրաքանչյուր տարի սուրբ Հարության օրում։ Պատարագի ժամանակ հանկարծ երկնքից լույս էր իջնում, և սաճարի բոլոր մոմերը առանց կրակի վառվում էին, և այդ կարող էր տեսնել ամեն մի «մուղդուսի», եթե հավատ ուներ։

Թեև այժմ «մուղդուսիների» դարը մասամբ անցել է, բայց եղել են ժամանակներ, որ ժողովրդի մեջ նախանձում էին, ղվվելի էին համարվում այն անձինքը, որոնց կարողությունը ներում էր, բայց դեռ երուսաղեմ ուխտ չէին գնացած։ Այսպիսիներին համարում էին ժլատ, ագահ և սատանայից կապված։ Որի ընդհակառակը, ժողովրդի մեջ մեծ հարգանք էին վայելում «մուղդուսինները», նրանց երուսաղեմի կնիքով դրոշմված աջը համբուրվում էր քահանաների օծյալ աջի հավասար։

Ես ծողնում եմ երուսաղեմի վանքի կրոնական նշանակությունը, նայում եմ այդ վանքի և հիշյալ ուխտագնացությունների վրա բուն տնտեսական կետից։

Ինձ մի անգամ պատահեց խոսել մի եվրոպացու հետ, որը երկար ժամանակ ապրել էր Պարսկաստանում և խիստ խորին կերպով ուսումնասիրել էր երկրի անտեսական և առևտրական դրությունը։ Եվրոպացին սաստիկ զանգատվում էր, թե Պարսկաստանում փող չէ մնացել, ժողովուրդը չափազանց աղքատության մեջ է, եթե այսպես շարունակվի, ամեն մի վաճառականություն կդադարի այնտեղ։ Ես հարցրի դրամի բացակայության պատճառը։ Նա ասաց, թե Պարսկաստանից դուրս գնացած տեղային արդյունաբերության և նրա փոխարեն արտասահմանից ստացված մթերքների համեմատական կշիռի մեջ մի նշանավոր տարբերություն չկա, այնպես որ, դրսից ստացված մթերքները չէին կարող սպառել երկրի արծաթն ու ոսկին։

---

* Մուղդուսի մուղդադաս բառից է, նշանակում է սուրբ, մաքրված։

— Ապա ի՞նչն է ապրուստ երկրի դրամը,— հարցրի նա։

— Ուխտադնացությունը,— պատասխանեց նա։— Ուխտավորները ամեն տարի տանում են երկրի հարստությունը Մեքքա, Մեդինա, Բաղդադ, այնտեղ ծախսում են, իսկ փոխարենը բերում են «հաջի» և «քյալբալաչի» անուններդ միայն։ Դա անտեսական մի մեծ հաշվածք է,— ավելացրեց նա,— այս ուխտադնացությունները ամեն տարի միլիոններ են կլանում,— և ցույց տվեց ինձ թվանշաններ իր նկատողությունները հաստատելու համար*։

Ես ոչինչ չունեմ ասելու եվրոպացու նկատողությունների դեմ, բայց նրան մեկը ինձանից հարցնելու լիներ, թե ի՞նչ է եղել հայերի աղքատության պատճառը, ես կպատասխաններ, թե մեկը, և ամենանշանավորը եղել է Երուսաղեմի ուխտադնացությունը։

Բայց չնայելով, որ դարերի ընթացքում հայոց բարեպաշտ ժողովուրդը իր հարստությունը թափել է Երուսաղեմի վանքում, այդ վանքը գարձյալ իրան միշտ աղքատ է ձևացրել և միշտ պիտի է ազգի օգնության իր պարտքերը վճարելու համար։ Ով որ ուշի ուշով ուսումնասիրել է Երուսաղեմի պատմությունը, կգտնի այդ մասին շատ փաստեր։ Ես կհիշեմ մի քանիսը միայն։ Բայց զարմանալին այն է, որ միևնույն ժամանակ այնտեղ թաքցրած են եղել ահագին գանձեր։

Երուսաղեմի Ասատածատուր պատրիարքի օրերում, հույն կղերը կաշառելով սուլթանի բոյինի-էյրի (ծուլիդ) մուհամմեդ փաշա անունով վեզիրին, խլեցին հայ աբեղաններից ձեռքից Երուսաղեմի ուխտատեղիները, որոնց թվում և սուրբ Հակոբա վանքը։ Այդ միջոցին հիշյալ Ասատածատուր պատրիարքը ստիպվեցավ գնալ Կ. Պոլիս, դիմել ազգի օգնությանը, որ գրամով և գործով օժանդակեն իրան, որպեսզի ինքն ևս հույների նման կաշառքներ տալով կարողանա հետ խլել նրանց ձեռքից հայոց սրբավայրերը։ Նա գիգերում էր հայոց իշխաններին, հարուստներին և ակնհայտների դռները և հանգանակություն էր հավաքում։ Այդ միջոցին նա անթափոչի եղիազար վարդապետին Կ. Պոլսից ուղարկեց Երուսաղեմ որպես իր փոխանորդ, մինչև ինքը ստրաքաղաքում կկարգադրեր գործերը։ Եղիազարը գալով Երուսաղեմ, վանքը գտնում է սաստիկ աղքատության մեջ և դրամի կարոտ։ Ճարպիկ եղիազարը քրքրում է պատրիարքի թղթերը (նույն պատրիարքի, որ Կ. Պոլսում ազգից օժանդակություն

---

* Մեքքայի շերիֆը մի թագավորի գանձ ունի. վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ սուլթանը դրամի կարոտություն կրելով, մտածեց դիմել շերիֆին, նրա հարստության մի մասը փոխ առնելու համար։

ել խնդրում) և գտնում է մի տումարի մեջ գրված. «Ըսպիտակ մոմ՝ այսքան, դեղին մոմ՝ այսքան»։ Տեղյակ լինելով վանականների սովորական խորամանկություններին, նա խնդրեց հասկանում է այդ հաշվի գաղտնիքը և սկսում է որոնել «մոմերը»։ Ի՞նչ է դուրս գալիս։ Պատրիարքի կացարանի մեջ գտնում է երկու պղնձե «թաղուչկներ» (փոքրիկ կարաս), մեկի մեջ լցված «դեղին մոմի» փոխարեն դեղին ոսկի, իսկ մյուսի մեջ՝ «սպիտակ մոմի» փոխարեն սպիտակ արծաթ, բոլորը երկու հարյուր հազար դահեկանի արժեք ունեցող։

Երուսաղեմի պատրիարքության հիմքը դրեց Սարգիս եպիսկոպոսը 1311 թվին, Կիլիկիայի կրոնական երկպառակությունների ժամանակ։ Նա ապաստանեցավ Ռուբինյան Օշին թագավորի և Սսի Կաթողիկոսին կաթողիկոսի դեմ, և Եգիպտոսի մահմեդական ամիրից հրավարտակ առնելով, սկսեց թագավորից և կաթողիկոսից անկախ իշխել Երուսաղեմում։ Եվ համաբայ այն օրից սկսվում է մի շարունակ կռիվ Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունների մեջ մի կողմից, իսկ Երուսաղեմի և մյուս կաթողիկոսարանների մեջ՝ մյուս կողմից։ Այդ կռիվները զարերով տակնուվրա են արել ազգը, պատճառել են նրան աճապին բարոյական և նյութական վնասներ և զբաղեցրել են ժողովրդին անհաշտ երկպառակություններով։ Պատրիարքները, կաթողիկոսները իրանց փառասիրությունը և ընչաքաղցությունը հագեցնելու համար հափշտակում էին միմյանցից աթոռներ, կռվում էին միմյանց հետ, իսկ ժողովուրդը մեջտեղում մաշվում էր։ Պատերազմական ծախքերը, որ տրվում էին սուլթաններին ու մահմեդական պաշտոնյաներին որպես կաշառք, ժողովրդին էին տուժել տալիս, իհարկե, եկեղեցական հանգանակության անունով։

Ես կհիշեմ մի ազգասալի անցք, որ պատահեց Քյոփրուլու Մուհամեդ կոչված մեծ վեզիրի օրերում։ Այդ այն ժամանակն էր, երբ Կ. Պոլսի հունաց Բարթենիոս պատրիարքը դատապարտվեցավ իբրև Բուրքաց կառավարության դավաճան և իր պատրիարքական զգեստով կախաղանի վրա բարձրացավ Բարմախ-կափու կոչված տեղում։

Այդ միջոցին Կ. Պոլսի հայոց պատրիարքի ընտրության համար մեծ խռովություն կար ժողովրդի մեջ։ Բերիացի փառասեր Թոմաս վարդապետը աշխատում էր պատրիարք լինել, ժողովուրդը չէր ընդունում։ Նրա հակառակորդները դիմեցին մեծ վեզիրին, խոստացան վճարել յուրաքանչյուր տարի 140 000 սահակ*, միայն թե Թոմասը պատրիարք չլինի,

---

* Բ. Դուռը մինչև այսօր մի որոշ տուրք է ստանում պատրիարքից նրա ընտրության բերրաթը հաստատելու համար։

այլ թույլ տրվի ընտրել իրանց ցանկացած անձին։ Այդ երբ տեսավ Թոմասը, ինքը նույնպես դիմեց մեծ վեզիրի մոտ, խոստացավ վճարել յուրաքանչյուր տարի 400.000 ստակ, որ Բ. Դուռը իրան հաստատի Կ. Պոլսի պատրիարք, այն նոր իրավասությամբ, որ Երուսաղեմի պատրիարքն ևս ենթարկվի իր իշխանությանը։ Դումարի խոշորությունը հրապուրեց մեծ վեզիրին՝ մերժել ժողովրդի պահանջը և Թոմասին սուլթանի բերրաթով հաստատել Կ. Պոլսի պատրիարք, այլև Երուսաղեմի պատրիարքի վրա գերիշխանություն շնորհել։ Թոմասը իր կաշառքով գրաված աթոռը պահպանելու համար շրջապատեց իր պատրիարքարանը մի խումբ թուրք զինվորներով, որոնց թոշակը ինքն էր տալիս, ամեն օր 20 քսակ արծաթ։

Թոմասի մի այսպիսի բռնակալությունը գրգռեց ժողովրդի բարկությունը մի կողմից և Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքի նախանձը՝ մյուս կողմից, երբ վերջինս տեսավ, որ Թոմասը սուլթանի հրամանով իր վրա գերիշխանություն ունեցավ։ (Դա մեր վերև հիշած միևնույն Աստվածատուր պատրիարքն էր, որ երկու պղնձե բակուկինների մեջ մոմի անունով թաքցրել էր ոսկին ու արծաթը)։ Դա միաբանվեցավ Թոմասի հակառակորդների հետ, թուղթ գրեցին, ստորագրեցին, երդվեցան, ուխտ դրին, որ ամեն միջոցներ գործ դնեն Թոմասին ոչնչացնելու համար։ Կաշառքները չօգնեցին, որովհետև որքան դրանք էին տալիս, Թոմասը կրկնապատիկ ավելի էր տալիս։ Մտածեցին մատնել Թոմասին, ամբաստանելով նրան որպես քաղաքական հանցավոր, իբր թե նա «ֆրանկների» հետ գաղտնի հարաբերություններ ունի, ապրության դեմ որոգայթներ է լարում և այլն։ Մատնությունը հասցրեց նրանց ցանկացած նպատակին, և որովհետև հունաց պատրիարքի անցքը դեռ նոր էր, կառավարությունը Թոմասին կալանավորեց և դրեց մահապարտների բանտը։

Այդ միջոցին Թոմասի կուսակիցները հուսահատ կերպով թուրքաց պաշտոնատարների դռներում դեգերում էին, ահագին դումարներ էին ծախսում, որ մի կերպով ազատեն նրան։ Բայց Թոմասի հակառակորդները ավելի ճարպիկ գտնվեցան։ Նրանք կաշառեցին մեծ վեզիրի փոխանորդ Սինան փաշային և նրա գիտությամբ, բանտի պահապանների ձեռքով, սուրճի մեջ թույն խառնելով, սպանեցին Թոմասին։ Պատրիարքի մարմինը մի քանի օր մնաց անթաղ, բանտի դռան հրապարակի վրա ընկած, հետո ձգեցին ծովը։

Դրանով չվերջացավ խռովությունը։ Երկար ժամանակ Թոմասի կուսակիցների և նրա հակառակորդների մեջ կռիվը շարունակվում էր։ Վերջիններից շատերը բանտարկվեցան որպես մարդասպաններ։ Անդադար

մինը մյուսին ամբաստանելով, կալանավորել էր տալիս, և այդ ավելի շահավետ էր Թուրք պաշտոնատերերին, որովհետև ամեն անգամ ահագին տուգանքներ ու կաշառքներ էին ստանում։

Դեռ հիշյալ երկպառակությունները չէին վերջացած, կռիվը ընկավ Թոմասի հակառակորդների և Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքի մեջ։ Նրանից պահանջում էին վճարել այն ծախքերի մի մասը, որ գործ էին դրել Թոմասի սպանության համար։ Պատրիարքը չէր ուզում վճարել, թեև ինքը եղեռնագործության պարագլուխներից մեկն էր և իր կնիքն ու սուրբգրությունը դրել էր այն թղթի վրա, որով ուխտել էին Թոմասին սպանելու։ Պատրիարքը կամենում էր սպանության իր մաս ծախքը բաժանել Կ. Պոլսի հինգ եկեղեցիների վրա, որ ժողովուրդը վճարե։ Նրանք պատասխանում էին. «Մենք ինչո՞վ ենք մեղավոր, դու մի պատրիարք ես սպանել տվել քո շահերի համար, գնա ինքդ տուժիր ծախքերը»։ Ժողովրդի խոսքը իրավացի էր։ Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքը սպանել տվից Թոմասին գլխավորապես այն պատճառով, որ նա սուլթանի հրամանով գերիշխանություն էր սաացել Երուսաղեմի պատրիարքի վրա։ Այդ խռովությունների պատճառով մի քանի տարի հուզման մեջ էր Կ. Պոլսի հայ հասարակությունը։ Հակառակությունը օրըստօրի սաստկանում էր. յուրաքանչյուր կողմը կաշառքով գրավում էր Թուրքաց պաշտոնատարներին դեպի ինքը, հակառակորդին նկուն անելու համար։ Երբեմն մի կողմն, երբեմն մյուս կողմի մարդիկը բանտ էին գրվում, իհարկե, ազատվում էին գործ դյալ կաշառքով։ Կռիվը հանդարտվեցավ այն ժամանակ, երբ Երուսաղեմի պատրիարքը վերջապես հանձն առից վճարել իր մասը, որ գործ էր դրված Թոմասի սպանության համար։

Վերոհիշյալ աղետալի պատմությունը մի փոքրիկ կաոր է միայն Երուսաղեմի վանքի ընդարձակ պատմությունից, որ բովանդակում է իր մեջ շատ այդպիսի և դրա նման անցքեր, որ կարդացողի վրա սարսափ են ձգում։ Անկարելի է երևակայել, թե ի՞նչ սրտի, ի՞նչ հոգու տեր են եղել այդ մարդիկը, որ Հիսուս Քրիստոսի հավիրական տեղերի անունով ահագին գումարներ էին հավաքում ազգից, լցնում էին մահմեդական պաշտոնակալների քսակները, մինը մյուսի ձեռքից Երուսաղեմի պատրիարքության աթոռը կորզելու համար, իսկ վանքը թողնում էին աղքատության մեջ, կրկին դիմում էին ազգին, որ նրա պարտքերը վճարե։ Այդ մասին բավական է կարդալ մեր վերև հիշած եղիազար անթափյու պատմությունը, որը երկու պղնձե թակույկների մեջ գտավ Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքի թաքցրած դանձը։ Այդ գումարը նա ծախսից նույն իսկ Աստվածատուր պատրիարքին (Թոմասի սպանել տվողին) աթո-

ոից ձգելու, և ինքը նրա տեղ պատրիարք դարձավ։ Դրանով չբավակա-
նացավ Սղիազարը։ Նա ահագին կաշառքներ տալով սուլթանի մեծ վեզի-
րին, կաթողիկոս ընտրվեցավ, նստեց Երուսաղեմում, հակառակ Սսի և
Էջմիածնի կաթողիկոսարանների։ Պետք է ի նկատի առնել, որ Սղիազարի
այդ փառասիրական վարմունքը բոլորովին ընդդեմ էր մեր եկեղեցու
վարչության հնավանդ սովորություններին, որովհետև Երուսաղեմում
միայն պատրիարքներ կարող էին իշխել և ոչ կաթողիկոսներ։

Երբեմն Երուսաղեմի վանքում այն աստիճան անիշխանություն էր
տիրում, որ իրանք միաբանները կամ նրա կառավարիչները սկսում էին
անխնա կերպով ամեն ինչ վատնել։ Ես օրինակ կբերեմ մի անցք, որ
տեղի ունեցավ Գրիգոր պատրիարքի օրերում։ Այդ ժամանակ անկար-
գությունը իր վերին ծայրին էր հասել, վանքի արծաթեղենները, սրբազան
անոթները, խաչերը, սրբոց մասունքները, բոլորը վաճառվում էին ան-
բարոյական, շռայլ միաբանության ծախքերը լցուցանելու համար։ Երբ
ամեն ինչ սպառվեցավ, սկսեցին ահագին տոկոսներով պարտքեր անել
և Երուսաղեմի Նվիրական տեղերը, մինչև անգամ սուրբ Հակոբա վանքը,
մահմեդականների մոտ գրավ դնել։ Պարտքերը այն աստիճան աճեցին, որ
հասան 800 «քսակ» ոսկու։ Մահմեդականները կամենում էին վաճառել
հայոց սրբավայրերը, որ իրանց տված փողը ստանան։ Հույն աբեղա-
ները լավ մուշտարի էին հայոց տեղերը ջնելու համար։ Այդ միջոցին
նույն ժամանակվա Երուսաղեմի Գրիգոր պատրիարքը, որ կոչվեցավ
«շղթայակիր» (դինճիրլի), պարանոցին երկաթե հաստ շղթա ձգելով և
երկաթե կողպիքով կողպելով, կանգնած էր Կ. Պոլսի եկեղեցիների դրա-
նների առջև և արտասուքը աչքերում ազաղակում էր ժողովրդին. «Ազա-
տեցե՛ք, ազատեցե՛ք, Երուսաղեմը գերության մեջ է»։ Այդ շղթան նա
ամբողջ ութ տարի կրում էր իր պարանոցին, մինչև կարողացավ հայոց
բարեպաշտ ժողովրդից հավաքել 800 «քսակ» ոսկին, վճարել մահմե-
դականների պարտքերը, ազատել Երուսաղեմը գերությունից...

Այսպիսի օրինակներ շատ անդամ են պատահել. Երուսաղեմը պարտ-
քի տակ է ընկել, ազգը նրա պարտքերը վճարել է, կրկին պարտքի տակ
է ընկել, կրկին վճարել է, և այդ անտանելի դրությունը շարունակվել է
մինչև մեր օրերը։ Բայց եթե այդ պարտքերի բուն արմատը քննելու լի-
նես, կտեսնես, որ ծայրը հասնում է մինչև այս և այն արևդայի դրպանը։
Իսկ այդ բոլորի փոխարեն ես գոնե չեմ տեսնում մի ամենաչնչին բա-
րիք, որ այդ վանքը հայոց ազգին մատուցած լինի։

Երուսաղեմի վանքը եղել է և է հայերի համար երկպառակության
աղբյուր, մի տեսակ կռվի բույն, որտեղից խռովությունները երբեք

պակաս չեն եղել։ Եվ ես այդ շատ բնական եմ համարում։ Ի՞նչ կնշանակե Հայաստանի հողից դուրս, Հրեաստանի մի քաղաքում, ուր ոչ մի հայ ընտանիք չկա, պահպանել վանք, վանական միաբանություն, այլև մի ամբողջ պատրիարքարան։ Իսկ նրանից մի քանի քայլ հեռու գտնվում է Սսի կաթողիկոսարանը, Կ. Պոլսի պատրիարքարանը, Աղթամարա կաթողիկոսարանը և զանազան վանքեր ու կրոնական միաբանություններ։ Հայտնի բան է, որ դրանց մեջ կռիվներ կծագեին իշխանության և շահերի միմյանց հետ ընդհարումների պատճառով։

Բավական չէր իրանց մեջ ունեցած կռիվները, որոնք ազգի համար խիստ թանկ էին նստում, Երուսաղեմի հայոց վանքի միաբանությունը, համարյա այդ վանքի հիմնված օրից մինչև մեր ժամանակը, անընդհատ կռիվներ է ունեցել հույն և լատին կրոնավորների հետ։ Համարյա ամեն տարի սուրբ Հարության տոնի օրում աբեղաները միմյանց գլուխը ջարդել են, և նրանց հետ խառնվել են երկու կողմերի դավանություններին պատկանող ուխտավորները։ Ամեն անգամ, երբ ուխտավորը վերադառնում է, առաջին հարցը, որ առաջարկում են նրան, այդ է լինում. «Այս տարի կռիվը ինչպե՞ս վերջացավ»։ Եվ կռիվը ինչի՞ց էր ծագում. հայերը կամենում են առաջ իրանք պատարագել, իսկ հույները արգելում են, նույնը հույներն են կամենում, հայերը արգելում են, կամ մինը աշխատում է մյուսի տոնը խանգարել, և այլ այսպիսի պատճառներ։ Եվ այդ բոլորը կատարվել է սեր և խաղաղություն քարոզող փրկչի գերեզմանի վրա։

Թուրքաց կառավարությունը միշտ ներողամիտ աչքով է նայել այդ անկարգությունների վրա, և, չնայելով դարավոր բողոքներին, մինչև այսօր Երուսաղեմի մեջ գտնված զանազան դավանության պատկանող կրոնական միաբանությունների վեճերին մի վերջնական որոշում չէ տվել, որպեսզի նրանց մեջ անբավականության առիթ չմնար։ Եվ այդ պահանջում էր նույն իսկ կառավարության շահը. նախ այն պատճառով, որ հաշտություն քրիստոնյա հպատակների մեջ նրան շատ օգտավետ չէր կարող լինել, երկրորդ, կառավարության պաշտոնակալները մեծ շահեր էին ստանում հիշյալ կռիվներից։ Երուսաղեմի հայոց պատրիարք Գրիգոր Մ՛ոկացու օրերում մի անգամ «ծուղատիկ» պատահեց, այսինքն՝ զատկի խառնում եղավ. հայերը պետք է հույներից մի օրով առաջ կատարեին զատկի տոնը, հույները կաշառք տալով տեղային փաշային, արգելեցին։ Այդ տեսնելով, հայոց պատրիարքը ստիպվեցավ 20 հազար դահեկան կաշառք տալ նույն փաշային, որ թույլ տրվի զատկի տոնը հայոց տոնացույցի համեմատ կատարել։

Թողնենք անցյալը, թողնենք պատմությունը, եթե կարդալու լինենք մեզ մոտ ժամանակների Կ. Պոլսի հայոց պարբերական թերթերը, նրանց մեջ կգտնենք հարյուրավոր օրինակներ այն սարսափելի երկպառակությունների, որ կատարվել են Երուսաղեմի վանքում։ Իսկ այդ անվերջանալի կռիվները, այդ երկպառակությունները մեզ համար շատ բանկ են նստել, մենք թողել ենք մեր բուն ազգային հոգսերը, սկսել ենք մտածել Երուսաղեմի վանքի վրա, մենք վատնել ենք մեր արծաթը, որի յուրաքանչյուր կոպեկը խիստ մեծ արժեք ունի մեր ազգային ավելի անհրաժեշտ պետքերի համար։ Կ. Պոլսի պատրիարքարանը, Կ. Պոլսի մեր ազգայինները տարիներով զբաղված են եղել և այժմ զբաղվում են Երուսաղեմի վանքով։ Բայց ի՞նչ տվեց այդ վանքը մեզ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 27 ապրիլի

Շատերը անհամբերությամբ հարցնում են, թե ինչու է հետաձգվում «Կայծերի» տպագրությունը, արդյոք այդ վեպը տպվելո՞ւ է, թե ոչ։

Այդ անհամբերությունը ես բոլորովին իրավացի եմ գտնում, առավել այն պատվելի պարոնների կողմից, որոնք «Կայծերին» բաժանորդ են գրվել, և որոնցից ես փող եմ ստացել։

Բայց «Կայծերի» տպագրության մինչև այսօր ուշանալու պատճառը ոչ իմ ծուլությունն է եղել և ոչ մի այլ նպատակ... կային պատճառներ, որոնց ես հրապարակավ անհարմար եմ համարում բացատրել... իսկ գլխավորն այն էր, որ այդ վեպը ես կամեցա բաժանորդագրությամբ տպագրել։

Շատ հասկանալի է, երբ մի հեղինակ դիմում է հասարակությանը և նրանից կանխիկ փող է խնդրում, որ փոխարենը գիրք տա, պետք է հավաքված դումարը գոնե այն քանակությանը հասնի, որ ծածկի տպագրության ծախքը։ Բայց դժբախտաբար այդ չհաջողվեցավ ինձ. ես չստացա այնքան բաժանորդներ, որքան սպասում էի, իսկ սակավաթիվ բաժանորդներից գոյացած դումարը թղթի ծախքն անգամ չէր բավականացնում։

Մեզ պետք է մեր հասարակության սառնասրտությունը և ցանկություն չունեմ, քանի որ ընթերցանությունը մեր մեջ դեռևս պահանջ չէ դարձել, քանի որ կոշկակարի արդյունաբերությունը շահ է տալիս, իսկ գրական վաստակը դժբախտացնում է գրողին...

Այսուամենայնիվ, իմ սակավաթիվ բաժանորդներին երկար սպասել չտալու համար, ես կաշխատեմ որքան կարելի է շուտով տպագրել «Կայ-

ծերը»։ Ծախքերի պակասը կլրացնեմ պայքերով։ Վեպի բնագիրը արդեն հանձնված է ցենզորին. թույլտվություն ստացածին պես կսկսվի տպագրությունը։

Նվ որովհետև ինձ շատ դժվար էր միևնույն ժամանակ տպագրել թե «Կայծերը» և թե «Դավիթ Բեկի» վերջին հատորը, այդ պատճառով ստիպված եղա «Դավիթ Բեկի» շարունակությունը առժամանակ ընդհատել «Մշակի» մեջ, մինչև «Կայծերի» լույս տեսնելը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 30 հունվարի

«Մեղուի» № 7 առաջնորդող հոդվածի մեջ պ. Սպանդարյանը[1], կամենալով ցույց տալ, որ «Մշակը» ոչ միայն հակառակ է եղել «Մեղուի» հորիզյանի կատարվելուն, այլև «մինչև անգամ աշխատել է խափանել նրան», ի թիվս այլոց ավելացնում է.

«Մշակը» մոռացավ, որ պպ. Բարխուդարյանի, Պուշչյանի, Բաֆֆիի, Աղայանի և ուրիշների հորիզյանները[2] առաջարկելով՝ ակամա մեծացնում է ավելի «Մեղուի» հորիզյանի նշանակությունը, որովհետև դրանց ամենքին միասին իրենց մտքերով և իրենց ձգտումներով ընդհանրապես առած ամփոփում է իր մեջ «Մեղուն»։

Հիշյալ միտքը ավելի այլաբանական ձևով կազմակերպելով, պ. Սպանդարյանը շարունակում է.

«Եթե այդ (այսինքն՝ Բարխուդարյանը, Պուշչյանը և մյուսները) և դրանց նման գործողները մի որոշ տարիներում կարող են ժամացույցի մեջ ժամանակի նշանները լինել, «Մեղուն» ինքը ժամացույցն է և սլաքը, որ այդ նշանների վրա պտույտ է անում»։

Այդ տողերը հիշեցնում են Ղորանի այն տեղերը, ուր Մուհամմեդը, կամենալով ապացուցել իր բարոզած նոր վարդապետության ճշմարտությունը, աշխատում է ցույց տալ, որ բոլոր ժամանակների հայտնի մարդիկ համեմատած են եղել իր մտքերի հետ և մուսուլմաններ են եղել։ Մուհամմեդի ասելով, թե Սողոմոն Իմաստունը, թե Աբրահամն ելն ու Պղատոնը և թե մինչև անգամ Աղեքսանդր Մակեդոնացին, բոլորը մուսուլմաններ են եղել։ Ինչպես, պ. Սպանդարյանի ասելով, Բարխուդարյանը, Աղայանը, Բաֆֆին, միով բանիվ, մեր ժամանակի բոլոր հայ գործիչները

մեղվակաճեր են, «որովհետև դրանց ամենքին միասին իրենց մտքերովը և ձգտումներովը ընդհանրապես առած ամփոփում է իր մեջ «Մեղուն»։ Որովհետև «Մեղուն» ժամացույցն ու ալարն է, իսկ մնացած գործիչները նրա ժամանակը որոշող նշաններն են։ Եվ բոլորը միասին վեր առած կազմում են մի ամբողջություն։

Թե ի՞նչ կպատասխանեն պպ. Աղայանց, Բարխուդարյանց և Պռոշյանց, այդ իրենց գործն է։ Իսկ իմ մասին հայտնում եմ, որ ես կատարյալ անպատվություն կհամարեմ «Մեղուի» ժամացույցի սլաքի ներքո ժամանակ որոշող նշաններից մեկը լինել։ Ես երբեք համերաշխ, համամիտ, համակամ չեմ եղել «Մեղուի» հետ և բնավ լինելու չեմ, քանի որ նա իր ուղղությունը չի փոխել։ Ես «Մեղուի» հոբելյանի առնախմբությունը համարում եմ մի բիծ հայոց գրականության պատմության մեջ, որը երբեք չի սրբվի։

Դուցի պ. Սպանդարյանին այն է ասիլ ավել մտածելու, թե ես համերաշխ եմ «Մեղուի» հետ, որ մենք մեր մասնավոր խոսակցություններում մեջ, շատ հարցերում, շատ անգամ համաձայնվել ենք միմյանց հետ։ Բայց եթե պ. Սպանդարյանը նույն մտքերը գրի առներ և առաջարկեր «Մեղուի» պ. խմբագրին տպելու համար, ես հավատացած եմ, որ պ. Սիմոնյանցը իր խմբագրական կարմիր մատիտով կքաշեր երկու խաչաձև գծեր նրա հոդվածի վրա և կձգեր զամբյուղի մեջ։

Ինքը՝ «Մեղուի» պ. խմբագիրը, շատ լավ գիտե, որ իմ և իր լրագրի մեջ ոչինչ առնչություն չկա, ուրեմն և մտքերի ու զաղափարների համերաշխություն լինել նույնպես աներևակայելի է։ «Մեղուի» պ. խմբագիրը գիտե, որ ես «Մշակի» զաղափարների ամենամոլեռանդ քարոզիչներից մեկն եմ, և պ. Սիմոնյանցը մի քանի տարի առաջ, կամենալով բացատրել իմ հարաբերությունները այդ լրագրի հետ, բավական հաջողակ կերպով արտահայտեց իր կարծիքը իմ մասին մի հայկական առածով, թե «կճուճը գլորվեցավ, իր խուփը գտավ...»։ Նրա կարծիքով ես կճուճն էի, իսկ «Մշակը»՝ իմ խուփը։

Այժմ ի՞նչ հրաշքով պ. Սպանդարյանը միևնույն ամանի մեջ դնում է «Մեղուի» ամբողջ մտքերը...

Պ. Սպանդարյանին պետք է լավ հայտնի լինի, որ «Մշակի» մեջ և «Մշակի» դրոշին պատկանող մեկը չէ կարող «Մեղուի» հետ համերաշխ լինել, և ոչ «Մեղուն» «Մշակի» մեջ գրողին կարող է իր բարեկամ կամ համամիտ համարել։ Այլ ընդհակառակն, «Մեղուն» միշտ աշխատել է հալածել, հարվածել «Մշակի» կուսակիցներին, այդ պետք է պ. Սպանդարյանին լավ հայտնի լիներ։ Հիշում եմ, պ. Սպանդարյանին, որով-

Հետև նա ինքը շատ անգամ փորձել է «Մեղուի» հարվածներն իր անձի վրա, այն ժամանակ, երբ ինքը նույնպես «Մշակի» կուսակցությանն էր պատկանում և «Մշակի» մեջ էր գրում։ Դուցե նա այժմ մոռացել է այդ ապտակները, բայց հետքերը մինչև այսօր էլ մնում են...

Մի բան, որի մեջ հաջորդաբար է վարվել Նաճիճևամյա «Մեղուն», մի բան, որի մեջ բնավ չի շեղվել նա իր ուղղությունից, այդ այն է, որ «Մեղուն» միշտ հալածել է, միշտ հարվածել է իր ժամանակում հայտնված փոքրիշատե արտակարգ ուժերին (որոնց գաղափարների ամփոփումն է այժմ ձևացնում իրեն)։ «Մեղուն» աշխատել է մինչև անգամ բարոյապես մեղադրել նրանց, որ ինքը բարձրանա նրանց դիակների կույտի վրա, բայց միշտ ինքը ցած է գլորվում։ Նա հալածել է Նազարյանցին, Նալբանդյանցին, Այվազովսկուն[3]։ Նա հալածել է և ինձ։ Նա աշխատել է ԲԵ իմ գրական վաստակները և ԲԵ իմ անձնավորությունը միշտ սև գույնով ներկայացնել հայ հասարակությանը։

Կբերեմ շատ փաստերից մի քանիսը միայն.

Ես գրեցի «Հայ հրեատարդությունը», «Մեղուն» իր հատուկ քաղաքավարությամբ ինձ կոչեց «Յուդուշկի»։

Ես գրեցի «Հայ կինը», «Մեղուն» իր անմաքուր մատներով սկսեց շոշափել իմ ընտանեկան կյանքը։

Ես գրեցի «Ջալալեդդինը» և «Դավիթ Բեկը», «Մեղուն» սկսեց ինձ ցույց տալ որպես խռովարար։

Ես գրեցի «Քրդական մուրյունը», «Մեղուն» աշխատեց ապացուցել, որ քրդերը ավելի բարձր ազգ են, քան ԲԵ հայերը։

Ես գրեցի «Ի՞նչ կապ կա մեր և Թուրքիայի հայերի մեջ» հոդվածը, «Մեղուն» ինձ հրատարակից որպես բողոքական։

Դեռ «Խաչափողի հիշատակարանը» ապված չէր, այլ ձեռագրի մեջ կարդացվում էր զանազան շրջաններում, «Մեղուն» ինձ կոչեց «խաչափող», ա՛յն «Մեղուն», որ մինչև այսօր էլ պաշտպանում է մի անձնավորության, որը ծածուկ հալել տված խաչերը Թիֆլիսում փուլերով վաճառում էր*։

Վերջապես ես գրեցի «Խեղճը», «Մեղուն» նրա մեջ ոչ մի նոր միտք չգտավ, այլ ասաց, որ այդ աշխատությունը «Մշակի» ամբողջ տարինե-

---

* Այդ դեպքում «Մեղուն» շատ մեղադրելի չէ, որովհետև նա ուխտել է լինել Հայաստանյաց սուրբ Եկեղեցու պաշտպան և այդ պաշտպանությունը պետք է արտահայտե նրանով միայն, որ բոլոր կատարված զեղծումների մասին խոհեմությամբ լուռ, ինչպես լռություն է պահպանում Մանկունու և ընկերության կատարած քաջագործությունների վերաբերությամբ Ծան. ևեղ.։

րի հայտնած մտքերի (իհարկե վնասակար) ի մի հավաքած ամփոփումն է։ Այդ կարծիքի հետ ես համաձայն եմ։ Միայն հարցնում եմ, ինչպե՞ս կարող է «Նեների» հեղինակը, որի գիրքը «Մշակի» գաղափարների միաբանությամբ արտահայտությունն է, «Մեղուի» հետ համերաշխ լինել։ Մի՞թե «Մեղուն» համակրում է «Նեներին» երազին։

Այդ բոլորից հետո ինձ շատ զարմանալի է թվում, որ «Մեղուն» հանկարծ իր լեզուն փոխում է, և իմ մտքերը և իմ ձգտումները ընդհանուրապես առած իր մեջ ամփոփված է համարում։

«Մեղուն» մինչև անգամ այնքան նշանակություն տվից իմ վեպերին, որ եթե իմ վեպերը չտպվեին «Մշակի» մեջ, այդ լրագիրը ոչ այնքան բաժանորդներ կունենար և ոչ այդքան ընթերցողներ։ Այդ ննդոավոր կոմպլիմենտը ես համարում եմ երկպառակության խնձոր, որ նա գլորում է իմ և «Մշակի» խմբագրի մեջ։ Բայց սխալվում է...

Ինչ որ գեղեցիկ է պ. Սպանդարյանի առաջնորդող հոդվածի մեջ, դա է նրա վերջին տողերը. «Մենք կարծում ենք, որ կյանքի մեջ, ուրեմն և պարբերական մամուլում, բարեկամության ժամանակ պետք է լինել անկեղծ, իսկ հակառակության ժամանակ՝ ազնիվ»։

Եթե պ. Սպանդարյանը երաշխավոր կլինի «Մեղուի» կողմից իր քարոզած ազնվության, այն ժամանակ մենք բայ կանենք այդ քանհինգամյա լրագրի հին և նոր համարները և կքննենք, արդյոք արժի՞ր կատարել մի այսպիսի թևերի հոբելյանը, թե՝ ոչ։

ՄԱՄՈՒԼԻ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ստախոսները հիշողություն չունեն»,— ասում է մի հայանի առած։ Իսկ ես դրա վրա կավելացնեմ, որ ստախոսը իր երեկվա ասածը այսօր մոռանում է և անդադար ինքն իրան հակառակում է։

Այսպես է վարվում «Մեղու» լրագիրը, այսպես է վարվում նրա խմբագիր պ. Սիմոնյանցը։

Երբ «Մեղուի» դեմ մի լուրջ, սառն ու գրական պատշաճի բոլոր արժանավորությունները պահպանած հոդված է տպվում, երբ այդ լրագրի պ. խմբագիրը իրան նեղ տեղը ընկած է զգում, իսկույն խույս է տալիս, և փոխանակ նույնպես լուրջ կերպով պատասխանելու, թաքչում է իր թևերի գծի տակ և սկսում է այնտեղից ֆելիետոնական մասնաբություններով պատասխանել։

«Արձագանքի» մեջ տպվում է մի հոդված, որի մեջ ցույց է տրվում քսանհինգամյա «Մեղուի» քսանհինգամյա ոչնչությունը։ Բայց այդ լրագրի աղնիվ խմբագիրը, փոխանակ իր թերթը պաշտպանելու, դարձյալ ֆելիետոնական խեղկատակությամբ ակնարկներ է անում մի պարոնի վրա, թե X-ը Z-ի փողերի հետ այսպես կամ այնպես վարվեցավ։ Դա ի՞նչ է ապացուցանում։ Դրանով ոչ «Մեղուն» լավ լրագիր կհամարվի, և ոչ նրա խմբագիրը՝ փողի հաշիվներում իրան մաքուր պահող մարդ։

«Մշակի» մեջ տպվում է Ախալքալաքի նամակը, որը ներկայացնում է քսանհինգամյա «Մեղուի» կատարած տխուր գերը, որը մերկացնում է նրա այլանդակությունը և ցույց է տալիս այդ լրագրի պ. խմբագրի ուղղությունը։ Դարձյալ, փոխանակ փաստերի դեմ փաստերով պատասխանելու, հանդես է գալիս ֆելիետոնական մասխարությունը։

Այսպես է պատասխանում «Մեղուի» ֆելիետոնիստը (նույն ինքը՝ պ. Սիմոնյանցը) իմ՝ պ. Սպանդարյանի հոդվածի առթիվ գրած նամակին։

Այս տեսակ միմոսություններին առհասարակ չեն պատասխանում, որպես չեն պատասխանում մի փչացած երեխայի ստահակությանը, որին երբ խրատում են, հանդիմանում են, կամ որևիցե նկատողություն են անում նրա անկարգություններին մասին, իսկ նա փոխանակ կարմրելու, փոխանակ ղչջալու, սկսում է ավելի անամոթաբար բերանը ծռմռել և զանազան հիմարություններ ասել։ Մանկավարժների ոսկանց կարծիքով, այս տեսակներին ուղղելու համար ավելի օգնում է ոչ թե խոսքը կամ խրատը, այլ ծնծը, ապտակը...

Բայց ի՞նչ պետք է անես, մենք մի այնպիսի հասարակության մեջ ենք ապրում, ուր դժբախտաբար խիստ սակավ է այն մարդկանց թիվը, որոնք հասկանում են, թե ինչ բան է մամուլի աղնվությունը։ Իսկ մեծ մասը ամեն մի կինտոյական հայհոյանքից ոչ միայն չէ ղզվում, այլ մինչև անգամ գոլում է, գլարճանում է կարդալով և ասում է. «Տե՛ս, անպիտանը, ի՞նչ լավ քոթկել է...»։

Այս տեսակների ծաղրածության առարկա չդառնալու համար ստիպված ես պատասխանել։

Պ. Սիմոնյանցը ասում է, որ ես չեմ հասկացել պ. Սպանդարյանի հոդվածի միտքը (կարծեմ պ. Սպանդարյանը ինքը կարող է պատասխանել, արդյոք ես հասկացել եմ, թե ոչ), թե նա, այսինքն՝ պ. Սպանդարյանը, կամեցել է ասել, որ Բաֆֆին իր վեպերով երբեմն երևացող և երբեմն դադարող կետերից մեկն է, իսկ «Մեղուն» քսանհինգ տարի շա-

բունակ կանոնավորապես գործող լրագիր է, ազգային կյանքում շարունակ մշակող գործիչ է»։

Պ. Սիմոնյանը կարծում է, որ վեպը փոնչու հայց է, և կարելի է ամեն օր, քանի հատ կամենաս, թխես, ինչպես քսանհինգ տարի շարունակ թխել է նա «Մեղուի» դատարկ համարները։

Եղել են հեղինակներ, որոնք իրենց ամբողջ կյանքում, քսան-երեսուն տարի աշխատել են և միայն մի վեպ են գրել և իրենք մնացել են անմահ, և նրանց գիրքը մինչև դարերի վերջը կկարդացվի։ Իսկ եթե այսօր դպարեց «Մեղուն», հինգ օրից հետո ոչ ոքի չի հիշի, թե արդյոք եղե՞լ է այս աշխարհում մի որևիցե Սիմոնյանց, թե ոչ։ Նրա անունը կմեռնի իր թերթի հետ։

Բայց պ. Սիմոնյանցը իմ աշխատությունները վեպ չէ կոչում, այլ «հեֆիաթներ» է համարում, այն ևս ծաղրական մտքով. «Դեռևս քննելի են այդ հեքիաթները,— ասում է նա,— թե վիպասանության որ ճյուղին են պատկանում և իրոք արժանի՞ են այդ անունը կրելու»։

Իրավ է, իմ վեպերի մասին, որքան հիշում եմ, մեր պարբերական հրատարակությունների մեջ հիմնավոր կրիտիկա չէ եղել. տպվել են միայն մասնավոր նկատողություններ։ Բայց գրվել է մի ընդարձակ կրիտիկա, այն ևս «Մեղուի» մեջ տպված, կարծեմ 81 թվականում[1]։ Այդ հոդվածի մեջ կրիտիկոսը համեմատելով ինձ մեր մյուս գրողների հետ, առաջին տեղն է տալիս իմ վեպերին և հայտնում է այն միտքը, որ եթե պետք լիներ մեր գրականությունից մի բան թարգմանել և ցույց տալ օտարազգիներին, դա պետք է լինի Բաֆֆիի վեպերից և այլն։

Այս առղերը մեջ բերելով ես նպատակ չունեմ որևիցե նշանակություն տալ «Մեղուի» գովասանքներին։ Նրա գովասանքները իմ վերաբերությամբ նույն նշանակությունը ունեն, որպես նրա հայհոյանքները։ Այլ հիշեցի այն նպատակով, որ հատատեմ իմ հոդվածի սկզբում գրած առածը, թե «սատանաները հիշողություն չունեն». այսօր այս կասեն, մյուս օրը ուրիշ տեսակ կխոսեն։ Մի քանի տարի առաջ, «Մեղուի» կարծիքով, իմ վեպերը պատիվ կբերեին հայոց գրականությանը, եթե օտար լեզուներով թարգմանվեին, իսկ այժմ նույն «Մեղուի» ասելով, նրանք «հեքիաթներ» են։

Ինչո՞ւ ենք հեռու գնում։ «Մեղուի» միևնույն համարում (№ 11), ուր գծի տակ պ. Սիմոնյանցը իմ վեպերը կոչում է «հեքիաթներ», գծի վերի հարկում տպում է հետևյալ տողերը.

«Գլխավորապես «Մշակին» ամենազորավոր զարկ ավողը և տարածողը եղավ մեր ամենից հարգելի Բաֆֆին, որը իր գեղեցիկ և գողտրիկ

գրչով գրավեց իր ընթերցողների ուշադրությունը յուր մի շարք վեպերով»: Հետո հիշելով վեպերի անունները, շարունակում է. «Թող ներվի մեզ ասել, որ մեծ Բաֆֆին «Մշակը» բռնի կերպով տարածեց, իր գեղեցիկ վեպերը զետեղելով այդ լրագրի մեջ»:

Հիմա որի՞ն պետք է հավատալ, գծի վերևի գովասանքների՞ն, թե գծի տակի հայհոյանքներին: Երկուսն էլ միևնույն համարի մեջ տպված:

Դա նմանվում է այն բանին, երբ մեկը վերևից շողոքորթություններ է անում, իսկ ներքևից ոտքով ծածուկ քացի է տալիս:

Այսպիսի վարմունքի ընդունակ է միայն «Մեղուի» պ. խմբագիրը, որը գոնե այնքան պատկառանք չունի, որ համաձակվում է դարձյալ միևնույն համարի առաջնորդող հոդվածի մեջ խոսել մամուլի ազնվության վրա: Մի՞թե մամուլի ազնվություն է այդ, նույն համարի մեջ մեկին համ մինչև երկինք բարձրացնել, համ աշխատել մրոտելու նրան:

Հիմա դառնանք դեպի «խաչագողների» հարցը: Ինչպես երևում է, այդ բառը պ. Սիմոնյանցին շատ դուր է եկել, և անդադար գործ է ածում, դարձյալ միևնույն համարում:

Ես հավատացած եմ, եթե անմահ Շիլլերը և՛ «Մշակի» մեջ տպեր իր «Ավազակներ» անունով գեղեցիկ դրաման, պ. Սիմոնյանցը հեղինակին կկոչեր ավազակ, որովհետև նկարել էր մի այնպիսի սարսափելի տիպ, ինչպես է Ֆրանց Մորը:

Նույնպես, եթե էժեն Սյուն հայ լիներ և հայոց լեզվով գրեր իր «Թափառական հրեան», պ. Սիմոնյանցը նրան կկոչեր կամ թափառական հրեա, կամ եզվիա, որովհետև պաշտելի հեղինակը իրան թույլ էր տվել նկարագրել եզվիտների կեղտառությունները և դուրս բերել Ռոդենի նման հրեշավոր տիպերը, մանավանդ որ հեղինակը եզվիտների հայրենիքից էր, և այդ ավելի իրավունք կտար պ. Սիմոնյանցին նրա եզվիա կոչելու:

Պ. Սիմոնյանցի լոգիկայով, ես էլ «խաչագող» եմ, որովհետև խաչագողների հայրենիքից եմ, որովհետև խաչագողների կյանքից մի վեպ եմ գրել: (Կարծես թե, ես մեղավոր եմ, որ ծնվեցա ոչ թե Փարիզում, կամ Նոր-Նախիջևանում, այլ Պարսկաստանում):

Նույն լոգիկայով Շեքսպիրը Յագո է, իսկ Գյոթեն՝ Մեֆիստոֆել:

Ես ինձ համար փառք կհամարեի և կպարծենայի դրանով, եթե իրավ (ինչպես կամենում է ցույց տալ պ. Սիմոնյանցը) ես Սավրա գյուղացի լինեի, որտեղից դուրս են եկել խաչագողները: Բայց պարոնը այստեղ էլ սուտ է խոսում, ինչպես ամեն բաներում: Իմ հայրենական բնակարանը եղել է միշտ և այժմ է Փեյաջիկը: Այնտեղ է իմ հայրենական տունը, այն-

տեղ են ապրում այժմ իմ եղբայրները, իմ մայրը, այնտեղ են իմ կալվածքները։

Կրկնում եմ, ես ինձ համար փառք կհամարեի, եթե իմ հայրը խաչագող լիներ, իսկ ես՝ խաչագողի որդի, և իմ գրչի տակից դուրս գար «Խաչագողի հիշատակարանը»։ Դա ինձ ավելի պատիվ կբերեր։ Բայց ես դժբախտություն եմ ունեցել ծնվել հարուստ և ազնվական ծնողներից։

Եթե որևիցե անձի արժանավորությունները (պ. Սիմոնյանցի լոգիկայով) չափվում են նրա ծագումով և նրա տոհմային հատկություններով, ապա ներվի ինձ փոքր-ինչ անցնել համեստության սահմանը և ասել, որ ես իմ հայրենիքում այնպիսի բարձր դիրք ունեի, որ բավական բարձր դրություն ունեցող մարդիկ իմ դռանը նոմարություն էին անում։ Ես մի ամբողջ դավառի հայ ազգաբնակության պետը և ներկայացուցիչն էի. իմ ձեռքի տակով էին անցնում ազգային բոլոր նշանավոր գործերը։ Իսկ իմ հայր Մելիք-Միրզաբեկը Թիֆլիսի պարսկահպատակ վաճառականների թաղիրջաքի էր, միշտ հարգված արքունի խալաթներով և շքանշաններով։ Մեր ազնվականության տոհմային հրովարտակները, իրենց բոլոր արտոնություններով, նորոգվեցան պարսից ներկա շահի նոր շնորհված բարձրագույն ֆիրմանով։

Ես այս բոլորին մի առանձին նշանակություն չեմ տալիս. ես ինձ այժմ բախտավոր եմ համարում, որ տխուր հանգամանքները ինձ ցած գլորեցին իմ բարձրությունից և ձգեցին մի այնպիսի ասպարեզի վրա, ուր կարող եմ գործել, աշխատել իմ ազգի ազքատ գրականությունը հարըստացնելու համար։

Կրկին դառնանք դնչի խաչագողները։ Ես այս կետի վրա պետք է փոքր-ինչ կանգնեմ, որպեսզի ցույց տամ, թե իսկապես ով է խաչագողը։

Ինքը պ. Սիմոնյանցը այսպես է բացատրում խաչագողի նշանակությունը. «Խաչագողություն է միամիտ ժողովուրդները հանուն սուտ քրիստոնեության, հանուն բարեպաշտության հարստահարելը, գողությամբ, խաբեբայությամբ, խարդախությամբ և այլ սրանց նման սխրագործություններով»։ (Պ. Սիմոնյանցը իմ գրած բանը ինձ է ուղում սովորեցնել)։ Հիշյալ մտքերի համեմատ ես կբերեմ մի քանի տող «Խաչագողի հիշատակարանից».

«Խաչագողը գիտե մարդկային հասարակությունների թույլ կողմերից օգուտ քաղել։ Այդ թույլ կողմերից ավելի դյուրախաբը, ավելի հեշտ հրապուրվողը կրոնական զգացմունքն է։ Խաչագողը ամենայն ճարպկությամբ հարստահարում է այդ սրբազան զգացմունքը» (Տե՛ս «Մշակ», 21)։

Կարծեմ ես և պ. Սիմոնյանցը երկուսս էլ համաձայն ենք մեր մըտքերի մեջ։

Հիմա բերենք մի քանի օրինակներ։

Խաչագողություն չէ՞, երբ մեկը 55 թվականներում[2] իրեն ներկայացնում է որպես պարագլուխ այն ռումբի, որոնք աշխատում են բողոքականություն տարածել հայերի մեջ, և որոնց վրա Թիֆլիսի փողոցներում քարեր էին գցում, իսկ երբ մեկնուն պարոնի համար գցեցին մի հայոց դպրոցի դռանը մի կտոր հաց, նա թողեց բողոքականությունը և սկսեց իրեն ձևացնել լուսավորչական եկեղեցու ջերմ պաշտպան, որովհետև վերջինը ավելի շահավետ էր։

Բերենք ուրիշ օրինակներ ևս.

Խաչագողություն չէ՞, իր ամբողջ կյանքում այս և այն հայր սուրբի հետ մասլահաթներ անել, ամեն ստորություն հանճն առնել և մինչև անգամ կավատության պաշտոն կատարել, որ կարելի լինի նրանց քսակի ծուծը ծծել։

Խաչագողություն չէ՞, իրան ձևացնել բարոյականության դաստիարակ և մի սուրբ հիմնարկություն Սուդոմ դարձնել։

Խաչագողություն չէ՞, ներելի համարել զգեստներ, խաչեր և արծաթյա անոթներ հալելը, թանգարաններ կողոպտելը և հանուն լուսավորության, հանուն կրոնի հարյուր հազարներ հավաքելը և մի օտար երկիր ուղարկելը։

Այսպիսի շատ օրինակներ կարող էի բերել ես, բայց այդքանն էլ բավական է ցույց տալու համար, որ հանուն եկեղեցու, հանուն կրոնի միամիտ ժողովրդին հարստահարելը խաչագողություն է։ Եվ ինքը պ. Սիմոնյանցը միևնույնն է ասում։

Այդ էլ մի տեսակ խաչագողություն է, անդադար բարձրաձայն գոռալ, գոչել. «Ով հայեր, սիրելի ազգ, պահպանեցեք մեր թևերը, որովհետև մենք ձեր կրոնի և եկեղեցու պաշտպանն ենք։ Մենք պահպանում ենք ձեր հավատը Ամիրխանյանցի որոգայթներից[3]։ Եթե մենք ձեզանից 10 ռուբլի կառնենք և մեր թևերի ճակատին կգրենք «ամենօրյա» վերնագիրը, իսկ հետո ձեզ կխաբենք և շաբաթը երեք անգամ կտանք մեր թևերը, դուք, սիրելի հայեր, դրա վրա չպիտի բարկանաք, որովհետև մենք ձեր եկեղեցու պաշտպանն ենք. եթե մենք չլինենք, Ամիրխանյանցը կքանդե ձեր եկեղեցին։ Եթե մենք ձեզանից ակչիաներով հազարներ կառնենք, բացի դրամագլխից, և դիվիդենտ կխոստանանք, իսկ հետո ձեր փողերը կխժռենք, դուք, սիրելի հայեր, այդ մասին ձայն մի հաներ, որովհետև մենք ձեր եկեղեցին պաշտպանում ենք Ամիրխանյանցի դեմ։ Երբ որ

մենք ժարքելու լինենք հոբելյանի կոմիտիան, դուք մեզ փողեր և ընծաներ ուղարկեցեք, որովհետև մենք ձեր եկեղեցին պաշտպանում ենք Ամիրխանյանցի դեմ»...

Եվ այսպես մի՛շտ Ամիրխանյանց, մի՛շտ Ամիրխանյանց, և ամեն դեպքում Ամիրխանյանցը բավական հրապուրիչ առիթ է միամիտ ժողովրդի կրոնական զգացմունքը հարստահարելու համար։

Պետք է խիստ թշվառ համարել մի եկեղեցու դրությունը, երբ նրա քանդողը կլինի Ամիրխանյանցը, իսկ պաշտպանը՝ «Մեղուն»։ Այդ կեղծավորները փարիսեցությունը հասցնում են մինչև այն աստիճանի, որ աշխատում են հավատացնել հայոց ժողովրդին, որ եկեղեցին, ամբողջ տաճարը դար աղդի հոգու, մարքի և սրտի հետ միացած եկեղեցին, իսկ զաթղիի պատառներից շինված մի տնակ է, որ կազմում են երեխաները, և եթե Ամիրխանյանցը փչելու լինի, իսկույն կքանդվի։

Այս բոլորը ինձ հիշեցնում է մի աղվեսի առակ։

Արագիլը բույն էր դրել հաստաբուն, բարձրագիտակ կաղնի ծառի վրա, որի կատարը հասել էր մինչև ամպերը։ Նա իր հոյակապ բույնի մեջ խաղաղությամբ ապրում էր և կերակրում իր ճտերին։ Հանկարծ խորամանկ աղվեսը մտածեց օգուտ քաղել արագիլի միամտությունից։ Նա ամեն օր գալիս էր թրխկացնում էր ծառի բունին և ձայն էր տալիս. «Ցած գցիր ճտերիդ մեկը, որ ես ուտեմ, դու չե՞ս իմանում, որ ես եմ պահպանում քո բույնը. ամեն օր փայտ կոտրողը գալիս է, ուզում է այս ծառը կտրել, բայց ես արգելում եմ, չեմ թողնում։ Եթե նա ծառը կտրելու լինի, քո բույնը կքանդվի, և քո ճտերը էլ կենդանի չեն մնա»։ Միամիտ արագիլը հավատում է նրա խոսքերին և ամեն օր տալիս էր իր ճտերից մի-մի հատ, որ նա ուտի, որպեսզի իր բույնը հաստատ մնա, և դրանք մնացած ճտերը ազատվեն վտանգից։ Մի անգամ օդի միջից անցնում էր թռչունների արքան՝ արծիվը։ Երբ նա լսեց աղվեսի միևնույն խոսքերը, ասաց նրան. «Տո՛, ողորմելի թշվառական, դու ի՞նչ ես, որ կարողանաս պահպանել այդ հաստատմատ կաղնին փայտ կտրողից. դու քո փորի համար ես միայն մտածում...»։ Այդ խոսքերի հետ արծիվը իր զորավոր ճանկերով հափշտակեց մերձակա բլուրից մի ժայռի կատր և վերևից նետեց խարիբայի գլխին։ Նա հոգին ավեց, ասելով. «Իմ մեղքերի համար պատժեց ինձ աստված...»։

Այսքանը բավական է խաչագողի և խաչագողության մասին։ Պ. Սիմոնյանցի գրվածքի մեջ մնում է երկու կետ, որ չեմ կարող առանց պատասխանի թողնել։

Պ. Սիմոնյանցը մութ կերպով խոսում է ինչ-որ անցքի վրա, իբր թե մեկին թարս նատեցրել են էշի վրա, երեսին մուր են քսել, փողոցներում պատեցրել են և հետո արտաքսել են մի քաղաքից։ Հետաքրքիր կարիկատուրա է. մի այսպիսի պատկեր կարող էր ստեղծել միայն Պ. Սիմոնյանցի հիվանդոտ ֆանտազիան։

Երբ պ. Սիմոնյանցը այդ էշավարի պատմությունով կամենում է ակնարկել իմ Պարսկաստանից տարադրվելու մասին, ես կպատմեմ եղելությունը՝ որպես կատարվել է, իհարկե, շատ համառոտ կերպով։

Բավլիղում մի քանի խարդախ հայեր ինձ մատնեցին կառավարությանը, իմ Պարսկաստանի մասին տպված գրվածքներից շատերը (նրանց հետ ավելացնելով և այնպիսի գրվածքներ, որ բոլորովին իմ հեղինակությունը չէին) թարգմանելով ներկայացրին պարսից թե հոգևոր և թե մարմնավոր իշխանությանը։ Աշխատեցին ինձ մեղադրել կառավարության առջև, որպես քաղաքական հանցավոր, իսկ հոգևոր իշխանության առջև՝ որպես մահմեդական կրոնի հայհոյիչ։ Բավլիղի մուշտեիդը (մոլլաների գլխավորը) մահապարտության վճիռ տվեց իմ վերաբերությամբ։ Այդ վճռից հետո ամեն մի մահմեդական փողոցում պատահած ժամանակ իրավունք ուներ ինձ սպանել և անպատիժ մնալ։ Իմ տունը քարկոծում էին, դիշերները հրացաններ էին արձակում իմ տան վրա։ Իմ կյանքը վտանգի մեջ էր։ Մոլեռանդ մահմեդականները կատաղած էին իմ դեմ։

Ամբողջ ամսականի փոխարեն Բավլիղի գլխավոր կառավարիչ Սահաբ-դիվանը, քննելով մատնությունը, գտավ, որ դա մի քանի խարդախ հայերի ինարիգա էր իմ դեմ և ավելի ոչինչ։ Բայց իմ կյանքը գրգռված ամբոխի կատաղությունից վերծ պահելու համար Սահաբ-դիվանը մի շաբաթվա չափ ինձ պահեց իր տանը, հետո խորհուրդ տվեց առժամանակ հեռանալ Պարսկաստանից, մինչև հուզմունքը դադարի։ Ինձ տվեցին կառավարության սուրհանդակներ։ Ես ստացա անցագրեր ռուսաց հյուպատոսարանից և պարսից դիվանխանայից, գիշերով Բաղնեցի Բավլիղը և երկրորդ օրվա առավոտը արդեն գտնվում էի ռուսաց հողի վրա։

Այդ անցքի մեջ միջամտություն է գործել Պարսկաստանի առաջնորդ Անդրեաս եպիսկոպոսը, այդ անցքի մեջ միջամտություն են գործել մի քանի հյուպատոսներ. այդ անցքի մասին հեռագրեր են գնացել Թեհրան և այնտեղից պատասխաններ են ստացվել, վերջապես այդ անցքը հայտնի է Պարսկաստանի բոլոր հայերին, դա ծածուկ բան չէ։ Ամենքը գիտեն, որ ես մատնության զոհ եմ եղել, հալածվել եմ, բայց իմ պատվի դեմ ոչ մի անարգանք չի կատարվել։

Նվ ինչ զարմանալի բան է, որ Պարակատանի պես մի երկրից, ուր կամայականությունը տիրում է օրենքի տեղ, տարագրվել են ինձ նման մի փոքրիկ ազգի փոքրիկ զրողն եմ։ Բայց այս տևական հալածանքներ պատահել են ամենամեծ ազգերի մեջ ամենամեծ զրողների վերաբերությամբ։ Ջրանսկան մի ժամանակ աքսորից իր միջից Վիկտոր Հյուգոյին, իսկ այժմ պաշտում է նրան։ Բանտը, աքսորը, հալածանքը վիճակված է եղել մի քանի ամենանշանավոր բանաստեղծներին, և դրա մեջն է նրանց փառքը։

Պ. Սիմոնյանցը խոսում է մի Հ... Մ.-ի մասին ևս և իբր թե այդ անձը 72 թվից հետո (լավ հիշեցնեք, 11 տարի առաջ) Թավրիզից նամակով դիմել է նրան, առաջարկել է նրա թերթին զրքակցել և աշխատակցել, և այդ նամակը պահվում է «Մեղուի» խմբագրատանը և այլևս Հետո նա խորհուրդ է տալիս ինձ, որ ֆալշիներից հարցնեմ, թե ով է այդ Հ... Մ...ը։

Առանց ֆալշիներից հարցնելու ևս գիտեմ, որ հիշյալ անձը ևս եմ եղել։ Իրավ է, ևս իմ կյանքում մի անգամ դժբախտություն եմ ունեցել պ. Սիմոնյանցին մի նամակ գրելու։ Բայց թե ի՞նչ առիթով, ահա՛ այստեղ է հետաքրքիր կետը, որ պ. Սիմոնյանցը իր սովորական ձևով հեղաշրջելով կամենում է ցույց տալ, իբր թե ևս դիմել եմ նրան, խնդրելով, որ ինձ ընդունեն իր թերթի աշխատակից։

Ահա՛ իրողությունը։ Թավրիզում գտնված ժամանակ ևս տեղային ազգային ընթերցարանի գրադարանապետ էի։ Որպես պաշտոնական մարդ, ընթերցարանի կողմից պաշտոնական ձևով հայտնելով, թե ընթերցարանը հայոց բոլոր պարբերական հրատարակությունները ստանում է ձրի, խնդրեցի, որ ինքը ևս բարեհաճի մի օրինակ «Մեղու» ձրիաբար ուղարկել ընթերցարանին։ Միևնույն նամակում հայտնեցի, եթե չի կամենա ձրի ուղարկել, ևս նրա թերթի տարեկան վճարի փոխարեն կուղարկեմ մի թղթակցություն (և ոչ երկուսը)։

Հիմա դատեցեք, մի՞թե դա նշանակում է, թե ևս առաջարկել եմ թղթակցել «Մեղուին»։ Նվ դիցուք թե, ճշմարիտ լիներ այդ. մի՞թե պ. Սիմոնյանցը իր թերթը այն աստիճան խայտառակ բան է համարում, որ նրան աշխատակցելու առաջարկությունը կարող էր ինձ համար անպատվություն համարվել, որ իմ երեսին է տալիս իբրև մի հանցանք։

Վերջացնում եմ իմ պատասխանը մի երկու տող ևս ավելացնելով։ Երևում է, որ պ. Սիմոնյանցը հոթելյանի կոմեդիայից հետո և արծաթի պակաս առանալուց հետո բավական հպարտացել է։ Բայց այս տեսակ վատ միջոցներով և զանազան արհեստական հնարներով ձեռք բերած

արծաթի պատկը ավելի շուտ է հնանում. ավելի շուտ է ոչնչանում, քան ԲՆ իմ մաշված հոդաթափները...

Պ. ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՐԻՏԻԿԱՆ ԵՎ «ԿԱՅԾԵՐԸ»

Լավ կրիտիկոս լինելու համար պետք է առանձին ձիրք ունենալ. Լուսավոր ժողովուրդների մեջ շատ անգամ լինում են հարյուրավոր գրողներ, բայց մի կամ երկու լավ կրիտիկոս։ Մեզ ավելի ծանոթ ռուսաց գրականության մեջ մինչև այսօր իբրև կրիտիկոս հայտնի են երկու անձնավորություններ միայն՝ Բելինսկի և Դոբրոլյուբով, բայց բանաստեղծներ և վիպասաններ համեմատաբար ավելի շատ են ունեցել ռուսները։ Այդ պատճառով, թերևս, սխալ կլինի մտածել, թե կրիտիկա գրելը ամեն մի փոքրիշատե զարգացած մարդու գործ է։ Կրիտիկոսի տաղանդի հետ պետք է և միացած լինեն այնպիսի ձիրքեր, այնպիսի պայմաններ, որոնք ամեն մարդու տված չեն։ Բացի բավականաչափ և բազմակողմանի հմտություններ ունենալուց, կրիտիկոսը պետք է ունենա և այնպիսի մտավոր և հոգեկան հատկություններ, որոնց շնորհում է մարդուն ինքը՝ բնությունը, որոնց անկարելի է ձեռք բերել գրքերի կամ գիտության միջոցով։ Նա պետք է ունենա խորին և ազնիվ զգացմունք, որն է աղբյուրը անկողմնապահության, որը թույլ չէ տալիս քննադատին անձնատուր լինել կրքերին։ Նա պետք է ունենա կրթված, զարգացած ճաշակ, ճանաչելու և գնահատելու դեղեցիկը և վայելուչը։ Նա պետք է ունենա բոցավառ սեր դեպի ստեղծագործական արհեստը և բնավ կանխակալ նախապաշարմունքներով չի պիտի մերձենա դեպի այն գիրքը, որը իր քննադատության առարկա է ընտրել։ Եվ որ ամենագլխավորն է, նա պետք է ունենա դիտողական ընդունակություն, հայացքների ճշտություն և ընդարձակություն՝ բազմակողմանի կերպով ուսումնասիրելու քննելի առարկան, որպեսզի նրա նկատողությունները նեղ և միակողմանի չլինեն։ Կրիտիկոսի հանձն առած պարտավորությունը բարձր է և ծանր։ Ոչ ոքից այնքան չի պահանջվում սեր դեպի ճշմարիտը, դեպի արդարը, որքան կրիտիկոսից։ Նրա պաշտոնը դատավորի պաշտոն է։ Թեև մեղադրվածը հանցանք է գործել, նրա համեմատ էլ պատժվում է։ Բայց երբ որ դատավորը մեղանչում է արդարության դեմ, նրա պատիժը պետք է լինի ավելի սաստիկ։

Ինչպես արդար և խղճմտավոր դատավորի համար զանազանություն

չունի, թե ինչ կրոնի և աղդության է պատկանում մեղադրվածը, այնպես էլ ճշմարիտ կրիտիկոսի համար պետք է զանազանություն չունենա, թե ի՞նչ բանակի կամ կուսակցության է պատկանում հեղինակը։ Նա պետք է նայի, թե ո՞վ է գրողը, բայց պետք է նայի, թե ի՞նչ է գրածը։ Կուսակցական հոգին տեղ չունի ազնիվ կրիտիկայի մեջ։ Կրիտիկան նայում է իր քննելի առարկայի վրա որպես արհեստի և ստեղծագործական արդյունքի վրա, բայց թե ո՞վ է արդյունաբերողը՝ նրա համար միևնույն է։

Ամեն մի քննադատական հետազոտություն, որ առաջնորդվում է ոչ թե արհեստի և ստեղծագործության պայմանների տեսակետից, իսկ մի այլ, և քննելի առարկային բոլորովին չվերաբերող նկատառումներով, մի այսպիսի հետազոտություն կրիտիկա չէ, այլ պոլեմիկա է, որքան էլ նա համեստ և քաղաքավարի կերպով գրված լինի։ Պոլեմիկա ասելով ես չեմ հասկանում կռիվ կամ հակաճառություն, այլ կարծիքների այն կերպով հայտնելու ձևը, որ նկարագրված է կուսակցական հոգով։ Կրիտիկայի նպատակը բարձր է, իսկ պոլեմիկայինը՝ ստոր։ Իսկ մեզ մոտ մի կարծիք այս կամ այն աշխատության մասին կոչվում է կրիտիկա։ Կրիտիկան հիմնվում է լայն մտահայեցողության վրա, հետազոտում է քննելի առարկան ամեն կողմից, իսկ պոլեմիկան որոնում է նեղ մանրամասնություններ, անձնատուր է լինում չնչին թծախնդրություններին։

Զանազան ազգերի մոտ, նայելով ընթերցող հասարակության զարգացման աստիճանին, կրիտիկան ևս իր աստիճանները պետք է ունենա։ Մեզ մոտ դեռ կրիտիկայի բարձր փիլիսոփայական հետազոտությունները անհասկանալի կլինեն։ Մեզ մոտ կրիտիկոսը պետք է այն գործը կատարի, ինչ գործ որ կատարում է ստուգածաբանը սուրբ գրքերի մեկնության մեջ։ Ստեղծագործության և տաղանդի ամեն մի արդյունք սուրբ է։ Կրիտիկոսը պետք է բացատրե, լուսաբանե և ավելի պարզ կերպով պետք է երևան հանե այն դաղափարները, որ թաքնված են մի գրական աշխատության մեջ և որոնք անզարգացած ընթերցողը ըմբռնել չէ կարող։ Մեզ մոտ կրիտիկան պետք է գաստիարակող լինի, պետք է կրթական նշանակություն ունենա, պետք է ժողովրդականացնի այն բարձր ճշմարտությունները, ինչ որ հեղինակը վիպական ձևով արտահայտել է իր աշխատության մեջ։

Այդ ասելով ես ամենևին նպատակ չունեմ հայտնելու, թե կրիտիկոսը պետք է աչքը գոցե իր քննելի առարկայի թերությունների վրա, կամ պետք է լռե, երբ կնկատե նրա մեջ վնասակար գաղափարներ։ Բայց չպետք է մոռանանք և այն, որ կրիտիկան զանազան տեսակետներ ունի։ Մ՛յլ է

նայել մի գրական աշխատության վրա նրա գեղարվեստական կողմից, ա՛յլ է նայել նույն աշխատության վրա նրա տենդենցիայի կողմից։ Կարող է տենդենցիան վնասակար լինել և մինչև անգամ անբարոյական լինել, բայց դրանով աշխատությունը չի կորցնում իր նշանակությունը, երբ նա գեղարվեստական կողմից կատարելագործված է։ Մի բարոյագետ, նայելով Վեներայի արձանի վրա, կվրդովվի, երբ կտեսնն նրա մերկությունը, մի արհեստագետ կհիանա, երբ կնկատե նրա մեջ հանճարի և ստեղծագործության հրաշալիքը։ Մենք շատ անգամ մեծ ուրախությամբ երգում ենք այս և այն բանաստեղծի երգերը գինու, գեղեցիկ կնոջ և սիրահարությունների վրա, թեև շատ լավ գիտենք, որ գինին, գեղեցիկ կինը, սիրահարությունները մարդու կյանքի նպատակը չեն կազմում, բայց երգում ենք, թեև երգը իր տենդենցիայի կողմից դատարկ է, բայց իբրև բանաստեղծություն գեղեցիկ է։ Այդ օրինակները մեջ բերելով, ես ինձ ամենևին կուսակից չեմ համարում այն մտածողների հետ, որոնք ընդունում են գեղարվեստը միայն գեղարվեստի համար։ Գեղարվեստը միայն այն ժամանակ պետք է կատարյալ համարել, երբ արհեստի գեղեցկության հետ միանում են բարձր, վսեմ և հանրամարդկային գաղափարներ։ Բայց այդ բարձրը, այդ վսեմը, այդ հանրամարդկայինը այնքան վիճելի բաներ են, որքան հայացքների և կարծիքների տարբերություն կա մեր աշխարհում։ Ինչ որ մեկի կարծիքով օգտավետ է, բարի է, մյուսի կարծիքով կարող է չար և վնասակար համարվել։ Ինչ որ մեկի ճաշակով գեղեցիկ է, վայելուչ է, մյուսի ճաշակով կարող է տգեղ և անվայել երևալ։ Այդ պատճառով կրիտիկոսի անձնական հայացքները, նրա սեփական կարծիքները չեն կարող չափ լինել ընդհանրության համար, երբ նրանք հիմնված չեն ժամանակի լուսավոր և առաջադեմ մտածությունների վրա։

Շատերը վիճել են այն հարցի մասին, թե ազգերի գրականության մեջ արդյո՞ք կրիտիկան առաջ է ծնվում, թե՞ նա հայտնվում է միայն այն ժամանակ, երբ գրականությունը ծնունդ է առնում և մի որոշ հասակի է հասնում։ Ես այդ վեճը վճռելու նպատակ չունեմ, միայն այսքանը կասեմ, որ քննելու համար պետք է քննադատության առարկա լինի, երբ գրականությունը չկա, կրիտիկա էլ լինել կարող չէ։ Դրանով պետք է բացատրել այն երևույթը, որ մեր մանուկ գրականության մեջ, սկսյալ Աբովյանից մինչև Րաֆֆին, մի լավ կրիտիկոս չենք ունեցել։ Մեզանում սովոր են ամեն մի ռեցենզիա, ամեն մի հարևանցի կարծիք այս և այն գրական աշխատության մասին կոչել կրիտիկա։ Բայց կրիտիկայի նպատակը ինչպես վերևում հիշեցի, շատ բարձր է, շատ ընդարձակ է։

Երանելի՜ են այն հեղինակները, որոնք իրենց ժամանակներում հանդիպել են ճշմարիտ և խելացի կրիտիկոսներիւ Բայց եղել են տաղանդներ, մինչև անգամ հանճարներ, որոնք դարերով մնացել են անհայտության մեջ, մինչև դուրս է եկել մի կրիտիկոս և անմահացրել է նրանց բարձր նշանակությունը։

Այդ ընդհանուր դատողություններից հետո, ես դառնում եմ դեպի պ. Հայկունու կրիտիկան, որի քննադատությունը հոդվածիս նպատակն է։

Հիշյալ կրիտիկան տպվեցավ «Մեղուի» մեջ և լցրեց այդ լրագրի ութ համարների ամբողջ բանասիրական մասը*։ Իբրև կրիտիկա նայելով այդ աշխատության վրա, բոլորովին սխալ կլիներ, որովհետև նա զուրկ է կրիտիկայի համար ընդունված բոլոր պայմաններից, զուրկ է լոգիկայից, և որ ամենագլխավորն է, զուրկ է արդար, խղճմտավոր և անկողմնապահ քննադատության հատկություններից։ Պարոնի կրիտիկան կրքի, նախանձի, առելության մի սղոցմնելի արտահայտություն է և ավելի ոչինչ։

Նրա մեջ ամեն բան կա, ինչ որ պ. կրիտիկոսը մի անգամ լսել կամ տեսել է իր կյանքում, բայց բոլորը խառնիխուռն և անկապ կերպով դիզված միմյանց վրա։ Նրա մեջ կան զանազան հեղինակների և գրքերի անուններ, որոնց, որպես երևում է, չէ կարդացել պարոնը։ Նրա մեջ մտցրած է «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունուն, հայ բողոքականների քահանա Ամիրխանյանցին։ Նրա մեջ մտցրած է Պետրոս Սիմոնյանցի գրակը, Բաֆֆիի մաշված հողաթափները և ուրիշ շատ դրանց նման բաներ, իսկ այդ բոլորը ի՞նչ կապ ունի «Կայծերի» հետ, դժվար է հասկանալ։

Առանց պ. Հայկունու հետ ծանոթ լինելու, առանց նրա գրասեղանի մոտ երբեք նստած լինելու, կարելի է ասել, թե ինչպես է կազմել պարոնը իր երկար ու ձիգ հոդվածը։ Նրան պատվիրել են Բաֆֆիին մի լավ «շինել», և նա կույր հնազանդությամբ հանձն է առել այդ գործը։ Սկսել է գրել առանց նախապես իր համար մի հասկացողություն կազմելու, թե ինչ պետք է գրե։ Դուրս են եկել առաջին, երկրորդ, երրորդ համարները։ Փողոցում նրան նկատողություն են արել, պարոն, դու կրիտիկա ես գրում, դու մի վեպ ես քննում, բայց նրա գեղարվեստական արժանավորությունների կամ թերությունների մասին ոչինչ չես խոսում։ Պարոն կրիտիկոսը նեղ տեղն է ընկնում։ Նա չգիտե, թե ինչ բան է վեպի գեղարվեստական արժանավորությունը կամ թերությունը։ Բայց պետք է մի կերպով այդ

---

* №№ 31, 32, 33, 34, 35, 36, 37, 39։

նեղ դրութիւնից դուրս գալ, և տգէտ չերևալու համար իր հոդվածի շարունակութեան մէջ, պատահած տեղում խցկում էր հետևյալ տողերը.

«Կայծերի» վրա նայել ինչպես մի գեղարվեստական (բանաստեղծական) դրվածքի վրա, դա նշանակում է ոչ մի գաղափար և ճաշակ չունենալ Պառնասի մուսաների ստեղծագործության մասին»... «Որովհետև «Կայծերի» հեղինակը «Խենթի» հավատարիմ հեղինակն է, իսկ պ. Բաֆֆիի այդ աշխատութիւնը ևս մի օր անվանների մի փառավոր նեվիաթ: Արդարութիւնից չշեղված լինելու համար պ. Բաֆֆիի այս վերջին աշխատութեան վրա ևս ավելացնում եմ, ընթերցող, գուն բաղդատական մանրիկը և ասում՝ «Կայծերը» փառավորագույն հեքիաթ է»:

Տեսնո՞ւմ ես, որքա՞ն բարձրից են հնչում այդ խոսքերը, որքա՞ն փքված են նրանք, որքա՞ն ինքնավստահություն կա սրանց մեջ: Պ. Հայկունին մի ժամանակ ասել է «Խենթը» մի փառավոր հեքիաթ է, հիմա էլ ասում է «Կայծերը» փառավորագույն հեքիաթ է. պրծավ, գնաց, էլ ի՞նչ գեղարվեստ կարելի է որոնել հեքիաթի մեջ:

Պարոնը, ինչպես երևում է, այնքան տգետ է, որ չի հասկանում հեքիաթի նշանակությունը, կամ ի՛նչով է զանազանվում հեքիաթը վեպից: Ոչ Բաֆֆին և ոչ էլ նրանից շատ բարձր գրողներ չեն կարող մի որևիցե հեքիաթ հորինել: Հեքիաթը մի անհատի ստեղծագործություն չէ, հեքիաթը մի ժողովրդի երևակայության ծնունդն է. նրա հեղինակը ինքը ժողովուրդն է: Բանաստեղծը կարող է և իրավունք ունի (ինչպես շատերը արել են) վեր առնել ժողովրդի բերնից մի հեքիաթ և նրան մի առանձին ձև ու գույն տալով, վերաստեղծել նրանից մի ամբողջ դրամա կամ մի ամբողջ վեպ: Բայց այդ վեպը, այդ դրաման այլևս հեքիաթ չի լինի, նա հեքիաթ էր այն ժամանակ, երբ դեռ իր բնական պարզության ու կոշտության մեջ գտնվում էր ժողովրդի բերնում: Մեր գրականության մեջ պ. Աղայանցի «Անահիտը» առնված է մի ժողովրդական հեքիաթից: Բայց ո՞ր քննադատը կհամարձակվի ասել, թե նա հեքիաթ է, քանի որ այդ հեքիաթը հեղինակի գրչի տակ բոլորովին ուրիշ ձև և կերպարանք է ստացել:

Յանկալի կլիներ, որ պ. Հայկունին ցույց տար, թե ո՞ր հեքիաթներից է կազմել Բաֆֆին իր «Խենթը» և «Կայծերը», գոնե այդ հետաքրքիր կլիներ մեր գրականության պատմության համար, որ մեր ժողովրդի երևակայությունն ևս ընդունակ է ստեղծել հեքիաթներ:

Բանը դրանում չէ, պ. Հայկունին կոչում է «Կայծերը» փառավորագույն նեվիաթ, որ իր յախտան պրծացնի, որ ցույց տա, ինչպես ինքն ասում

է, «Կայծերի» մեջ նրա համար միայն չէ գտնում գեղարվեստական կամ բանաստեղծական արժանավորություններ, որովհետև այդ աշխատությունը վնաս չէ, այլ հեքիաթ է։ Դրանում ևս պ. կրիտիկոսը ցույց է տալիս իր խորին անհասկացողությունը։ Հեքիաթը ժողովուրդների սկզբնական բանաստեղծությունն է։ Արաբական «Հազար ու մեկ գիշերները» ուրիշ ոչինչ չէ, եթե ոչ հեքիաթների մի ամբողջ հավաքածու։ Մի՞թե նրանց մեջ չէ փայլում արաբացու վառ երևակայությունը իր բանաստեղծական և գեղարվեստական սքանչելի դույներով։

Գեղարվեստը ճանաչելու, գեղարվեստը գնահատելու համար պետք է զարգացած ճաշակ, աղնիվ զգացմունք և դիտելու խորին ընդունակություն ունենալ։ Դրեցնք Ռաֆայելի «Մադոննան» կամ Այվազովսկու ծովանկարներից մեկը մի կողմ, կոպիտ ռամկի առջև։ Նա միայն ապուշի նման կնայի և արհամարհանքով երեսը շուռ կտար։

Այսպես էլ պ. Հայկունին գատում է իր անձնական ապավորությունների ներգործության ներքո, առանց հիմնվելու արհեստի և գրականության մեջ ընդունված պայմանների վրա։ Նա անխտիր կերպով գործ է ածում «գեղարվեստ», «Պատմության մուսաների սահղծագործություն», «գեղարվեստական տաճար» բառերը, խոհեմությամբ լսելով, թե ի՞նչ է հասկանում այդ փքած բառերով։ Ցանկալի կլիներ, որ պարոնը փոքրիշատե ցույց տար, թե գեղարվեստի ո՞ր օրենքներով է առաջնորդվում ինքը, որ «Կայծերը» զուրկ է գտնում այդ արժանավորությունից։ Անդադար հեքիաթ, հեքիաթ կոչելով, հարցը վճռված չէ կարելի համարել։ Կրկնում եմ, ցանկալի կլիներ, որ պարոնը փաստերով ապացուցաներ իր կարծիքը, դրանով փոքրիշատե կծանոթանայինք նրա դիտության հետ, թե ո՞ր աստիճան ծանոթ է նա կամ հասկանում է գեղարվեստի նշանակությունը և որքա՞ն ուսումնասիրել է ազգերի գրականությունը ընդհանրապես, և մերը՝ առանձնապես։

Բայց չնայելով իր բոլոր զգուշությանը, իր ոգիությունը երևան չհանելու համար, մի տեղում պ. Հայկունին իր գրչից դուրս է թոցրել մի քանի բառեր, ասելով. «Գեղարվեստը գտնվում է ոչ թե երևակայական, ռոմանտիկական, այլ իրական կյանքում ու աշխարհում»։ Այդ մի քանի բառերով պ. կրիտիկոսը թեև ցույց չէ տալիս գեղարվեստի նշանակությունը, նրա թեորիան, նրա հիմնական օրենքները, բայց գոնե ցույց է տալիս նրա տեղը։ Եթե ես լռեմ, երևի, բոլոր ռոմանտիկները, սկսյալ Ժան-Ժակ Ռուսոյից մինչև Վիկտոր Հյուգոն, կբողոքեին, եթե լսին, որ պ. Հայկունին այսպիսի կարծիք ունի նրանց մասին։

Ես շարունակում եմ խոսել պ. Հայկունու դրելու ձևի վրա։

Նրա հոդվածը տպվում է, համարները միևը մյուսի հետևից դուրս են գալիս, դեռ ճշմարիտ կրիտիկական ոչինչ չկա։ Փողոցում նրան դարձյալ նկատողություն են անում. «Պարո՛ն, այդ ինչ տեսակ կրիտիկա ես գրում. քո ասածները ոչ մեկը վեպին չէ վերաբերում. դու «Կայծերի» մեջ գործող անձինքները, նրա տիպերը չքննեցիր, նրանց բնավորությունների, նրանց մտավոր և հոգեբանական կողմերի մասին ոչինչ չասեցիր»։ Դարձյալ դժվարություն։ Պետք է մի բան ասել։ Բայց որտե՞ղ ասել, հոդվածը արդեն վերջանալու վրա է։ Որտեղ էլ որ լինի, միևնույն է, և պարոն կրիտիկոսը մի տեղում մտցնում է այս տողերը.

«Ես իմ հոդվածում մի խոսքով անգամ չշոշափեցի «Կայծերի» հերոսների հոգեբանական կողմերը, որովհետև այդ կողմերը թույլ, շատ թույլ էին և կարծես թե չկային»։

Ուր մարդիկ ապրում են, մտածում են, գործում են, սիրում են, ապրում են, տրտմում են, ուրախանում են, ուր մարդիկ գալանների կատաղություն ունեն և ազավնու հեզություն, չէ կարելի ասել, թե նրանց մեջ չկան հոգեբանական կողմեր։ Առանց հոգու մարդը ոչինչ զգայմունք չունի. նա անշունչ դիակ է։ Բայց կարծում ինքը՝ պ. Հայկունին, հակառակում է իրան, որ «Կայծերի» հերոսներին բոլոր հոգեկան զգայմունքներից զուրկ դիակներ է համարում, որովհետև մի տեղում նա համեմատում է այդ վեպի հերոսներին այնպիսի անձնավորությունների հետ, որոնք մի ամբողջ աշխարհ սուզի մեջ դրին...

Պ. Հայկունու հոդվածում ոչ մի միտք իր տեղում չէ. նրա մեջ կարգ, դասավորություն չկա. նա անզգադար մեկ միտքը թևերի թողնելով, դեպի մյուսն է թռչում։ Եվ այդ առաջ է եկել նրանից, որպես վերևում ցույց տվի, որ նա իր տեղեկությունները հավաքել է ուրիշների նկատողություններից, և այդ արել է այն ժամանակ, երբ նրա հոդվածը արդեն սկսել էր տպվել, հայտնի բան է, որ դասավորություն չէր կարող լինել։ Այդ հոդվածը կարդալիս հիշեցնում է այն մուրացկաններին, որոնք փողոցներում ինչ շորի կտոր որ ընկած են տեսնում, վեր են առնում, բերում են տուն և կարում, կարկատում են իրանց քրքրված վերարկուի վրա, այսպիսով դառնում է մի խայտաճամուկ բան։

Ասածներիս իբրև ապացույց, ես մատնացույց կանեմ մի ավելի հատկանիշ կետի վրա։ Պ. Հայկունու կրիտիկան տպվել, ստորագրվել և վերջացել էր արդեն։ Անցել էին շաբաթներ, անցել էին ամիսներ։ Հանկարծ նրան հիշեցնում են, թե «Կայծերի» մեջ բազմաթիվ պատմական, աշխարհագրական և ցեղագրական անուններ կային. մի՞թե նրանց մեջ սխալներ ցույց տալ չէր կարող։ Բայց ինչ անե պարոնը, ոչ հին Հայաս-

տանի աշխարհագրությունը գիտե և ոչ նրա պատմությունը։ Մի մարդ պետք է օգնի նրան։ Օգնությունը հասնում է։ Մի վանական, թե երկրումյի պարոն այդ միջոցին պատահմամբ հյուր է լինում «Մեղուի» խմբագրատան մեջ։ Նա տալիս է մի երկար ցուցակ աշխարհագրական, պատմական և ցեղագրական անուններ, որոնք իբր թե սխալ էին գրված «Կայծերի» մեջ։ Այդ բոլորը լավ էր, նպաստավոր էր պ. կրիտիկոսի համար։ Բայց որտե՞ղ մտցնել նրանց «Կայծերի» քննադատությունը արդեն տպվել, վերջացել է։ Բայց պ. Հայկունու համար միևնույն է, նա տանում է հիշյալ ցուցակը և որպես մաքուր արծաթ, տեղավորացնում է «Խաչագողի հիշատակարանի» քննության մեջ։

Եվ այսպես, պ. Հայկունու հոդվածը մի անկապ, խառնիխուռն և վայրիվերո գրված է։ Նա ոչ միայն կրիտիկա չէ, այլ պոլեմիկա կոչվելու արժանավորությունից զուրկ է։ Պոլեմիկայի մեջ առաջնորդում է քննադատին առողջ միտքը, քննելի առարկայի ճիշտ և խղճմտավոր հասկացողությունը։ Բայց երբ առողջ դատողության տեղ գործում է կիրքը, նախանձը, առելությունը, անվանարկությունը դեպի հակառակորդի անձնավորությունը, այդ դեպքում պոլեմիկան դառնում է մի զզվելի պամֆլետ և մինչև անգամ դիֆամացիա։ Պ. Հայկունու հոդվածը վերջին տեսակներին պետք է վերաբերել։ Նրա մեջ լիքն են զանազան կոպիտ արտահայտություններ, զանազան փողոցային մտահայտություններ և զանազան ցինիկային ակնարկություններ դեպի «Կայծերի» հեղինակի անձնավորությունը։ Այդ բոլորը «Կայծերի» հեղինակի և նրա աշխատության վրա ոչինչ արատ չձգելն հետո վնասում է իրան՝ կրիտիկոսին, երբ ընթերցողը բացարձակ կերպով նկատում է նրա մեջ կիրքը։ Նույնիսկ խայտառակ էպիգրաֆը, որը, իբրև նախերգանք, պ. կրիտիկոսը գրել էր իր հոդվածի ճակատին, պարզ կերպով ցույց է տալիս, թե ի՞նչ հոգուց գրված գրել է նա իր հոդվածը։

Իմ հոդվածի սկզբում ես ցույց տվի, թե ինչ է կրիտիկան և ինչ պետք է լինի ճշմարիտ կրիտիկոսի պարտավորությունը։ Բայց պ. Հայկունին շեղվում է բոլոր այն պայմաններից, ինչ որ կրիտիկայի գործը պետք է լինի։ Նա չէ քննում «Կայծերի» ամբողջ հյուսվածքը, ուշադրություն չէ դարձնում նրա ընդհանուր շինվածքի վրա, թե որ ատիճան այդ աշխատությունը, իբրև վեպ, հասնում է իր նպատակին։ Նա միայն նախադասություններին, բառերին, կետադրություններին և զանազան մանր-մունր սխալների համեմ է ընկնում և չնչին բծախնդրություններ է անում։ Այդ է պատճառը, որ նրա ամբողջ 8 համարների մեջ գտնվված կրիտիկան

կարդալուց հետո ընթերցողը դարձյալ չէ կարողանում մի պարզ գաղափար կազմել, թե ինչ բան է «կայծերը»։

Դիցուք թե մի մարդ կամենում է ծանոթացնել ձեզ այս և այն նշանավոր շինվածքի հետ, բայց փոխանակ ցույց տալու, թե ճարտարապետության ո՛ր ճյուղին է պատկանում, ի՛նչ ճաշակով է շինված, կամ որքա՛ն հարմարություններ ունի բնակության համար, այդ բոլորը թողնում է և միայն ասում է, թե լուսամուտներից մեկը ծուռն է, ծխնելույզներից մեկը իր տեղումը չէ, դռներից մեկը կոտրած է, պատից մի քանի աղյուսներ ցած են թափվել և այլն։ Տարակույս կլա, որ այդ մանր-մունր նկատողությունները չեն կարող ձեզ ճիշտ գաղափար տալ շինվածքի ամբողջության մասին։ Այս կերպով էլ վարվում է պ. Հայկունին «կայծերի» վերաբերությամբ։

Նա միայն ամեն ջանք գործ է դնում, որ վեպի մեջ սխալներ ցույց տա, հակասություններ գտնի, անբնական երևույթներ երևան հանի, և որտեղ չկան այսպիսիները, ինքը ամենայն անբարեխղճությամբ հնարում է, ստեղծում է։ Նա վեր է առնում դրքի այս և այն երեսից նախադասություններ կամ նախադասությունների կեսը, վեր է առնում բառեր և, միացնելով, նրանցից իր ցանկացած միտքն է դուրս բերում։ Աղավաղել փաստերը, այլանդակել իրողությունները, շատ հասկանալի է, որ օրինավոր կրիտիկոսի գործ չէ։ Այդ բոլոր ղեղծումները ես ցույց կտամ իր տեղում։

Որովհետև պ. Հայկունու հոդվածի մեջ ոչ կապ կա և ոչ կանոնավոր դասավորություն, այլ ամեն ինչ անշնորհք կերպով կարկատած է միմյանց հետ, այդ պատճառով շատ դժվար է մի ամբողջական գաղափար տալ նրա բովանդակության մասին։ Եվ այդ իսկ պատճառով ես պիտի աշխատեմ նրա նկատողությունները կարելվույն չափ դասավորել և մի առ մի վեր առնելով այդ նկատողությունները, ցույց տալ նրանց ամենայն ճշմարտությունից զուրկ լինելը։

Պ. Հայկունին, իր հոդվածի սկզբում «Կայծերի» բովանդակությունը ծուռ ու սխալ կերպով պատմելուց հետո, անցնում է նրա քննադատությանը։ Հենց սկզբից պարոնը աշխատում է ցույց տալ, որ «կայծերը» չէ կարող լինել ճիշտ նկարագիր տաճկահայերի կյանքի, որովհետև հեղինակը չէ ճանաչում այն երկիրը, այն կյանքը, որտեղից առել է իր վեպի նյութը։ Ահա նրա խոսքերը.

«Բաֆֆին տաճկահայերին ճանաչում է միմիայն լրագիրներից և մի քանի անկատար, անճիշտ պրքերից, գուցե և մի բանի ծանոթներից, իսկ

դոքա երբեք բավական չեն տաճկահայերի կյանքից «Կայծեր» դուրս յուլացնելու»։

Պարոնը մոռանում է, որ «Կայծերի» առաջին հատորի գործողությունների մի մասը կատարվում է Պարսկաստանի Սալմաստ գավառում, որ հեղինակի հայրենիքն է, ուրեմն նա չէր կարող ծանոթ չլինել իր հայրենիքի հետ։ Իսկ մնացած մասի գործողությունները կատարվում են Սալմաստի սահմանակից վանա նահանգում, որտեղ հեղինակը մի քանի անգամ ճանապարհորդել է։ Դեռ 1860 թվականում «Հյուսիսափայլի» մեջ տպվեցավ նրա վանա նահանգում կատարած ճանապարհորդության մի մասը, իսկ 1872 թվականում, այսինքն՝ «Մշակի» հրատարակվելու հենց առաջին տարվա մեջ, այդ լրագրում սկսվեցան տպվել նրա Պարսկաստանի ճանապարհորդությունները, որոնք ամենայն հետաքրքրությամբ կարդացվում էին։ Ուրեմն «Կայծերը» գրելու համար Բաֆֆին կարոտություն չուներ իր տեղեկությունները քաղել «միմիայն լրագիրներից և մի քանի անկատար, անճիշտ գրքերից», երբ որ ինքը անձամբ ուսումնասիրել է այդ երկրների կյանքը։ Այլևս չեմ խոսում այն բազմաթիվ սուվար հոդվածների մասին, որ «Մշակի» գոյության տասներկու տարվա ընթացքում գրել է Պարսկաստանի և Տաճկաստանի մասին։

Հիշյալ նկատողությունից հետո պ. Հայկունին վերջը ինքն իրան հակասում է, ասելով.

««Կայծերի» մեջ գեղեցիկ կերպով նկարագրված են քրդերը, թուրքերը և պարսիկները»։

Եթե հեղինակը այնքան ճանաչում է Պարսկաստանի և Տաճկաստանի քրդերին, թուրքերին և պարսիկներին, որ կարողանում է նրանց կյանքը գեղեցիկ կերպով նկարագրել, ինչո՞ւ չէր կարող ճանաչել և տեղային հայերին, քանի որ ինքն ևս հայ է և ծնված է նույն աշխարհում, ուր ապրում են «Կայծերի» մեջ նկարագրված հայերը։

Պ. Հայկունու հոդվածը լի է այս տեսակ միմյանց հակասող, միմյանց հակառակ մտքերով։ Մի տեղում նա ասում է, թե «Կայծերի» մեջ գեղեցիկ կերպով նկարագրված է քրդերի, թուրքերի և պարսիկների կյանքը, իսկ հայերի կյանքի նկարագրությունը թույլ է դտնում, որովհետև հեղինակը իր տեղեկությունները հայերի մասին, նրա կարծիքով քաղել է լրագիրներից և մի քանի անկատար, անճիշտ գրքերից։ Հանկարծ այդ բոլորը մոռանալով, մի այլ տեղում ասում է, որ «Կայծերի» մեջ բոլորովին կյանք չկա։ Ահա նրա խոսքերը.

«Նրանում («Կայծերի» մեջ) չկա կյանք, ոչ անցյալի և ոչ էլ ներկայի։ «Կայծերը» ոչ պատմական վեպ է, ոչ էլ ժամանակակից։ Այլ նա

մի վեպ, մի գրվածք է հայ ապագա կյանքից։ «Կայծերը», եթե կարելի է այսպես ասել, իբր մի ծրագիր է ժամկահայերի ապագա կյանքին, գործունեությանը։ Եվ որովհետև նա մի ծրագիր է, ուրեմն վեպ, գեղարվեստական գրվածք կոչելու իրավունք չունի» և այլն։

Այդ խոսքերից երևում է, որ «Կայծերը» հեքիաթ չէ, ինչպես պ. կրիտիկոսը իր հոդվածի սկզբում ամենայն ջանքով աշխատում էր ապացուցանել։ Այժմ պ. կրիտիկոսը «Կայծերի» համար մի նոր անուն է հնարել՝ «ծրագիր»։

Կրիտիկոսի պարտավորությունն է ցույց տալ իր քննության առարկա ընտրած գրքի գրականության որ ճյուղին պատկանելը։ Պ. Հայկունին ևս այդ պայմանը ի նկատի է ունեցել, որ «Կայծերը» առաջ կոչել է հեքիաթ, իսկ հետո ինքն իրան հակառակելով՝ կոչում է ծրագիր։ Ես այդ ծրագիր բառի վրա էլ պիտի կանգնեմ։

Ի՞նչ է նշանակում ծրագիր։ Առանց բացատրելու, ամեն մարդ պիտի ծրագրի նշանակությունը։ Բայց մի վեպի համար ասել ծրագիր, ես կարծում եմ, պետք չէ հասկանալ մի որևիցե կանոնադրություն զանազան հոդվածների և պարագրաֆների բվանշաններով։ Վեպը այդ ձևերը չունի իր մեջ։ «Կայծերի» մեջ ևս այս տեսակ պարագրաֆներ չկան։ Այսուամենայնիվ, ամեն մի վեպ, որ բովանդակում է իր մեջ տենդենցիա, կարելի է փոխաբերական կերպով ծրագիր կոչել, թեև այդ անունը շատ անհարմար է։ Շպիլհագենի «Անատոմապահի ընտանիքը» կոչված վեպը նույնպես մի ծրագիր է մշակների հարցի վերաբերությամբ[1]։

Բայց վեպի ձևով գրված ծրագիրը բոլորովին ուրիշ կերպարանք ունի։ Նրա մեջ պարագրաֆների տեղ ծառայում է նույն իսկ կյանքը իր բազմակողմանի երևույթներով։ Ուրեմն, եթե «Կայծերը» պ. Հայկունու կարծիքով մի ծրագիր է, նրա մեջ ևս անպատճառ պետք է կյանքի նկարագրությունները լինեն։ Այլևս ի՞նչ հիման վրա պ. կրիտիկոսը պնդում է, թե «Կայծերի» մեջ չկա կյանք ոչ անցյալի և ոչ ներկայի։

Գլխավոր պատճառը, որ պ. Հայկունուն մոլորեցնում է և նրան հակասությունների մեջ է ձգում, այն է, որ այդ պարոնը չէ ուզում պարզ խոստովանել, թե «Կայծերը» վեպ է։ Նա վեպ էլ է անվանում, հեքիաթ էլ է անվանում, ծրագիր էլ է անվանում, բայց ոչ մեկի վրա չէ կանգնում։ Եթե վեր առներ նրան իբրև վեպ, պետք է ցույց տար, արդյոք պատմական է նա, թե ժամանակակից։ Իբրև պատմական վեպ պետք է նայեր նրա վրա պատմական տեսակետից, իսկ իբրև ժամանակակից վեպ, պետք է նայեր ժամանակակից կյանքի տեսակետից։ Բայց այդ բոլորից խուսք է տալիս նա, ասելով, «Կայծերի» մեջ չկա կյանք ոչ անցյալի և

ոչ ներկայի: «Կայծերը» ոչ պատմական վեպ է և ոչ էլ ժամանակակից: Հենց այդ սխալ որոշումը նրան ձգում է բաղմաթիվ հակասություններ մեջ: Ահա որպես.

Եթե «Կայծերը» ոչ պատմական վեպ է և ոչ ժամանակակից, եթե նրա մեջ չկա կյանք ոչ անցյալի և ոչ էլ ներկայի, այստեղից լոգիկաբար ծագում է այն միտքը, որ «Կայծերի» հերոսները, նրա մեջ գործող անձինքը, այլ խոսքով, նրա տիպերը ոչ գոյություն են ունեցել անցյալում, այսինքն՝ հայոց պատմական կյանքում, և ոչ էլ նրանք գոյություն ունեն այժմ, այսինքն՝ հայոց ներկա կյանքում, այլ նրանք Բաֆֆիի երևակայության ծնունդն են, որոնց ստեղծել է ինքը՝ հեղինակը: Եվ այսպես էլ ասում է պ. Հայկունին, թե «Կայծերի» մեջ գործողները «իրական» մարդիկ չեն, այլ «վերացական և երևակայական» են: Շատ լավ: Ուրեմն էլ ի՞նչ լոգիկայով պ. կրիտիկոսը համեմատում է «Կայծերի» տիպերը «Աբովյանի, Ալայանցի, Պռոշյանցի, Շերենցի տիպերի հետ և գտնում է նրանց մեջ կատարյալ նմանություն: Վեր առնենք նրա համեմատություններից մի կտոր միայն.

«Այսպես, ընթերցող,— գրում է պ. Հայկունին,— «Կայծերի» ամենագլխավոր գործողը, ասենք տիպը՝ որսորդ Ալոն, ոչ այլ ոք է, եթե ոչ ա) պ. Աբովյանի Աղասին, բ) պ. Ալայանցի Հարությունը, գ) պ. Պռոշյանցի Վարդը, դ) պ. Շերենցի Թեոդորոս Ռշտունին և նույն հեղինակի Լևոնը («Բարոս Լևոնի» մեջ), ե) պ. Բաֆֆիի իրան Մելիք Մանսուրը («Խենթի» մեջ)»:

Եթե պ. Հայկունու համեմատությունները ճշմարիտ համարենք, մենք կամա-ակամա պետք է հասնենք այն եզրակացությանը, որ մեր հարգելի վիպասանները, ամենքն էլ, առանց բացառության, իրենց տիպերը գողացել են միմյանցից: Շատ հետաքրքիր կլիներ, եթե պ. Հայկունին ցույց տար, թե առաջին գողությունը ո՞րն է կատարել դրանցից:

Ես այդ կարծիքը չունեմ մեր վիպասանների մասին, ես միայն պիտի երևան հանեմ պ. Հայկունու անբարեխղճությունը: Նա աշխատելով ստվեր ձգել «Կայծերի» վրա, մոռանում է, որ միևնույն ժամանակ ստվեր է ձգում և մեր մյուս վիպասանների վրա: Մի կողմից, ասում է նա, թե «Կայծերի» և մեր մյուս վիպասանների դուրս բերած տիպերի մեջ ոչինչ «էական» զանազանություն չկա, իսկ մյուս կողմից, ասում է, թե «Կայծերի» մեջ գործողները «իրական» մարդիկ չեն, այլ «վերացական» և «երևակայական» են: Ուրեմն, եթե «Կայծերի» վերացական և երևակայական տիպերը միևնույնն են, ինչ որ մինչև այսօր հայտնվել են մեր մյուս վիպասանների աշխատությունների մեջ, բոլորովին լոգիկական կլիներ

մտածել, որ նրանք ևս իրական տիպեր չեն, որ նրանք ևս վերացական ու երևակայական են, որովհետև պ. կրիտիկոսը նրանց և «Կայծերի» տիպերի մեջ ոչինչ «էական» զանազանություն չէ գտնում։ Եթե ճշմարիտ է այդ, շատ բշվառ պետք է համարել մեր գրականությունը և նույնքան բշվառ պետք է համարել մեր բոլոր վիպասաններին, որ նրանցից ոչ մեկը մինչև այսօր չէ կարողացել մի իրական և կենդանի տիպ դուրս բերել իր աշխատության մեջ։

Այդ բոլոր հակասությունները առաջ են գալիս նրանից, որ պ. կրիտիկոսը չէ հասկանում, թե ինչ է ասում։ Նա գործ է ածում բառեր, առանց նրանց նշանակությունը հասկանալու և որ ամենանշանավորն է, նրա դատողությունների մեջ ամենևին լոգիկա չկա։ Այդ ևս ցույց տվի և դարձյալ պիտի աշխատեմ ցույց տալ։

Կարծեմ ընթերցողը չէ մոռացել, որ պ. Հայկունին ասաց, որ «Կայծերը» ոչ պատմական վեպ է և ոչ՝ ժամանակակից։ Ուրեմն, ի՞նչ համեմատություն կարող է լինել «Կայծերի» և Շերենցի, Աբովյանի, Աղայանցի կամ Պռոշյանցի վեպերի մեջ։ Չէ՞ որ Աբովյանի «Վերք Հայաստանին», Շերենցի «Թեոդորոս Ռշտունին», նրա «Երկունք» և «Թորոս Լևոնի» կոչված վեպերը պատմական վեպեր են, նրանց մեջ գործող հերոսները պատմական անձնավորություններ են, նրանք ապրել և գործել են մեզանից շատ դարեր առաջ, նրանք գտնվել են կյանքի բոլորովին ուրիշ պայմաններում։ Իսկ «Կայծերը», պ. Հայկունու ասելով, պատմական վեպ չէ։ «Կայծերի» տիպերը դեռ նոր պետք է ծնվեն։ Ուրեմն, ինչպե՞ս կարող էին դրանք նման լինել Աբովյանի և Շերենցի դարերով առաջ ապրող տիպերի հետ։ Բացի դրանից, Պռոշյանցի վեպերը, Աղայանցի վեպերը (բացի «Անահիտից») ժամանակակից կյանքից են առնված։ Իսկ պ. Հայկունին ինքը ասում է, թե «Կայծերը» ժամանակակից վեպ չէ, այլ մի ծրագիր է ռահվիրաների ապագա գործունեության։ Եթե այդպես է, ուրեմն էլ ինչպե՞ս կարելի է, որ դեռ նոր ծնվող ապագա կյանքը իր նոր պայմաններով, իր նոր սերունդով ներկայի նման լիներ։

Այդ հակասությունները պ. Հայկունու հոդվածի մեջ առաջ են գալիս երկու պատճառներից։ Նախ, անբարեխղճությունից, երկրորդ՝ տգիտությունից։ Անբարեխղճությունից ասում եմ նրա համար, որ պ. կրիտիկոսը կամենում է ցույց տալ, թե «Կայծերի» մեջ նոր տիպեր չկան, թե Բաֆֆին իր բոլոր տիպերը գողացել է մեր գրականության մեջ արդեն վաղուց լույս տեսած այս և այն վեպից։ Իսկ տգիտությունից ասելի այն պատճառով, որ պարոնը այնքան զարգացում չունի, որ հասկանա, թե ի՞նչ է տիպը կամ ի՞նչով է զանազանվում մի տիպ մյուսից։

Պ. Հայկունու տպիտուքյունը կազատեր իրան, եթե նա այսքանը միայն ասեր, թե «Կայծերի» տիպերը նման են Աբովյանի, Ազայանցի, Շերենցի և Պռոշյանցի տիպերին, բայց նա մի բոլորովին աննեելի համեմատություն էլ է անում, որը եթե մատնություն չանվանենք, կատարյալ զրպարտություն է, չարամիտ բամբասանք է։ Ահա նրա խոսքերը.

— «Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, պարոններ,— բղավում է պ. Հայկունին,— ես գիտեմ, որ որսորդ Ավոն և ընկ. («Կայծերի» մեջ) ուզում են լինել և կարծես թե են նաև մի... մի Միլորդ, մի ժ... օֆ, մի կ...իչ, մի Դ...ի et tutti guanti»[2]...

Մատծո՞ւմ է պ. Հայկունին, թե ինչ սարսափելի և մեր ամենից համար անհամակրելի անուններ են թաքնված հիշյալ գլխատառերի տակ...[3]

Եթե «Կայծերի» տիպերը մի-մի Միլորդներ, մի-մի ժ...եր, կ...եր, Դ...եր են, ուրեմն և Աբովյանի, Շերենցի, Պռոշյանցի, Ազայանցի տիպերն էլ միևնույնը պետք է լինեն, որովհետև, որպես վերևում ցույց տվինք, պ. կրիտիկոսը «Կայծերի» տիպերի և հիշյալ չորս վիպասանների տիպերի մեջ ոչինչ «էական» տարբերություն չէ գտնում։ Արդյոք իր այդ համեմատությամբ պ. Հայկունին Հուգայի համբույրով չէ՞ մերձենում դեպի մեր հարգելի վիպասանները ընդհանրապես և դեպի Րաֆֆին մասնավորապես...

Ինձ ասելին, պ. Հայկունուց հարցրել են, թե՝ ինչո՞ւ եք այդ տեսակ հիմարություններ գրում։ Նա առանց կարմրելու (սև երեսի վրա կարմրությունը չէ երևում, պարոնի երեսը բավականին սև է) պատասխանել է. «Գրում եմ նրա համար, որ Րաֆֆիի գրքերը չծախվեն»։

Բոլորովին երեխայություն կլիներ մտածել, որ ոչ թե պ. Հայկունու հոդվածի նման այլանդակ հոդվածը, այլ ծանր, հիմնավոր և ամենազոր կրիտիկան անգամ իր որոտալից սաստկությամբ կարող կլիներ սպանել ճշմարիտ տաղանդը։ Այլևս ի՞նչ բանաստեղծ կլիներ Րաֆֆին, եթե զրկիչների բարբաջմունքը կտիպեր նրան լռել, և նրա գրքերը դեպի փողոց կնետվեին ընթերցողների լուսամուտներից։ Ազգերի գրականության մեջ հազիվ կարելի է ցույց տալ այս և այն նշանավոր բանաստեղծին, որ իր ժամանակին ենթարկված չլիներ անբարեխիղճ կրիտիկոսների հարձակմունքներին։ Բայց դրանով ոչինչ չկորցրին այդ բանաստեղծները, հարձակմունքները ավելի բորբոքեցին նրանց եռանդը։ Բշնամիները կորան, ոչնչացան, անհայտացան մոռայլության խավարի մեջ, բայց բանաստեղծի գործը և անունը մնաց անմահ։ Ճշմարիտ բանաստեղծը խիստ հասատատ հավատ ունի դեպի իր կոչումը, և եթե կրիտիկան անիրավացի կերպով է վերաբերվում դեպի նա, դրա փոխարեն նա գտնում է սաստիկ

պաշտպանություն ընթերցող հասարակության համակրության մեջ։ Եվ այդ համակրությունը վայելում է Բաֆֆին, որի ընդհակառակն, հասարակության անհամակրությունը, կարծեմ իր անձի վրա փորձեց պ. Հայկունին, որպես ինքն ևս խոստովանվում է այդ...

Բաֆֆիին և նրա աշխատությունները քննելը դուրս է իմ հոդվածի նպատակից, բայց այստեղ չեմ կարող մի փոքրիկ նկատողություն չանել։ Տարակույս չկա, որ բանաստեղծը և հասարակությունը պետք է դտնվեն միմյանց հետ բշնամական հարաբերությունների մեջ։ Այդ թշնամությունը ավելի սաստկանում է այն դեպքերում, երբ բանաստեղծը չէ շողոքորթում հասարակության անբարոյական բնազդումներին, հարվածում է նրա մոլություններին, խորտակում, ոչնչացնում է նրա նախապաշարմունքները և զորեղ ձևրով բարձրացնելով այն դարևոր վարդապետը, որ ծածկում էր ժողովրդի կեղտերը, մերկացնում է նրա այլանդակությունը։ Մեր գրականության մեջ Բաֆֆիի աշխատությունները այդ բնավորություն ունեն, նրանք սաստիկ կրիտիկաբար են վերաբերվում դեպի ժողովրդի կյանքը և անխնա կերպով հարվածում են նրա մոլություններին։ Բնականաբար պետք է ժողովուրդը ատեր նրան, բայց մենք ընդհակառակն ենք տեսնում. նա հարգված է, և նրա գրքերը սիրով կարդում են։ Երկու կերպով կարելի է բացատրել այդ երևույթի պատճառը, կամ ժողովուրդը այնքան զարգացած է, որ հասկանում է նրան, կամ նա այնքան ուժ ունի, որ հասարակության զարգացած կրքերը ճնշում է, խոնարհացնում է իր տաղանդի ծանրության ներքո։

Հիմա դառնանք դեպի պ. Հայկունու այն նկատողությունները, որոնցով նա «Կայծերի» մեջ հակասություններ, անբնական երևույթներ և զանազան սխալներ է ցույց տալիս։

Պ. Հայկունին իր քննադատություններին մեջ մի խորամանկ, բայց կրիտիկայի կանոններին բոլորովին հակառակ ձև է ընդունել։ Նա «Կայծերի» տիպերը չէ քննում առանձին-առանձին, այլ բոլորին ձուլում է. միացնում է հեղինակի անձնավորության մեջ և նրանց կոչում է Բաֆֆի, անդադար կրկնելով, Բաֆֆին այդ վնասակար միտքն է հայտնում, Բաֆֆին ինքն իրան հակառակում է և այլն։ Եվ այդպիսով աշխատում է ցույց տալ հակասություններ։ Շատ հասկանալի է, ինչպես ամեն վեպի մեջ, այնպես էլ «Կայծերի» մեջ կան զանազան տիպեր, զանազան անձնավորություններ, իրանց տարբեր և մինչև անգամ միմյանց հակառակ հայացքներով ու կարծիքներով։ Եթե բոլորը միանման լինեին, այլևս տիպերի զանազանություն չէր լինի։ Նրանց զարգացման և հասկացողության աստիճանը հավասար չէ։ Կարող է պատահել և պետք է այսպես

լինի, որ մեկը բոլորովին սխալ և մինչև անգամ վնասակար միտք է հայտնում, այդ մտքին դույլ հեղինակը ինքն էլ չէ համակրում, այսուամենայնիվ, պետք է իր հերոսին խոսել տա այնպես, որպես ինքն հերոսն է մտածում կամ զգում։ Բայց բոլոր գործող անձինքների մտածողությունները, խոսքերը անխտիր կերպով վերաբերել հեղինակին և նրանց համեմատություններից եզրակացություններ դուրս բերել, այդ, իհարկե, միշտ սխալ հետևանքի կհասցնեն։ Ինչո՞ւ որովհետև վեպի մեջ լինում են, ինչպես ասեցի, միմյանց հակառակ տիպեր, որ բնավորությամբ և իր զբաղմունքով լինում են հետաքրքիրներ և հետաքրքիրներ, խոշորամիտներ և ազատամիտներ, խելացիներ և հիմարներ։ Եթե կրիտիկոսը կվեր առնի մի խելացիի կարծիքը և մի հիմարի կարծիքը և երկուսն էլ համաբերով հեղինակի կարծիք, կհամեմատի միմյանց հետ, շատ հասկանալի է, որ հակասություն կգտնի իմ կյանքում այդ խորտակ ձևը ևս ոչ մի կրիտիկայում չեմ տեսել, բացի պ. Հայկունու կրիտիկայից։ Նրա համար տիպերի տարբերություն չկա։ Ով ինչ խոսում է «Կայծերի» մեջ, ով ինչ միտք է հայտնում, թե լավ, թե վատ, բոլորը հեղինակին է վերաբերում։ Մինչև անգամ բրդերի և թուրքերի հայհոյական խոսքերը հայերի վերաբերությամբ, նրա կարծիքով, Բաֆֆիի բերնից են դուրս գալիս։

Ահա մի օրինակ.

«Ընթերցող, պ. Բաֆֆին հափշտակված է ամբոխով. նա նրանում գտնում է մեծ զորություն և բավականանում։ Շատ սխրանք։ Բայց, ահա, միևնույն պ. Բաֆֆին գտնում է նույնպես, որ հայը (ամբոխը) մի կույր հավի սիրտ չունի (եր. 350), որ հայը ազգի ջրաղաց է, պետք է գցել նրան մի տոպրակի մեջ և խփել պատին, որ երկու աչքերն էլ կուրանան» (եր. 105)։

Պ. Հայկունու զրպարտություններից ցույց տալու համար, ես ամբողջապես կբերեմ «Կայծերից» այն կտորը, որտեղից նա առել է վերոհիշյալ խոսքերը։

«Պատահում էին այսպիսի դեպքեր (ասում է Ջարհադը) և այդ դեպքերը կրկնվում էին խիստ հաճախ։ Ամեն երեկո, երբ (հայ) աշակերտները զարթնից վերադառնում էին իրանց տները, մահմեդականների փողոցներից անցկենալու ժամանակ, հավաքվում էին թուրքերի, պարսիկների երեխաները և ծեծում էին հայ երեխաներին։ Ես մինչև այսօր չեմ մոռացել մի երգ, որ հնարել էին նրանք և մեզ տեսնելու ժամանակ երգում էին։ Նրա բովանդակությունը մոտավորապես այս էր. «Հայը ազգի ջրաղաց է, պետք է գցել նրան տոպրակի մեջ և խփել պատին, որ երկու աչքերն էլ միասին կուրանան...»։ Մենք ուրախ էինք լինում, երբ մեր վի-

բավորանքը վերջանում էր այդ նախատական խոսքերով։ Բայց նրանք ծնծում էին մեզ։ Աշակերտները գանգատվում էին իրանց ծնողներին, բայց ի՞նչ կարող էին անել ծնողները։ Մեծերը ծնծվում էին մեծերից, իսկ փոքրները՝ փոքրներից»... (եր. 105)։

Հիմա նայեցեք, պ. Հայկունին Բուրք և պարսիկ երեխաների վարմունքը, նրանց հայհոյանքները վերագրում է «Կայծերին» հեղինակին և ասում է, թե Բաֆֆին հայ ամբոխին աղբի ջրաղաց է կոչում և այլն։

Մի այլ օրինակ.

— «Կայծերի» հեղինակը միշտ պնդում է, որ հայի սիրտը «հավի սիրտ է», իսկ բրդինը՝ առյուծի։ Շատ սիրուն։ Բայց ահա մի հայ աքաղաղ (Կարոն) մեն-մենակ 50 հոգի բուրդ ավազակներին հրամայում է տեղերիցը չժաժ գալ, և այդ առյուծները «ընդունում են և (Կարոյի) վերջին պայմանը» (եր. 253)։ Եթե այդ ճշմարիտ է, այն ժամանակ ո՞վ է հավը, պ. Բաֆֆի, հիսուն քո՞ւրդը, թե մի հայլուր քալաճո՞ղ, պ. Բաֆֆի, դրուստ քալաճո՞ղ»։

Տեսնո՞ւմ եք, ինչ դիվնային խոսքերով է վերջացնում պ. կրիտիկոսը իր նկատողությունը։ Նա վերցնում է մի երկու բառ վեպի այս երեսից, մի քանի բառ՝ վեպի մի այլ երեսից, խառնում է միմյանց, ինքը «քալաճողշ» է շինում, հետո սկսում է հեղինակին ծաղրել։ Նախ, սուտ է, որ Բաֆֆին իր գրքի մեջ որևիցե տեղում ասած լիներ, թե հայի սիրտը հավի սիրտ է։ այդ ասում է բուրդը (250) և ոչ թե Բաֆֆին։ «Կայծերի» մեջ հեղինակը, սկսյալ գրքի սկզբից մինչև վերջը, ամենևին չէ խոսում։ Խոսում են, դատում են, կարծիքներ են հայտնում միայն գործող անձինքը։ Ինչպե՞ս կարելի է գործող անձինքների, մանավանդ Բշնամի բուրդի ասածը հեղինակին վերաբերել։ «Կայծերի» մեջ մի տեղում (եր. 346) մի բուրդ աղջիկ ասում է, թե «հայը շուն է»։ Պ. Հայկունու լոգիկայով այդ ասողը Բաֆֆին է, ինչպես նույն պ. Հայկունու լոգիկայով հայերին «աղբի ջրաղաց» կոչողը Բաֆֆին էր։ Երկրորդ, սուտ է, որ Կարոն «մեն-մենակ» 50 հոգի բուրդ ավազակներին զապում է, քանի որ Կարոյի հետ էին և նրա ընկերները։

Պ. Հայկունին ոչ միայն «Կայծերի» մեջ գործող անձինքներին նույնացնում է հեղինակի անձնավորության հետ, այլ նրանցից մի քանիսին համարում է հեղինակի հայրը, մայրը, քույրերը և այլն։

«Ինձ այնպես է թվում, թե դուք, պ. Բաֆֆի, ձեր կուրծքի վրա զգում եք այն ծանրությունը, որի տակ այսքան դարեր տնքտնքում ու հեծեծում են տաճկահայերը, ձեր հայրը՝ Սահակը, ձեր մայրը՝ Նիգարը, քույրերդ՝ Մարիամն ու Մագթաղը...»։

Այդ արդեն լրբություն է։

Հիմա անցնենք պ. Հայկունու ավելի նշանավոր նկատողություններին, որոնց մեջ պարոնը նույնպես «Կայծերի» գործող անձինքների կարծիքները վերաբերում է հեղինակին։

«Կայծերի» մեջ (եր. 461—463) հերոսներից մեկը՝ Ասլանը, հետևյալ դատողություններն է անում Հին Հայաստանի եկեղեցականների մասին.

«Բայց եղել են ժամանակներ, և այն ժամանակները շատ հին են, բայց մեր եկեղեցականները այնպես չէին, որպես այժմ։ Նրանք դրանց նման անբնական կյանք չէին վարում. նրանք դերդաստանի հայրեր էին և ընտանիքների մեջ էին բնակվում։ Այս պատճառով, նրանք գիտեին, թե ինչ է կյանքը, ինչ է աշխարհը և ինչպես պետք է հոգ տանել նրա համար, որ մարդու ապրուստը հանգիստ ու բախտավոր լինի։ Դերդաստանի հայր լինելով, միևնույն ժամանակ նրանք ժողովրդի հայրն էին, ծնողական սիրո զգացմունքը առաջ էր բերել նրանց մեջ և խիստ ջերմ սեր դեպի ամբոխը, և բոլոր սրտով նվիրել էին իրանց անձը ժողովրդի բարօրության։ Իսկ այժմ չէ կարելի գտնել մի մարդ, որ այնպես վայրենի, անզգա և անտարբեր լիներ դեպի հասարակաց բարին, ինչպես մեր կուսակրոն եկեղեցականը։

Վանքն այն ժամանակ, այժմյան պես, աշխարհային գործերից փախած և իրան երևակայական հոգևոր ծառայության նվիրած, ծույլերի բնակարան չէր։

Վանքն այն ժամանակ հոգևոր և մարմնավոր դպրոց էր, ուր անխոնջ միաբանությունը պարապած էր մանուկների կրթությունով, գրքերի թարգմանությունով, ինքնուրույն հեղինակություններով և դիտությունն ու լույսը ժողովրդի մեջ տարածելով։

Եկեղեցականությունը այն ժամանակ, որպես կրոնի, եկեղեցու և կրթության, նույնպես և հայրենիքի ու պետության հզոր պաշտպանն էր։ Երբ լինում էին մեր թագավորների ու նախարարների մեջ խռովություններ, եկեղեցականն էր նրանց մեջ հաշտեցուցիչ տարրը։ Երբ լինում էին թշնամու հետ պատերազմներ, եկեղեցականն էր ոգևորում ժողովրդին կռվելու, քաջությամբ կռվելու և պաշտպանելու իր հայրենիքը։ Երբ որևիցե թագավորի հետ պետք էր խաղաղության դաշն կապել, եկեղեցականն էր դեսպանախոսության գնում։ Երբ հայրենիքին վտանգ էր սպառնում, և ուրիշ թագավորներից պետք էր օգնություն խնդրել, եկեղեցականն էր միջնորդ դառնում։ Մի խոսքով, բարձր հոգևոր կառավա-

բությունը խիստ սերտ կերպով կապված էր Թագավորի իշխանության հետ, և երկու ներդաշնակ ուժեր միացած մի ամբողջության մեջ՝ լծորդաբար առաջ էին տանում պետության կառավարությունը։

Այս ամենը, ինչ որ գործում էր եկեղեցականությունը, բոլորովին ընդդեմ էր նրա կրոնական բնավորությանը։ Բայց մեր եկեղեցականությունը այն ժամանակ մի նշանավոր բացառություն էր կազմում ամբողջ քրիստոնեական աշխարհում, նա կատարյալ ժողովրդական էր, նա միացնում էր իր մեջ հոգևոր և նյութական կյանքը՝ իրական աշխարհը և երկինքը։ Իսկ ա՞յժմ...»։

Այժմ ցույց է տալիս Սալանը, որ այժմյան եկեղեցականները շեղվել են իրանց նախնական դրությունից։ Բայց պ. Հայկունին, նախնի եկեղեցականների վերև հիշած բոլոր արժանավորությունները, նրանց բոլոր լավ առանձնահատկությունները մի կողմ դնելով, «Մեղուի» և «Մշակի» կրոնական հարցն է ներս շպրտում «Կայծերի» քննության մեջ։ Նա աշխատում է ցույց տալ, իբր թե Բաֆֆին (դարձյալ Բաֆֆին) ասած լինի, թե նախնի եկեղեցականության առավելությունը միմիայն նրանումն էր, որ նրանք ամուսնացած էին, իսկ այժմյանները կուսակրոն են։ Եվ «Բոքլին» իրան օդնության կանչելով, աշխատում է սխալ համարել այդ կարծիքը և խորհուրդ է տալիս Բաֆֆիին գնալ պատմությունը նորից ուսումնասիրել և, առանց պատմություն սովորելու, պատմական քննությունների մեջ չմտնել։

Նա հետևյալ խոսքերով պահանջում է «Կայծերի» հեղինակից, որ ցույց տա, թե «ե՞րբ, ո՞ր դարում և ո՞ր հոգևորականները իրանց կաթոլիկոսական և եպիսկոպոսական աթոռների և բարձերի վրա բազմած ժամանակ իրանց հետ աթոռակից և բարձակից ունեին իրանց սիրասուն կնեերին՝ կնիկներին»։

Թեև մի վեպի քննության նպատակից բոլորովին դուրս է այս տեսակ եկեղեցական վիճաբանությունների մեջ մտնել, բայց որովհետև պ. Հայկունին պահանջում է, պետք է ցույց տալ, որ սկսյալ սուրբ Գրիգոր Լուսավորչից մինչև նրա տոհմի վերջին ժառանգը, Սահակ Պարթևը, հայոց կաթողիկոսների մի ամբողջ շարք ամուսնացած էին, կին և որդիք ունեին, մինը մյուսից հետո ժառանգում էին հայրապետական աթոռը, որդին հաջորդում էր հորը։

Բայց որովհետև պ. Հայկունին պատմական մի մեծ սխալ է համարում այդ, նրա պարտավորությունն է՝ այդ երկուսից մեկը ապացուցանել. կամ ցույց տալ, որ վերև հիշված կաթողիկոսական ամբողջ սերունդը ամենևին ամուսնացած չէ եղել, և կամ, եթե ամուսնացած էին, նրանք

հայրապետական աթոռը նստելուց հետո օրինապես բաժանվեցան իրանց ամուսիններից։ Դրանով պ. Հայկունին մի նոր դյուտ արած կլիներ մեր եկեղեցական օրենքների մեջ, որ ապահարզանը դոյություն է ունեցել մեր եկեղեցու սկզբնական դարերում, որովհետև կաթողիկոսները և ամուսնանում էին, և բաժանվում էին իրանց ամուսիններից։ Բայց թե «Բոթլը» այսպես է ասել, կամ այնպես է ասել, այդ հարցի մեջ Բոթլին դիմելու հարկ չկա, մանավանդ որ Բոթլից շատ խելք չի տեսնի պ. Հայկունին, հարկավոր է ուղիղ դիմել հայոց պատմությանը։

Պ. Հայկունին իր կրիտիկայի մեջ մի խորամանկ ձև է բանեցնում հակառակորդի վրա մեղադրանքներ բարձելու համար։ Այդ ձևը կարող է շատ ընթերցողներին մոլորեցնել, եթե ուշադրությամբ չկարդան նրան։ Նա ուղղակի չէ դիմում հարցին, այլ ամեն ինչ սկսում է բարձր, փքված և սոֆիզմներով լի հառաջաբաններով, բայց երբ հասնում է բուն իրողությանը, փաստերին, այստեղ լռությամբ անցնում է, իսկ ընթերցողը մնում է հառաջաբանի տպավորության ներքո, ինչն իրան խաբելով, թե մի եշմարիտ բան կարդաց։

Իմ հոդվածի սկզբներում ես ցույց տվեցի, որ պ. Հայկունին աշխատում էր հաստատել այն կարծիքը, թե «Կայծերը» պատմական վեպ չէ, թե նրա մեջ պատմական ոչինչ չկա։ Հանկարծ այդ բոլորը մոռանալով, նա սկսում է երկար երեմեականներ կարդալ, որ Բաֆֆին առանց պատմություն ուսումնասիրած լինելու, հանդգնում է պատմական վեպեր գրել։ Ես կբերեմ նրա սեպհական խոսքերը։

«Պատմությունը, ես առավել նրա ժամանակագրական մասերը գրելը, պ. Բաֆֆի, «Խնկեր» ու «Կայծեր» գրելու նման հեշտ բան չէ, ինչպես դուք կարծել եք։ Պատմական վիպասանը իրան համար մի բարոյական, անպուճ պարտավորություն պիտի համարի՝ թույլ չտալ իրան թեթև գրչին մի կետ, մի «նշանախնդ» անգամ թղթի վրա չդնել, առանց մի քանի տեսակ անհրաժեշտ և իրական փաստերի, առանց ոչ թե մոլեռանդ, այլ ամենաբարեխիղճ և բազմակողմանի հետազոտությունների և ամենամանրամասն խուզարկությունների։ Դրա համար անհրաժեշտ և անպայման հարկավոր է, բարեկամս, որ պատմական վիպասանը, կամ պատմության այս և այն մասը շոշափողը, լինի նախ՝ զերծ և ազատ որևէ տեսակ մոլեռանդությունից և երկրորդ՝ ունենա գիտություն (մանավանդ մի քանի գիտություններին), եթե ոչ մասնագիտական, գեթ հավատարիմ և առատ պաշար խոստովանեցեք, պ. Բաֆֆի, որ ձեզ պակսում են թե առաջինը և թե երկրորդը, դուցե և երրորդ ու չորրորդ պայմաններ, ուստի խորհուրդ եմ տալիս ձեզ չմոտենալ այն տաճարին,

պատմական վիպասանությանը, որի սուրբ և մաքուր աստիճանները կարող ևք մի օր ձեր ցնծուն և հնացած ու մաշված հողաթափով հանդգնաբար կեղտոտել ու նսեմացնել» և այլն։

Պ. Հայկունու այդ երկար հառաջաբանը, այդ ամբողջ մեղադրական ճառը կարդալով, ընթերցողը ապաստում է, որ նա «Կայծերից» դուրս կրելն սխալների մի երկար շարք և ցույց կուտա, որ Բաֆֆին մեղանչել է պատմության դեմ։ Բայց ինչո՞վ է վերջանում պարոնի մեղադրանքը։ Նրանով, որ ս. Տիրամոր վանքի առնախմբության հանդեսի նկարագրությունը, (363—379), նրա կարծիքով, ճիշտ չէ։ Թե ճիշտ է, թե ճիշտ չէ, այդ ուրիշ հարց է, բայց մի՞թե մի որևիցե վանքի առնախմբության հանդեսը, որ այսօր կատարվում է մեր աչքի առջև, պատմական իրողություն է։ Նա կարող է հիշեցնել մեզ պատմության այս և այն երևույթները։ Նա կարող է պահպանած լինել իր մեջ շատ մնացորդներ հին ժամանակներից, բայց այսօրվա նկարագրությունը ժամանակակից է։ Եվ նրան ուսումնասիրելու կամ նկարագրելու համար հարկավոր չէ դիմել պատմությանը, այլ պետք է ուղիղ դիմել դեռ չմեռած կյանքին, որի մեջ այսօր կատարվում է նա։

Պետք է բավական հանդգնություն ունենալ և այսպես անամոթաբար վերաբերվել դեպի մի հեղինակ, որ տվել է մեզ այնպիսի գեղեցիկ պատմական աշխատություններ, որպես են «Դավիթ Բեկը» և «Խամսայի մելիքությունները»*։

Ս. Տիրամոր վանքի մասին մենք երկար պետք է խոսենք, որովհետև այդ մասը բռնում է պ. Հայկունու կրիտիկայի համարյա կեսը։ Բայց այժմ հարկավոր եմ համարում մի քանի խոսքերով ցույց տալ, թե պատմական վիպասանը մինչև որ աստիճան, կամ ինչ չափով պարտավոր է հետևել պատմությանը։

Բանաստեղծը ազատ է, նա չի պիտի լինի պատմության սարուկը։ Եթե նա ամենայն հշտությամբ կհետևի պատմությանը, այլևս չի լինի

---

* «Դավիթ Բեկի» և «Խամսայի մելիքությունների» վրա խոսելով, պ. Հայկունին իր հոդվածի ծանոթություններից մեջ, կարծեմ չորս անգ միևնույնը կրկնում է, որ թեև ինքը չէ կարդացել այդ գրքերը, բայց հաստատ իմանում է, որ նրանց մեջ ևս շատ պատմական սխալներ կան։ Այդ պետք է վերաբերել պ. կրիտիկոսի առանձին ընդունակությանը, որ նա առանց կարդալու ևս կարող է նկատել գրքերի մեջ սխալներ։ Բայց ես չեմ կարող լռել պ-յանի աստվածության վրա, թե նա հիշյալ գրքերը չէ կարդացել։ Մի ժամանակ պարբերը Ախալցխայի և Ախալքալաքի գյուղերում մի նոր գրավաճառության հղանակ էր հնարել, գիշերները գյուղացիներին հավաքում էր անասունների ախոռներում և կարդում էր նրանց «Դավիթ Բեկը»։ Գյուղացիները գրավվում էին, հետո վճարում էին նրան գարի, ձու, պանիր, հավ և այդ միջոցներով գնում էին «Դավիթ Բեկի» հատորները։ Խմբ. ծնդ.։

նա ստեղծագործող, բայց միայն արտագրող։ Բանաստեղծը, արդարև, կարդում է ժամանակագրություններ, ծանոթանում է պատմության հետ, ծանոթանում է իր ընտրած ժամանակի հետ, իր ընտրած անձինքների հետ, ստուգում է, համեմատություններ է անում, բայց այդ բոլոր ուսումնասիրություններից նա առնում է այն գծերը միայն, ինչ որ պետք է իր ստեղծագործության համար, իսկ գլխավոր գործողությունները իր ֆանտազիայի ծնունդն է լինում։ Նա մինչև անգամ շատ դեպքերում իրավունք ունի ոչնչացնելու պատմության փաստական ճշմարտությունը, որովհետև նրան պետք են դաղափարական ճշմարտություններ։ Հայր Արսեն Բագրատունու Հայկ Դյուցազնը ամենևին նման չէ Խորենացու Հայկի հետ, ինչպես Շիլլերի Դոն Կարլոսը նման չէ պատմության Դոն Կարլոսին։ Նույնիսկ պատմաբանների դրչի տակ միևնույն պատմական անցքի նկարագրությունը, միևնույն պատմական անձնավորությունը տարբեր կերպարանք է առանում։ Եղիշեի Վարդանը շատ զանազանվում է Ղազար Փարպեցու Վարդանից։ Կնշանակի, որ պատմաբաններն ևս իրանց իդեալն ունեն։ Բանաստեղծը վեր է առնում պատմությունից չոր ու ցամաք կմախքը միայն, նրան վերաստեղծում է, հոգի և մարմին է տալիս մի առանձին պատկերով ներկայացնում է մեզ։ Այդ պատկերը թեև պատմության նկարագրած պատկերը չէ, բայց մենք տեսնում ենք նրա մեջ պատմությունը հարուցյուն առած, կենդանացած և իր ամբողջական կերպարանքով մեր առաջ կանգնած։ Ահա դրա մեջն է պատմական վիպասանի ճարտարությունը։

Պ. Հայկունու վերևում բերած մեղադրական ճառի մեջ ավելի աչքի են զարկում հետևյալ տողերը, որ նա ուղղում է դևպի Բաֆֆին, թե «պատմական վիպասանը պետք է ունենա պիտության (մանավանդ մի քանի պիտությունների), եթե ոչ մասնագիտական, գեթ հավասարիմ և առատ պաշար»։ Այդ տողերի վրա ես ուշադրություն չէի դարձնի, եթե պ. կրիտիկոսը իր հոդվածի մեջ մի քանի անգամ ևս ակնարկած չլիներ, թե Բաֆֆին չէ կարող լավ վիպասան լինել, որովհետև համալսարանական դիպլոմ չունի։ Բայց ես կասեմ, բանաստեղծ լինելու համար դիպլոմ հարկավոր չէ. բանաստեղծի դիպլոմը տալիս է ինքը բնությունը։ Գիտությունը անհաշտ է բանաստեղծության հետ, ճշմարիտ գիտնականը բանաստեղծ լինել կարող չէ։ Ահա ինչ է ասում այդ մասին մի երեվելի կրիտիկոս.

«Գիտության և գեղարվեստի մեջ, իրավ է, կռիվ կա։ Ոգևորությանը պետք չէ գիտություն, նա ավելի ուսյալ է, քան թե գիտությունը, նա եր-

բնք չէ սխալվում։ Ստեղծագործության հիմնական օրենքը այն է, որ նա նպատակահարմար է լինում առանց կանխակալ նպատակի, որ նա անգիտակցաբար հասնում է գիտակցության, հերքում է բոլոր թեորիաները և սիստեմները, բացի նրանից, որ առաջացած է մարդկային հոգու օրենքներից և գարևոր փորձերից, որ գործ են դրվում գեղարվեստական արդյունքների վրա։ Ուրեմն, ոչ թե գիտությունն է ստեղծում գեղարվեստը, այլ ինքը գեղարվեստը ստեղծում է մի առանձին գիտություն, այն է՝ գեղեցկի թեորիան։ Ուրեմն գեղարվեստը այն ժամանակ միայն ճշմարիտ է և վսեմ, երբ հավատարիմ է իրան և ոչ թե գիտության, իսկ եթե գիտության, բայց հենց իրա ստեղծած գիտության։ Գիտությունը միայն բարձրացնում է տաղանդը և ոչ թե ստեղծում է նրան»։

Հիմի դառնանք ս. Տիրամոր վանքի տոնախմբության նկարագրությանը «Կայծերի» մեջ (363—379), որի մասին պ. Հայկունին այնքան վրդովված է, որ մեղադրում է հեղինակին և պատմության տգիտության մեջ, և բշնամության մեջ դեպի հայոց եկեղեցին և ուրիշ շատ հանցանքների մեջ։

«Կայծերի» հերոսներից մեկը, Ֆարհադը, նկարագրելով հիշյալ վանքի տոնախմբության հանդեսը իր բոլոր հետաքրքիր սովորություններով ու արարողություններով, միևնույն ժամանակ ներկայացնում է վանքի «խեղճերի» ու «ընկալորների» սարսափելի պատկերը։ «Խեղճերը» ուրուկների (уроды), հաշմանդամների, բորոտների և զանազան տեսակ հիվանդությունների այլանդակված թշվառների մի խումբ է, որ պահվում է վանքում սուրբ Աստվածամորից բժշկություն գտնելու նպատակով։ Իսկ ընկալորները մի տեսակ պատգամախոսներ են, որոնք խելագարի նման ցած ընկնելով, փրփրելով, սկսում են զանազան դուշակություններ անել ուխտավորների համար։ Թե առաջինները և թե երկրորդները հովանավորվում են աբեղաներից, որովհետև ազդում են ուխտավորների մեջ սարսափ, անհավատություն և չերմեռանդություն։ Եվ այդ բոլորը աբեղաները նպաստավոր են համարում իրանց շահերի համար։

Ֆարհադը այդ բոլորը նկարագրելով, այն կարծիքն է հայտնում, թե դրանք հեթանոսական դարերից մնացած սնահավատություններ են։ Ահա նրա խոսքերը.

«Ոչ մի նոր վարդապետություն բոլորովին չէ կարողանում ջնջել, անհետացնել ժողովրդի սրտից այն, որ թողել է անցյալը։ Հեթանոսական ծեսերը, արարողությունները, պաշտամունքը դարերով արմատացել էին հայ հոգու մեջ, նրանք միացել էին նրա բնավորության հետ։ Քրիստոնեությունը միանգամով սրբել Հայաստանը հին նախապաշար-

մունքներից կարող չէր, մինչև ժամանակը և կրթությունը չտար նրան մի նոր ձև և կերպարանք» (եր. 370—371)։

Նույն հիվանդները տարվում են և Թիֆլիսի մոտակա եկեղեցիներում, շաբաթներով և ամիսներով պահվում են, նույն ընկավորները կարելի է տեսնել և Թիֆլիսի մոտակա ախտատեղիներում, որոնք ախտավորների վրա սարսափ են ձգում։ Բայց Ֆարհադի նկարագրած «խեղճերը» ու «ընկավորները», իրավ որ, հիշեցնում են խորին հեթանոսական ժամանակները, ինչպես որ պատկերացրած է «Կայծերի» մեջ։

Բայց պ. Հայկունին «Կայծերի» մեջ նկարագրած ս. Տիրամոր վանքի առնախմբության հանդեսը մանրամասն պատմելուց հետո ասում է, որ այդ բոլորը զրպարտություն է, բոլորը հնարել է Րաֆֆին հայոց վանքի սրբությունը արատավորելու համար։ Ահա նրա խոսքերը.

«Կռապաշտության և կուռքերի կենտրոնը հին ժամանակներում, քրիստոնեության և սրբերի կենտրոնը, մինչև մեր օրերը, ինչպես հայտնի է, Տարոնի ս. Կարապետն է (???)։ Այդ վանքը տեսնելու բախտը ես չեմ ունեցել, բայց բավական ճանապարհորդների զրվածքները (???) այդ վանքի, նրա ախտադնացների և հանդիսների մասին կարդացած եմ։ Բայց դրանից, շատ ախտադնացների հետ մանրամասն խոսակցություն ունեցել եմ։ Բայց ոչ մեկ ճանապարհորդությունից, ոչ էլ մեկ ախտադնացից ես լսած չեմ «ընկավոր», «ընկավորի» այդ տեսակ պատմություն, այդքան կախարդական գործողություններում հայ կրոնավորի այդքան չհիմ և խորամանկ մասնակցություն, այդքան և լոկ շահասիրական դիտումով եղած աշքակապություն»։ «Բայց որովհետև դա մի շատ հետաքրքիր խնդիր է, որովհետև «Կայծերի» «ընկավորի» պատգամներից ես չեմ կարող այդ հետևցնել, որովհետև պ. Րաֆֆին այդ և այդպիսի պատմական պարագաների վրա շատ բնիկ աշքով նայելու սովորություն ունի, որովհետև, ինչպես ես եմ կարծում, արաբական և պարսկական դիվրիշների, վհուկ ու կախարդների գործողությունների աղդեցությունը պարոնի վրա բավական դորեղ է, ուստի ես խոնարհաբար խնդրում եմ նրանից յուշ տալ, թե իրան նկարագրությունը ի՞նչ բանի վրա է հիմնված։ Արդյոք նա ունի՞ իրան ձևերին որևէ դրավոր կամ բանավոր հիշատակարան, ավանդություն։ Արդյոք իրանից զատ, ուրիշներն էլ տեսա՞ծ են մեր օրերում ս. Աստվածամոր վանքի այդ կռապաշտ վեղարավորներին։ Մի՛ մոռանաք, պ. Րաֆֆի, որ այդ ձեր պատկերով դուք վեր եք առնում մի ցեխի ու շաղախի ահագին կոոր և ծեփում քրիստոնեական եկեղեցվո պատն ի վեր և Քրիստոսի պաշտոնեի երեսն ի վեր»։ «Մեկնեցեք մեզ, պ. Րաֆֆի, թե ձեր այդ ս. Աստվածամոր վանքը

իրան միաբանությունով ինչի՞ց արդյոք այդպիսի խաղաղ բացառություն է կազմում ամբողջ հայ-քրիստոնյա աշխարհում»:

Այդ տողերը տպվում են «Մեղվի» 37 համարում զետեղված կրիտիկայի մեջ, իսկ նրանից առաջ նույն կրիտիկայի շարունակության մեջ (№ 33) միևնույն Աստվածամոր վանքի տոնախմբության մասին խոսելով, ահա ինչ է ասում պ. կրիտիկոսը.

«Պ. Բաֆֆիի արդար իրավունքն է նմանապես նկարագրել և ուրիշ որևէ աղգային հասարակական երևույթ, ժողովրդական սովորություն, վարքուբարք, բնկուզ այդ ամենը իրանից առաջ ուրիշներն էլ արած լինեն: Միևնույն բանի և միևնույն ձևով կրկնելը ընթերցող հասարակության վրա կարող է լավ տպավորություն և օգուտ գործել (պ. կրիտիկոսը ծաղրում է)։ Արդ՝ պ. Բաֆֆին էլ, օգուտ բաղելով իրան այդ արդար իրավունքից... երկայն-բարակ նկարագրում է «ս. Աստվածամոր վանքի ուխտավորներին» (եր. 362—380), բնպետև միևնույն նկարագրությունը ունի պ. Աղայանցը Շամշուլդայի ս. Աստվածածնի և Բոլնիսի ս. Գևորգին։ Միևնույն նկարագրությունը արած ունի և պ. Սարգսյանը («Շահենն ի Սիբիր») ս. Կարապետի ուխտավորներին»[4]։

Լավ ուշադրություն դարձրեք։ Այստեղ պ. Հայկունին բոլորովին մերկ, առանց դիմակի, երևան է գալիս իր Յանուսի նման կրկնակի դեմքով[5], մեկը հակից, մյուսը առջևից և ժամանակի ու հանգամանքների համեմատ, նա այս և այն կողմը շուռ է տալիս։

Վերևում բերած առաջին օրինակի մեջ նա ասում էր, թե ինքը շատ ճանապարհորդների գրվածքներ է կարդացել, շատ ուխտագնացների հետ մանրամասն խոսակցություններ է ունեցել, հարցուփորձ է արել, բայց ոչ որից Բաֆֆիի նկարագրության նման մի բան չէ լսել։ Թե Բաֆֆին այդ իր պատկերով (ս. Տիրամոր վանքի տոնախմբության հանդեսի մասին) «վեր է առնում մի ցեխի ահագին կտոր և նրանով ծեփում է թե քրիստոնեական եկեղեցու պատերը և թե Քրիստոսի պաշտոնյայի երեսը»։ Եվ այդ պատճառով նա խստիվ պահանջում է, որ հեղինակը գրավոր փաստերով ապացուցանի իր նկարագրությունները հիշյալ վանքի տոնախմբության մասին։

Վերևում բերած իր երկրորդ օրինակի մեջ, այդ բոլորը մոռանալով, ասում է նա, որ Բաֆֆիի նկարագրությունը ուրիշ ոչինչ չէ, եթե ոչ պպ. Աղայանցի և Սարգսյանցի նկարագրությունները՝ ս. Գևորգի, ս. Աստվածածնի և ս. Կարապետի վանքի տոնախմբությունների մասին։

Եթե այդ ճշմարիտ է, այլևս ինչո՞վ է Բաֆֆին հայոց եկեղեցու ու նրա պաշտոնյաների վրա ցեխ քսում։ Չէ՞ որ առաջին ցեխը իրանց վի-

պերով բսել են պպ. Աղայանցը և Սարգսյանցը։ Եթե այդ ճշմարիտ է, այլևս ի՞նչ դրավոր ապացույցներ է պահանջում Բաֆֆիից պ. կրիտիկոսը, երբ որ դրավոր ապացույցների տեղը ինքը ցույց է տալիս, ինչպես են՝ պ. Աղայանցի և պ. Սարգսյանցի վնակրը։

Ստախոսները հիշողություն չունեն։

Եթե պ. Հայկունին մոքումը պահած լիներ, թե «Մեղուի» 33 համարում ասել է, որ Բաֆֆիի նկարագրությունը պպ. Սարգսյանցի և Աղայանցի նկարագրությունների ճիշտ օրինակն է, այլևս «Մեղվի» 37 համարում ինքն իրան չէր հակառակի, ասելով, թե ինքը շատ գրքեր է կարդացել և Բաֆֆիի նկարագրության նման բան չէ տեսել։

Բայց ոչ, ես պ. Հայկունուն այդ աստիճան մոռացկոտ չեմ համարում։ Այդ հակասությունների մեջ մի ավելի հետաքրքիր պատճառ կա։ Պ. Հայկունին, խարդախ վաճառականների նման, իր կրիտիկայի մեջ երկու տեսակ չափ և երկու տեսակ կշիռ է բանեցնում, և որը որտեղ հարկավոր է, այն է գործ ածում։ Այսինքն՝ նա բոլորովին ներելի է համարում առանձին նպատակների համար առանձին կերպով իր խոսքերը փոփոխել։ Մի տեղում նրան հարկավոր է ցույց տալ, թե Բաֆֆին սեփական դիտողության ընդունակություն չունի, որ ինքնուրույն կերպով նկարագրի մի որևիցե վանքի տոնախմբություն. և այդ պատճառով, իր նկարագրությունը դողանում է պպ. Աղայանցի և Սարգսյանցի վնակրից։ Իսկ մի այլ տեղում նրան հարկավոր է ընթերցողներին դրդռել Բաֆֆիի դեմ և ցույց տալ, թե նա հայոց եկեղեցու թշնամի է, նրա վրա ցեխ է քսում, թե նա սահմռկում է այնպիսի հրեշավոր և երևակայական նկարագրություններ հայոց վանքերի ու վանականների մասին, որ նրանց սրբությունը արատավորեն, որ նրանց վարկը ցած գցեն։ Պարոնի թե առաջին և թե երկրորդ վարմունքը պետք է կրքի և թշնամության արդյունք համարել և ոչ խղճմտավոր կրիտիկական հետազոտություն։

«Կայծերի» մեջ նկարագրված ս. Տիրամոր վանքի տոնախմբության պատկերը ոչ առած է պ. Աղայանցից և ոչ էլ պ. Սարգսյանցից։ Նրանց մեջ ոչինչ նմանություն չկա։ Նմանությունը այնքան է միայն, որ այստեղ էլ ուխտավորներ կան, այնտեղ էլ։ Բայց Բաֆֆին իր պատկերի մեջ նկարել է այնպիսի հետաքրքիր գծեր, որոնց վրա մեր վիպասաններից ոչ ոք ուշադրություն չի դարձրել։ Այդ մասին հետևյալ համարում։

Ես շարունակում եմ խոսել ս. Տիրամոր վանքի մասին, որովհետև այդ մասը պ. Հայկունու քննադատության մեջ ընդարձակ տեղ է բռնում։

Պ. կրիտիկոսը սաստիկ զայրացած է երևում այդ վանքի «ընկավորներով» և «խեղճերով»։ Ես նախընթաց համարում ծանոթացրի ընթեր-

ցոլին, թե ինչ են «ընկավորները» և «խեղճերը», իսկ այժմ համառոտ կերպով ցույց կտամ, թե ի՞նչ կարծիք է հայտնում դրանց մասին «Կայծերի» հերոսներից մեկը՝ Ֆարհադը։

Նկարագրելով «խեղճերի» թշվառ դրությունը իր բոլոր սարսափելի գույներով, Ֆարհադը այդ միտքն է հայտնում.

«Տիրամոր վանքի այս ավանդություններն և սովորություններն խիստ խորին կապ ունեին մեր պատմական անցյալի հետ, այն ժամանակների հետ, երբ Ներսես Մեծը Տիրանի որդի Արշակի օրերով Հայաստանում հիմնեց բազմաթիվ վանքեր, նրանցից շատերը ծառայում էին որպես բորոտների և հաշմանդամների պատսպարաններ։ Ժողովրդից հեռացած այդ ախտավոր հասարակությունն ապրում էր առանձին վանքերի մեջ, ուր նրանց խնամք էին տանում։ Բայց այդ մարդասիրական սովորությունը, ժամանակների հետ փոխվելով, ստացավ բոլորովին ուրիշ նշանակություն, և ժողովրդի անհավատությունը ավելց նրան մի այլ կերպարանք» (369)։

Հետո խոսում է, թե ինչպես այդ բորոտները և հաշմանդամները այժմ համարվում էին ս. Տիրամայրից պատժված թշվառներ, և նրանց ժողովրդի մեջ մտնելով, վանքի սպասավորները տարածում էին Աստվածամոր սարսափը և փող էին հավաքում և այլն։

Մեր ժողովրդի մեջ համարյա ամեն տեղ կա այդ նախապաշարմունքը, որ հայտնի հիվանդություններ համարում են այս և այն սուրբից կամ խաչից ստացված, որպես պատիժ, և տանում են հիվանդներին նույն սուրբերի ուխտատեղիները բժշկություն գտնելու համար։

Իսկ նկարագրելով «ընկավորներին», թե որպես այդ մարդարի կանայք, բերանները փրփրած, խելագարի նման վանապան պատպամներ են կարդում և ուխտավորների համար դուշակություններ են անում, Ֆարհադը, այդ բոլորից հետո, նրանց համեմատում է հին պիֆիաների հետ[6], ասելով.

«Կարդալով վերջին ժամանակներում Հունաստանի պատմության մեջ օլիմպիական, դելֆյան Ապոլլոնի և սպանդարամետական տոների մասին[7]՝ միշտ ես հիշում էի իմ ուխտագնացությունը և սուրբ Տիրամոր վանքը։ Ես հիշում էի նրա առնախմբությունը, ուր սկսյալ խորին հեթանոսությունից, ժողովրդի հոգու մեջ մտած նախապաշարմունքները արտահայտվում էին իրանց բոլոր նախնական կերպարանքով։ Ես երևակայում էի իմ մտքում միշտ մի այսպիսի պատկեր. քրիստոնեությունը հայտնված քուրմի դգեստով» (370)։

Պ. Հայկունին այդ բոլորը զրպարտություն է համարում, ասելով, որ

ս. Տիրամոր վանքում ոչ «ընկալարներ» կան և ոչ «խնդճեր»։ Եվ այդ առիթով երկար Բաֆֆիի հակաքրիստոնեական և հականկեղեցական նկրտումները բամբասելուց հետո, պահանջում է, որ հեղինակը ուրիշ գրավոր փաստերով ապացուցանի, թե իր նկարագրությունները հիշյալ վանքի մասին ճիշտ են։ (Մի՛ մոռացեք, որ ինչպես նախընթաց համարում ցույց տվի, պ. Էրիտիկոսը ինքը աշխատում էր ապացուցանել, որ Բաֆֆին իր նկարագրությունները գողացել է պ. Աղայանից և պ. Սարգսյանից, որոնք նրանից շատ առաջ նկարագրել են միևնույն երևույթները)։

Բայց այստեղ ինձ զարմացնում է երկու բան. առաջինը, որ պ. Հայկունին դատապարտում է թե՛ հեղինակին և թե՛ իր բննելի առարկան առանց նախապես ապացուցանելու նրանց անճշտությունը։ Մենք տեսանք, թե որպիսի մեղադրական ճառ կարդաց հեղինակի վրա, նախատելով նրան և պատմության սպիտակյան մեջ, և եկեղեցու դեմ ըշնամության մեջ և այլն։ Երկրորդ, ավելի զարմանալին այն է, որ նա հեղինակի գրածները հերքելու համար, փոխանակ փաստերը ինքը առաջ բերելու, փաստերը հեղինակից է պահանջում։ Ահա նրա խոսքերը.

«Դիտեմ, իրավունք ունեիր ասելու, որ ես ձեր վերջին գաղափարները՝ «խնդճերն» իրրև վանքի և վանականի նյութական ապրյուր լինելը, չհերքեցի։ Այդ միտքը ցրելու համար մի բառ անգամ չասացի։ Չասացի, որովհետև ձեր ասածներին հավատ չընծայեցի։ Դուք, պ. Բաֆֆի, այդ դեպքում մի գանգատավոր եք, իսկ ես՝ պատասխանատու։ Թե քաղաքական և թե բարոյական օրենքների զորությամբ, պ. Բաֆֆի, գանգատաւն նախ ինքը պարտական է իրան գանգատը փաստերով ապացուցանի, որ հետո պատասխանատուն էլ աշխատի իրան հերքում իրան փաստերը առաջ բերել։ Այս պարզ հիման վրա, եթե դուք ձեր գրածները չհաստատեք, իմացեք, որ դատը կորցրած եք»։

Պ. Հայկունին նեղ տեղ բռնված կատվի նման պատեպատ է ընկնում և ինքն էլ չէ հասկանում, թե ի՞նչ է ասում։ Նա դիմում է հիմար սոֆիզմներին։ Բաֆֆիին գանգատավոր է համարում, իսկ իրան՝ պատասխանատու, և այդ հիման վրա Բաֆֆիից ապացույցներ է պահանջում։ Կարծես թե վեպի հեղինակը պարտավոր է իր գրածի յուրաքանչյուր տողի համար նոտարիուսի մոտ հաստատած վկայականներ ունենալ և ուղարկել ընթերցողներին, որ ներան հավատան։

Պ. Հայկունին մոռանում է, որ՝ ինքը կրիտիկոսի պաշտոն է կատարում, և եթե նա նկատում է վեպի մեջ անճշտություններ, պետք է ինքը ապացուցանե, որ նրանք անճիշտ են։ Նա է դատ սկսել, նա է բողոքը,

նա է դանդաղավորը և ոչ թե Բաֆֆին։ Ես կարծում եմ, որ Բաֆֆին նրան չէ հրավիրել «կայծերի» մասին ամեն տեսակ հիմարություններ դրել, և նա շատ գոհ չի լինի, որ իր աշխատությունները քննում են կրիտիկայի ցնդաբանը չկարդացած հայկունիներ։

Պ. Հայկունին նայում է վեպի վրա որպես մի պոլիցիական ակտի վրա, որի մեջ վկաների ցուցմունքով արձանագրվում է մի որևիցե պատահած անցք։ Նա խստիվ պահանջում է, որ Բաֆֆին անպատճառ դրած վայր փաստերով ապացուցանե, որ ս. Տիրամոր վանքում կատարվում են այն արարողությունները, որ նկարագրված են «կայծերի» մեջ։

Ս. Տիրամոր վանքում կարող էին ամենևին կատարված չլինել այն արարողությունները, և ս. Տիրամոր վանքը կարող էր մինչև անգամ ամենևին գոյություն չունենալ, բայց վիպասանը կատարյալ իրավունք ունի ստեղծել մի երևակայական վանք և տեղափոխել այնտեղ այս և այն վանքում կատարվող արարողությունները։ Տեղը նշանակություն չունի, այլ նշանակություն ունի իրողությունը, որ կատարվում է։ Բայց ես ավելին կասեմ, մինչև անգամ իրողությունները ևս իրանց իսկական կերպարանքով նշանակություն չունեն վիպասանի համար։ Նա իրավունք ունի հավաքել փաստեր և, հավանականության վրա հիմնվելով, նրանցից ստեղծել մի բոլորովին ուրիշ պատկեր, որը թեև իր ձևով նազածների նման չէ, բայց նրանց հատկությունն ու բնավորությունն ունի։ Ես օրինակներով կբացատրեմ այդ միտքը։

Մի քանի տարի առաջ, Հայի թանկության ժամանակ, Երևանյան նահանգի վանքերի մեկից ձայն տարածեցավ, թե այնտեղ հրաշք է կատարվել և, միաբանների աստիճ քաղցածության միջոցին, վանքի դատարկ կարասները լցվել են ալյուրով։ Այդ ալյուրն այն հատկությունն ուներ, եթե նրանից մի փոքր տարվելու լիներ մի որևիցե տուն և ցրիվ տային դատարկ կարասների մեջ, նրանք ևս կլցվեին ալյուրով։ Շրջակայքի գյուղացիները բազմությամբ դիմում էին հիշյալ վանքը և մի բուռն հրաշալի ալյուրից ձևոք բերելու համար մի քանի ռուբլիներ էին վճարում։ Բարձր հոգևոր կառավարությունն այդ իմանալով, իհարկե, արդելից վանահոր այդ խաբեբա վաճառականությունը։

Ես ճանաչում եմ մի այլ վանք, որի տաճարի մեջ ուխտավորներին ցույց են տալիս մի փոքրիկ ավազան, լցված ձեթով, նրա համար ասում են, թե ձեթը ինքն իրան բխում է, և նրանով վառվում են վանքի բոլոր կանթեղները։ Այդ սրբությունը՝ կաթիլներով վաճառվում է ուխտավորների վրա, որոնք նրանով օծում են իրանց հիվանդոտ աչքերը և բժշկություն են ստանում։

Մի այլ տեղ աբեղան ավետարանի վրա բախտահմայություն է անում։ Ուխտավորը աչքերը խփած, իր ձեռքերով բաց է անում սուրբ գիրքը, իսկ հետո վարդապետը պատահած երեսի առաջին համարը կարդալով, նրա իմաստի համեմատ գուշակում է ուխտավորի բախտը։

Վիպասանը տեսնում է այդ բոլորը և դրանց նման ուրիշ շատ արարողություններ և ստեղծում է մի բոլորովին այլ պատկեր, որի մեջ նույնպես երևում է կղերի խարեբայությունը և ամբի անհավատությունը։ Այդ երևույթի մեջ այնքան նշանակություն չունի գործողության ձևը, տեսակը, թե ինչպես է կատարվում, այլ նշանակություն ունի գործի բնավորությունը և նպատակը, որի համար կատարվում է։ Եվ վիպասանը այդ վերջինից միայն օգուտ է բաղում և նրա հարմար պատկեր է ստեղծում։

Բայց ցույց տալու համար, որ Րաֆֆին իբրև վիպասան անպամ անձնատուր չէ եղած երևակայական հրապույրների, ցույց տալու համար, որ «Կայծերը» խորին հետազոտության և անցյալի ու ներկայի խղճմտավոր ուսումնասիրության արդյունք է, ես կբերեմ ս. Տիրամոր վանքի մասին այն գրավոր ապացույցները, որ պահանջում է հեղինակից պ. Հայկունին։

Այդ ես չէի անի, եթե պ. Հայկունին թե իր նկատողությունները հիշյալ վանքի մասին և թե իր պահանջը ննդավոր նպատակներով արած չլիներ։ Նա աշխատել է, որպես առաջ ևս ասեցի, ընթերցող հասարակության մոլեռանդությունը զրգռել հեղինակի դեմ, իբր թե նա ցեխ է քսում հայոց վանքի ու վանականների վրա, նկարագրելով նրանց մեջ հեթանոսական արարողությունների մնացորդները։

Իմ բերած ապացույցները կլինեն ոչ թե մի աշխարհականի գրվածքներից, այլ մի հարգելի վարդապետի գրվածքներից։ Կարծեմ վարդապետի վկայությունը վանքի մասին ավելի մեծ կշիռ պետք է ունենա։

Մեր գրականության մեջ հայտնի է հայր Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը, Երիմյան Հայրիկի առաջադեմ աշակերտներից մեկը[8]։ Նա հայտնի է ոչ միայն իբրև մի ուսյալ և լավ եկեղեցական, այլև որպես հեղինակ զանազան գրքերի։ Ոչ ոք նրա չափ չէ ուսումնասիրել և չէ հավաքել մեր ժողովրդական ավանդությունները, սովորությունները, մեր նախապաշարմունքները և մեր թե վանքերում և թե կյանքի մեջ կատարվող սնոտիապաշտությունները։ Նա ավելի մեղք բացի զանազան պարբերական թերթերի մեջ հրատարակված հոդվածներից, և չորս ամենա-

հետաքրքիր գրքեր*, որոնք խիստ հարուստ գանձ են մեր հնագիտների հետազոտության համար։

Ահա թե ինչ է գրում հայր Սրվանձտյանցը միևնույն տեղը Տիրամոր վանքի մասին, որի տոնախմբության հանդիսը իր «խեղճերով» և «ընկավորներով» նկարագրված է «կայծերի» մեջ։

Նեսելով այն բանի վրա, թե վանքերից շատերը սկզբում մեհյանների տեղեր լինելով, մինչև այսօր մնացել են նրանց մեջ կռապաշտական սովորություններ, հայր Սրվանձտյանցը շարունակում է.

«Իբրև օրինակ խոսենք Խաթուն Տիրամոր վրայոք.

Վանեն դեպի հյուսիս իբր ութն ժամու չափ հեռավորությամբ, Բզնունյաց ծովուն ափը, բարձրադիտակ դիրք մը ունի այս վանքը և քանի մը տուն հալ գյուղացիք կը բնակին անոր շուրջ. ծովն իր երկայնությամբ կը տարածի ասոր առջևը, և իր եղջերաձև սպասվածքը սույն դարեհանդին ոտներուն ներքևն է, ուստի կընդունի իր մեջ Բանդիմահուի գետը, որ է ձկանց առուն, իր առջև կիերևի Արճեշ քաղաքը, տակավին շեն իր պարիսպներով, դռներով, շուկաներով, եկեղեցիով և մինարայով մը, զոր շրջապատած է ծովուն ջուրը և դարձուցած է կղզի մը, բայց անբնակ...

Այս վանքը դերեզման մը ունի իր տաճարին մեջը և կըսեն, թե Աստվածածնի հագուստներեն մաս մը զետեղված է հոն։ Այս գերեզմանն է, որ կերդնուն «Խաթուն Տիրամոր» անունով. այն անունով օրհնություն և անեծք կուտան, և շատ հրաշալի է. հոն կուգան ոչ միայն վանա բոլոր գավառաց կողմերեն, այլև Պարսկաստանի և Երևանի ու Նախիջևանա գավառներեն ամեն տարի բազմաթիվ ուխտավորներ։ Ուրուկներու** ժողով մը կա անպակաս այստեղ, որ զանազան աշխարհներն կուգան և քանի մը տարի կը ծառայեն, կաղոթեն ու գյուղացիներեն կը ղրկվին այս և այն գավառները ժողովք ընելու, բերելու ղրկելու, վանդի գյուղացիք բաժին ըրած են իրենց վրա, մեկը՝ վան քաղաք և անոր շրջակայքի գյուղորայք, մեկը՝ Բաշկալան, մեկը՝ Պարսկաստան, մեկը՝ Մուշ, մեկը՝ Տիգրանակերտ, մեկը՝ Պայազիտ, մյուսը Երևան, մինչև Կարնո և Ախալցխայի կողմերը և այլն։ Ամեն տարի իրենց մարդ կերթա շրջելու և հանուն տիրամոր եղած խոստումները թե մոմ, թե խունկ, շուշփա, խաչ, դրամ, կանանց խոստ ըրած արծաթի զարդերը, մատաղցու կենդանիք,

---

* 1 «Գրոց-Բրոցս», 2 «Հնոց-Նորոցս», 3 «Մանանա», 4 «Բորոս աղբար»։

** Ուրուկ նույն նշանակությունն ունի, որ ռուսերեն աստ են уроды Ուրուկ ասում են թզուկներին, հաշմանդամներին, մարմնի հրեշավոր այլանդակության ենթացողներին։

մանավանդ «Տիրամոր նշան» ունեցող կով և եզ, որոնց ճակատին վրա ճերմակ նշան մը կլինի, կը բերեն, և այդ գյուղացիք կը տիրեն։

Ուրուկները հետզհետե կառողջանան ու կերթան, ոմանք ալ նույնը կը մնան և հոն կը մնան։ Այսպիսիք կանվանին «Տիրամոր խեղճ», և իրենց այծի անունն է «Տիրամոր յարա»*։

Վանքի տոնախմբության հանդեսի մասին մի համառոտ նկարագիր տալուց հետո հայր Սրվանձտյանցը շարունակում է.

«Այս տոնը կանվանեն «Ասպարածնի տոն» և գյուղն ու վանքը մեկ անունով «Ասպարածին» կանվանեն, այնինչ, զԱստվածն՝ Ասպած և Աստվածածին՝ Ասպածածին կարտասանեն, վանցիք միայն այս տեղին Ասպարածին անունը կուտան կամ խաթուն տիրամոր։

Արդ, այդ դիրքը, այդ արարողությունը, այդ անունը արդյոք հնախուզաց համար նոր լույս մը չընծայեր թե քրիստոնեությենեն առաջ ի՞նչ վայր է եղել դա։

Եվ մի՞թե Մշո սուրբ Կարապետի վանքը իր վարդավառի տոնովը Զենովբի գրածին համեմատ նախնի Դիանայանց և Վահունյանց տոնը չե՞ն հիշեցներ. ինչպես նաև հոն մինչև ցայսօր Աշտիշատ ուխտի երթալը նույն օրը... Նույնպես և Անձևացյաց գավառի մեջ Հոգվոց վանից Դարբնաքարերուն** ուխանջ դնել, կռանի ձայնը լսելու և անկե փոշիներ առնուլ ի պահպանություն «անձանց» և այլն***։

Գալով «ընկավորներին», այսպես է գրում հայր Սրվանձտյանցը.

---

* Տիրամոր յարա նշանակում է Տիրամոր վերք, խոց, բորոտություն։

** Հոգվոց վանքի Դարբնաց քարի մասին ընդարձակ գրում է Խորենացին ս. Տիրամոր պատկերի պատմության մեջ և հիշում միևնույն կախարդական արարողությունները, որ այնտեղ կատարվում են և մեր օրերում։ «Ու ելեալ (Բարիողիմէոս առաքեալ) յաշխարհն Անձաւացեաց ի համբաւ քարի միոջ, քանզի զկռ բաղումք բնակեալ էին անդ, և պատրէին զմարդիկ տեղւոյն, տուեալ յայնմ տեղւոջե զեղս ախտականս առ ի կատարեալ զպղծութիւնս ախտից, կռանածայնս դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս դէպ էին. յորս մարդիկ աշխարհին սովորէալք, անդ առ քրային զկռերէին, տուեալ ի չառառուածոցն ծրարս բարախածորս ի պատիր ախտիցն... և անուանէին զանուն տեղւոյն այնորիկ Դարբնաց քար։ Հասեալ սուրբ առաքեալն Աստուծոյ անդ, հալածեաց զդարբինսն և զկուռսն փշրեաց որ յանուն Անհասեայ էր... Անդ հիմնարկեալ սուրբ առաքեալն զհիմն տաճարի սրբուհւոյն իւրովք իսկ ձեռօքն, շինեալ եկեղեցի, և անուանեաց զնա Սուրբ Աստուածածին... և անուանէ զտեղին Հոգեաց վանս...»[9]։

Պ. Թոխմախյանի ճանապարհորդության մեջ կարդում ենք, որ հիշյալ Հոգվոց վանքում մշտապես պահվում է մի նվիրական աքաղաղ, որի ձայնին կամ աղղաբարությանը թե միաբանները և թե ուխտավորները ամենայն հնազանդությամբ խոնարհվում են։ Տաճ. Հեղինակի։

*** «Մանանա» ժողովեաց և ի լույս էած Գ. Վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս, 1876։

«Ինկավորներն ալ մեր աշխարհի մեջ նշանավոր են. բացի ճշմարիտ լուսնոտաններին, կամավոր դաս մը կա կանանց, «ինկավոր» ըսված, որոնց թևերն ու թիկունքը, նաև երեսներ ու ճակատները զանազան նկարներ ունին ասեղներով ծակած և կապույտ գունավորած, որոց յուրաքանչյուրը մեկ-մեկ սուրբի կամ վանքի, կամ անվանի հրաշագործ Ավետարանի մը ինկավորներն են, տունետուն կշրջին և կանանց համար թիզ կչափեն, աղոթք կընեն և կհորդորեն անոնց ախտերուն կամ ուխտերուն համար իրենց սուրբին դիմել։ Երբ ուխտավոր կանայք լցվեր են Թագավոր Ավետարանին առջև կամ որևիցե ուխտատեղ մը, ինկավոր առաջուց գիտակ եղած է անոնց յուրաքանչյուրի սրտի խորհուրդին, և անոնց ունեցած իրին, կամ վրանները կրած զարդին, ուստի հանկարծ կփրփրի և գետինը կիյնա ի մեծ զարհուրանս ներկայից. կանշնչանա պահ մը և խաչ կդնեն բերան կհանդարտի, ապա հափշտակյալ իմն՝ գուշակություններ կսկսի ընել. «Կատիկ խաթուն, քո սրտի խորհուրդն այս ինչ է, բարի է, իմ աղեն (նույն սուրբը) քեզնից ի քեն կուզե ճակատիդ մազչան (արծաթե զարդ է), կամ վզիդ ճանոց ոսկին, կամ գինդերդ և այլն, որ քո սրտի մուրադը տա»։ Երանելի կդառնա այն տիկինը և մեծավ զվարթամտությամբ կհանե կձղե հոն ուզած բանը։ Այսպես յուրաքանչյուրն ուզած կողոպուտը կամավորապես կավարտ թշվառականը, վերջը Ավետարանի կամ խաչին տիրոջ հետը մնջերնին կբաժաննեն։

Այսպիսիք են, որ բազում շահս տան տերանց յուրյանց մոլելովն։ Իսկ իրենց մարմնո վրա եղած նկարն և մյուս ձևերն ու հնարքները ավելի հին և հնդկական կթվին»*։

Հիմա համոզվո՞ւմ է պ. Հայկունին, որ ս. Աստվածամոր վանքում մինչև այսօր հայոց Պյութիաս քրմուհին ուխտավորների համար գուշակություններ է անում։ Բայց մենք ավելին կասենք, որի վրա Բաֆֆին ուշադրություն չէ դարձրել իր «Կայծերի» մեջ։ Մեր մի քանի վանքերում դեռ գոյություն ունեն, եթե ոչ հնդկացոց սպիտակ փղերը և եգիպտացոց ապիսները**, բայց դրանց նման ուրիշ սրբազան անասուններ։ Ահա ի՛նչ է գրում այդ մասին հայր Սրվանձտյանցը.

«Պարսկահայոց սահմանագլուխը, Վասպուրականի գավառը, Բաշգալեին մերձ է ս. Բարդուղիմեոսի վանքը, հոն մշտնջենապես կգտնվի զույգ մը ճերմակ գոմեշ, արու և էգ, որքան ծնեն, որքան մեռնեն, միշտ

* «Մանանա», եր. 126—128։

** Ապիս եգիպտացոց ամենանշանավոր աստվածներից մեկն էր, Օզիրիսի ներկայացուցիչը երկրի վրա, դա մի սև եզն էր և ճակատի վրա պետք է ունենար սպիտակ քառանկյունի բիծ։

երկու հատ կմնան. երբ մեկը քանի մը տարի անդով տանջվի, այն դամնշնեին մաղ մը կբերեն իրեն, վրան պահելու լինի, անկին կառողջանա»։

Գալով այն հարցին, որ «Կայծերի» տեր Թոդիկը, այդ քահանա-կախարդը երևակայական անձնավորություն չէ, այլ նրա նմաններբ բազմաթիվ են, այդ մասին մի քանի քաղվածներ կբերենք Հայր Սրվանձտյանցի «Մանանայից»։

«Հըղու բաղաք կոչված՝ տասն քահանա ունին, հորում 80 տուն հայ կա։ Որընդվան՝ ինը քահանա, 60 տուն հայ։ Ասանց քահանայք մուրացկանությամբ կապրին՝ գևղեր ու բաղաքներ շրջելով, հասարակ կարդալն անդամ տգիտ են, բայց շատերը կախարդություն կբնեն» (եր. 114)։

«Սասնո և Մոտղանու քահանայից գործն ալ կախարդություն է քան մեծի մասին։ Փոխանակ Ավետարանի՝ մեկ-մեկ Ախտարք** ունին ծոցերնին գյուղե գյուղ կշրջեն հիվանդաց բուժի ընելու, ոմանք ալ աղջկանց սիրտը գինք սիրոզ երիտասարդին դարձնելու, կամ երիտասարդին սիրտը՝ գինքը սիրոզ աղջկան» (եր. 115—116)։

«Այս կողմերը ծառապաշտության և ջրապաշտությունն ընդհանուր է հայոց, քրդաց և եզիտաց մեջ»։ «Այս կարգի բաներ շատ կան, բայց մենք չենք կրնար պատմել» (եր. 117)։

Պատմողը վարպապետ է, զգուշանում է...

Այդ բոլորից հետո, եթե պ. Հայկունին չհամոզվի, կարծեմ «Կայծերի» ընթերցողները կհամոզվենն, որ Բաֆֆին ամենևին նպատակ չէ ունեցել, որպես ասում է պ. Հայկունին, հայոց վանքի և վանականների վրա «ցեխ քսելու», այլ նա նկարագրելով վանքի մեջ կատարվող հետևանոսական արարողությունները, կամեցել է, որ վանքերը սրբվին այդ «ցեխերից» և քրիստոնեական տաճարները վայելուչ ձև ու վերպարանք ստանան։ Բայց պ. Հայկունին ուրիշ կերպով է հասկանում այդ. ահա նրա խոսքերը.

«Այս կամ այն վանահոր կամ աբեղայի կողմից այսպիսի եղևնագործություն ամեն տեղ և ամեն ազգի մեջ եղած է և միշտ կարող է լինել։ Բայց եթե այդ բանից խրախուսված՝ մի ամբողջ ազգի դարավոր սրբությունները խեղկատակության և եղևնագործության որջեր շինել, պա պետք է խոստովանեմ, միմիայն «Կայծերի» հեղինակը կարող է անել։ Եթե «Կայծերը» մի տեսակ փիլիսոփայական, ուսումնական դըր-

---

* «Մանանա» եր. 107—108։

** «Ախտարք», աստղահմայության կախարդական գիրք է։

վածք լիներ, ինչ ասել կուզի, որ նրա հեղինակը միանգամայն իրավունք ուներ վանական ամեն տեսակ երևույթ էլ մանրաբնին հետազոտության և խիստ քննադատության առնելով՝ վերջ ի վերջո այս կամ այն եզրակացության հասնել, բայց որովհետև պ. Բաֆֆիի գիրքը որոշ ուղղությամբ և որոշ տենդենցիայի համար գրված է, ուստի ես չեմ հասկանում, ընթերցող, թե հայ «քաղաքական» թերթի՝ «Մշակի» գաղափարների ամենամոլեռանդ քարոզիչը, հայ ազգի համար ի՞նչ շահ և օգուտ է տեսնում, երբ այդ աստիճան դայթակղեցնում և մոլորեցնում է հայ ամբոխին դեպի սրա դարավոր սրբություններն ու սրբավայրերն» և այլն։

Երբ բանը հասնում է կրոնական, եկեղեցական խնդիրներին, պ. Հայկունին իր դատողությունների ծևը երկարացնում է, այստեղ նա իր մթնոլորտի մեջն է։

Այդ պարոնը, որպես առհասարակ նրա նմանները՝ մի տեսակ արդարանալու ձև ուննն։ Երբ նրանց ասում ես, թե մեր ժողովուրդը այս և այն անբարոյական սովորություններն ունի կամ մեր հոգևորականները այս և այն անկարգություններն են կատարում, նրանք միշտ խոսք են գըտնում պատասխանելու, ասելով, թե այդ ամեն ազգի մեջ կա։ Լավ, մի՞թե մենք չի պիտի բողոքենք մեր մեջ գտնված գողերի, ավազակների, խաբեբաների դեմ, մտածելով, թե գողեր, ավազակներ, խաբեբաներ ամեն ազգի մեջ գտնվում են։ Ո՞ր ազգի մտածող և խելացի մարդիկը չեն բողոքում անբարոյականության դեմ։ Մի՞թե խաբեբա սրեղանների, կախարդ քահանաների վարքի նկարագրությունը ի լույս ածելը նշանակում է մի ամբողջ ազգի դարևոր սրբություններր խեղկատակության առարկա դարձնել։ Մի՞թե Բարթուղիմեոս առաքելո վանքի սպիտակ գոմեշները, Տիրամոր վանքի «ուրուկներն» ու «ընկավորները» և Հոգվոց վանքի «դարբնաքարերն» ու «նվիրական աքաղաղը» ազգային սրբություններ են, և նրանց դեմ խոսելը կարող է մեղք համարվել։ Ես կարծում եմ, ոչ թե Բաֆֆին, այլ եթե Հայաստանեայց եկեղեցու հիմնադիր ս. Գրիգոր Լուսավորիչը, որը անխնա ձեռքով խորտակում էր Հին Հայաստանի կուռքերն ու հեթանոսական հիշատակարանները, եթե նա ինքը մյուս անգամ աշխարհ գալու լիներ և տեսներ, որ մեր աբեղաները իրենց շահերի համար դեռ պահպանել են այս և այն վանքում կռապաշտական արարողություններ, անտարակույս, բոլորին դուրս կաներ, կրկնելով Հիսուս Քրիստոսի խոսքերը. «Իմ տունը պետք է աստուծո տուն կոչվի, իսկ դուք արեցիք ավազակների այր»[10]։

Պ. Հայկունին ասում է, եթե «Կայծերը» լիներ մի փիլիսոփայական կամ ուսումնական գրվածք, նրա հեղինակը իրավունք ուներ վանական

այս և այն երևույթները խիստ քննադատության ենթարկել, բայց քանի որ նա ոչ փիլիսոփայական և ոչ էլ ուսումնական գրվածք է, նրան ներելի չէ վանքերին կամ վանականներին դիպչել։ Ամեն մի հարցում պ. կրիտիկոսը ցույց է տալիս իր խորին տգիտությունը։ Պարոնը չգիտեն, որ ժամանակակից վեպի բարձր նշանակությունը հենց նրանումն է, որ վճռում է այն բոլոր հարցերը, ինչ որ փիլիսոփայությունն ու ուսումը անզոր են լինում վճռելու։ Նրա մեջ քննադատվում են ամեն տեսակ հիմնարկություններ, ամեն տեսակ երևույթներ, ինչ որ ներկայացնում է մեզ կյանքը և մարդկությունը։ Այդ հիմնարկությունների և երևույթների մեջ բացառություն չէ կազմում եկեղեցին իր եկեղեցականներով, վանքը իր վանականներով։ Ի՞նչ է «Բափառական հրեան», եթե ոչ եզվիտների խաբեբայության նկարագիրը։ Ո՞ր եվրոպական աղգի մեջ չկա մի ամբողջ գրականություն, որ նվիրված չլիներ հոգևորականների վարքի նկարագրություններին։ Իրանց վանքերը և աբեղաները նկարագրում են նրանք ոչ միայն վեպերի մեջ, այլ մինչև անգամ թատրոնական բեմի վրա են դուրս բերում։

Բայց պ. Հայկունու նպատակը ուրիշ է. նա աշխատում է գրգռել հայ ժողովրդի մոլեռանդությունը «Կայծերի» հեղինակի դեմ և նրա գրքին վնասել։ Մի տեղում չկարողանալով զսպել իր կրքերը, պարզ ասում է նա.

«Դարշելի վարդապետներ։ Ահա, երևի, ինչի համար «Մշակը» և նրա դաղափարների ամենամոլեռանդ քարոզիչ բաֆֆիները այդքան ջերմ եռանդով ու ցանկությամբ հայ եկեղեցու համար ենթորմ, վերանորոգության են պահանջում»։

Մի՞թե վանքը կախարդներից, սրբապան գոմեշներից, նվիրական արձաղաններից և սուտ մարգարեություններ անող կնիկներից (ընկավորներից) մաքրելը նշանակում է եկեղեցու մեջ վերանորոգություններ կամ ենթորմ մտցնել։ Ուրեմն պ. Հայկունին այդ կռապաշտական արարողությունները մեր եկեղեցու էական հիմունքներից մեկն է ընդունում, որ նրանց ոչնչացնելը համարում է եկեղեցու դավանությունները փոփոխել և նրա մեջ վերանորոգություններ մտցնել։ Բոլ շողոքորթ փարիսեցիները խունկ ծխեն ամեն տեսակ կուռքերի[1], բայց Հիսուս Քրիստոսի եկեղեցին սուրբ է և պետք է միշտ մաքուր մնա ամեն տեսակ արատներից։

Այժմ դառնանք դեպի պ. Հայկունու այն նկատողությունները, որոնցով ցույց է տալիս, թե Բաֆֆին «Կայծերի» դանազան տեղերը առել է այս և այն գրվածքից։ Բայց նախքան նրա նկատողությունների վրա խոսելը, պետք է հաստատել, թե ի՞նչ է նշանակում գրականական սեփականու-

բյուն: Այդ մասին ես կբերեմ Մարդուի խոսքերը[12], որին շատ ժամանակ չէ, որ մեզադրում էին գրականական գողության մեջ:

Խոսելով գրականական սեփականության մասին, ասում է նա. «Այդ հարցի վճռելը շատ դժվար է, թեև նոր չէ: Ահա երկու հազար տարի է, որ նա հերթի վրա է, և հասարակական կարծիքը միշտ քննում է նրան միևնույն կերպով: Իրավ է, գտնվել են մարդիկ, որոնք ասել են, թե գրականական սեփականությունը գտնվում է միայն այնտեղ, որտեղ կա ստեղծագործություն: Այդ նշանակում է լուծել հարցը մի նոր անլուծելի խնդիրով, որովհետև, նախ և առաջ, պետք է լուծել, թե ի՞նչ է ստեղծագործությունը»: Մյուսները ասում էին. «Շատ հասկանալի է, դուք ստեղծում եք մի մեծ աշխատություն, ոչ ոքի խելքին չէ գալիս փոխակերպել նրան, ահա հենց այստեղ է ձեր գրականական սեփականությունը»: Իհարկե, լավ խորհուրդ է, բայց դժվար է կատարելը: Երրորդները գրում էին. «Գրականական սեփականությո՞ւն: Բայց դա ամենևին չկա»: Այդ պես. վիկտ, Սարսեի և Ֆուկիեի կարծիքն է[13]: Բայց դա իմ կարծիքը չէ: Ես հաստատ հավատ ունեմ գրականական սեփականության մասին, բայց ես հավատում եմ նշմարիտ գրականական սեփականությանը: Գրականական սեփականությունը է այն ինքնուրույն, առանձին ձևը, որը մատենագիրները կամ արհեստագետները կարողանում են տալ ընդհանուր գաղափարին: Այդ որոշումը ինձ չէ պատկանում, այլ պատկանում է բոլորին: Եվ ի՞նչպես կարող է այլ կերպ լինել: Մարդկությունը միշտ միևնույնն է: Նա անվերջ կերպով ինքն իրան կրկնում է: Այստեղ դուք միշտ հանդիպում եք միևնույն կրքերին, միևնույն ծիծաղելի կողմերին, միևնույն մոլություններին: Դրաման կամ կոմեդիան (բացառություն չեն կազմում և վեպերը), որ օգուտ են քաղում այդ կրքերից, ծիծաղելի կողմերից, մոլություններից, ստիպված են պատյտ գալ միևնույն կախարդված շրջանի մեջ: Այդ պատճառով մեր ժամանակի մատենագիրները կամ արհեստագետները անում են այն, ինչ որ արել են նրանց նախորդները, միայն այն կերպարանափոխություններով, որոնք պայմանավորվում են հասարակական կյանքով, լեզվով, բարքուվարքով և այլն: Իսկ էության մեջ, չնայելով ձևերի զանազանությանը, էությունը մնում է միևնույնը: «Համլետը դա Օրեստն է, Օրոսմանը Օթելլոն է, Գրանդոնը Հարպագոնն է..., այսինքն, միշտ սեր, խանդոտություն, ամուսինների անհավատարմություն, ժլատություն, մի խոսքով, միշտ միևնույն մարդկությունը: Բայց ամեն մեկը օգուտ է քաղում այդ ընդհանուր գաղափարներից իր ձևով: Թեև էությունը միշտ միևնույնն է մնում, բայց ձևը կարող է փո-

փոխվել անվերջ կերպով, հեղինակի իսկական և սեփական դրոշմի շնորհիվ, որը նա տալիս է ընդհանուր գաղափարին և բոլորովին մաշված այժմեից նա կարողանում է ստեղծել մի նոր և ճշմարիտ ինքնուրույն աշխատություն։ Եվ այդ է դրականական սեփականությունը։ Նա կայանում է ոչ թե գաղափարի մեջ, որից մատենագիրը օգուտ է քաղում, այլ նրա մեջ, թե ինչ է շինում նա այդ գաղափարից։ Եվ այսպես, գաղափարը, այժմեսը պատկանում է ամենին, իսկ ձևը պատկանում է ամեն մի մատենագրին առանձին կերպով»։

Կյանքի մեջ կատարվող այս և այն հասարակական երևույթը ամեն մի գրողի սեփականություն է, ամեն ոք իրավունք ունի նրանցից օգուտ քաղել և իր ցանկության համեմատ նրանց ձև ու կերպարանք տալ։ Եվ այդ պատճառով, ազգերի դրականության մեջ չկա և չէ կարելի ցույց տալ կյանքի այս և այն երևույթներից գոնե մեկը, որի վրա հազարավոր գրողներ ուշադրություն դարձրած չլինեին և իրանց աշխատության նյութ շինած չլինեին։ Բայց դրանցից ամեն մեկը նկարագրում է իր ձևով։ Իսկ պ. Հայկունին, իհարկե, այդ պայմանները հասկանալ չէ կարող, մանավանդ, որ նա իրան նպատակ է դրել ցույց տալ, որ «Կայծերի» մեջ նոր բան չկա։

Օրինակ, «Կայծերի» հերոսները մի կռիվ են ունեցել մի կիրճի մեջ քրդերի հետ (եր. 248—253)։ Մերենցի հերոսներն ևս մի կռիվ են ունեցել մի կիրճի մեջ արաբացիների հետ։ Պ. Հայկունին աշխատում է հաստատացնել, որ Բաֆֆին այդ կռվի նկարագրությունը սովորել է Մերենցից։ Բաֆֆին ամենևին պետք չուներ Մերենցից բան սովորելու, քանի որ Մերենցի գրքի լույս տեսնելուց առաջ մի նույնպիսի կռվի նկարագիր Բաֆֆին պատկերացրել է իր «Ջալալեդդինի» մեջ։ Բացի դրանից, «Դավիթ Բեկի» մեծ մասը զանազան ռազմագիտական և պատերազմական նկարագիրներ են։ Եթե Բաֆֆին պետք լիներ գաղափար կազմել այս տեսակ կռիվների մասին, ավելի շուտով կուսումնասիրեր հունաց պատմության այն տեղը, ուր Լեոնիդաս մի կիրճի մեջ 300 հոգով ընդդիմացավ պարսից բազմաթիվ զորքերին։ Հարյուրավոր ռոմաններ կարելի է ցույց տալ եվրոպական դրականությունից, որոնց մեջ կան զանազան կռիվների և մենամարտությունների նկարագրություններ։ Բայց այդ ռոմանների կրիտիկոսները շատ ծիծաղելի կլինեին, եթե ասեին, թե հեղինակները գողացել են միմյանցից, քանի որ յուրաքանչյուրը առանձին կերպով է նկարագրում իր հերոսի կռվի հանդեսը։

Մի այլ օրինակ. «Կայծերի» հերոսներից մեկը՝ Կարոն, մի ճառ է խոսացել (197—201)։ Պ. Հայկունին ասում է, թե Աբովյանի Աղասին,

Ազայանցի Հաբությունը, Շերենցի քահանան (?) և չգիտեմ այլևս ովքեր, նույնպես ճառեր են խոսացել։ Շատ լավ են արել։ Խիստ սակավ առմաններ կարող են պատահել, որի մեջ հերոսներից մեկը մի որևիցե ճառ ասած չլինի։ Եթե պ. Հայկունին կամենում է ցույց տալ, որ Կարոյի ճառը Բաֆֆին առել է մի ուրիշ գրվածքից, ավելի լավ կաներ, որ Կարոյի ճառը նույնությամբ արտատպեր և նրա հանդեպ դներ մյուսը, որտեղից վեր է առել Բաֆֆին։ Այն ժամանակ մենք «Կայծերի» հեղինակի վարմունքը կհամարեինք գրականական գողություն։ Բայց քանի որ այդ չէ արել պ. Հայկունին, մենք նրա ասածը կհամարենք բամբասանք և ավելի ոչինչ։

Մի այլ օրինակ ևս։ Այստեղ պ. Հայկունին կատարյալ իդիոտության է հասնում։ «Կայծերի» մեջ Բաֆֆին նկարագրում է մի հայոց տուն (եր. 20)։ Պ. Հայկունին ասում է, թե Պռոշյանցն էլ ունի մի տան նկարագրություն «Հացի խնդրի» մեջ։ Պ. Հայկունին կամ իր կյանքում մի երկու հայերեն վեպ է կարդացել և ամեն անգամ դիմում է այդ վեպերին, կամ եթե շատ է կարդացել, ուրեմն պետք է նկատած լիներ, որ բոլոր ազգերի գրականության մեջ չէ կարելի ցույց տալ մի վեպ, որի մեջ տան նկարագրություն չլիներ։ Հայտնի բան է, ուր մարդիկ են ապրում, այնտեղ էլ տուն կլինի։

Պ. Հայկունին իր այդ և դրա նման նկատողությունների մեջ փոքր է մնում, որ ասե, թե Բաֆֆին «Կայծերի» ամբողջ գործողությունները առել է ուրիշ վեպերից, որովհետև այստեղ էլ մարդիկ ուտում են, խմում են, խոսում են, պառկում են, այստեղ էլ մարդիկ երկու աչք, երկու ոտ ունեն։ Եվ այդ բոլորը նա համարում է կրիտիկա։

Այժմ դառնանք այն կետերին, որոնցմով պ. Հայկունին «Կայծերի» մեջ անբնական երևույթներ և գործողություններ է ցույց տալիս։

Ծարհադը և Մարոն սենյակի մեջ մենակ-մենակ հետ խոսում են. այդ միջոցին բակից լսելի է լինում շան կնճկնճոցի ձայնը։ Օրիորդը և Ծարհադը սենյակից դուրս են վազում, որ տեսնեն՝ ինչ է պատահել (եր. 330)։ Պ. Հայկունին այդ անբնական է համարում։

Ծարհադը հուսահատությունից դիշերը գնում է գետի մոտ, պատրաստվում է գետն ընկնել և խեղդվել։ Այդ միջոցին պատահում է նրան իր 12 տարի առաջ անհայտացած ընկերը՝ Կարոն և Թույլ չի տալիս (եր. 85)։ Պ. Հայկունին այդ անբնական է համարում։

Կարոն Ծարհադին տանում է մի ավերակ մինարեթ։ Դիշերը մութն է։ Այդ միջոցին դուրս է գալիս լուսինը և լուսավորում է նրանց ճանա-

պարհը (եր. 86)։ Պ. Հայկունին այդ անբնական է համարում, երևի, մտածում է, թե Պարսկաստանում լուսին չկա։

Բայց նշանավորն այն է, որ պ. Հայկունին «Կայծերի» մեջ անբնական գործողություններ ցույց տալու համար իր բերած փաստերը ապավաղում է։

«Կայծերի» մեջ (եր. 152) նկարագրված է, թե ինչպես Ֆարհադ մանուկը նստած մերկ, առանց սանձի ձիու վրա, բռնում էր նրա բաշից և արագությամբ պտտեցնում էր, այսինքն՝ ման էր ածում։ Պ. Հայկունին «պտտեցնել» բառը դիտմամբ ուրիշ իմաստով է բացատրում, որպեսզի ցույց տա, որ Ֆարհադը բռնած ձիու բաշից, գնդակի նման իր ձեռքի վրա պտտեցնում էր։ Իհարկե, եթե Ֆարհադ մանուկը Հերքուլես ևս լիներ, դարձյալ այդ շատ անբնական կլիներ ձիուն ձեռքի վրա պտտեցնելը։ Բայց քանի որ նա ինքը նստած էր ձիու վրա, այլևս ինչպես կարող էր ձեռքի վրա պտտեցնել ձիուն։ Շատ հասկանալի է, որ պտտեցնել բառը ման ածելու մտքով է գրված։

Բացի վերոհիշյալ օրինակից, պ. Հայկունին ուրիշ օրինակներ էլ է բերում, որ ցույց տա, թե Րաֆֆին իր հերոսներին Հերքուլեսի ուժ է տալիս։

«Մըհնի համար մի ահագին քարը մի տաշեղ է», ասում է նա (եր. 351)։ Այդ քարը սովորաբար դիշերները դնում էին որսորդ Ավոյի բակի դռան ետևում, որ դուռը չկարողանան դրսից բաց անել։ Որսորդի աղջիկը՝ Մարոն, կարողանում էր նույն քարը երկու ձեռքով բարձրացնել։ Ուրեմն այստեղ ի՞նչ անբնական մի բան կա, որ նույն քարը հսկա Մըհնեն կարողանար տաշեղի նման շարժել։ Բայց պ. Հայկունին Մարոյի գործողությունը դիտմամբ թաքցնում է, որ Մըհնի գործողությունը չափազանց ցույց տա։

Նույն հսկա Մըհնեն իր լախտի մի հարվածով ջախջախից շան գլուխը և ուղեղը դուրս թափից (եր. 330)։ Պ. Հայկունին այդ անբնական է գըտնում։ Շատ հովիվներ իրանց մահակի մի հարվածով շան գլուխը ջախջախում են։

Նույն հսկա Մըհնեն մանում է որսորդական վիրապը և զսպում է թակարդի մեջ ընկած գազանին (եր. 50)։ Պ. Հայկունին այդ անբնական է համարում։ Ես էլ անբնական կհամարեի, եթե «Կայծերի» մեջ այնպես նկարագրված լիներ, որպես պ. Հայկունին է ցույց տալիս։ Նա գողանում է խեղճ Մըհնից նրա գլխավոր զենքը՝ ահագին երկաթե մահակը և նրան առանց զենքի թողնում է գազանի հետ կռվելու։ Իհարկե, չէր կա-

րող զսպել նրան։ Բայց Բաֆֆին իր հերոսի ձեռքում զենք էր տվել, այդ զենքը ինչո՞ւ թաքցրիք, պ. Հայկունի։

Բայց պ. Հայկունու վերոհիշյալ նկատողության մեջ մի ուրիշ շատ հետաքրքիր կետ կա։ Նա ասում է, թե ինքը կարդացել է, որ սուրբ Գրիգոր Լուսավորիչը և Դանիել մարզպանն իրանց աչքերով էին մագնիսացնում վիրապի օձերին և դուրի առյուծներին և այսպիսով զսպում էին նրանց։

«Մըհնի աչքերումն էլ մագնիսական զորություն չկա՞ր արդյոք»,— հարցնում է նա։ Ես զարմանում եմ, որ այդ տողերը տպվում են Հայաստաննայց սուրբ եկեղեցու պաշտպան թերթերի մեջ։ Արդյոք այդ եկեղեցու հիմնադիր սուրբ Գրիգոր Լուսավորիչը ո՞րերկ էր հրաշքներ գործելու զորությունից և միայն մագնիսացնելո՞վ էր զսպում գաղաններին։

Եվ այսպես, իր նկատողությունների մեջ պ. Հայկունին բոլորովին ներելի է համարում իրողությունները սխալ կերպով պատմել, փաստերը հեղաշրջել, բնագիրը աղավաղել, որպեսզի կարողանա իր ցանկացած հետևանքը դուրս բերել։

Ահա մի օրինակ ևս.

«Ջումրուտ տատը Կարոյին հայտնում է նրա հոր (ոչ թե հոր, այլ մոր) կատակը, ուխտը։ Բավական երկար և ոգևորված կերպով խոսելուց հետո՝ հիվանդ պառավը վերջապես «ճոգին ավանդում է», որ սովորաբար նշանակում է մեռնել, բայց պ. Բաֆֆին այդ բառերը այլ կերպ է հասկացել։ «Հոգին ավանդելուց» հետո Ջումրուտ տատը նորից շարունակում է դրեթե մի ամբողջ երես խոսել և հետո վերջապես «մեռնում է»» (եր. 126—128)։

Ես կբերեմ Ջումրուտ տատի պատմությունից այն կտորը, որտեղից պ. Հայկունին դուրս է բերել «ճոգին ավանդեց» բառերը, որ ցույց տամ, թե մեռնողը ո՞վ է։

«Այն սարսափելի կատարածի միջոցին (պատմում է Ջումրուտ տատը) քո մայրը, Կարո, կուրծքից խնջարով խոցված, մի ձեռքով բռնել էր վերքը, մյուս ձեռքով քեզ հանձնից ինձ, ասելով, «Ա՛ռ, Ջումրուտ, եթե ասուլած կհաջողե ազատել երեխայիս, սովորեցուր նրան վրեժխնդիր լինել»... Այդ խոսքերի հետ նազելի տիկինս ավանդեց ճոգին» (եր. 126—128)։

Հիմա նայեցեք, պարզ երևում է, որ հոգին ավանդողը Ջումրուտ տատի «նազելի տիկինն» էր, այսինքն՝ Կարոյի մայրը և ոչ թե ինքը՝ Ջումրուտ տատը։ Երկուսից մեկը, կամ պ. Հայկունին մի ծխական դպրոցի առաջին դասատան աշակերտի չափ հասկացողություն չունի, որ

ըմբռնե իր կարդացածը, կամ այնքան անաղնիվ է, որ անբարեմտությամբ աղավաղում է վեպի բնագիրը։ Ես հակված եմ ընդունել վերջինը։ Պարոնին չէ կարելի այն աստիճան անդրագետ համարել, որ նա չհասկանա, թե ո՞վ է մեռնողը կամ ո՞վ է մեռնողի մասին պատմում։ Բայց նա իրան թույլ է տալիս աղավաղել բնագիրը, հույս դնելով իր ընթերցողների միամտության վրա, որ կհավատան նրան և նրանցից ոչ ոք չի բաց անի «Կայծերը» ու համեմատություն չի անի իր ասածի հետ, և այսպիսով առժամանակ իր ստախոսությունը առաջ կբշե ու «Կայծերի» վրա սավեր կձգե, բայց պարոնը չէ մտածել, որ կգտնվեն մարդիկ և ցույց կտան նրա խարդախությունը։ Պ. Հայկունին իրան նպաստավոր է համարում մինչև անգամ «Կայծերի» մեջ գտնված ծաղրական կամ հեգնությամբ ասած խոսքերը ընդունել որպես ճշմարտություն և նրանցից իր ցանկացած եղրակացությունը դուրս բերել։ Օրինակ, Ֆարհադը հարցընում է Սագոյից իրանց մի երրորդ ընկերի, Հասոյի մասին, թե ի՞նչ է շինում նա։ Սագոն պատասխանում է. «Գրողը տանի նրան, հիմա տուն ու տեղ ուր է գործել, վար է վարում, ցանք է անում, կնիկ ունի, ամեն տարի երկու հատ ծնվում են, տունը լիքն է երեխաներով, ճանճերի նման վժվժում են» (եր. 156)։

Պ. Հայկունին այդ խոսքերից դուրս է բերում այն միտքը, որ Հասոյի կինը «խոզի ցեղից» է եղել, որ կարողացել է ամեն տարի երկու հատ զավակ ծնել։ Զզվելի է։

Խոսակցության մեջ, մանավանդ հեգնական խոսակցության մեջ, այս տեսակ ասացվածները կարելի է պարզել հետևյալ օրինակով. Ես ասում եմ, որ Թերացու Գեղամը ամեն մի րոպեում յոթանասունյոթ անգամ սուտ է խոսում։ Այդ չէ նշանակում, որ ոչ մի անգամ չէ պատահել, որ Թերացու Գեղամը յոթանասունյոթ անգամից պակաս սուտ խոսներ։ Այլ այդ նշանակում է, որ նա չափազանց ստախոս է։ Այնպես էլ Սագոյի խոսքերից երևում է, որ Հասոյի կինը բազմածին է և ոչ թե «խոզի ցեղից»։

Այս բոլորից հետո հասկանալի է, թե ինչ արժեք պետք է տալ պ. Հայկունու կրիտիկային։ Հիմա դառնանք նրա մի քանի այլ նկատողություններին։

Որքա՜ն մեծ դժվարությունների պիտի հանդիպի վիպասանը, երբ ձեռնարկում է մեր ազգային թե ներկա և թե անցյալ կյանքից մի վեպ գրելու։ Մեր գրականությունը վիպասանի համար համարյա ոչինչ պաշար չէ պատրաստել, որ նրա աշխատությունը հեշտացնե։ Իմ խոսքը գլխավորապես տաճկաց և պարսկաց հայերի մասին է։ Մենք չունենք այդ

երկրների նոր բարեկեն անգամ, մենք չունենք լավ հետազոտված էտնոգրաֆիական դրվածքներ այդ երկրների ազգաբնակության մասին, մենք համարյա ոչինչ չունենք, ինչ էլ որ ունենք, բոլորը թերի, անբավարար, խառնիխուռն և երկբայական են։ Վիպասանը ստիպված է անձամբ ճանապարհորդել և ուսումնասիրել բոլորը։ Իսկ այդ ամեն վիպասանի համար կհաջողվի։ Մինչդեռ մի եվրոպացի գրող իր կաբինետի մեջ կարող է ձեռքի տակ ունենալ այն բոլոր գրքերը, ինչ որ նրան պետք են։ Հարյուրավոր մարդիկ նրա համար աշխատել, նրա գործը հեշտացրել են։

Չնայելով այդ բոլոր դժվարություններին, «Կայծերը» ներկայացնում է մեզ որպես կատարյալ նկարագիր իր պատմական, էտնոգրաֆիական և աշխարհագրական ճշտություններով, որովհետև հեղինակը անձամբ ուսումնասիրել է բոլորը։

Բայց պ. Հայկունին ցույց է տալիս թվով 22 սխալներ, ավելացնելով, թե «ես համաձայնած եմ, որ պ. Բաֆֆին այս և այսպիսի սխալանքներ (որ բոլորը ևս առաջ չբերի) չէր անիլ, եթե այդ պատմական և աշխարհագրական կետերի վրա խոսելիս՝ մի փոքր աշխատություն տար իրան պետք եղած մի քանի գրքերից (??) և քարտեզներից (??) տեղեկություններ հավաքել և ստուգել» և այլն։

Եթե պ. Հայկունին կամենում է, որ հավաստային իրան, թե նրա նկատած սխալները իրավ սխալներ են, անպատճառ հարկավոր էր, որ փաստերով ապացուցաներ, թե իր նկատողությունները ո՞ր գրքերի և քարտեզների հետ է համեմատել և անճիշտ է գտել։ Նա ապացույցներ չէ բերում և կարծում է, թե կհավատան, որ նրա ասածները ուղիղ են, իսկ «Կայծերի» մեջ գրվածը սխալ է։ Այսպես չեն քննադատում. մի փաստ հերքելու համար պետք է ուրիշ փաստ առաջ բերել։

Ես մի առ մի կվեր առնեմ պ. Հայկունու առաջ բերած նկատողությունները և ցույց կտամ, որ պ. Հայկունին, այդ դեպքում ևս, ոչ միայն չէ հիմնվում որևիցե գրական փաստի վրա, այլ խարդախությամբ կամ աղավաղում է վիպի բնագիրը, կամ իր ընթերցողներին մոլորեցնելու համար խաբուսիկ միջոցների է դիմում։

1. «Իր (երկրագործ Հասոյի) հայրը գնել էր այդ հողը մի քուրդ բեկի այրի կնոջից» (213), մինչդեռ հայտնի է, որ քուրդը սեփական հող չունի իսկապես։ Դրա մի ապացույցն էլ նույն իսկ հեղինակի իրան խոսքերն են մի այլ տեղում, թե «քրդերը կալվածատերեր չէին» (286)։

Չնչին բծախնդրություն։ Ի՞նչ է ուզում ասել գրանով պ. Հայկունին, այն, թե Բաֆֆին մի տեղում գրել է, թե Հասոյի հայրը այդ հողը գնել էր մի քուրդ բեկի այրի կնոջից, իսկ մի այլ տեղում ասում է, թե քրդերը

կալվածատերեր չէին, ուրեմն, նրա քրդերը կալվածատերեր չէին, ինչպե՞ս կարող էին հող վաճառել։ Ըստ երևույթին պ. կրիտիկոսի այդ նկատողությունը ճիշտ է և ցույց է տալիս Բաֆֆիի հակասությունը։ Բայց նայեցեք խարդախությունը ինչումն է. «Քրդերը կալվածատերեր չէին» բառերը նա վեր է առնում մի նախադասությունից և թողնում է նույն նախադասության մնացած բառերը մինչև վերջակետը։ Ինչո՞ւ։ Որովհետև նրա ամբողջ նախադասությունը վեր առնելու լիներ, դուրս կգար, որ քրդերը կալվածատերեր էին։ Ահա ամբողջ նախադասությունը. «Բայց քրդերը կալվածատերեր չէին, նրանց մեջ ազանիներից մեկը սեփականացնում էր սրի ուժով մի կտոր հող, մյուս ազան, ավելի զորեղ դառնալով, խլում էր նրա ձեռքից և այսպես հողը անդադար անցնում էր մի ազայից դեպի մյուսը» (286)։ «Կայծերի» մեջ ամբողջ Իե-րդ գլուխը (260—270) նվիրված է քրդերին և թուրքերին և այդ գլխի մեջ մանրամասն կերպով բացատրված է նրա առաջինների և նրա վերջիններ կալվածատիրական պայմանները։ Մի՞նչև կարելի է ամբողջ գլուխներից միայն երեք բառ վեր առնել և նրանց վրա հիմնել իր կարծիքը։ «Կայծերի» նկարագրած ժամանակներում քրդերը ոչ միայն մասնավոր կալվածատերեր էին, այլ ամբողջ գյուղերի և գավառների տերեր էին։ Խան-Աբդալները, Խան-Մահմուդները, Բադիր-խան բեկը, Նուրուլլահ-բեկը դեռ մինչև 1850 թվականները տիրապետում էին միևնույն երկրին, ուր գործում են «Կայծերի» հերոսները։

2. «Հայտնի է նմանապես, որ քրդերը ունին խալիֆներ և ֆախիներ, այլ ոչ նրա «մուֆթիներ և զազիներ» (269)։

Պարոնը չգիտե, որ մուֆթիները և զազիները կառավարությունից նշանակված դեներ են, գլխավորապես դատական (շռայաթի) գործերի համար։ Նրանց հպատակվում են ինչպես քրդերը, այնպես էլ սունի ազանդին պատկանող բոլոր մուսուլմանները։

3. «Որ մահմեդականության ընդունող քրիստոնյաները ոչ պարսկական, ոչ էլ տաճկական օրենքով, երբեք իրավունք չունեն, ինչպես այդ պնդում է պ. Բաֆֆին, «տեր դառնալ ազգակիցների՝ նրա շարժական և նրա անշարժ ժառանգության»» (280)։

Պ. Հայկունին իր այդ խոսքերը այն աստիճան վստահությամբ է արտասանում, կարծես տարիներով ուսումնասիրել է պարսկական և տաճկական օրենքները։ Պարոնի տգիտությունը ցույց տալու համար ես կբերեմ մի քանի ապացույցներ մեր պատմագրներից, որ Բաֆֆին բանաստեղծության մեջ ես հավատարիմ է մնացել նրա պատմությանը և նրա

ներկային։ Ահա ինչ է գրում այդ մասին Առաքել պատմագիրը իր դրքի գլ. ե, եր. 66[14]։

«Եւ դատաւորքն ըստ անօրէնն օրինաց իւրեանց իրաւացուցանեն զրանս ուրացողացն. թէ որովհետև նա ևկեալ է յօրէնս Մահմեդի, նմա հասանի ամենայն ինչի իւրոց ազգակցաց, և այսպէս զրկեալ զդարձեալի քրիստոնեայս՝ յափշտակեալ զամենայն ինչս տան ուրացողացն այնոցիկ»։

1880 թվականում Նոր Ջուղայի Ամենափրկչյան վանքի տպարանում տպվեցան պ. Հարություն Տեր-Հովհաննիսյանցի հետաքրքիր պատմության երկու հատորները, Պարսկաստանի և Հնդկաստանի հայերի մասին[15]։ Այդ պատմությունը կարելի է համարել Առաքել պատմագրի շարունակությունը մինչև մեր ժամանակները։ Նրա առաջին հատորի 366 երեսում կարդում ենք հետևյալը.

«Ծանրակշիռ եղև յոյժ վնասն՝ զոր յուրացողաց ընկալաւ Ջուղայ (Նոր)։

Սկիզբն այսր ազեաից է ի ժամանակէ երկրորդ Շահ Աբասայ, ուժգընութիւն՝ իր թագաւորութեան Շահ Սուլթան Հօսէյնի, և ասումն ցմեր ժամանակս։ Դենպետք պաշտպան են օրինացն որ հրամայէ զի ինչք և ստացուածք վախճանեալ քրիստոնէի՝ ուրացեալ ազգականի նորա են ժառանգութիւն, այդ իրաւունք ժառանգութեան ըստ ոմանց մինչև ցչորս ազգն (սերունդ) և ըստ ոմանց մինչև ցեօթն ազգն ընտանեաց ուրացողին ունի ներգործութիւն»։ Հետո նկարագրում է պատմագիրը, թե որպիսի բարբարոսությամբ գործադրվում էր այդ օրենքը։ Մինչև այսօր նույն բարբարոսությունը շարունակվում է մոլլաների ձեռքով, հնազելով որ պարսից շահերը չնորհել են քրիստոնյաներին շատ հրովարտակներ հիշյալ օրենքի չգործադրվելու մասին։ Շահ-Աբասի մոլեռանդության դեմ անզոր գտնվող այդ հրովարտակները պահվում են Թավրիզի և Սպահանի հայոց առաջնորդարաններում։

Ես շարունակում եմ պ. Հայկունու «Կայծերի» մեջ ցույց տված սխալների մասին խոսել։

4. «Որ ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ լսված կամ տեսնված չէ, որ պարսիկ խաները իրանց հրավերքի և կերուխումի ժամանակ հայ քահանաներին հրավիրելով իրանց տուն սոխպում էին նրանց խաների զվարճության համար «պատարագ» մատուցանել, եկեղեցական սպաս և ծես կատարել»։ Որ «այդպիսի հանդեսներից մեկի մեջ, խանը հրամայեց քահանային սաղավարտը դնել յուր շան գլխին, շուրջառը գցել նրա վերա և սոխպեց տերտերին յուր բուրվառով խնկարկել շանը» (281)։

Կարծեմ մահմեդական մոլեռանդությունը պաշտպանող պ. Հայկունին, նրա հետևել է մեր մամուլի վերջին տարիներում հաղորդած տեղեկություններին, պետք է շատ անգամ կարդացած լինի, թե ինչպես թուրքաց Հայաստանում մահմեդականները աղբով ծեփում էին քրիստոնեական տաճարների պատերը, ինչպես խաչը շան վզից կախ տալով մանում էին ածում փողոցներում, ինչպես քրիստոնեական եկեղեցու բեմի վրա մուբրուխներ էին պար ածում և այլն։ Բողյալ ժամանակակից մամուլը, մեր պատմությունը լի է հազար ու մեկ այս տեսակ սրբապղծություններու նկարագրություններով։ Բայց նրա ավելին ցանկանում է տեղեկանալ պ. Հայկունին, թող կարդա Կ. Պոլսի պատրիարքարանի «Տեղեկագիրը», որը դուրս է բերած պատրիարքարանի քաոնամյա պաշտոնական արձանագրություններից։ Նրա մեջ Բաֆֆիի «Կայծերի» մեջ նկարագրածից ավելի զարհուրելի բաներ կտեսնե պ. Հայկունին։

5. «Որ քուրդ կինը յուր մարդու կորուստը կամ մահը ողբալիս չէ ասում, թե նա «լավ ավազակ էր» (265), այլ թե՝ «լավ կարիճ էր»։

Կարծես, պ. Հայկունին այնտեղ կանգնած լիներ և իր ականջով լսած լիներ, թե քուրդ կինը այդպես չէր ասում, այլ այնպես էր ասում, կարծես քուրդ կնոջ խոսքն էլ մի պատմական իրողություն է։ Եթե պ. Հայկունին այդքան նշանակություն է տալիս մի երևակայական քուրդ կնոջ խոսքերին, ապա ինչո՞ւ է աղավաղում այդ խեղճ կնոջ հիշողությունները։ «Կայծերի» մեջ այսպես է գրված. «Կրկին անգամ ամուսնանալը, մեռած կամ սպանված տղամարդից հետո, քուրդ կնոջ համար համարվում է նախատինք։ Նա մնում է միշտ այրի, մխիթարում է իրան այն քաղցր հիշողություններով, թե իր այրը մի «լավ ավազակ» էր, թե նա մնաց միշտ մաքուր երկչոտության արատից, թե նա երբեք իր թիկունքը չդարձրեց թշնամու դեմ, թե նա սիրում էր իր ամուսնին, որքան սիրում էր իր արարական նժույգին, և երբեք նրա սիրտը չդրավից ամենադեղեցիկը իր ցեղի աղջիկներից» (265)։ Պ. Հայկունին, եթե ճանաչում է քրդերին, պետք է հասկացած լինի, որ «ավազակ» և «կարիճ» բառերը քրդի լեզվում համանիշ են. ավազակությունը քրդի համար քաջություն է և ոչ անբարոյականություն։ Եթե քուրդ տղամարդը ավազակություն չէ արել և մի քանի մարդիկ չէ սպանել, ոչ մի լավ աղջիկ չի ցանկանա նրա հետ ամուսնանալ։

6. «Որ Մշու (թե՞ Վանա) դաշտի ծովակը կոչվում է ոչ թե «Արշակա ծովակ» (293), այլ Արջակա ծովակ։ Սկզբում ես կարծեցի, թե դա տպագրական սխալ է, բայց միևնույն բառը մի քանի տեղ կրկնված տեսա»։ Արշակա ծովակը ոչ Մշու դաշտումն է և ոչ Վանա դաշտում. երբ պ. Կրի-

միկոսը կամենում է ուղղել մի տեղագրական սխալ, նախ և առաջ պետք է դիտենա նրա տեղը։ Սուտ է և այն, թե «Կայծերի» մեջ այդ բառը մի քանի տեղ կրկնվել է։ «Կայծերի» մեջ միայն մի տեղում հիշվում է այդ բառը։ Ուղիղը Արշակա ծովակ է, բայց ժողովրդի բերնում դարձել է Արջակա ծովակ շ-ն չ-ի փոխվելով, ինչպես Արշամը Արջամ է դարձել և ինչպես շատ պատմական անուններ ժողովրդի բերնում աղավաղվել են։

7. «Որ Կոփա վանքը Մուշի մոտ չէ (299), այլ Պուլանքի»։ Կոփա վանքը ոչ Մուշի մոտ է և ոչ Պուլանքի։ Կոփա վանքը գտնվում է Կոփ գյուղի մոտ, Կոփ գյուղը գտնվում է Պուլանքի վիճակում, իսկ Պուլանքի վիճակը գտնվում է Մուշի գավառում։ (Տես հայր Ալիշանի «Տեղեկութիւր հայոց մեծաց», եր. 46, պրակ 81)։

8. «Որ Տարոնը և Վասպուրականը ավելի լեռնոտ երկիրներ» չեն (311), այլ ավելի դաշտային։ «Կայծերի» մեջ «ավելի լեռնոտ» ասված է, համեմատելով հիշյալ երկու նահանգները Ատրպատականի հետ։

9. «Որ այդ նահանգներում շատ քիչ, այլ ոչ թե «շատ տեղ սարերը ծածկված են անտառներով» (312)։ Իսկապես անտառ ասած բանը Տարոնում և Վասպուրականում չկա անգամ»։

«Շատ տեղ սարերը ծածկված են անտառներով», ասված է «Կայծերի» մեջ, պարզյալ համեմատելով հիշյալ նահանգները Ատրպատականի հետ։ Իսկ թե բոլորովին անտառներից զուրկ են, այդ սուտ է։

10. «Որ այդ նահանգների հայերը քրդերի նման ոչ երբեք բնակվում են «չադրներում (վրան) և լեռների բարձրավանդակների վրա»» (312)։

Սուտ է, «Կայծերի» մեջ չէ ասված, թե այդ երկրների հայերը բնակվում էին միմիայն չադրներում, լեռների բարձրավանդակների վրա։ Այլ ասված է, որպես երկրագործ և միևնույն ժամանակ անասնապահ ժողովուրդ, բնակվում էին գյուղերում, տուներ ունեին, իսկ չադրներում բնակվում էին այն ժամանակ, երբ լեռների արոտատեղիներում արածեցնում էին իրանց ոչխարները։

11. «Որ Բարդուղիմեոս առաքելո վանքի կշտի դաշտը չէ, որ «Հաբիսատան է կոչվում» (319), այլ Համանուն գյուղը, որո անունով և դաշտն էլ կոչվում է Հաբսատանու դաշտ»։

Նախ և առաջ, Հաբիսատան չէ, այլ Հասբիսատան է, երկրորդ, «Կայծերի» մեջ խոսքը դաշտի մասին է և ոչ թե գյուղի մասին, իսկ թե գյուղն էլ կոչվում է դաշտի անունով, այդ ո՞վ է հերքում։

12. «Որ մուրբիններն (մուրբուրիներ) և մամբաները (քրդական ցեղեր են) ոչ երբեք կարող էին միմյանց հետ շարունակ վեճեր և կռիվներ ունենալ (320), որովհետև առաջիններները բնակվում էին Հաղ-

բակում, իսկ երկրորդները՝ Խնուսում, մի ահագին տարածություն հեռու միմյանցից»։

«Կայծերի» մեջ չէ ցույց տված հիշյալ քուրդ ցեղերի բնակության տեղերը և ի՞նչ տեղ պետք է ցույց տալ Թափառական քրդին, որը անդադար գաղթում է։ Իսկ պ. Հայկունու ցույց տված տեղերը, որպես նա կարծում է, անագին տարածությամբ հեռու չեն միմյանցից։ Խնուսը հեռու է Աղբակից մի օրվա ճանապարհով միայն։

13. «Որ Ջոլամերիկը գտնվում է ոչ թե «Կորդվաց լեռների մեջ» (322), այլ Մոկաց և Կորճեից լեռների»։

Մոկաց և Կորճեից լեռները միևնույն Կորդվաց լեռներն են։ Մի՞թե պ. Հայկունին չգիտե, որ Կորդիք և Կորճեք միևնույն երկիրներն են։

14. «Որ Արտամետը գտնվում է ոչ թե «Հայոց ձորում (323), այլ Վանա դաշտում»։

Ստո՛ւտ է, «Կայծերի» մեջ չէ՛ ասված, թե Արտամետը գտնվում է Հայոց ձորում։ Սխալ է և այն, թե Արտամետը գտնվում է Վանա դաշտում։ Վան քաղաքը դաշտ չունի, նրա դաշտը ծովակի հարթ մակերևույթն է։ Եթե պ. Հայկունին կամենում է Արտամետ գյուղի տեղն իմանալ, նա գտնվում է Հայոց ձորի մուտքի մոտ։

15. «Որ Հոգվոց վանքը գտնվում է ոչ թե «Շատախում» (323), այլ Վասպուրականի Անձևացյաց գավառում, ինչպես մի տեղ վկայած է (299) ինքը և հեղինակը»։

Ստուտ է, «Կայծերի» մեջ չէ ասված, թե Հոգվոց վանքը գտնվում է Շատախում, այլ Անձևացյաց գավառում, ինչպես ցույց է տվել հեղինակը։

16. «Որ Միր-Մասումը եղիդի լինելով, իսկ բազեշին և մշեցին (??) քուրդ, սխալ է ասել թե՝ «քուրդը քրդի դեմ զինել» (324)։

Բոլորովին անհասկանալի է։ Ես այսքանն եմ միայն հասկանում, որ պ. Հայկունին ուզում է ասել, թե քրդին եզդիի հետ կռվացնելը՝ չէ նշանակում «քուրդը քրդի դեմ զինել», որովհետև եզդին քուրդ չէ։ Պ. Հայկունին, ինչպես երևում է, քրդերի և եզդիների վրա դատում է նույն հայացքով, որպես նրա նմանները դատում են հայ-բողոքականների և հայ-լուսավորչականների վրա։ Նա եզդին քուրդ չէ համարում, որովհետև եզդին ուրիշ կրոնքի է պատկանում։ Եզդի անունը կրոնի անուն է և ոչ թե ցեղի. եզդին նույնպես քուրդ է, թեև մահմեդական կրոնին չէ պատկանում։

17. «Որ ս. Տիրամոր վանքը գտնվում է ոչ թե Լիմ անապատի հան-

դնալ, Կորդվաց լեռների մեջ (363—368), այլ Վասպուրականի Գնունիք կոչված գավառին մեջ»։

Վասպուրականի Գնունիք կոչված գավառը մի՞թե Լիմ անապատի հանդիպ չէ։ Պ. Հայկունին Բող նայն Վենետիկում տպված 1849 թվի քարտեզի վրա, բայց պետք է գիտենա, որ հիշյալ գավառը ուրիշ անուններ ևս ունի՝ Քաջբերունիք, Աղիովիտ, Արճիշակովիտ և այլն։ Բաֆֆին վնաս է գրել, աշխարհագրության դասագիրք չէ գրել, որ այդ բոլոր անունները շարեր միմյանց մոտ։

18. «Որ «Տիրամոր վանք» ասածը չէ կարող վանահայր և վարպետ միաբաններ ունենալ (365), վասնզի դա վանք չէ, այլ գյուղական եկեղեցի՝ միայն «Տիրամոր վանք» անունով։ Եվ ուրիմն այդ վանքում ոչ երբեք կարող էին վանքի «մղդսիների» ձեռքով կատարվել այն եղեռնագործությունները, տարածվել այն տարափոխիկ հիվանդությունները, ինչ որ նկարագրած է պ. Բաֆֆի յուր վեպի 363—380 երեսներումը»։

Պ. Կրիտիկոսի լոգիկան ինձ զարմացնում է։ Գյուղական եկեղեցին չէ կարելի վանք կոչել։ Իսկ եթե Տիրամոր վանքը պ. Հայկունու կարծիքով, այժմ միաբաններ չունի, դա չէ զրկում նրան վանք լինելուց։ Հարյուրավոր վանքեր ունենք, որ զուրկ են միաբաններից։ Իսկ թե «մղդսիները» ինչ գեր են խաղում այնտեղ, այդ արդեն պ. Հայկունին կարդաց Հայր Սրվանձտյանցի «Մանանա» գրքից բերած վկայությունների մեջ, որ իսկապես նրանք են կազմում վանքի միաբանությունը և տաճկաց Հայաստանի ու Պարսկաստանի բոլոր հայաբնակ վիճակները բաժանել են իրանց մեջ և «ուրուկները» տանում, այդ երկրներում մահ են ածում։

19. «Որ «Հին Տմորիքը» չէ կարող այժմյան Ջոլամերիկը լինել (469), որովհետև թե Ջոլամերիկը (Փոքր Աղբակ) և թե Տմորիքը տարբեր գավառներ էին միևնույն Կորճայք կոչված նահանգում»։

«Կայծերի» մեջ այսպես է ասված. «Այս երկիրը (Ջոլամերիկը), որ մեր հին Տմորիք կամ Կորդիք գավառն է» և այլն։ Պետք է գիտենալ, որ պատմական-աշխարհագրական անունները դարերի ընթացքում զանազան փոփոխություններ են կրել։ Ինչո՞վ է հաստատում պ. Հայկունին, որ այժմյան Ջոլամերիկը հին Տմորիքը կամ Կորդիքը չէ, ինչո՞վ է հաստատում, որ նրանք տարբեր գավառներ են։ Այժմյան Ջոլամերիկը չէ կարելի համարել, պ. Հայկունու կարծիքով, Փոքր Աղբակը, որովհետև Փոքր Աղբակը ընկնում է Ջաբ կամ Նեհրի գետի (Ջավ, Ջարոս, կամ Գայլ գետ) աջ կողմում, իսկ Ջոլամերիկը՝ նույն գետի ձախ կողմում ուր գտնվում էր հին Տմորիքը կամ Կորդիքը։ Նայեցեք վենետիկ

տպված 49 թվի քարտեզի վրա կամ Հայր Ալիշանի «Տեղագիր Հայոց մեծաց» գրքի եղած քարտեզի վրա։

20. «Որ մի լեռնային բարձրավանդակություն (??) կազմող Փոքր Աղբակը» (426) ոչ երբեք կարող է «վաստպուրականում լինել, քանի որ նա Կորճայքումն է և թե վաստպուրականում եղածը Փոքր Աղբակ չէ, այլ Մեծ Աղբակը, որ այժմ կոչվում է Սեր Ալպաղ, կամ Գարագոյունլու»։

Պ. Հայկունին ամեն ինչ խառնում է միմյանց։ Նախ, Գարագոյունլու (հին Վրնջունիք) կոչված վիճակը գտնվում է Պարսկաստանում (տես Հ. Ալիշանի «Տեղ. Հայոց մեծաց», եր. 57, պրակ 103), իսկ թե Մեծ Աղբակը և թե Փոքր Աղբակը գտնվում են Տաճկաստանում։ Ուրեմն Գարագոյունլուն և Մեծ Աղբակը տարբեր երկիրներ են։ Գարագոյունլուն Մեծ Աղբակից այնքան հեռու է, որ նրանց մեջ մի քանի ուրիշ վիճակներ են ընկած։ Երկրորդ, այժմյան բաժանման համեմատ Մեծ և Փոքր Աղբակներ չկան։ Իսկ Սեր Ալպաղ (որ քրդերեն նշանակում է Աղբակի գլուխ) կոչվում է այդ երկրի այն մասը միայն, որ կազմում է տաճկաց այժմյան սահմանագլուխը պարսից Սալմաստ գավառի հետ։

21. «Որ «Ս. Ղազարու կամ Առաքելոց վանքը Մուշի մեջ (239) չէ գտնվում», այլ այդ քաղաքից բավական հեռու Սիրբնկատար լեռան ստորոտը»։

Սո՛ւտ է, «Կայծերի» մեջ չէ՛ ասված, թե ս. Ղազարու վանքը գտնվում է Մուշ Վաղարշ, այլ «Մուշի մեջ» (299), ուր պետք է հասկանալ գաշտը և ոչ թե քաղաքը։ Այս վանքը գտնվում է Մուշ քաղաքից 2 ժամ հեռավորությամբ միայն և հայտնի է անունով «Մշու Սուրբ Առաքյալք» (տես Հայր Ինճիճյանի «Ստորագրություն Հին Հայաստանեայց», եր. 102—103)։

Ինչի՞ց են առաջ գալիս պ. Կրիտիկոսի այդ բոլոր խառնափնթորություններ*։ Գիտության բացակայությունից։ Ճշմարիտ գիտնականի մեջ զգուշությունը հասնում է մինչև երկչոտության։ Նա երբեք չի վատահանա մի որևիցե միտք հայտնել, եթե շատ անգամ փորձած և ստուգած չլինի։ Բայց պ. Հայկունու նման անուսները համարձակ են լինում, մինչև անգամ հանդուգն են լինում։ Դրանք ամեն բանի վրա դատողություն են անում, առանց նախապես սովորած լինելու։ Գիտնականը երկչոտ է լինում, որովհետև գիտե, որ մի ամենափոքր սխալ կարող է կտրել նրա հեղինակությունը։ Իսկ անուսը հանդուգն է լինում, որովհետև կորցնելու ոչինչ չունի։ Ի՞նչ բան կկորցնի պ. Հայկունին, երբ նրան ցույց են տալիս,

* Մի մոռացեք, որ Ներսիսյան դպրոցի պատկառելի հոգաբարձությունը հանձնել է այդ մարդուն Հին Հայաստանի աշխարհագրության դասերը։

որ նա կեղծ փաստեր է հնարում և նրանից իր ցանկացած եզրակացությունները է դուրս բերում, որ նա իր քննելի առարկայի հետ այնպես է վարվում, «որպես մի կաշառված և խարդախ դատական քննիչ՝ մի անմեղ մեղադրվածի հետ»։ Ի՞նչ պիտի կորցնեն նա։ Ոչինչ։ Ով որ ոչինչ չունի կորցնելու, վտանգից ազատ է մնում։

Մոլլա Նասրեդդինը էշի վրա նստած անց էր կենում փողոցով, հանկարծ էշից վայր ընկավ։ Տնտողները սկսեցին ծիծաղել։ Մոլլան պատասխաններ նրանց. «Ի՞նչ եք ծիծաղում, գետնի վրա էի, էլի գետնի վրա եմ պոկվում»։ Այդ խոսքերով կամեցավ հասկացնել նրանց, որ էշի վրա նստած ժամանակ ևս գետնի մակերևույթից շատ բարձր չէր գտնվում։ Այսպես էլ մեր գրականական սողունները, այդ սոորաքարշ զեռունները ի՞նչ հեղինակություն ունեն կամ ի՞նչ բարձրություններից պետք է ցած ընկնեն, երբ ցույց է տրվում նրանց մտավոր և հոգեկան բոլոր դատարկությունը։ Նրանք գետնի վրա էին, էլի գետնի վրա կմնան։

Պ. Հայկունին, երբ նեղ տեղն է ընկնում, երբ դժվարանում է իր սովորության համեմատ, գոնե կեղծ փաստեր ստեղծել, անդադար կրկնում է. «Այդ իմ համոզմունքն է»։ Համոզմունքը լավ բան է, բայց նա պետք է հիմնված լինի ստույգ գաղտնության վրա, նրա ոչ, դատարկ համոզմունքը ավելի վատ է ամենևին համոզմունք չունենալուց։

Հիմա դառնանք դեպի պ. Հայկունու հոդվածի այն մասը, որտեղ նա խոսում է «Կայծերի» գաղափարների մասին։

— «Որո՞նք են «Կայծերի» գաղափարները, նրա աննդհնչյան ինչո՞ւմ է», հարցնում է պ. Հայկունին։ Մենք սպասում ենք նրա պատասխանին, թե ինչպե՞ս կվճռե այդ հարցը, բայց մի որոշ պատասխան չենք լսում։

Վեպի հիմնական գաղափարը չէ կարելի ցույց տալ նրա այս և այն տողերի, նրա այս և այն գլխի մեջ։ Վեպի հիմնական գաղափարը տարածվում է, միախառնվում է նրա ամբողջության հետ, որպես հոգին մարմնի հետ։ Եվ դրա մեջն է նրա կենդանությունը։ Հեղինակից է կախված, թե ինչ ձև կամ ինչ պատկեր է ստեղծում ցանկացած գաղափարը նրա մեջ ամփոփելու համար։ Միայն այդ ձևը պետք է հարմարություն ունենա գաղափարը արտահայտելու և նրա հետ միանալու, ոչ թե որպես լավ ձևած հագուստը մարմնի հետ, այլ որպես մի օրգանական մարմին, որ կրում է իր մեջ կենդանի հոգի։

Այդ ընդհանուր օրենքը մի կողմ դնելով, պ. Հայկունին վեպի ամբողջության վրա ամենևին ուշադրություն չէ դարձնում, այլ, իր սովորության համեմատ, մի քանի տողերից, մի քանի նախադասություններից

բռնելով, աշխատում է նրանցով ցույց տալ «կայծերի» հիմնական գաղափարը։

Ինչպես կինդանի մարմնի մեջ ամեն մի անդամ իր հատուկ պաշտոնը և իր առանձին նշանակությունն ունի, և բոլորը միասին կազմում են մարմնի ամբողջությունը, այնպես էլ վեպի մեջ նրա ամեն մի մասը իր հատուկ նշանակությունն ունի, որոնք, բոլորը միանալով, կազմում են մի անբաժան ստեղծագործություն։ Բաժանել ամբողջությունից այն մասերը միայն, որոնցով կրիտիկոսը նպատակահարմար է գտնում իր կարծիքները հաստատելու, դա ոչ միայն հակառակ է կրիտիկայի օրենքներին, բայց սխալ եղրակացության կհասցնի։ Պ. Հայկունին այդ հղանակին է հետևում։ Նա ոչ միայն մանանատում է, այլանդակում է վեպի ամբողջությունը, այլ աշխատում է միայն սև կետերի վրա ուշադրություն դարձնել։

Ի՞նչ հասկացողություն կարող ենք կազմել մի պատկերի գեղարվեստական արժանավորությունների մասին, նրա արտահայտած գաղափարի մասին, երբ կսկսենք նայել միայն նրա սև դույների վրա։ Չէ՞ որ այդ սև դույները, որպես սոսկիներ, նրա համար են միայն, որ ավելի բացորոշ կերպով երևան նրա պայծառ դույները։ Դույների համեմատական միավորությունից ստեղծվում է ամբողջ պատկերը, որպես մոզիկայի մեջ զանազան հնչյունների ներդաշնակությունից կազմվում է մի ամբողջ սիմֆոնիա։

Պ. Հայկունին, ինչպես հիշեցի, մանանատում է, այլանդակում է վեպի ամբողջությունը և առնում է նրանից այն տեղերը միայն, որ իրան նպատակահարմար է համարում։

Ես կներեի նրան, եթե տգիտությամբ արած լիներ այդ, բայց չեմ ների, որովհետև նա այդ արել է գիտությամբ։

Որպեսզի ցույց տամ նրա քննադատության եղանակը, ես կհիշեցնեմ ընթերցողին, թե առհասարակ ինչպես վերաբերվեցավ նա դեպի իր քննելի առարկան և ապա կդառնանք դեպի այն հարցը, թե ինչպե՞ս է վերաբերվում պ. կրիտիկոսը դեպի «կայծերի» հիմնական գաղափարները։

«Կայծերի» դրական նշանակությունը վճռելու ժամանակ նա այդ վեպը լուծեց հեքիաթի։ Ես դրա դեմ չեմ վիճում։ Ծաղրել կարելի է ամեն բան և մինչև անգամ ամեն սրբություն, դրա համար ոչ շատ խելք և ոչ էլ շատ զարգացում է հարկավոր, բավական է փոքր-ինչ անպատկառ լինել, փոքր-ինչ համարձակ լինել։ Բայց պ. կրիտիկոսը մի խոշոր սխալ գործեց, որ չկանդնեց հեքիաթի վրա և չքննեց «կայծերը» իբրև հեքիաթ։ Հեքիաթը շատ անմեղ բան է, որպես անմեղ է նահապետական ժողովրդի հոգին, որ ստեղծում է

նրան։ Բայց նա թողնց անմեղ հեքիաթը և աշխատնց «Կայծերի» մեջ ցույց տալ վնասակար մտքեր, վնասակար գաղափարներ։ Այստեղից ևս խույս տալով, նա աշխատնց ցույց տալ, որ «Կայծերը» մի ծրագիր է տաճկահայերի ապագա կյանքի և գործունեության։ Թեև նա մանրամասնարար չբացատրնց, թե ինչում պետք է կայանար այդ «ապագա գործունեությունը», բայց որքան էլ որ ասաց, այն էլ բավական էր, որ տեսնեինք, թե որպիսի չար հոգուց ներշնչված է եղել պ. կրիտիկոսը։ Նա մատնացույց արնց Վանա բերդի գրավման վրա և այլն։ «Կայծերի» ընթերցողները գիտեն, որ այդ տեսակ բաներ չկան այդ գրքի մեջ։

«Ծրագրից» և «հեքիաթից» անցնելով, պ. կրիտիկոսը հայտնեց այն միտքը, թե «Կայծերը» ոչ ժամանակակից վեպ է և ոչ պատմական։ Այդ հարցը պետք է լուծվի, որովհետև առանց որոշելու, թե «Կայծերը» ի՛նչ վեպ է, դժվար կլինի նրա հայտնած գաղափարների մասին խոսել։

Պ. Հայկունին սխալ է հասկացել կամ չէ կամեցել հասկանալ, որ «Կայծերը» ժամանակակից վեպ է, ժամանակակից վեպի կատարյալ նշանակությամբ։

Մեր կարծիքը հաստատելու համար, հարկավոր ենք համարում մի քանի խոսքով ցույց տալ, թե ի՛նչ բան է ժամանակակից վեպը։

Մեր գործնական դարում այլևս չէ պահանջվում գեղարվեստը միայն գեղարվեստի համար, այլ պահանջում են գեղեցկի մեջ գտնել և օգտավետը, կենսականը։ Ժամանակակից վեպը չէ կարող բավականություն տալ առասպելական պատմություններով, երևակայական հերոսների անհավատալի գործողություններով և չի պիտի ապշեցնե ընթերցողին միայն զարմանք, հիացում ու սոսկում ազդող տեսարանների անբնական նկարագիրներով։ Կարող է նա զվարճացնել, զբաղեցնել մեր միտքն ու հոգին, բայց միևնույն ժամանակ պետք է մի բան սովորացնե մեզ։ Ամենադժվարին հարցերը, որ փիլիսոփայությունը և գիտությունը իրանց չոր ու ցամաք թեորիաններով դժվարանում են լուծել, լուծում է ժամանակակից վեպը բանաստեղծության ավելի գրավիչ, ավելի հասկանալի և ավելի շոշափելի շրջանակի մեջ։

Ժամանակակից վեպը իր նյութը առնում է իրական աշխարհից, որով շրջապատված ենք մենք։ Նրա մեջ պատկերանում է ընթացող կյանքը, թե ընտանիքի և թե հասարակության մեջ, իր բոլոր լավ կամ վատ երևույթներով։ Նրա մեջ վճռվում են ամեն տեսակ հարցեր թե բարոյական, թե քաղաքական, թե կրոնական և թե անտեսական, որոնք զբաղեցնում են քաղաքակիրթ աշխարհի մտքերը։ Նրա մեջ քննության են ենթարկվում այն գաղափարները, այն հասկացողությունները, այն հիմ-

նարկությունները, որոնք ինչ դարերով ընդունված էին որպես օրտավետ, բայց հետանալով և ներկա ժամանակի պահանջներին անհամապատասխան համարվելով, կորցնում են իրանց հեղինակությունը։ Նրա մեջ երեվան են հանվում, մշակվում են այն հրապուրիչ նորությունները, որոնք խոստանում են ապագայում բախտավոր հետևանքներ, և այդ նորություններով խորտակվում է ինչ որ հին է, ինչ որ վաղուց արդեն կորցրել է իր նշանակությունը։ Նրա մեջ քննվում են հարաբերությունները ժողովրդի զանազան դասակարգերի մեջ, հարվածվում է հարստահարիչը և պաշտպանվում է հարստահարյալի անհատական իրավունքը, և նրա բարեկեցության համար միջոցներ է առաջարկվում։ Նրա մեջ քննվում են ընտանեկան կյանքի հիմունքները, որոնք խախտված են, որոնք նույն դրության մեջ մնալով չեն կարող ընտանիքի բարօրությունը պահպանել, և առաջարկում են ավելի լավ պայմաններ ամուսնի և կնոջ, ծնողների և որդիների հարաբերության համար։

Այդ բոլորը, որպես մի կախարդական հայելի, ամփոփում է իր մեջ «Կայծերը» և երևան է հանում Պարսկաստանի և Տաճկաստանի հայերի կյանքի սխուր պատկերները։

Ես ինձ հետո եմ պահում «Կայծերի» քննությունից, որովհետև «Կայծերը» քննելու, «Կայծերը» բացատրելու համար պետք է միևնույն չափով դիրք գրել և այդ ավելի ձևոնհաս, ավելի հմուտ անձինքների դործ է։ Բայց այսքանը կասեմ, որ Րաֆֆիի այդ նոր աշխատությունը իբրև ժամանակակից վեպ իր ընդարձակ նշանակությամբ, ամենամաքիշտ ֆոտոգրաֆիայի նման, մի կողմից պատկերացնում է մեզ Տաճկաստանի հայերի հասարակական հիվանդությունը իր բոլոր փտեցնող, օրըստօրե լուծվող և քայքայվող կողմերով, իսկ մյուս կողմից, ցույց է տալիս այն դարմանները, որոնցմով պետք է բժշկել հիվանդին։ Այդ դարմանները դուցե շուտով չեն օգնի, դուցե առաջին անգամ բոլորովին անաջող կանցնեն, բայց դրանով պետք չէ հուսահատվել, թե դարմանները անօգուտ են։ Գաղտնի հիվանդությունը մի ժողովրդի կյանքի մեջ երկարատև բժշկության պետք ունի։ Բայց դարմանները փորձված են։ Այդ հիվանդությունը ունեցող ժողովուրդները միշտ դիմել են նույն դարմաններին։ Ուրիշ հնար չկա, հրաշքներով մեր դարում մարդիկ չեն բժշկվում։

Որպես ժամանակակից վեպը, այնպես էլ ժամանակակից վիպասանը իր ժամանակի արդյունքն է։ Մեր գրականության մեջ նշմարվում է այդ երևույթը, բայց պ. Հայկունու խելքի տեր մարդիկ ոչ հասկանալ կարող են և ոչ բացատրել։

Սկսվում է ռուս-թուրքական 26 թվականների պատերազմը[16], Պար-

սից լծի տակ ճնշված և դարևոր սարկույան մեջ մաշված հայերը, ընդհանուր ոգևորությամբ, սպասում են ազատության՝ ռուսաց զենքի շնորհիվ։ Ներսես 5-րդը քաղաքական դեր է խաղում։ Հայերը ամենայն անձնվիրությամբ մասնակցում են ռուսաց կռիվների մեջ։ Նրանցից ամեն մեկը ցանկանում է իր հայրենիքը փրկված տեսնել մահմեդականների բռնակալությունից։ Ռուսաց և անգլիացվոց քաղաքականությունը միմյանց հետ։ Անգլիացիք խոստանում են հայերին արտոնություններ և հանգստություն պարսից երկրներում։ Նույնը խոստանում են ռուսները իրանց նոր գրաված երկրներում։ Ռուսաց քաղաքականությունը հաղթող է հանդիսանում, և տեղի է ունենում Պարսկաստանի հայերի մեծ գաղթականությունը դեպի Երասխ գետի այս կողմը։

Այդ ժամանակներում հայտնվում է Աբովյանը և որպես թարգման հայերի զղացմունքի և ցանկությունների, գրում է իր «Վերք Հայաստանի» կոչված վեպը։

Անցնում է ուղիղ 50 տարի, սկսվում է ռուս-թուրքական 76 թվի պատերազմը[17]։ Տաճկաստանի հայերի թշվառ դրության վրա ուշադրություն են դարձնում։ Ռուսաց զինվորների սրտունով գրվում են Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածները, խոստանում են Թուրքայ Հայաստանում վերանորոգություններ մտցնել և հայերի համար մի լավ դրություն ստեղծել։ Ներսես պատրիարքը դիվանագիտական դեր է խաղում[18]։ Բոլոր ինտելիգենտ հայերի մտքերը զբաղված են այն հարցով, թե ինչպե՞ս պետք է ստեղծել այդ լավ դրությունը, որ իրանց եղբայրակիցների վիճակը բարվոքվի Տաճկաստանում։

Բոլորովին անբնական կլիներ, որ մտածողությունների այդ սաստիկ մաքառումների ժամանակ, ձգտումների այդ ջերմ շարժման ժամանակ, և ցանկությունների այդ ուժեղ հոսանքի ժամանակ անտարբեր մնար ազգային բանաստեղծը։ Այո՛, բոլորովին անբնական կլիներ, որ բանաստեղծը լուռ մնար այն ժամանակ, երբ Տաճկաստանի սարկացած ժողովրդի մեջ տիրում էր մի տենդային զրգիռ բողոքելու և իր ցավերն ու վշտերը դնելու քաղաքակիրթ Եվրոպայի առջև։ Բանաստեղծը պետք է արձագանք տար ժողովրդի ձայնին և նրա սրբազան ցանկությունները, նրա խորին զգացմունքները և նրա լացն ու արտասուքը պետք է հյութ առներ իր երգերի և իր վեպերի։

Այդ ժամանակներում Դամատ-Քաթիպան գողնում է իր «Կռամպապուլին», գողնում է մայրաքաղաքներում կրթված աղջիկներին ու երիտասարդներին և սկսում է երգել մշեցի մշակների դժբախտությունները։ Այդ ժամանակներում ալևոր Ծերենցը մտնում է պատմության խորքը և հնու-

թյան փոշիների միջից ի լույս է ածում «Թորոս Լևոնին», «Երկունքը» և «Թեոդորոս Ռշտունին»։ Այդ ժամանակներում Բաֆֆին թողնում է իր «Հարմանները», «Ոսկի արտասղները», «Ուխտյալ միանձնուհիները» և դրում է «Ջալալեդդինը», «Խնդիրը», «Դավիթ Բեկը», «Համասայի մելիքությունները», թարգմանում է «Ղարաբաղի ատաղձագործը» և ապա ի լույս է ածում «Կայծերը»։ Այդ վեց գրքերը հայտնվում են միևնույն տարիների ընթացքում, երբ Տաճկաստանի հայոց մտքերը ընդհանուր խմորման մեջ էին, երբ Տաճկաստանի հայերի վիճակը զբաղեցնում էր բոլորին։

Եթե վիպը կյանքի ու նրա երևույթների նկարագիր է, նրե վիպը մի արտահայտություն է ժողովրդի մտավոր և հոգևոր զարգացության, շատ բնական է, որ միևնույն ժամանակներում լույս տեսած զանազան վիպեր կարող են բավական նման լինել միմյանց, նրե ոչ իրանց բովանդակությամբ և տիպերով, բայց դոնե իրանց ոգու ընդհանուր նշանակությամբ, իրանց գաղափարներով։

Հենց այդ պատճառով Աբովյանի, Շիրվանզի և Բաֆֆիի վերոհիշյալ վիպերը իրրև ժամանակի մտածությունների և զգացմունքների արտահայտություն, իրանց հիմնական գաղափարներով բավական նման են միմյանց, թեև իրանց բովանդակությամբ և տիպերով բոլորովին տարբեր են։*

Իմ բարեկամներից մեկը բավական ճիշտ համեմատությամբ բացատրում էր այդ երևույթի բնական պատճառը, թե ինչու մեր գրականության մեջ ժամանակ առ ժամանակ լույս են տեսնում միևնույն բովանդակությամբ, միևնույն ոգով գրված վիպեր։ Երևակայեցիք, ասում էր նա, մի հրաբխային զորություն. նա դարերով իր ստորերկրյա կայարանի մեջ գործում է, աճում է, հավաքում է իր ուժերը և, վերջ ի վերջո այլևս չկարողանալով տեղափոխվել իր նեղ արգելանի մեջ, սկսում է ժամանակ առ ժամանակ ժայթքումներ գործել։ Եվ այսպես կազմակերպում է նա միևնույն լեռնային շղթայի վրա մի շարք բլուրներ, գագաթներ և զանազան բարձրություններ։ Այդ բարձրությունները թեև միևնույն հրաբխային զորությունից են առաջ եկած, թեև կազմում են մի ամբողջ լեռնային շղթա, բայց թե իրանց ներքին բովանդակությամբ, և թե իրանց արտաքին կերպարանքով ամենևին նման չեն միմյանց։ Մեկը մեծ է, մյուսը փոքր է, մեկը բարձր է, մյուսը ցածր է, յուրաքանչյուրը առան-

---

* *Մեր մյուս վիպասանների, Ազայանցի, Պռոշյանցի, Սարգսյանցի վեպերը չեն կարող վիպասանության այդ տեսակի հետ դասակարգվել, որովհետև նրանք բոլորովին այլ տենդենցիայով գրված են։*

ձին անուն է կրում, և յուրաքանչյուրի մեջ կան զանազան տեսակ հանքային մարմիններ, յուրաքանչյուրի զանգվածը առանձին բաղադրություն ունի։

Եթե Արովյանի, Շերենցի և Րաֆֆիի վեպերը ընդունելու լինենք որպես մի բնական երևույթ մեր գրականության մեջ և եթե վերևում բերած օրինակով քննելու լինենք նրանց հայտնվելու պատճառները, անշուշտ կտեսնենք, որ համեմատության մեջ սխալված չենք։ Արովյանի «Վերք Հայաստանին» հրաբխային զորության առաջին ժայթքումն էր։ Բայց այդ ժայթքումը կատարվեցավ բավական թույլ և դանդաղ կերպով և վեր հանից դեռ ոչ կատարելապես կազմակերպված մի բարձրություն։ Հետո ժայթքումները կատարվում են ավելի սաստիկ և սաստիկ կերպով երևան են հանում ավելի մեծ բարձրություններ, որոնց վերջինը և իր կազմակերպությամբ ավելի կատարելագործվածը պետք է համարել Րաֆֆիի «Կայծերը»։

Եթե բնության մեջ դադարում է այս տեսակ գագաթների հայտնվելը, մենք ասում ենք, թե հրաբուխը հանգել է, և ատորերկրյա գործող զորությունը սպառվել է։ Իսկ եթե գրականության մեջ դադարում է միևնույն ոգով կազմված աշխատությունների երևան գալը, մենք մտածում ենք՝ կամ կյանքը մեռել ու սպառվել է և կամ ժողովուրդը հասել է իր ցանկացած նպատակին և հանգստացել է։

Ուրեմն, քանի որ դեռ երևան են գալիս միևնույն բնավորությամբ, միևնույն հոգով ներշնչված վեպեր, մենք պետք է այդ երևույթը վերաբերենք ոչ թե այն պատճառին, որպես մտածում են Հայկունու նման կարճատես կրիտիկոսները, թե մեր վիպասանները ուրիշ նյութ չունեն իրանց ֆանտազիային բավականություն տալու և միշտ կրկնում են միևնույն մտքերն ու գաղափարներ, այլ պետք է մտածենք, որ ժողովրդի պահանջը դեռ լրացած չէ։ Այդ պահանջը արտահայտվում է և շարունակվում է արտահայտվել ոչ միայն ժամանակակից վեպերի ու բանաստեղծությունների մեջ, այլ մամուլի և գրականության ուրիշ ճյուղերի մեջ էլ։

Այդ կետից նայելով, թե այժմ և թե քսան, հիսուն տարիներից հետո, եթե մի կրիտիկոս հանձն կառնի քննել «Կայծերը» կամ Րաֆֆիի մյուս վեպերը, նա միշտ սխալանքների մեջ կընկներ, եթե ի նկատի չէր առնի ժամանակի պատմությունը և այն բոլոր հանգամանքներն ու շարժառիթները, որ պատճառ եղան այդ վեպերի ստեղծվելուն։ «Կայծերը» խորին կապ ունի տաճկահայերի նորկա դրության և Տաճկաստանի քաղաքական ու տնտեսական պայմանների հետ։ Քննելով «Կայծերը», միևնույն ժամանակ պետք է քննել և այդ պայմանները։ Եվ դրա միջոց է

Բաֆֆիի բարձր նշանակությունը, որ մեր գրականության ասպարեզում չէ հանդիսանում նա որպես լոկ վիպասան միայն, այլ որպես ժամանակի գործիչ, որպես առաջնորդող ժամանակի ձգտումների և գաղափարների: Եվ այդ է պատճառը, որ մենք համարում ենք «Կայծերը» կատարյալ ժամանակակից վեպ, և ոչ թե հեքիաթ կամ մի ծրագիր՝ գրված տաճկահայերի ապագա գործունեության համար, որպես աշխատում է ցույց տալ պ. Հայկունին:

— «Որո՞նք են «Կայծերի» գաղափարները, նրա տենդենցիան ինչո՞ւմն է»,— հարցնում է պ. Հայկունին: Մենք սպասում ենք նրա պատասխանին, դարձյալ մի որոշ պատասխան չենք լսում:

Ինչպես «Կայծերի» տիպերի քննության մեջ, ինչպես «Կայծերի» գեղարվեստական արժանավորությունների կամ նրա հոգեբանական կողմերի վրա խոսելով, պարոնը խույս է տալիս որոշ միտք հայտնելուց և բավականանում է մի քանի ընդհանուր և կրիտիկայի մեջ ոչինչ նշանակություն չունեցող ֆրազներով միայն, այնպես էլ «Կայծերի» տենդենցիայի և նրա մեջ բովանդակված գաղափարների մասին խոսելով, նա մի որոշ միտք չէ հայտնում: Նա միայն աշխատում է ցույց տալ, թե «Կայծերի» հեղինակը սեփական գաղափարներ չէ ունեցել, այլ իր բոլոր մտքերը առել է «Մշակ» լրագրից: Այդ կարծիքը հիմնում է նա հեղինակի մի այլ առիթով հայտնած խոստովանության վրա, թե «ինքը «Մշակի» գաղափարների ամենամոլեռանդ fառոզողներից մեկն է»:

Եթե ընդունենք «Մշակը» որպես մի որոշ ուղղության արտահայտություն, այն ժամանակ շատ հասկանալի կլինի Բաֆֆիի խոստովանությունը: «Մշակը» մի խումբի, մի հայտնի կուսակցության օրգան է: «Մշակը» մի հավաքական ուժ է: Նրա մեջ որպես խմբագիրը, այնպես էլ ամեն մի գրող իր մեծ և փոքր մասն ունի: Բաֆֆին այդ գրողներից մեկն է: Նա չէ սովորում «Մշակից», այլ իր գաղափարները և իր մտքերը սովորեցնում է կամ որպես ինքն է ասում՝ «fառոզում է» «Մշակի» միջոցով: «Մշակը» մտքերի մի հոսանք է, որի մեջ զանազան աղբյուրներից բխած վտակները միախառնվում են և կազմում են մի մեծ գետ: «Մշակի» խմբագիր պ. Արծրունին միայն հսկում է, որ գետը չփոխե իր ընթացքը և չշեղվի իր ուղղությունից: Բաֆֆին այն վտակներից մեկն է, որ խառնվում է այդ գետին: Եվ որովհետև ամեն մի վտակ ինչ հողի կամ հանքային բաղադրության մոտից որ անցնում է, իր հետ բերում է նրանց համը, հոտը և գույնը, այդպես էլ Բաֆֆին ունի իր առանձին գույնը և հատկություններ:

Խոսելով «Մշակի» գաղափարների վրա և բավական շողոքորթելով

պ. Արծրունու բանաստեղծական տաղանդը, պ. Հայկունին դարձյալ մի որոշ միտք չէ հայտնում, թե որոնք են «Մշակի» գաղափարները, որ իբրև պատրաստի նյութ առել է Րաֆֆիին և մատրիկ է «Կայծերի» մեջ։ Նա միայն ասում է, թե «պ. Արծրունին հիվանդության տագնապների մեջ դանվող Գյոթեի նման անդադար բացականչում է. «Լո՛ւյս, լո՛ւյս, ուրիշ ոչինչ, եթե ոչ լույս»։

Եթե այդ է միայն «Մշակի» քարոզած գաղափարը, դա շատ հնացած և բոլորովին մաշված միտք է և ոչ մի ժամանակակից վեպի նյութ տալ չէ կարող։ Ամենքը գիտեն, որ լույսը լավ բան է, և մինչև անգամ «Կայծերի» պատանի Ֆարհադն էլ է իմանում այդ և հիացած արեգակի ճառագայթներով, ասում է. «Ա՛խ, ինչ լավ բան է լույսը, որպես բաց է անում նա մարդի աչքերը և զորություն է տալիս նրա տեսողությանը։ Չէ՞ որ միևնույնն է լինում և կյանքի մեջ, մի ժողովրդի, մի ազգի և ամբողջ աշխարհի կյանքի մեջ։ Երբ որ տիրում է մտավոր խավարը, մարդիկ չեն տեսնում իրանց ամենախոշոր թերությունները, նրանք չեն նշմարում այն ճանապարհի ուղղությունը կամ ծռությունը, որով գնում են. նրանք չեն նկատում այն խոչընդոտները, որ ամեն անգամ նրանց ոտքին է դիպչում և ճակատի վրա վայր է գլորում, նրանք ոչինչ չեն տեսնում, միայն խարխափում են մոլորության մեջ»... (եր. 238—239)։

Այդ տողերը կարդալուց հետո պ. Հայկունին դարձյալ «Մշակի» և Րաֆֆիի գաղափարների մեջ հակառակություն է գտնում։ Նա ասում է. «Մշակը» անդադար բացականչում է՝ լույս, լույս։ Իսկ «Կայծերի» հեղինակը բղավում է՝ խավար, խավար։ Պ. Արծրունին պնդում է. «Գնալի առաջ, նորություն»։ Իսկ Րաֆֆին քարոզում է. «Գնալի ետ, հնություն, վայրենություն»։

Արդյոք ի՞նչ փաստերի վրա է հիմնում պ. Հայկունին իր համեմատությունները, այդ մասին լռում է, որովհետև «փաստեր առաջ բերելու ժամանակ չէ, ասում է նա, բայց եթե այդ անհրաժեշտ է, դժվար էլ չէ, միայն սիրտ ու հավես պետք է»։

Բայց քանի որ պ. Հայկունու «սիրտն ու հավեսը» իր տեղը չէ, քանի որ նա փաստերից փախչում է, նրա դիտողությունները կրիտիկական ոչինչ արժեք ունենալ չեն կարող։

Չէ կարելի այսպիսի ընդհանուր խոսքերով բացատրել մի որևիցե վեպի գաղափարները, ասելով. «Կայծերի» արդո հեղինակը ընդունում է (գոնյա ինչպես սեփական խոսքերից է երևում), որ հայ ազգի նյութական և բարոյական անկման պատճառը նրա ընտանեկան, դպրոցական և ընկերական կյանքի տգիտությունից է առաջ գալիս։ Բայց այդ ըն-

կած վիճակը վերականդնելու համար պարոնը առաջարկում է դարձյալ ոգիտություն, *մինչև անդամ վայրենություն»:*

Պարոնը չէ հասկանում, թե վեպի մեջ նկարագրվում է մի որևիցե հիմնարկութեյան անկարդ դրութեյունը, նրա վնասակար ազդեցութեյունը, այդ չէ նշանակում, որ հեղինակը մերժում է այն հիմնարկութեյան կարեվորութեյունը, այլ ընդհակառակը, ցույց տալով նրա թերութեյունները, հեղինակը ցանկանում է վերանորոգել և ավելի օգտավետ պայմանների մեջ դնել նրան: Օրինակ, «Կայծերի» մեջ նկարագրված է տեր Թոդիկի դըպրոցը իր բոլոր այլանդակութեյամբ, իր բոլոր սարսափացնող և բթամտացնող ազդեցութեյամբ (եր. 53—83): Նկարագրելով այդ դպրոցը կամ որպես նրա աշակերտ Ֆարհադը կոչում է՝ այդ «դժոխքը», հեղինակը դրանով չէ կամենում ցույց տալ, թե ուսումը կամ «լույսը» պետք չէ, այլ այդ «դժոխքի» նկարագրութեյունից ինքնըստինքյան ծագում է այն միտքը, թե «լույս» կամ ուսում ստանալու համար պետք է ունենալ ավելի կանոնավոր, ավելի նպատակահարմար դպրոցներ: Այնպես էլ, նկարագրելով հայոց ընտանեկան և ընկերական կյանքը իրանց բոլոր պակասութեյուններով, հեղինակը ցանկանում է, որ այդ պակասութեյունները լրացվեն ավելի օգտավետ և կյանքի պահանջներին համապատասխան պայմաններով:

Իսկ թե «Կայծերի» հեղինակը «վայրենութեյուն» կամ «վայրագութեյուն» է քարոզում, մեզ շատ մութն է, թե ի՞նչ է ուզում պ. Հայկունին հասկացնել այդ խոսքերով. մի՞թե նա վայրենութեյուն է համարում անձնապաշտպանութեյունը: Մի՞թե նա վայրենութեյուն է համարում վայրենի քրդի հափշտակութեյունից իր կյանքը, իր ընտանիքը պահպանելը: Եթե այդ վայրենութեյուն համարվիր, մենք պետք է ամբողջ լուսավորյալ Եվրոպան վայրենի համարեինք, որտեղ պետութեյունները իրանց երկրի հասութեների ամենամեծ մասը ծախսում են զինվորների պահպանութեյան համար, որպեսզի պահպանեն իրանց երկրի շահերը:

Պ. Հայկունին ուրիշ հակառակութեյուններ ևս գտնում է «Կայծերի» հեղինակի և «Մշակի» մտքերի մեջ: «Մշակը» քարոզում է, որ սուրբ Ավետարանը աշխարհաբարի թարգմանելով, պետք է տալ ժողովրդի ձեռքը, որ նա կարդա և բարոյապես զարգանա: Իսկ Բաֆֆին ասում է, որ սուրբ գրքերը վնասակար են, նրանց փոխարեն պետք է տալ ժողովրդին Ղուրանը, որ նա կարդա և վայրենութեյուն սովորի:

Պետք է կամ վերին աստիճանի տգետ լինել, կամ վերին աստիճանի անամոթ լինել, այսպես անխղճաբար աղավաղելու համար «Կայծերի» արտահայտած մտքերը: Բաֆֆին չէ ասում, թե սուրբ գրքերը վնասակար

են, այլ ասում է, որ մեր տեր Բոդիկները այնքան ագեթ են, որ սուրբ գրքերի մոքերին այնպիսի սիրալ բացատրություններ են տալիս, որ փոխանակ օգուտ բերելու, վնասում են։ Որի ընդհակառակն, մահմեդական մոլլան համեմատաբար ավելի նպատակահարմար կերպով է բացատրում Ղուրանի իմաստները (եր. 255—257)։ Եվ այդ կարծիքը ոչ թե Բաֆֆիի կարծիքն է, այլ որսորդ Ավոյի կարծիքն է։

Չնայելով, որ պ. Հայկունին, որպես տեսանք, մի կողմից աշխատում է ցույց տալ «Մշակի» և «Կայծերի» գաղափարների մեջ հակառակություն, մյուս կողմից, ինքն իրան հակասելով, հայտնում է այն միտքը, թե «Կայծերի» հեղինակը «Մշակի» խմբագրից փող ստանալով, նրա թերթի գաղափարները ամբողջապես մոցրել է իր գրքի մեջ։

«Ինչպես կկամենայիք, ասում է նա, որ ես իմ մեկենասից («Մշակի» խմբագրից) յուրաքանչյուր տողի համար մի որոշյալ գումար ստանայի, նրա բերանից իմ մասին ամեն օր մի-մի դրվատ ու ներբող լսեի և միևնույն ժամանակ նրա գպպաիարեները ամենամոլեռանդաբար չքարոզեի»։

Ես հետո ցույց կտամ, թե ի՞նչ է նշանակում յուրաքանչյուր տողի համար մի որոշյալ գումար ստանալը, կամ ի՞նչ է նշանակում «Մշակի» գաղափարները ամենամոլեռանդաբար քարոզելը։ Այժմ հարկավոր եմ համարում մի քանի օրինակներով ավելի պարզել այդ հարցը։

Ընդունենք, որ «Կայծերի» գաղափարները մի քանի կետերում նման են «Մշակի» հայտնած մտքերին։ Ի՞նչ է դրա պատճառը։ Արդյոք ա՞յն, որ «Կայծերի» հեղինակը սեփական համոզմունք, սեփական իդեալներ չէ ունեցել և կուրորեն հետևել է «Մշակին», Ի՞նչ մի այլ երևույթի մեջ պետք է որոնենք իսկական պատճառը։ Այդ հարցը պետք է լուծեր պ. Հայկունին, բայց նա ամենայն անբարեխղճությամբ աղավաղում է։

Շատ հասկանալի է, որ ժամանակակից հարցերը քննվում, վիճաբանվում են ժամանակակից մամուլի և գրականության այլ ճյուղերի մեջ։ Բանաստեղծը կատարյալ իրավունք ունի բոլորից օգուտ քաղելու։ Բայց բանը նրանումն է, որ այս և այն հարցը լրագրի մեջ քննվում է առաջնորդող հոդվածի ձևով, ամսագրի մեջ քննվում է ամսագրական հոդվածի ձևով, բայց վեպի մեջ նա բոլորովին ուրիշ կերպարանք է ստանում։ Եվ դրա մեջն է վիպասանի առավելությունը, որ նա լրագրի արտահայտած մերկ մտքից ստեղծում է կյանք, մարմին և հոգի է տալիս նրան, շոշափելի կերպով ներկայացնում է մեզ։ Ես օրինակներով կբացատրեմ իմ ասածը։ Դիցուք թե լրագիրների մեջ քննվում է ապահարզանի հարցը։ Այդ հարցին ի նպաստ և աննպաստ զանազան դատողություններ ենք

կարդում, բայց բոլորը խոսքեր և դատողություններ են միայն։ Բանաստեղծը վեր է առնում այդ բոլորը, գրում է մի վեպ և ներկայացնում է մեզ մի զույգ ամուսիններ, որոնք անբաժան ամուսնությունով դժբախտ էին. բայց հետո բաժանվելով և քաղաքական ամուսնությունով ապրելով յուրաքանչյուրը իր սիրածի հետ, ավելի բախտավոր դարձան։ Ո՞ր անփորձ կրիտիկոսը քննելով այդ վեպը, կասե, թե նա իր աշխատության գաղափարը առել է այս և այն լրագրից։ Այս տեսակ դատողություններ կարող են անել միայն հայկունինները, որոնք չգիտեն, թե ինչ է վեպը, կամ ում պետք է վերաբերել նրա գաղափարները։

Մի այլ օրինակ ևս։ Մի ժամանակ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի ամբողջ մամուլը զբաղված էր ստրուկների ազատության հարցով։ Այդ հարցի առիթով տպվում էին հազարավոր բրոշյուրներ, այդ հարցի առիթով քահանան եկեղեցու բեմից կարդում էր քարոզներ, իսկ անհետագիտը դիտության ամբիոնից կարդում էր դասախոսություններ, բոլորը կամ ի նպաստ ստրուկների, կամ աննպաստ։ Եկեղեցին, մամուլը, դիտությունը կատաղած կերպով վիճում էին միմյանց հետ, և վիճաբանության առարկան ստրուկներն էին։ Մարքերի այդ կուլի ժամանակ հայտնվում է մի կին, Բիչեր Ստոու, և օգուտ քաղելով ժամանակի մտածություններից, գրում է մի վեպ ստրուկների կյանքից. «Թոմաս աղբոր տնակը»։ Այդ կնոջ համար ասում են, որ ստրուկների ազատիչը եղավ ոչ այնքան հյուսիսային ամերիկացիների զենքը, որքան նրա վեպը։ Եթե մի կրիտիկոս քննելու լիներ նրա գեղեցիկ գիրքը, շատ ծիծաղելի կդառնա, եթե ասե, նրա բոլոր գաղափարները և տենդենցիան հազար անդամ հայտնված են եղել մամուլի մեջ։

Ռուսաստանում ծագում է ճորտերի ազատության հարցը։ Նույն երևույթն է նշմարվում ռուսաց թե մամուլի և թե գրականության մյուս ճյուղերի մեջ, ինչ որ կատարվեցավ Ամերիկայում։ Ինքը կառավարությունը զբաղված էր այդ հարցով։ Այդ միջոցներում Տուրգենևը, օգուտ քաղելով ընդհանուր մտածություններից, գրում է «Записки охотника» ռոմանը։ Բայց մինչև այսօր ոչ ոք չէ մեղադրել հարգելի վիպասանին գրականական գողության մեջ, թե նա իր վեպի գաղափարը առել է այս կամ այն գրվածքից։ Եվ դրա մեջն է ժամանակակից վեպի բարձր նշանակությունը, որ նա ամփոփում է իր մեջ այն բոլորը, ինչ որ հազարավորները և միլիոնավորները են մտածում։ Բանաստեղծը խլում է մի թղթի վրա և թե շրջապատող միջնոլորտի մեջ ստրածված մտքերը, պարզում է և, իր սեփական գույնը տալով, վիպական կենդանի ձևով վերադարձնում է մեզ։

Նույնը արել է Բաֆֆին. նրա գիրքը ժամանակի արդյունք է։ Եթե նա ծնված լիներ հիսուն տարի առաջ կամ աշխարհ գալու լիներ մեզանից հիսուն տարի հետո, ես համոզված եմ, որ «Կայծեր» չէր գրի, այլ կգրեր մի ուրիշ վեպ, որը կհետաքրքրեր իր ժամանակի ընթերցողներին։

Այդ բոլորից հետո ես, դարձյալ վերադառնալով դեպի պ. Հայկունին, հարկավոր եմ համարում նկատել, որ այդ պարոնը, խոսելով «Կայծերի» գաղափարների կամ տենդենցիայի վրա, ամենևին մի որոշ միտք չէ հայտնում, թե ինչումն է կայանում այդ տենդենցիան։ «Վայրենություն», «վայրագություն», «խավար», «հետադիմություն» բառերը անդադար կրկնելով, հարցը պարզած է համարում։ Բայց այդ մի քանի լոկ բառերը բավական չեն կրիտիկայի համար։ Ես նախորդ համարում հայտնեցի, թե վեպի հիմնական գաղափարները չի պիտի որոնել նրա այս և այն բառի, նրա այս և այն տողի մեջ, այլ վեպի ամբողջության մեջ։ Բայց երբ կրիտիկոսը նպատակահարմար է համարում վեր առնել տողեր, նախադասություններ, կամ ամբողջ կտորներ վեպից և նրանցով բացատրել նրա պարունակած գաղափարները, դա բարեխիղճ կրիտիկոսի գործ չէ։

Հիմա դառնանք պ. Հայկունու այն կարծիքին, որով ցույց է տալիս, որ Բաֆֆին իր մեկենասից («Մշակի» պ. խմբագրից) փող ստանալով, նրա գաղափարները մացրել է իր գրքի մեջ։

«Պ. Բաֆֆին իրան գրքի առաջին երեսում գտնում է, որ մեկենասությունը գրականության մեջ օգտակար է, այսինքն՝ «մի ձեռքը» կարող է հառաջացնել ու ծաղկեցնել և գրականություն (??)։ Այդ կարծիքը անպայման կերպով ոչ մի հասկացող մարդ, ես կարծում եմ, չէ ընդունում։ Եվ ինչպե՞ս ընդունել, ինչպե՞ս Բոքլի նման չասել, որ մեկենասությունը փչացնող, շողոքորթող, անբարոյականացնող երևույթ է, երբ տեսնում ես, որ այդ մեկենասը, օրինակի համար, ֆրանսիացիների մեջ մի Լուդովիկոս է[19], իսկ հայ գրականության մեջ՝ մի «Մշակ»։ Ինչպե՞ս կկամենայիք, որ ես իմ մեկենասից յուրաքանչյուր տողի համար մի որոշյալ գումար ստանայի, նրա բերանից իմ մասին ամեն օր մի-մի դրվագ ու ներբող լսեի, և միևնույն ժամանակ նրա գաղափարները ամենամոլեռանդաբար չքարոզեի»։

Ես նախորդ համարում այդ ևս ցույց տվի, թե ինչ է նշանակում «Մշակի» գաղափարները ամենամոլեռանդաբար քարոզելը, այժմ պիտի խոսեմ գրականական վարձատրության մասին և մեկենասների նշանակության մասին։

Թե ինչ է ասել «Բոքլը», թե ինչ համեմատություն է արել «Մշակի» և ֆրանսիացի լուդովիկոսի միջ, այս ևս նրա գրքում չեմ կարգացել Միայն այսքանը գիտեմ, եթե «Մշակի» խմբագիր պ. Արծրունին իրան Բոքլին հրավիրելու լիներ «Մշակի» մեջ աշխատակցելու, նա անպատճառ կպահանջեր յուրաքանչյուր տողի համար մի որոշյալ գումար: Եվ եթե պ. Արծրունին նրան ասելու լիներ. «Պարոն Բոքլ, ինչո՞ւ եք ինձանից փող պահանջում, դուք չէի՞ք, որ ասում էիք, թե մեկենասությունը անբարոյականացնող միջոց է»։ Պարոն Բոքլը անպատճառ կպատասխաներ. «Ներեցեք, պարոն, դուք ինձ լավ չեք հասկացել. ես իմ աշխատության վարձն եմ պահանջում ձեզանից, դա մեկենասություն չէ...»։

Պ. Հայկունին, որի գաղտնությունների տարածությունը իր կրքերի սահմանից այն կողմը չէ անցնում, աշխատում է մոլորեցնել իր ընթերցողներին, ասելով, որովհետև Բաֆֆին «Մշակի» աշխատակից է, որովհետև այդ լրագրի խմբագիր պ. Արծրունին նրա գրած յուրաքանչյուր տողի համար մի որոշյալ գումար է վճարում, այդ պատճառով էլ Բաֆֆին շողոքորթում է նրան և «Մշակի» գաղափարներին «ամենամոլեռանդարար» հետևում է։ Այժմ կպարզենք վարձատրության հարցը, որովհետև պ. Հայկունին անդադար շեշտում է հիշյալ հարցի վրա։

Թե Բաֆֆին գրում է «Մշակի» մեջ, թե յուրաքանչյուր տողի համար մի որոշյալ գումար է ստանում, դա հանցանք չէ, ամեն մի նշանավոր լրագրի աշխատակիցները փող են ստանում, ձրի չեն գրում։ Բայց ի՞նչ կապ ունի այդ «Կայծերի» հետ։ «Կայծերը» խո «Մշակի» մեջ չէ տպվել, «Կայծերի» համար «Մշակի» խմբագիրը ոչինչ չէ վճարել։ Կամ մի՞թե փողի համար հեղինակը կփոխե իր համոզմունքները։ Կարծեմ, ինքը պ. Հայկունին իր հոդվածի մեջ աշխատում է ցույց տալ Բաֆֆիի և «Մշակի» գաղափարների մեջ հակառակություններ։ Մի՞թե մի մարդ կարող է միևնույն ժամանակ և հակառակ լինել, և հետ հպատակ լինել։

Եթե Բաֆֆին յուրաքանչյուր տողի համար մի որոշ գումար է ստանում, այդ պատիվ է բերում նրան, որ կարողանում է ապրել գրական աշխատանքով. դա շատ գեղեցիկ երևույթ է, դա պետք է ուրախացնի մեզ։ Ես չեմ սխալվի, եթե ասեմ, որ Բաֆֆին առաջինն է մեր գրականության մեջ, որ իր տոհմն աշխատությամբ կարողացավ ցույց տալ, որ տաղանդը նույնպես հարստություն է, որ գրական արդար վաստակով ևս կարելի է ապահովել կյանքը։ Բայց որտե՞ղ, ի՞նչ հասարակության մեջ։ Իհարկե, ոչ մեզանում։ Եվրոպական հասարակությունների մեջ մի կամ երեք հարյուր վիպակ բավական են, որ հեղինակը սեփական կտոր և վիլլա ունենա և շրջապատե իրան ամեն տեսակ հարմարություններով։ Բայց

Բաֆֆին, որ հայ հասարակությանը տվել է տասն հատոր գրքեր և նույնքան հատորներ կկազմեն նրա՝ մեր պարբերական հրատարակությունների մեջ տպված մյուս աշխատությունները, Բաֆֆին իր գրական վաստակով հազիվհազ կարողանում է ձեռք բերել մի կտոր արդար հաց և կյանքից ավելին չէ պահանջում։ Մի ամբողջ քառորդ դար այդ մարդը աշխատում է, դեռևս իր ապրուստը ապահոված չէ։ Այսօր ձգից գրիչը, մյուս օրը, գուցե, ուտելու հաց չի ունենա։ Մինչև այսօր մի ամբողջ ժողովուրդ չէ կարողացել ապահովել իր վիպասանին, և դեռևս գտնվում են մարդիկ, որ տրտնջում են նրա ստացած մի քանի կոպեկների համար։ Ասացեք խնդրեմ, ինչո՞ւ մեզ մոտ մի վարժապետ, մի տեսուչ կարող են չորս հազարներ, հինգ հազարներ ստանալ և թուղթ խաղալով իրանց ժամանակը սպանել, իսկ մի վիպասան, որ կրթում է մի ամբողջ հասարակություն, պատրաստում է մի ամբողջ սերունդ, որի գրական վաստակը կմնա ազգի համար իբրև հավիտենական ժառանգություն, մի՞թե մի այսպիսի աշխատողը պետք է մնա առանց վարձատրության։

Պ. Հայկունին այն միտքն է հայտնում, որ փողը ոչ միայն հրապուրում է, այլ մինչև անգամ անբարոյականացնում է գրողին։ Գուցե պ. Հայկունին փողի համար ամեն բան կաներ, բայց ճշմարիտ տաղանդը երբեք չէ կաշառվում։ Եվրոպական լավ գրողները մեծ փողեր են ստանում, բայց դրանից նրանց աշխատությունները ամենևին չեն վատանում։ Նույնիսկ Լուդովիկոսին շրջապատողները, գիտե՞ պ. Հայկունին, թե ովքեր էին, Ռասին, Բուալո, Մոլիեր, Լաֆոնտեն, Ֆենելոն, Բոսուե[20], այդ մարդիկը չփչացան իրանց մեկենասից օգնություններ ընդունելուց։

Ազգերի գրականության մեջ եղել են ժամանակներ, երբ մեկենասներն էս իրանց օգտավետ ազդեցությունն են ունեցել։ Այդ այն ժամանակներում է լինում, երբ գրականությունը դեռ նոր է սկսել ծաղկել, երբ ընթերցանությունը դեռ ժողովրդի պահանջ չէ դարձել, որ հեղինակների գրքերը վաճառվեին, և նրանք իրանց սեփական արդյունքով կարողանային շարունակել իրանց աշխատությունը։ Բայց երբ ընթերցանությունը ժողովրդի պահանջ է դառնում, մեկենասների կարևորությունը ինքնըստինքյան ոչնչանում է։ Միջադելի կլինեին այժմ մեկենասները Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, ուր հեղինակների աշխատության դեռ բանաքը չցամաքած, հայտնվում է գրավաճառը և հազարներ է առաջարկում տպագրության իրավունքը գնելու համար։ Բայց մի ժամանակ այդ երկրներում մեծ բարերարություն էին անում մեկենասները։

Մեր գրականությունը դեռ այն շրջանի մեջն է, որ գիրքը, ընթերցա-

նութիւնը պահանջ չէ դարձել։ Գրողները բոլորովին ազքատ մարդիկ են, ինչո՞վ կարող են տպագրել իրանց աշխատութիւնները, եթե նրանց օգնողներ չլինեն։ Բախտավոր պետք է համարի իրան այն հեղինակը, եթե դուրս կբերի տպագրութեան ծախքը։ Բայց ինչո՞վ պետք է ապրե նա։ Չէ՞ որ պետք է միջոց տալ նրան գործելու։ Եվ եթե այդ չէ անում հասարակութիւնը, անպատճառ պետք է աննեն մասնավոր մարդիկ, եթե ցանկանում են, որ ընթերցանութիւնը տարածվի ժողովրդի մեջ։

«Կայծերի» տպագրութեան ծախքը հոգացել է գնդապետ Ա. Թ. Մելիք-Հայկազյանը[21]։ Ամենայն համակրութեան արժանի է հարգելի պարոնի առաքինութիւնը, որ նրա շնորհիվ մեր հասարակութիւնը ամեն տարի կարդում է մի քանի գրքեր։ Եթե պարոնի օրինակին հետևողներ շատ լինեին, մեր մանուկ գրականութիւնը ավելի ևս կծաղկեր և կհարստանար և ոչ-թե, որպես պ. Հայկունին է կարծում, գրողները անբարոյական կդառնային։

Ես պ. Հայկունու զանազան մանր-մունր նկատողութիւնների վրա ուշադրութիւն չդարձրի, որովհետև ինչ էլ որ գրեցի, այդ էլ բավական է ցույց տալու համար, թե որքան անբարեխղճութեամբ, որքան վայրիվերո կերպով վերաբերվում է նա դեպի մի գործ, որ լուրջ, ծանր և խորին քննադատութեան կարոտ է։ Բայց չեմ կարող առանց ուշադրութեան թողնել պարոնի փոքրոգութիւնը, եթե նա իր կրիտիկան գրել է լոկ ֆշնամական և վրեժխնդրական զգացմունքից դրդված, պետք է գոնե այնքան մեծահոգի լիներ, որ սպասեր մի հարմար ժամանակի։ Երբ հարևանի տանը կրակ է ընկնում, շտապում են հանգցնելու և ոչ թե կրակի վրա յուղ են լցնում։ Պարոնի կրիտիկան տպվում էր հենց միևնույն օրերում, երբ «Կայծերի» հեղինակի դրութիւնը շատ նախանձելի չէր։ Լավ մարդը հակառակորդի այդպիսի դրութեան ժամանակ պատերազմ չէ հայտնում։

Երևում է պ. կրիտիկոսը սաստիկ վրդովված է եղել «Կայծերի» հերոսներից մեկի, Ասլանի, հետևյալ դատողութիւններով.

«Ես չեմ զարմանում գործերի այսպես լինելու մասին, այլ ցավում եմ, որովհետև ամեն ժամանակ, երբ հայի համար որևիցե դավաճանութիւն է պատրաստվում, նրա մեջ խառն է լինում գարձյալ նույն իսկ հայի մատնիչ ձեռքը։ Դա մի պատմական եղեռնագործութիւն է, որ, սկսյալ ամենահին դարերից, խիստ հաճախ կրկնվել է մեր ազգի կյանքում։ Դա հայի վատ հատկութիւններից մեկն է» (եր. 441)։

Պ. Հայկունին Ասլանի այդ խոսքերից այն եզրակացութիւնն է դուրս բերում, թե Բաֆֆին (գարձյալ Բաֆֆին) բոլոր հայերին դավաճան կամ մատնիչ է կոչում։ Բաֆֆին այդպիսի միտք չէ հայտնում, որովհետև,

եթե բոլոր հայերը մատնիչ լինեին, այլևս մի արդար հայ չէր մնա, որին մատնեին։

Ես ծողնում եմ մեր պատմությունը, որի մեջ դավաճանների բազմաթիվ օրինակներ ունենք։ Ես ծողնում եմ և մեր ներկան, որի մեջ նույնպես նրանց թիվը պակաս չէ, ես հարցնում եմ պ. Հայկունուց. մի՞թե նա ինքը իր վարմունքով չէ ապացուցանում, որ Սալանի հայտնած միտքը բովանդակում է իր մեջ մի դառն ճշմարտություն։ Ի՞նչ են նշանակում այդ խոսքերը.

«Սպասեցնեք, սպասեցնեք, պարոններ, ես գիտեմ, որ ոբսորդ Ավոն և ընկ. («Կայծերի» մեջ) ուզում են լինել և կարծես թե են նաև մի մի... Միլորդ, մի ծ... օֆ, մի կ...իչ, մի Դ...ի et tutti guanti»...

Դա մատնություն չէ՞[22]։

Պ. Հայկունին ոչ միայն մեծ զրպարտություն է անում «Կայծերի» ու նրա հեղինակի վրա, այլև անխիղճ կերպով կասկած է հայտնում և ցեղուրայի վերաբերությամբ, որ թույլ է տվել հիշյալ վեպի տպագրությունը։

Վերոհիշյալ զրպարտություններով չբավականանալով, պ. Հայկունին, «Կայծերի» հեղինակին վնասելու համար, մի այլ մատնություն էլ է անում։ Նա ասում է, որ «Կայծերի» հեղինակը շատ է կարդացել Ջերնիշևսկու ռոմանը և իր վեպերը գրում է նրա ազդեցության ներքո։ «Ինչպես, ավելացնում է նա, մի ժամանակ «Խոնթում», ուր Ջերնիշևսկու Վերա Պավլովնայի երազը իրա վարդանի բերանն էր դնում»։

Պ. Հայկունուն պետք է լավ հայտնի լինի, որ Ջերնիշևսկու հիշյալ գիրքը Ռուսաստանում արգելված է, և հեղինակը անհայտության մեջ է ապրում։ Պ. Հայկունին այն ևս գիտե, որ Բաֆֆիի վեպերը տպվել են Թիֆլիսում, ցենզուրայի թույլտվությամբ։ Ուրեմն ցենզուրան ինչպե՞ս թույլ կտար նրանց հրատարակությունը, եթե նկատելու լիներ նրանց մեջ վնասակար գաղափարներ և մանավանդ Ջերնիշևսկու գրքին հետևողություն։ Ի՞նչ նպատակ ունի պարոնը, որ մեր անմեղ գրականության վրա տարածում է այս տեսակ կասկածներ։

Երևում է պ. Հայկունին այս տեսակ կասկածներ տարածում է այն նպատակով միայն, որ Բաֆֆիի վեպերի վաճառումը արգելվի։ Նրա ննջասվորությունը պարզ երևում է հետևյալ դեպքում։ Ամենքին հայտնի է, որ «Կայծերի» երկրորդ հատորը դեռ լույս տեսած չէ. նրա բովանդակությունը դեռ ոչ որին հայտնի չէ։ Բայց պ. Հայկունին երկրորդ հատորի մասին ևս իր վճիռը տալիս է, ասելով, թե երկրորդ հատորը կվերջանա նրանով, որ առաջին հատորի հերոսները կհարձակվեն Վանա բերդի վրա և այդ քաղաքը կգրավեն...։ Պարոնը որտեղի՞ց գիտե, որ երկրորդ հատորը

այսպես է վերջանալու Մի՞թե այդ զրպարտություններով չէ մտածում «Կայծերի» մուտքը արգելել Թուրքիայի սահմաններից։

Եվ այդ բոլորից հետո պ. Հայկունին ինչո՞ւ է վրդովվում, երբ «Կայծերի» հերոսներից մեկը՝ Ալանը, ասում է, որ հայերին դավաճանողները իրանք հայերն են լինում...

Պ. Հայկունին իր հոդվածը վերջացնում է զանազան պատավական խրատներով, որ ուղղում է դեպի «Կայծերի» հեղինակը, խորհուրդ տալով նրան, որ իր չհասկացած բաների մասին գրիչ չշարժե, որ «երևելացական դյուրագրգիռ ոգևորությամբ ինքնակոչ բժիշկ չձևանա բուժելու համար բարոյական այնպիսի վերքեր, որոնց սրտաբին խոցերը նա միայն տեսնում է, այն էլ այնքան թույլ ակնոցավոր աչքերով», ավելացնում է, որ Բաֆֆիի առաջարկած դեղը այն atrophia nervorum-ն է, որով Չերնիշևսկու (գարձյալ Չերնիշևսկի) երևելի բժիշկները կամենում էին բժշկել Կատարինա Վասիլևնային, բայց Կատարինա Վասիլևնան այդ դեղով չբժշկվեցավ և այլն։

Եթե ամեն մի խրատ ավող իր խրատները նախ իր գլխի վրա փորձելու լիներ և չհասկացած ու չսովորած բաների մասին դատողություններ չաներ, կարծեմ, շատ հիմարություններ դուրս տալու վտանգից ազատ կմնար։

Պ. Հայկունին, այդ խալիպյան դպրոցի առաջին, թե երկրորդ դասատանից արտաքսված համբակը[23], իր հոդվածի մեջ աշխատում է ձևանալ ոչ միայն իբրև քաջ կրիտիկոս, այլ որպես լեզվագետ էս, և այդ մտքով դործ է ածում զանազան ռուսերեն, ֆրանսերեն և լատինական բառեր ու առածներ, առանց նրանց նշանակությունը հասկանալու։ Նա կարծում է, որ atrophia nervorum-ը դեղի կամ դարմանի անուն է և զարմանում է, որ Կատարինա Վասիլևնան այդ դեղով չբժշկվեցավ։ Բայց atrophia nervorum-ը դեղի անուն չէ, այլ հիվանդության անուն է և նշանակում է նյարդային անսննդակաևություն։ Մի՞թե հիվանդությունը կարելի է հիվանդությունով բժշկել։ Ես կարծում եմ, որ պ. Հայկունին նույնպես ազատ չէ հիշյալ հիվանդությունից, բայց նա իզուր է դարմանը խարդախության մեջ որոնում...

«Կայծերի» կրիտիկայից հետո, պ. Հայկունին դրից Բաֆֆիի «Խաչագողի հիշատակարանի» առաջին հատորի քննադատություն։ Այստեղ նա, ինչպես սովորաբար ասում են, երևի փարդան բոլորովին պատռել

է, այսանկ նա երևում է իր կատարյալ ոգեղությամբ ևս իր ժամանակին կանանվամ պարոնի հետ[*]։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

1

Մի ամբողջ տարի անցավ այն օրից, որ ընդհանուր հայոց կաթողիկոսը վախճանված է։ Նոր կաթողիկոսի ընտրության ժամանակը մոտենում է։ Հինգ ամիս ևս, և ահա կգա մայիսը, երբ ազգի պատգամավորները պետք է հավաքվեն էջմիածնում և իրանց քվեն տան։ Բայց մինչև այսօր ի՞նչ շինեցինք, ի՞նչ նախապատրաստություններ գործ դրվեցան, որ Հայաստանյայց եկեղեցու հայրապետական աթոռի նորընտիր գահակալը արժանավոր մեկը լինի, կարող ենք ասել, որ ոչինչ։ Միամիտները վիճեցին, ազմուկ բարձրացրին, իսկ խորամանկները սուս կացան և աշխատեցին մթին ճանապարհներով իրանց ընտրելին հայրապետական աթոռին մոտեցնել։

Ն. Պոլիսի Ազգային ժողովը, որը, որպես հայոց մեծամասնության ներկայացուցիչը, պետք է ընտրության հարցում գլխավոր դերը կատարեր, այդ ժողովը, համարձակվում ենք ասել, նույնպես ապարդյուն ժամանակ վատնեց։ Դա առաջին անգամը չէ, այլ ամեն անգամ, երբ կաթողիկոս է վախճանվում, և նոր ընտրության նախապատրաստություններ պետք է լինեն, այդ միջոցին՝ ժողովին զբաղեցնելու համար և նրա ուշադրությունը բուն հարցից հեռացնելու համար՝ զանազան աննշավոր մարդիկ միշտ հնար են գտել նոր հարցեր մեջ ձգել և գործը ավելի բազադրյալ և ավելի անլուծանելի դարձնել։ Բուն հարցը, այսինքն՝ ընտրելու համար մի արժանավոր կաթողիկոսական որոշելը, մնացել է անշոշափելի, մինչև հասել է էջմիածին պատգամավոր ուղարկելու օրը, և մի քանի պղտոր ջրի մեջ ձուկ որսացող էֆենդիներ պատգամավորների բերանը դրել են այն անունները, որոնք մինչև այնօր ոչ ոքին հայտնի չեն եղել։

Այս անգամ Ազգային ժողովին տվեցին մի զբաղմունք, այն է՝ կաթողիկոսի ընտրության եղանակի որոշումը։ Այդ մասին առանձին հանձ-

---

[*] *Վերջացնելով հոդվածս, հարկավոր եմ համարում հայտնել, որ ընդհանուր դատողությունների մեջ, մի քանի տեղերում հետևել եմ Բելինսկու հայացքներին։ Մաս. ևեղ.*[24]։

նաժողով կազմվեցավ, որ ծրագիր պատրաստեր Հանձնաժողովը վատ-
նեց մի քանի ամիսներ, վերջապես, ներկայացրեց իր ծրագիրը։ Այդ ծրա-
դիրը մի այնպիսի խառնափնթոր բան էր, որ ոչ միայն անիրագործելի
էր, այլ տարիների կարոտ էր իրագործելու համար, մինչդեռ կաթողի-
կոսի ընտրությունը մեկ տարուց ավելի ժամանակամիջոց չունի։ Հիշյալ
ծրագրի համեմատ պետք է Տաճկաստանի բոլոր վիճակներից ձայներ
հավաքեին և այդ ձայների թվի համեմատ որոշվեր յուրաքանչյուրի քվեն։
Եթե Ազգային ժողովը գտներ Տաճկական Հայաստանի մի որևիցե կենտ-
րոնում, դեռևս հավանականություն ուներ, որ կարելի լիներ, այն ևս
մեծ դժվարությամբ, հիշյալ ծրագիրը իրագործել։ Բայց Կ. Պոլսում նըս-
տած Տաճկա-Հայաստանի բոլոր անկյուններից ձայներ հավաքելը, դա
ավելի քան անկարելի է, մանավանդ մի այնպիսի երկրում, ուր դեռ ոչինչ
կարգ-կանոնի տակ դրված չէ։

Ուրախ ենք, որ Ազգային ժողովը այնքան խոհեմ գտնվեցավ, որ
մերժեց հիշյալ ծրագիրը և ընդունեց 66-ի ընտրության ձևը, դա ամենա-
հարմարն է, եթե Ազգային ժողովը սրբությամբ կկատարե այն մեծ
պարտականությունը, որ նրա վրա է դրել ազգի մեծամասնությունը, որ
գտնվում է Տ.-Հայաստանում։

66-ի ընտրության ձևը[1] ընդունելով, Ազգային ժողովը իրան է սե-
փականացնում այն բոլոր քվեների իրավունքը, որ տված է Տաճկաստա-
նի հայերին, այլ խոսքով, ինքը դառնում է ընտրող։ Մենք հուսով ենք,
որ Ազգային ժողովը բարեխղճությամբ գործ կդնե իր իրավունքը և կար-
դարացնե այն մեծ վստահությունը, որ ունի նրա վրա Տաճկաստանի
հայը։

Այժմ գլխավոր հարցը, որ զբաղեցնում է Ազգային ժողովին և մա-
սամբ մեր մամուլին, կայանում է նրանում, արդյոք նոր ընտրելի կա-
թողիկոսը ո՞ր երկրացի լինի, ավելի նպատակահարմար է՝ տաճկաստանց-
ի՞, թե՞ ռուսաստանցի։ Այդ հարցը, մեր կարծիքով, այնքան կարևորու-
թյուն չունի, որ վիճաբանության առարկա դառնա, որովհետև, փոխանակ
վիճելու այն բանի վրա, թե ի՞նչ տեղացի պետք է լինի կաթողիկոսը,
ավելի լավ կլիներ, եթե քննեին, թե ով կամ ինչ տեսակ մարդ արժան է
կաթողիկոս դառնալու։ Այդ արժանավորությունը կայանում է ոչ թե տե-
ղացիության մեջ, այլ անձնավորության մեջ, որտեղացի և լիներ նա։
Բայց որովհետև հարցը արդեն հարուցված է, մենք այդ մասին կխո-
սենք մեր հետևյալ հոդվածում։

2

Մեր անցյալ հոդվածում կանգ առինք այն տեղի վրա, թե ո՞րն ավելի նպատակահարմար է, արդյոք նորընտրելի կաթողիկոսը պետք է տաճկաստանցի՞ լինի, թե՞ ռուսաստանցի կամ թե մի այլ երկրից։

Այդ հարցը լուծելու համար նախ հարկավոր է պարզել, թե իսկապես ինչ իրավասություն կամ նշանակություն ունի էջմիածնի կաթողիկոսը։ Հայոց եկեղեցին իր պատմական և ավանդական սովորություններով, որոնք օրենքի զորություն են ստացել, ընդունել է և ընդունում է էջմիածնի կաթողիկոսին որպես ս. Գրիգոր Լուսավորչի աթոռի ժառանգ և որպես ընդհանուր հայոց ծայրագույն հայրապետ։ Ուրեմն, որտեղացի և լիներ այդ աթոռակալը, միևնույն է, միայն թե նա պետք է ունենա այն արժանավորությունները, որ պահանջում է նրա բարձր կոչումը։

Առարկողներ կան, թե որովհետև էջմիածնի կաթողիկոսի իրավասությունը տարածվում է գլխավորապես Ռուսաստանի հայերի վրա, և թե նա գործ ունի գլխավորապես Ռուսաստանի հայերի հետ, այդ պատճառով ավելի լավ է, որ նա ռուսաստանցի լինի, որպեսզի, տեղային հանգամանքների հետ ծանոթ լինելով, կարողանա իրան հանձնված հոտը օրինավոր կերպով կառավարել։

Եթե ընդունենք այդ առարկությունը իբրև անհրաժեշտ պայման, այն ժամանակ պետք է հարցը շատ պարզ դնել։ Այլևս ինչո՞ւ ենք տալիս էջմիածնի կաթողիկոսին Ընդհանուր հայոց ծայրագույն հայրապետի տիտղոսը, եթե նա միմիայն Ռուսաստանի հայերի հոգևոր պետն է, և եթե նա պետք է ճանաչե և հոգ տանե միայն Ռուսաստանի սահմանների մեջ բնակված հայերի վրա։ Կրկնում ենք, եթե այդ ճիշտ համարենք, այն ժամանակ կաթողիկոսի ընդարձակ նշանակությունը ինքնըստինքյան կփոքրանա, և նա կդառնա էջմիածնի վանքի վանահայր և Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ, իսկ ավելի՝ ոչինչ։

Այդ դեպքում, էջմիածնի կաթողիկոսը նույն նշանակությունը կունենա իր վիճակի համար, ինչ նշանակություն որ ունի Աղթամարի կաթողիկոսը Աղթամարի վիճակի համար, և Սիսի կաթողիկոսը Կիլիկիայի համար, որոնց իրավասության չափը իրանց վանքի և վիճակների սահմաններից դուրս չէ գնում։

Վերոհիշյալ առարկությունից, թե էջմիածնի կաթողիկոսը միմիայն Ռուսաստանի հայերի համար է և պետք է Ռուսաստանցի լինի, ինքնըստինքյան ծագում է մի այլ ավելի ծանրակշիռ հարց ևս, որ ոչ սակավ երկպառակություններ կարող է առիթ տալ։ Որովհետև, եթե ընդունենք,

որ էջմիածնի կաթողիկոսը միայն մեզ է պատկանում, այն ժամանակ մենք մեր բոլոր կապերը կաթողիկոսի ընտրության վերաբերությամբ պետք է խզենք թե Տաճկաստանի հայերի հետ, և թե այլ պետություններ մեջ ապրող հայերի հետ։ Այլևս ինչո՞ւ ենք թույլ տալիս, որ տաճկաստանցին իր ձայների մեծամասնությամբ խեղդեր մեզ, այլևս ինչո՞ւ ենք թույլ տալիս, որ պարսկաստանցին, հնդկացին և եգիպտացին մասնակցեր մեր կաթողիկոսի ընտրության գործի մեջ։ Մենք կընտրեինք մեր կաթողիկոսին, ումը որ կցանկանայինք, որպես Աղթամարի վիճակը ընտրում է իր կաթողիկոսին, և որպես Սիսի վիճակը ընտրում է Կիլիկիայի կաթողիկոսին։

Բայց այդ անել մենք ոչ կարող ենք և ոչ էլ անելու իրավունք ունենք։ Դա սխալ և միանգամայն ամենավնասակար ենթադրություն է։

Էջմիածնի կաթողիկոսը Ընդհանուր հայոց ծայրագույն հայրապետն է, որ երկրում և որ պետության մեջ գետնվված լինելին հայերը։ Նրա ընտրությունը կախումն ունի ամբողջ ազգից և ոչ թե նրա մի մասից։ Այդ դրությունը առեղծել է ինքը պատմությունը, և ոչինչ փաստերի կարող չէ։ Էջմիածնի կաթողիկոսի հոգևոր իշխանությունը տարածվում է երկրագնդի բոլոր հայերի վրա, տարբերությունը միայն չափերի մեջն է, թե ինչ պետություն ինչ չափով սահման է դրել նրա իրավունքներին։ Պարսկաստանի և Հնդկաստանի հայերը ենթարկվում են էջմիածնի կաթողիկոսի անմիջական իշխանությանը. նա է նշանակում և ուղարկում այդ երկրների թեմական առաջնորդներին։ Տաճկաստանի հայոց երկու կաթողիկոսները (Աղթամարի և Սիսի) և երկու պատրիարքները (Երուսաղեմի և Կ. Պոլսի) ամեն մի ծանրակշիռ եկեղեցական հարցում դիմում են էջմիածնի կաթողիկոսին։ Նա միայն իրավունք ունի ընդհանուր ժողով հրավիրելու և եկեղեցական ծանրակշիռ հարցերը վճռելու։ Կ. Պոլսի պատրիարքը, Տաճկաստանի հայոց Ազգային սահմանադրության կանոններով, համարվում է էջմիածնի կաթողիկոսի փոխանորդը, և նրա միջնորդությամբ կաթողիկոսի իրավունքները տարածվում են ամբողջ Տաճկաստանի հայերի վրա։

Իրավ է, եղել են ժամանակներ, որ էջմիածնի կաթողիկոսի հարաբերությունները կամ նրա կապերը թուլացել են Կ. Պոլսի պատրիարքարանի հետ, բայց դրա պատճառները պետք է որոնել ավելի այդ երկու աթոռները կառավարող անձնավորությունների մեջ, քան թե վաղուց արդեն ընդունված պաշտոնական դրությունների մեջ։ Նույնիսկ Ռուսաստանում երբեմն կաթողիկոսի հարաբերությունները այս և այն թեմական

առաջնորդի հետ սուր ձև են ստանում, բայց այսպիսի դեպքերը պետք է բացառություն համարել։

Այս բոլորից այն եզրակացությունն ենք հանում, որ երկրացիության խնդիրը կաթողիկոսի ընտրության գործի մեջ բոլորովին անիմաստ խնդիրներից մեկն է։ Ընդհանուր հայոց կաթողիկոսը խիստ ընդարձակ սահման ունի իր հովվապետության համար։ Նրա հոգևոր իշխանությունը չէ պայմանավորվում միայն Ռուսաստանով։ Այդ պատճառով բավական չէ, որ նա միայն ռուսաց հայերի հոգևոր պետերը ճանաչեր և միայն նրանց համար հոգ տաներ։ Նա պետք է ունենա ընդարձակ, բազմակողմանի հմտություններ, որ կարողանա ընդհանուր հայերի պետքերի համաձայն գործել։

Եվ ի՞նչ պատճառներ ունենք ենթադրելու, որ մի տաճկաստանցի, պարսկաստանցի կամ հնդկացի եպիսկոպոս, որը արդեն հայտնի է ազգի մեջ իր հոգևոր և բարոյական արժանավորություններով, իր վարչական տաղանդով, մի այդպիսի եպիսկոպոս անընդունակ կլինի Ռուսաստանի հայերին կառավարելու, որովհետև տեղային պայմաններին անծանոթ է։ Հետաքրքիր է գիտենալ, թե որո՞նք են այդ տեղային պայմանները։ Ռուսաստանի հայոց հոգևոր կառավարությունը այն աստիճան չափի և սահմանի մեջ է դրված, որ մի կաթողիկոս, որքան էլ որ անծանոթ լիներ, մի քանի օրվա մեջ կարող է հասկանալ, թե իր պարտավորությունները և թե իր իրավունքները, բավական է, որ նա կառավարելու ընդունակություններ ունենար։ Հանգուցյալ Գևորգ կաթողիկոսը ռուսաստանցի չէր, բայց նա Ռուսաստանը ավելի լավ էր ճանաչում, քան թե մեր բոլոր եպիսկոպոսները, բայց եթե նա չկարողացավ գոհացնել մեզ, դրա պատճառը պետք է որոնել ոչ թե այն բանի մեջ, որ նա բրուսացի էր, այլ նրա անձնական հատկություններ մեջ։

Մի այլ կարևոր կետ ևս պետք է ի նկատի ունենալ։ Էջմիածնի հոգևոր կառավարության մեջ վարչական մարմինը իսկապես Սինոդն է. նա է կառավարում տնտեսական կամ եկամտական մասը, նա է կառավարում դատաստանական մասը՝ եկեղեցականներին պատժելու կամ ապաշխարության ենթարկելու, նա է հսկում թեմական կամ վիճակային կոնսիստորիաների վրա, նա է հսկում եկեղեցական կալվածքների վրա, մի խոսքով, կառավարությունը Սինոդի ձեռքումն է։ Կաթողիկոսը Սինոդի նախագահն է, միայն սոսկ կրոնական հարցերի մեջ նա բացարձակ ձայն ունի։ Ուրեմն, կաթողիկոսի Ռուսաստանը ճանաչելը կամ չճանաչելը ի՞նչ մի առանձին նշանակություն ունի, քանի որ նա իր գործողությունների մեջ պետք է

հենվի գլխավորապես Սինոդի կարգադրություններուն վրա։ Եթե Սինոդը արժանահավատ անդամներից կազմակերպված լինի, ամեն ինչ օրինավոր կերպով կկատարվի, և կաթողիկոսը, որքան էլ որ անփորձ լիներ տեղային պահանջների մեջ, այսուամենայնիվ երբեք սխալներ չի գործի։

Այդ բոլորից հետո, մենք ամենևին նպատակ չունենք պնդել այն կարծիքը, թե նորընտիր կաթողիկոսը պետք է անպատճառ օտարերկրացի լինի և ոչ թե ռուսահայանցի։ Ամենայն հայոց կաթողիկոսը կարող է ընտրված լինել ամեն երկրից, եթե նա այդ կոչմանը արժանի է։ Եվ եթե մեր եպիսկոպոսների մեջ ևս կան արժանավոր անձինք, ինչո՞ւ ենք ծածկում, շատ պետք, ցույց տանք բոլոր հայերին, որպեսզի ի նկատի ունենան, որովհետև ընտրողները միայն մենք՝ ռուսահայցիներս չենք, այլ թվով ավելի շատ ձայներ ունենան օտար երկրների հայերը։

Հետևյալ հոդվածում մենք կխոսենք արդեն հայանի ընտրելիների մասին։

3

Նախընթաց հոդվածում մենք խոստացանք խոսել արդեն հայանի ընտրելիների մասին, թե նրանցից որը իր արժանավորություններով ավելի կերպարանություն ունի ընդհանուր հայոց հայրապետական աթոռի ժառանգորդ լինելու։ Նախքան ուղղակի դիմելը այս կամ այն անձնավորության անուններին, ավելորդ չենք համարում մի քանի խոսքով հիշել, թե որպես են ուրիշները բացատրում կաթողիկոսի իսկական նշանակությունը։

Ոմանք, մինչև անգամ հրապարակախոսներ, այնքան համեստ են, որ կաթողիկոսից շատ փոքր բաներ են պահանջում. բավական է, ասում են, որ նա հայոց եկեղեցուն հավատարիմ լինի (կարծես մի հասարակ գյուղական քահանա պետք է հայոց եկեղեցուն հավատարիմ չլինի), բավական է, որ նա պահպանի արդեն եղածը (այսինքն՝ ինչ որ կա և ինչ դրության մեջ որ կա, անփոփոխ պահի), պետք է նա քաղաքականությամբ չհետաքրքրվի և իր հոգևոր պարտավորություններից դուրս այլ ձգտումներ չունենա, պետք է ժամ գնա և հայոց ազգի համար աղոթի և այլն։

Համեստությունը պախարակելի բան չէ, եթե համեստության տակ թաքնված չլիներին խորամանկ նպատակներ։ Այսպիսի ճգնավորական քարոզներ կարդացողները դլխավորապես նրանք են, որ աշխատում են մի աննշան եպիսկոպոսին (որի անունը ամաչում եմ տալ) առաջ մղել,

հավատացնելով հայ հասարակությանը, թե այդ մարդն էլ բավական է, ախար հայոց կաթողիկոսությունը, ի՞նչ բան է, որ տաղանդավոր մարդիկ են որոնում։

Հետաքրքիր կողմը այն է, որ այդ հրապարակախոսները հարկավորած ժամանակ էջմիածնի կաթողիկոսի նշանակությունը այն աստիճան մեծացնում են, որ Հռոմի պապը պետք է նրա փառքին երանություն տա, բայց երբ պետք էր Խիկարին կամ Ղազարին պաշտպանել, այդ ժամանակ կաթողիկոսի նշանակությունը այնքան փոքրացնում են, որ նա դառնում է էջմիածնի վանքի ժամ օրհնող։

Ընդհանուր հայոց հայրապետը էջմիածնի վանքի ժամ օրհնող չէ, նա գործ ունի ամբողջ ազգի հետ և ամբողջ ազգի հոգևոր գլուխն է։ Եվ որպես էջմիածինը է սրբավայր և միջնակետ ընդհանուր հայոց եկեղեցու, այնպես էլ էջմիածնի հովվապետը պետք է պահպանի բարոյական և հոգևոր կապ ամեն տեղ ցրված հայերի մեջ։ Նա այդ մեծ պաշտոնը կատարել չէ կարող, եթե բոլոր ազգին ծանոթ և բոլոր ազգից սիրված մարդ չէ։ Ուրեմն, այստեղ նշանակություն ունի կաթողիկոսի ընդարձակ ժողովրդականությունը, որպեսզի ազգը նրան հարգի, նրան սիրե և նրա վրա հավատ և վստահություն ունենա։

Մենք բոլորովին ավելորդ ենք համարում քննության տակ ձգել այն արժանավորությունները և այն հմտությունները, որ պահանջում են մի անձից, երբ կամենում են նրան կաթողիկոսական աթոռին արժան համարել, ասելով, թե նա պետք է ժողովուրդը ճանաչե, թե նա պետք է վարչական ընդունակություն ունենա, թե նա պետք է տնտեսագետ լինի, քաղաքագետ լինի, կրոնագետ լինի և այլն։ Այդ բոլորը այնպիսի ճշմարտություններ են, որ դրանց դեմ վիճելն անգամ երևույթյուն կլիներ, որովհետև, շատ պարզ է, որ բարձր պաշտոնների վարողները պետք է բարձր և բազմակողմանի ընդունակություններ ունենան։ Բայց հարցը նրանումն է, որ այդ ընդունակությունները մարդկանց ճակատին չեն գրված, որ կարդալով իմացվի, թե ով ունի կամ ով չունի։ Մարդիկ կյանքի և գործունեության մեջ ցույց են տալիս իրանց ընդունակությունները։ Եթե մի եկեղեցական ընդհանուր հարգանք և սեր է վայելում ժողովրդից, եթե նա գրավել է ժողովրդի վստահությունը, դա ամենապարզ ապացույցն է, որ նա մեծ արժանավորությունների և ընդունակությունների տեր է, որովհետև առանց դրանց անկարելի է գոհացնել ժողովրդին։ Ժողովուրդը միշտ զժգոհ է. նա երկրպագում է միայն ամենաղորավոր հեղինակություններին։

Այսպիսի անձնավորություններ ամբողջ ազգի մեջ մենք մի զույգ

միայն ունենք, արդարև, երկու հսկա կաթողներ, որոնց գերազանցության չափը մինը մյուսին հավասար է, և որոնք հավասար կերպով պաշտելի են ազգին։ Ընթերցողը կհասկանա, որ մեր խոսքը Ներսես պատրիարքի և Խրիմյան Հայրիկի մասին է։

Դրանցից առաջինը՝ Ներսեսը, Տաճկաստանի հայոց պատմության մեջ ստեղծեց մի նոր դարաշրջան, որից սկիզբ դրվեցավ այդ երկրի հայերի հանգստության և ապագա բախտավորության։ Իրավ է, քաղաքական հանգամանքները նպաստեցին նրան, բայց մեծ տաղանդները միայն կարողանում են օգուտ քաղել հանգամանքներից, իսկ փոքրիկ մարդիկ ձեռից փախցնում են ամենահաջող հանգամանքներն անգամ։

Չկա մի հայ, որ Ներսեսի անունը լսած չլինի, որ նրան չսիրե և նրան չհարգե։ Նրա թշնամիներն անգամ չեն հանդգնել նրա վրա մի փոքրիկ բիծ դնել, երբ հարցը նրա ընտրության է վերաբերվել։ Նրանք միայն կողմնակի, միևնույն ժամանակ քաղաքավարի պատճառաբանություններով աշխատել են հետ կասեցնել սրբազանին կաթողիկոսական ամբոխից, հայտնելով միշտ այն կարծիքը, թե նա Կ. Պոլսի և առհասարակ Տաճկաստանի հայերի համար հարկավոր է, լավ չէ նրան իր բնած դիրքից շարժել, թե իբրև Կ. Պոլսի պատրիարք նա ավելի մեծ գործ կկատարե, քան իբրև էջմիածնի կաթողիկոս և այլն։ Այժմ սկսել են սրբազանի անձնական հիվանդությունը առաջ բերել, թե նա հանգստության կարոտ է, քան թե մի այնպիսի բազմազբաղ պաշտոնավարության, որպես է ընդհանուր հայոց կաթողիկոսությունը։

Վերջին միտքը առարկողների մեջ իր վրա ուշադրություն դարձրից թե մեր և թե Կ. Պոլսի մամուլի մեջ պ. Իփեքճյանի հոդվածը[2], որը նույնպես հիվանդության մահճի մեջ էր գրված։ Մի հիվանդի մյուս հիվանդին կարեկցելը մենք շատ բնական ենք համարում։ Բայց եթե պ. Իփեքճյանի կարեկցությունը անկեղծ էր, եթե նա իրավ հանգստություն և առողջություն էր ցանկանում սրբազանին, ինչ խորհուրդ տար ուղարկել նրան դեպի մեր կողմերը, որովհետև Կ. Պոլսի ինարիգանների մեջ, ուր մի խումբ դավաճաններ սպիտում են նրան ամեն տարի մի քանի անգամ հրաժարական տալ, այդ դրության մեջ մարդիկ ունեցած առողջությունն էլ կկորցնեն։

Ռուսաստանցի, բայց Ռուսաստանին բոլորովին անծանոթ պ. Իփեքճյանը պետք է հասկանա, որ այժմյան էջմիածինը Ներսես V-ի անտառի և լճի շնորհիվ այնպես վատառողջ չէ, որպես նա նկարագրում է, բացի դրանից, նա ունի իր կողքին Բյուրականի հիանալի ամառանոցը յուր կաթողիկոսարանով։ Մենք հանգուցյալ Գևորգ կաթողիկոսին տարեկան

հրեսունևվեց հազար ռուբլի (Քողչալ յուր մասնավոր հիմունքները) վճարանի ծախք էինք տալիս, բայց դուք Ներսես սրբազանի հիվանդությունը ամոքելու համար որքա՞ն եք տալիս պատրիարքարանի դատարկ սնդուկից...

Ներսես սրբազանի հիվանդությունը, որպես շատ ճիշտ նկատել էր «Արձագանք» շաբաթաթերթը, պետք է ավելի քաղաքական համարել, այսինքն՝ որպես պատրվակ զանազան տեսուր հանգամանքների առաջը առնելու, քան թե ֆիզիքական։ Մեզ բավական է միայն, որ նա առողջ և կենդանի մարդ է իր խելքով և իր գործունեության անխոնջ և անվհատ ակի հանդուլ։ Կ. Պոլսի մոայլոտ մթնոլորտը միայն վատ է ազդում նրա առողջության վրա, պետք է նրան դուրս հանել այդ ապականված մթնոլորտից։

Դառնանք Խրիմյանին։

Դեռ 1873 թվին այդ տողերի գրողը «Մշակի» մեջ հրատարակեց մի ընդարձակ հոդված «Մի քանի գծեր Խրիմյանի կյանքից» վերնագրով։ Այն ժամանակից անցել է ուղիղ տասն տարի։ Եթե մենք կամենայինք նրա կենսագրության վրա ավելացնել մի քանի պայծառ գծեր ևս, որ արտահայտվել են այդ տասն տարվա ընթացքում, ուղիղ կստանայինք մեր V դարու Սահակ Պարթեւ կամ Ներսես Մեծի ճիշտ պատկերը, որոնք հայոց պատմության մեջ անմահ անուն են թողել։

Խրիմյանին հայոց ամբողջ ազգը «Հայրիկ» է կոչում։ Աշխարհի բոլոր փայլուն տիտղոսների մեջ չկա մեկը, որ այդ համեստ կոչման նման բովանդակեր իր մեջ այնքան ընդարձակ զգացմունք, սեր և հարգանք։ Դա փառքի և աստիճանի տիտղոս չէ, որ պաշտոնական անշունչ թղթերով են տալիս. դա այն որդիական կոչումն է, որ բխում է կենդանի սրտից, մի կոչում, որ ընտանիքի անդամները տալիս են դերդաստանի գլխաւոր հորը։ Խրիմյանը հայկական մեծ գերդաստանի հայրն է։

Նրա ամբողջ կյանքը ներկայացնում է արիածների մի նշանավոր շարք, մի երկայն շղթա, որի յուրաքանչյուր օղակը արտահայտում է նրա բարձր առաքինությունը և նրա օգտավետ գործերը։ Այդ շղթան կռել է նա իր դառն աշխատանքով և անվհատական եռանդով։ «Հրաչիքյակ Արարատյանը» նրա խորին ժողովրդասիրական ոգու հայելին է. նրա երկար տարիներով հրատարակած «Արծիվ Վասպուրականի» ամսագիրը նրա մտքի բարձր թռիչքն է. Վարագա վանքի ժառանգավորաց դպրոցը, իր տպարանով և երկրագործական ռասմնաբառնով՝ նրա գործերից ամենափառքերն են։

Ուրեմն ինչո՞վ կարող է հայոց ազգը ցույց տալ իր երախտապիտության զգացմունքը դեպի այդ երկու պաշտելի եկեղեցականները, Ներսեսը և Խրիմյանը, եթե ոչ նրանով, որ հրավիրե այդ արժան և քաջ հովիվներից մեկին մեր լուսավորիչ հոր սուրբ աթոռը, որը ժառանգելու համար նրանք արժանի են կացուցել իրանց անձը միմիայն գործով, և որոնց պայծառ անցյալը մեծ երաշխավորություն է խոստանում նրանց ապագա գործունեության համար։

Հետևյալ հոդվածում կխոսենք, թե մենք՝ ուսումնասիրելով, ինչ եպիսկոպոսներ ունենք, որոնց վրա կարելի լիներ մատնացույց անել։

4

Նախորդ հոդվածում մենք խոստացանք ցույց տալ, թե մենք՝ ուսումնասիրելով, ինչ եպիսկոպոսներ ունենք, որոնց վրա կարելի լիներ մատնացույց անել, իբրև կաթողիկոսական աթոռի արժանավոր անձինքների վրա։ Նախորդ հոդվածում մենք և այն միտքն էինք հայտնել, որ մի ընտրելիի արժանավորության ամենահաստատուն երաշխավորությունն այն է, երբ ազգը նրան ճանաչում է, սիրում է, երբ նրա վրա վստահություն ունի, և երբ այդ անձը վայելում է ընդհանուր ժողովրդականություն։

Գուցե մեզ կհարցնեն, թե ինչո՞ւ մենք կաթողիկոսացուի ժողովրդականությունը ընդունում ենք որպես ամենագլխավոր պայմաններից մեկը։ Ինչո՞ւ անպատճառ պահանջում ենք, որ ազգը ճանաչե նրան, և ճանաչե լավ տեսակետից։ Այդ հարցերը պետք է պարզել, որովհետև դրանցից կախում ունի յուրաքանչյուր ընտրելիի արժանավորության չափը։

Անվիճելի է, որ կաթողիկոսի հարաբերությունները ժողովրդի հետ, բացի այն կետերից, որ որոշված են եկեղեցական և մարմնավոր իշխանության օրենքներով, շատ դեպքերում այդ հարաբերությունները հիմնվում են միմիայն բարոյական և փոխադարձ հավատարմության սկզբունքների վրա։ Օրինակ, կաթողիկոսը յուր կոնդակներով դիմում է ժողովրդին և պահանջում է զրամական օժանդակություն այս կամ այն հիմնարկության համար։ Ժողովուրդը իրավունք ունի բացեիբաց մերժել նրա պահանջը, և ոչ մի օրենք չէ կարող հարկադրել ժողովին, որ կաթողիկոսին մի նոր և արտակարգ հարկ վճարե։ Իսկ եթե վճարում է նա, այդ անում է յուր բարի հոժարությամբ, հավատացած լինելով, որ յուր արծաթը չի կորչի, այլ օգտավետ գործի համար կծախսվի։ Եվ որպեսզի

ժողովուրդը այսպիսի հավատ ունենա դեպի յուր կաթողիկոսը, այդ վերջինը պետք է վաղուց դրաված լինի նրա վստահությունը, այլ խոսքով, նա պետք է ժողովրդականություն ունենա։

Կան և կարող են պատահել շատ դեպքեր, որ կաթողիկոսը դիմում է ժողովրդին. նրա ձայնը այն ժամանակ միայն լսելի կլինի, երբ ժողովուրդը ճանաչում է նրան, և ճանաչում է ոչ թե այն առիթով, որ նա կաթողիկոս է, այլ նրա հոգևկան և բարոյական հատկություններով, որ նա իր սիրելին է։

Ներսես պատրիարքը և Խրիմյան Հայրիկը Տաճկաստանի սովի ժամանակ դիմեցին բոլոր կողմերի հայերին, որոնց թվում և մեզ՝ ռուսահայերիս, և ամեն տեղից ահագին գումարներ հանգանակեցին սովելոց համար։ Հանգուցյալ Գևորգ կաթողիկոսը, որ նրանցից ավելի բարձր դիրք ուներ, նույն նպատակով դիմեց Ռուսաստանի հայերին, բայց ոչինչ հավաքել չկարողացավ։ Ի՞նչ էր պատճառը. այն, որ առաջինները մեծ ժողովրդականություն ունեին, իսկ վերջինը՝ ոչ։

Հանգուցյալ Գևորգ կաթողիկոսը իր ժողովրդականությունը վերջին ժամանակներում այն աստիճան կորցրել էր, որ երբ իր թեմական առաջնորդների ձեռքով տպված տոմսակները տարածեց Ռուսաստանի բոլոր վիճակներում և կամենում էր ճեմարանի համար մի նոր հանգանակություն անել տալ, այդ տոմսակները ամեն տեղից հետ ուղարկվեցան, և ոչ ոք չհոժարեցավ մի կոպեկ անգամ վճարել։

Հիշյալ օրինակներից, կարծեմ, բավական պարզ է, թե ինչու մենք անդադար շեշտում ենք այդ բառերի վրա, թե կաթողիկոսական ընտրելին պետք է ժողովրդականություն ունենա, պետք է հայտնի լինի ազգին, պետք է իր անցյալով ժողովրդից սիրված և նրա վստահությունը դրաված անձ լինի։ Կարող է մեկը շատ ձիրքեր և ընդունակություններ ունենա, բայց երբ ժողովուրդը նրան չէ ճանաչում և չէ սիրում, այլևս ի՞նչ գործ կարող է կատարել նա։ Եվ մենք հենց այդ տեսակետները գլխավորապես ի նկատի առնելով, պետք է քննենք մեր ընտրելիներին։

Կաթողիկոսական ընտրությունը այնպիսի մի ծանրակշիռ գործ է, որ այստեղ ամեն մի անձնական կրքեր, ամեն մի անձնական համակրություններ կամ հակակրություններ պետք է լռեն, և ի նկատի պիտի առնվի միմիայն Հայաստանյայց եկեղեցու շահերը և հայ ժողովրդի բարին։ Մի ամբողջ ազգի բարոյական և հոգևոր վիճակը մի անձի ձեռքը հանձնելը մեծ զգուշությունների և խորին քննության կարոտ է։ Այո, եղել են ժամանակներ, որ ոչ թե ժողովուրդը, այլ զանազան կուսակցական խըմ-

բիկներ կաթողիկոսներ են ընտրել, բայց այդ ժամանակները եղել են Առաքելոցի սուրբ աթոռի ամենաթշվառ ժամանակները...

Խոսենք մեր մի քանի եպիսկոպոսների մասին։

Վերջին ժամանակներում լրագրերում հիշվեցավ Մուրադյան Միքիթարեկ եպիսկոպոսի անունը, այդ անձը, իրավ, ռուսահպատակ է, բայց նրան իսկապես տաճկահպատակ պետք է համարել, որովհետև երիտասարդական հասակում այստեղից հեռացել է, ապրել է Երուսաղեմի վանքում, այժմ Զմյուռնիայի առաջնորդ է։ Տաճկահպատակի հայոց մասուլը, որը ինչ իր դավանանքների և ինչ իր պարտավորների մեջ չափ չունի, այդ անձի մասին մինչև այսօր շատ փորր է խոսացել և համարյա նրան անհայտության մեջ է թողել, և դուցե ինքը սրբազանը իրան հայտնի կացուցանելու ձիրքերից զուրկ է եղել, վերջին կարծիքը մենք ավելի հավանական ենք համարում։ Տպագրվածները չեն թաքնվում, այլ բնականապես ինքնըստինքյան հայտնվում են։ Որքան լսել ենք, որքան կարդացել ենք այդ անձի մասին, նա դուցե մի վիճակի հոգևոր առաջնորդ լինելու արժանավորություն ունի, և հավատում ենք, որ յուր գործը առանց ազմուկի, լուկ-մնջիկ առաջ կտանի, բայց ընդհանուր կաթողիկոսի աթոռից դեռ շատ հեռու է կանգնած նա։ Եթե մինչև այսօր Տաճկաստանից էջմիածին կաթողիկոսներ են հրավիրվել, նրանք չեն եղել հասարակ վիճակառային առաջնորդներ, այլ վեր են առնվել ուղիղ պատրիարքական աթոռից։ Պատրիարքական աթոռը սանդուղքի վերջին աստիճանն է, որտեղից կարելի է կաթողիկոսական աթոռի վրա բարձրանալ։ Մեր վերջին կաթողիկոսները՝ Մատթեոսը և Գևորգը, Կ. Պոլսի պատրիարքներ էին Ներսեսը և Խրիմյանը, որոնց մասին խոսեցինք մեր նախորդ հոդվածում, Կ. Պոլսի պատրիարքներ են եղել և այժմ են։ Պետք է ընտրելին յուր շատ արժանավորությունների հետ և նշանավոր դիրք ունեցող անձ լինի, որպեսզի հեղինակություն ունենա երկու կողմերի հայերի վրա ևս, թե այստեղ և թե Տաճկաստանում։ Եթե ստիպված լինենինք հասարակ թեմական առաջնորդներից կաթողիկոսներ ընտրել, մենք Մուրադյանի նման, և դուցե նրանից ավելի բարձր արժանավորության տեր եպիսկոպոսներ Ռուսահպատակում ևս շատ ունենք, որոնց մասին ավելորդ չեմ համարում մի քանի խոսք ասել։

Այդ կարգի եպիսկոպոսներից են՝ Թիֆլիսի թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսը, Աստրախանի թեմի առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսը, Երևանի թեմի առաջնորդ Աւետիսյան Գևորգ եպիսկոպոսը, Սինոդի անդամ և դանձապահ Ներսես եպիսկոպոսը, որոնք բոլորը վայելում են մեր խորին համակրությանք իբրև թեմական լավ առաջնորդներ և իբրև

արքուն հովիվներ։ Իսկ այդ նորահաս եպիսկոպոսները գուցե ժամանակով կարող են կաթողիկոսական արժանավոր կանդիդատներ լինել, բայց դեռ այնքան ժողովրդականություն չեն ստացել, որ կաթողիկոս դառնան։ Նրանց ճանաչում են Ռուսաստանի հայերը, բայց ազգը դեռ նրանց չէ ճանաչում։

Մենք ունենք մի ծերունի եպիսկոպոս ևս. դա Ներսեսյան ժամանակների ամենահին եպիսկոպոսներից մեկն է։ Նրա ընկերները՝ Վեհափառյան Գեորգ եպիսկոպոսը և Ջալալյան Սարգիս եպիսկոպոսը, վաղուց արդեն թողել են այդ աշխարհը, բայց նա դեռ մնում է, և գուցե շուտով կառնի իր ութսունամյա տարեդարձը։ Եթե տարիների հնությունը պայման լիներ արժանավորության, մենք շուտով կաթողիկոսական մատանին այդ ծերունու մատը կդնեինք։

Ծերունին մի հանելուկային անձնավորություն է. նրա կենսագրության մեջ խոսքեր շատ կան, բայց գործ չկա. դա այն մարդիկների տեսակներից է, որոնց մասին հրաշքներ են պատմում մեր միամիտներին։

Մենք այդ ծերունու մասին չէինք խոսի, եթե նրան ևս կաթողիկոսական ընտրելիների թվում չդնեին։ Մենք դեռ հավատացած ենք, որ նա իր վառամյալ հասակում, երբ աշխույժ, եռանդ և ամեն մտավոր ու հոգեկան զորություններ բուլանում են մարդու մեջ, այդ հասակում ավելի բարվոք կհամարի աղոթքով պարապել, քան աշխարհային փառքի մասին մտածել, որին, սարակուս չկա, նա հակիլ թե կհասնի։

Առհասարակ կաթողիկոսական ընտրելիների մասին դատելով, մենք այն կարծիքն ունենք, որ ավելի նպատակահարմար կլիներ, եթե կաթողիկոսը տաճկաստանցի լիներ։ Ինչո՞ւ։ Այդ մասին կան պանդեան պատճառներ, որոնցից երկուսը միայն հարկավոր ենք համարում առաջ բերել։ Նախ, մեր եպիսկոպոսների յուրաքանչյուրը ունի իր առանձին կուսակցությունը, իր մարդիկը, որոնք նրա կաթողիկոս դառնալուց հետո, շատ հասկանալի է, որ կաշխատեն ձեռք ձգել այն պաշտոնները, որ կան մեր հոգևոր կառավարության և ուսումնարանական վարչության շրջանակի մեջ։ Օրինակ՝ մի եպիսկոպոս թեմական առաջնորդ է, մյուսը Սինոդի անդամ է, մի վարդապետ այս և այն վանքի վանահայր է, մի պարոն կամ թեմական տեսուչ է և կամ դպրոցի տեսուչ է, և դրանք նորընտիր կաթողիկոսի կուսակցությանը չեն պատկանում, նա, անտարակույս, պիտի աշխատի փոխել դրանց և ամեն տեղ իր մարդիկը մտցնել։ Այս տեղից առաջ կգան, ինչպես միշտ եղել է, շատ տարաձայնություններ, երկպառակություններ և դժգոհություններ թե ժողովրդի մեջ և թե հոգևոր կառավարության մեջ մի կողմից, իսկ մյուս կողմից, շատ արժանավոր

անձինք կղրկվեն իրանց տեղերից, և նրանց կփոխարինեն վաճառը։ Կուսակցական հոգին, կաթողիկոսական աթոռից ծագելով, կտիրապետի և միաբանության մեջ, և Սինոդի մեջ, և ամբողջ հոգևոր կառավարության մեջ։ Հետևանքը պարզ է։ Իսկ երբ կաթողիկոսը օտար երկրացի է, նա ոչ ոքի հետ հին կապեր չի ունենա, կուսակցական ձև չի մտցնի իր կառավարության մեջ, և միայն արժանավորները գործերի գլուխը կանցնեն։

Դառնանք երկրորդ և ամենակարևոր պատճառին, թե ինչու մենք ավելի նպատակահարմար ենք համարում, որ կաթողիկոսը տաճկաստանցի լիներ։

Ով որ փոքր ի շատե տեղյակ է էջմիածնի և Կ. Պոլսի պատրիարքարանի հարաբերություններին, անշուշտ, նկատած կլինի, որ 50-րդ թվականներից սկսած տաճկաստանցիք սկսեցին խիստ սառն աչքով նայել դեպի էջմիածինը, համարելով նրան ոչ թե ընդհանուր Հայոց Մայր աթոռ, այլ մի օտար հիմնարկություն։ Այդ սխալ կարծիքը աճեց ոչ միայն հասարակ ժողովրդի մեջ, այլ մինչև անգամ այդ ժողովրդի բավական ընտիր և խելահաս գլուխների մեջ։ Պ. Մարկոս Աղաբեկյանը իր գրվածքներով ավելի սաստկացրեց այդ կարծիքը։ Մենք ավելորդ ենք համարում մատնացույց անել այլ անձինքների և գրվածքների վրա, բավական է հիշել պ. Իփեքճյանի վերջին հոդվածի այն կետերը, ուր նա առաջարկում է Ազգային ժողովին՝ երբեք թույլ չտալ, որ էջմիածինը ևվիրակներ ուղարկե Տաճկաստան։ Ի՞նչ է կամենում ասել դրանով պ. Իփեքճյանը։ Նա շատ լավ գիտե, որ էջմիածինը կարոտություն չունի Տաճկաստան նվիրակներ ուղարկել այնտեղից փողեր հավաքելու համար։ Նա այն ևս գիտե, որ Տաճկաստանի նվիրակները գալիս են այստեղից փող են տանում։ Վերջապես, ինչ որ ասելու լինենք, այդ սառնությունը կմնա դարձյալ, միայն էջմիածնի բարձր հեղինակությունը պահանջում է, որ այդ սառնությունը վերացվի, որ տաճկաստանցիք հավատ և վստահություն ունենան իրանց Մայր աթոռի վրա։ Ինչո՞վ կարող ենք օգնել այդ բանին։ Նրանով միայն, որ էջմիածնի կաթողիկոսը պետք է ընտրվի Տաճկաստանից։ Տաճկաստանցիք իրավունք ունեն կասկածելու, երբ էջմիածնում Սինոդի ամբողջ կազմակերպությունը բաղկացած է ռուսաստանցիներից, բոլոր միաբանությունը ռուսաստանցի է, և եթե կաթողիկոսն էլ ռուսաստանցի լինի, այլևս ի՞նչ վստահություն կունենան այդ սուրբ հիմնարկության վրա, որ իրանց համար օտար են համարում։ Պետք է նրանցից մեկը լինի այդ հիմնարկության մեջ։ Անհերքելի է, որ մեր վերջին կաթողիկոսներից (Մատթեոսից և Գեորգից) հետո կազմվեցավ մի բարո-

յական և հոգևոր կապ տաճկահայերի և ռուսահայերի մեջ, և էջմիածնի ազդեցությունը ավելի տարածվեցավ Տաճկաստանի վրա։ Ի՞նչ էր պատճառը։ Պատճառներ շատ կային, բայց գլխավոր պատճառներից մեկն էլ այն էր, որ հիշյալ կաթողիկոսները տաճկաստանցի էին։ Երբեմն օրերում ավելի հաճախ սկսեցին տաճկաստանցի վարդապետները էջմիածնում եպիսկոպոս ձեռնադրվել և տարածվել Տաճկաստանի վիճակներում։ Դա մեծ բան է։

Այժմ շատ պարզ է, թե ինչո՞ւ ենք մենք ցանկանում, որ Ընդհանուր Հայոց Մայր աթոռի հայրապետը ընտրված լիներ Տաճկաստանից, և այդ ընտրյալները լիներին Ներսեսի և Խրիմյանի նման անձինք, որոնք բարձր հեղինակություն ունեն ամբողջ ազգի մեջ։

Հետևյալ հոդվածում մենք կխոսենք այն հարցի վրա, թե ի՞նչ միջոցներ պետք է գործ դնել, որ ընտրելի կաթողիկոսը ազգի ընտրածը լիներ, և ոչ թե մասնավոր ինտրիգանտների։

5

Մենք անցյալ հոդվածում խոստացանք խոսել այն միջոցների վրա, թե ի՞նչ պետք է անել, որ նորընտիր կաթողիկոսը ժողովրդի ընտրածը լինի և ոչ թե մասնավոր անհատների։

Փաստերի կարոտ չէ ապացուցանելու համար, որ մեր եկեղեցին ժողովրդական է, և մեր եկեղեցու հոգևոր գլուխը՝ ընդհանուր հայոց հայրապետը, ընտրվում է ժողովրդից։ Այդ դրությունը ավելի ճշտությամբ պահպանվում էր հայոց անկախության ժամանակ, պահպանվեցավ և այնուհետև, երբ Հայաստանը բաժանվեցավ զանազան պետությունների մեջ։ Մահմեդական սուլթաններն անգամ հարգում էին հայ եկեղեցու այդ հնավանդ սովորությունը և իրանց ֆերմաններով հաստատում էին ժողովրդի ընտրյալին։ Իսկ էջմիածինը ռուսաց իշխանության ներքո ընկնելուց հետո, 1836 թվին, առանձին պալաժենիայով, որ ռուսաց օրենքների մի մասն է կազմում, ավելի որոշ կանոններով ամրապնդեցավ կաթողիկոսի ընտրության եղանակը, պահպանելով այդ կանոնների մեջ այն հիմունքները, որ Հայաստանյայց եկեղեցու վաղեմի սովորությունն էր։

Բայց ինչպե՞ս էր կատարվում կաթողիկոսի ընտրությունը, այդ մասին հարկավոր ենք համարում մի քանի խոսք ասել, իհարկե, ոչ թե սկսելով չորրորդ և հինգերորդ դարերից, այլ մեր մոտավոր, ըստ մոտավոր ժամանակներից։

Մեղանում մի տեսակ մարդիկ, ոչ այնքան իրանց բարոյական արժանավորություններով, որքան իրանց դործնական վարպետություններով, միշտ ձեռք ձգած են եղել հասարակական գործերի հոգաբարձությունը, և իբրև արտոնական ժառանգություն, վարվել են այդ գործերի հետ որպես կամեցել են։ Հարկավոր էր եկեղեցու երեսփոխան ընտրել, այդ մարդիկն էին ներս սրծնում. հարկավոր էր դպրոցի հոգաբարձու ընտրել, այդ մարդիկն էին դառնում, մի հարուստ մարդ էր մնռնում, այս կամ այն բարեգործական նպատակով մի նշանավոր կտակ էր անում, այդ մարդիկն էին կատակատար դառնում. կաթողիկոս էր վախճանվում, հարկավոր էր նորը ընտրել, այդ մարդիկն էին հասարակության կողմից պատգամավոր դառնում, մի խոսքով, մեր ուսումնարանական և եկեղեցական բոլոր գործերի մեջ դրանք միջամտություն էին անում, միամիտների աչքիրում փոշի էին փչում և իրանց շահերին բավականություն էին տալիս։ Այդ կոնսիստորների և առաջնորդարանների մեջ մուկ որսացող կատուները, այդ կրոնի և եկեղեցու սրբության անունով իրանց գրպանները պարարտացնող բարեպաշտները, իրանց անձը հասարակության առջև խոհեմ, խելացի և անշահասեր ցույց տալու համար ևս բավական խորամանկություն ունեին։ Նրանք ամեն բան գիտեին, նրանց մոտ ամեն դաղանիքներ կային, բայց ամեն մարդու ասել չէին կարող, և եթե նրանց այս կամ այն գործողությունը հասարակության աչքում վատ էր երևում, հասարակությունն իրավունք չուներ տրտնջալու կամ բացատրություն պահանջելու, որովհետև նույն վատության մեջ մի լավություն կար, որ նրանք պետք է իրրև դաղանիք պահեին։ Այսպես էին խաբում միամիտներին։ Իսկ եթե նրանց այդ ծածկապահության վարագույրը բարձրացնեիր, այնտեղ կտեսնեիր դատարկություն և իրանց շահը միայն, ավելի ոչինչ։

Ժամանակակից մամուլը, որ պետք է առաջնորդող լիներ հասարակության մտածություններին, որ պետք է հասկացներ նրան յուր իրավունքները ու պարտավորությունները, մամուլը ավելի ևս թմրեցնում էր հասարակությունը և պահում էր նրան միշտ անգիտակցության մեջ։ Նույն նենգավոր մամուլի խաղաղամիտ ներկայացուցիչը հենց այսօր, երբ հասարակական կարծիքը բավական զարթած է, երբ ունենք զարգացած մարդկանց մի խոշոր թիվ, որոնք չարը բարիից որոշել գիտեն, այդ մամուլի ներկայացուցիչը դեռևս այնքան հանդգնություն ունի, որ աշխատում է հասարակության գլխի տակին կակուղ բարձ դնել, աշխատում է նրան քնացնել, ասելով. «Թողեք «ընտրողները» իրանց կաթողիկոսին ընտրեն, մի խանդարեք նրանց, նրանք լավ են հասկանում

իրանց քանը, մի պղտորեք հասարակության մտքերը» և այլն։ Ովքե՞ր են այդ «ընտրողները», որոնք ամեն բան հասկանում են, իսկ մենք չենք հասկանում. նույն մարդիկը, որոնց մասին վերևում խոսեցինք, և մի խմբապիր, որ քաղցած աղվեսի նման ամեն վեղարավորի դրպանից հում է քաշում, որ տեսնեն, թե որն է պարարտ, որպեսզի նրա կանդիդատուրան պաշտպանե[3]։

Այդ մարդիկը դեռևս իրանց ողորմելի անցյալի մեջն են ապրում։ Նրանք չգիտեն, որ ժամանակները, պայմանները և հանգամանքները փոխվել են, բայց իրանք միևնույնն են մնացել, ինչ որ էին քսան-երեսուն տարի առաջ։ Այդ մարդիկը սիրում են բուերի նման խավարի մեջ գործել, որովհետև լույսը երևան կհանե նրանց խարդախությունները, և ամենից մատնացույց են անում դեպի մթությունը, ասելով՝ տեսեք, ամեն ճշմարտություններ այնտեղ են թաքնված։ Նրանք և մեզ ասում են, թե իրավունք չունենք քննադատել այս և այն կաթողիկոսական ընտրելիի ոչ արժանավորությունները և ոչ թերությունները, որովհետև ամեն ճշմարտություններ նրանց մասին պահպանված են էջմիածնի և Կ. Պոլսի Ազգային ժողովի արխիվներում (այսինքն՝ վարագույրի հետևում)։ Իսկ այդ հրապարակախոսները կամ այն «ընտրողները» գիտե՞ն արդյոք, թե ինչ կա արխիվներում. եթե մի բան կա, ինչո՞ւ չեն ցույց տալիս։

Հրապարակախոսի համար արխիվներ պետք չեն. հրապարակախոսի աթոռը քննադատական կյանքն է յուր բազմատեսակ երևույթներով, որ ամենի համար բաց է, ով որ դիտելու և քննելու ընդունակություն ունի։ Մեզ ի՞նչ պետք է դիտենալ, թե Ներսեսի կամ Խրիմյանի մասին արխիվներում ինչ թղթեր կան. մենք քննում ենք նրանց իրանց գործերով, որ կատարվել են բացարձակ հրապարակի վրա, աշխարհի աչքի առջև։ Կամ ի՞նչ իրավունք ունենք ենթադրելու մի որևիցե խեկարի մասին, որ իր ամբողջ կյանքում ոչինչ լավ բան չէ արել, թե նրա լավ գործերի արձանագրությունները պահված են այս և այն արխիվում։

Իսկ ինչո՞ւ են այդ խորհրդավոր արխիվը մեջ ձգում։ Նրա համար միայն, որ իրանց կանդիդատի անգործունեությունը ծածկեն, հավատացնելով ժողովրդին, որ թեև նա Հայանի ոչինչ բան չի արել, բայց ծածուկ շատ բան է արել, որ գաղտնի պահված են արխիվներում, և որի ընդհակառակն, մի արժանավոր և պիտանի գործչին մրոտել աշխատեն, մոլորեցնելով հասարակությանը, որ նա, թեև ձեր աչքի առջև շատ գործեր է կատարել, բայց այդ բոլորը խաբեություն է, որովհետև արխիվներում նրա մասին շատ վատ թղթեր կան։

Այդ հասարակական գործերի խաբեբա արխիվարիուսները, որոնց արխիվում իսկապես ոչինչ չկա, բացի այս կամ այն անձի մասին ղըղվելի բամբասանքներից, միշտ ցույց են տվել հասարակությանը, թե բոլոր հասարակական գործերի թելերի ծայրերը իրանց ձեռքումն է, թե նրանք զանազան բարձր շրջանների հետ կապեր ունեն, թե իրանք իրավունք ունեն վճռելու ամեն գործերը, բայց երբ պատահում ես նրանց խաբեության վարագույրը և ցույց ես տալիս նրանց դատարկությունը, այդ ժամանակ կատաղում են և սկսում են տգեղ հայհոյանքներ տալ։ Նույն հայհոյանքները ընդունեցինք և մենք։ Բայց մենք վճռել ենք հայհոյանքներով չպատասխանել նրանց, որովհետև այդ մարդիկներին հայհոյելն անգամ մեծ պատիվ է։

Մենք չենք փախչում աղնիվ բանակռվից և զանազան վիճելի հարցեր մշակելու համար օգտավետ ենք համարում այդ։ Իսկ երբ բուն հարցը մի կողմ դնելով, սկսում են իրանց անմաքուր ձեռքերով մեր անձնավորությունը շոշափել, այդ ժամանակ մեզ ոչինչ չէ մնում անել, բայց միայն արհամարհանքով երես դարձնել նրանցից և շարունակել մեր գործը։

Մենք մի շարք հոդվածներով, մինչև ընտրության օրը, անդադար պիտի մշակենք կաթողիկոսական հարցը, և հավատացած ենք, որ այժմ հասարակական կարծիքն այն աստիճան զարգացած է, որ կարող է որոշել օգտավետը վնասակարից, որ կարող է ճանաչել, թե ովքեր են ժողովրդի ճշմարիտ բարեկամները. նրա՞նք, որ Հայաստանյայց եկեղեցու պաշտպանների դիմակով աշխատում են վեր բարձրացնել Լուսավորչի Սուրբ Աթոռի վրա մի անարժան եկեղեցական, թե՞ նրանք, որ ցանկանում են, որ այդ աթոռը իր արժանավոր ժառանգորդն ունենար։

Դառնանք դեպի մեր խոսքը։

Մենք խոստացել էինք այս անգամ խոսել ընտրության եղանակի մասին։ Ինչպես երևաց «Մշակի» № 193-ում տպված Բագուի Թղթակցությունից, մեր գավառում դեռ գիտեն, թե ո՞ր քաղաքից և ինչպե՞ս պետք է ընտրել պատգամավորներին էջմիածին ուղարկելու համար։ Այդ անգիտությունը մենք վերաբերում ենք մեր մամուլի զանցառությանը՝ մի կողմից, և մեր հոգևոր վարչության անտարբերությանը՝ մյուս կողմից, որ մինչև այսօր չեն ծանոթացրել ժողովրդին կարգ ու կանոնի հետ։ Նախ հարկավոր ենք համարում դնել ցուցակը, թե քանի՞ ձայներով է ընտրվում Ընդհանուր հայոց կաթողիկոսը, և այդ ձայները որպես են բաժանված։

Ռուսաստանում

Էջմիածնի Սինոդն ունի	8 ձայն
Էջմիածնի միաբանությունն ունի . .	7 »—»
6 թեմերի առաջնորդներն ունեն . .	6 »—»
6 թեմերից 6 աշխարհական պատգամավորներ ունեն	6 »—»
Ընդամենը . .	27 ձայն

Նկատելու արժան է, որ Ռուսաստանի հայերի 27 ձայնից 6-ը միայն պատկանում է ժողովրդի ներկայացուցիչներին, իսկ 21 ձայներ պատկանում են հոգևորականության ներկայացուցիչներին, ուրեմն, իսկապես այստեղ ընտրողը ոչ թե ժողովուրդն է, այլ հոգևորականությունն է։

Տաճկաստան

45 առաջնորդական թեմերից մի-մի թեմական առաջնորդներ և մի-մի աշխարհական պատգամավորներ ունեն . .	90 ձայն

Պարսկաստան

Ատրպատականի վիճակից թեմական առաջնորդն ունի .	1 ձայն
Նույն վիճակից մի աշխարհական պատգամավոր ունի .	1 ձայն

Հնդկաստանի և Սպահանի վիճակներից

Թեմական առաջնորդն ունի	1 ձայն
Մի աշխարհական պատգամավոր ունի . . .	1 ձայն
Բոլոր ձայների գումարն է . .	121

Կ. Պոլսի Ազգային հիսփոխանական ժողովը իր պատրիարքի հետ, իբրև ներկայացուցիչ ամբողջ Տաճկաստանի հայոց ազգաբնակության, իրան սեփականացնելով 90 ձայնի իրավունքը, ուղարկում է էջմիածին երկու պատգամավոր, մեկը՝ հոգևորական, մյուսը՝ աշխարհական, որոնք նույնպես 90 ձայնի իրավունք են վայելում 1866 թվականում, այսինքն՝ հանգուցյալ Գևորգ կաթողիկոսի ընտրության ժամանակ, Կ. Պոլսի Ազգային ժողովը ուղարկել էր էջմիածին իբրև պատգամավոր այժմյան Ներսես պատրիարքին և Հակոբ էֆենդի Նորատունկյանին։

Պետք է ի նկատի առնել, որ Տաճկաստանի պատգամավորների կամ-

քին չէ թողնված, որ նրանք ում համար և կամենային, նրա օգտին քվե տային, այլ Ազգային ժողովը, նախքան նրանց ճանապարհ դնելը, իր որոշումն անում է և իր ընտրելիների անունները տալիս է իր պատգամավորներին, պարտավորացնելով նրանց, որ իր ընտրյալների օգտին միայն քվե տային։ Այդ դեպքում, մենք հավատացած ենք, որ Տաճկաստանի պատգամավորները ոչ կաշառվել կարող են և ոչ մեղանչել իրանց հանձնարարության դեմ, միայն ցանկալի էր, որ ավելի ապահովության համար, փոխանակ երկու պատգամավորի, ուղարկեին գոնե երեքը։

Կաթողիկոսը, որպես վերևում ցույց ավինք, ընտրվում է 121 ձայնով, այդ ձայներից 27-ը պատկանում է Ռուսաստանի հայերին, 4-ը՝ Պարսկաստանի և Հնդկաստանի հայերին, իսկ 90-ը՝ Տաճկաստանի հայերին։ Շատ պարզ է, որ Տաճկաստանցիք ընտրող կլինեն, որովհետև ձայների մեծամասնությունը նրանց կողմն է։ Մենք դրա դեմ ասելիք չունենք, մենք խոնարհվում ենք իրավունքի առջև, ընդունելով, որ Տաճկաստանի հայերը ազգի մեծամասնությունն են կազմում։ Միայն ցանկալի է, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը լավ կազմակերպված լինեի, իր պակաս անդամների թիվը լրացներ և այն մեծ սխալը չգործեր, ինչ որ արավ 1858 թվականին, հանգուցյալ Մատթեոս կաթողիկոսի ընտրության ժամանակ, որ փոխանակ իր կողմից էջմիածին պատգամավորներ ուղարկելու, իր իրավունքը օտարներին հանձնեց...

Եվ այսպես, Տաճկաստանի պատգամավորները, և որքան մեզ հայտնի է, Պարսկաստանի պատգամավորները նախապատրաստված են ներկայանում կաթողիկոսի ընտրության ժողովին, այսինքն՝ այն հասարակության կողմից, որ նրանք ուղարկված են լինում, պատվեր են ստանում, թե իրանց քվեն ում օգտին պետք է տան։ Իսկ Ռուսաստանի պատգամավորները ներկայանում են անպատրաստ։ Ռուսաստանի 6 թեմերը ընտրում են 6 աշխարհական պատգամավոր և առաջնորդների հետ ուղարկում են էջմիածին։ Բայց թեմական ժողովուրդը իր պատգամավորներից խոստում չէ առնում, թե նրանք ո՞ւմ օգտին պետք է քվե տան, այլ թողնում են նրանց կամքին։ Այդ, մեր կարծիքով, ուղիղ չէ։ Եթե մի հասարակություն ընտրության համար ուղարկում է իր պատգամավորին, այդ հասարակությունը պետք է նախապես գիտենա, թե իր ներկայացուցիչը ում կանդիդատուրան կպաշտպանի և ում օգտին քվե կտա, այլապես այդ պատգամավորը չի լինի այն հասարակության բաղձանքների թարգմանը։ Եթե ի նկատի առնենք, թե Մատթեոս և Գևորգ կաթողիկոսների ընտրության ժամանակ Ռուսաստանի թեմերից ինչ պատ-

դամասիորներ են ուղարկվել Ս. Էջմիածին, մեր պահանջը շատ հասկանալի կլինի։ Այդ առիթով մենք կշարունակենք խոսել հետևյալ հոդվածում։*

6

Մենք նախորդ հոդվածում կանդ առինք այն տեղի վրա, թե մեր վեց թեմերից ընտրված պատգամավորները պետք է թեմական հասարակության բաղձանքների թարգմանը լինեն և իրանց քվեն տան հօգուտ այն ընտրելիի, որին հայրապետական աթոռին արժան է համարում թեմական ժողովուրդը։

Այստեղ ծագում է մի հարց. արդյոք թեմական ժողովուրդը ի՞նչ եղանակով կարող է իր ցանկությունը հայտնել իր պատգամավորին, թե ինքը ումն է արժան համարում։ Դա շատ հեշտ է, միայն պետք է հասարակությանը ծանոթացնել այն ձևերի հետ, թե ի՞նչպես են ընտրվում թեմական պատգամավորները։ Սինոդի և մարմնավոր իշխանության ուված հրահանգների համեմատ, թեմական առաջնորդների միջոցով, ամեն մի թեմի յուրաքանչյուր վիճակից (ուր կան առաջնորդական հաջորդներ կամ հոգևոր դործակալներ) ընտրվում են երկու երեսփոխաններ, որոնք հավաքվում են թեմական քաղաքում և բոլորը միասին ընտրում են մի պատգամավոր էջմիածին ուղարկելու համար։ Ահա այդ երեսփոխանները, որպես թեմական հասարակության ներկայացուցիչներ, կարող են թեմական առաջնորդի հետ ժողով կազմել, իրանց ընտրելիներին նախապես որոշել, հետո իրանց պատգամավորից խոստում առնել, որ նա իր քվեն իրանց որոշած կանդիդատի օգտին տա, և ոչ մի ուրիշի համար։ Իհարկե, պատգամավորը ևս իր բարոյական արժանավորություններով պետք է լինի այնպիսի անձ, որ չդավաճանի իր խոստմանը։ Եվ այսպիսով, պատգամավորը կլինի ճշմարտապես թեմական ժողովրդի ներկայացուցիչը, և նրա քվեն կհամարվի հասարակության ձայնի արտահայտություն։ Բայց մինչև այսօր, մեր վերջին կաթողիկոսների ընտրության ժամանակ, այսպես չէ եղել. ամեն մի թեմ ուղարկել է էջմիածին իր պատգամավորին, առանց կանխապես նրանից խոստում առնելու, թե նա ում կանդիդատուրան պետք է պաշտպանի։

Պատգամավորների վրա խոսելով, չենք կարող առանց նկատողու-

---

* *Տե՛ս «Արարատ» ամսագրի սեպտեմբեր և նոյեմբեր ամիսների համարները* (Ծան. ևեղ.)։

թյան թողնել մի այլ, բավական աչքի զարկող նշույլ։ Երբ կարդում ենք մեր վերջին կաթողիկոսների ընտրության համար էջմիածին ուղարկված պատգամավորների ցուցակը, տեսնում ենք, որ համարյա բոլորն էլ զանազան մանր և խոշոր աստիճանավորներ են եղել։ Մարդիկ, որ իրանց կյանքում մի հայոց լրագիր չեն կարդացել, մարդիկ, որ ծանոթ չեն Հայաստանյայց եկեղեցու ոչ անցյալին և ոչ ներկային, որ չգիտեն էջմիածնի ու նրա Մայրապետի հայրապետի բարձր նշանակությունը, թե ինչ հարաբերություններ ունի նա Ռուսաստանի հայ հասարակության հետ մասնավորապես, և այլ պետությունների մեջ ապրող հայ հասարակության հետ ընդհանրապես, վերջապես մարդիկ, որ երբեք չեն հետաքրքրվել մեր հոգևորականների կյանքով ու գործունեությամբ և չեն ուսումնասիրել մեր հոգևոր կառավարությունների պայմանները, թե այստեղ և թե օտար երկրներում, այս տեսակ մարդիկ, շատ հասկանալի է, որ իրանց կարծիքների և ընտրությունների մեջ կարող են սխալներ գործել։

Մենք կարծում ենք, որ մինչև այժմ նույնիսկ մեր ժողովուրդը կաթողիկոսական ընտրության վրա նայել է ոչ թե որպես մի եկեղեցական սուրբ խորհրդի վրա, այլ որպես մի փառավոր հանդեսի վրա, և այդ պատճառով, աշխատել է նույն հանդեսին վայելուչ մարդիկ ուղարկել, որոնք աչքի ընկնելին ավելի իրանց արտաքին փայլով, քան թե ընտրության սուրբ խորհրդի մեծության ու վսեմության հասկացողությամբ։

Այս ասելով, մենք ամենևին նպատակ չունենք հայտնել այն միտքը, թե ժողովրդի պատգամավորները պետք է աստիճանավորներից ընտրված չլինեն։ Պատգամավորները կարող են ընտրված լինել ժողովրդի ամեն դասակարգից, լիներ նա աստիճանավոր, արհեստավոր, վաճառական, խմբագիր, վարժապետ, մի խոսքով, ամեն պարապմունքի մարդիկ, միայն թե նրանք հայտնի լինեին իրանց հասարակության մեջ որպես խղճմտավոր և գործին ծանոթ անձինք և անկախ լինեին Հայաստանյայց եկեղեցու և նրա հոգևոր կառավարության ներկա պահանջներին։

Հանգուցյալ Ներսես, Մատթեոս և Գևորգ կաթողիկոսների ընտրության մասին Սինոդի կազմած արձանագրություններում տեսնում ենք, որ մեծ անպատեհություններ են ծագում, երբ այս և այն տեղից ընտրված պատգամավորները չեն կարողանում նշանակած ժամանակին էջմիածնում ներկա գտնվել։ Բացակայության պատճառները կարող են զանազան լինել. կամ հիվանդություն, կամ մի անձնական կարևոր գործ արգիլք է գնում։ Ոմանք տեղի հեռավորության կամ ծախքերի ծանրության համար չեն կարողանում ներկայանալ։ Այդպիսիներին դրում են

բացակաների ցուցակում։ Այդ անպատեհության առաջն առնելու համար մինչև այժմ ոչինչ կարգադրություն չէ եղել։ Եվ որպեսզի բացակաների տեղը պարապ չմնա, այդ մասին մենք կառաջարկենք մի քանի հնարներ։ Նախ, ավելի կանոնավոր կլիներ, որ յուրաքանչյուր թեմ իր պատգամավորին ընտրելու ժամանակ, ընտրեր և մի կանդիդատ նրա համար, եթե առաջինը չէր կարող գալ, նրա պաշտոնը կկատարեր երկրորդը, այսինքն՝ կանդիդատը։

Այդպիսի դեպքերում, երբ մի պատգամավոր անձամբ չէր կարողանում ներկա գտնվել կաթողիկոսի ընտրության ժողովին, նա իր ձայնը տալիս էր կամ էջմիածնի միաբանությանը, կամ Սինոդին և կամ մի մասնավոր մարդու։ Դոնե մինչև այժմ այսպես է եղել սովորությունը։ Եվ այդ անում էին ոչ թե առանձին պատգամավորներ, այլ ամբողջ ժողովուրդների ներկայացուցիչներ, որպես է Կ. Պոլսի պատրիարքարանը։ 1858 թվականին, այսինքն՝ Մատթեոս կաթողիկոսի ընտրության ժամանակ, Կ. Պոլսի պատրիարքարանը յուր Ազգային Դերագույն ժողովի հետ, իբրև ներկայացուցիչ ամբողջ տաճկահայերի կողմից, իրանց ձայնը (90 քվեի իրավունքով) առանձին հավատարմաթղթով տվեցին իշխան Վասիլ Օսիպովիչ գեներալ Բեբութովին։ Եվ որովհետև իշխանը վախճանվեցավ նախքան կաթողիկոսի ընտրությունը, այդ պատճառով Կ. Պոլսի պատրիարքը և Ազգային Դերագույն ժողովը նույն իրավունքը հանձնեցին իշխան Իսակ Սիմոնիչ Թումանովին և ազնվական Աբել Յագորիչ Դուրգենբեգովին, որոնք ներկայացան կաթողիկոսի ընտրության ժողովում որպես Տաճկաստանի հայերի կողմից լիազոր պատգամավորներ։

Կաթողիկոսի ընտրության համար ժողովրդից ընտրված պատգամավորները, երբ անձամբ չեն կարողանում ներկայանալ, ամենևին իրավունք չունեն իրանց ձայնը կամ քվեն մի ուրիշին հանձնել որպես փոխանորդի, որովհետև դա հակառակում է Պալաժենիայի 14-րդ հոդվածին, ուր պարզ ասված է. «Այսոքիք ընտրեալ պատգամաւորք (եկեղեցական և աշխարհական) եթե չը կարասցեն ներկայանալ անձամբ ի վանս էջմիածնի ցնշանակեալ ժամանակն վասն ընտրութեան պատրիարգի, ունին իրաւունս յայտնել զդիտողութիւն իւրեանց՝ հասուցանելով զայն ի Սիւնհոդոսն էջմիածնի»։

Այս հոդվածի իմաստից հասկացվում է, որ յուրաքանչյուր պատգամավոր, երբ չէ կարողանում անձամբ ներկա գտնվել կաթողիկոսի ընտրության ժողովին, իրավունք ունի գրությամբ հայտնելու իր դատողությունները, թե նա որ եկեղեցականին ավելի հարմար է համարում կա-

Քողիկոս ընտրելու, և նրա կարծիքը ընդունվում է որպես նրա քվեն։ Այդ միտքը ավելի բացատրված է Պալաժենիայի 17-րդ հոդվածի մեջ հետ։

Մենք այդ մասին երկար չէինք խոսի, եթե մեր հասարակությանը կամ օտար երկրներում ապրող հայերին ճշմարտությամբ հայտնի լիներ կաթողիկոսի ընտրության համար սահմանված կարգ ու կանոնները։ Մատթեոս կաթողիկոսի ընտրության ժամանակ Սպահանի և Հընդկաստանի հայոց պատգամավորները տեղի հեռավորության պատճառով չկարողանալով անձամբ ներկա գտնվել, զրկվեցան ընտրությանը մասնակցելուց։ Բայց եթե նրանք տեղյակ լինեին կանոնների հետ, կարող էին իրանց կարծիքը և ցանկությունը իրենով հայտնել։ Հետագիրը և փոստային կանոնավոր հարաբերությունները այժմ ավելի հեշտացրել են այդ գործը։

Այսքանը մեր աշխարհական պատգամավորների մասին, մի քանի խոսք ևս մեր հոգևոր պատգամավորների մասին։

Ռուսաստանի թեմից ընտրվում են 6 աշխարհական և 6 հոգևորական պատգամավորներ։ Աշխարհական պատգամավորների վրա խոսելով, մեր հոգվածի սկզբում այն միտքը հայտնեցինք, որ նրանք պետք է լինեն իրանց ընտրող հասարակության կամքի և ցանկության թարգմանը, և նրանց քվեն պետք է լինի արտահայտություն նույն հասարակության ձայնի։ Այստեղ ծագում է մի հարց. արդյոք հոգևորական պատգամավորներն էլ պիտի ենթարկվեն հասարակության կամքին, թե՞ նրանք ազատ են իրանց ընտրության մեջ և ում օգտին կամենան, կարող են քվե տալ։

Այդ հարցը վճռելու համար հարկավոր ենք համարում դնել այստեղ Պալաժենիայի 13-րդ հոդվածը, ուր ասված է. «Իւրաքանչիւր վիճակ Լուսաւորչական Հայոց առ ընտրութիւն պատրիարքի նշանակէ վերիուս պատգամաւորս՝ զմի եկեղեցական և զմի աշխարհական։ Պատգամաւորն եկեղեցական պարտի լինել կամ նոյն ինքն Ընդհակալ առաջնորդն, կամ այլ ոք եկեղեցական նշանակեալ ի նմանէ։ Վասն աշխարհական պատգամաւորն ընտրի յամենայն իշխանաւորաց, ի հարիւրապետաց (յիւզբաշաց, ի մելիքաց) և յայլոց պատուաւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ՝ որոց են իրաւունք ընտրութեան ըստ վաղեմի ծիսի այսր եկեղեցւոյ»։

Հոդվածի իմաստից պարզ է, որ, ինչպես աշխարհական պատգամավորին, այնպես էլ հոգևորական պատգամավորին նշանակողը կամ ընտրողը վիճակի հասարակությունն է։ Եթե աշխարհական պատգամավորը պետք է լինի հասարակության ձայնի արտահայտիչ, շատ հասկա-

նալի է, որ նույնը պարտավոր է լինել և հոգևորական պատգամավորը։

Մեզ դեռ հայտնի չէ, և Սինոդի «Արարատ» ամսագրի մեջ տպած պաշտոնական արձանագրություններից մեջ այդ մասին ոչինչ չենք գտնում, թե մինչև այսօր մեր թեմերի հոգևորական պատգամավորները ի՞նչպես են ներկայացել կաթողիկոսի ընտրության ժողովին. արդյոք իրանց անձնակա՞ն ձայնով, թե՞ նրանք միացել են աշխարհական պատգամավորների հետ, և երկուսը միասին արտահայտել են այն հասարակության ձայնը, որի կողմից ընտրված և ուղարկված են եղել։

Այդ հարցը պարզելու համար հարկ է դիմել մեր եկեղեցական կառավարության ու մեր եկեղեցու ոգուն և նրա ավանդական սովորություններին։

Հայկական եկեղեցին, այդ բառի բուն ազգաբանական նշանակությամբ, միացնում է յուր մեջ Քրիստոսի հավատացյալներին, իբրև մի անբաժան մարմին, որի մեջ թե հոգևորականը և թե աշխարհականը, որպես նույն մարմնի անդամներ, սերտ կերպով կապված են միմյանց հետ։ Առանձնություններ չկան այդ մարմնի մեջ, բոլորը անդամներ են։ Եկեղեցականը, ինչ աստիճանի և պատկաներ նա, կաթողիկոս, եպիսկոպոս կամ քահանա, ժողովրդի ընտրյալն է՝ յուր հոգևոր պետքերը մատակարարելու համար։ Այդ է պատճառը, որ ասում ենք՝ մեր եկեղեցին ժողովրդական է։

Տաճկաստանի հայ հասարակության մեջ ավելի ճիշտ կերպով պահպանվել է եկեղեցու և եկեղեցական կառավարության ժողովրդականությունը։ Այստեղ պատրիարքը, թեմական առաջնորդը, ծխական քահանան, բոլորը ընտրվում են ժողովրդից։ Կաթողիկոսի ընտրության վերաբերությամբ տաճկաստանցիք նույնպես պահպանել են իրանց ժողովրդական իրավունքները։ Այդ պարզ տեսնվում է այն պաշտոնական գրություններից, որով նրանք մասնակցել են մեր կաթողիկոսների ընտրության մեջ։ Նրանցից երևում է, որ թե պատրիարքները և թե թեմական առաջնորդները առանց ժողովրդի համաձայնության առանձին կամք կամ ձայն չեն ունեցել։

Հիշյալ սովորությունը ավելի կանոնավոր կերպարանք ստացավ Կ. Պոլսի Ազգային Սահմանադրության հաստատելուց հետո, երբ Ազգային երեսփոխանական ժողովը իր պատրիարքի նախագահությամբ դարձավ ամբողջ Տաճկաստանի հայ ժողովրդի ներկայացուցիչ։ Իսկ Սահմանադրության հաստատելուց առաջ, Տաճկաստանի պատրիարքարանները (Կ. Պոլսի և Երուսաղեմի) և բոլոր թեմական առաջնորդները մասնակցում էին էջմիածնի կաթողիկոսի ընտրության առանձին-առան-

ձին։ Եվ որովհետև պանդխտության հանգամանքների պատճառով նրանք չէին կարողանում անձամբ ներկայանալ կամ հատուկ պատգամավորներ ուղարկել, այդ պատճառով իրանց քաղաքացիությունը հայտնում էին գրավոր կերպով։ Նրանց թղթերը ծառայում են մեզ համար որպես հաստատուն ապացույցներ, որ աշխարհականների ձայները երբեք բաժանված չեն եղել միմյանցից, այլ նրանց մեջ եղել է միշտ կատարյալ համաձայնություն։ Որովհետև երբեք չէ պատահել, որ Թեմի ժողովուրդը մեկ ընտրելի համար ձայն տար, իսկ Թեմական առաջնորդը կամ պատրիարքը մի ուրիշ ընտրելիի համար ձայն տար։ Քանի ժողովրդի ներկայացուցիչները և Թեմ հոգևորականության ներկայացուցիչները միշտ միասին են գրել իրանց թղթերը, միասին են ստորագրել և փոխադարձ համաձայնությամբ ուղարկել են Ս. Էջմիածին։

Մեր եկեղեցու այդ հնավանդ սովորությունները ի նկատի առնելով, մենք կարծում ենք, որ մեր՝ Ռուսաստանի, Թեմական առաջնորդներն ևս պետք է համաձայնություն կայացնեն իրանց Թեմական հասարակության հետ և իրանց ձայները չառանձնացնեն աշխարհական պատգամավորների ձայներից։ Այդ է պահանջում մեր ժողովրդական եկեղեցու ոգին, այդ են պահանջում և եկեղեցու շահերը, իսկ այլապես, մենք կատեղծնենք մի կղերական վնասակար ուղղություն, որ իր առանձին շահերը, նպատակներն ու ձգտումները կունենար...

ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԸ

Ազգերի կյանքում լինում են այնպիսի դարաշրջաններ, երբ համարյա ամբողջ ժողովրդի ուշադրությունը, ձգտումները լարված են լինում դեպի մի նպատակ։ Հարուստն իր արծաթը, աղքատն իր աշխատանքը, գիտնականն իր հմտությունները գործ են դնում նույն նպատակի իրագործվելուն։ Մեկի արածը մյուսի համար օրինակ է դառնում, և գործը ընդհանրանում է։

Տեսնում ենք, այսինչ ազգի մեջ, այսինչ դարում ծաղկում է արհեստը, մյուսի մեջ՝ գիտությունը, երրորդի մեջ՝ վաճառականությունը, մի այլ ազգ այդ ժամանակ զբաղված է պատերազմական պատրաստություններով, ամրացնում է իր երկրի սահմանները, բերդեր է կառուցանում, զինվորների թիվն է ավելացնում, իսկ նրա հարևանը նոր գաղտնիքներ է

հիմնում, աշակերտների թիվն է ավելացնում, բայց մի ուրիշը անշարժության մեջ է գտնվում և ոչինչ բանի վրա չէ մտածում։ Այդ բոլորը ամեն մի ժողովրդի մեջ, ժամանակի պայմանների և պահանջների համեմատ, ունեն իրանց բնական դրդիչ պատճառները։ Նույն պատճառներից զարթնում է մի ժողովրդի մեջ և բարեգործական ոգին։

Բարեգործությունը և բարիի գաղափարը զանազան ժամանակներում զանազան տեսակ է հասկացել մարդկությունը։ Ինչ որ մի քանի դար առաջ բարի էր, օգտավետ էր, այսօր կարող է չար և վնասակար համարվել, որի ընդհակառակն, ինչ որ մի քանի դար առաջ վնասակար էր համարվում, այսօր բարիքը նրա մեջն են գտնում։ Բարեգործությունը իր տեսակներով նույնպես ժամանակի ծնունդ է և կրում է յուր վրա իր դարի դրոշմը։ Այդ է պատճառը, որ միևնույն ժամանակում արտահայտված, նույնատեսակ բարեգործական հիմնարկություններն ընդհանրանում են ժողովրդի մեջ, և բոլորը ձգտում են նրանց նպաստելու։

Մեր ազգի կյանքի մեջ ևս եղել են այնպիսի դարաշրջաններ, երբ ժողովրդի բարեգործության առարկան եղել են միևնույն հիմնարկությունները։ Տեսնում ենք, միևնույն դարում, համարյա միևնույն ժամանակ Հայաստանում կառուցվել են բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ։ Միայն մի քաղաք ունեինք, որը ուներ հազար և մի եկեղեցի, վերջին մեկը, ըստ ավանդության, շինել էր տվել մի հովիվ։ Մեր թագավորները, իշխանները և մեծատունները ահագին ծախքեր էին անում վանքեր կառուցանելու, և ապագայում նրանց նորոգությունների և միաբանության պահպանության համար ոմանք սեփականացնում էին դյուղեր, ագարակներ և զանազան անշարժ կալվածքներ։ Այդ բոլորը համարվում էր բարեգործություն։ Տեսնում ենք, միևնույն դարում, համարյա միևնույն ժամանակ կառուցվել են զանազան մեծ ու փոքր գետերի վրա բազմաթիվ կամուրջներ։ Շինողները նույնպես ապահովացրել են կամուրջների գոյությունը, թողնելով նրանց ապագա նորոգությունների համար անշարժ կալվածքների եկամուտներ։ Այդ նույնպես բարեգործություն էր համարվում։ Սույնպիսի բարեգործական նպատակներով մեր իշխաններից շատերը հարթել են ճանապարհներ և լեռնային բարձրավանդակների վրա, բնակությունից մեկուսացած տեղերում, կաբավաններին ցրտից և բուքից պատսպարելու համար, շինել են իջևաններ, պանդոկներ։ Բարեգործություն էր համարվում և անապատ տեղերում աղբյուրներ անցկացնելը, որ ճանապարհորդները ջուր գտնեն խմելու։ Բարեգործություն էր համարվում և ջրանցքներ բաց անելը, որ դյուրացնեն երկրագործությունը։ Ամեն մի ջրանցքի, ամեն մի աղբյուրի հետ պահպանվել է բաց անողի անու-

նը, և յուրաքանչյուր վայելող սրբազան պարտք է համարում «ողորմի» ասել հիմնողի հոգուն։

Երբ մի հասարակություն այնքան զարգացած չէ, որ համայնական ուժերով հոգա ընդհանուրի պետքերը, այդ դեպքում մասնավոր բարեգործների արածը ունի իր օգտավետ նշանակությունը։

Բայց որովհետև բարեգործությունը ևս ունի իր հրապուրիչ կողմերը, այդ պատճառով բարեգործներն ունենում են շատ հետևողներ։ Օրինակ, մեկը մի վանք է շինում, ժողովուրդը շնորհակալ է լինում նրանից, օրհնում է և հարգում է նրան։ Այդ փառքը գրգռում է և մյուսների բարի նախանձը, և սկսում են բոլորը վանքեր շինել։

Այդ բոլորը շատ լավ է, բայց ունի և իր վնասակար կողմերը։ Երբ մի բարեգործ, մյուսին հետևելով, անում է այն, ինչ որ մյուսն է արել, այսպիսով, միևնույն հիմնարկությունները այնքան բազմանում են, որ հասարակության պահանջի հետ համեմատելով, ոչ միայն ավելորդ են դառնում, այլ նրանց պահպանությունը մի ծանր բեռն է լինում հասարակության վրա։ Մի ժամանակ վանքերն ու եկեղեցիներն այնքան բազմացան, որ եթե հասարակությունը իր բոլոր միջոցները գործ դներ, հազիվ թե կարող էր պահպանել նրանց գոյությունը։ Եվ բարեգործության այդ արդյունքները ավելացրին Անդրկովկասի ավերակների թիվը։

Մյուս վնասակար կողմն այն է, որ երբ մի ժողովրդի բարեգործական նկրտումները ուղղված են լինում դեպի միևնույն հիմնարկությունները, այդ դեպքում հասարակության պետքերի մյուս ֆակտորները, որոնք նույնքան և դուցե ավելի անհրաժեշտ են, մնում են անգործադրելի և բոլորովին զանցառության են արվում։ Ի՞նչ կլիներ, եթե բոլորը եկեղեցիներ կառուցաներին և դպրոցի վրա ոչ ոք ուշադրություն չդարձներ։

Մեր ժամանակներում բարեգործները և բարեգործական հիմնարկությունները սկսեցին ուշադրություն դարձնել դպրոցների և ուսման վրա։ Հարուստները մեռնելու ժամանակ իրանց հարստությունից մի մասն են հանում դպրոցների համար։ Ոմանք առանձին դպրոցներ են կառուցանում։ Ոմանք իրանց ծախքով որդեգիրներ են պահում թե այստեղ և թե արտասահմանում։ Ամեն ոք ցանկանում է, որ ամենահեռին գյուղացին անգամ գրել-կարդալ գիտենա. ամեն ոք ցանկանում է իր լուման ձգել ժողովրդի կրթության գանձանակի մեջ։ Այդ բոլորը շատ գեղեցիկ է, շատ օգտավետ է, բայց մի՞թե ժողովրդի առաջադիմությունը միայն դպրոցներից պետք է սպասել։ Ինչո՞վ է զանազանվում այժմյան բարեգործությունը այն ժամանակների բարեգործությունից, երբ բոլորը վանքեր կամ կամուրջներ էին հիմնում։

Ինչպես վանքերի թիվը բազմացնելով մենք ստացանք բազմաթիվ աբեղաներ, որ չգիտեինք, թե ինչպես կերակրենք նրանց, այնպես էլ միմիայն դպրոցների թիվը բազմացնելով, մենք շուտով կստանանք մի ուսումնական պրոլետարիատ, որ չենք իմանա որտեղից հաց ճարենք նրանց համար։

Երբ ժողովրդի կրթության ֆակտորներից մեկը միայն զարգանում է, կրթության չանքերը դառնում են միակողմանի։ Ժողովրդի կրթության բոլոր ֆակտորները պետք է ներդաշնակաբար և հավասար կերպով զարգանան և պետք է ներդաշնակաբար գործեն, որպես գործիչները մի որևիցե մեխանիզմի մեջ և որպես կենդանի մարմնի մեջ նրա բոլոր գործարանները։ Գործարաններից մեկի չափազանց զարգանալը կթուլացնի մյուսների գործողությունը, և առողջությունն ու կյանքը կդադարի։

Մանավորենք մեր խոսքը։

Այժմ թե մեր բարեգործական հիմնարկությունները և թե մեր մասնավոր բարեգործները, բոլոր իրանց խելքն ու միտքը տվել են դպրոցական գործին, բոլորը նպաստում են դպրոցների բարեկարգությանը և ուսումնական անձանց թիվը ավելացնելուն։ Մեր կրթության մյուս անհրաժեշտությունները կամ բոլորովին անուշադիր են թողնված, կամ խիստ աննախանձելի դրության մեջ են։

Մեր հոդվածի նպատակից դուրս է մի առ մի մատնացույց անել այն բոլոր պայմանների վրա, որոնք անհրաժեշտ են մի ժողովրդի կրթության համար, բայց որովհետև մեր խոսքը բարեգործական օժանդակությունների մասին է, ուստի ավելորդ չենք համարում մասնավորապես ցույց տալ, թե մեր բարեգործները ուրիշ ի՞նչ բանի վրա կարող էին ծախսել իրանց արծաթը։

Ահա հասարակության մեջ հայտնվել է մի երիտասարդ տաղանդ, նա նկարիչ է, նրա նկարները մենք ամեն օր տեսնում ենք փողոցի վրա դրած և հիանում ենք։ Երիտասարդը ցանկանում է գնալ արտասահման և ավելի կատարելագործել իր արհեստը։ Բայց նա աղքատ է, միջոցներ չունի։ Մեր բարեգործներից ոչ ոք նրան նպաստելու համար ուշադրություն չէ դարձնում, չնայելով, որ մի ժողովրդի մեջ կարելի է հարյուրավոր ֆիզիկոսներ, քիմիկոսներ և այլ մասնագետներ պատրաստել, բայց դարերի ընթացքում հազիվ թե ծնվում են մի կամ երկու լավ նկարիչներ։ Մեր խոսքը պ. Բաշինջաղյանի մասին է[2]։ Այդ երիտասարդը գուցե մի օր Այվազովսկու արժանավոր հաջորդը կլինի, բայց ոչ ոք միջոց չէ տալիս նրան իր ձիրքերը զարգացնելու և իր արհեստը կատարելագործելու։

Մի ուրիշի մեջ երևում են մուղիկայի ձիրքեր, նա կամ ածում է և կամ նվագագիր (կոմպոզիտոր) է։ Մանուկ տաղանդը դեռ կարող է կատարելագործության։ Բայց ո՞վ է մտածում նրա վրա։ Այսպիսինները իրանց թարմ ուժերը նվիրում են մասնավոր դասատվության, որ քաղցած չմնանան։ Բայց նրան շարունակին սովորել, գուցե ժամանակով նշանավոր երաժիշտներ կդառնային։

Մի երրորդը գրող է. նա իր աշխատություններով արդեն ցույց է տվել, թե որքան կարող է պիտանի լինել իր հասարակության։ Բայց ո՞վ է քաջալերում նրան։ Նրա գրվածքները այնքան արդյունք չեն տալիս, որ կերակրեին հեղինակին, և նա ստիպված է իր բանկապին ժամանակը վատնել կոպմնակի պարապմունքների վրա, որ ապրել կարողանա։ Բայց այսպիսինները շատ-շատ չեն ծնվում...

Դեռ «Մշակի» երեկվա համարի մեջ տպվեցավ հանգուցյալ Բիևեքյանի մահագույժը։ Նրա ցավալի մահը մի պատճառ նախատինք է հայ հասարակության, որ մենք հարգել գիտենք մեր գործիչների գերեզմանը միայն, իսկ նրանց կյանքը, որ այնքան թանկագին է, պահպանելու համար անփույթ ենք։ Մի՞թե նույն թշվառության մեջ չմնան Դուրյանը, Պեշիկթաշլյանը և ուրիշ շատ այսպիսի զոհեր...

ՆԱՆՈԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հատորն ընդգրկում է Րաֆֆու 1878—1883 թվականներին գրած հոդվածները: Առաջին անգամ երկերի ժողովածուի մեջ տեղադրվում են ութ հոդվածներ, որոնք դուրս են մնացել նախորդ հրատարակություններից: Բնագրերի համար սկզբնաղբյուր են հանդիսացել հեղինակի կենդանության օրոք մամուլում կամ առանձին ժողովածուներում եղած հրատարակումները: Կատարվել են ուղղագրական, կետադրական մասնակի շտկումներ, ճշգրտվել են որոշ բացթողումներ, վրիպակներ, աղավաղումներ:

Հատորից դուրս է թողնվել երկերի ժողովածուների նախորդ երկու հրատարակություններում տեղ գտած «Հայոց մանկան պարտեզը Թիֆլիսում» հոդվածը, որը մինչ այդ թյուրիմացաբար վերագրվել է Րաֆֆուն[1]: Հատորում ընդգրկված հոդվածների մեծ մասը լույս է տեսել Րաֆֆու երկերի ժողովածուներում և «Գրականության մասին» ժողովածուում (1958): Բնագրերի պատրաստման և ձանոթագրելու ընթացքում հաշվի է առնվել այդ հրատարակությունների փորձը:

«Գավառական բանակռիվները մեր գրականության մեջ», «Վ. Ագուլիսի վերջին անցքերը», «Մարդը զոհության կռիվի մեջ» և «Կիլիկիայի կաթողիկոսական խնդիրը» հոդվածների բնագիրը պատրաստել է Գ. Վարդանյանը:

---

[1] Նախորդ հրատարակության կազմողը իր եզրահանգման համար հիմք է ընդունել Րաֆֆուն գրած՝ «Մշակի» խմբագիր Հ. Տեր-Գրիգորյանի նամակի հետևյալ տողերը. «Քո հոդվածները շատ են կարդացվում, մանավանդ Մ. 22 մեջ տպված գծի տակ հոդվածը, որտեղից միտք բաղդը (գրաքննիչը) բավական հանեց, բայց բողվածի համար էլ շնորհակալ պետք է լինել»: Այստեղ խոսքը «Մշակի» 1878 թ. № 22-ում տպագրված «Դարտակ հույսերով ենք խաբվում» հոդվածի մասին է: Մ-ն «Մշակի» սկզբնատառն է, որը կազմողը կարդացել է իբրև առորագրություն:

1878 11-3

ԴԱՐՏԱԿ ՀՈՒՅՍԵՐՈՎ ԵՆՔ ԽԱԲՎՈՒՄ

Հոդվածում արծարծվում են հայոց ազատագրության ուղիների վերաբերյալ հարցեր՝ պատապարհելով ռուս-թուրքական պատերազմի շրջանում հակադիր դաշտերաբանական հոսանքների դիրքորոշումները։ Աննա Բաֆֆին «Տաճկահայք» ժողովածուի «Ազդում» (Վիեննա, 1913) գրել է, որ ներկա հոդվածը մի ծավալուն աշխատության առաջաբան է։ Աշխատությունը, որ ուներ «Հայաստանը երկու կրակի մեջ» վերնագիրը, պետք է տեղադրվեր «Տաճկահայք» ժողովածուում, սակայն այնտեղ չկա։ Այդ մասին «Տաճկահայք» ժողովածուում կարդում ենք. «Ներկա հատորի մեջ ամփոփված կտորներից «Հայաստանը 2 կրակի մեջ» և նրա հետաջարան կազմող «Մենք հույսերով ենք մեզ խաբում» հատվածները առաջին անգամ են տպագրվում։ Ճիշտ է 187 (պետք է լինի 1878— ծնթ.) թվին «Մշակում» լույս տեսավ «Դարտակ յույսերով ենք խաբվում», բայց այդ մի համառոտ ուրվագիծ էր, որը մինչև անգամ ամբողջովին չտպագրվեց» («Տաճկահայք» 1913, էջ VII)։

1. Անա զարկեց ժամը, և Տաճկաստանի ճարտասանված էրիստոնյաների վիճակը սիրտ ուրախ — նկատի ունի 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը։ (էջ 9)։

2. Մենք ուրախանում ենք, որ սուլթանը հայոց պատրիարքի հետ ոտրմածությամբ է խոսացել, նրան բարձր պատվանշանի է արժանացրել...— խոսքը վերաբերում է Գուլխի պատրիարք, ազգային գործիչ Ներսես Վարժապետյանին (1837—1884)։ (էջ 11)։

3. Մի լրագիր, մի ազգային բերթ միայն իր բողոքը պատռում է...— նկատի ունի Դրիգոր Արծրունու «Մշակ» թերթը։ (էջ 11)։

4. Մինչև այսօր փորի ի շատն աշխի ընկնող բան, որ երևնցավ, դա էր Սեր Աբգարի տատրակը...— Սեր Աբգարը հնդկահայ գործիչ էր, Լոնդոնի Անգլո-հայկական կոմիտեի նախագահը, որը 1876 թ. ֆրանսերեն լեզվով հրատարակել էր հայկական գաղթի նվիրված մի գրքույկ (Սեր Արգար, Հայերի դրությունը, Լոնդոն, 1878, տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 115, 698, 701)։ (էջ 14)։

«Դարտակ հույսերով ենք խաբվում» հոդվածը գրվել է 1878 թ. սկզբին Ագուլիսում, տպագրվել է «Մշակում» նույն թվականի փետրվարին, Մելիքզադի աստղագրությամբ։

Արտատպվում է «Մշակից», 1878 թ., № 22։

ԻՆՔՆԱԽԱՔԵՒԹՅՈՒՆ

1. «Ծաղիր զինգ», կրկնում եմ Սոկրատեսի հետ. «Ես միայն մի բան գիտեմ...»— հույն փիլիսոփա Սոկրատեսի (470—399 թթ. մ. թ. ա.) ասույթներից)։ (էջ 15)։

Հոդվածը գրվել է 1878 թ. սկզբին, Ագուլիսում։ Տպագրվել է «Մշակի» № 29-ում, Մելիքզադի աստղագրությամբ, որից արտատպվում է։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ

Հոդվածը գրվել է Ագուլիսում, ուր Բաֆֆին պաշտոնավարում էր 1877 թվականից՝ որպես ռուսի երկսեռ դպրոցի հայոց լեզվի և պատմության ուսուցիչ։ Բաֆֆին իր խոր մտահոգությունն է արտահայտում ընդհանրապես գավառական դպրոցների սխուր վիճակի

մասին և ժողովրդի դատին ներկայացնում իր տեսակետները անհրաժեշտ բարեփոխումների վերաբերյալ։

Տպագրվել է «Մշակում», Մելիքզադի ստորագրությամբ։ Արտատպվում է «Մշակից» 1878 թ., № 30, 31։

ԴԵՌԵՎՍ ՈՒՇ ՉԻ

Հոդվածում արծարծվում են Սան-Ստեֆանոյի դաշնագրից հետո հայ ժողովրդի ազատագրական պայքարի խնդիրները։

1. Ներկա պատերազմիս սկզբից...— Նկատի ունի ռուս-թուրքական 1877—78 թթ. պատերազմը։ (էջ 36)։

2. ... շատ-շատ տանկական Հայաստանի ռուսաց զորքերով գրավված մասը կմիանա Կովկասի հետ...— նույնիսկ այս չափով չարդարացան հայերի հույսերը. պատերազմից հետո ռուսների կողմից գրավված մասերը չմիացան Կովկասին, որովհետև ռուսական զորքը էրզրումից հետ քաշվեց։ (էջ 37)։

3. ... Կ. Պոլսում դեռ պատերազմից առաջ հրատարակված «Շահենն ի Սիբիր» կոչված գիրքը...— Նկատի ունի Սեդրակ Տեր-Սարգսենցի (Տկնանց) «Շահենն ի Սիպիր, կամ գաղթական հայը» վեպը, որը հրատարակվել էր Պոլսում, 1877 թ.։ (էջ 43)։

4. ... հետո կգան ինքար կույսերը, դուռը կբախեն ու կասեն. «Բաց մեզ, տեր», իսկ նրանց կպատասխանեն. «Չեմ ճանաչում ձեզ...»— Նկատի ունի 10 կույսերի առակը, հինգը՝ հիմար և հինգը՝ իմաստուն... հիմար կույսերը դուրս են մնում հարսանիքից։ Աւետարան ըստ Մատթէոսի, գլ. Իե։ (էջ 46)։

Հոդվածը գրվել է 1878 թ. փետրվար-մարտ ամիսներին, Ագուլիսում, տպագրվել է «Մշակում», Մելիքզադի ստորագրությամբ։ Երկրորդ անգամ հրատարակվել է «Տաճկահայքում» (Թիֆլիս, 1895)։ Արտատպվում է «Մշակից», 1878 թ., № 41, 42։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Նամակն ուղղված է «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունուն։ Հրատարակվել է 1878 թ. «Մշակի» № 102-ում, Մելիքզադի ստորագրությամբ, որից և արտատպվում է։

ԻՆՉ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ ԵՆ ՏԱՃԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Առաջին անգամ տպագրվել է 1878 թ. «Մշակում»՝ Մելիքզադի ստորագրությամբ։ Այնուհետև զետեղվել է «Տաճկահայք» ժողովածուներում (Թիֆլիս, 1895, Վիեննա, 1913)։

1. ... Կ. Պոլսի պատրիարքարանի հրատարակած տեղեկագիրը»— Նկատի ունի «Տեղեկագիրք գավառական հարստահարության», Կ. Պոլիս, 1876։ (էջ 47)։

2. ... Երեւաղեմի ս. Հակոբա վանքը մի երկպառակության խնձոր է Կ. Պոլսի հայոց և հունաց պատրիարքարանների միջ— այս մասին Րաֆֆին մանրամասն գրել է «Երուսաղեմի պատմական նշանակությունը հայերի համար» հոդվածում (տես ներկա հատորը)։ (էջ 55)։

Արտատպվում է «Մշակից», 1878 թ., № 162, 163։

ՄԱՐԴԸ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՈՒԻՎԻ ՄԵՋ

Հոդվածը ռուս նշանավոր բնագետ Իլյա Մեչնիկովի (1845—1916) «Պայքար գոյության համար» հոդվածի համառոտ թարգմանությունն է։ Թարգմանության նպատակը բացատրված է «Մշակիս» խմբագրությանն ուղղված մի նամակում, որը տպագրվել է Բերլին 1878 թ. № 189-ում։ Մատուռ բերում ենք այդ նամակն ամբողջությամբ։

«Նամակ խմբագրին

Վ. Ագուլիս, 25 նոյեմբերի

Ուղարկում եմ ձեզ մի հոդված «Մարդը գոյության կռիվի մեջ» վերնագրով, որ-նով, հույս ունեմ, մասամբ կպարզվի մեզ ամենից դրազեցնող հարցը, թե ինչ վիճակ է ապառում տաճկական Հայաստանի հայերին Բուրբիայի այժմյան բաղաքական փոփոխություններից հետո, և թե մրցության մեջ նրանք ինչ դեր կարող են խաղալ անգլիացիների հետ զարկվելով, և որ ամենապլխավորն է, ինչ զենքեր, ինչ պատրաստություն պիտի ունենա Բուրբիայի հայը, որ չընկճվի գոյության կռիվի մեջ։

Ինձ շատ ցավալի էր հետազոտել մեր ազգի պատմական կյանքը և դրանց համառոտ կերպով ցույց տալ, թե ինչ դեր է խաղացել նա մինչև այժմ գոյության կռիվի մեջ, բայց ցավում եմ, որ ինձ պակասում են այն պատմական գրքերը, որ հարկավոր են մի այնպիսի աշխատության համար։ Ուրեմն այդ կմնա մի հարմար ժամանակի։

Մելիքզադե»։

Նամակի հրապարակումից մի բանի համար առաջ, «Մշակիս» № 185-ում տպագրվել էր խմբագրության հետևյալ հետաքրքրը. «Վերին Ագուլիս. Մելիքզադե, Ձեր հոդվածը կսկսենք տպել հետևյալ համարից»։ Իրոք, հաջորդ համարից սկսվել է հոդվածի տպագրությունը։

Ինչպես երևում է Բաֆֆու նամակից, հոդվածի ընտրությունը պատահական չէ։ Այն անուղղակիորեն կապված է Արևմտյան Հայաստանի հետագա ճակատագրի հետ, մի խնդիր, որ մշտապես զբաղեցրել է զրոդին։ Գոյության պայքարի և անձնապաշտպանության գաղափարները, որպես ապրողապահպանության միջոց, հիմնավոր արտահայտություն են գտել ոչ միայն նրա հրապարակախոսության, այլև՝ դեղարվեստական գործերի մեջ (հմմտ., օրինակ, ներկա հոդվածի Ա գլուխը և Դուդուկչյանի ճառը «Խնձորը» վեպում, Բաֆֆի, եԺ, հ. 4, Երևան, 1984, էջ 258—259)։

Հոդվածում օգտագործված են մեջբերումներ անցյալի նշանավոր մտածողների՝ բաղաքականների, բնագետների, հասարակագետների, փիլիսոփաների, մարդաբանների, ճանապարհորդների, աշխարհագրագետների, պատմաբանների, տնտեսագետների, իրավագետների, ազգագրագետների բազմաթիվ աշխատություններից՝ փիլիսոփա և հասարակագետ Հերբերտ Սպենսերից, պատմաբաններ Բոքլից, Միշլեից, Հելվալդից (Հոդվածում՝ Գելվալդ), բնագետներ Ագասսիզից (Ագասսի), Բյուխներից, տնտեսագետներ Մալթուսից, վագներից, Ռոշերից, Լանգեից, Շմոլլերից և ուրիշներից։ Անունները (մի երկու բացառությամբ) տպագրվում են Բաֆֆու տառադարձումով։

«Մարդը գոյության կռիվի մեջ» հոդվածը «Մշակում» լույս է տեսել Մելիքզադե ստորագրությամբ։ Հետագայում որևէ ուրիշ հրատարակություն չի ունեցել։

Արտատպվում է «Մշակից», 1878, № 186—191։

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ

Հոդվածը նախապես գրվել է իբրև «կայծեր» վեպի առաջաբան։ Հեղինակի կենդանության օրոք այն չի տպագրվել։ Առաջին անգամ հրապարակել է Աննա Բաֆֆին 1892 թ. «Արաքս» հանդեսում, կից հղելով հետևյալ ծանոթագրությունը. «Այս գրականական բեկորը, որը մեծ սիրով զիջեց մեզ տպագրելու համար. Բաֆֆու մեծարգո այրին, երևի հանդուցյալից նշանակված է եղել իբրև առաջաբան մի ընդարձակ վեպի, որ լույս չէ տեսել. գուցե այդ վեպը լինի հռչակավոր «կայծերը»։

1. Հայդուկներ (հունգարերեն՝ հետևակային) են կոչվել XV—XIX դարերում թուրքերի դեմ մարտնչող կամավորական ջոկատները. հարավային սլավոնական ազգերի, ինչպես և հայերի միջավայրում հայդուկներ են անվանվել թուրքական վայրագություններից լեռներում ապաստանած վրիժառուները։ (էջ 96)։

2. Կլիֆտները հույն-ալբանական ցեղախմբեր են, որոնք մարտնչում էին թուրք տիրապետողների դեմ։ 1821—28 թթ. հունական ժողովրդական ապստամբության տարիներին կլիֆտները ունեին իրենց առանձին զորքը (էջ 96)։

3. Սուլիոտ— ինչպես և կլիֆտները, հռչակվել են թուրքական բռնակալության դեմ հունական ազատագրական պայքարի օրերին։ Իրենց անունը սուլիոտները ստացել են Սուլի լեռան անվանումից, ուր նրանք բնակություն էին հաստատել՝ խուսափելով թուրքերի հալածանքներից։ Սուլիոտների մասին հիշատակել են բազմաթիվ հայ ազգային գործիչներ ու գրողներ։ Տե՛ս Մ. Հակոբյան, «Մեսեներա» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ։ Երևան, 1977, էջ 167—225։ (էջ 97)։

4. ...ռուսաց և պարսից..., ռուսաց և տաճկաց պատերազմների ժամանակ...— նկատի ունի 1826—27 թվականների ռուս-պարսկական և 1828—29 թթ. ռուս թուրքական պատերազմները։ (էջ 97)։

5. ... և այս վերջին պատերազմում...— նկատի ունի 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը։ (էջ 97)։

Հոդվածը արտատպվում է «Արաքս» հանդեսից, Պետերբուրգ, 1892 թ., գիրք Ա, էջ 91—93։

1879

ՀԱՅ ԿԻՆԸ

Ուսումնասիրությունը հավանորեն գրվել է 1878 թ. վերջերին։ Հայտնի է, որ 1879 թ. հունվարի 30-ին այն ուղարկվել է «Մշակին»։ Փետրվարի 13-ին «Մշակը» Մելիքզադեին հաղորդում է. «Ստացանք հոդվածը և նամակները, մյուս հոդվածի մասին շուտով կտեղեկացնենք»։ «Մշակի» 1879 թ. № 34—43-ում շարունակաբար տպագրվում է «Հայ կինը» ուսումնասիրությունը՝ Մելիքզադե ստորագրությամբ։

1890 թ. «Հայ կինը» և «Հայ երիտասարդությունը» աշխատությունները միասին տպագրվում են առանձին գրքով։ «Մշակի» էջերում «Հայ կինը» աշխատության և գրքի բնագրերի համեմատությունից ակնհայտ են հաջորդականության որոշ խախտումներ։ Երկերի առանձնատիպ ժողովածուի ծանոթագրողը նշում է. «Մշակի» 145-րդ համարում հայտարարությունից իմանում ենք, որ Մոսկվայի համալսարանի իրավաբանական բաժնի

ուսանող Ս. Դադյանը Րաֆֆու մի շարք ուրիշ գործերի հետ ռուսերեն է թարգմանել նաև «Հայ կինը» աշխատությունը»։ Խնդիրը նրանում է, որ, ըստ «Մշակի» հայտարարության, Դադյանը թարգմանելու էր և ոչ թե թարգմանել է։ Նույն «Մշակի» № 152-ում կարդում ենք, որ աշխատությունը «Кавказ» լրագրի համար թարգմանում է նաև Հովհ. Աթանեսյանը։

1. ... իսկ բնատեիֆի մյուս աճդամների հետ... խոսում է պոճառոմիմայով...— *պոճառոմիմա ասելով նկատի ունի շարժումներով, դեմքի արտահայտությամբ հաղորդակցվելը, առանց խոսքերի։ (էջ 112)։*

2. ... հավաքում են հասունացած կոզակները...— *կոզակը բամբակի հասունացած պտուղն է։ (էջ 115)։*

3. ... ցանում է ցորյան, գարի, կտավհատ, ռուճղութ, կանեփ, գետշակ...— *գետշակը բույս է, որի սերմերից ձեթ են քամում, նույն տզկանները։ (էջ 115)։*

4. Մարդիկ բնակվում են Քսենոփոնի նկարագրած գետնափորների մեջ...— *Նկատի ունի հույն պատմագիր Քսենոփոնի (մոտավորապես 430—355 թթ. մ. թ. ա.) «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատությունները, ուր նկարագրվել է Կյուրոս Կրտսերի արշավանքն ու նահանջը Հայաստանի վրայով, և ուր արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում մ. թ. ա. 5—4-րդ դարերի Հայաստանի մասին։ Տես Հայկական սովետական հանրագիտարան, հ. XII, Երևան, 1986, էջ 481։ (էջ 117)։*

5. ... շաբաթ երեկոները գնալ Բեթղեհեմ համբուրելու...— *Նկատի ունի նույնանուն նկեղեցին Բեթլեհեմում։ (էջ 127)։*

6. ... ամառը եռան տանում են Կոջոր...— *ամառանոցային վայր է Վրաստանում։ (էջ 134)։*

7. ... ավելի «бонтон» լինելու համար...— *«ֆրանսերեն bon ton արտահայտությունն է՝ բարեկիրթ, վայելուչ նշանակությամբ։ (էջ 146)։*

8. ... Փարիզի ամենացած «գրիզետկաների» մեջ չէ տեսել մի աղջիկ...— *գրիզետկա՝ բեղմնաբարո կին, ֆրանսիական գեղարվեստական գրականության պերսոնաժ։ (էջ 150)։*

Արտատպվում է Րաֆֆու «Հայ կինը և երիտասարդությունը» գրքից, Թիֆլիս, 1890։

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՎՆԵՐԸ ՄԵՐ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայտնի է, որ Րաֆֆին 1877 թ. հոկտեմբերից մինչև 1879 թ. մայիսը աշխատել է Վերին Ագուլիսում որպես ուսուցիչ։ Ինչպես երևում է «Մշակի» հաղորդումներից (1878, № 193, 204), Րաֆֆին կրթական-դաստիարակչական գործին զուգահեռ ձեռնարկել էր նաև «Գողթնեցոնց լուսավորչական ընկերություն» բարեգործական կազմակերպության ստեղծելուն, որի նպատակը պետք է լիներ ժողովրդի չքավոր դասից ուսուցիչներ պատրաստելն ու ընկերության հաշվին չքավորների համար դրքեր հրատարակելը։ Բայց տեղացի հարուստների չհամաձայնությունը խոչընդոտ է դառնում այդ մտահղացման իրականացմանը։ Դրան հետևում է Րաֆֆու կոնֆլիկտը մասնաժողովի անդամների և տեղացի չորս ուսուցիչների հետ (կոնֆլիկտի էությունը և իրադարձությունների հետագա ընթացքը հանգամանորեն արված են Րաֆֆու հաջորդ՝ «Վ. Ագուլիսի վերջին անցքերը» հոդվածում)։ Այդ իրադարձությունների մասին լուրեր են տպագրել Թիֆլիսի երկու հայալեզու թերթերը՝ «Մշակն» ու «Մեղու Հայաստանին»։ Եթե «Մշակը» պաշտպանում էր ուսուցման մեջ առաջադիմության ձգտող ուսուցիչներին՝ Րաֆֆուն և նրա երեք գործընկերներին, և քննադատում էր Վերին Ագուլիսի հարուստների կամայականությունները ու տեղացի ուսուցիչների մեքենայությունները, ապա «Մեղուն», ընդհակառակը, քննադատում էր առաջիններին որպես

խռովարարների և պաշտպանում էր երկրորդներին, համարելով նրանց հանիրավի տուժածներ։ Նման երկու հրապարակում տեղ են գտել «Մեղուի» 1879 № 41-ում։ Թերթի այդ նյութերն էլ առիթ են դարձել «Գավառական բանակռիվները մեր լրագրության մեջ» հոդվածը գրվելուն։ «Մեղուի» երկու նյութերում կային վիրավորական ակնարկներ Րաֆֆու հասցեին։ Սա է պատճառը, որ Րաֆֆու պատասխան հոդվածը ևս գրված է նույն ոգով։

Հոդվածը տպագրվել է «Մշակում» Մելիքզադե ստորագրությամբ։ Հետագայում ուրիշ հրատարակություն չի ունեցել։

Արտատպվում է «Մշակից», 1879, № 108։

1. Տեսնում ես, մի մարդ երեսին ժեշտ կպցրած...— Նկատի ունի «Մեղուի» խմբագիր Պետրոս Սիմոնյանին (1830—1911), որը նաև ուսուցիչ էր Ներսիսյան դպրոցում։ (Լջ 160)։

Վ. ԱԳՈՒԼԻՍԻ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Նախորդ՝ «Գավառական բանակռիվները մեր լրագրության մեջ» հոդվածում Րաֆֆին խոստացել էր «մի ընդարձակ և մանրամասն հոդվածով» բացատրել Վերին Ագուլիսի դպրոցների հետ կապված իրադարձությունների պատճառը։ Այս հոդվածով վիպասանը կատարում է իր խոստումը՝ հանգամանորեն անդրադառնալով հարցի բուն էությանը։

1879 թ. մայիսին հակամարտությունը Րաֆֆու և նրա հակառակորդների միջև այնքան է սրվում, որ նա ստիպված է լինում բողոքել Վ. Ագուլիսն ու վերադառնալ Թիֆլիս, թեև ագուլիսցիները նրան տեսչի պաշտոն էին առաջարկել («Մշակ», 1879, № 106)։ Րաֆֆին դեռ Ագուլիսում էր, երբ «Մեղուն» սկսեց տպագրել միակողմանի, միտումնավոր նյութեր այնտեղի դպրոցներում տեղի ունեցող իրադարձությունների մասին։ Վիրավորական ակնարկներ պարունակող նյութերի տպագրումը շարունակվում է նաև վիպասանի հրաժարականից հետո («Մեղու Հայաստանի», 1879, № 41, 44, 47, 52)։ Նման հրապարակումներին վերջ դնելու համար Րաֆֆին ստիպված էր արագացնել խոստացած հոդվածի հրապարակումը։

Հոդվածի տպագրությունից հետո երկու շաբաթ անց «Մշակում» տպագրվում է Վ. Ագուլիսից ուղարկված մի նամակ, ուր շնորհակալություն է հայտնվում Րաֆֆուն թե՛ հոդվածի և թե՛ առհասարակ ուսուցչական գործունեության համար, № 121)։

«Վ. Ագուլիսի վերջին անցքերը» հոդվածը տպագրվել է «Մշակում» Մելիքզադե ստորագրությամբ։ Հետագայում ուրիշ հրատարակություն չի ունեցել։

Արտատպվում է «Մշակից», 1879, № 110—112։

1. ... Այդ բոլորի մասին տպագրվեցան բավական մանրամասն թղթակցություններ «Մշակի» մեջ...— Նկատի ունի «Մշակի» 1879, № 80, 82, 90, 106-ում տպագրված հոդվածները։ (Լջ 192)։

ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԻՐ ՀԵՌԱՎՈՐ ՎԻՃԱԿՆԵՐԸ ՕՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Գրության համար առիթ են հանդիսացել մի քանի նամակներ և պաշտոնական թղթեր, որոնք ուղարկել էին Պարսկաստանի և Հնդկաստանի հայերը։ Դրանցում ներկայացվում էին այն անհոդությունն ու արհամարհական վերաբերմունքը, որ ուներ էջմիածնի միաբանությունը այդ երկրների հայերի հոգևոր պահանջների նկատմամբ։

Օգտագործելով ստացված տեղեկությունները՝ Րաֆֆին քննադատել է էջմիածնի անհոգությունն ու մեծամիտ վերաբերմունքը Հարավային Ասիայում ցրված հայերի նկատմամբ և Վեհափառին՝ Գևորգ Դ. կաթողիկոսին կոչ է արել լսել ժողովրդի ձայնն ու վերջ դնել անհոգության ու խռովություններին։ Այս խնդրին Րաֆֆին անդրադարձել է և ուրիշ հոդվածներում (տես, օրինակ, «Հայերը Քաբուլի մեջ» հոդվածը)։

Հոդվածը «Մշակում» տպագրվել է Մելիքզադե ստորագրությամբ։ Հետագայում ուրիշ հրատարակություն չի ունեցել։

Տպագրվում է ըստ «Մշակի» բնագրի, 1879, № 134։

1. ... Թափառում է Երեմն Բաթավիայում...— Բաթավիան Ինդոնեզիայի այժմյան մայրաքաղաք Ջակարտան է։ (էջ 196)։

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատությունը տպագրվել է «Մշակում» 1879 թ. № 192—195, 197—199, 201—208, Մելիքզադե ստորագրությամբ։ Աշխատության տպագրությունը լայն արձագանք է գտնում ընթերցողների շրջանում, զրվատական կարծիքների հետ «Մշակը» ստանում է նաև նամակներ, ուր Րաֆֆին մեղադրվում է երիտասարդությանը՝ մասնավորապես ուսանողությանը, լավ չճանաչելու մեջ (տես «Մշակ», 1879, № 217-ում Ս. Դադյանի նամակը Մոսկվայից)։ Ի պատասխան այդ նամակի, Րաֆֆին «Մշակի» 226-րդ համարում հանդես է գալիս «Ինչով ենք մխիթարվում» հոդվածով, ուր ձգտում է իրատեսորեն գնահատել երևույթները։ Րաֆֆու դեմ մի նոր բողոքի նամակ է հրապարակվում «Մշակում» 1880 թ., Մոսկվայի 20 հայ ուսանողների անունից (տես «Մշակ», 1880 թ., № 64)։ Այս նամակին «Մշակի» հենց նույն համարում պատասխանում է ֆելիետոնով Գրիգոր Արծրունին՝ Ասիայի ստորագրությամբ։

1890 թ. «Հայ երիտասարդությունը» և «Հայ կինը» աշխատությունները հրատարակվում են առանձին գրքով։

1. ... երբ Անուշավանը ճվիրվեցավ Աբամալիի սոսիներին— նկատի ունի հայ հնադույն առասպելական հերոս Անուշավանին։ Վերջինս Արա Գեղեցիկի որդի Արայի զավակն էր, որին Խորենացին կոչում է «շատ գործունյա հանճարախոհ Անուշավան Սասանեվեր», որովհետև նա, պաշտամունքի համաձայն, նվիրված էր Արամանյակի՝ Արմավիրում գտնվող սոսի ծառերին, որոնց տերևների տատասկյունից... մեր հայոց աշխարհում սովորեցին գուշակություններ անել և այն էլ երկար ժամանակ»։ Տես Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց», Երևան, 1968, էջ 105—106։ (էջ 200)։

2. ... Ծերուբյան հասակում դառնում է ստոլնաչալնիկի օգնական...— ռուսերեն столоначальник բառն է, որ նշանակում է սեղանավար, բաժնի պետ։ (էջ 228)։

3. ... ածում է թամբուրայի վրա և երգում է...— Թամբուրան հարվածային գործիք է՝ թմբուկ, դափ։ (էջ 232)։

4. Ուսանողը նույս չէ դնում պրոֆեսորի լիտոգրաֆիական տետրակների վրա...— Նկատի ունի տպագրված, բազմացված դասախոսությունները։ Լիտոգրաֆիան տպագրության տեսակն է՝ վիմատպություն, վիմատպություն։ (էջ 247)։

5. Երևակայեցեք ձեզ մի ուսանող իր կոպորացիայի պաշտոնական վեներկայով...— Նկատի ունի ուսանողի համազգեստը, վենգերկա՝ հունգարական բաճկոն։ (էջ 249)։

6. Մեր նախիճիր Քսենոֆոնի օրերում զարեչուր էին խմում, իսկ գերմանացին խմում է այսօր...— Նկատի ունի հին պատմագրի վկայությունը հայկական գարեջրի մասին։ (էջ 252)։

7. Ով որ փոքր ի շատե ծանոթ է ֆրանսիական պատմությանը, գիտե, թե որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թվականներում և մանավանդ կոմունայի ժամանակ...— *Նկատի ունի 1830 և 1848 թվականների ֆրանսիական հեղափոխությունները և 1871 թ. Փարիզի կոմունան։ (էջ 255)։*

8. ... նրա սոֆիզմներին ու նոռոմաբանությանը չափ չկա...— *սոֆիզմ — սուիեստություն, կեղծ դիատականություն։ (էջ 257)։*

9. ... ես երբեմ մոռանալ չեմ կարող 72 թվականը, երբ սկսվեցավ հրատարակվել «Մշակ» լրագիրը— *«Մշակի» առաջին համարը լույս է տեսել 1872 թ. հունվարի 1-ին։ (էջ 263)։*

10. Սկզբում այս լրագրի շուրջը խմբվեցավ համալսարանական դիպլոմավոր երիտասարդությունը— *Հավանաբար, համալսարանականներ ասելով Րաֆֆին նկատի ուներ Աբգար Հովհաննիսյանին, Դևորգ Եվանգուլյանին և Գրիգոր Իզմիրյանին։ Գր. Արծրունու և վերջիններիս տարաձայնության հիմնական պատճառն այն էր, որ նրանք ցանկանում էին հրատարակել ամսագիր, մինչդեռ Արծրունին իր համախոհների հետ՝ Րաֆֆի, Գ. Սունդուկյան, Պերճ Պռոշյան, Ալեքսանդր Քիշմիշյան, Դևորգ Զմշկյան, կարևոր էին դիտում ունենալ ամենօրյա թերթ, որ ավելի մատչելի կլիներ ժողովրդին, ինչպես նաև ավելի հարմար՝ հրատապ հարցեր արծարծելու համար։ (էջ 263)։*

11. Հին «Մեղու» այն ժամանակ նմանվում էր մի մաշված և ջարդված սայլակի...— *մինչև 1863 թ. «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիրն էր Ստեփան քահանա Մադինյանը, իսկ այնուհետև՝ Պետրոս Սիմոնյանը։ Խմբագրի փոխվելուց հետո էլ թերթը շարունակեց նույն պահպանողական ուղղությունը։ (էջ 263)։*

12. ... մեծ վերածնորոգիչի խրատը...— *Քրիստոսի «Ոչ արկանեն գինի նոր ի տիկս հին» խրատը։ Տես Աւետարան ըստ Մատթէոսի, գլուխ Թ, 17։ (էջ 264)։*

13. ... իսկ «Արարատի», «Հայկական Աշխարհի» և «Բյուրոցի» մասին խոսելն աճգամ ավելորդ է...— *«Արարատ»՝ Էջմիածնի Մայր Աթոռի պաշտոնական օրգանը, հիմնադրվել է 1868 թ. և հրատարակվել է մինչև 1918 թ.։ «Հայկական աշխարհը» սկզբում հրատարակվում էր «Կռունկ հայոց աշխարհի» անունով, խմբագիրն էր Մարկոս Ազարեկյանը։ «Հայկական աշխարհը» ընդհատումներով հրատարակվել է 1864—1879 թթ. Թիֆլիսում. «Բյուրոց» մանկավարժական ամսագիրը հրատարակվել է Թիֆլիսում, 1874—1876 թթ.՝ Վահան վարդապետ Բաստամյանի խմբագրությամբ։ (էջ 264)։*

14. Ում պատահել է կարդալ Ալֆոնս Դոդեի վերջին ռոմանը (Jacques)...— *Նկատի ունի Դոդեի «Ջեկ» վեպը, որ հրատարակվել էր 1876 թ. Փարիզում։ Հայերեն թարգմանվել է 1924 թ.։ (էջ 267)։*

Արտատպվում է «Հայ կինը և հայ երիտասարդությունը» գրքից, Թիֆլիս, 1890։

Ի՞ՆՉ ԿԱՊ ԿԱ ՄԵՐ ԵՎ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Հոդվածում արծարծվում է ազգային միասնության գաղափարը, ընդգծելով դրա անհրաժեշտությունը ազգային ազատագրության հեռանկարի տեսակետից։

Գրվել է 1878 թ. դեկտեմբերին, Ագուլիսում։ Ուղարկելով «Մշակին», Րաֆֆին կցել է նաև մի նամակ, խնդրելով խմբագրին տպագրել այն հոդվածի հետ միասին, քանի որ «նամակը հիշյալ հոդվածի հետ կապ ունի»։ Սակայն, ինչ-ինչ նկատառումներով, Արծրունին չի տպագրում նամակը։ Հոդվածը տպագրվում է «Մշակի» 1879 թ. № 218-ում, Մելիքզադեի ստորագրությամբ, իսկ նամակը տարիներ անց տպագրվում է «Արձագան-

11 - 6

քում» (1895, № 99)։ Երկրորդ անգամ հոդվածը հրատարակվել է «Տաճկահայը» ժողովածուում։

1. Տաճկաստանցի հայը գործ ուներ եվրոպացիների հետ, իսկ մեր վաճառականը՝ Մոսկվայի և Նիժնայի հետ...— Նիժնա՝ նկատի ունի Նիժնի Նովգորոդ քաղաքը (այժմ Գորկի), որ հայտնի էր իր մանուածագործական ֆաբրիկաններով։ (էջ 285)։

2. ...հայոց պատգամավորներից մեկը արդեն գտնվում էր Լոնդոնում, իսկ մյուսը՝ Ս. Պետերբուրգում...— Երբ Կ. Պոլսում դեռ նոր մտածեցին, թե Հայաստանի մասին պետք է ճիշտ և մանրամասն տեղեկություններ ունենալ և դեռ նոր վարդապետներ վազեցրին դեպի Հայաստան...— Բեռլինի կոնգրես մեկնելուց առաջ, հայկական պատվիրակներից Խորեն Նար-Պեյը (Գալֆայան) եղավ Պետերբուրգում, իսկ Խրիմյան Հայրիկն ու Մինաս Չերազը՝ Իտալիայում, Փարիզում և Լոնդոնում։ Այդ այցելությունների նպատակն էր կայուն երաշխիքներ ստանալ Ռուսաստանի և Եվրոպական խոշոր պետությունների կառավարող շրջաններից՝ Բեռլինում հայոց ինքնավարության հարցի լուծման առթիվ։ Նույն այդ ժամանակ էլ էջմիածին ուղևորվեց Մատթեոս Իզմիրլյանը։ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 114—115։ (էջ 287)։

3. ...պապականությունը մոլեռանդ կղերի ձեռքում դառնում է գործիք ուլտրամոնտանիզմի...— ուլտրամոնտանիզմը (լատիներեն ultra montes — լեռներից այն կողմ, այսինքն՝ Հռոմում) 15-րդ դարի կրոնական ուղղություն է, կողմնակից Հռոմի պապի անսահման գերագույն իշխանության, նրա իրավունքի՝ միջամտելու ցանկացած պետության աշխարհիկ գործերին։ 16-րդ դարից այս ուղղության գործուն ջատագովներն էին հիզվիները։ (էջ 291)։

4. ...որպես մի ժամանակ հրեաները նայում էին ամամաացիների վրա...— ամամաացիները էթնիկական խումբ և կրոնական աղանդ են, որ 6-րդ դարում մ. թ. ա. անջատվել են երբայական կրոնից՝ հրեականությունից։ Նրանք հնգամատյանից բացի Հին կտակարանի մյուս մարգարեությունները չէին ընդունում։ (էջ 291)։

5. ...ելիբատավությունների ցուցակներ «Աւարատյան ընկերության» համար...— ընկերությունը հիմնվել էր Պոլսում, 1876 թ. Մինաս Չերազի, Արփիար Արփիարյանի, Մկրտիչ Փորթուկալյանի և այլոց ջանքերով. նպատակն էր՝ լուսավորության տարածել Արևմտահայաստանի գավառներում։ Գոյություն է ունեցել մինչև անգամ 90-ական թթ.։ (էջ 302)։

6. ...թեև ամանք Բեռլինի վճռի հոդվածի մեջ ոսկու հաճք են տեսնում...— նկատի ունի Մինաս Չերազին, որը գրում էր. «Պեռլինի ժողովն մի ոսկեհանք շահնցանք, մեզ անկե խիզախել հանել ոսկին» (Մ. Չերազ, Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովեն, Կ. Պոլիս, 1879, էջ 29—30)։ Տես Հայ ժողովրդի պատմություն, VI հ., էջ 122—123։ (էջ 304)։

Արտատպվում է «Մշակից», 1879 թ., № 122, 123, 125, 126։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Գրվել է «Կայծեր» վեպի բաժանդրության առթիվ, 1879 թ. դեկտեմբերի 10-ին, Թիֆլիսում։ Տպագրվել է «Մշակի» նույն թվականի № 218-ում, որից և արտատպվում է։

ԻՆՉՈ՞Վ ԵՆՔ ՄԽԻԹԱՐՎՈՒՄ

Գրվել է ի պատասխան «Հայ երիտասարդության» աշխատության վերաբերյալ Մոսկվայի հայ ուսանող Ս. Դադյանի նամակի։ (Տես «Մշակ», 1879 թ., № 217)։ Հոդվածում

Բաֆֆին արծարծում է ազգի միասնության խնդիրը՝ հակադրվելով այն կարծիքին, թե կրոնն ու եկեղեցին ազգապահպանման հիմքն են։ Բաֆֆին այս հարցում առաջնային է համարում լեզուն՝ «որ է և միշտ կլինի ազգի պահպանության հիմքը»։

Հոդվածը գրվել է 1879 թ. դեկտեմբերին, Թիֆլիսում, տպագրվել՝ է նույն թվականի դեկտեմբերի 29-ին «Մշակում», Մելիքզադի ստորագրությամբ։

1. ... որոնք Ջամճյանի և Բերբերյանի դասագրքերից մի քանի գլուխներ սերտելով, Երևակայում են, թե պատմություն գիտեն...— նկատի ունի Եփրեմ Ջաղճյանին և Ավետիս Պերպերյանին։ Եփրեմ Ջաղճյանը (1824—1911) պատմաբան, բառարանագիր, բարդմանիչ, 1851 թ. Վիեննայում հրատարակել է «Պատմություն հայոց, հայկազանց տերության սկսելեն մինչև մեր ժամանակները»։ Տես Ս. Շահիկյան, Հայ նոր գրականության ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 130։ Ավետիս Պերպերյանը (1802—1870) Պոլսի Պատրիարքարանի դիվանապետ, գրել է «Պատմություն հայոց» աշխատությունը, որը լույս է տեսել Պոլսում 1871 թ.։ Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 892, (էջ 313)։

2. ... մի փորձ ուսումնասիրել Բոքլը...— Հենրի Թոմաս Բոքլ (1822—1862), անգլիացի նշանավոր պատմաբան, հասարակագետ։ Բաֆֆին նկատի ունի Բոքլի «Քաղաքակրթության պատմությունն Անգլիայում» աշխատությունը։ (էջ 313)։

Արտատպվում է «Մշակից», 1879 թ., № 226։

1880

ՀԱՅԵՐԸ ՔԱԲՈՒԼԻ ՍԼԱՆ

Հոդվածը գրվել է անգլիացի Հյուզի համանուն հոդվածի առիթով, որը լույս է տեսել անգլիական մի օրագրում և այնտեղից արտատպվել է Կ. Պոլսի «Մանզումեի էֆքյար» հայատառ թուրքերեն լրագրում։ Հոդվածի գրության նպատակը եղել է հնարավոր երկրներում ցրված հայ համայնքների նկատմամբ էջմիածնի Մայր Աթոռի անտարբերության քննադատությունը։ Միաժամանակ Բաֆֆին հոդվածի երկրորդ մասում անդրադարձել է հայ լուսավորչականների, հայ կաթոլիկների և հայ բողոքականների հարաբերության խնդրին և քննադատել այն մոտեցումը, ըստ որի՝ միայն հայ լուսավորչականներն էին հայ համարվում։

«Հայերը Քարուլի մեջ» հոդվածը «Մշակում» լույս է տեսել Մելիքզադի ստորագրությամբ։

Արտատպված «Մշակից», 1880, № 101։

1. Պետրոսի՝ կատնելիոսին ասածին պես կասեի նրան. «Վեր կաց, ես ինձս էլ մարդ եմ»... Գործք առաքելոց, գլուխ ժ։ (էջ 319)։

2. Բայց Հիսուս Քրիստոսը ճոպիվներին այսպես պատվիրեց. Նա հրամայեց բողնել իննսունինը ոչխարները և գնալ մի հատ կորած ոչխարին որոնելու...— Աւետարան ըստ Մատթէոսի, գլուխ ԺՀ։ (էջ 322)։

3. Պանսլավիզմը ցանկացած հաջողությանը չհասավ, երբ Կատկովի շկոլան և Մոսկվայի ռուսոֆիլները սկսեցին պահանջել, թե զանազան սլավոնական ցեղերին ռուսների հետ միացնելու նպատակին պետք է ծառայի օրթոդոքս եկեղեցին— Մ. Ն. Կատկովը

(1818—1887) ռուս լրագրող, խմբագիր, հրատարակիչ, հրապարակախոս էր, համապատվոնականության (պանսլավիզմի) դաղափարի ջատագովներից մեկը։ Ռուսոֆիլները հանդես էին գալիս Ռուսաստանի պատմական զարգացման ուղու (սկզբունքորեն արևմտաեվրոպականից տարբեր) յուրօրինակության հիմնավորմամբ, առաջադրելով բոլոր սլավոնական ժողովուրդների միավորման անհրաժեշտությունը, դրա համար կարևոր նախադրյալ համարելով բոլոր սլավոնական ժողովուրդների կողմից ուղղափառ (օրթոդոքս) դավանանքի ընդունումը։ (էջ 324)։

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը գրվել է որպես պատասխան այն բազմաթիվ նամակների, որ գրողին էին ուղղել ընթերցողները «Խնձոր» «Մշակում» լույս տեսնելուց հետո։ Հնարավորություն չունենալով առանձին գրքով հրատարակել վեպը, Րաֆֆին իր համաձայնությունն է հայտնում ամեն մի նախաձեռնողի, ով հանձն կառնի ամենանպատասխանատու պայմաններով իրագործելու նրա ապագրությունը։

Հոդվածը լույս է տեսել «Մշակում» Րաֆֆի տառագրությամբ։

Արտատպվում է «Մշակից», 1880, № 112։

1. Մինչև այսօր միայն մեկ Միանաայանց հայտնվեցավ, որ աշխատեց ամփոփել մեր պատբերական հրատարակություններում գրված բանաստեղծություններ մի գրքի մեջ...— Մինասյանց Միքայել (1830—1880), հայ դիտական մատենագիտության հիմնադիր, լրագրող, հասարակական գործիչ։ Խոսքը նրա «Քնար հայկական» ժողովածուի մասին է (Պետերբուրգ, 1868 թ.)։ (էջ 326)։

2. «Խնձոր» առաջին անգամ առանձին գրքով լույս է տեսել 1881 թ., Շուշիում, «Մշակի» աշխատակից Արել Ապրեսյանի դրամական միջոցներով։ (էջ 326)։

ՄԻՆՉԵՎ ԵՐԲ

Հոդվածը գրվել է այն բանավեճի առիթով, թե պե՞տք է արդյոք հայ համարել բողոքականներին, կաթոլիկներին և ընդհանրապես՝ այլադավան հայերին։ Հակադրվելով այն տեսակետի պաշտպաններին (և առաջին հերթին՝ «Մեղու Հայաստանի» լրագրին), թե այլադավան հայը հայ չէ և հայ է միայն լուսավորչական դավանանքին պատկանողը, Րաֆֆին մատնանշում է այդ տեսակետի բաղաքական վնասները, որոնք տանում են դեպի ազգի միասնության արհոմում։

Առաջին անգամ լույս է տեսել «Մշակում» Մելիքզադե տառագրությամբ։ Հոդվածի վերջին մասը (ՀՔրիստոնյանների ազատության անունով ծագեց ռուս-թուրքական պատերազմը...» տողից սկսած) տպագրվել է նաև Աննա Րաֆֆու հրատարակած «Տաճկահայք» ժողովածուներում (Թիֆլիս, 1895 և Վիեննա, 1913) որպես ուրիշ հոդվածի շարունակություն։

Արտատպվում է «Մշակից», 1880, № 121։

1. Եվ երբ «Մշակը» իր էջերը բաց է արել Ամիրխանյանցի առջև... որպես պնդում են ոմանք...— Աբրահամ Ամիրխանյանցը բողոքական քարոզիչ էր, որը թղթակցում էր «Մշակին»։ (էջ 329)։

ՆՊԱՍՏԵՆՔ

Այս վերնագրով հոդված Րաֆֆու կենդանության ժամանակ չի հրապարակվել, և գրության ստույգ թվականը հայտնի չէ, բայց որոշ փաստերի հիման վրա կարելի է ենթադրել, որ այն գրվել է 1880-ին։ Առաջին անգամ լույս է տեսել 1895 թ., Աննա Րաֆֆու կազմած «Տաճկահայք» ժողովածուում, և նույնի 1913 թ. Վիեննայի հրատարակության մեջ։ Ընդ որում, Աննա Րաֆֆին «Նպաստեներին» իբրև շարունակություն կցել է «Մինչև ե՞րբ» հոդվածի վերջին մասը։ Սա ոչնչով պատճառաբանված չէ, քանի որ հոդվածի առաջին և երկրորդ մասերը բոլորովին տարբեր են և իրար հետ կապ չունեն։ Բացի այս, հոդվածը տպագրելիս Աննա Րաֆֆին որոշ փոփոխություններ է կատարել բնագրում։ Երբ 1895 թ. լույս տեսավ «Տաճկահայք» ժողովածուն, «Մշակում» մի նամակով հանդես եկավ Համբարձում Առաքելյանը (1895, № 122), հայտնելով, որ ժողովածուում տեղ գտած հոդվածներում փոփոխված են «Մշակին» վերաբերող տողերը։ Մասնավորապես, «Նպաստեներ» հոդվածից հանված է ««Մշակը», որպես արձագանք մեր ժողովրդի պահանջների, բարձրացրեց ընկերությունների միանալու հարցը» նախադասությունը։ Ընդունելով, որ Հ. Առաքելյանի բերած փաստը հավաստի է (դա հաստատվում է նաև «Քրդական միություն» հոդվածի առիթով նրա բերած փաստով), պետք է ենթադրել, որ նամակագիրն ունեցել է հոդվածի ձեռագիր տարբերակը։

Արտատպվում է «Տաճկահայք» ժողովածուից, Թիֆլիս, 1895 թ.։

ՓԱԽՈՒՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հոդվածը Րաֆֆու կենդանության ժամանակ չի հրատարակվել։ Ճիշտ է, տեքստում հանդիպում ենք հոդվածի գրության թվականին՝ 1880, բայց ամենայն հավանականությամբ, փակագծերի մեջ առնված այդ թվականը հետագայում ավելացվել է Աննա Րաֆֆու կողմից, գուցե «Մշակի» անունը հիշատակող բառակապակցության փոխարեն։

Առաջին անգամ լույս է տեսել 1895 թ., «Տաճկահայք» ժողովածուում, հետագայում տպագրվել է նույն ժողովածուի 1913 թ. Վիեննայի հրատարակության մեջ։

Արտատպվում է «Տաճկահայք» ժողովածուից, Թիֆլիս, 1895։

1. Բ. դուռ... կուղարկե Հայաստան, ինչպես առաջ, կամխսերներ, կուղարկե Հոբարդ փաշայի նման բարեկարգիչներ...— Ավգուստ Ջարլզ Հոբարդ (1822—1886), թուրքական ծառակալ, ազգությամբ անգլիացի, մոլի թուրքամոլ էր, կոպիտ ուժի քաղաքականության կողմնակից, անցյալ դարի կեսերից սկսած բազմիցս ցուցաբերել է անհանդուրժողականություն թուրքիայի հակառակորդների նկատմամբ։ (էջ 334)։

2. Բայց Անգլիայի պետական մարդիկներից մեկը, միստր Բրայսը, այս օրերում (1880 թվին) խիստ նիշտ կերպով նկատեց...— Ջեյմս Բրայս (1838—1922), անգլիական պետական գործիչ, իրավաբան, պատմաբան։ 1866—1892 թթ. եղել է Անգլիայի արտաքին գործերի մինիստրի տեղակալ։ Ունեցել է հայասպաշտական գործունեություն, 1876-ին հիմնել է Անգլո-հայկական ընկերությունը, եղել է Հայաստանում, գրել է «Անդրկովկասն ու Աբարատա գիրքը (1877), կոտորածների ժամանակ հանդես է եկել հայերի պաշտպանությամբ։ (էջ 336)։

Հոդվածի գրության անմիջական շարժառիթը եղել է Թուրքիայի և Անգլիայի խարդախ քաղաքականությունը հայկական հարցում։

Առաջին անգամ տպագրվել է «Մշակում» Մելիքզադե ստորագրությամբ, այնուհետև տեղ է գտել Աննա Բաֆֆու կազմած «Տաճկահայքում» (Թիֆլիս, 1895 և Վիեննա, 1913)։ Դուրս է մնացել երկերի ժողովածուի հետագա հրատարակություններից։

Արտատպվում է «Մշակից», 1880, № 167, 168։

1. Աբդուլ Մեջիդ— Թուրքիայի 31-րդ սուլթանը (1839—1861)։ (էջ 337)։

2. Աբդուլ Ազիզ— Թուրքիայի 32-րդ սուլթանը (1861—1876)։ (էջ 337)։

3. Բիկոնսֆիլդ— անգլիացի նշանավոր քաղաքական գործիչ, 1874—1880 ԹԹ. Անգլիայի վարչապետ Բենջամին Դիզրայելին է (1804—1881)։ (էջ 341)։

ՊԱՏԱՍԽԱՆ

Հայտնի է, որ 1879 թ. Բաֆֆին դիմել էր ընթերցողներին «կայծերի» հրատարակության համար բաժանորդներ հավաքելու նպատակով (տես «Երկու խոսք մեր ընթերցող հասարակությանը» հոդվածը)։ Անցնում է երկար ժամանակ, բայց գիրքը լույս չի տեսնում նյութական սուղ միջոցների պատճառով։ Բաֆֆին ստիպված է եղել պարզաբանել գրքի տպագրության ձգձգման պատճառը և խնդրել, որ բաժանորդներ հավաքագրողները իրենց մոտ եղած փողերն ուղարկեն իրեն։

Առաջին անգամ լույս է տեսել «Մշակի» 1880 թ. № 224-ում, Բաֆֆի ստորագրությամբ, որից և արտատպվում է։

1881

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայկական հարցի լուծումը ձգձգելու, Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի որոշումները կատարելուց խուսափելու նպատակով Թուրքիան օգտագործում էր ամեն մի չնչին առիթ։ Այս անգամ Թուրքիան խորամանկորեն օգտագործում է դավանանքի պատճառով հայերի մեջ գոյություն ունեցող երկպառակությունը, ձգտելով լարված հարաբերություններ մեջ պահել հայոց հոգևոր առաջնորդներին։ Այս իմաստով նրանք խրախուսում էին Կիլիկիայի կաթողիկոսի նկրտումները՝ անկախանալու Կ. Պոլսի պատրիարքարանից։ Հոդվածում Բաֆֆին պարզաբանում է հարցի քաղաքական իմաստը և զգուշացնում, որ Կիլիկիայի կաթողիկոսի ձգտումը ազգի համար անօգտավետ լինելուց բացի՝ խարխլում է հայ եկեղեցու կազմակերպությունը և ջուր լցնում թուրք կառավարության ջրաղացին։

Լույս է տեսել «Մշակում» Մելիքզադե ստորագրությամբ։ Հետագայում տեղ չի գտել երկերի ժողովածուներում։

Արտատպվում է «Մշակից», 1881, № 24։

ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

1881 թ. ամռանը, երբ «Մշակում» տպագրվում էր «Դավիթ Բեկ» պատմավեպը, Րաֆֆին ընդհատում է վեպի տպագրությունը և մի քանի ամսով ճանապարհորդության մեկնում Ղարաբաղ և Սյունիք, որի նպատակն էր, ինչպես ասում է վիպասանը, լրացուցիչ նյութեր հավաքել «Դավիթ Բեկի» համար, ինչպես նաև՝ տեղեկություններ հայթայթել Ղարաբաղի մելիքների մասին։ Ճանապարհորդության ընթացքում Րաֆֆին շրջագայում է Ղարաբաղում, Սյունիքում և հարակից շրջաններում և հավաքում նոր նյութեր, որոնք հնարավորություն տվեցին ավարտելու «Դավիթ Բեկը» և ապա գրելու չհամասյա մելիքությունները» պատմական ակնարկը։

Առաջին անգամ տպագրվել է «Մշակում» Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպվում է «Մշակից», 1881, № 131։

1. ... Ինչպես էբերսը գրեց իր «Եգիպտական թագավորի աղշիկը...— Գեորգ էբերս (1837—1898), գերմանացի եգիպտագետ և գրող, հին Եգիպտոսի կյանքը պատկերող մի շարք վեպերի հեղինակ։ (էջ 357)։

2. Ընթերցողը տեսնում է այդ գրքի մեջ կլասիկական Եգիպտոսը... իր վեճափառ Ամազիսներով և Պսամմետիխներով...— Ամազիս (Յահմոս), Պսամմետիխ, եգիպտական փարավոններ են (մ. թ. ա. VII և VI դդ.)։ (էջ 358)։

3. Մենք ունենք այդ մասին մի փորիկ գրույկ միայն, որ տպվեցավ 1871 թվին էջմիածնում պ. Ա. Գուլամիրյանցի հրատարակությամբ, այս վերնագրով՝ «Ընտիր պատմություն Դավիթ Բեկին և պատերազմաց հայոցն Խափանու, որ եղեն ընդդեմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է՝ յամի տեառն 1722 և հայոց 1171»— ըստ նոր ուսումնասիրությունների, հիշյալ գրքի հեղինակը Ղուկաս Սեբաստացին է (1709—1752), Վաննատիկի Մխիթարյան միաբաններից և իր աշխատանքը գրել է 1736—1737 թթ.։ 1988-ին այն հրատարակվել է աշխարհաբար «Դավիթ Բեկի պատմությունը» վերնագրով (տես Ղ. Սեբաստացի «Դավիթ Բեկի պատմությունը», Երևան, 1988 թ., էջ 8)։ (էջ 360)։

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻՑ

Ագվանից և Սյունյաց աշխարհում կատարած շրջագայությունների ընթացքում Րաֆֆին հայտնաբերում է հայոց պատմության վերաբերյալ բազմաթիվ անհայտ նյութեր։ Դրանցից մեկը վերին Ագուլիս գյուղում գտնված մի զրչագիր թերթիկ էր, որ նա այս նամակի հետ ուղարկում է «Մշակի» խմբագրությանը։ Նամակի հրապարակումից հետո «Մշակը» հաջորդ համարում տպագրում է հետևյալ պատասխանը. «Պ. Րաֆֆիի Ագուլիսից գրած նամակը «Մշակի» մեջ կարդալուց հետո պ. Երիցյանը հետաքրքրվից տեսնել այն թերթիկը, որ մեր աշխատակիցը մեզ ուղարկել է, և որի վրա կա բացատրություն բևեռագրերի։ Պ. Երիցյանի կարծիքով, այդ թերթիկի վրա գտնված գրությունը սեպագիր տառեր չեն, այլ մի տեսակ ծածկագրություն են։ Մենք մեր կողմից համեմատեցինք այդ նշանները հայր Սարգսյանի «Տեղեկագրություն» գրքի մեջ գտնված Վանի բևեռա-

գրերի հետ և համոզվեցինք, որ քերթիկի վրա եղած նշանները դժբախտաբար ոչինչ նամանութիւն չունեն Վանի սեպագիր տառերի հետ»։

Նամակը տպագրվել է Բաֆֆի ամբողջ երկերի հատորում, «Մշակի» 1881 թ. № 191-ում, որից և արտատպվում է։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսպիսի վերնագրով հոդված Բաֆֆու կենդանության օրոք լույս չի տեսել «Մշակի» 1881 թ. № 225-ում հրապարակվել է մի հոդված «Հայոց վանքը Երուսաղեմում» վերնագրով։ Երկու հոդվածների բնագրերի համեմատությունից պարզվում է, որ «Մշակում» տպագրվածը սույն հոդվածի երկրորդ մասն է։ Հոդվածի ամբողջական տարբերակը լույս է տեսել «Տաճկահայաստում» (1913), բնագրային որոշ փոփոխություններով ու աղավաղումներով, որոնք շտկվում են սույն հրատարակության մեջ, ըստ հեղինակի կենդանության օրոք լույս տեսած բնագրի։ Այսպես, «Տաճկահայաստում» տպագրված է՝ բապերը, մինչդեռ պետք է լինի՝ խաչերը, տպագրված է՝ կապվեցավ «շղթայակիր», պետք է լինի՝ կոչվեցավ «շղթայակիր» և այլն։

Դժվար է ասույդ ասել, թե ինչու է «Մշակում» հոդվածը կրճատ տպագրվել, բայց մի բան ակնառու է, այն է՝ կրճատման են ենթարկվել հոդվածի համեմատաբար խիստ եղրահանգումներ պարունակող տողերը (Բաֆֆին հայերի աղքատության պատճառներից ամենագլխավորը համարում էր Երուսաղեմի ուխտագնացությունը)։ Հոդվածը տպագրվել է Մելիքզադ տառագրությամբ։

Արտատպվում է «Տաճկահայք» ժողովածուից, Վիեննա, 1913։

1. ... Նա խիստ ատելաբարությամբ պատասխանեց. «Կգան օրեր, որ մի քար էլ քարի վրա չի մնա, և բոլորը կքանդվի»...— Աւետարան ըստ Մատթէոսի, գլուխ ԻԴ։ (էջ 363)։

1882

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Նամակի պրոլյան շարժառիթը եղել են բավմաթիվ հարցապնդումներ, որ վիպասանը ստանում էր ընթերցողներից՝ «Կայծերին» տպագրության ձգձգվելու վերաբերյալ։ 1880-ին գրած «Պատասխանի» մեջ (տես ներկա հատորը) Բաֆֆին խոստացել էր հնարավորին չափ արագացնել «Կայծերի» լույս ընծայումը։ Բայց հանդամանքների բերումով և ամենից առաջ՝ նյութական բավարար միջոցների բացակայության պատճառով նրան չի հաջողվում հրատարակել վեպը։

Նամակը լույս է տեսել Բաֆֆի ամբողջ երկերի հատորում, «Մշակի» 1882 թ. № 73-ում, որից և արտատպվում է։

1883

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Նամակը գրված է Սպանդար Սպանդարյանի՝ «Մեղու Հայաստանի» լրագրի 1883 թ. № 7-ում տպագրված «Մի փոքրիկ խորհրդածություն» վերնագրով հոդվածի առիթով։ Ձգտելով բարձրացնել իրենց լրագրի նշանակությունը՝ մեղվականները ամեն մի հարցում փողհարում էին իրենց գաղափարների ճշմարիտ և առաջավոր լինելը՝ հակագրելով դրանք «Մշակի» քարոզած գաղափարներին։ Նույնպես էր վարվում և «Մշակը»։ Նրանց միջև հակամարտության նոր առիթ էր «Մեղու Հայաստանիի» 25-ամյա հոբելյանի նշումը, որը կատարվեց 1882 թ. դեկտեմբերի 26-ին։ Մշակականները գտնում էին, որ այդ հոբելյանը նշելու կարիքը չկար, քանի որ «Մեղուն» ոչ մի օգուտ չի տվել հայության առաջադիմության գործին։

Նամակը տպագրվել է Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպվում է «Մշակից», 1883, № 17։

1. ... Պ. Սպանդարյանը, կամենալով ցույց տալ...— Սպանդար Սպանդարյան (1849—1921) հրապարակախոս, բննադատ, 1884-ից՝ «Նոր Դարի» խմբագիր-հրատարակիչը։ Սկզբում «Մշակի» բղթակից էր, 1878—1883 թթ. աշխատակցել է «Մեղուին» (էջ 375)։

2. «Մշակը» մոռացավ, որ պպ. Բարխուդարյանի, Պռոշյանի, Րաֆֆիի, Աղայանի և ուրիշների նորելյաններբ...— խոսքը բանաստեղծ, բարգմանիչ, մանկավարժ Գևորգ Բարխուդարյանի մասին է։ (էջ 375)։

3. Նա հալածել է Նազարյանցին, Նալբանդյանցին, Այվազովսկուն— «Մեղուն» Միքայել Նալբանդյանին հալածել է մինչև Պ. Սիմոնյանի խմբագիր դառնալը (մինչև 1863 թ.), իսկ վերջինս, ընդհակառակը, բարձր էր դնահատում Նալբանդյանին և այդ պատճառով բննադատում էր Գ. Այվազովսկուն (1812—1880)։ Վերջինս հայ անվանի ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրն էր, մանկավարժ, բարգմանիչ, պատմաբան, եկեղեցական գործիչ։ (էջ 377)։

ՄԱՄՈՒԼԻ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Որպես պատասխան Րաֆֆու՝ «Մշակի» խմբագրին ուղղված նամակի, «Մեղու Հայաստանիի» խմբագիր Պետրոս Սիմոնյանը իր թերթի 1883 թ. № 11-ում հանդես է գալիս ֆելիետոնով և դարձյալ նշավակում «Մշակը», վիրավորական ակնարկներ անելով նաև Րաֆֆու հասցեին։ Այս ֆելիետոնն էլ պատճառ է դարձել «Մամուլի անբարոյականության» հոդվածի գրվելուն։ Ինչպես և նախորդ հոդվածում, այստեղ ևս Րաֆֆին ոչ այնքան պաշտպանել է իր անձը Սիմոնյանի հարձակումներից, որքան ընդգծել է «Մշակի» հակառակորդ լրագրի և նրա խմբագրի միտումնավոր, աշառու գործունեությունը՝ փիլ քն շատ նշանակություն ունեցող ամեն մի հարցում հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու ուղղությամբ։ Րաֆֆու այս հոդվածի հրապարակումից հետո «Մեղու Հայաստանիի» № 17-ում նորից հանդես է եկել Պ. Սիմոնյանը մի նոր ֆելիետոնով, որն ամբողջովին ուղղված էր Րաֆֆու դեմ։

Հոդվածը լույս է տեսել Րաֆֆի ստորագրությամբ։

Տպագրվում է ըստ «Մշակի» հրապարակած բնագրի, 1883, № 25։

1. Բայց գրվել է մի ընդարձակ կրիտիկա, այն ևս «Մեղուի» մեջ տպված, կարծեմ 81 թվականում— Րաֆֆին ակնարկում է Հայկունու դրախտականը «Փունջի» առաջին և երկրորդ հատորների և «Հեռնիի» մասին («Մեղու Հայաստանի», 1881, № 182, 183)։ (էջ 380)։

2. Խաչագողություն չի՞, որ մեկը 55 թվականներում իրեն ներկայացնում է...— այստեղ և հետագա թվարկման մեջ Րաֆֆին ակնարկում է Պ. Սիմոնյանին և էջմիածնի վահրամ եպիսկոպոս Մանկունուն։ Ըստ Շիրվանզադեի վկայության, այս ակնարկները անախորժ տպավորություն են գործել նույնիսկ վիպասանի բարեկամների և երկրպագուների վրա (տես «Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», Երևան, 1986, էջ 65)։ (էջ 383)։

3. Մենք պահպանում ենք ձեր հավատը Ամիրխանյանցի ոռոգայրներից— Արբահամ Ամիրխանյանցը բողոքական քարոզիչ էր, որի նյութերը տպագրվում էին «Մշակում»։ «Ոռոգայրներ» ասելով Րաֆֆին նկատի ունի Ամիրխանյանցի այն հոդվածները, ուր նա պաշտպանում էր դավանանքի ազատությունը, ի տարբերություն մեղվականների, որոնք հայ էին համարում միայն լուսավորչականներին։ (էջ 383)։

Պ. ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՐԻՏԻԿԱՆ ԵՎ «ԿԱՅԾԵՐԸ»

11 – 3

Րաֆֆու «կայծերի» առաջին հատորի լույս տեսնելուց (1883 թ. փետրվար) մի ամիս անց «Մեղու Հայաստանի» լրագրում սկսում է տպագրվել Հայկունու քննադատական հոդվածաշարը վիպի մասին։ Լինելով ռեալիստական մեթոդի կողմնակից, Հայկունին բընաղատում էր Րաֆֆու ռոմանտիկական մեթոդը, դտնելով, որ «Գեղարվեստը դտնվում է ալ քե երևակայական, ռոմանտիկական, այլ իրական կյանքում և աշխարհում»։ Բայց ռեալիզմի և ռոմանտիզմի գրապայքարը Հայկունու հոդվածաշարում բոլորովին հետին պլան է մղվել, քանի որ քննադատը իր առջև նպատակ էր դրել ոչ քե անաչառ քննության ենթարկել «կայծերը», այլ՝ ջախջախել այդ վեպը գաղափարական տեսանկյունից, ցույց տալ նրա սնանկությունն ու վնասակարությունը, քանի որ վեպում Րաֆֆին նոր աստիճանի էր հասցրել հոգևորականության քննադատությունը և հայ ազգի ապագան կապել էր ամրոխի՝ հասարակ ժողովրդի հետ։ Այնպես որ, «Նրա մեջ (Հայկունու հոդվածաշարում — ծնթ.) լիքն են զանազան կոպիտ սրախոսություններ, զանազան փողոցային մասխարություններ և զանազան ցինիկային ակնարկություններ դեպի «Կայծերի» հեղինակի առեձնավորությունը» (Րաֆֆի)։

Րաֆֆու դեմ ուղղված իր քննադատական հոդվածներում Հայկունին չի հապաղել անդրադառնալ նաև արևմտահայ մամուլի արձագանքներին։ Մասնավորապես նրան զարմացրել է նույն 1884 թ. «Մասիսում» Արտիար Արտիարյանի «Րաֆֆի և հայ վիպասանությունը» հոդվածաշարում արտահայտված համակրանքը Րաֆֆու ստեղծագործության հանդեպ։ Հայկունուն անհասկանալի է մնում, քե ինչպես «ռեալ ուղղության համակիր ու պնդասրտան» Արտիարյանը «անմահության դափնիներ է հյուսում» Րաֆֆուն։ Հակառակ Հայկունու՝ ռեալիզմի ուղղության միանշանակ մեկնության, Արտիարյանը, պատասխանելով նրա քննադատությանը, ի հայտ էր բերում դրական զարգացման նոր, ընդլայնված բնրոնում՝ հաստատելով դրական տարբեր ուղղությունների օրինակտիվ գնահատման հնարավորությունը և գեղարվեստական երկի գեղագիտական ու պատմական ճանապարհո-

թյան անհրաժեշտությունը։ Տես «Րաֆֆիի և հայ վիպասանությունը», Արտիքար Արտիքարյան, Երկեր, Երևան, 1987, «Րաֆֆիի հետապատկերը», Դեղունի, Վենետիկ, 1902, № 4—6։ «Մենու Հայաստանիին» քննադատությանը մի քանի ամիս անց մի հոդվածով («Կրիտիկան մեր մասին մեջ», «Մշակ», 1883, № 118, 119) պատասխանել է երիտասարդ Լևոն։ Կարելով Հայկունու գրվածքը, Լևոն գտնում է, որ այն կրիտիկա կոչվել չի կարող, քանի որ չունի դրա համար անհրաժեշտ հատկանիշները, և որ «նրանց (Հայկունու հոդվածների—Ծ.Թ.) ամեն մի տառը հնչում է ինչասիրություն, կողմնապահություն, կիրք, կուսակցական մոլեռանդության հասնող ոխ» («Մշակ», № 118)։ Ավելի ուշ, Հայկունուն պատասխանել է ինքը՝ Րաֆֆին, «Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը»» հոդվածով, ուր հիմնավոր փաստարկներով ցույց է տալիս ընդդիմախոսի տեսական սահմանափակությունն ու կուսակցական միտումնավորությունը։

Րաֆֆու հոդվածի հրապարակումից մի քանի շաբաթ անց «Մենու Հայաստանիում» սկսվում է տպագրվել Հայկունու նոր հոդվածաշարը «Երկրորդ պատասխան» վերնագրով («Մենու Հայաստանիի», 1883, № 104—109, 112, 113, 115, 117), ուր վերստին բմահաճ ազատությամբ հարձակումներ է գործում Րաֆֆու և Լեոյի դեմ։ 1884 թ. Հայկունու առաջին և երկրորդ հոդվածները «Րաֆֆիի «Կայծերը» վերնագրով լույս են տեսնում Բարվում, առանձին գրքով։

«Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը»» հոդվածը «Մշակում» լույս է տեսել փավառոս սարտագրությամբ։ Հետագայում հոդվածը որոշ կրճատումներով տպագրվել է Րաֆֆու «Գրականության մասին» ժողովածուում և երկերի ժողովածուի 10-րդ հատորում (1959, 1964)։ Պետք է նշել, սակայն, որ ի տարբերություն առաջին ժողովածուի բնագրի, 10-րդ հատորում բերված բնագիրը ինչի է, մասնավորապես՝ բացակայում է երկու պարբերություն։ Րաֆֆին նշում է, որ Հայկունին «Կայծերում» գոնե է աշխարհագրական 22 սխալներ (իրականում՝ 21, բայց սխալ թվագրության պատճառով «Մենուի» 1883 թ. № 57-ում դարձել է 22, բացակայում է 6-րդ թվարկումը, Րաֆֆին էլ պատասխանել է նույն թվագրությամբ), որոնք մեկ առ մեկ բերելով, վիպասանը ցույց է տվել, որ սխալ չեն։ Այս սխալ համարվածները եժ 10-րդ հատորի բնագրում դարձել են 20 այն պատճառով, որ բացի 6-րդից (որը նախապես չկար), բաց է թողնվել նաև 5-րդ թվարկումը և փոխվել է թվագրությունը։ Բացակայում է և այն հատվածը, ուր Րաֆֆին, մեջբերելով Հայկունու խոսքերը, նշում է, որ նա իրեն մեղադրում է «քալաճոշ» չինելու մեջ, մինչդեռ հենց ինքն է «քալաճոշ» չինել իր հոդվածներում։

Արտատպվում է «Մշակից», 1883, № 141—145, 148—150։

1. Շպիլհագենի «Անտառապահի ընտանիքը» կոչված վեպը նույնպես մի ծրագիր է մշակների հարցի վերաբերությամբ— Շպիլհագեն Ֆրիդրիխ (1829—1911), գերմանացի գրող, մի շարք վեպերի, նովելների, պիեսների, տեսական հոդվածների հեղինակ։ (էջ 397)։

... 2. ... Ես գիտեմ, որ որսորդ Ավոն և ընկ. («Կայծերի» մեջ) ուզում են լինել և կարծես թե են նաև մի... մի Միլոյդ, մի Ժ... Օֆ, մի Կ...ինչ, մի Ֆ...ի et tutti quanti ...— Հայկունին ակնարկում է 1881 թ. Ալեքսանդր II ցարի դեմ մահափորձ կազմակերպած և իրականացրած նարոդնովոլականներին՝ Ժելյաբովին, Կիրալչիխին, Տրիգոնիին և մյուսներին։ (էջ 400)։

3. Մտածո՞ւմ է պ. Հայկունին, թե ինչ սարսափելի և մեր ամենից համար անհնամակարելի անունների են բարձված հիշյալ գլխատուների ցուցակ...— ակնհայտ է, որ Րաֆֆին այս տողերը գրել է ոչ թե այնքան սեփական համոզմունքներից ելնելով, որքան ցա-

բական գրաքննության և ոստիկանության կասկածները իրենից հեռացնելու նպատակով (տես ծնթ. 23-ը), (էջ 400)։

4. Միևնույն նկարագրությունը արած ունի և պ. Սարգսյանը («Շաւիեննն ի Սիբիր» ս. Կարապետի ուխտավորներին— պ. Սարգսյանը Սևդրակ (Տևկանց) Տեր-Սարգսեանցն է (1845—1938), հայ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ. «Շահէնն ի Սիպիր կամ Դպրթական հայը» վեպում (1877) առնչվել է ազատամիտ և ըմբոստ մարդու կերպար, որը, չհաշտվելով Բուրբ իրականության հետ, անցնում է Արևելյան Հայաստան, բայց ցարական իշխանությունները նրան արտորում են Սիբիր։ (էջ 411)։

5. Այստեղ պ. Հայկունին բոլորովին մերկ, առանց դիմակի, Երևան է գալիս իր Յանուսի նման կրկնակի դեմքով— Յանուսը մուտք ու ելքի, դռների ու բոլոր սկիզբների աստվածն էր հռոմեական դիցաբանության մեջ։ Պատկերվել է երկու դեմքով. «Երկդիմի Յանուս» դարձվածքը փիլ. առումով նշանակում է կեղծավոր, թննդու։ (էջ 411)։

6. ... Ֆարեայդը նրանց համեմատում է հին պիֆիաների հետ...— պիֆիան (ավելի հիշա Պյութիասը, ինչպես գրում է ինքը Բաֆֆին մի քանի էջ հետո), հունական Դելփիք քաղաքի Ապոլլոնի տաճարի պատգամախոս քրմուհին էր, որի գուշակությունները հին հույները շատ հիշա էին համարում։ (էջ 413)։

7. ... Հունաստանի պատմության մեջ օլիմպիական, դելֆյան Ապոլլոնի և սպանդարամետ տոների մասին...— Սպանդարամետը կամ Սանդարամետը սատրկիրյա աշխարհը մարմնավորող ոդին կամ ինքը՝ սատրկիրյա աշխարհն է հին հայկական դիցաբանության մեջ։ Սպանդարամետական տոները հնհանոսական Հայաստանում նման են եղել հին հույների Դիոնիսիա սատծո պատվին կատարվող տոնախմբություններին։ (էջ 413)։

8. ... Հայր Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը, Խրիմյան Հայրիկի առաջադեմ աշակերտներից մեկը— Գարեգին Սրվանձտյանցը 1857—1860 թթ. Վարագա ժառանգավորաց դպրոցում աշակերտել է վանահայր Մկրտիչ Խրիմյանին։ (էջ 416)։

9. Եւ Նիկոլ (Բարթողիմէոս առաքեալ) յաշխարհն Անձաւացեաց... և սեռաւանէ զտեղին նոգևաց վանս...— մեջբերումը կատարված է «Սրբոյն Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք» գրքից, Վենետիկ, 1865, էջ 294—295։ (էջ 418)։

10. ... Լուսավորիչը... բոլորին դուրս կաներ, կրկնելով Հիսուս Քրիստոսի խոսքերը. «Իմ տունը պետք է աստուծո տուն կոչվի, իսկ դուք արեցիք ավազակների այր»— Աւետարան ըստ Մատթէոսի, գլուխ ԻԱ։ (էջ 421)։

11. ... Թող շողոքոր փարիսեցիները խունկ ծխեն ամեն տեսակ կուռքերի...— փարիսեցիները (հունարեն pharisáioi) կրոնաքաղաքական մի հոսանքի ներկայացուցիչներ էին հին Հրեաստանում մ. թ. ա. II — մ. թ. II դարերում։ Փիլ. առումով փարիսեցի նշանակում է կեղծավոր, կեղծ բարեպաշտ։ Բաֆֆին նկատի ունի Հայկունուն և մեղվականներին։ (էջ 422)։

12. Այդ մասին ես կբերեմ Սարդուի խոսքերը...— խոսքը ֆրանսիացի դրամատուրգ, բազմաթիվ վոդևիլների և կատակերգությունների հեղինակ Վիկտորյան Սարդուի (1831—1908) մասին է։ (էջ 423)։

13. Այդ պես. Վեյսի, Սարսեի և Ֆուկինի կարծիքն է...— Ժան-Ժակ Վեյս (1827—1891), ֆրանսիացի լրագրող, գրականագետ, քննադատ և հրատարակիչ. Ֆրանցիսկ Սարսե (1828—1899), ֆրանսիացի թատերական քննադատ. Ֆրիդրիխ Ֆուկիե (ճիշտը՝ Ֆուկե, 1777—1843), գերմանացի գրող։ (էջ 423)։

14. Ավելի ինչ է գրում այդ մասին, Առաքել պատմագիրը իր գրքի գլ. Ե., եր. 66...—

խոսքը Առաքել Դավրիժեցի պատմիչի մասին է («Պատմություն», Երևան, 1988, էջ 63—64)։ (էջ 431)։

15. 1880 թվականում Նոր Ջուղայի Ամենափրկչյան վանքի տպարանում տպվեցան սլ. Հարություն Տեր-Հովհաննյանցի հետաքրքիր պատմության երկու հատորները Պարսկաստանի և Հնդկաստանի հայերի մասին— *Հարություն Տեր-Հովհաննյանցը (1828—1871) եղել է Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի առենադպիրը (1851-ից մինչև մահը) և բացի այդ աշխատություններից, գրել է բանասիրական մի շարք գործեր (Հ. Տեր-Հովհաննյանց, «Պատմութիւն Նոր Ջուղայու», հ. 1, էջ ա-գ)։ (էջ 431)։*

16. Սկսվում է ռուս-թուրքական 26 թվականների պատերազմը...— *պետք է լինի՝ ռուս-պարսկական 1826 թվականի պատերազմը։ (էջ 440)։*

17. ... Սկսվում է ռուս-թուրքական 76 թվի պատերազմը...— *պետք է լինի՝ ռուս-թուրքական 77 թվի պատերազմը։ (էջ 441)։*

18. Ներսես պատրիարքը դիվանագիտական դեր է խաղում— *1874—1884 թթ. կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը (1837—1884) զբաղվում էր նաև հասարակական-բարեգործական ակտիվ գործունեությամբ։ (էջ 441)։*

19. Այդ մեկնաբանը, օրինակի համար, ֆրանսիացիների մեջ մի Լյուդովիկոս է,...— *այսեղ և հետո խոսքը Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորի մասին է (1662—1715)։ (էջ 449)։*

20. Նույնիսկ Լյուդովիկոսին շրջապատողները, ինչ՝ պ. Հայկունին, թե ովքեր էին, Ռասին, Բուալո, Մոլիեր, Լաֆոնտեն, Ֆենելոն, Բոսուե...— *Ժան Ռասին (1639—1699), ֆրանսիացի կլասիցիստ դրամատուրգ, Նիկոլա Բուալո (1636—1711), բանաստեղծ, քննադատ, կլասիցիզմի տեսաբան, Ժան-Բատիստ Մոլիեր (1622—1673), դրամատուրգ, դերասան, թատերական գործիչ, Ժան Լաֆոնտեն (1621—1695), բանաստեղծ, Ֆրանսուա Ֆենելոն (1651—1715), գրող, «Տելեմաքի արկածները» վեպի հեղինակը, Ժակ Բոսուե (ճիշտը՝ Բոսյուե, 1627—1704), եկեղեցական գործիչ, գրող, բացարձակ միապետության տեսաբան։ (էջ 451)։*

21. «Կայծերի» տպագրության ծախքը հոգացել է զեղապետ Ա. Ք. Մելիք-Հայկազյանը — Ալեքսանդր Մելիք-Հայկազյանը *(1811—1890) Փոքրիում բնակվող մեծահարուստ դինվորական էր, որի դրամական միջոցներով էր լույս տեսել «Կայծերի» առաջին հատորը (որի մասին նշում է Բաֆֆին վեպի ընձայականում), իսկ հետո՝ նաև երկրորդը (1887 թ.)։ (էջ 452)։*

22. Սպասեցնեմ, սպասեցնեմ, պարոններ, ես գիտեմ, որ որսդ Ավոն է ընկ. («Կայծերի» մեջ)... Դա մատնություն չէ՞— *Հայկունու առաջին հոդվածաշարի տպագրությունից երկու շաբաթ անց, մայիսի 1-ին, ազատականությունը խուզարկություններ է կատարում «Մշակի» խմբագրատանը։ Մայիսի 1-ից 9-ը «Մշակը» չի հրատարակվել։ Մայիսի 13-ին խուզարկության է ենթարկվել Բաֆֆու բնակարանը։ Հունիսին վիպասանը ենթարկվել է երկշաբաթյա տնային կալանքի, որից ազատվել է պարսից հյուպատոսի նրաշխավորությամբ (Բաֆֆի, «Դրականության մասին», Հ. Առաքելյանին գրած նամակը, էջ 201)։ (էջ 453)։*

23. Պ. Հայկունին, այդ խալիպյան պրոցի առաջին, թե երկրորդ դասատուից արտասված համբակը...— *Խալիպյան (Խալիբյան) վարժարանը բացվել է Նոր Նախիջևանի մեծահարուստ Հ. Խալիբյանի միջոցներով Թեոդոսիայում (Ղրիմ) 1858-ին։ Գործել է մինչև 1871 թ.։ (էջ 454)։*

24. Վերջացնելով նոդվածս, ճարկավոր եմ համարում հայտնել, որ ընդհանուր դա-

տողություններ մեջ, մի քանի տեղերում նետևել եմ Բելինսկու նայացքներին — *Րաֆֆին օգտվել է Բելինսկու «О критике и литературных мнениях «Московского наблюдателя» հոդվածից (տես* В. Г. Белинский, Собрание сочинений в трех томах, т. I, Москва, 1948). *(էջ 455)։*

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

1882 թ. վախճանվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ն, և ըստ հայ եկեղեցու կանոնադրության, պետք է ընտրվեր նոր կաթողիկոս։ Մինչև ընտրությունը, որը պետք է կայանար կաթողիկոսի մահվանը հաջորդած տարվա ընթացքում, Թիֆլիսի և Կ. Պոլսի հայ մամուլը հրապարակում է հոդվածներ առաջիկա ընտրությունների վերաբերյալ։ Հասարակական կարծիքը որոշակի ուղղությամբ մշակելու գործում ջանքեր էր թափում «Մեղու Հայաստանին»՝ տպագրելով բազմաթիվ հոդվածներ կաթողիկոսական հարցի առթիվ («Մեղու Հայաստանի», 1883, № 23, 24, 25, 82, 108, 110 և այլն)։ «Մշակը» նույնպես որոշակի վերաբերմունք ուներ հարցի նկատմամբ և հրապարակել է մի շարք հոդվածներ («Մշակ», 1883, № 38, 44, 47, 174 և այլն)։ Կաթողիկոսական խնդրի առթիվ «Մշակի» վերաբերմունքը հանդուրժողական բնույթ կրող Րաֆֆու «Կաթողիկոսական հարցի առթիվ» ծավալուն հոդվածում։ Այստեղ Րաֆֆին պարզաբանումներ է տվել ընտրության անցկացման մասին, հատկապես շեշտելով ընտրությունների դեմոկրատական կարգն ապահովելու հանգամանքը, միաժամանակ քննադատում է հարցի քննարկման ընթացքում դրսևորվող նեղ, խմբային շահերը։ Պատահական չէ, որ Րաֆֆու նկատմամբ հետո «Մեղուն» տպագրում է մի հոդված (№ 120, 121), ուր քննադատվում ու նույնիսկ ծաղրվում էին Րաֆֆու արտահայտած նկատառումները։

Առաջին անգամ տպագրվել է «Մշակում» Մելիքզադե ստորագրությամբ։ Հետագայում տեղ է գտել Աննա Րաֆֆու կազմած «Արծիվ Վասպուրականի (երիտյան Հայրիկ) ժողովածուում (Թիֆլիս, 1893)։

Տպագրվում է ըստ «Մշակի» բնագրի, 1883, № 194—196, 198, 201, 204։

1. 66-ի ընտրության ձևը— խոսքը 1866 թ. կաթողիկոսական ընտրությունների մասին է, երբ Կ. Պոլսի Ազգային ժողովն ինքը տնօրինեց իր քվեները և ոչ թե վաճառեց դրանք մասնավոր անձանց, ինչպես 1858-ին։ (էջ 456)։

2. Վերջին միտքը առարկությունների մեջ իր վրա ուշադրություն դարձրեց թե մեր և թե Կ. Պոլսի մամուլի մեջ պ. Իփեճեյանի հոդվածը...— Համբարձում Իփեճեյանը Կ. Պոլսի ճանաչված մանկավարժներից էր, Ազգային ժողովի երեսփոխան և կյանքի վերջին տարիներին (վախճ. նույն 1883-ին) նկատելի դեր է խաղացել արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում։ Րաֆֆու հիշատակած հոդվածը լույս է տեսել «Մեղու Հայաստանիում», 1883, № 116։ (էջ 462)։

3. ... եվ մի խմբագիր, որ հաղցած աղվեսի նման ամեն վեղարավորի գրպանից նուռ է հաշում, որ տեսնե, թե որն է պարարտ, որպեսզի նրա կանդիդատուրան պաշտպանե— Րաֆֆին նկատի ուներ «Մեղուի» խմբագիր Պ. Սիմոնյանին («Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», Երևան, 1986, էջ 46, Շիրվանզադեի հուշերը)։ (էջ 471)։

ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԸ

Տպագրվել է «Մշակում» Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպվում է «Մշակից», 1883, № 206։

1. Միայն մի բաղաք ունենիմ, որը ուներ հազար և մի եկեղեցի, վերջին մեկը, ըստ ավանդության, շինել էր տվել մի հովիվ— *խոսքը միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի և հովվի եկեղեցու մասին է (Մատթէոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 147, Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 258)։ (էջ 481)։*

2. Մեր խոսքը պ. Բաշինջաղյանի մասին է — Գևորգ Բաշինջաղյան *(1857—1925), ականավոր նկարիչ, գրող, հասարակական գործիչ։ (էջ 483)։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1878

Դարտակ հույսերով ենք խարվում 7
Ինքնախարեություն 14
Ժողովրդական վարժապետներ 23
Դեռևս ուշ չէ 36
Նամակ խմբագրին 47
Ի՞նչ վերանորոգություններ պետք են Տաճկական Հայաստանին . . . 47
Մարդը գույության կռիվի մեջ 57
Հայդուկներ 96
Հայ կինը 99

1879

Գլխատական բանակռիվները մեր լրագրության մեջ 159
Ջ. Ագուլիսի վերջին անցքերը 166
Ինչպես է կառավարում էջմիածինը իր հեռավոր վիճակները օտար պետությունների մեջ 193
Հայ նրիտասարդությունը 199
Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ 285
երկու խոսք մեր ընթերցող հասարակությանը 305
Ինչո՞վ ենք մխիթարվում 306

1880

Հայերը Բարուլի մեջ 317
Մի առաչարկություն 325
Մինչև ե՞րբ 326
Նպաստանք 332
Փախուստի հանապարհը 334
Քրդական միություն 336
Պատասխան 350

1881

Կիլիկիայի կաթողիկոսական խնդիրը 351
Իմ ընթերցողներին 357
Նամակ Վերին Ագուլիսից 362
Սրուանձտեանի պատմական նշանակությունը հայերի համար 363

1882

Նամակ խմբագրին 373

1883

Նամակ խմբագրին 375
Մամուլի անբարոյականությունը 378
Պ. Հայկունու կրիտիկան և «կայծերը» 387
Կաթողիկոսական հարցի առիթով 455
Մեր բարեգործական հիմնարկությունները և մեր բարեգործները . . . 480

Ծանոթագրություններ 485

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ՐԱՖՖԻ

Երկերի ժողովածու 12 հատորով

Հատոր տասնմեկերորդ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԲՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Литературно-художественное издание

РАФФИ

Собрание сочинений в 12-ти томах

Том одиннадцатый

ПУБЛИЦИСТИЧЕСКИЕ И ЛИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКИЕ СТАТЬИ

Ереван, издательство «Наири»
На армянском языке

Խմբագրության վարիչ՝ Սա. Է. Թոփչյան
Արտահատ. խմբագիր՝ Ս. Ն. Սաֆինյան
Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջուլհակյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերատուգող սրբագրիչ՝ Օ. Ղ. Թևոյան

ИБ 5946

Հանձնված է շարվածքի 13. 06. 90։ Մատրագրված է տպագրության 20. 12. 90։
Ձևաչափ՝ 60×84¹/₁₆։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 29,76 պայմ. տպ. մամ., 27,5 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50 000։ Պատվեր՝ 1094։ Գինը՝ 5 ռ.։

«Նաիրի» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91։

Издательство «Наири», Ереван-9, ул. Теряна, 91.

Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի Հակոբ Մնձպարբի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան-9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта комитета по печати при Совете Министров Армянской республики. Ереван-9, ул. Теряна, 91.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0207080

A II
82117